ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՍԻՓՅԱՆ

ԼՍԻՄԱՍԱԼԻ ՀԱՅԵՐԸ

I

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ՊԱՏՐԱՍՏՎԵԼ
ԱԼԲՐԻԿ ՊԵՏՐԻԿԻ ՀՈՎԱՆՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ETHNOGRAPHIC AND FOLKLORISTIC HERITAGE
I

HOVHANNES HOVSEPIAN

ARMENIANS OF GHARADAGH

I

ETHNOGRAPHY

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
2009

391/395 (=919.81)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀԱՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ
1

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ա 94501

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԸ

I

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԴ 391/395=919·81
ԳՄԴ 63·5(22)
Հ 872

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. Ս. ՂԱՋԻՅԱՆ, Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ,
Լ. Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ս. Գ. ՀՈՎՀՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության է պատրաստել և խմբագրել՝
պ.գ.թ. ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀՈՍՅԱՆԸ

Հ 872 Հովսեփյան Հ.Հ. ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԸ. I ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ. - Եր., Գիտություն, 2009, 502 էջ

Աշխատանքը նվիրված է Ղարադաղի հայերի պատմությանը, ավանդական սովորություններին, կենցաղին, զբաղմունքներին, հավատալիքներին, ծեսերին:

Հ $\frac{0505000000}{703(02)-2007}$ 2009թ.

ISBN 978-5-8080·0699-7 ԳՄԴ 63·5(27)

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հովհաննես Հարությունի Հովսեփյանը ծնվել է 1924թ. սեպտեմբերի մեկին Ղարադաղի Դիզմար գավառակի Խանագահ գյուղում:

Մանկուց լինելով հետաքրքրասեր իր ժողովրդի, նախնիների, նրանց սովորությունների, բնության ու շրջապատի նկատմամբ, տեղեկություններ է հավաքել Ղարադաղի բնակչության, պատմության, հուշարձանների և այլնի մասին:

Նրան այդ հարցերում շատ է օգնել հայրը՝ երաժիշտ Հարություն Հովսեփի Աղաջանյանը, որը շատ տեղեկություններ է ունեցել Ղարադաղի հայաբնակ և թրքաբնակ գյուղերի վերաբերյալ:

Հեղինակին շատ տեղեկություններ է հաղորդել նաև հորեղբայրը՝ Ալեքսան Աղաջանյանը, որը դրանք լսել էր իր մորից:

Ղարադաղի հայերի շատ սովորությունների, ուտեստի, հավատալիքների ու ծեսերի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդել հեղինակի մայրը՝ Սարդու գյուղում ծնված Մինա Աղաջանյանը:

Հովհաննես Հովսեփյանը տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ նյութեր է հավաքել Ղարադաղի պատմության, բնակչության, հայերի տեղաշարժերի, բռնագաղթերի, հայկական բնակավայրերի, հուշարձանների և այլնի մասին:

Ուսումնասիրելով Ղարադաղի պատմական անցյալը, հեղինակը ցույց է տալիս, որ Պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Պարսպատունիք գավառում 20-րդ դարի կեսերին հայկական հուշարձաններ կային 101 բնակավայրերում:

Խիստ ուշագրավ են հայ ժողովրդի այդ ուրույն հատվածի ավանդական, օտար միջավայրում անխաթար պահպանված տնտեսական և կենցաղային սովորություններն ու ծեսերը, նրանց հավատալիքներն ու տոնածիսական համակարգը:

Հովհաննես Հովսեփյանի սույն աշխատանքը խիստ շահեկան է նրանով, որ հեղինակը չի սահմանափակվել միայն մեծահասակներից գրառած նյութերով: Մինչև 1946թ., երբ Ղարադաղի հայերի մեծ մասը ներգաղթեց Խորհրդային Հայաստան, Իրանի ծայրամասային այդ ինքնամ-

փոփ տարածքում կյանքը շարունակվում էր ավանդական անխաթար ձևով:

Շատ դեպքերում հեղինակը նկարագրում է ոչ թե պատմական անցյալը, այլ ներկան, իր կյանքն ու միջավայրը, իր ժողովրդի սովորություններն ու բարքերը, նրանց աշխատանքն ու տառապանքը, կենցաղը, ծեսերը, տոներն ու հավատալիքները:

Սույն աշխատությունը հեղինակի սիրո և նվիրումի արգասիքն է իր հայրենի Խանագահի, ողջ Ղարադաղի ու նրա հերոս բնակչության նկատմամբ:

«Ղարադաղի հայերը» աշխատությունը նաև գիտական խոշոր նշանակություն ունի, քանի որ Պատմական Հայաստանի այդ տարածքի ու նրա ուրույն հայ բնակչության մասին գրված առաջին ամփոփ ու ամբողջական ուսումնասիրությունն է:

Հարություն Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» աշխատության հրատարակությունը նախաձեռնել են մի խումբ հայրենասեր ղարադաղցիներ՝ իբրև հարգանքի տուրք աշխարհում սփռված ղարադաղահայերի ավանդապաշտ պապերին ու նախնիներին:

Գրքի հրատարակության նախաձեռնողը Հովհաննես Հովսեփյանի որդին է՝ Հայրենիք (Մայիս) Հովսեփյանը:

Նրան մեծապես աջակցել և գիրքը հրատարակության պատրաստելու ծախսերը հոգացել են բնիկ ղարադաղցիներ Ալբրիկ Պետրիկը և Ռազմիկ Հովսեփյանը, որոնք ապրում են ԱՄՆ-ում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահպանվում են ազգագրական, բանահյուսական և հնագիտական բազմաթիվ նյութեր, որոնք իրավամբ կարելի է համարել հայոց նյութական և հոգևոր մշակույթի արժեքավոր սկզբնաղբյուրներ, որոնց հեղինակները շատ դեպքերում նկարագրվող իրադարձությունների ու դեպքերի մասնակիցն ու վկաներն են: Պատմական Հայաստանի ամենատարբեր տեղավայրերին՝ Մոկս, Տարոն, Համշեն, Վասպուրական, Պարսկահայք, Տավուշ, Լոռի, Շիրակ և այլ ազգագրական շրջաններին վերաբերող նյութերը կարոտ են հրատարակության:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, կարևորելով ոչ նյութական մշակութային ժառանգության նշանակությունը, նախաձեռնում է «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» խորագրով նոր մատենաշարի հրատարակություն: Նոր մատենաշարն սկսվում է Հովհաննես Հովսեփյանի աշխատությամբ:

ԱՌԱՋԱԲԱՆ

Անշուշտ ընթերցողին կհետաքրքրի, թե ինչը ինձ պարտադրեց գրելու մի հին ու մոռացված գավառի պատմությունը: Պատճառը մեկն է. դեռ դպրոցական տարիներին ես կլանված կարդում էի Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Ղազարոս Աղայանի և հայ այլ անվանի գրողների ստեղծագործությունները իրենց հայրենի բնաշխարհի և այնտեղ ապրող մարդկանց մասին: Ինձ համար ցավալի էր, որ իմ հայրենիքի մասին ոչ ոք չէր գրել, չնայած այն ոչնչով չէր զիջում Հայաստանի մյուս գավառներին:

Այսպես իմ մեջ միտք ծագեց ուսումնասիրել իմ հարազատ բնաշխարհը և նրա մարդկանց, որոնք 1600 տարի ապրելով օտար պետության լծի տակ, այլադավան ժողովուրդների մեջ, կարողացան պահպանել հայկական նահապետական օջախի պատիվը, հայերեն լեզուն, հայի սովորությունները, հայի կրոնը:

Նպատակ ունեի պատմությունս գրել ավելի ընդարձակ, սակայն ժամանակի սղությունը թույլ չտվեց զբաղվել ինձ հետաքրքրող բազմազան հարցերով. երբ 1941թ. ձեռնամուխ եղա Ղարադաղի պատմությունը գրելուն, սկսվեց պատերազմը: Չնայած ապրում էինք հայրենիքից հեռու, բայց մենք էլ մտահոգված էինք Կարմիր բանակի հաղթանակով, Թավրիզում և այլ վայրերում կազմակերպում էինք դրամական միջոցների, հագուստեղենի և այլնի հավաքագրում ու օգնում մեր հայրենիքին:

Պատերազմից հետո հասունացավ արտասահմանի հայերի հայրենադարձման հարցը:

Ղարադաղի հայաբնակ գյուղերում բնակչության վիճակագրական հաշվառման հանձնաժողովի կազմում էի նաև ես: Այդ ընթացքում ինձ հաջողվեց տեղում որոշ ուսումնասիրություններ կատարել, տվյալները ճշտել, դրանք քիչ թե շատ գիտական հիմքերի վրա դնել: Գրել նորից չհաջողվեց, քանի որ, ներգաղթելով Խորհրդային Հայաստան, բոլորի հետ մասնակցեցի ետպատերազմյան դժվարությունների հաղթահարմանը: Ընտանիք կազմելը, երեխաների ուսման, դաստիարակության և աշխատանքային դժվարությունները խլում էին ողջ ժամանակս:

Երկար ժամանակ եմ անցկացրել ու նյութեր հավաքել Մատենադարանում, Հանրային գրադարանում, մեկնել եմ Բաքու, Թբիլիսի, եղել Հայաստանի տարբեր քաղաքներում, որտեղ ապաստան էին գտել Ղարադաղից ներգաղթած իմ հայրենակիցները, ճշտել շատ տվյալներ:

1970թ. դրությամբ Ղարադաղում այլևս հայեր չեն բնակվում, ուստի հարկ համարեցի գրել նրանց պատմությունը, ծանոթացնել նրանց դարավոր անցյալի, նիստուկացի, զբաղմունքների, ապրելակերպի, հուշարձանների, ուխտատեղիների, հավատալիքների հետ: Այն հետագայում կարող է ուղեցույց հանդիսանալ Ղարադաղն ուսումնասիրողների համար:

Կարծում եմ, որ ընթերցողը՝ ծանոթանալով իմ բազմամյա աշխատանքին, գոհ կմնա:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ղարադաղը գտնվում է Ատրպատական նահանգի հարավային տարածքում և հնում եղել է ամենահայաշատ գավառներից մեկը:

Կարծիք կա, որ ուրարտական թագավորության ժամանակ, Ղարադաղի տարածքում բնակվել են սկյութներ:[1]

Հետագայում, հին քարտեզներում Ղարադաղի տարածությունը նշված է «Կողմանք մարաց» ձևով:[2]

Պարսպատունիք տեղանունը առաջին անգամ նշված է Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև Արտաշատում կնքած դաշնագրի համաձայն կազմված Հայաստանի քարտեզում և նրա լեռներն էլ անվանված են Հայկական լեռներ:[3]

Պարսպատունիք անունը առաջին անգամ օգտագործել է Անանիա Շիրակացին՝ «Աշխարհացույցում»:

Պարսպատունիքն եղել է Հայաստանի Վասպուրական (Կոտորի) նահանգի 35 գավառներից մեկը, նշված է 27-րդը (Պատսպատունիք):[4]

Պատմահայր Մովսես Խորենացին հաղորդում է. «Վաղարշակը մեր երկրի արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան (Շամբատ-Բագարատին) նշանակեց կուսակալ, բյուրերի և հազարների իշխան»:[5]

Պարսպատունիքը նշված է հայկական (Ղարադաղ) լեռներ անվամբ:[6] Այս լեռները, գտնվելով Արաքս գետի ու Կապուտան (Ուրմիա) լճի միջև, կազմում են Ղարադաղի բարձրադիր շրջանը, որը հին հայկական Պարսպատունիք գավառն է: Հայկական լեռների գագաթներից հայտնի է Հաշտասարը (2954 մ.):

Էրատոսթենեսը (276-194թթ.մ.թ.ա.) հայկական այս լեռներում հիշատակում է «Դրունք հայոց» լեռնանցը, որը 14-րդ դարի հեղինակ Ղազվի-

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Եր., 1971, քարտեզ 1:
[2] *Կորյուն*, Վարք Մաշտոցի, Եր., 1962:
[3] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, քարտեզ 2:
[4] *Թ.Խ. Հակոբյան*, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, էջ 179:
[5] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 835:
[6] Նույն տեղում, էջ 12:

նին անվանում է «Արմինյան անցք»: Այս լեռնանցից ճանապարհը տանում էր դեպի Խուդափերինի կամուրջը, որի հյուսիսային եզրին, Երասխի ձախ ափին էր գտնվում Սյունիքի առևտրական կենտրոն Նակորզան քաղաքը:[7]

Արշակունյաց թագավորության անկումից հետո երկարածիգ պատերազմները Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև վերջացան նրանով, որ Հայաստանը բաժանվեց այդ տերությունների միջև: Հայաստանի առաջին քաղաքական բաժանումից հետո, Մեծ Հայքն ամբողջությամբ ընդգրկող միասնական հայկական թագավորություն այլևս չստեղծվեց:[8]

Մեր ընթերցողներից ոմանք կարող են տարակուսել, որ Հայաստանի Պարսպատունիք գավառը ոչ թե Վասպուրական նահանգի մեջ է մտել, այլ Փայտակարանի, քանի որ Ե. Ֆրանգյանը գրում է. «Այժմյան Ղարադաղ գավառը չունի իր նախկին փայլն ու հռչակը, այն պատմական շրջանի, երբ Ատրպատականի այդ լեռնագավառը կոչվում էր Փայտակարան»:[9]

Պետք է նշել, որ որոշ պատմաբաններ ու բանասերներ մանրամասնորեն ու ստուգաբանմամբ չեն մոտեցել այս հարցին, որը մեր ընթերցողների մոտ կարող է թյուրիմացություն առաջացնել:

Համոզվելու համար, համառոտակի ծանոթացնենք նաև Փայտակարան նահանգի հետ, որը, կտեսնենք, որ Ղարադաղի հետ ոչ մի առնչություն չունի:

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

Փայտակարան անունը ստուգաբանված չէ: Հնում այն հայտնի է եղել Կազբք (ըստ անտիկ մատենագիրների՝ Կասպինա) անունով: Կոչվել է նաև Բաղասական աշխարհ: Կազբք անունը կապվում է համանուն ցեղի հետ, որը բնակվել է Կասպից ծովի արևմտյան առափնյա շրջաններում (այդ անունով էլ ծովը կոչվել է Կասպից):

Փայտակարանը տարածվում էր Արաքսի ստորին հոսանքից հարավ ընկած շրջանում, արևելյան սահմանը հասնում էր մինչև Կասպից ծով: Տարածքը, ինչպես նշված է «Աշխարհացույցում», հայտնի էր իր անբավ բամբակով, կար նաև վայրի գարի:

Փայտակարանը տաք և խիստ ցամաքային կլիմա ունի: Այստեղ հնագույն ժամանակներից սկսած կառուցվել են ջրանցքներ ու ամբարտակ-

---

[7] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 17:
[8] *Թ.Խ. Հակոբյան,* նշվ. աշխ., էջ 102:
[9] *Ե. Ֆրանգյան,* Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 97:

ներ, որոնց միջոցով ոռոգվել է նրա մի զգալի մասը: Դրանց հետքերը մինչև օրս էլ նշմարվում են:

Փայտակարանը տարբեր ժամանակներում մտել է տարբեր պետությունների կազմի մեջ: Արտաշեսյանների ու Արշակունիների շրջանում, որոշ ընդհատումներով, կազմում էր հայկական պետությանը ենթակա շրջան: Հայաստանի առաջին բաժանումից հետո այն դուրս մնաց նրա կազմից:

Փայտակարանում հայեր գրեթե չեն բնակվել, եթե չհաշվենք Արտաշեսյանների ու Արշակունիների շրջանում այնտեղ պահվող հայկական կայազորները և վարչական ծառայողներին:

Փայտակարանն ուներ 14 գավառ. Հրաքոտ, Պերոժ, Վարդանակերտ, Յոթնփորակյան Բագինք, Քռեկյան, Ովտիբադա, Քաղանոստ, Բուռոս, Պիճանհանի, Աթլի, Բագավան, Սպանդարապերոժ, Որմզդեպերոժ և Ալավան: Ինչպես տեսնում ենք, դրանք հայկական չեն: Նրանք ունեն հնագույն ծագում և, բացառությամբ անձնանունների հետ կապվածների, ժամանակակից լեզուներով հնարավոր չէ մեկնաբանել:

Մեր հին պատմագիրներն ու մատենագիրները Հայաստանի շատ գավառների աշխարհագրական դիրքի, բնության, կլիմայի, տարածքի, բնակչության, կենդանական ու բուսական աշխարհի վերաբերյալ ստույգ տեղեկություններ են հայտնել: Ցավալի է, որ Պարսպատունիք գավառի մասին նման տեղեկություններ չկան, չնայած Սյունիքն ու Պարսպատունիքը նման են մի հսկա խնծորի, Արաքսի գերհզոր սրով կիսված երկու մասի:

Պարսպատունիքն իր աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, լեռներով, գետակներով, անտառներով, կենդանական ու բուսական աշխարհով ու բարբառով համընկնում է Սյունիքին:

Պարսպատունիքի հայ բնակչությունը դարեր շարունակ եկեղեցական հարկը տվել է Տաթևի վանքին, համարվել Տաթևի թեմին պատկանող Սյունյաց աշխարհի 14 գավառներից մեկը:

Հետագայում պարսիկները Պարսպատունիքի Հայկական լեռներն անվանեցին Սիա-կուհ, որ նշանակում է Սև սար, թուրքերն էլ իրենց լեզվով թարգմանեցին այն, դարձնելով Ղարադաղ: Եվ այսպես, Պարսպատունիք տեղանունը վերափոխվեց ու մնաց Ղարադաղ:[10]

Ղզըլբաշ ցեղերի տեղաշարժերի և խոշոր ավարների (օլքա) վերաբաշխման ժամանակ, 1515թ., Սեֆյան Իրանի սահմանները նշող «Թազ-

[10] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 17:

քիրաթ-ալ-մուլուքում» հիշատակված են չորս վալիություններ և 13 բեկլարբեգություններ: Դրանց կազմի մեջ էին մտնում նաև Պարսպատունիքը (Աբաս Բար) և Պարսկահայք նահանգն ամբողջությամբ:[11]

Այդ ժամանակ, Պարսպատունիքի հետ, Սիա-կուհ են անվանվում նաև Հայաստանի Դրունք հայոց (այժմ Ահար), Կատիջք (այժմ Ուզունդուլ) և Քոշաթաղ (այժմ Աշկամբար) գավառները, Արաքսի ափից մինչև Թավրիզ քաղաքը ձգվող Աղուտները (Շորաբաթ) ընդգրկող հսկայական տարածությունը: Այդ բաժանումով Պարսպատունիքը վերանվանվեց Ղարադաղի Աբասբար մահալ, իսկ Դրունք հայոց, Կատիջք և Քոշաթաղ գավառները միասին՝ Ահարի մահալ (գավառ):[12] Այս հսկա տարածքի գավառական կենտրոն հաստատվեց Ահար քաղաքը:

Պատմությունը մեզ ժլատ տեղեկություններ տվեց, թե պարսպատունցիները ինչպիսի անուններ են տվել իրենց երկրի առանձին լեռնագագաթներին, գետակներին, հովիտներին ու բնակավայրերին:

Մենք պարտավոր ենք դրանք ընթերցողին ներկայացնել այնպես, ինչպես տեղի հայ և այլազգի բնակիչներն անվանում էին մեր ուսումնասիրության տարիներին:

ՏԱՐԱԾՔԸ

Ղարադաղի տարածքի քարտեզագրական չափումները մեզ հայտնի չեն, տվյալները հայտնում ենք մոտավոր ճշտությամբ: Նրա երկարությունը Արաքսի ափով, Մեղրու կիրճից մինչև Կուրի և Արաքսի խառնման վայրը մոտ 200կմ է, միջին գոտու լայնությունը, արևելքից արևմուտք, Քեյվաճ գավառակի Սըղըն գյուղից մինչև Դիզմար գավառակի Աղաղան գյուղը՝ մոտ 180կմ: Սըղընից Աղաղան ոտքով կարելի էր հասնել երեք օրում: Ճանապարհորդը առաջին օրը Սըղընից կհասներ Մինջևան գավառակի Վինա գյուղը, երկրորդ օրը՝ Դիզմար գավառակի Խանագահ գյուղը, իսկ երրորդ օրը՝ Աղաղան: Այս ձևով ես ճանապարհն անցել եմ 1946թ.:

Ղարադաղի լայնությունը միջին տարածությունում, հարավից հյուսիս, Արաքսի ափից մինչև Հայկական լեռները մոտ 60կմ է:

[11] Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Եր., 1972, էջ 250-251:
[12] Ահար քաղաքը գտնվում է Ղարադաղի արևելյան ծայրամասում:

ՂԱՐԱԴԱՂԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ղարադաղն արևելքից սահմանակից է Փայտակարանին՝ Մուղանի հարթավայրով (Ասլանդուզ), սահմանազատվելով բլուրների մի շարքով, որին տեղացիներն անվանում են Շահթախտի (թագավորանիստ):[13]

1946թ. Քեյվան գավառակի Ղասումաշեն գյուղի բնակիչ Ալեքսան Ղասումյանը պատմեց, որ ըստ ավանդության՝ հայերն այդ բլրի վրա թագադրել են Նադիր շահին:

Պատմությունից հայտնի է, որ 1736թ. ծմռանը Նադիր շահը բանակ դրեց Երասխ գետի մոտ, Մուղանի լայնատարած դաշտում: Այնտեղ էին կանչված Պարսկաստանի բոլոր նահանգապետները, Կախեթիայի վալիի՝ Իմամ Ղուլի խանի (Դավիթ երրորդ) որդին, մահմեդականություն ընդունած Ալի Միրզա խանը, Էջմիածնի Աբրահամ Կրետացի կաթողիկոսը և շատ հայ մելիքներ: 1737թ. փետրվարին, Մուղանի դաշտում Նադիրը թագադրվեց հայոց Աբրահամ կաթողիկոսի ձեռքով:[14]

Այդ նշանավոր դեպքից մի քանի դար անց, եղելությունը պահպանվում էր Ղարադաղի հայերի հիշողության մեջ:

Ղարադաղն արևմուտքից սահմանակից է Վասպուրականի Մարանդ գավառին: Ըստ հին ստուգաբանության՝ Մարանդ հայերեն նշանակում է «մայր անդ», իբր թե այնտեղ է թաղված Նոյի կինը՝ Նոյեմզարը:[15]

Մարանդն ու Ղարադաղը իրարից բաժանվում են մի գեղեցիկ լեռնաշղթայով, որին տեղացիներն անվանում են Սիլսան սար: Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը, որ գտնվում է նրա կենտրոնում, նույն անունն է կրում: Գագաթը բրգածև է, այն ահարկու տեսք ունի, կարծես թե մի հզոր ձեռք բռնել է և մի քանի անգամ պտտել: Ձմռան ամիսներին լեռան վրա մշտապես մոլեգնում է փոթորիկը: Գարնանը, ամռանն ու աշնանը տեղացող տեղատարափ անձրևներն ու կարկուտը առաջանում են Սիլսան սարի գագաթին կուտակված ամպերից: Գուցե այդ պատճառով, վաղուց ի վեր Սիլսան սարը պաշտամունքի վայր է:

Ամեն տարի Համբարձման տոնին գավառի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերից այնտեղ ուխտի էին գնում: Նրանց հետևում էին նաև գավառի թուրք բնակիչները:

---

[13] *Րաֆֆի,* Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964, էջ 185-188:
[14] Նույն տեղում:
[15] *Լեո,* Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1966, էջ 159:

1946թ. մայիսին մեզ հաջողվեց բարձրանալ լեռան գագաթը, որի մոտավոր բարձրությունը 2000մ է: Լեռնագագաթին հիանալի պահպանված է հրաբխային խառնարանը, որի արևելյան կողմում քարից ու կրից կառուցված մի կիսավեր մատուռ կա: Այնտեղ պահվում էին կավե հնամենի ճրագակալներ: Դրանցից մեկի վրա մարդու ոտնահետք էր դրոշմված:

Ղարադաղն արևելքից սահմանակից է Սյունիքին, որից բաժանվում է Արաքս գետով: Տարածությունը սկսվում է Մեղրու կիրճից ու շարունակվում մինչև Կուրի և Արաքսի գետախառնուրդը:

Մեղրիի մոտակայքի դժոխային նեղ ու ժայռոտ խորխորատներից դուրս գալով, Արաքսը հոսում է լայնարձակ ու գեղեցիկ հովտի միջով: Դեպի վեր ձգող հոսանքը հաղթահարելու համար, Արաքսը գալարվում է վիրավոր վիշապի նման, մեկ թեքվում աջ, մեկ՝ ձախ, ստեղծելով բազմաթիվ ոլորաններ, կղզյակներ, շամբուտներ ու եղեգնուտներ: Գետի նման օձապտույտ հոսքի համար վաղուց ի վեր հովիտն ստացել է Արաքսպար անունը: Այս հովիտը հնում եղել է հայաշատ ու ծաղկուն գավառ: Մինչև օրս էլ դեռ մնում են ջրանցքների, հին հուշարձանների, ավերակ բնակատեղիների մնացորդներ, որոնք վկայում են անցած ժամանակի շենության փառքը:

Շահ Աբասի ավերումներից հետո այնտեղ գրեթե հայեր չեն մնացել: Հովտի արգավանդ հողերի բերրիության շնորհիվ առատորեն աճում են բազմազան հացահատիկներ, բրինձ, բամբակ, ծխախոտ, եգիպտացորեն ու ծառապտուղներ: Այնտեղ ապրում են թուրքեր, թաթարներ, գյոռավան շամլուներ, թրքախոս քրդեր, ղարաչիներ ու այլ ցեղեր: Ինչ ցեղեր էլ բնակվեն այս տարածքում, հովիտն անվանում են Արաքսպար, իրենց էլ անվանելով արաքսպարցի:

Այս հովտի անունը չպետք է շփոթել Արազբարի հետ, ինչպես պարսիկները հետագայում անվանել են Ղարադաղի տարածքը:

Ղարադաղը հարավից սահմանակից է պատմական Հայաստանի Կատիշք գավառին: Ղարադաղն ու Կատիշքը բաժանվում են Հայկական լեռների ամենամեծ լեռնաշղթայով՝ Խոյնարով: Լեռնաշղթան դեպի Կատիշք գավառն ունի ողորկ լանջեր, աննշան ձորակներ, փխրուն ավազաքարի մանր, անտառազուրկ բլուրներ: Աղքատ է նաև բուսականությունը: Դրան հակառակ, լեռնային բարձր գոտին հարուստ է սևահողերով, որտեղ մշակում են գարնանացան ցորեն ու գարի: Գավառի բնակիչները զբաղվում են նաև անասնապահությամբ, ցանելով առվույտ ու կորնգան:

Աղքատ է նաև կենդանական աշխարհը, որին բնորոշ են շնագայլը, աղվեսը, նապաստակն ու մի քանի տեսակ թռչուններ՝ արտույտ, ագռավ և այլն:

Խոյնարի սարը, Ղարադաղի կողմից, միանգամայն հակառակ պատկերն է ներկայացնում: Կան բազմաթիվ ջրառատ գետակներ, կաղնու հարուստ ու խիտ անտառներ, փարթամ ու բազմազան բուսականությամբ հարուստ լեռնահովիտներ, ալպիական արոտավայրեր, պտղատու ծառեր, հարուստ կենդանական աշխարհ:

ԼԵՌՆԵՐԸ

Ղարադաղն արևմուտքից ողջ երկարությամբ պարսպված է Սիլյան սարի հսկա լեռնաշղթայով, իսկ հարավից՝ Հայկական լեռնաշղթայով:

Մեզ թվում է, որ Ղարադաղը պատնեշող այս երկու հսկա լեռներից ելնելով է գավառն ստացել Պարսպատունիք անունը, ծագելով հայերեն պարսպապատված բառից: Պատմական աղբյուրներում այս լեռների մասին հիշատակություններ չկան, դրանք ներկայացնում ենք այն անուններով, որոնցով հայտնի էին տեղի հայերին:

Ուչ ղարդաշ. թուրքերեն նշանակում է երեք եղբայր. գտնվում է Քեյվան գավառակի հայաբնակ Սըղըն գյուղի մոտ: Լեռան գագաթին մի ժայռաբեկոր կա, որը երեք գրկախառնված մարդկանց պատկեր է հիշեցնում:

Այդ մասին ավանդություն է պահպանվել, ըստ որի հարսանիքի թափորը լեռան վրայով անցնելիս, ավազակների հարձակմանն է ենթարկվել, որոնք ցանկացել են հարսին առևանգել: Նորապսակ փեսան ու քավորը իրենց գիրկն են առնում հարսին ու այդպես էլ երեքով քարանում:

Պիզ (Ողանի սար). Սրածայր, հսկա լեռնագագաթ է, որն իր լայնատարած բազուկներով Մինջևան գավառակը բաժանում է Մեշափարայից: Լեռան հարավային ստորոտում է գտնվում հայաբնակ Ողան գյուղը:

Հրասար. գտնվում է Ողան գյուղից մոտ 2կմ արևմուտք: Գորշագույն, ժայռոտ լեռ է, արևմտյան կողմից սարսափելի գահավեժ ծորակներով:

Հրասարը հայերեն ստուգաբանվում է հրի, կրակի սար: Կարելի է ենթադրել, որ հնում լեռան վրա կրակի պաշտամունքի ուխտատեղի է եղել, որի համար էլ կոչվել է այդպես:

Սպիտակ սար (Աղ դաղ). գտնվում է Մեշափարա գավառակի հյուսիսային կողմում, որի լանջերից մեկի վրա է գտնվում Սեյրանի կոչվող հայտնի

ՀՀ ԳԱ ՏՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՎԵՏԻԱՅԻ
ՀԻՄՆԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ուխտատեղին: Այնտեղ Վարդավառի տոնին ուխտի էին գնում գավառակի բոլոր հայաբնակ գյուղերից:

Ճգնավոր. գտնվում է Հասանով գավառակի հայաբնակ Օղա գյուղի մոտ: Ճգնավոր լեռան ստորոտը պատված է կաղնու անտառներով, իսկ գյուղից վերև, մինչև գագաթը անտառազուրկ է:

Լեռը Ճգնավոր անունն ստացել է գագաթի մոտ գտնվող ստորգետնյա վանքից:

Հուրի սար. գտնվում է Նորաշեն գյուղից 1կմ հյուսիս, իսկ Խանագահից հեռու է 12կմ: Այդ տարածքը պատկանում էր խանգահցիներին, որոնք այդ արգավանդ հողերում գարի էին մշակում:

Լեռնագագաթը պատված է թփուտներով ու ծառերով: Լեռան ամենաբարձր գագաթը կոչվում է Բորզի խութ:

Հուրի սարն ու Հրասարը կարծես դեմ դիմաց նստած հսկաներ լինեն:

Սիրուն. Սիրուն լեռը սահմանազատում է Հասանով և Դիզմար գավառակները, գտնվում է Խանագահ գյուղից 12կմ հարավ-արևելք, ծածկված է ալպյան մարգագետիններով:

Սիրուն լեռն իրոք սիրուն է, նման մի գեղեցկուհու՝ նստած դեմքով դեպի հյուսիս-արևմուտք: Լեռնագագաթից դեպի արևմուտք սկիզբ են առնում լայնատարած, 10-12կմ երկարությամբ երկու լեռնալանջեր, բաղկացած բազմաթիվ մանր ու մեծ բլրակներից, խոր ձորակներից, որոնց կրծքից բխում են հարյուրավոր սառնորակ ու քաղցրահամ աղբյուրներ, հոսում դեպի արևմուտք, միանում ու կազմում մի ջրառատ գետակ:

Պիզ. Պիզ լեռը անունն ստացել է, հավանաբար, սրածայր տեսք ունենալու շնորհիվ: Այն գտնվում է Դիզմար գավառակի կենտրոնում: Նրա արևելյան ստորոտում է գտնվում հայաբնակ Սարդու գյուղը: Լեռնագագաթը պատված է ժայռաբեկորներով, թավուտ թփուտներով ու մացառներով, ունի գահավեժ լեռնալանջեր:

Հայկական լեռները բաղկացած են չորս լեռնաշղթաներից: Հնում, հայերի բնակվելու ժամանակաշրջանում, լեռնաշղթաների առանձին անունները հայտնի չեն, բացառությամբ Հաշտասարից: Դրանք մենք կներկայացնենք ժամանակակից անուններով:

Հաշտասար. գտնվում է Հայկական չորս լեռնաշղթաների հարավարևմտյան մասում, ունի ահարկու տեսք, սնկածև է, գագաթին կա կորավուն հսկայական տարածություն, ձյունը մնում է մինչև օգոստոս ամիսը: Լեռան ստորոտի հյուսիսային լանջերը ժայռոտ են, ունեն գահավեժ ձորակներ: Հաշտասարն այժմ վերանվանվել է Չիչագլու (Ծաղկավետ):

Հայկական չորս լեռնաշղթաներից առաջինը՝ Հաշտասարից, ուղիղ, պարսպածև ձգվում է դեպի արևմուտք: Այն ձգվում է հարավից հյուսիս, համարվում է Սյունյաց լեռների շարունակությունը, բաժանվելով Արաքս գետի Մեղրի-Ագարակ կիրճով: Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը կոչվում է Սիլյան սար, ինչպես և լեռնաշղթան:

Երկրորդ լեռնաշղթան ձգվում է արևելքից արևմուտք, սկիզբ է առնում Հաշտասարի մոտ, ավարտվում Դրունք հայոց լեռնանցով: Լեռնաշղթայի կենտրոնական մասում, ձախ կողմի լեռնալանջին մի քրքաբնակ գյուղ կա, որի անունով լեռնաշղթան կոչվում է Խոյնարի: Նրա ձախ կողմի լեռնալանջերի ողջ տարածքն էլ կազմում է Պարսպատունիք գավառը:

Խոյնարի լեռնաշղթայի աջակողմյան լանջերը իջնում են մի ընդարձակ ու հարթ լեռնահովիտ, որի կենտրոնով հոսում է Ահարի գետը: Այն ամբողջովին զուրկ է անտառներից ու թփուտներից, ողորկ լեռնալանջերով, ժայռեր գրեթե չկան, զարդարանքը ուռենիներն ու սլացիկ բարդիներն են:

Գավառի բնակչությունը զբաղվում է միայն երկրագործությամբ ու անասնապահությամբ, չնայած պտղաբուծությամբ ու բանջարաբուծությամբ պարապելու լավ պայմաններ կան:

Այն հնում եղել է հայաշատ: Այդ են վկայում մինչև օրս պահպանված բազմաթիվ հայկական գերեզմանոցները, հուշարձաններն ու բերդերը: Գավառի շատ գյուղեր ունեն գեղեցիկ անուններ՝ Անդրյան, Օվխարան, Փարխարան, Իզավան, Լիջին, Վարդին, Էլիրդ, Աղաբա, Քյասըն, Բեքով և այլն, որոնց մասին պահպանվում են շատ հետաքրքիր ավանդություններ: Գավառակն այժմ կոչվում է Ուզունդուզ (երկար հարթություն):

Երրորդ լեռնաշղթան, նմանապես, ձգված է արևելքից արևմուտք: Լեռնաշղթայի ձախ կողմի լեռնափեշերը հարում են Կատիշքին, աջ կողմինը՝ մեկ ուրիշ գետահովտի, որը պատմական Հայաստանի Քոշաթաղ գավառն է եղել: Այժմ Քոշաթաղը վերանվանված է Աշկամբար, որի անունով էլ լեռնաշղթան կոչվում է Աշկամբարի սար: Գավառում կան նաև համանուն մի քանի գյուղեր:

Քոշաթաղի լեռնահովտի կենտրոնով հոսում է ոչ ջրառատ մի գետակ: Քոշաթաղի բնությունը, կլիման, բուսականությունը, բնակչության զբաղմունքն ու ապրելակերպը համընկնում են Կատիշքին:

Չորրորդ լեռնաշղթան նմանապես ձգված է արևելքից արևմուտք, Աշկամբարի հետ համեմատած ավելի երկար է և ունի բարձր գագաթներ: Լեռնաշղթայի վրայով Քոշաթաղից Թավրիզ տանող ճանապարհին է գտնվում քրքաբնակ Գյուլիջա (Ծաղկատեղ) գյուղը, որի անունով էլ այժմ

կոչվում է լեռնաշղթան: Նրա արևելյան կողմի բլրալանջերը հասնում են մինչև Արտավետի (այժմ Արդաբիլ) մոտակայքը:

Գյուլիջա լեռնաշղթայի ծախ կողմի լեռնալանջերը պատկանում են Քոշաթաղ գավառին, իսկ աջ կողմինը՝ Թավրիզին հարող Շորաբաթ գավառին:

Հայկական լեռներն ու հովիտները շատ գաղտնիքներ ունեն պահած պատմական ժամանակաշրջանում ապրած հայերի վերաբերյալ, որոնք ենթակա են խորը ուսումնասիրության:

Մենք էլ Պարսպատունիք գավառի անունը թողնում ենք պատմության գրկում՝ մեր պատմությունն անվանելով «Ղարադաղ»:

ԿԼԻՄԱՆ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Շատ հետաքրքիր կլիմա ու բնություն ունի Ղարադաղ գավառը, որը կարելի է բաժանել երեք գոտիների՝ ցածրադիր տափաստանային, նախալեռնային ու լեռնային:

Տափաստանային գոտու մեջ է մտնում լայնարձակ Արաքսպար հովիտը: Այնտեղ ծմռանը ծյուն չի նստում, սակայն արևմուտքի բարձրանիստ լեռնագագաթներից իջնող սառը օդը դեպի Կասպից ծովի տաք ափերը առաջ է բերում ուժեղ քամու միալար հոսանք, որը տևում է ամիսներ շարունակ: Տեղացիները քամու նման հոսանքն անվանում են սիլյան (փոթորիկ): Հենց այդ քամու պատճառով է Արաքսպար հովիտը զուրկ անտառներից, և նրա արգավանդ ու բարեբեր հողերում թույլ է զարգացած այգեգործությունը:

Արաքսպար հովտում գտնվող Ալաջուղա գյուղը որոշ չափով գոգավորված է լեռնափեշերով, որոնք գյուղը պաշտպանում են քամու հոսանքից: Այդ գյուղի մոտ Բուդաղյան եղբայրները մի քանի հեկտար ծիրանի այգի հիմնեցին, որը շատ լավ արդյունք էր տալիս, բայց մրգի փոխադրման ու իրացման հարցում դժվարություններ առաջացան, քանի որ ճանապարհներ չկային, ու գործը թերի մնաց:

Արաքսպար հովտում անձրևներ շատ քիչ են տեղում, իսկ ցանքատարածությունները ջրելու համար Արաքսի ջրից չեն կարողանում օգտվել: Ոռոգումները կատարում են լեռներից իջնող գետակների ջրերով:

Գարունը վաղ է բացվում Արաքսպար հովտում, գրեթե փետրվարից: Վաղահաս գարու հունձը սկսվում է մայիսին: Նույն ժամանակ լեռնային գյուղերի բնակիչները սկսում են գարնանացանը:

Պատմում էին, որ Մելիք-Ազարյանները Արաքսպար հովտի Գանձառի գյուղում գարին հնձում, կալսում էին, տանում Հայկական լեռների բարձրադիր լանջերին գտնվող Բուրգեր կոչվող բերդի մոտ, «Գարուտներ» վարելահողում գարնանացան անում:

Ամռանը Արաքսպար հովտում օդի բացարձակ ջերմաստիճանը հասնում է 40^0: Հունիսի կեսերից մինչև օգոստոսի վերջերը խաշնարած բնակչությունը տեղաշարժվում է դեպի նախալեռնային գոտի. շատերը անտառների բացատներում, սառնորակ աղբյուրների մոտ, այծի մազից գործած վրաններ են խփում և ամիսներ շարունակ ապրում այնտեղ:

Արաքսպար հովտի արգավանդ հողերի զգալի մասը ընդհանրապես մնում է անմշակ, որի հետևանքով վերածվել է շամբուտների ու եղեգնուտների, որոնք քոչվոր ցեղերի անասունների համար ձմեռային հիանալի արոտավայրեր են:

Ղարադաղի նախալեռնային գոտին ծածկված է կաղնի և բոխի ծառերի խիտ անտառներով: Արաքսպար հովտի համեմատությամբ՝ նախալեռնային գոտին անպատմելի գեղեցիկ բնություն ունի:

Թավուտ անտառների շնորհիվ միջին գոտու կլիման բավականին խոնավ է ու անձրևաշատ. հացահատիկն աճում է անջրդի պայմաններում:

Միջին գոտում ձյան շերտի հաստությունը հաճախ հասնում է մեկ և ավելի մետրի:

Ձմռան ամիսներին, երբ սկսվում է Արաքսպար հովտի «սիլյանը», միջին գոտում տաք, արևոտ, առանց քամիների օրեր են լինում: Հազվադեպ երևույթ է 20^0 ցրտությունը: Ոչխարի հոտերը գրեթե ողջ ձմռան ընթացքում տանում են արոտի:

Գարնան զարթոնքը սկսվում է մարտ ամսին:

Ամռանը ցերեկային ջերմաստիճանը 30-32-ից չի իջնում, բայց գիշերները զով են լինում: Այդ ժամանակ բոլորը քնում էին տների կտուրներին, բաց երկնքի տակ:

Աշունը սովորաբար անձրևոտ է լինում, որն էլ հաջորդ տարվա հացի բերքի երաշխիք է համարվում: Քանի դեռ անձրևներ չէին տեղացել, հացահատիկի ցանքս չէին կատարում, քանի որ ցանած սերմը, եթե արագ չծլեր, մրջյունների ու վայրի թռչունների կեր կդառնար:

Ղարադաղի լեռնային գոտին համատարած անտառազուրկ է, լերկ գագաթներով, մասամբ ժայռոտ, բայց պատված է սևահողի ծածկույթով:

Լեռնային գոտում ձմեռը սաստիկ ցուրտ է լինում, ձյունառատ: Ձյան շերտի հաստությունը հաճախ հասնում է մի քանի մետրի: Մոլեգին քամի-

ներ են փչում, որոնք ծյունը տեղաշարժելով՝ սար ու ձոր հավասարեցնում են, ճանապարհները դարձնում անանցանելի: Հաճախ ամիսներով կապը խզվում է հարևան գավառակների միջև:

Լեռների բարձունքներում ու ձորակներում ծյունը մնում է մինչև հունիսի վերջերը:

Երկար ձմռան պատճառով տեղի բնակիչները աշնանացան կատարել չէին կարողանում, չէին զբաղվում նաև այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ: Նրանց հիմնական զբաղմունքն ու ապրուստի միջոցը անասնապահությունն էր ու, մասամբ, գարնանացան գարին, չնչին քանակությամբ նաև ցորենը:

Հայկական լեռների ալպիական գոտում գարունը բացվում է հունիսին, և ծյան ծածկոցից հազիվ ազատված լեռնալանջերը ծածկվում են Մուղանի հարթավայրի և Արաքսպար հովտի խաշնարած ցեղերի անթիվ, անհամար սպիտակաբուրդ ոչխարներով և թաղիքե սպիտակ վրաններով:

Գարնան ու աշնան ամիսներն անծրևաշատ են, կարկուտներն՝ անխուսափելի:

ՁՐԵՐԸ

Ղարադաղը կարելի է համարել երկրագնդի ամենաջրառատ շրջաններից մեկը: Նրա աղբյուրները բազմահազար են, բոլորն էլ սառնորակ, վճիտ ու քաղցրահամ:

Ղարադաղը հարուստ է նաև հանքային ջրերով (քմաջուր), սակայն չեն ուսումնասիրված նրանց բաղադրությունն ու բուժիչ հատկությունները:

Ղարադաղի հայերի մեջ տարածված էր նաև ջրի պաշտամունքը: Նրանք բոլոր հանքային ջրերը, պաշտում էին որպես սրբություն և օգտագործում՝ որպես բուժամիջոց:

Ղարադաղի նշանավոր հանքային ջրերն էին.

Տաք ջուրը. գտնվում է Քեյվան գավառակի Ղասումաշեն գյուղից արևելք, Մոթալլու գյուղի մոտ:

Ողանի քմաջուրը՝ Մեշափարա գավառակում:

Գիրմավնի քմաջուրը՝ Հասանով գավառակում:

Խանագահի քմաջուրը՝ Դիզմար գավառակում:

Թրվենի քմաջուրը՝ Դիզմար գավառակում:

Աղաղանի քմաջուրը՝ Դիզմար գավառակում:

Լազգուն գյուղը միակն էր Ղարադաղում: Լճակի մեջ ուրիշ աղբյուրներից ջուր չէր լցվում, ջրերի կուտակման ակունքը հայտնի չէր: Լճակից ջրի

հոսք չկար, ջուրը տարվա բոլոր եղանակներին մնում էր նույն մակարդակին, պարզ էր ու վճիտ: Այս լճում յուրահատուկ որդեր կային, որոնց տեղացիներն անվանում էին «լազգի» (տզրուկ): Դրանց միջոցով որոշ հիվանդություններ բուժելու համար, հիվանդներից արյուն էին հանում:

Հին ու նոր քարտեզներում Պարսպատունիքի ջրառատ գետակներից միայն մեկի անունն է գրված՝ Կալանբար (այժմ Քիլեյբար): Մնացած գետակների անունները ներկայացնում ենք գավառի բնակիչների օգտագործած ձևերով:

Սըղըն գետը՝ Քեյվանում,
Քիլեյբարը՝ Քեյվանում,
Արըղնան և Գանձառը՝ Հասանովում,
Քովնին՝ Խանագահ, Վանստան և Օվլի վտակներով՝ Դիզմարում:
Ուշտուբինը՝ Դիզմարում:

Նշված վեց գետակներն էլ հոսում են դեպի հյուսիս ու խառնվում Արաքսի ջրերին: Բոլոր գետակները կրում են այն գյուղերի անունները, որոնց տարածքից թափվում են Արաքսի մեջ:

Ղարադաղի բոլոր գետակները սրընթաց հոսանք ու փոքր ջրվեժներ ունեն, տեղատարափ անձրևներից ու ձնհալի ջրերից հաճախ են հորդանում ու պղտորվում, որի պատճառով գրեթե զուրկ են ձկներից:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ղարադաղի միջին գոտին, գրեթե համատարած՝ ծածկված է թավուտ անտառներով: Անտառները կոչվում են մոտակա գյուղերի անուններով՝ Խանգահի ծմակ, Հուժի ծմակ, Ողանի ծմակ, Շավլու ծմակ և այլն: Բոլոր անտառներում գերակշռում են կաղնի և բոխի ծառատեսակները:

Անտառները 5-6 տարին մեկ հատում էին, փայտածուխ պատրաստում, գրաստներով տեղափոխում Թավրիզ և վաճառում: Անտառներում քիչ քանակությամբ աճում են նաև թխկի, դխկի, կըռըզնենի, հացի, իլիժեհրի և իգենի: Դեպի Արաքսպար իջնող լեռնափեշերում աճում է նաև բռնչենի (բուռուշնի), որը պաշտամունքային ծառ է, զըղըզի (ծամոնի ծառ) և մախե (եղևնի):

Խոնավ անտառներում և ջրառատ ձորակներում աճում են նաև ընկուզենի, ղուրա (վայրի խաղող), սալորենի, տանձենի, խնձորենի, նշենի, հոնի, թզենի, զկռենի, կարմիր ու բալագույն սըզնի, նռենի, թթենի, թակողե-

նի (տկողնի), բալենի, կեռասենի և այլն, որոնք ամեն տարի առատ բերք են տալիս:

Անտառների բացատներում փարթամորեն աճում են կարմիր մորին, մոռն ու մոշը:

Բազմազան ու բազմատեսակ են թփերը (քոլ), որոնք առավելապես աճում են արևահայաց լեռնափեշերում: Ստորև նշում ենք առավել տարածված մի քանի տեսակներ.

Արջիգյուլօլի. ունի կլորավուն, զուգահեռ դասավորված տերևներ, զույգ պտուղներով, որոնք հասուն ժամանակ մուգ սև են, հազվադեպ՝ օգտագործում էին որպես լուծողական:

Գյուլմասուռի. ունի հաստ ու բոլորձև տերևներ: Պտուղները ծաղկաթափումից հետո սպիտակ են լինում, ամառվա ընթացքում կարմրում են, իսկ աշնանը հասունանալով՝ սևանում: Այս թփի մատղաշ ճյուղերից գործում էին զանազան ձևի ու չափի ամուր կողովներ, պատրաստում բուրդ բացելու ճիպոտներ ու խրձերի կապեր:

Կուծուլխի. ճյուղերը փշոտ են, ունի թթվաշ տերևներ ու ողկուզաձև պտուղներ: Օգտագործում էին որպես քրտնաբեր դեղամիջոց՝ ջրիկ ճաշատեսակներում: Կեղևից ստանում են ներկանյութ, կտավ ներկելու համար:

Հաղարճի. աճում է գլխավորապես քարափներում. ամռանը հասունանում են փնջաձև քաղցրահամ պտուղները:

Ճապկի. տերևները շատ նման են հոնի տերևներին, ունի փնջաձև մանր պտուղներ, որոնք չեն օգտագործվում: Ճապկին ունի շատ ամուր ու կոկիկ փայտ, որից պատրաստում էին կացնի, բահի կոթեր, մահակներ ու ճիպոտներ:

Մալմուլի. ունի կապտավուն քաղցրահամ պտուղներ: Մատղաշ ու ճկուն ոստերից ցախավել էին պատրաստում:

Մասուր. փշոտ թուփ է, վարդանման ծաղիկները հավաքում էին, չորացնում ու օգտագործում թեյի մեջ: Հասուն, կարմիր պտուղները թարմ վիճակում ուտում էին, իսկ չորացրածից թեյ պատրաստում:

Պուրպուճակի. աճում է միայն ջրառատ ձորակներում, ունի ժապավենաձև ծաղիկներ, նման լոբազգիներին: Պտուղները դեղին գույնի են, հասունացած ժամանակ վերափոխվում են նուրբ ու թափանցիկ փոքրիկ փուչիկների, որոնք սեղմելիս պայթում են: Տեղացիները այդ պարկերին անվանում են «պըրպօճակ», որից էլ առաջացել է թփի անունը:

Ջուրիազգի. նրա նեղ ու երկար փնջածև տերևները ջորու պոչի նմանություն ունեն, այդ իսկ պատճառով ստացել է այդ անունը:

Սըխնի. աճում է ցածրադիր բլուրների վրա: Աշնանը հասունանում են կարմրագույն փայլուն պտուղները՝ զույգերով, որոնք ունեն քիչ դառն ու քաղցրահամ պտուղներ: Այս ծառատեսակի ամուր փայտից էին պատրաստում լծասարքի սամի կոչվող մասերը:

Սընջի. աճում է ջրառատ ձորակների եզրերին և քարքարուտներում: Ունի կլոր տերևներ, կորեկաչափ սերմերը պատած են լինում բամբականման, նուրբ, սպիտակ թաղանթով: Նրա կեղևն ու ճյուղերը օգտագործում էին նարնջագույն ներկ ստանալու համար: Կտրած ճյուղերն ու արմատները տալիս են խնկահամ կպչուն խեժ:

Սըվըցաքե. փշոտ թուփ է, տերևները նեղ են ու երկարավուն, ունի հաստ ու ուղիղ ասեղնածև փշեր: Սև գույնի, կեռասածև, մանր պտուղներից սև թանաք էին ստանում:

Սփոթնի. գարնան ավետաբերն է, ունի շատ մանր ու նուրբ տերևներ, փնջածև սպիտակ ծաղիկներ: Հիանալի կեր է մատղաշ գառների և ուլերի համար: Ճկուն ու նուրբ ճյուղերից ցախավելներ էին պատրաստում:

Ցաքե. ամենափշոտ ու տարածված թուփն է արևկող լեռնալանջերում. հասունացած սերմերը նման են բրոնզե ծնծղաների: Այս թփերը օգտագործում էին այգիներն ու բանջարանոցները ցանկապատելու համար:

Թփատեսակների թվարկումը կարելի է շարունակել, բայց գտնում ենք, որ այսքանն էլ բավական է պատկերացում կազմելու համար Ղարադաղի տարածքում դրանց բազմազանության մասին:

Ղարադաղի տարածքում աճում են նաև անթիվ ու անհամար խոտաբույսեր, գույնզգույն ծաղիկներ ու հրաշալի բանջարեղեններ: Բոլորի մասին գրելն անհնար է, կծանոթացնենք միայն այն բույսերին, որոնք օգտագործվում էին որպես սննդամթերք ու դեղամիջոց:

Բէնջար (բանջար). աճում է վաղ գարնանը բանջարանոցներում ու վարելահողերում, տալիս է մեկ ցողուն, ունի կարմիր ծաղիկներ: Հավաքում էին մատղաշ ժամանակ, մանր կտրտում ու «կօտեմ»[16] (միջուկով հաց) թխում:

Բէքի (բոխ). թուխ կանաչավուն բույս է, տերևներին փոխարինում են մատնանման ծողիկները, դառնահամ ու կծվահամ է: Հավաքում էին մեծ

[16] Կուտապ, պասի հացատեսակ, պատրաստում էին ընկույզով ու կանաչիներով (***Ստ. Մալխասյանց***, Հայերէն բացատրական բառարան (այսու՝ ՀԲԲ), հ. 2, էջ 485), (***խմբ.***):

քանակությամբ: Օգտագործում էին եփած վիճակում և թթու դրած: Չմռան թթուն պահում էին կարասներում:

Գեշնիջ (համեմ). աճում է խոնավ սևահողերում, ունի դուրեկան, սուր բուրմունք: Օգտագործում էին տարբեր ճաշատեսակներում, իսկ հասունացած սերմերը՝ պանրի մակարդ պատրաստելու համար:

Դէսնը (դաղձ). աճում է աղբյուրների ակունքների մոտ, ջրերի ափերին: Մատղաշ ցողուններն ուտելի են, հասունացած ծաղիկները չորացնում էին ու թեյի փոխարեն օգտագործում: Թարմ ծաղիկները գցում էին քանով ճաշի մեջ:

Եղան լուզի (եղնիկի լեզու). հավանաբար անունն ստացել է լեզվանման գեղեցիկ տերևներից: Դրանք օգտագործում էին թարախակալած վերքերը մաքրելու համար: Նրա շշաձև ցողունն ու սերմերը հավաքում էին, չորացնում ու, եփելով կաթի մեջ, տալիս հազ ունեցողներին:

Թալթալ. աճում է աղբային հողերում. փարթամ, մոխրագույն խիտ տերևներով բույս է, օգտագործում էին «կօտեմի» մեջ:

Թրթնջուկ. տարածված է խոնավ ջրառատ վայրերում, երբեմն գցում էին «կօտեմ» հացատեսակի մեջ:

Ժեփրոն. Ավելուկին շատ նման է, աճում է միայն ճահճուտներում ու ջրառատ վայրերում: Տերևներն ու ցողունը թարմ ու չորացրած վիճակում օգտագործում էին որպես դեղամիջոց՝ բորբոքված վերքերի բուժման համար և որպես քրտնաբեր:

Իվիլուկ (ավելուկ). ընդհանրապես տարածված է աղբային հողերում: Նրա երկարավուն տերևները հավաքում էին հասուն ժամանակ, գեղեցիկ, երկար հյուսեր անում ու ծածկի տակ չորացնում: Օգտագործում էին աղցան պարաստելիս: Ստամոքսի հիվանդություն ունեցող մարդկանց խորհուրդ էր տրվում պարբերաբար ուտել:

Խազիզ. աճում է խոնավ սևահողերում՝ աղբյուրների մոտ, ջրերի եզրերին: Ունենում է մեկ ցողուն, գագաթին սպիտակ ծաղկեփունջ, որը հասունանալով, վերածվում է կլոր դեղնավուն սերմերի:

Խաղէնջ (եղինջ). աճում է աղբային փխրուն հողերում, պատված է մանր, սպիտակ, աննշան փշիկներով, ձեռք տալիս սաստիկ քոր և թեթև ցավ է պատճառում: Մատղաշ ցողունները հավաքում էին, վրան աղ ցանում ու, ափերի մեջ տրորելով, ուտում: Հասունացած ցողուններով, բուժման նպատակով, հարվածում էին ցավող հոդերին:

Խէժնուկ. աճում է փափուկ վարելահողերում: Մուգ կանաչավուն է, ունի երկար թերթիկներ: Հում վիճակում ուտում էին սպիտակ ծլերը, ճկուն ցողուններն ու թերթիկները:

Խընջղլօզ. դուրս է գալիս վաղ գարնանը՝ ձյան հալոցքի հետ, ունի սոխի նման համեղ գլխիկ: Եփած վիճակում ուտում էին ցողունները և գլխիկները:

Խիլվիլի. չորասեր է, աճում է վաղ գարնանը աղբային փխրուն հողերում: Կապտավուն մատղաշ ծլերից աղցան էին պատրաստում:

Խոռնը (ուրց). ունի սուր դուրեկան բուրմունք, թարմ ու չորացրած ցողունները օգտագործում էին տարբեր ճաշատեսակներում և թեյի փոխարեն:

Ծըտի բէնջար. աճում է վաղ գարնանը աղբային փխրուն հողերում: Դրանցով սնվում են ծտերն ու ճնճղուկները, որի հետ էլ կապվում է բույսի անունը: Ծտի բանջարը շատ արագ տարածվում է գետնին:

Ծտերի նման՝ ուրախ ու հաճույքով նրա նուրբ բողբոջներն ուտում էին նաև երեխաները:

Ծըտի ցորեն. հոտով և համով ազգակից է ուրցին, ավելի երկար ցողուններ ունի: Ծաղկակալման ժամանակ հավաքում էին, ցողունները մանրացնում, չորացնում ու օգտագործում որպես ճաշերի համեմունք:

Ծիծեռնակաթև. աճում է խոնավ, աղբային փափուկ հողերում, ծիծեռնակի թևերի նման տերևներ ունի, կենտրոնից վեր է բարձանում կոկիկ ցողունը, դեղին ծաղկագլխիկով: Օգտագործում էին «կօտեմի» միջուկի համար:

Ծմէփուկ. երկար ցողուն ունի, կարող է հասնել մինչև 10 մետրի: Ուտելու համար հավաքում էին 10-20սմ ժամանակ, նման են մոմերի, շատ համեղ է խորոված վիճակում:

Կէծակ (երինջակ). անունը, հավանաբար ստացել է չոր ու սուր փշերի կայծակնային խայթումից, որը թեթև ցավ է պատճառում: Աճում է բոլոր տեսակի հողերում, քարքարուտներում. ջերմասեր բույս է, տերևներն ու ցողունի գլխիկը ծածկված են փշերով: Ճկուն ցողունների կեղևը հանում էին, միջուկն ուտում, որը դուրեկան համ ուներ:

Կինձկինճ. աճում է թփուտներում, կանաչ բարձր ցողունները՝ որպես կանաչեղեն, ուտում են հացի ու պանրի հետ, օգտագործում «կօտեմի» միջուկի համար:

Կռըզօկ. աճում է թփուտներում, թաքնված խոտաբույսերի տակ, սակայն նրան մատնում են բարձր ցողուններն ու ծեռքի մատներ հիշեցնող

տերևները: Ունի հավկիթի չափ մեկ դեղնագույն պալար, որը հունիս, հուլիս ամիսներին պոկում էին և հում վիճակում ուտում՝ ծիծվաթափության համար:

Մամածիծի. աճում է բանջարանոցներում, ոչ աղբային փափուկ հողերում, ունի հաստ ցողուն, վառ կարմիր փնջաձև ծաղիկների մեջ մեղրահամ հյութ է հավաքվում, երեխաները դրանք պոկում էին և հյութը ծծում:

Մնեշակ (մանուշակ). քաջածանոթ կապույտ գլխիկով ծաղիկն է: Օգտագործում էին «կօտեմի» միջուկի համար:

Շիրիշ. հայրենիքը ժայռերն են, քարքարուտները, գարնան ավետաբեր է համարվում: Ունի ծեռքի իրար հպված մատների նման հաստ ու համեղ թերթիկներ, որոնք պարուրված են սպիտակ շղարշի նմանվող թաղանթով, օգտագործում էին «կօտեմի» միջուկի համար:

Բյազից տարբեր չափի տոպրակներ էին կարում, ներսն ու դուրսը պատում այդ բույսի արմատներից ստացած մածուցիկ նյութով ու, չորանալուց հետո, օգտագործում աղ, յուղ, պանիր, ձավարեղեն և այլ մթերք պահելու համար:

Շօնգ-շօնգ. երկար տերևներն ու ցողունը պատված են մանր փշերի նման սպիտակ թաղանթով, նորածիլ կոկոնները օգտագործում էին աղցանի մեջ, իսկ կիսահասուն ցողուններից թթու էին դնում:

Պըրպօճակ. աճում է ձորակներում, ջրին մոտ, ունի վեր բարձրացող կանաչ ցողուն. ամեն մի տերևի տակ՝ մեկ կամ երկու ծաղիկ: Ծաղկաթափումից հետո այն ստանում է աստղածև սրածայր տոպրակի տեսք՝ մեջը կլոր գնդիկ: Աշնանը, հասունանալով, վառ դեղին գույն է ստանում: Հասուն սերմերը օգտագործում էին վերքեր բուժելու համար: Հավաքում ու մեծ քանակությամբ տանում էին Թավրիզում վաճառում, որտեղ դրանով ներկում էին զանազան ծրագուներ ու մաքուր յուղի տեսք տալիս:

Ջրի կոտեմ. ջրի սիրահար է, աճում է գետակների ափերի ավազի վրա: Ունի ճկուն ցողուն, փարթամ ու փափուկ տերևներ, փնջաձև մանր, սպիտակ ծաղիկներ, կծու համ, օգտագործում էին որպես կանաչի:

Սալմաշուդ. փաթաթվող բույս է, հողից դուրս գալով փաթաթվում է, ինչի որ պատահի, աճում է գետակների եզրերին, երկարում է, հասնելով տասնյակ մետրերի ու ճյուղավորվում: Աշնանը տալիս է սպիտակ, սրածայր թերթիկներով ծաղիկներ՝ արբեցուցիչ բուրմունքով: Դրանք հավաքում էին, հով տեղում չորացնում, հակավորում, տանում՝ Թավրիզում վաճառում:

Նրանից պատրաստում էին հացաթխման ու գարեջրի հասունացման դրոժներ:

Սիբեխ. շատ տարածված է վարելահողերում: Օգտագործում էին որպես աղցան, իսկ մատղաշ ցողուններից թթու էին դնում:

Սխտորուկ. վայրի սխտոր է, աճում է Սիլյան սարի բարձրադիր լանջերին: Օգտագործում էին սխտորի փոխարեն և որպես համեմունք:

Սպիտակ բէնջար. կոճղազգի է, սիրում է սևահողը, աճում է վարելահողերում, կորնգանի ու առվույտի դաշտերում: Ցողունը նման է խորովածի շամփուրի, պատված է կապույտ ծաղիկներով: Քաղում էին, հյուսեր անում ու չորացնում: Օգտագործում էին որպես աղցան կամ մատուցում ձավարի հետ:

Փիավա. սոխազգի բույս է, աճում է քարափներում: Երկար սոխանման թերթիկներ ունի, հաճելի է ուտել հացի ու պանրի հետ:

Քէղ. աճում է գետակների ափերին ու աղբյուրների մոտ, ունի խոշոր աստղածև տերևներ, մոտ 0,5մ բարձրությամբ ցողունը ծկում ժամանակ կեղևահան էին անում և հում վիճակում ուտում, նաև թթու էին դնում:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Գազաններն ու կենդանիները նույնպես բազմազան են եղել Ղարադաղում: Անտառների համատարած ոչնչացման ու անսահմանափակ որսի հետևանքով կենդանիների մի քանի տեսակ իսպառ վերացել էին դեռևս մեր ուսումնասիրության տարիներին, սակայն տեղացի ծերունիները դեռ չէին մոռացել ու դրանց մասին խոսում էին խորը ափսոսանքով:

Ղարադաղի բնակչության մեջ մի առանձին հավատ կար դեպի կենդանական աշխարհը: Հավատում էին, որ գոյություն ունեն գազաններին, կենդանիներին ու թռչուններին հովանավորող աներևույթ ոգիներ, որոնք նշանակված են աստծո կողմից: Առանց այդ ոգիների թույլտվության նույնիսկ գայլը չէր կարող գառ հոշոտել:[17]

Պատմում էին, որ կենդանիներին հսկող ոգին գիտեր բոլոր կենդանիների լեզուն:

Վարշակ (լուսան). տարածված էր ամբողջ տարածքում: Ամեն տարի որսում էին 15-20 հատ, մորթիները լավ արժեք ունեին, վաճառում էին Թավրիզում:

---

[17] Ղարադաղում կային պառավներ, որոնք գայլի բերան փակելու գերբնական՝ աստվածատուր շնորհ ունեին:

Վայրի կատու. տարածված էր եղեգնուտներում: Որսում էին մորթու համար:

Արջ. ամենատարածված գազանն էր: Նրանց օրը ցերեկով կարելի էր տեսնել տանձենու, ընկուզենու և այլ պտղատու ծառերի վրա՝ հասուն մրգեր թափ տալիս:

Գյուղացիները ձմռան ամիսներին, միայն խմբերով էին գնում արջի որսի՝ հաճույքի համար: Սահմանափակ կարգով արջի միսն ու յուղը օգտագործում էին ժողովրդական բժշկության մեջ որպես դեղամիջոց, քանի որ հայ եկեղեցու կողմից խստիվ արգելված էր արջի մսի օտագործումը, ինչպես խոզի մսինը՝ մահմեդականների մեջ: Արջին ձեռք տվողը կամ միսն ուտողը քառասուն օր իրավունք չուներ եկեղեցի մտնել:

Գայլ. տարածված էր ամենուրեք: Ձմռան ամիսներին հաճախ կարելի էր տեսնել մեծ ոհմակներով:

Աղվես. անսպառ էր, տարածված ամենուրեք: Գեղեցիկ մորթին վաճառելու համար ձմռան ամիսներին անարգել որսում էին հրազենով ու թակարդով:

Չախկալ. աղվեսի նման շատ տարածված չէր, երևում էր հազվադեպ՝ մթին անտառներում:

Փորսող. կարելի էր տեսնել ողջ տարածքում: Կարճ ոտքերով, սպիտակ ճակատով դանդաղաշարժ կենդանի է: Համեղ միս ունի, ճարպը որոշ հիվանդություններ բուժելու հատկություն ունի: Որսում էին ձմռան ամիսներին՝ գեղեցիկ ու արժեքավոր մորթու համար:

Ջիրաշօճ (ջրշուն). շատ հազվադեպ երևում էր Արաքսի ափերին և ջրառատ գետերում, որսում էին թանկարժեք մորթու համար:

Սովսար (սամույր). ամենաթանկարժեք մորթի ունեցող զազանիկն էր: Բուն էր դնում ծառերի փչակներում ու ժայռերի ճեղքերում:

Եղջերու. տարածված է եղել ողջ տարածքի մթին անտառներում, խոր ձորերում, կանաչապատ սարալանջերում: Խանագահ գյուղի դիմաց մի գեղեցիկ ժայռ կար, որի մոտ եղնիկները օրվա շոգ ժամանակ հանգստանում էին: Այդ ժայռին անվանում էին «Եղնեն քարը»: Եղնիկներին որսացել են անարգել՝ տարվա բոլոր եղանակներին: 1900-ական թվականներին, աստվածատուր որսորդների հետ վերացել էր նաև եղնիկը:

Կիտար. ժամանակին եղել է գավառի կենդանական աշխարհի զարդը: Դարավոր անտառների ոչնչացման և տարվա բոլոր եղանակներին անարգել որսալու հետևանքով վերացել էր:

Խոզ. գավառում ամենատարածված կենդանին էր, խմբերով վխտում էին ծմակների թավուտներում և մթին ձորերում, Արաքսպար հովտի շամբուտներում, ոչնչացնում բրնձի, եգիպտացորենի բերքը: Որսում էին անսահմանափակ ու անարգել: Խոզի որսի գնացած որսորդները երբեք դատարկ չէին վերադառնում:

Վարազները իրենց սուր ժանիքներով երբեմն թրատում էին որսորդական հսկա շներին, հարձակվում որսորդների վրա:

Խոզի մազերը վաճառում էին, իսկ կաշվից ամենաընտիր տրեխն էին պատրաստում: Մսից ու ճարպից զանազան ճաշատեսակներ էին պատրաստում:

Արղալի (մուֆլոն, վայրի ոչխար). անարգել ու անժամանակ որսի պատճառով ամռան ամիսներին հազվադեպ երևում էին ալպյան արոտավայրերում, ձմռանը՝ Արաքսին հարող արևաշատ քարքարուտներում:

Քարայծ. իրենց անունին համապատասխան, կարելի էր հանդիպել գավառի բոլոր ժայռերում, ձորակներում ու թավուտներում: Արագավազությունը նրանց փրկել էր մասսայական ոչնչացումից: Հաճախ կարելի էր հանդիպել մինչև 100 գլխից բաղկացած հոտերի:

Նապաստակ. տարածված էր ամենուր, մասսայաբար որսում էին:

Կօզնը (ոզնի). ոզնու մեծ տեսակը, որին անվանում էին «այլակերպ», հատ ու կենտ երևում էր Արաքսին մոտիկ շամբուտներում ու արևաշատ եղեգնուտներում:

Փոքրիկ ոզնիները տարածված էին գավառի ողջ տարածքում: Նրանց հաճախ կարելի էր տեսնել թունավոր օձերի հետ մենամարտելիս, գրեթե միշտ հաղթանակը ոզնունն էր լինում:

Որպես օձերի հավերժ թշնամու, ոզնուն որսում էին հազվադեպ՝ հոդացավով տառապող հիվանդների համար, միսն օգտագործելով որպես դեղամիջոց:

Ոզնու փշապատ մորթին ամրացնում էին գոմի դռան վերևում՝ որպես չար աչքը վանող հմայիլ:

Կօրէ (կրիա). կենդանական աշխարհի միակ ազատ կենդանին էր, որին երբեք չէին որսում: Դրա փոխարեն տաք ավազների մեջ մոլի կարգով փնտրում էին նրա ձվերը:

Կրիայի ձվով կերակրում էին նորածին երեխաներին, հավատալով, որ դրանցով սնված երեխան ողջ կյանքում աղիքային և ստամոքսային հիվանդություններ չի ունենա:

Օղնը (օձ). Ղարադաղի հայերն օձին անվանում էին նաև «վղակեր» (հողակեր):

Օձերի բների առջևում հողի կուտակում չտեսնելով եկել էին այն համոզմունքին, որ բույն պատրաստելիս օձերն ուտում են հողը:

Վստահաբար կարելի է ասել, որ աշխարհում գոյություն ունեցող օձերի շատ ու շատ տեսակների կարող ես հանդիպել գավառի ողջ տարածքում՝ սկսած թունավոր իժերից, գյուրզայից, «շահ մար»-ից (օձերի թագավոր) մինչև ջրային օձերը:

Անձամբ տեսել եմ սև գույնի հսկա մի օձ, որը մեկ մետրաչափ վեր էր խոյացել ու կատաղի սուլում էր:

Օձերին վերաբերվող հետաքրքիր դեպքերի մասին կարելի է հատորներով գիրք գրել:

Մարդկանց ու ընտանի կենդանիներին խայթելու, թունավորման դեպքեր հաճախ էին տեղի ունենում, որոնց բուժում ու մահից փրկում էին «սոփիները» (սուրբ): Սոփի էին անվանում այն մարդկանց, որոնք անվախ ու ազատ բռնում էին օձերին և իրենց թքով բուժում խայթվածներին:

Մեր օրերում՝ 1930-1946թթ. Ղարադաղում երկու սոփի կար, մեկը՝ Լումա գյուղում, հայազգի Սարգիսը, մեկն էլ Դարանի գյուղում՝ քուրդ Օջախ Սուլթին:

Լօկ (լորտու). օձերի դասին պատկանող սողուն է, ունի բաց դեղնավուն գույն, հազվադեպ՝ սևագույն: Անվտանգ են, առանց թույնի:

Քթանքուշ. մողեսի տեսակ է, շատ է հանդիպում ավերակներում, քարանձավներում, անվտանգ է: Լինում են գորշագույն, ունեն կարճ ոտքեր, մարմնի երկարությունը լինում է 20-40սմ:

Բավական էր, որ նրանց բնի մոտ մի ձայն լսվեր, շտապ դուրս էին գալիս: Տեսնելով մարդկանց կանգնում էին ու ապուշ հայացքով դիտում: Գյուղացիները ասում էին. «Քթնքուշեն կյեշն բերանը փակ: Ընդուր բուղազեն դուռու գյոլ՝ մարթեն կռնքնեն ա հմբրիս: Հուր կըռնքնեն որ հմբարի, էն շուդավ կմըռնի: Ըդուր հետե ալ քթանքուշ տսնալուց պետք ա բերանը փակ պահս»:

Կիտվետուկ. կարելի է ասել, որ սրանք էլ են պատկանում մողեսների դասին, ունեն կարճ ոտքեր, բավականին արագավազ են ու ճարպիկ, ապրում են թփուտներում, ունեն մոտ 30սմ երկարություն, կանաչավուն գույն, սև զոլերով, փորի մասը՝ մուգ դեղին: Նրանց ամռան ամիսներին կարելի է տեսնել օձերի հետ մենամարտելիս:

Գյուղացիները բացատրում էին, որ օձը թույն է ստանում կիտվետուկից:

Իհարկե, դա համոզիչ չէր, և գաղտնիքը մնում էր անբացատրելի:

Մի օր հանդում եզները արածեցնելիս լսեցինք մեր ընկեր Վարդանի աղմկոտ կանչը.

– Տղերք, էստեղ եկեք, մի հրաշք կենդանի եմ գտել, գլխի կողմից երկու ոտք ունի ու մի պոչ:

Շտապեցինք Վարդանի մոտ: Բոլորս նկատեցինք, որ տեղ-տեղ երևում է խոտերի մեջ թաքնված օձի մարմինը և իրոք, բերանի կողմում կար երկու ոտք և մի բարակ պոչ:

Մեր մեծ ընկերը Արշակն էր: Նա իսկույն կռահելով, ասաց.

– Տղերք, սա սովորական օձ է: Ինչ-որ կենդանու կամեցել է կուլ տալ, չի կարողացել, մնացել է բկին, եկեք փորձենք կենդանուն ազատել, տեսնենք ինչ է:

Տղերքը խոտերի տակից հանեցին օձին: Արսենը մահակով սեղմեց օձի մեջքը, իսկ Արշակը տերևներով բռնեց օձի բերանի կենդանու պոչից, դուրս քաշեց: Դա բավական խոշոր կիտվետուկ էր, դեռ չէր սատկել, մի պահ կանգ առավ ու շորորալով փախավ:

Մենք եկանք այն համոզման, որ օձը կիտվետուկին փաթաթվում էր ոչ թե թույն ստանալու, այլև կուլ տալու համար:

Խլազնը (խլեզ). քաջածանոթ փոքրիկ մողեսն է, անվտանգ ու անթույն, հանդիպում է քարափներում, թփուտներում, մարգագետիններում և ամենուր:

ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Անգղ. Գիշակեր է, տարածված է ամենուրեք. կարծես յափնջիները ուսերին գցած, խմբերով թառում էին պատահական լեշերի կողքին ու դրանք ճաշակում:

Արծիվ. հանդիպում է ամենուրեք. նետի նման սլացիկ ու անվրեպ որսում է նապաստակ, կաքավ, օձ և այլ մանր կենդանիներ ու թռչուններ:

Ղըրղի (բազե). կա մի քանի տեսակ, որոնցից ամենավտանգավորը կապտավուն գույնի բազեներն են, որոնք յուրահատուկ են սրատեսությամբ և սլացիկ թռիչքով: Որսում են նույնիսկ իրենցից խոշոր ու ծանր կաքավին ու կարողանում տեղափոխել մագիլների մեջ առած:

Չըլղան. անունն ստացել է, հավանաբար չալպտուրիկ փետուրներ ունենալու համար: Պատկանում է բազեների ցեղին, չափերով արծիվներից փոքր են, բազեներից՝ խոշոր, բայց դանդաղաթռիչք: Չըլղանները առանձնապես սիրահար են տնային հավերի:

Անգղերը, արծիվներն ու բազեները բուն էին դնում բարձր ժայռերի ճեղքերում, հազվադեպ՝ երկնասլաց ծառերի կատարներին:

Բոլոր գիշատիչ թռչունները երկու ձու էին դնում:

Քաշ (ագռավ). քաշ՝ Ղարադաղի հայերի բարբառում նշանակում է ցածր: Ագռավները, մյուս թռչունների համեմատ, ցածր էին թռչում, դրա համար էլ ստացել են այդ անունը: Կար ագռավի երկու տեսակ՝ գորշ և սև:

Գորշ ագռավները ապրում էին բնակավայրերին մոտ, լեշակեր էին, սնվում էին աղբանոցներում: Ագռավը հազվադեպ հավի փոքր ճտեր կամ չորաթան էր գողանում:

Ագռավը համարվում էր չարագուշակ, բոթաբեր, նրա կռինչը նշանակում էր մոտալուտ վտանգ կամ մահ:

Սև ագռավները համեմատաբար քիչ էին, ապրում էին ժայռերի ծերպերում:

Կաչաղակ. երկարապոչ չալպտուրիկ թռչունը տարածված էր ողջ տարածքում, կարելի էր տեսնել գյուղերի աղբանոցներում, անտառներում, ջրառատ ձորակներում և այլ վայրերում: Չնայած, չորաթանի մոլի սիրահար լինելով, ստացել էր «գող» մականունը, կաչաղակը համարվում էր բարեբեր, երբեք չէին որսում:

Կաչաղակի կչկչոցը մոտալուտ բարի լուր ու պանդուխտի վերադարձ էր ենթադրում:

Ծիծեռնակը համարվում է բույն շինողներից ամենավարպետը, բայց զիջում է կաչաղակին:

Չարդ. բազմագույն գեղեցիկ փետուրներ ուներ, ձմեռը չէր չվում: Չարդը կարող էր շան պես հաչել, կատվի պես մլավել, երեխայի պես լաց լինել: Գավառում ասացվածք կար. «Չարդի լեզվով է խոսում»: Դա վերաբերում էր այն մարդու խոսակցությանը, որը որոշակիություն չուներ:

Ղըռօն. մոխրագույն, թևերի կեսն սպիտակ թռչուն էր: Պարզ ու երգեցիկ ձայնով կարծես արտասանում էր թուրքերեն հետևյալ բառերը. «Գեթտի, գյալմադի» (գնաց, ետ չեկավ):

Ղումրի (տատրակ). տատրակները պարզ ու հասկանալի երգեցիկ ձայնով կրկնում էին գառների մայուկը:

Պապաճըշտ. թութակազգիներին պատկանող ամենափոքրիկ ու ամենագեղեցիկ թռչունն է. ունի ճնճղուկի մեծություն, երփներանգ փետուրներ: Փոքրիկ թռչնակը, ծառերի վրա թռչկոտելով, արագ ու պարզ արտասանում է՝ «պապաճըշտ, պապաճըշտ»:

Կաքավ. կաքավներին մեծ երամներով կարելի էր հանդիպել գավառի ողջ տարածքում: Քաջածանոթ էր իր գեղեցկությամբ, նախշուն փետուրներով, դուրեկան ձայնով, համեղ ու ընտիր մսով:

Նրանց անարգել որսում էին տարվա բոլոր եղանակներին: Որսում էին հինականում «դավլայով»:

Կաքավները սովորաբար ձվադրում են 11-17 ձու՝ միշտ կենտ, բայց ճտերը զույգ են լինում, բնի մեջ թողնելով մեկ ձու: Գյուղացիները հավատում էին, որ «Կաքավն անփորձ ու անվտանգ թուխս է նստում, ճտեր հանում ու մեկ ձուն թողնում՝ որպես մատաղ»:

Սալիմ. արտաքինով ու մսի որակով շատ նման է կաքավին, սակայն, ի տարբերություն կաքավի, որը սիրում է արևակող, ավազոտ վայրեր, սալիմն ապրում է զով լեռներում, խոտառատ դաշտերում: Սալիմը[18] դնում է 27-45 ձու, միշտ ծածկում չորացած բույսերով: Սալիմի փետուրները նրա միջավայրի գույնին են համընկնում՝ կանաչավուն:

Գավառի միջին գոտում, ամենուրեք հանդիպում են նաև սընդրքաղուշը (հոպոպ), ծիծեռնակը, կկուն, ներկարարը, փայտփորիկը և այլ գեղեցիկ թռչնակներ:

ՂԱՐԱԴԱՂԻ ԸՆԴԵՐՔԸ

Ղարադաղի ընդերքը, որը մի քանի անգամ մասնակիորեն ուսումնասիրել են օտարերկրացիները, հարուստ է օգտակար հանածոներով: Այդ հարստությունը մեծ գարմանք է առաջացրել. փորձեր են կատարվել դրանք շահագործել, բայց չի հաջողվել:

Չնայած երկրաբան չեմ, ընթերցողին կներկայացնեմ իմ ձեռքերով շոշափած ու տեսած նյութը:

Երկաթահանք. զարմանալի հսկա տարածություն է գրավում երկաթի հանքը: Այն սկսվում է Մեշափարա գավառակից, անցնում Հասանով գա-

[18] Սալամբ-անտառահավերի ցեղին պատկանող թռչուն, (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 4, էջ 169), (***խմբ.***):

վառակով, հասնում Դիզմարի արևմտյան մասը՝ ընգրկելով Ղարադաղի ողջ միջին գոտին:

Երկաթաքարը վարպետությամբ մշակում ու գյուղատնտեսական գործիքներ էին պատրաստում Մեշափարա գավառակի Դամիրչիլար (երկաթագործներ) գյուղի բնակիչները:

Խանագահ գյուղից 5կմ հարավ-արևելք, սարալանջի գեղեցիկ գրկում երկաթահանք կար, որին անվանում էին «Քյան»: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երկաթահանքը շահագործվել է 1875-90թթ., Ողան գյուղի բնակիչներ Թումանյան եղբայրների կողմից:

Այն ջրով ապահովելու համար հանքից դեպի արևելք, մոտավորապես 1կմ հեռավորությունից լեռնալանջով առու է փորված:

Հանքի շահագործումը դադարեցնելուց հետո դադարել է նաև առվի օգտագործումը:

Երկաթագործությամբ զբաղվում էին նաև Ղշլաղ գյուղի շատ բնակիչներ, օգտվելով Նամնա գյուղի մոտ գտնվող բաց հանքից:

Արծաթ. հանքը գտնվում էր Սարդու գյուղից հյուսիս, Մարդանաղա տանող ճանապարհին. չէր շահագործվում:

Արճիճ. գտնվում էր Սարդու գյուղից վերև, թաթարաբնակ Քրիմգան գյուղի մոտ: Հանքն այնքան հարուստ էր, որ որսորդները թափված քարերը հավաքում ու հրացանի գնդակներ էին պատրաստում:

Պղինձ. Աղաղան գյուղի ողջ տարածքը գտնվում էր պղնձի հանքի վրա:

Մոլիբդեն. Մարդանաղա գյուղից Խանագահ տանող ճանապարհը անցնում էր մոլիբդենի հանքի վրայով: Հավանաբար այն Մեղրի–Ագարակ հանքային գոտու շարունակությունն է կազմում:

Ոսկի. գտնվում էր Խանագահ գյուղի արևմտյան մասում: Խանագահացիները այդ հողատարածքին անվանում էին «Դանավըղ» (հատիկ հող): 19-րդ դարի երկրորդ կեսին այդ տարածքում ժամանակավորապես թուրքեր են ապրել, որոնք վայրն անվանել են «Զար զամին» (ոսկե հողեր):

1880-1900թթ. ոսկու հանքից օգտվել է Խանագահ գյուղի բնակիչ զարգար (ոսկերիչ) Խաչին: Հետաքրքրվելով գյուղացիների պատմածով, 1942թ. ուսումնասիրեցի ոսկու հանքի այն հատվածը, որտեղից օգտվել էր նա, ու գտա հավկիթաչափ գորշագույն մի քար, որի վրա կային ցորենի մեծության ոսկու 13 հատիկներ:

Կվարց. կվարցի հարուստ գոտին սկսվում է Ղուլուդի գյուղից, անցնում Խանագահի հյուսիսով, հասնում մինչև Նորաշենի հյուսիսային սահմանը: Բաց հանքից կարելի էր հավաքել կվարցի ընտիր ու խոշոր հատիկներ:

Գունավոր մետաղների ամենահարուստ հանքը գտնվում էր Հասանով գավառակի Սունգուն գյուղի մոտ: Այն առաջին անգամ ուսումնասիրվել է 1940թ.: Հանքի հարստությունը գրավել է եվրոպական շատ երկրների երկրաբանների ուշադրությունը: 1940թ. եվրոպական մի ընկերություն ձեռնարկեց այդ հանքերի շահագործումը:

1941թ. Իրանում տեղի ունեցած քաղաքական իրադարձության պատճառով օտարերկրացիները դիմեցին փախուստի, և աշխատանքները մնացին անավարտ:

Կարելի է շատ տեղեկություններ հայտնել բազմազան հանքերի մասին, բայց այսքանն էլ բավական է պատկերացում կազմելու համար Ղարադաղի ընդերքի հսկայական հարստությունների վերաբերյալ, որից խեղճ ու թշվառ ղարադաղցիները գրեթե չեն օգտվել երկրի անտերության ու խավարի պատճառով:

Ղարադաղի հանքային հարստություններն սկսել են ուսումնասիրվել 1840թ. իրանահայ մեծանուն վաճառական Սեթ խանի նախաձեռնությամբ, որը առևտրական կապեր ուներ Անգլիայի հետ:

Նա Իրանի թագաժառանգ Աբաս Միրզային հայտնում է իր մտադրության մասին՝ շահագործման հանձնել Ղարադաղի և Միանեի հանքերը: Թագաժառանգը մեծապես գնահատում է Սեթ խանի տաղանդն ու ձեռներեցությունը և արտոնություն է տալիս 20 տարով շահագործել դրանք՝ առանց հարկ վճարելու:

Սեթ խանը Լոնդոնից բերում է անգլիացի երկու հանքաբան և 20 հույն մասնագետ:

Սեթ խանի երեք տարվա աշխատանքները ապարդյուն են անցնում, քանի որ մահանում է Աբաս Միրզան, նա մնում է առանց հովանավորի ու թողնում աշխատանքը:

1925-1939թթ. երկրաբանական ուսումնասիրություններ են կատարել ամերիկյան, գերմանական, ֆրանսիական, իտալական և այլ երկրների մասնագետներ:

Մինչև օրս Ղարադաղի բոլոր հանքերը մնում են դարավոր քնի մեջ: Չկա ոչ մի գործարան ու ձուլարան: Նրա լազուր երկինքը մաքուր է ու անարատ 20-րդ դարի համատարած ծխից ու մրից:

Դեռ պատանի էի, և ինձ շատ էին հետաքրքրում հայրենի երկրի բնաշխարհի գաղտնիքները: Իմ հետաքրքրության շրջանակներն ավելի մեծացան, երբ դպրոցում սովորելիս ծանոթացա նախնադարյան մարդու ծագմանը, նրա կյանքին, զարգացմանն ու ապրելակերպին: Մեծ զարմանք էր

պատճառել նաև առասպելական ջրհեղեղը, Նոյի տապանը, աշխարհի ջրասույզ լինելը, կենդանական ու բուսական աշխարհի քարացումը ջրի տակ:

Իմ պատանեկան իղձերը ճիշտ ժամանակին լուծում գտան. 1933-35թթ. մեր գյուղի հասարակությունը ինձ նշանակեց գյուղի գառնարած: Շրջապատի ուսումնասիրության համար բացվեց ազատ և անարգել հնարավորություն:

Ներկայացնում եմ պատանեկան տարիների իմ դիտարկումներն ու հայտնագործությունները:

Առեղծվածային քարեր. 1933թ. աշնանը ընկերոջս՝ Սամվելի հետ գառներն արածեցնում էինք գյուղից մոտ 3կմ հյուսիս-արևելք գտնվող «Եղնիկի քար» կոչվող հանդամասում: Հանկարծ նկատեցի տեղին ու տարածքին անսովոր քարակույտեր: Դրանք նման չէին փլատակների, երկարավուն ու բարակ մոխրագույն թերթաքարեր էին հիշեցնում: Թափված քարերի արանքներում հղկված բազալտի նման մի քար գտա, որը կունենար մոտ 1կգ կշիռ ու նման էր նռան: Քարի հղկված մակերեսին կարծես տղամարդու կուրծք էր քանդակված, որը ներքևից գոտևորված էր երկար ծակոտիներով: Շրջակայքում գտա նմանատիպ մի քանի քարեր ևս, որոնք ավելի փոքր էին, բայց նույն զարդերն ունեին: Ուշադիր զննելով տեսա, որ քարակույտերն իրարից հեռու են 10-15մ:

Սիկկա դարա (արծաթի հանք). այդպես էր կոչվում Խանագահից հյուսիս-արևելք գտնվող ձորը, որտեղից սկիզբ է առնում Կուճի գետը:

Արաբերեն «սիկկա» նշանակում է դրամ, «դարա»՝ ձոր:

Ըստ գյուղի մեծահասակների՝ հնում դիվանի մարդիկ այդ ձորի արծաթի հանքը շահագործել են և հենց տեղում դրամ կտրել:

Սպիտակ կավահող. Խանագահի դիմացի բլրակի վրա կար ձյան նման սպիտակ կավի հանք: Կավահողից ամեն գարուն տանում էին, լցնում փայտե մեծ տաշտերի մեջ, ջրով շաղախում ու ավելներով շփում տների պատերին:

ՂԱՐԱԴԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ղարադաղում կար վեց ազգություն՝ հայեր, թուրքեր, քրդեր, թաթարներ, շամլուներ (գյոռավան), ղարաչիներ, որոնք դարերի ընթացքում, մինչև մեր օրերը ապրում էին առանձին բնակավայրերում: Խառը բնակչություն ոչ մի տեղ չի արձանագրվել: Տարբեր ազգությունները բնակվում էին ոչ միայն առանձին գյուղերում, այլև առանձին տարածքներում:

Ղարադաղի բոլոր ազգությունները հայերին անվանում էին «էրմանի»: Չի գրանցվել որևէ դեպք, որ հայերին անվանեն անհավատ՝ «գյավուր»:

Ղարադաղի բոլոր ազգությունները թուրքերին անվանում էին մուսուլման, քրդերին՝ քյուրդ, իսկ թաթարներին՝ թաթ:

Ղարադաղում ամենազարգացած և ամենաունևոր ժողովուրդը հայերն էին: Մյուս ազգությունները կախման մեջ էին նրանցից՝ դրամի, հացահատիկի, անասունի ձեռքբերման հարցերում: Այդ առումով էլ հայերը մեծ հարգանք և պատիվ ունեին մյուս ազգությունների մոտ, որոնք, բարձր գնահատելով հայերի մարդասիրությունն ու հարգանքը, նշում էին. «Հայերը մեր աղաքսակն են», նկատի ունենալով, որ ամեն տեսակ ճաշ պատրաստելու համար աղի կարիք է զգացվում, նմանապես իրենք էլ, կարիքի դեպքում, դիմում էին հայերի օգնությանն ու բարեսրտությանը, նշելով նաև. «Հայերը մեր մեղվի փեթակներն են, երբ բերաններս դառնանում է, հայերը պատրաստ են քաղցրացնելու, կարեկից լինելու»:

Ղարաչիները բնակվում էին ընդամենը երկու գյուղում, Արաքս գետին շատ մոտ: Մի գյուղը գտնվում էր Ուշտուբին գետակը Արաքսին խառնվելուց դեպի վեր, մոտ 20կմ հեռավորության վրա, իսկ մյուսը՝ նույն գետակից մոտ 5կմ ներքև:

Քրդերը բնակվում էին Արաքսին շատ մոտ, զբաղեցնելով պարսկական Ջուլֆայից մինչև Կուրի ու Արաքսի միացման վայրը:

Թաթարները զբաղեցնում էին Արաքսի գետափնյա տարածքը, Կուր գետի գետաբերանից դեպի արևելք, Կասպից ծովն ընդգրկող մասը:

Արաքսպար հովտից քիչ բարձր, միջին գոտուն չհասած, Մեշափարա և Մինջևան գավառակների տարածքում, բնակվում էր շամլու կամ գյոռավան ազգությունը:

Հայերը ապրում էին Ղարադաղ գավառի միջին գոտում, արևելքից արևմուտք:

Թուրքերն ապրում էին գավառի բարձրադիր գոտում, արևելքից արևմուտք:

Մինչև 1930թ. Իրանում մարդահամար չի կատարվել, որի պատճառով, Ղարադաղի բնակչության ընդհանուր թիվը, թեկուզ մոտավոր ճշտությամբ, չենք կարող ասել:

ՀԱՅԵՐ

Պատմական Հայաստանի Կողմունք Մարաց գավառը, Կատիշք, Քոշաթաղ և Դրունք հայոց գավառների հետ 1515թ. պարսից իշխանության կողմից վերանվանվեց Ղարադաղ:

Ղարադաղի հայերն էլ մշտապես կիսել են իրենց ժողովրդի տխուր ճակատագիրը: Պատմության մեջ չի եղել Հայաստան արշաված որևէ օտար նվաճող, որի զորքի ձիերի սմբակները դոփած չլինեն Ղարադաղի հողը, սրերը խաչածևած չլինեն Ղարադաղի հայերի սրերին:

Ղարադաղը նվաճել են հռոմեացիները, արաբները, թաթար-մոնղոլները: Միջին դարերում այն կռվախնձոր է եղել թուրքերի ու պարսիկների միջև:

Ղարադաղի նվաճողները, լինելով օտար դավանանքի տեր, միշտ էլ իրենց վայրագ, անմարդկային դրոշմն են դրել հայերի վրա: Կոտորել են անխնա, գերեվարել, կողոպտել, սովի ու համաճարակների մատնել Հայաստանի հեռավոր ծայրամասում ծվարած մի բուռ հայերին:

Ղարադաղի լեռները համատարած պատված են անտառներով, կան անդնդախոր ձորեր, անմատչելի ժայռեր ու մթին քարանձավներ: Բնության նման ապաստարանները հայերին օժտել են լինել քաջակորով, աներկյուղ, հայրենասեր ու ըմբոստ: Ղարադաղցիները տարբեր տեսակ զենքեր գործադրելով պայքարել են իրենց պատիվն ու օջախը անարգողների դեմ:

Ղարադաղի հայերն էլ ժամանակին ունեցել են իրենց մելիքները. մելիք Կարապետ և մելիք Խաչատուր՝ Սարդու գյուղում, մելիք Ազարիա՝ Գանձառիում, մելիք Օհանջա՝ Օղայում, մելիք Սարգիս՝ Գիրմնավնում, մելիք Իսախան և մելիք Ջհան՝ Ղասումաշենում, Հարություն բեգ՝ Օրավ Քլալայում, Աբրահամ բեգ՝ Նորաշենում և ուրիշներ:

Հետագայում նման առաջնորդներ Ղարադաղը չի ունեցել:

Ղարադաղի մելիքները ժամանակին մեծ դեր են խաղացել հայերի պաշտպանության գործում՝ ետ մղելով քուրդ բեգերի ու թուրք խաների ավազակային հարձակումները: Չնայած մի քանի մասսայական գաղթերին, որոնց մասին մանրամասն կգրենք հետո, Ղարադաղի հայերն իրենց փառքն ու հողային սեփականության իրավունքը կարողացել են պահպանել մինչև 1900-ական թվականները:

Առաքել Դավրիժեցին գրում է «Շահ Աբասը Երևանի նահանգի հայերի գաղթեցման ժամանակ, նրանց վերահաս ծմռանը պահեց Ղարադաղում: Ապա գարնանը՝ քշեց, տարավ Իսպահանի շրջանը»:[19]

Շահ Աբասի պալատական պատմիչ Իսքանդար Մունշին ևս հաստատում է, որ. «Երևանի շրջանի ամբողջ բնակչությունը գաղթեցվեց Ղարադաղ, ազատվեցին միայն քչերը, որոնք ամրացել էին լեռների ծերպերում և անառիկ վայրերում»:

Հայերի նման համատարած գաղթից հետո Ղարադաղի Կատիշք, Քոշաթաղ և Դրունք շրջաններում, որոնք հայաշատ էին, այլևս հայեր չբնակվեցին, նրանց գյուղերում անմիջապես վերաբնակվեցին թուրքեր:

Շահ Աբասի նման հայաջինջ քաղաքականության մեղմացումից հետո, հայեր նորից վերաբնակվեցին Ղարադաղի՝ միայն Արաքսին հարող նախալեռնային գոտում: Նրանք, հավանաբար, բռնագաղթից մազապուրծ եղած հայերն էին: Չնայած հին հայկական շատ գյուղերում արդեն բնակվում էին թուրքեր, քրդեր ու գյոռավաններ, հայերին հաջողվեց զբաղեցնել միջին գոտու մի շարք գյուղեր, բայց Ղարադաղն այլևս չունեցավ նախկին հայաշատությունը, փայլն ու փառքը: Գավառում մեծամասնություն կազմեցին թուրքերն ու քրդերը, որոնք հանգիստ չէին տալիս հայ շինականին:

Կտրված լինելով երկրի կենտրոնից և դրսի աշխարհից, Ղարադաղում, պետական ոչ մի օրենք չի կիրառվել, գործել է թուրք խաների ու քուրդ բեգերի ինքնիշխանությունը:

Պարսից պետությունը մի քանի անգամ ձերբակալել և մահապատժի է ենթարկել Ղարադաղի որոշ խաների, տեղի հայերի նկատմամբ անօրինական վերաբերմունքի համար, սակայն նրանց սերունդների համար դրանք դաս չեն եղել, շարունակվել են շանտաժն ու կողոպուտը:

[19] Հայ ժողովրդի պատմություն, հ 4, էջ 100:

Նման մշտական կողոպուտներից, անօրինական ծանր հարկերից ու տուրքերից աղքատացած հայերը՝ ստիպված շարունակ դիմել են պանդխտության:

Մեր բազմամյա ուսումնասիրությունները հանգեցրել են այն համոզմունքին, որ Ղարադաղի ողջ տարածքում հնուց ի վեր հայեր են բնակվել: Դրա վառ վկայությունն են տարածքում պահպանվող հայկական գերեզմանոցներն ու հուշարձանները՝ առնվազն 101 բնակավայրերում:

Օտար նվաճողների ասպատակություններից ավերվել են Ղարադաղի հայերի օջախները, նրանք կողոպտվել են, թալանվել, կոտորվել, սովի մատնվել: Նվաճողները բազմիցս տեղահանել և գաղթեցրել են հայ բնակչությանը: Նման համատարած գաղթերից հայտնի են 1827-40 և 1919 թվականներինը:

Շատերը հետագայում հրաժարվել են վերադառնալ հայրենի օջախ, բնակվել են օտար վայրերում: Շատ քչերն են, որ մորմոքվելով ծննդավայրի կարոտից, վերադարձել ու նորոգել են հայրենի օջախները:

Ղարադաղի հայերը հիմնականում կարճահասակ, թիկնեղ ու ծանրամարմին էին: Մազերի գույնը՝ սև, խիտ, երբեմն նաև՝ գանգուր: Հոնքերը, բեղերը, դեմքի մազերը շատ խիտ ու թավ էին. շատերն ունեին մազոտ մարմին:

Նման մարդկանց ասում էին «Հանցա կասս՝ քոլու արջ ինի, հանցա կասս՝ էծու ջինս ինի»:

Սևահեր, կարճահասակ մարդկանց գլուխը խոշոր էր, աչքերը սև, դեմքի մաշկը թուխ, դեմքը կլոր ու տափակ, շրթունքները՝ հաստ:

Ղարադաղի հայերը, մշտապես դաշտային ծանր աշխատանքներում կոփված լինելով, ունեին զարգացած մկաններ:

Շարժմունքը քիչ դանդաղ էր, խոսակցությունը՝ բարձրաձայն:

Ղարադաղցիների մեջ մեծ թիվ էին կազմում նաև շիկահերները: Նրանք նկատելիորեն բաժանվում էին երկու խմբի՝ մուգ և բաց շիկահեր, սակայն մարմինների կառուցվածքը նույնն էր:

Շիկահերները նիհար էին, բարձրահասակ՝ շատ քիչ էին լինում թիկնեղ մարդիկ: Գլխի մազերը, հոնքերը, բեղերը, մորուքը նոսր էին՝ սևամազ խմբի համեմատ:

Դեմքերը լինում էին տափակ կամ ծվածև: Շիկահերները ունեին մշտաժպիտ ու ծիծաղկոտ հայացք: Նրանց աչքերը նույնպես շիկավուն էին, որոնց ասում էին «վըչխրաաչք»:

Շիկահերները ունեին գեղեցիկ կազմվածք: Արագաշարժ էին, ավելի կոփված: Շրթունքները բարակ էին ու նուրբ: Խոսակցության առոգանությունը մեղմ էր, պարզ ու նուրբ, ոչ շատ բարձր: Նույն կազմվածքն ունեին նաև շիկահեր կանայք, որոնք աչքի էին ընկնում գեղեցկությամբ:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ բոլոր հայաբնակ գյուղերի բնակչությունն էլ բաժանվում է երկու խմբի:

Անժպիտ, անտարբեր ու անհետաքրքիր մարդկանց ասում էին. «Հանցա կասս, ընջուկնեն թակած էշ ինի»:

Միամիտ, շրջապատի նկատմամբ անտարբեր մարդկանց ասում էին «Բղչորը արխեն գյլխեն ա վարած»:

ԹՈՒՐՔԵՐ

Ղարադաղում ապրող թուրքերը բնիկներ չեն: Դարերի ընթացքում եկել ու կողոպտել են լեռնային գոտում ապրող հայերին, ավերել նրանց գյուղերը: Հարավից եկել և տիրացել են հողերին, բնակություն հաստատել իրենց ավերած գյուղերում, հիմնել են նոր բնակավայրեր ու դարձել մշտական բնակիչներ: Այժմ թրքաբնակ գյուղերի թիվը Ղարադաղում անցնում է 100-ից: Թուրքերը շատ մոլեռանդ էին, կառչած մահմեդական կրոնին:

Նրանց կրոնական ղեկավարները մոլլաներն ու սեիդներն էին: Սեիդը՝ որպես իմամի հետնորդ, մեծ արտոնություններ ուներ: Ամեն մի թուրք պարտավոր էր ամեն տարի իր վաստակից, ըստ իր խղճի՝ բաժին տալ սեիդին: Գյուղի նախրապանն ու հովիվը նրա անասունների համար վարձատրություն չէին ստանում, չէին վարձատրվում նաև նրա համար զանազան աշխատանքներ կատարողները:

Հայերի ու թուրքերի մտերմությունը հասել էր այնպիսի մակարդակի, որ հայերից ոմանք երեխայի մկրտության կնքահայր էին դարձնում թուրք ծանոթին կամ իրենք էին դառնում թլփատման քիրվա: Կային թուրքեր, որ հայի թխած հացն ու եփած ճաշը չէին ուտում, հայի տուն գնալիս իրենց հետ ուտելիք էին տանում: Նրանք, ովքեր հաց չէին տանում, հայի տնից աման էին վերցնում, աղբյուրի ջրով երեք անգամ լվանում, «մաքրված» ամանում խմոր անում ու հաց թխում: Շատերն էլ լավ գիտակցելով, որ հայերը մաքուր են իրենցից, օգտվում էին նրանց սեղանի բարիքներից:

Ղարադաղցի թուրք կանայք, համեմատած մյուս ազգությունների հետ, բավականին համարձակ ու աշխատասեր էին: Տանը թե դաշտում նրանք

իրենց տղամարդկանց օգնում էին շատ աշխատանքներում. հունճ էին անում, հացահատիկ կալսում, օգնում փոխադրման ժամանակ: Անասունների տնային խնամքը և կաթնամթերքի մշակումը ամբողջովին նրանք էին կատարում: Թուրքերը խոստովանում էին, որ իրենց կանայք աշխատասիրություն սովորել են հայ կանանցից:

Թուրքերի զբաղեցրած գյուղերի տարածքները հարուստ էին ջրով ու բոստանային բույսերի աճեցման համար բարեբեր հողերով, սակայն նրանց կանայք փորձ անգամ չէին անում ընդօրինակել հայերին ու զբաղվել դրանց մշակմամբ:

Ամեն ամռանն ու աշնանը թուրք կանայք՝ շալակներն առած բուրդ, յուղ, պանիր, միայնակ գալիս էին հայաբնակ գյուղերը՝ ծանոթ քիրվաներին հյուր, բերած ապրանքը փոխանակում սոխի, սխտորի, վարունգի, դդմի, լոբու և այլ բանջարեղենների հետ:

Թուրք կանայք հագուստի նկատմամբ ունեին հատեստ վերաբերմունք, չադրա չէին կրում, կապում էին ծաղկավոր չթից կարած գլխաշորեր՝ «բաշդասմալի», հագնում նույն չթից կարած «քյոհնագ» (շապիկ): Շապիկի վրա հագնում էին կապույտ, կանաչ կամ կարմիր արխալուղ:

Ջարդերից շատ խեղճ ու աղքատ էին, քչերն ունեին գույնզգույն ուլունքներից մանյակներ:

Ամուսնու մահվան դեպքում՝ օրենքով թուրք կինը 40 օր սուգ էր պահում, որից հետո իրավունք ուներ ամուսնանալ կամ դառնալ «սղա» (խնամակալված) կին: Եթե կինը չամուսնանար համարվում էր «հարամ», օրենքից դուրս, նրա ձեռքի հացն ու եփած ճաշը ոչ ոք իրավունք չուներ ուտել:

Ղարադաղի ամենամեծ ազգությունը թուրքերն էին, որոնք առաջինն էին նաև աճով: Թուրք կինը, քանի դեռ ենթակա էր ծննդաբերելու, անարգել, առանց տարիքային սահմանափակման երեխա էր ունենում:

Նրանց աճին նպաստում էր նաև բազմակնությունը, որը օրեքով մեծ տարածում ուներ: Նման ընտանիքներում կանայք իրար հետ ապրում էին հաշտ ու խաղաղ: Բազմակնությունը մեծ պարծանք էր տղամարդկանց համար: Սովորաբար այդ ընտանիքներում լինում էր երեք, իսկ «սղա» (խնամակալ) կարգով՝ մինչև յոթ կին:

Թուրքերն էլ այն հավատն ունեին, թե երեխան աստծո կողմից է տրված, և մարդ պետք է գոհ լինի այդ պարգևով: Թուրքերը հղիության ընդհատումը, ինչպես և սպանությունը մեղք էին համարում:

ՔՐԴԵՐ

17-րդ դարի սկզբին շահ Աբասը հայաթափ արեց ողջ Արևելյան Հայաստանը, նպատակ ունենալով շնորհաշատ, բանիմաց, արհեստավոր ու գործարար հայ ժողովրդին լուծել հետամնաց պարսիկներին, զարգացնել Պարսկաստանը և թուրքական զորքին զրկել նյութական աջակցությունից՝ ամայացնելով հսկայական տարածքներ:

Հայերի վերադարձը խոչընդոտելու համար պարսիկները քրդերին վերաբնակեցրին Ջուլֆայից մինչև Կուրի և Արաքսի միացման վայրը. տարածքը գրեթե դարձավ քրդաբնակ:

Քրդերը ժամանակի ընթացքում մոռանալով մայրենի լեզուն սկսեցին խոսել թուրքերեն: Թուրքերի հետ բարեկամական և խնամիական կապեր էին հաստատում: Պահպանել էին ազգային որոշ հատկանիշներ. հացը թխում էին միայն սաջի վրա, թոնրից գաղափար չունեին:

Որպես եկվորներ, սրբավայրեր ու ուխտատեղիներ չունեին, ինչպես և թուրքերը՝ հայերից յուրացված սրբավայրերն էին գնում:

Արաքսյայր հովտի արգավանդ հողերին տեր դարձած քրդերը, կարելի է համոզված ասել, տարվա կեսը անց էին կացնում կիսաքաղց վիճակում: Ամեն տարի, վաղ գարնանից կարելի էր հանդիպել հարյուրավոր քրդերի, որոնք այծի մորթուց պատրաստած պարկեր շալակած, պարտքով գարի էին խնդրում իրենց հայ ծանոթներից, մինչև որ կսկսվեր իրենց գարու հունձը:

Աղքատության պատճառներից էր նաև գյուղերի տերեր խաների ու բեգերի շահագործումը:

Արաքսյայր հովտում շատ էր տարածված ջերմախտը, որը խիստ էր ազդում հատկապես տղամարդկանց առողջության վրա: Քուրդ գյուղացու կյանքի միջին տևողությունը, համեմատած մյուս ազգությունների հետ, շատ կարճ էր՝ 45-50 տարի: Չքավորության պատճառով նրանք բազմանդամ ընտանիքեր չէին ունենում, խուսափում էին բազմակնությունից, որը թույլատրվում էր օրենքով: Աղքատիկ ապրուստ ունենալով, նրանք 1-2 երեխայից ավելի չէին ունենում, այնինչ թուրքերն ունենում էին 5-10-ը:

Թթենին շատ էր տարածված քրդական գյուղերում: Ամռան ամիսներին, աշխատանքի ամենաեռուն օրերին կարելի էր ամենուր ծառերի տակ տեսնել թութ կերած ու ջերմախտից հյուծված ու թուլացած քուրդ տղամարդկանց: Քուրդ կանայք չափազանց դիմացկուն էին ջերմախտի նկատմամբ:

Քրդերն ընտանիքի նկատմամբ շատ անտարբեր էին, չքավորությունից դուրս գալու մասին չէին էլ մտածում, չնայած, եթե կամենային, իրենց այգիների բերքից ու բարիքից կարող էին բավականաչափ սննդամթերք պատրաստել ձմռան համար: Ամռան ամիսներին քուրդ կանայք, ահել ու ջահել, գետակների առջև քարեր էին շարում և, գորտերի նման լցվում ջրի մեջ, ապա պառկում տաք ավազի վրա ու ծառերի ստվերում, անհոգ ու անփույթ երգում ու կատակում, ծիծաղում, կարծես թե հիվանդությունից անգործության մատնված տղամարդիկ իրենցը չէին:

Մի անգամ, մտերմաբար դիմելով մի խումբ քրդուհիների, ասացի.

– Ինչո՞ւ օրինակ չեք վերցնում ձեր հարևան հայ կանանցից, չեք օգնում ձեր տղմարդկանց, տունուտեղ դնում, բարիքներ ստեղծում, չեք պայքարում չքավորությունից ազատվելու համար:

Նրանք հեգնանքով պատասխանեցին.

– Դուք ճիշտ եք ասում, հնարավոր է: Բայց չէ՞ որ, երբ հայերն ամուսնանում են, քահանան զույգին «ինջիլով» (ավետարան) երդվել է տալիս, որ մինչև իրենց մահը մնան մեկ շունչ ու հոգի: Հայ կինն էլ հավատարիմ մնալով երդումին ամուսնուն թև ու թիկունք դարձած՝ տունուտեղ է դնում, իսկ մենք «քյաբինով» (ղալան) ենք, եթե չարչարվենք, հիվանդանանք ու կորցնենք մեր գեղեցկությունը, մեր ամուսինները կարող են մեր քյաբինը տալ ու դուրս վռնդել, մեզ չտալով տնից անգամ մի ասեղ կամ թել: Հաջորդ օրը նա կբերի մի ավելի ջահել կնոջ, որը հանգիստ կվայելի մեր աշխատանքը: Մենք մեր ամուսինների հետ, հայերի նման, մեկ շունչ՝ մեկ մարմին չենք համարվում օրենքով, մենք առուծախի առարկա ենք նրանց համար:

Գավառում քրդերը գողություն անելու համբավ ունեին, որը նրանց համար ամոթ չէր համարվում:

ԹԱԹԱՐՆԵՐ

13-րդ դարում թաթար-մոնղոլների վայրի հորդաների արշավանքից զերծ չի մնացել նաև Ղարադաղը:

Թաթարների մի մասը բնակություն է հաստատել Արաքսպար հովտում: Դարերի ընթացքում նրանք մասամբ պահել են իրենց ազգային սովորություններն ու նիստուկացը: Նրանք ընդունում են, որ իրենք թաթար են, բայց մոռացել էին մայրենի լեզուն և խոսում էին թուրքերեն:

1942թ. աշնանը Սարդու գյուղում էի: Գյուղից մոտ 20կմ հարավ-արևմուտք մի սրբավայր կար, որին անվանում էին «Փիր դիրսագի» (սուրբ բլուր). այնտեղ էին այցելում հայերը, թուրքերը և թաթարները:

Թաթարների մասին քեռիս պատմում էր. «Շատ դարեր առաջ, երբ թաթարները մտան Հայաստան, գայլերի նման ոհմակներ կազմած արշավում էին ամեն տեղ, կողոպտում ու ավերում մեր գյուղերը: Նրանցից մի խումբ անցնելիս է լինում մեր կողմերով, տեսնում են հիասքանչ բնությունը, հարուստ, արգավանդ հողերը, անտառները, արոտավայրերն ու սառնորակ աղբյուրները և որոշում են բնակություն հաստատել բնության այս գողտրիկ անկյունում, անդորրության մեջ, բոլորի աչքից հեռու: Թող զարմանալի չթվա, որ շուրջ 700 տարի ապրելով իրենց ցեղակիցներից կտրված, նրանք մինչև օրս էլ պահպանել են իրենց նիստուկացն ու ազգային սովորությունները»:

– Կարո՞ղ ես ինձ տանել թաթարների մոտ,- հարցրի քեռուս:

– Հիմա աշխատանքի եռուն օրեր են, ծմռանը կգաս կգնանք:

– Իսկ բլրի սրբավայրի մասին ի՞նչ կարող ես ասել:

– Նրա մասին ավանդություն չի պահպանվել, խոսք չկա, որ այն հայկական է եղել, մոտակայքում Մարի հայկական գյուղն է եղել, որը հիմա ավերակ է:

Հաջորդ օրը մորաքրոջս որդիների՝ Երվանդի ու Արսենի հետ գնացինք սրբավայր: Երվանդը, որ լավ տեղյակ էր շրջակայքին, ցույց տվեց սրբավայրը ու Արսենի հետ գնաց անտառ՝ մոռ հավաքելու:

Մնալով մենակ, քայլեցի դեպի ավերակները: Քանդված պատերն ամբողջովին պատված էին փարթամ բուսականությամբ, շինություններից մեկի կենտրոնում աճել էր մի կաղնի, որը վկայում էր, որ այն քանդվել է շատ վաղուց: Ծառի տակ թափված քարերից ծածկ էր պատրաստված, որտեղ դրված էին մի քանի կավե ճրագներ:

Վերադարձա բացատ ու նստեցի թավիշ կանաչի վրա: Քիչ անց ականջիս հասան խոսակցության ձայներ, որոնք աստիճանաբար մոտենում էին: Շուտով, անտառի մի նեղ կածանից, մեկական խուրձ խոտ շալակած, դուրս եկան հինգ թաթար կանայք:

Տեսնելով ինձ կանգ առան, զարմանքով ու հետաքրքրությամբ նայեցին ինձ: Առաջնորդող կինը կլիներ մոտ 50 տարեկան, երկուսը՝ մոտ 35, մյուսները դեռատի աղջիկներ էին, հազիվ 13 տարեկան:

Նրանք բոլորն էլ հերարձակ էին, ունեին սաթի նման սև ծամեր, աղջիկների ծամերը շատ էին, 10-12 հատ, բարակ ու նուրբ, հյուսքերի ծայրերին

ամրացված էին արծաթ դրամներ: Բոլորը հագել էին կարճաթև շապիկ և ծաղկավոր չթից, մինչև ծնկները հասնող թումբան. բոլորը ոտաբոբիկ էին:

– Ի՞նչ մարդ ես, ի՞նչ ես անում այստեղ,- հարցրեց մեծահասակ կինը:

– Սովորական մարդ եմ, եկել եմ զբոսնելու,- պատասխանեցի կնոջը:

– Վայ, դադամ, վայ,- բացականչեց կինը,- երևի մենակ վախենում ես անտառ մտնել: Տես ինչ սիրուն, նռան նման ջահել կանայք ես, որ մեկը քեզ դուր է գալիս, վերցրու տար հետդ զբոսնելու, մենք կնստենք՝ կհանգստանանք մինչև ձեր գալը,- ժպտալով ասաց կինն ու դեպի ինձ հրեց երիտասարդ կանանց:

– Շնորհակալություն հարգանքի համար,- ես արդեն զբոսնել եմ:

– Երևի հայ կանայք մեզանից սիրուն են, չի կամենում մեզ հետ զբոսնել,- վայրի քրքիջով ասաց երիտասարդ կանանցից մեկն ու նորից նստեց խոտի վրա:

– Դուք չե՞ք վախենում, որ առանց տղամարդու անտառ եք գնում,- հարցրի ես:

– Ինչի՞ց վախենանք,- զարմացավ կինը:

– Գազաններից կամ օտար մարդկանցից:

Իմ ասածը ընդհանուր ծիծաղ առաջացրեց: Տարեց կինը պատասխանեց,

– Ի՞նչ կա վախենալու. գազանի հանդիպենք, մենք էլ՝ գազանի նման, մարդու հանդիպենք՝ մեր ամուսնու նման:

– Իսկ ձեր աղջիկներին քանի՞ տարեկանից եք ամուսնացնում:

Թաթարուհիները նորից բարձրաձայն քրքջացին. տարեց կինը նորից խոսեց.

– Վայ, դադամ, վայ, մեր տունն էլ են հայեր եկել: Ձեր հայերն ասում են. «Գլխարկդ խփիր աղջկան, եթե վայր չընկավ՝ ուրեմն կարող ես ամուսնացնել»: Ամուսնացնելու համար մենք էլ ունենք մեր օրենքը, օրինակի համար, եթե ավանակ ենք ուզում գնել, տանում ենք յոթ խուրձ խոտ բարձում, եթե բերեց՝ գնում ենք, թե որ չի բերում, չենք գնում: Նույն ձևով էլ՝ աղջիկ հավանելիս, տանում ենք ինը խուրձ խոտ տալիս շալակը, թե որ բերեց հասցրեց տուն՝ կառնենք, թե որ մնաց ճամփին, ուրեմն հասուն չէ կին դառնալու համար:

– Ձեր տղամարդիկ ի՞նչ խղճի տեր են. դուք այդքան աշխատում եք, իսկ նրանք ձեզ համար մի զույգ կոշիկ չեն կարում ու ոտաբոբիկ անտառ են ուղարկում:

Մի պահ մտածելուց հետո երիտասարդ կանանցից մեկը ամոթխած հարցրեց.

– Ձեր կանայք բոլորն էլ տրեխներ ունե՞ն:

– Այո, քաղաքում բոլոր կանայք կոշիկ են հագնում, իսկ գյուղերում՝ տրեխ:

– Վայ, դադամ, վայ, եթե կանայք էլ տրեխ հագնեն աշխարհի բոլոր անասուններն էլ որ մորթեն՝ կաշին չի հերիքի,- հեգնանքով բացականչեց թաթարուհին,- գնանք, ինչքան մնանք հայի մոտ, այնքան չլսված բաներ կլսենք:

ՂԱՐԱՉԻՆԵՐ

Ղարադաղի տարածքում միայն երկու գյուղ կար, որոնցում ղարաչիներ էին ապրում: Դրանք գտնվում էին Արաքսին շատ մոտ: Մեղրու դեմ դիմաց Նորդուզին էր, որն ուներ մոտ 60 ընտանիք: Երկրորդ գյուղը գտնվում էր նրանից մոտ 30կմ հեռու, Ուշտուբին գետակի մերձակա արևաշատ մի ձորակում, ուներ մոտ 30 ընտանիք: Գյուղն առանձին անուն չուներ. այն պարզապես կոչում էին Կարաչի:

Ղարաչիները գավառի ամենափոքր ազգությունն էին. հայերից բացի, մյուսները նրանց անվանում էին կարաչի: Գավառի բոլոր ազգությունները նրանց ծաղրական անուն էին տալիս՝ «գուրդ», հայերը՝ «ղուրդ», որը նշանակում է գայլ: Նման ծաղրական մականուն էին տալիս այն պատճառով, որ դռնեդուռ ընկած ողորմություն էին խնդրում, զբաղվում մուրացկանությամբ:

Ղարաչիներն, անասնապահությունից և հողագործությունից զատ, զբաղվում էին արհեստով. բոլորը հմուտ մաղագործներ էին: Մաղագործությունը համարվում էր նրանց ապրուստի հիմնական միջոցը:

Նրանք ուռենու փայտից նուրբ տախտակներ էին պատրաստում, տալիս սկավառակի ձև, ապա ձիու պոչի մազերից նուրբ ցանց գործելով, ալրմաղ պատրաստում:

Նույնածև սկավառակների վրա այծի ու ոչխարի կաշվից ստացած նուրբ փոկերով գործում էին երեք տեսակ այլ մաղեր: Առաջին տեսակը, որն ուներ ոչ շատ մանր անցքեր, օգտագործում էին ցորենն ու գարին

զտելու համար:[20] Երկրորդը, որին հայերն անվանում էին «ասեղնագիր», շատ հետաքրքիր հնրինվածք ուներ, հիշեցնում էր ասեղնագործված կտավ կամ մեղրամոմի բջիջներ: Դրանցով անջատում էին աղացած հաճարի թեփը: Երրորդ տեսակ մաղին հայերն անվանում էին «շատարար», խոշոր անցքեր ուներ, օգտագործում էին կալում ցորենի հասկերն ու զանազան բույսերի մնացորդները անջատելու համար:

Ղարաչիներն ունեին համայնքի ընտված ղեկավար: Ողջ գավառի գյուղերը բաժանվում էին ըստ ղարաչիների ընտանիքների, թե որտեղ իրավունք ունեն մաղ վաճառել կամ մուրացկանություն անել:

Ղարաչին, մաղեր վաճառելու կամ մուրացկանության գնալու համար, գրաստի կարիք չուներ, նրա փոխադրականը իր ոտքերն էին ու իր մեջքը: Նա մաղերը կապում, շալակում էր, վերցնում նաև երեք պարկ ու երկու մահակ: Մի պարկի մեջ հացահատիկ էր լցնում, երկրորդի մեջ՝ ալյուր, երրորդի մեջ՝ աղ, հաց և այլ մթերք:

Մահակներով նրանք պաշտպանվում էին շներից: Հաճախ էր պատահում, որ չարաճճի երեխաները շներին հավաքում, հարձակվում էին ղարաչիների վրա, քարկոծում, հայհոյում ու անիծում: Ղարաչին ոչ մի կերպ իր դժգոհությունը չէր արտահայտում, համբերությամբ, համառորեն շարունակում էր աղերսել, խնդրել, լաց լինել, մինչև մի բուռ հատիկ ստանար: Պատահում էր, որ ղարաչուն առաջարկեին երգել, պարել կամ արտասանել, նա անում էր ամեն ինչ, միայն թե հասներ նպատակին:

Պետք է խոստովանել, որ նրանք շատ ազնիվ էին, գողություն երբեք չէին անում, եթե տուն էին մտնում և տեսնում, որ մարդ չկա, նստում էին դռան մոտ ու սպասում, մինչև մեկը գար:

Մուրացկանություն էին անում նաև ղարաչի կանայք: Նրանք մաև «շրիշ» խոտաբույս էին հավաքում, տալիս իրենց հայ «աշնաներին» (ծաւոթ), որոնք դրանից միջուկով հաց էին թխում: Նրանք զբաղվում էին նաև բախտագուշակությամբ ու հեքիմությամբ, հաճախ՝ գիշերում հայերի տներում:

Ղարաչիների առոգանությունը թուրքերենի ոչ մի բարբառի հետ չի համընկնում. նրանք ամեն խոսքից ու նախադասությունից հետո արտասանում են «հեյ» վերջածանցը. աշնա-հեյ (բարեկամս), կադանալըմ-հեյ (ցավդ տանեմ) և այլն: Ղարաչիներն ունեին իրենց բախտախնդրությանը վերաբերող չափածո քառյակներ, որոնք երգում կամ արտասանում էին

[20] Ղարադաղում գարնանացան ցորենը, գարին ու հաճարը խառը ցանելու սովորություն կար. կալսելուց հետո առանձնացնում էին:

մուրալու ժամանակ՝ մարդկանց մոտ խղճահարություն առաջացնելու, մի բուռ հատիկ ստանալու համար:

Օրինակ բերենք մի քառյակ.

Օլսըն, օլսըն հեյ նանա,
Գոյ գյովլըն դոնսըն, հեյ նանա,
Գափդա դորան օղլանըն
Յազըխըն գյալսըն, հեյ նանա:

Մոտավոր թարգմանությունն այսպիսին է.

Լինի, լինի այ մայրս,
Խիղճդ գա, այ մայրս,
Դռներին կանգնած զավակդ՝
Քո մեղքը գա, այ մայրս:

Ովքե՞ր են ղարաչիները, ինչպե՞ս են եկել Ղարադաղ և ինչո՞ւ են հենց երկու գյուղում հաստատվել: Այս հարցերի պատասխանը գտնելու համար թերթել եմ անցած դարերի պատմության շատ էջեր, ուսումնասիրել հնադարյան քարտեզներ: Պարզվել է, որ մ.թ.ա. 8-7-րդ դարերում Ղարադաղի տարածքը եղել է սկյութաբնակ: Հնարավոր է, որ ղարաչիները սկյութների հետնորդները լինեն, որպես դարերի ընթացքում լուծված ու անհետացած ազգության մոհիկաններ՝ ծվարած Արաքսի արևաշատ ու գողտրիկ եզերքում:

Ղարաչիների բնավորության ու սովորույթների մասին շատ ասացվածքներ ու զավեշտական պատմություններ կան, հորինված գավառի տարբեր ազգությունների կողմից. ղարաչին, ցույց տալով անդրավարտիքի պատռվածքը, կարկատան է խնդրում՝ տալիս են, ասեղ է խնդրում՝ տալիս են, թել է խնդրում՝ տալիս են. այս անգամ արդեն կարող է պահանջում:

1942թ. աշնանային մի օր, նստած մեր տան առջևի զով սրահում, զրուցում էի հարևան Մարդանաղա գյուղացի ուստա Ազիմի հետ, որը հարգարժան ու բանիմաց մարդ էր: Նա դարբին էր, պատրաստում ու նորոգում էր գյուղատնտեսական գործիքներ:

Սրահի դռնից ներս մտավ ղարաչի մի տղամարդ և, աղերսագին աղոթքներ ու մաղթանքներ մրմնջալով, մի քանի քայլ հեռու կանգնեց ու ողորմություն խնդրեց:

– Դուք սրանց լավ ճանաչո՞ւմ եք,- դիմելով ինձ, հարցրեց ուստա Ազիմը:

– Ինչո՞ւ չէ, աղքատ ու ողորմելի մարդ է,- պատասխանեցի ես:

– Իսկ ինչո՞ւ չավելացրիր, որ վատառողջ է, ապրուստի միջոցներից զուրկ,- հեգնանքով ավելացրեց զրուցակիցս:

– Կարող է այդպիսին էլ լինել,- համոզված ասացի ես:

– Ոչ, դուք լավ չեք ճանաչում ղարաչիներին, ես այս մարդուն լավ եմ ճանաչում, անունը Ֆարման է,- ապա՝ դիմելով ղարաչուն, հարցրեց,- ճիշտն ասա Ֆարման, քանի՞ գլուխ անասուն ունես:

– Հիսուն ոչխար ունեմ, տասը գլուխ խոշոր, մի քանի օրավար հող, ցանում եմ ցորեն ու գարի,- խեղճ ձայնով պատասխանեց ղարաչին:

Այս հարց ու պատասխանից զարմացած, հարցրի նրա ընտանիքի մասին: Նա ասաց, որ երկու տղա ու մեկ աղջիկ ունի:

Նրա ունեցվածքը Ղարադաղի չափանիշներով համարվում էր միջակ. շատ գյուղացիներ՝ անգամ երկու այծ չուներին:

– Այդքան ունեցվածքի տեր է, բայց մուրացկանությա՞մբ է զբաղվում,- հարցրի ուստա Ազիմին:

– Ֆարմանը դեռ համարվում է իրենց գյուղի չքավորներից մեկը: Մեծ հարստության տեր մարդիկ շատ կան այնտեղ: Նրա մեծ եղբայր Ահմեդը 200 գլուխ ոչխար ունի, բայց համաձայն իրենց ազգային օրենքի՝ բոլորն էլ պարտավոր են մուրացկանություն անել, իրենց ունեցած բարիքը խառնել մուրած հացահատիկին՝ իրենց հարստությունը անսպառ դարձնելու համար:

Զրուցակիցս նկատելով տարակուսանքս, դիմեց մորս.

– Մինա քիրվա, մի մեծ աման լիքը ցորեն բեր, դիր գետնին, մի փոքր աման էլ գարի՝ տեսնենք ո՞րը կվերցնի:

Մայրս ճշտությամբ կատարեց նրա ասածը: Ղարաչին վերցրեց գարին:

– Իսկ գիտե՞ք ինչ ազգության ու դավանանքի են պատկանում սրանք,- հարցրեց ինձ ուստա Ազիմը:

– Թուրք են, դավանանքով՝ մահմեդական,- ասացի ես:

Ուստա Ազիմը գլուխն օրորեց ու ասաց.

– Ամեն մի քրիստոնյա պարտավոր է իմանալ «Հայր մերը», ամեն մի մահմեդական՝ «Քյալմա շադաթին» (խոսք վկայության): Եթե համոզված եք, որ նա մահմեդական է և կարտասանի աղոթքը, ես մի թուման ոսկի կտամ:

Ղարաչին աղոթքը չգիտեր:

Ես խնդրեցի զրուցակցիս ավելի մանրամասն պատմել ղարաչիների մասին: Նա պատմեց ղարաչիների ծագման ավանդությունը.

«Երբ աստված ստեղծեց աշխարհը, նրան տվեց գեղեցկություն, երկիրը լցրեց բազմատեսակ ու բազմազան կենդանիներով ու բույսերով: Աստված մտածեց ու ստեղծեց նաև մարդուն, նրան հանձնարարելով, որ խելացիորեն տիրի աշխարհի վրա ստեղծված բարիքներին ու վայելի դրանք: Տարիներն անցան տարիների ետևից, դարձան հարյուրամյակներ ու հազարամյակներ: Մարդիկ շատացան, բաժանվեցին ու դարձան առանձին լեզուներով խոսող, դրա հետ մեկտեղ նրանց մեջ ծագեց հազար ու մի չարիք, հազար ու մի կարիք, վեճեր ու անհամերաշխություն: Ի վերջո մի ընդհանուր օրենք ու ղեկավարություն ստեղծելու պահանջ առաջացավ:

Այն ժամանակ հայերի, թուրքերի և մյուս ազգությունների նման, ձևավորվել էին նաև ղարաչիների համայնքները, ունենալով իրենց լեզուն ու նիստուկացը: Հավաքվում են աշխարհի բոլոր ազգությունների խելացի ու իմաստուն մարդիկ իրենց համար թագավոր ընտրելու, կարգեր ու օրենքներ հաստատելու համար: Ժողովը շատ երկար է տևում, քանի որ ամեն մի ազգության ներկայացուցիչ իրեն է համարում ամենախելացին ու ամենաիմաստունը: Տեսնելով, որ ոչ մեկը չի զիջում, որոշում են գնալ աստծո մոտ, որ նա թագավոր նշանակի ու բոլորը ենթարկվեն նրան: Այն ժամանակ երկինքը երկրից շատ հեռու չէր, մարդիկ բարձրանում էին լեռան վրա և խոսում աստծո հետ:

Աստված ընկնում է նեղ դրության մեջ, չիմանալով ում տալ իշխանությունը, որ մյուսները չնեղանան:

Մտածում է ու մարդկանց փորձելու համար հետևյալ պայմանն է առաջարկում. «Ով կենակցի իր մոր հետ, թագավորությունը կտամ նրան»: Հուզվում են մարդիկ այդ անմարդկային առաջարկից և հրաժարվում թագավոր ընտրվելուց: Միայն ղարաչիների ընտրյալն է համաձայնում աստծո առաջարկին:

Աստված հրամայում է բերել ղարաչու մորը: Զարմացած ու քարացած մարդկանց ներկայությամբ նա կենակցում է հարազատ մոր հետ:

Աստված, տեսնելով ղարաչու նման անմարդկային վարմունքը, հուզված ու բարկացած, բացականչում է.

– Լսեցեք, աշխարհի ժողովուրդներ, ես այս առաջարկն արեցի ձեզ փորձելու, ձեր մակարդակը որոշելու համար. գնացեք և ստեղծեք առանձին թագավորություններ, իսկ ղարաչիներին անիծում եմ. «Քանի դեռ գոյություն կունենա աշխարհը և ղարաչիների ցեղը, նրանք թագավորություն չպետք է ունենան, ամեն մի ղարաչի, որքան էլ աշխատի ապրուստի մի-

ջոցները շատացնել, թող այն սատանայի, քամու և հեղեղի բաժին դառնա»:

Անեծքը լսելով, ղարաչիների ցեղը՝ մանուկ ու ծեր, լաց լինելով ընկնում են աստծո ոտքերը, խնդրում, որ կոտորի իրենց կամ մեղմացնի անեծքը: Միջնորդում են նաև այնտեղ գտնվող բոլոր ազգությունների ժողովականները: Աստծո գութը շարժում է երեխաների լացն ու աղերսանքը, և նա մեղմացնում է անեծքը. «Ամեն մի ղարաչի, որքան որ աշխատի, ունևոր դառնա, իր ունեցվածքը հեղեղի ու կայծակի բաժին չդառնալու համար պետք է մուրացկանություն անի, թափառի դռնեդուռ, ուրիշի աշխատանքից պատառներ խնդրի, վերցնի միայն առձեռն տվածը, տանի, խառնի իր ունեցվածքին ու «բարաքյաթ» (անսպառություն) ստեղծի»:

Այն ժամանակ հարատև ցերեկ էր, գիշեր գոյություն չուներ: Աստված հրամայում է, որ երկիրը պտտվի արևի շուրջը, գոյանան գիշեր ու ցերեկ, որպեսզի ղարաչիների ամոթալի արարքը ոչ ինքը տեսնի, ոչ էլ մյուսները: Այդ պահին լսվում է ուժեղ որոտ ու դղրդյուն, երկիրը պոկվում է տեղից, սկսում պտտվել արևի շուրջը, երկիրը հեռանում է երկնքից, որ էլ աստված չտեսնի մարդկանց արարքները»:

Ուստա Ազիմը լռեց, ապա հայացքը ինձ դարձնելով՝ խորհրդավոր ձայնով հարցրեց.

– Բարեկամս, լսել եմ, որ շատ գրքեր ես կարդում, հետաքրքրվում ժողովուրդների պատմությամբ, լսե՞լ ես, որ ղարաչիները երբևէ թագավորություն ունեցած լինեն:

Ես ժխտական պատասխան տվեցի: Նրա դեմքը պայծառացավ.

– Տեսնո՞ւմ ես, աստծո անեծքը կատարվել է, ղարաչիները իրենց պատմության ընթացքում պետականություն չեն ունեցել, չեն էլ ունենա: Դուք ծանոթ եք մեր գավառի թուրքերին. հարյուրավոր ընտանիքներ կան, որոնք ապրում են չքավորության մեջ, չունեն ոչ մի այծ կամ ոչխար, կարոտ են մի աման կաթի կամ մածունի, պատահում է, որ կարոտ են մնում նույնիսկ գարուց թխած հացի, բայց տեսած կա՞ք, որ թուրքը ողորմություն խնդրի կամ հաց հավաքի:

Ղարաչիները թուրք չեն, այլ առանձին ազգություն: Ամենաաղքատ թուրքը ամենահարուստ ղարաչուն աղջիկ չի տա կնության, նրան համարելով աստծո կողմից անիծված ու ամոթալի մարդ: Մենք ատում ենք ղարաչիներին, նրանց անվանում «գուրդ», քանի որ մոր և օտար կնոջ նկատմամբ հարգանք չունեն ու գայլի նման դռնեդուռ ընկած մուրացկանություն են անում:

Հավաստի տեղեկություններ կան, որ ղարաչիների անասնական վերաբերմունքը մոր նկատմամբ դեռ գոյություն ունի: Նրանք այն կարծիքին են, որ այդ բնական պահանջը ավելի լավ է հարազատի հետ կատարել, քան օտարի:

ՇԱՄԼՈՒՆԵՐ

Ապրում էին Մեշափարա գավառակի Շեյխ Հասանլու, Մինջևանի Դաշարասի և Ղարաղոչ գյուղերում:

Այս ազգությունը հայտնի էր երեք անուններով, որոնք նրանք հավասարապես ընդունում էին:

Ըստ ավանդության՝ նրանք ժամանակին Քրիստոսին դիմավորել են վառված մոմերով (շամերով), այդ իսկ պատճառով կոչվել են շամլու:

Մեկ այլ ավանդության համաձայն, երբ մարգարե Ալին ձեռնարկել է մահմեդական կրոնի տարածումը, նրանք մեծ աջակցություն են ցույց տվել նրան, որի համար նրանց անվանում են նաև Ալ ալիսի (Ալու ձեռք):

Շամլուներին անվանում էին նաև գյոռավաններ, դա որոշ չափով ծաղրական իմաստ ուներ, նշանակում էր գերեզմանատան բնակիչ: Նման անունը տրված է թուրքերի կողմից այն առումով, որ շամլուները մահմեդական սովորությունները չէին ընդունում, ատում էին մոլլաներին:

Շամլուները ավանդաբար հիշում են, որ իրենց այստեղ է բերել շահ Աբասը: Նրանք մոռացել են իրենց լեզուն, խոսում են թուրքերեն, չնայած նիստուկացով և դավանանքով շատ հեռու են թուրքերից ու քրդերից: Նրանք հարգանքով էին վերաբերվում հայերի նկատմամբ, հայի թխած հացը հարամ չէին համարում:

Շամլուների կրոնական ղեկավարը շեյխն էր, մոլլա չէին ճանաչում և մերժում էին նրանց: Նրանք հարգում էին հայկական սրբավայրերը, այնտեղ մոմ վառում, աղոթք անում, բայց այնտեղ մատաղ չէին անում:

Շամլուների մատաղացուն պետք է անպայման մոխրագույն ուլ լիներ: Մատաղը կտրում էին կեսգիշերին՝ տանը: Մատաղի միսը ընտանիքի անդամները, նույն գիշեր, որքան կարող էին՝ ուտում էին, մնացածը, կենդանու ոտքերի, գլխի ու որովայնի հետ՝ մի գաղտնի տեղ թաղում: Մատաղի մասին եթե որևէ մեկն իմանար, այն կհամարվեր անընդունելի, այդ իսկ պատճառով կատարվում էր խիստ գաղտնի:

Պաշտամունքով շամլուները շատ մոտ էին եզդիներին: Նրանց պաշտամունքի առարկան մի անհայտ անձ էր, որի վերադարձին սպասում էին: Ո՞րն էր նրանց պաշտամունքի էությունը, ինչի՞ հիման վրա էին հավա-

տում անհայտ անձի վերադարձին՝ որպես մարգարեի, 1944թ. ամռանը նման հարցերով դիմեցի նրանց կրոնապետ շեյխ Հասանին:

– Շատ տարիներ առաջ,- պատասխանեց նա,- մեր կրոնապետին աղոթքի ժամանակ մոտենում է մի անհայտ անձ, մետաքսե թաշկինակում կապած մի իր հանձնում ու ասում, որ դա սրբություն է, պետք է պահել սրբավայրում, հանձնարարում է կապոցը մինչև իր վերադարձը չբացել ու չքանում է:

Անցնում են տարիներ, անհայտ անձը չի վերադառնում: Համայնքի մարդիկ հետաքրքրվում ու պահանջում են բացել կապոցը, իմանալու համար, թե ինչ կա այնտեղ պահված: Կրոնապետը բերում է կապոցը (ամանաթ), կամենում է բացել, բայց այն մարդկային լեզու առնելով խոսում է. «Ամանաթա, խայանաթ օլամազ» (պահ տված սրբությունը սրբապղծել չի կարելի):

Մեր պատմության ընթացքում երեք անգամ փորձել են բացել ամանաթը, տեղեկանալ նրա գաղտնիքի մասին, բայց ամեն անգամ այն լեզու է առել և կրկնել այդ խոսքերը: Մենք ամենայն սրբությամբ հարգում ենք ամանաթը, որպես սրբություն՝ համարում պաշտամունքի առարկա, սպասում այն հանձնողի վերադարձին:

Շամլու տղամարդիկ աչքի էին ընկնում թուխ ու թավ բեղերով, ըստ ազգային ավանդույթի՝ ողջ կյանքում բեղը չպետք է կտրեին կամ սափրեին:

Շամլուների ազգային ավանդույթների մասին առասպելներ էին պատմում, չնայած նրանք իրենց ծեսերն ու տոնախմբությունները շրջակա ազգություններից գաղտնի էին պահում, սակայն, ինչպես ժողովուրդն է ասում՝ «խոսքը աղավաղված կլինի, սուտ չի լինի»:

Պատմում էին, որ շամլուները ունեին յուրահատուկ մի տոն. ամեն տարի աշնանային մի օր նրանք հավաքվում էին անտառում: Հավաքույթի տեղն ու օրը որոշում էր շեյխը:

Զանազան ծիսակատարություններից հետո երեկոյան տղամարդիկ առանձնանում էին, իսկ կանայք իրենց թումբանները (վարտիք) դնում էին ծառի տակ ու թաքնվում անտառում: Շեյխը թումբանները հավաքում էր, բարձրանում, նստում ծառի վրա և սկսում դրանք մեկ-մեկ գցել ներքև: Տղամարդիկ հերթով գալիս մի թումբան էին վերցնում ու գնում դեպի կանանց թաքստոցը: Կանայք ուշադիր հետևում էին մոտեցող տղամարդուն. ամեն մեկը, ճանաչելով իր թումբանը, մոտենում, վերցնում էր նրա ձեռ-

քից: Այդ տղամարդուն օրենքով իրավունք էր վերապահվում այդ գիշեր կենակցել տվյալ կնոջ հետ:

Տոնակատարությանը մասնակցում էին միայն ամուսնացած, առողջ մարդիկ: Չամուսնացածները, հիվանդները և այլազգի կին ունեցողները, որոնց օրենքով չէր թույլատրվում մասնակցել գիշերային ծեսին, երեկոյան կերուխումից հետո գնում էին տները:

Այդ տոնին շամլուները հատուկ նախապատրաստվում էին. ամեն մեկը, իր ունեցվածքից ելնելով, տարբեր մթերքներ էր տանում ընդհանուր սեղանին: Ուտելիքներից բաժին էին հանում այն ընտանիքների անդամներին, որոնք հիվանդության պատճառով չէին մասնակցել կերուխումին:

Շամլուների նման ավանդական արարողությունը շատ հետաքրքիր խորհուրդ ունի, այն հիշեցնում է Եվայի հայտնվելը դրախտում:

ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՋԳՈՒԹՅՈՒՆ

Դիզմար գավառակի ցածրադիր գոտում, Արաքսին շատ մոտ կային չորս ունևոր գյուղեր՝ Մարդանով (Մարդանաղա), Ահմադով, Քյավանի և Ուշտուբիի: Գավառակի տարածքի բոլոր գետակները դեպի Արաքս են հոսում այդ գյուղերի տարածքներով: Բնակիչները սանձել են գետակների ջրերը, լեռնալանջերով ու ձորակներով փորել, կառուցել տասնյակ կիլոմետր երկարության ոռոգման առուներ, մշակել ամեն մի թիզ հողը, տնկել հարյուրավոր հեկտար խաղողի ու պտղատու այգիներ, ստեղծել բերք ու բարիքի անսպառ աղբյուր: Այգիները տալիս էին նրանց ապրուստի հիմնական միջոցը:

Նրանք գավառի ամենաքաղաքակիրթ ազգությունը կարող են համարվել թե իրենց նիստուկացով, թե խելացիությամբ, վարվեցողությամբ ու մաքրասիրությամբ: Նրանք, հայերի նման, հաց էին թխում միայն ցորենից, նույնպես թոնիր ունեին, և ամիսը մեկ անգամ ճերմակ ու նուրբ լավաշ էին թխում: Կանայք խաղողից յուրատեսակ չամիչ էին պատրաստում, որին անվանում էին մովիգ: Այն պակասության ու թանկության պատճառով փոխարինում էր շաքարին: Խաղողի հյութից պատրաստում

էին մաթ,[21] որն ուներ կարագի խտություն, բարձր սննդարարություն ու որակ, ղիդա,[22] որը մեղրի նման ծորուն էր:

Դեղձի ու թզի չիրը հատուկ մշակման էին ենթարկում, նրանց մեջ լցնում ընկույզի ու շաքարի մանրուք, չորացնում, գեղեցիկ ձև տալիս. դրանց անվանում էին ալանի, բաստղ (թրք.՝ լցոնած) և միանփուր (պրս.՝ լցոնած):

Նշված գյուղերում տները երկհարկանի էին. երկրորդ հարկում հյուրասենյակն էր և ննջարանը, իսկ առաջինում՝ մառանը, որտեղ մինչև նոր տարին (նովրուզ, մարտի 21) անպակաս էին խաղողը, նուռը, սերկևիլը, ընկույզն ու մյուս տեսակ մրգերն ու քաղցրավենիքները: Տարվա բոլոր ամիսներին, գրեթե ամեն օր, թարմ միսն անպակաս էր նշված գյուղերում:

Այս գյուղերի կանանց պատրաստած հնդկական համեմունքներով քյուֆթան, փիթին, յախնին, բոզբաշը և այլ ճաշատեսակները որակով, համով ու հոտով կարելի է համեմատել աշխարհի ամենաառաջավոր խոհանոցների հետ:

Այս առեղծվածային ազգության տղամարդիկ մեծ հարգանք ունեին կանանց նկատմամբ, գտնում էին, որ կնոջ գործը միայն տնտեսությամբ զբաղվելն է:

Կանայք ունեին 3-7 վզնոց, մանյակներ՝ բաղկացած զանազան գույնի սաթից ու այլ արժեքավոր ուլունքներից, ոսկե և արծաթե կանթած դրամներից: Տանը թե դրսում կանայք կրում էին թանկարժեք կտորեղենից կարված հագուստ, հագնում գեղեցիկ ոսկեզօծ թելերով նախշած կոշիկներ: Օտարին մեծ հաճույք էր պատճառում տեսնել կանանց՝ աղբյուրը ջրի գնալիս. բոլորը գեղեցիկ հագնված էին, պղնձե կուժն ուսերին, հպարտ ու արծվահայաց:

Այս գյուղերի բնակիչները պաշտամունքով շիա աղանդի մահմեդական էին, խոսակցական լեզուն թուրքերենն էր, բայց ծագումը հայտնի չէր:

Այս մասին հարցրի Մարդանաղա գյուղի բնակիչ ուստա Ազիմին:

– Դուք լավ գիտեք մեր գավառի ազգություններին, մենք թուրք չենք, մեր նիստուկացը ու սովորությունները ոչ մի բանով չեն համընկնում: Մեր ամենաաղքատ գյուղացին իր աղջկան չի ամուսնացնի ամենահարուստ

---

[21] Մաթ, ռուփ, եփելով քանձրացրած պտղի հյութ (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 4, էջ 283), (***խմբ.***):

[22] Ղիդա, արաբ.՝ պտղից քամած հյութ, նաև օշարակ (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 4, էջ 165), (***խմբ.***):

թուրքի հետ, շատ հազվադեպ, բայց պատահում է, որ հարուստ ու շնորհաշատ թուրքից աղջիկ ենք ուզում:

Մենք քուրդ չենք, մեզ քուրդ անվանելը մեղք ու հանցագործություն է, նման չենք ոչ նիստուկացով, ոչ սովորություններով, ոչ տարազով ու բնավորությամբ: Մենք նրանց ոչ աղջիկ ենք տալիս, ոչ էլ՝ ուզում: Հացը մենք թխում ենք ցորենի ալյուրից, թոնրի մեջ, իսկ քրդերի կերածը գարի է, հացը թխում են սաջի վրա: Մեր հարևան Քլալա և Դարանի գյուղերի քրդերն էլ են զբաղվում այգեգործությամբ, նրանց խաղողն ու միրգը որակով ետ չեն մնում մեր ունեցածից, մինչդեռ նրանց կանայք ոչ մի շնորհք չունեն որևէ բարիք ստեղծելու, դեռ ավելին՝ այգեկութը ավարտելուց տասն օր անց նրանց տանը մի ողկույզ խաղող չես գտնի, իսկ մեր մոտ հինը միշտ հասցնում է նորին:

– Բայց, ի վերջո, դուք ի՞նչ ազգի եք պատկանում, ինչո՞ւ եք գաղտնի պահում ձեր ծագումը:

– Մենք ավելի մոտ ենք քրիստոնյա ժողովուրդներին, քան մահմեդականներին: Մեր շատ կանանց անունները համընկնում են հայերի[23] անունների հետ. Թամամ, Շամամ, Հուրի, Փերի, Ջառղալամ, Թազագյուլ, Դաստագյուլ և այլն, նրանք էլ հայերի նման շնորհքով են:

Գյուղի անունը՝ Մարդանաղա կամ Մարդանով, պարսկական ծագում ունի, նշանակում է «նոր մարդիկ» կամ «աղա մարդիկ»:

Քանի որ պարսիկները Վարդան անունը արտասանում են Մարդան, հնարավոր է գյուղանունը կապել հայկական այս անվան հետ գրավոր փաստեր չունենալու պատճառով, սա կարող է կասկածելի լինել:

Առեղծվածային ժողովրդի գաղտնիքը բացահայտելու համար հարցումներ եմ արել, զրուցել գիտակ մարդկանց հետ և հանգել հետևյալ կարծիքին. շահ Աբասը, կամենալով Ղարադաղում տարածել պարսկերեն լեզուն, նշված չորս գյուղերում վերաբնակեցրել է պարսիկների, բայց դա չի հաջողվել, ժամանակի ընթացքում, անընդհատ շփվելով թուրքերի հետ, նրանք մոռացել են իրենց լեզուն և խոսում են թուրքերեն:

Երկրորդ ենթադրությունս այն է, որ բռնագաղթի ժամանակ, մի մեծ խումբ հայերի ու վրացիների հաջողվել է Ջուլֆայից փախչել և ապաստանել այս չորս գյուղերում: Գավառի ժողովուրդը, տեսնելով նրանց բարձր մակարդակը, անվանել է «մարդան աղա» (աղա մարդիկ):

---

[23] Հեղինակը նկատի ունի Ղարադաղի հայ կանանց բնորոշ անունները (*խմբ.*):

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԸ

ԴԻԶՄԱՐ ԳԱՎԱՌԱԿ

Դիզմարը գտնվում է Ղարադաղի արևմտյան մասում, տարածքով գրեթե հավասար է Հասանով, Մեշափարա և Մինջևան գավառակների ընդհանուր տարածքին: Հարուստ է գետակներով, անտառներով, կենդանական աշխարհի բազմազանությամբ, փարթամ բուսականությամբ և դրա զարդը կազմող հազարավոր ընկուզենիներով ու բազմատեսակ պտղատու ծառերով:

Դիզմար բառը պարսկերեն է. դիզ նշանակում է բերդ, մար՝ օձ: Պարսկերեն նախադասության շարադասությունը հայերենի նկատմամբ շրջուն է, այսպիսով Դիզմար նշանակում է Օձաբերդ:

Հավանաբար այդպիսի անուն են տվել երեք կողմից բարձր լեռներով պարսպված, բերդի նմանվող անառիկության կամ էլ տարածքում բազմազան թունավոր օձերի առկայության պատճառով:

Տարածքի բոլոր գետակները, արևելյան, հարավային ու արևմտյան լեռնալանջերից ուղղություն վերցնելով դեպի հյուսիս, Քյավանի և Ուշտուբիի գյուղերի մոտ խառնվելով, կազմում են երկու գետ ու թափվում Արաքսի մեջ:

Տարածքով ամենամեծը լինելով Ղարադաղում Դիզմար գավառակը եղել է նաև ամենահայաշատը: Մեր կատարած ուսումնասիրությունների ժամանակ այնտեղ կար 27 հայկական գյուղ և գյուղատեղ:

Անդրադառնանք այդ գյուղերի պատմությանը, նրանց կառուցմանն ու շատերի ավերմանը վերաբերող մեզ հայտնի ավանդություններին, գոյություն ունեցող սրբավայրերին, ուխտատեղիներին և պահպանված այլ մնասունքներին:

ԽԱՆԱԳԱՀ

1940թ. համայնքի ընդհանուր ժողովի ժամանակ փորձեցի գյուղի բանիմաց ու տարեց մարդկանց հարցուփորձ անելով պարզել, թե ինչ է նշանակում Խանագահ անունը: Գյուղի տանուտեր Մարտիրոս Դադյանը, առանց երկար մտածելու, պատասխանեց.

Խանագահ գյուղը

– Խանագահ նշանակում է խաների գահ: Գյուղն այս անունն ստացել է նրա համար, որ դեռ շատ հնում գավառում եղած սահմանային վեճերը, ազգամիջյան կռիվները, սպանության դեպքերը վերջնական լուծում էին ստանում այնտեղ՝ նկատի ունենալով համայնքի հզորությունը, մարդկանց արդարացիությունն ու բանիմացությունը:

Գյուղի տիրացու Հարություն Սեյրանյանը, որը համայնքի ամենագրագետ ու բանիմաց մարդն էր, ասաց.

– Տանուտերը մասամբ ճիշտ ասաց, բայց մեր գյուղի հնադարյան անունը ոչ թե Խանագահ է եղել, այլ Խինգիհին, որը նշանակում է «հին է

ու հին»: Մեր գյուղը ոչ թե հարյուրամյակների այլ հազարամյակների պատմություն ունի, որի վառ ապացույցն են գյուղի չորս գերեզմանոցները:

Հնագույն պատմությունից մեզ հայտնի է, որ Ղարադաղի տարածքում բնակվել են ուրարտացիներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «խինիլի» ուրարտերեն նշանակել է գյուղ, շեն, բնակավայր, կարելի է ենթադրել, որ Խինգիհինը հետագայում դարձել է Խանագահ:

Խանագահը գտնվում է Դիզմար գավառակի արևելյան մասում, Բորզի խութ կոչվող լեռան հարավային լանջին, արևաշատ զառիթափի վրա, իր բնական դիրքով անառիկ բերդ հիշեցնող մի հիասքանչ վայրում: Գտնվելով չորս ճանապարհների հատման տեղում, ունի խաչի տեսք: Գյուղից մոտ 0,5կմ արևելք, անդնդախոր ձորի կողմից ուղղահայաց վեր է խոյանում ահռելի տեսքով, անանցանելի պարիսպ հիշեցնող Կարմիր ժայռը, որն ունի մոտ 0,5կմ երկարություն: Ժամանակին տաշել, ջարդել ու փորել են ժայռի կուրծքը, ճանապարհ բացելով նրա մեջ: Կարմիր ժայռի ստորոտով հոսող գետակը դարերի ընթացքում առաջացրել է մի անանցանելի անդունդ, արգելք հանդիսանալով հարավից գյուղ մտնելու հնարավորության: Մարդիկ գյուղից ներքև գտնվող քարե կապանքները փորելով, մի նեղ ճանապարհ են բացել դեպի հարավում գտնվող դաշտավայրերը:

Բորզի խութ լեռան գագաթը

Խանագահի արևմտյան գերեզմանոցը

Գյուղն արևմտյան կողմից անառիկ էր ուղղահայաց ձգված մի անջուր, խոր ձորակով, որտեղով հավանաբար ժամանակին ջուր է հոսել: Այդ է վկայում դրա վերին մասում գտնվող ծանծաղուտը:

Հետաքրքիր տեսք ունի գյուղի հյուսիսային կողմը. կարծես առասպելական մարդիկ հսկա ժայռաբեկորներ են շարել կողք կողքի ու պատնեշել գյուղի արևելյան ձորակից մինչև արևմտյան ձորակը, ժայռերի միջով ճանապարհ բացել նաև գյուղից դեպի հյուսիս:

Մեր կատարած հաշվարկներով, խանագահցիները դեպի հարևան գյուղերն ու դաշտերը գնալու համար, լեռնալանջերով, խիտ անտառներով, խոր ձորերով ու այլ դժվարին տարածքներով բացել էն մոտ 120կմ ճանապարհ:

Դրանք պահվում էին բարեկարգ վիճակում: Ամեն տարի, վաղ գարնանը, դաշտային աշխատանքներց առաջ, մի քանի կիրակի, որքան որ անհրաժեշտ լիներ, գյուղացիները, խմբերի բաժանվելով, նորոգում էին այն հատվածները, որոնք տուժել էին հեղեղներից, ժայռերի փլուզումներից և անտառների ածից:

Խանագահ գյուղն ուներ հսկայական ընդարձակ դաշտեր: Մոտավոր ճշտությամբ գյուղը գտնվում էր իրեն պատկանող տարածքի կենտրոնում, դաշտերի տարածքը ձգվում էր մոտ 20կմ:

Խանագահի շրջակայքում հնում եղել են յոթ հայաբնակ և երեք թրքաբնակ գյուղեր, որոնք ժամանակի ընթացքում լքվել և վերածվել են ավերակների: Նրանց հողերը միացվել են Խանագահի տարածքին: Հսկայական այդ տարածքի մասին պատկերացում կազմելու համար պետք է նշել, որ 1946թ. դրությամբ այն սահմանակից էր 14 գյուղերի հողատարածքների հետ:

Տարածքը հարուստ էր սառնորակ աղբյուրներով, որոնց թիվը հասնում էր մոտ 160-ի: Դրանց ջրերը միանալով, կազմում էին չորս գետակ:

Գյուղի շրջակա դաշտերն ու սարերը գեղեցիկ անվանումներ ունեին՝ Ըռղեներն, Սիրուն, Շաղիկ արտ, Հանդ, Երկար-երկար արտեր, Ծմակեն արտեր և այլն: Գյուղի հնադարյան ծագումն են հաստատում նաև հանդամասերի մի շարք անունները, որոնք հայերենով դժվար է ստուգաբանել. Ըռղեներն, Դրանգու, Մամադի, Գյարդիդուլա, Մալազդուլա, Թռուդուլ, Ջրունդուլ, Բոբ աղբյուր և այլն:

Խմելու և տնտեսական կարիքների համար օգտագործվող ջուրը վերցնում էին գյուղից մոտ 100մ հեռու գտնվող ձորակի քարափներից բխող սառնորակ աղբյուրներից: Կարելի է հրաշք համարել գյուղի հիմնական

աղբյուրը: Լերկ, բուսականությունից զուրկ ժայռերի կրծքից մի քանի շիթերով, տարվա բոլոր եղանակներին՝ համաչափ հորդում էին քաղցրահամ ջրերը: Աղբյուրի մոտ մի քանի ուռենիներ կային, որոնք ժամանակի ընթացքում հասակ էին առել, ճյուղավորվել ու տարածվել:

Աղբյուրից հյուսիս վեր էր խոյացել կապտագույն մի ժայռ, որի կենտրոնական մասում եղած նեղ ճեղքերից դուրս էր հորդում ջուրը: Ժամանակին գյուղացիները փորձել էին ժայռը փորել, դարձնել ջրավազան, անասուններին ջրելու համար: Մասամբ դա հաջողվել էր. փորելով ժայռի կուրծքը, վառոդով պայթեցրել էին, ավելացնելով ջրի քանակությունը: Հաջողվել էր ձևավորել երկու ավազան, բայց գործը մնացել էր անավարտ:

Անասուններին ջրելու համար, աղբյուրի ակունքներից մեկի մոտ տեղադրել էին կաղնու բնից փորված, մոտ 60սմ հաստություն ու 5մ երկարություն ունեցող ջրի նավ:

Տեսարան Խանագահից: հեռվում Սուրբ Ստեփանոս եկեղեցին է

Ակունքներից բխող ջրերն այնքան առատ էին, որ դրանցից դուրս էին գալիս չորս առուներ, որոնցով ջրում էին գյուղի շրջակայքում գտնվող մոտ 60 հեկտար այգիներն ու բանջարանոցները:

Աղբյուրների ջրերը ամռանը շատ հաճելի սառնություն ունեին, իսկ ձմռանը համեմատաբար տաք էին: Ձմռանը ջրերից բարձրացող գոլորշին ծորակը դարձնում էր մառախլապատ:

Ըստ գյուղի ծերունիների պատմածի՝ Խանագահը հիմնել են յոթ ազգատոհմեր, բայց ժամանակի վերաբերյալ գրավոր որևէ տեղեկություն չի պահպանվել: Այդ տոհմերն են.

Վարդանանք. զբաղեցնում էին գյուղի հարավարևմտյան թաղամասը: Նրանց մի ճյուղը հետագայում կրում էր Դանիելյան ազգանունը:

Դադոնք (Դադյաններ). զբաղեցնում էին գյուղը խաչմերուկող ճանապարհի վերին՝ արևմտյան թաղամասը:

Մցականք (Մնացականյաններ). զբաղեցնում էին գյուղի կենտրոնական թաղամասը:

Աբունք (Աբրահամյաններ). զբաղեցնում էին գյուղի հյուսիսարևմտյան. թաղամասը:

Մելիք-Աղաջանյաններ (Ամունք). զբաղեցնում էին գյուղի հյուսիսային թաղամասը:

Մելիք-Ազարյաններ (Դերանք). զբաղեցնում էին գյուղի հյուսիսարևելյան թաղամասը: Պատմում էին, որ նրանց պապերը Խանագահ են եկել Արաքսպար գավառակից, որտեղ բազմաթիվ գյուղեր են ունեցել: Գյուղեր են ունեցել նաև Ղարաբաղում: Նրանց մշտական բնակավայրը եղել է Գանձառի գյուղը, Արաքսի աջ ափին: Այս տոհմը շատ գրագետ մարդիկ է տվել: Նրանցից է նաև Պողոս վարդապետ Ղարադաղցին:[24]

ԽԱՆԱԳԱՀԻ ՋՐԱՂԱՑՆԵՐԸ

Վարդանյանները գյուղին մոտակա «Կուճի» փոքր գետակի ջրերը թեքելով դեպի հարավարևելյան լեռնալանջը, քարափների վրայով փորելով մոտ 400մ երկարությամբ առու, ջուրը հասցրել էին գյուղի դիմացի բլրալանջի հարթակ: Նույնքան տարածությամբ առու փորելով, այնտեղ էին հասցրել նաև «Մեծ գետի» ջուրը, որոնք բլրակի վրա միախառնվելով գործի էին դնում Վարդանենց ջրաղացը:

Վարդանենց ջրաղացից դուրս եկող ջուրը մտնում էր Դադոնց ջրաղացը, որին գրեթե կպած էր Ուսուփենցը, որը գտնվում էր բլրակի վերջավորության վրա, շրջապատված ընկուզենիներով: Նրա աջ ու ձախ կողմերով հոսող մեծ ու փոքր գետակները անմիջապես ջրաղացի մոտ միանում էին:

Ուսեփենց ջրաղացի ներքևում Մնացականյանները գետաբերանը փակել էին, առուն շրջել դեպի լեռնալանջի աջ կողմը և արևակող զառիթափի վրա կառուցել իրենց ջրաղացը:

Մնացականյանների ջրաղացից դուրս եկող ջուրը, գետի մոտից դեպի ձախ, լեռնալանջով, մոտ 200մ երկարությամբ առվով դեպի իրենց ջրա-

---

[24] Պողոս վարդապետ Ղարադաղցին 1825-26թթ. դասավանդել է Ներսիսյան դպրոցում: 1829թ. Շուշիում հրատարակվել է նրա «Համառոտութիւն հայկական քերականութեան» աշխատությունը (*խմբ.*):

ղացն էին տարել Մելիք-Ազարյանները: Ջրաղացը գտնվում էր անտառի մի գողտրիկ բացատում, ընկուզենու կողքին:

Մելիք-Ազարյանների ջրաղացից դուրս եկող ջուրը գետակի մեջ թափվելու հատվածում, Սելիք-Աղաջանյանները ջրի հունը փոխել էին, թեքել դեպի լեռնալանջի աջ կողմը: Ապառաժների դժվարին տարածքով մոտ 500մ առու էին փորել, ջուրը հասցրել փոքրիկ հարթության վրա գտնվող ջրաղացը, որը շրջապատված էր թթենիներով:

Աբրահամյանները Մելիք-Աղաջանյանների ջրաղացի ջուրը լեռնալանջով տարել, գործի էին դրել իրենց ջրաղացը, որը գտնվում էր կեռասենու մի սքանչելի այգու կենտրոնում:

Ջրաղացների նման շատության պատճառով գետի այդ հատվածը կոչվում էր «Ջաղացների գետ»:

Խանագահի ջրաղացներից օգտվում էին նաև հարևան Ղուլուդի, Նորաշեն, Հուժ, Դինավար և այլ գյուղերի բնակիչները:

Ըստ տարեց գյուղացիների պատմածների՝ Խանագահ գյուղը 19-րդ դարի երկրորդ կեսին ունեցել է 180-200, իսկ 1904թ.՝ 96 ընտանիք, 576 բնակիչ:

1940թ. գյուղում կար 100 ընտանիք 622 բնակչով: 1946թ. վիճակագրական հաշվառման ժամանակ ունեցել է 50 ընտանիք:

1946թ. օգոստոսի 5-ին գյուղի բնակչությունը գաղթեց Խորհրդային Հայաստան: Խանագահը դարձավ թրքաբնակ:

ԽԱՆԱԳԱՀԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին գտնվում էր գյուղի հյուսիսային մասում: Այն ուներ մոտ 12մ երկարություն, 5մ լայնություն և 4,5մ բարձրություն: Շինության պատերն ու տանիքը կառուցված են լեռ քարից, կրի ու ավազի շաղախով: Պատերի ու տանիքի վրա փայտ չէր օգտագործված: Կամարակապ եկեղեցին գմբեթ և զանգակատուն չուներ:

Ջվածև, միակ դռան շրջանակը շարված էր հմուտ վարպետի ձեռքով տաշած, սպիտակ գույնի չեչոտ քարից:

Դուռը նույնպես հմուտ վարպետի ձեռքի գործ էր, պատրաստված ամուր փայտերից, որոնք միացված էին խոշոր գլխիկներով գամերով: Դուռը ներսից ամրացված էր երկար ծողածև ատամներով փականով: Դռնից աջ, պատում փորված էր մի նեղ անցք, որտեղից երկաթե խոշոր կեռ բանալիով փակում էին այն:

ժամանակի ընթացքում հավատացյալ կանայք, որոնք ցանկացել էին մոմ վառել եկեղեցում, դուռը փակ տեսնելով, անգիտակցաբար դրանք կպցրել էին անմիջապես դռանը, որի հետևանքով մի քանի անգամ հրդեհել էին այն:

Արևելյան, հարավային և արևմտյան կողմերում եկեղեցին ուներ երեք նեղ ու երկար լուսամուտ, որոնց լայնությունը կլիներ մոտ 20սմ, իսկ բարձրությունը՝ 40սմ: Եկեղեցու դռան վերևում, 3մ բարձրության վրա, պատը փորել, անցք էին բացել ու ամրացրել գեղեցիկ տաշած փայտե կարճ գերան ու դրսից կախել ղողանջուն երկու խոշոր զանգ:

Եկեղեցու կտուրը ծածկված էր կավի հաստ շաղախով, որն ամբողջ երկարությամբ երկկողմանի հավասար թեքություն ուներ: Ծածկը լրիվ եզերված էր սրբատաշ նուրբ քարերով, որոնք առանձին գեղեցկություն էին տալիս կառույցին: Այդ քարերը 20սմ դուրս էին պատերից, որն արգելակում էր անձրևաջրերի թափվելուն հիմքին մոտ:

Եկեղեցու հատակը սվաղած էր կավի հարթ շաղախով: Բեմի բարձրությունը մոտ 1մ էր, սալապատված սրբատաշ քարերով: Այն գտնվում էր շինության արևելյան մասում, ուներ ծվածն, կամարակապ հորինվածք՝ շարված տաշած քարով: Բեմ էին բարձրանում հյուսիսային կողմից, երկու աստիճան քարե սանդուղքով: Բեմը բաժանվում էր մուգ թավշյա վարագույրով, որը բացում էին եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ:

Մարդիկ ծիսակատարությունների ժամանակ ու տոն օրերին այնքան շատ էին լինում, որ եկեղեցում չէին տեղավորվում: Հայտնի հյուսներ Ուսեփենց Հայրապետն ու Խաչատուրը եկեղեցու ներսում, արևմտյան մասում, պատերի մեջ անցքեր էին փորել, գերաններ ամրացրել ու հատակը տախտակապատել: Փայտե սանդուղքով այնտեղ էին բարձրանում աղջիկներն ու նորահարսերը:

Կրաշաղախի շնորհիվ եկեղեցին արտաքինից ծյան նման սպիտակ էր, կարծես նրա վրայով դարեր չէին անցել, կառուցող վարպետը նոր էր ավարտել աշխատանքը: Դրսի պատերին հակառակ՝ ներսի պատերը շատ սև էին, ածխանման: Դիտողն, անշուշտ կհանգեր այն համոզման, որ եթե նույնիսկ դարեր շարունակ գիշեր ու ցերեկ այնտեղ բազմաթիվ մոմեր վառեին, դրանցից առաջացող ծխից չէր կարող այդքան սևանալ:

Կարելի էր ենթադրել, որ կառույցն ինչ-որ ժամանակ ատրուշան է եղել, որտեղ դարեր շարունակ վառվել է պաշտամունքային հավերժական կրակը:

Սակայն դրա ատրուշան լինելու փաստը հերքում է կառույցի արևելյան ճակատի պատուհանի տակ տեղադրված, մոտ 60սմ բաձրությամբ և 30սմ լայնությամբ գեղեցիկ խաչքարը:

Կառույցի մասին գրավոր հիշատակություն կամ բանավոր ավանդություն չի պահպանվել:

Եկեղեցու ներսում, բեմահարթակը երիզող կամարի սրբատաշ քարի մեջ, կար մի փոքրիկ խորշ, որտեղ ծխատեր քահանան պահում էր սուրբ մասունքի արծաթե փոքրիկ պնակը: Խորշի վերևում փոքրիկ խաչ էր քանդակված:

Բեմահարթակի աստիճանների մոտ, հյուսիսային պատի մեջ կար կամարաձև, խոր ու գեղեցիկ փորվածք՝ խորան, որի ներքևի մասում քարե շատ փոքր մկրտության ավազան կար: Նույն պատին, փորվածքի կենտրոնում տեղադրված էր բաց կապտագույն գեղեցիկ մի փոքրիկ խաչքար, որի վերին մասում փորագրված էր 4-5 տառ:

Հավատացյալները վառվող մոմերը ամրացնում էին նաև խաչքարերին, որի պատճառով փչանում էր դրանց տեսքը, խաթարվում փորագրված տառերի իսկությունը: Հետաքրքրասեր մարդիկ, կամենալով ընթերցել գրերը, փորձել էին դանակով քերել, մաքրել մոմի հալոցքի շերտերը, որն էլ ավելի էր աղավաղել դրանք:

Եկեղեցու ներսում, անմիջապես մուտքի մոտ, պատին կպած, հատակին հավասար, խնկագույն մարմարե մի քար կար, որը նման էր տապանաքարի: Հնարավոր է, որ այն ավելի մեծ լիներ, ծածկված հատակի սվաղով: Այսօրվա պես պարզ հիշում եմ, որ այդ քարի վրա կային փորագրված հայերեն խոշոր տառեր:

Եկեղեցու չորս կողմում, որքան որ տարածություն կար, գերեզմանոց էր՝ իրար շատ մոտ դրված տապանաքարերով: Առջևի կողմում, դրանք սպիտակ քարից էին, հայերեն գեղեցիկ գրերով: Դրանցից վեր կապտագույն խոշոր, տաշած տապանաքարեր կային, առանց գրերի:

Մեր նկարագրած կառույցի ատրուշան կամ եկեղեցի լինելը պարզելու համար, դիմեցի Թավրիզում գտնվող Ատրպատականի թեմի Հայոց առաջնորդարանին: Առաջնորդարանի աշխատակից Վաչիկ Խաչյանը ուղարկեց Ղարադաղի հայաբնակ գյուղերի եկեղեցիների ոչ լրիվ ցուցակը, որում Խանագահի եկեղեցին նշված էր սուրբ Ստեփանոս անունով: Գրության մեջ նշված էին նաև ծխատեր քահանաների անունները:

Մեր ուսումնասիրած 15 եկեղեցիները կառուցված էին լեռ քարից, կավե շաղախով շարված ու փայտե գերաններով ծածկված: Հավանաբար,

բոլորն էլ կառուցված էին միևնույն ժամանակաշրջանում, ճարտարապետական նույն ոճով, չնայած դրանք տարբեր չափեր ունեին, և դռները տարբեր կողմերից էին: Խանագահի և Սարդուի եկեղեցիների դռները հարավից էին, Հուժինը՝ արևմուտքից, Վինա գյուղինը՝ հյուսիսից և այլն:

1924թ. Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանի ծննդյան 60-ամյակին մասնակցած Ղարադաղի պատվիրակները առաջնորդի հետ (կենտրոնում)

Ղարադաղի հայաբնակ գյուղերի եկեղեցիները և նրանց սպասարկող քահանաների ցուցակը, համաձայն Ատրպատականի թեմի Հայոց առաջնորդարանի գրանցումների, 1946թ. դրությամբ.

Գյուղ	Եկեղեցի	Քահանա
1. Սըղըն	Սբ. Սարգիս	տեր Հովսեփ
2. Ղասմաշեն	Սբ. Հովհաննես	տեր Հովսեփ
3. Վինա	Սբ. Մարիամ	տեր Խորեն
4. Քարագլուխ	Սբ. Հովհաննես	տեր Խորեն
5. Վինայի անտառի եկ.	Սբ. Հովհաննես	տեր Խորեն
6. Ողան	Սբ. Մարտիրոս	տեր Խորեն
7. Խանագահ	Սբ. Ստեփանոս	տեր Եզնիկ
8. Ղուլուդի	Սբ. Հռիփսիմե	տեր Եզնիկ
9. Նորաշեն	Սբ. Գևորգ	տեր Մարտիրոս
10. Հյուժ	Սբ. Գևորգ	տեր Մարտիրոս
11. Իրգութին	Սբ. Շողակաթ	տեր Գրիգոր

12. Աղաղան	Սբ. Շողակաթ	տեր Գրիգոր
13. Ղշլաղ	Սբ. Հովհաննես	տեր Գրիգոր
14. Սարդու	Սբ. Գևորգ	տեր Գրիգոր
15. Մարի	Սբ. Մարիամ	

Օղա, Գիրմնավուն և Նեփեշտ գյուղերը եկեղեցիներ ունեին, սակայն տվյալները չեն գրվել:

ԱԶԻԶՅԱՆ-ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԴՊՐՈՑԸ

Երբ խոսում ենք Ղարադաղի մասունքների մասին, մասունք պետք է համարել նաև 1898թ. կառուցված «Ազիզյան-Մնացականյան» դպրոցը: Այն Ղարադաղում կառուցված առաջին ու վերջին օրինական դպրոցն էր:

Բնիկ թավրիզեցի պարոն Մնացականը 1896թ. գարնանը տիկնոջ՝ Ազիզ խանումի[25] հետ գալիս է Խանագահ գյուղ ու ձեռնարկում դպրոցի շենքի կառուցումը անձնական միջոցներով:

Այն ժամանակ Ղարադաղում վարպետի օրավարձը հինգ շահի է եղել, իսկ բանվորինը՝ չորս: Պարոն Մնացականը դպրոցի շենքի վրա աշխատող վարպետին վարձատրել է օրական յոթ շահի, իսկ բանվորներին՝ հինգ, պայմանով, որ որակով աշխատանք կատարեն:

Մի խումբ աշակերտներ և ուսուցիչներ դպրոցի բակում

[25] Ազիզ խանումը եղել է Մելիք-Ազարյան տոհմից:

Դպրոցի կառուցման տեղն ընտրվում է գյուղից վերև, եկեղեցու մոտ: Շենքը նախագծել է ուստա Հակոբը՝ Վինա գյուղից: Կառուցող գլխավոր վարպետը եղել է վինացի Դովունց Հարութը: Քանի որ տեղանքը զառիթափ է եղել, մոտ 6մ բարձր կրաշաղախ պատ են շարել, առաջացած փոսի մեջ քար ու հող լցրել, ստեղծել հարթ տարածություն ու սկսել շինարարությունը:

Դպոցն ուներ չորս դասասենյակ, երկուսը երկար, իրար զուգահեռ, երկուսը՝ քառակուսի հատակագծով: Առաջիններն ունեին մեկական դուռ ու լուսամուտ, իսկ մյուսները մեկական դուռ, երկուական լուսամուտ: Դասասենյակների առջևում երկար սրահ կար, բակում երկու բռնչենի, արևելյան և արևմտյան դարպասների մոտ:

«Ազիզյան–Մնացականյան» դպրոցի կառուցումը տևել է երկու տարի, ձեռնարկվել է 1896թ. գարնանը, ավարտվել 1898թ. մայիսին:

Կամարածև շքամուտքի վերևում հայերեն գեղեցիկ տառերով գրված էր. «1898թ. 5-մայիսի»: Դասասենյակների մուտքը կենտրոնի փոքր միջանցքից էր: Միջանցքի վերևում, պատի մեջ տեղադրված էր խնկագույն մարմարե 80x40սմ մակերեսով մի գեղեցիկ քար, որի վրա գրված էր.

«Ազիզեան Մնացականեան դպրոց
Երկսեռ Մանկաց
Ի հիշատակ հիշյալ երկու
Ամուսնոցն Տեր Հակովբեանց
Շինուեցավ շենքս
1898թ, մայիսի 5-ին»:

Տեր-Հակոբյանց ամուսինները պարոն Մնացականը և Ազիզ խանումը կատարել են մի հոյակապ ու մեծ բարեգործություն՝ հետամնաց ու խավար, բայց հայաշատ մի գավառում լուսավորություն տարածելու համար:

Մեզ է հասել մի հետաքրքիր պատմություն բարերարների այդ ձեռնարկման մասին:

Կառուցման ու կահավորման աշխատանքներն ավարտելուց հետո պարոն Մնացականը նամակներով հրավիրում է Թավրիզի Հայոց թեմի առաջնորդին ու անվանի շատ մարդկանց, որ ներկա լինեն դպրոցի բացման արարողությանը:

Նշանակված օրը Խանագահ են եկել Ատրպատականի թեմի առաջնորդը, հոգևորականներ, անվանի մարդիկ, Ղարադաղի բոլոր գյուղերի քահանաներն ու մելիքները, տանուտերերը, մեծահարուստներ ու շարքային գյուղացիներ, հայերին մտերիմ շատ թուրքեր:

Հյուրասիրություն կազմակերպելու համար պարոն Մնացականը մորթել է տվել հինգ երինջ: Բոլոր գյուղերի պատգամավորներն իրենց հետ բերել են նաև ոչխարներ, պանիր, լավաշ հաց և այլ մթերք:

Խանագահիցիները դպրոցի շենքը զարդարել, տոնական տեսք են տվել, բակն ամբողջությամբ ծածկել գեղեցիկ գորգերով ու կարպետներով:

Դպրոցի բացման արարողությունն ավարտելուց հետո, ընդարձակ բակում ճաշկերույթի են նստում բոլոր պատգամավորները, 200-ից ավելի մարդ, այդ թվում՝ 13 հոգևորական:

Առաջնորդը գինով լի բաժակը վերցնելով, դիմում է սփռոցի շուրջը նստած պատգամավորներին.

– Հարգելի ժողովուրդ, առաջարկում եմ առաջին բաժակը լցնեք գինով ու ոտքի վրա խմենք պարոն Մնացականի և նրա կնոջ՝ Ազիզ խանումի կենացը, որոնք իրենց սեփական ուժերով հայկական այս մոռացված գավառում առաջինը ձեռնարկեցին ժողովրդի զավակների համար այս գեղեցիկ ու լուսավոր դպրոցի կառուցումը:

Բոլորը լիքը բաժակները բռնած ոտքի են կանգնում: Առաջնորդը շարունակում է.

– Տեր-Հակոբյանները այս բարեգործությունը կատարել են, քանի որ աստված նրանց ժառանգ չի տվել: Դե, մարդն իր ծնված օրից մեղավոր է աստծո առաջ, երևի այսքանիս մեջ մեկն արդար կլինի: Խմելով գինին, խնդրում եմ բոլորս միաբերան խնդրենք աստծուն մոտ ապագայում պարոն Մնացականին մի ժառանգ տա:

Բոլորն էլ բարեմաղթություններով բաժակները վեր են բարձրացնում:

Պարոն Մնացականը ձայն խնդրելով, դիմում է հավաքվածներին ու առաջարկում, որ այդ կենացը չխմեն: Ժողովուրդը քար լռությամբ լսում է.

– Մեծարգո հյուրեր, երբ ես ամուսնացա Ազիզ խանումի հետ, մեզ ամուսնացնող քահանան, որ մեր գլուխները խոնարհել տվեց սուրբ ավետարանի առջև ու ծածկեց սուրբ շուրջառով, սկսեց կարդալ իր սուրբ օրհնությունը, այդ սուրբ պահին ես ոչ թե մատանի փոխանակեցի Ազիզ խանումի հետ կամ սիրո առաջին համբույր, ինչպես հարգված է շատերի կողմից: Ես այն սուրբ պահին դիմեցի իմ աստծուն, խնդրելով. «Տեր աստված, Հակոբյանց օջախը միշտ շեն ու մեծապատիվ է եղել իր ժառանգներով, ինձ էլ, եթե կամենաս ժառանգ տալու, խնդրում եմ, որ պատվարժան ժառանգ տաս, իսկ եթե անարժան զավակ կամենալու լինես, խնդրում եմ, չտաս: Երևի աստված լսեց իմ ձայնը, պատվարժան զավակ չկամեցավ, իմ խնդրանքի համաձայն՝ անարժան զավակ էլ չտվեց: Ես կառուցեցի

այս դպրոցը, որ բոլոր բարի ժառանգները ուսում առնեն ու հիշեն ինձ ու Ազիզ խանումին: Միաժամանակ հայտնում եմ բոլորին, որ այս դպրոցը միայն խանագահիցիների համար չեմ կառուցել: Խանագահը գտնվում է գավառի կենտրոնում, այստեղ կարող են սովորել նաև ուրիշ գյուղերի երեխաները: Ես էլ, քանի կենդանի կլինեմ, դպրոցի նորոգման հոգսերը կվերցնեմ իմ վրա և ամեն տարի մի որոշ գումար կհատկացնեմ չքավոր ու որբ երեխաների ուսման վարձի, գրենական պիտույքների ու ուսուցիչների վարձի համար: Այսքանն էր իմ խոսքը, խնդրում եմ բաժակները դատարկել ու շարունակել ուրախ ճաշկերույթը:

Սկսում են հնչել ավանդական զուռնան ու դհոլը, երգն ու պարը, ճոխ ճաշկերույթը շարունակվում է:

Խանագահի դպրոցում սովորելու էին գալիս Իրգութին, Ղշլաղ, Սարդու, Նորաշեն, Օղա գյուղերից:

Պարոն Մնացականը, հավատարիմ մնալով իր խոստումին, մինչև 1919թ. գաղթը օգնում էր չքավոր ու որբ երեխաներին:

1919թ. գաղթի ժամանակ թուրքերը ավերում են Ազիզյան-Մնացականյան դպրոցը, տանում են դարպասները, դռները, լուսամուտներն ու ծածկը: 1922թ. գյուղի վերակառուցման ժամանակ մասնակի նորոգում են նաև դպրոցը, որը գոյություն է ունենում մինչև 1946թ. գաղթը:

Դպրոցի վերջին ուսուցիչը տողերիս հեղինակն էր:

ԽԱՆԱԳԱՀԻ ՇՐՋԱԿԱ ԳՅՈՒՂԱՏԵՂԵՐԸ

Շինա տեղ կամ Քյոհնա Խինգիհին. գտնվում է Խանագահից վերև, 1կմ հյուսիս: Գյուղի վճիտ, սառնորակ աղբյուրը գտնվում էր ճանապարհի վրա: Անասուններին ջրելու համար, խանագահցիները աղբյուրի մոտ դրել էին կաղնիներից պատրաստած երեք հսկա նավ:

Հին Խանագահի աղբյուրը

Գյուղը ավերակ էր դարձել անհիշելի ժամանակներում, ավերակները գտնվում էին աղբյուրից

վերև՝ արևակող ծորակի աջ ու ձախ կողմերում: Հետագայում, խանագահացիները շատ տների քարեր հավաքել, կուտակել էին ու գյուղատեղը դարձրել վարելահողեր:

Գերեզմանոցը գտնվում էր գյուղատեղի արևելյան բլրալանջին: Գյուղացիները հետագա տարիներին շատ գերեզմանաքարեր տեղափոխել էին նոր Խանագահի գերեզմանոցները:

Գյուղատեղի աջ կողմի բլրալանջին դեռ մնացել էին կալատեղերն ու մարագների ավերակները: Կալատեղերից դեպի աջ կար մոտ 60 հա մի ընդարձակ հարթ տարածք, որը կոչվում էր «Ըստուլ հիշտ»: Այն Խանագահի ամենաընդարձակ վարելահողն էր:

Գյուղի ավերվելու մասին խանագահացիները հիշում էին հետևյալ ավանդությունը. «Մի կին կտուրին նստած ցորեն էր աղունում, իսկ երկու տարեկան երեխան իրենից քիչ հեռու նստած խաղում էր ցորենի հետ: Հանկարծ մի արծիվ հարձակվում է մանկան վրա, առնում մագիլների մեջ ու տանում:

Գյուղացիները ենթադրում են, որ գյուղին ինչ-որ երկնային չարիք է սպառնում, ու երեխայի հափշտակությունը համարելով նախազգուշացում, անմիջապես քանդելով իրենց տուն ու տեղը, տեղափոխվում են ու կառուցում նոր Խանագահը»:

Փիր բագ. Խանագահից Շինատեղ տանող ճանապարհի կեսին, դեպի աջ մի նեղ ճամփա է թեքվում, անցնում փոքր հարթավայրի մոտով, ապա հասնում մի ծորակի, որտեղ դարավոր կաղնիներ կան ու քարից բխող մի վճիտ աղբյուր: Այնտեղից, անտառի միջով ոլորապտույտ ճանապարհը բարձրանում է վեր, որտեղ, լեռնալանջի թեքության վրա երևում են Փիր բագ գյուղի ավերակները: Մոտ ծորակներում կան սառնորակ աղբյուրներ ու ընկուզենիներ:

Գերեզմանոցը գտնվել է գյուղատեղի արևելյան կողմում՝ 10-20մ բարձր բնական ժայռերի հարևանությամբ, որոնք նմանվում են եգիպտական բուրգերի: Դրանց հյուսիսային մասում կանգնած է Բորզի խութ լեռը: Արևմտյան լեռնալանջն ի վար շարված են ավերակ կալատեղերն ու մարագները:

Խանագահացիները գյուղատեղի շինությունների քարերը հավաքել, կուտակել էին տարբեր տեղերում ու ազատված տարածությունները դարձրել վարելահողեր: Վարի ժամանակ հաճախ հողից դուրս էին գալիս կավե կճուճներ, պնակներ, տնային գործածության իրեր, երկաթե ու բրոնզե նետասլաքներ:

Գյուղատեղի վերևով է անցնում Ղարադաղից Թավրիզ տանող ճանապարհը: Այնտեղ կա բազմաստիճան մի քարաժայռ, որը բազմահարկ շենքի պատշգամբներ է հիշեցնում:

Դրա մասին պահպանվել է հետևյալ ավանդությունը. «Փիր բագի նորահարսերն ու հասունացած աղջիկները հաճախ իրենց ձեռքի աշխատանքները վերցրել, գնացել են քարաժայռի հարթակներից մեկում հավաքվել, ձեռագործ արել ու իրենց սիրո գաղտնիքները հայտնել միմյանց:

Մի ծերունի, տեղյակ լինելով այդ գաղտնի հավաքույթների մասին, թաքնվում է մոտիկ թփուտներում ու ականջ դնում նրանց: Աղջիկներն իմանում են ծերունու մասին ու նրանց հաջողվում է բռնել նրան՝ լրտեսության պահին: Որպես խիստ պատիժ, նրանք խուզում են ծերունու մորուքը, որն այն ժամանակ ամենաամոթալի պատիժն էր: Այդ օրվանից, ժայռը ստացել է «Մորուքը խուզվածի քար» անունը:

Թուրք Խանագահ. 1840թ. ամռանը, Ղարադաղի հայությունը, Քեյվան գավառակի բնակիչ, ավազակ Քերիմ խանի ասպատակություններից նեղվելով, գաղթում է Ղարաբաղ, քանի որ նա պահանջում էր, որ հայերն ընդունեն մահմեդական կրոնը կամ հեռանան գավառից:

Լեռնային գոտուց մոտ 30 թուրք ընտանիք Խանագահից 1կմ արևմուտք, արևահայաց լեռնալանջին, ջրառատ ձորակի ափին գյուղ են հիմնում, այն անվանում Թուրք Խանագահ:

1860թ. հայերը վերադառնում են իրենց գյուղերը: Իրար շատ մոտ գտնվող երկու Խանագահների բնակիչները հողերին տիրելու հարցում սկսում են վիճել: Օրերից մի օր հայ երեխաները սպանում են մի թուրք երեխայի, որը գարու հասկեր էր գողանում:

Թուրքերը երեխայի դիակը բերում են հայերի մոտ ու առաջարկում, որ հետագա թշնամությունից խուսափելու համար, գյուղերից մեկը տեղափոխվի: Հայերը պատասխանում են, որ իրենք տեղի հին բնակիչներն են, իսկ թուքերը նորեկներ են և կարող են գնալ որտեղից որ եկել են: Թուրքերը համաձայնվում են, բայց իրենց նախկին բնակավայրը չեն վերադառնում, այլ Խանագահից 5կմ հյուսիս-արևմուտք, լեռնալանջի մի հարթության վրա հիմնում են նոր գյուղ, անվանելով Իսմայիլ քյանդ: Հայերը այս գյուղին տալիս են Ամլե շեն անունը: Ոխակալած թուրքերը, սակայն հանգիստ չեն տալիս հայերին, բռնի կերպով տիրանում են նրանց վարելահողերին, արոտավայրերին ու անտառներին: Սկսվում է իրական թշնամություն, վեճեր են ծագում, կռիվներ ու մարդասպանություն:

Հայերից երկու հոգի՝ Աբունց ուստա Ստեփանն ու Ուսուփանց Աղաջանը գտնում են երկու գյուղերի «հաշտության գաղտնիքը»:

Ամլե շենի բնակիչները իրենց նոր գյուղի տարածքում միայն մեկ աղբյուր ունեին, որը նրանց միակ հույսն էր: Մի գիշեր նրանք վերցնում են երկաթե մի ծող, թաղիքի կտորներ և խցանում աղբյուրի ակը, ջուրն ընդմիշտ կտրում: Թուրքերը, տեսնելով աղբյուրի ցամաքելը, կարծում են, որ իրենք հայերի նկատմամբ հանցանք են կատարել, ալլահը բարկացել ու զրկել է ջրից: Այդպես էլ թողնում են ու հեռանում:

Թիթի. գտնվում է Խանագահից 20կմ արևմուտք, արևաշատ ու զարհուրելի ժայռերի գրկում ընկած մի խոր ձորակում: Ձորակում, դարավոր չինարի ծառի մոտ, կա սառնորակ մի աղբյուր:

Մարդանաղա գյուղից Հասան անունով մի թուրք, իր հարազատներով գալիս է այդ աղբյուրի մոտ գտնվող ձորակի բացատում գյուղ հիմնում ու անվանում Թիթի: Գյուղից ներքև ընկած ձորակի եզերին արգավանդ հողեր կային:

«Մղդուսու տուն» ժայռը

Կարճ ժամանակում նրանք ձորակների հողակտորները վերածում են խաղողի, թզի, նռան, ընկույզի և այլ պտղատու այգիների: Հասանը իրեն հայտարարում է «մալիք» (գյուղատեր, մելիք):

Խանագահցիները ասացվածք ունեին. «Թիթի, մարդ կփտի»: Թիթին գտնվում էր շատ շոգ վայրում, մարդիկ չէին դիմանում շոգին, արևահար էին լինում, տարածված էր նաև ջերմախտ: Հասանը ստիպված իր համայնքով տեղափոխվում է նախ-կին գյուղը: Թիթին ամբողջ տարածքով մնաց խանագահցիներին: Այն օգտագործվում էր որպես ձմեռանոց, քանի որ հարուստ էր բուսականությամբ:

Մղդուսու տուն. Խանագահից արևելք տանող ճանապարհն անցնում է մի գեղեցիկ բլրակի վրայով, աջ կողմը հարթություն է՝ եզերված մի քանի

հսկա ժայռաբեկորներով ու բռնչի ծառերով: Ճանապարհի վերևում վեր է խոյացել մացառապատ, անառիկ բերդի նման մի հսկա ժայռ, որը երեք կողմից անմատչելի է: Այնտեղ կարելի էր բարձրանալ միայն քարքարոտ ու դժվարին արահետով: Ժայռի կենտրոնում կար երկու փոքրիկ քարակոփ սենյակ: Հավանական է, որ այնտեղ մարդու ձեռքը գործ չի ունեցել, բնական քարայրեր են: Միջնապատով փոքր մուտք կար մեկից մյուսն անցնելու համար: Մուտքի առջևում փոքր հարթակ էր պատրաստված:

Հավանաբար, դարեր առաջ ժայռակոփ քարայրում մահտեսի է ճգնել, այդ առումով էլ կոչվում է «Մղդուսու տուն»:

Ղարադաղում նման վայրերը համարվում էին սրբավայր և ուխտատեղի, սակայն այս գողտրիկ, բնական կառույցը մոռացության էր մատնված. հետաքրքրության համար այնտեղ էին գնում միայն քաղաքից ամառանոց եկածներն ու դպրոցի աշակերտները:

Վախեն փիր. Խանագահից արևմուտք, մոտ 0,5կմ հեռու մի բլուր կա: Բլրի վրա մի դարավոր, հսկա ու գեղեցիկ բռնչենի կար, որի բունը ուներ մոտ 2մ հաստություն և 10մ բարձրություն:

Ղարադաղում գարնան, ամռան և աշնան ամիսներին ուժեղ ամպրոպներ հաճախ էին լինում՝ ուղեցվելով փայլատակող հզոր կայծակներով: Ամեն տարի կայծակի զոհ էին դառնում մարդիկ, կենդանիներ ու ծառեր:

Ուշադիր նայելով կարելի էր ենթադրել, որ ժամանակին այդ ծառը կայծակահարվել է, հետագա տարիներին արմատից նոր շիվեր էին աճել, հասակ առել, ճյուղավորվել, գեղեցկացել ու շրջապատին տվել խորհրդավոր տեսք:

Ծառից ներքև կային մոտ տասը, հավանաբար մանկական գերեզմաններ: Ծառի տակ տափակ քարերից կառուցված փոքրիկ հոլիկ կար, որտեղ դրված էին մի քանի ճրագակալներ:

Բոլոր այն հիվանդությունները, որոնցով երկար ժամանակ տառապում էին ու չգիտեին առաջացման պատճառները, վերագրում էին վախին: Վախեցածին բուժելու համար առավոտյան, երբ դեռ բոլորը քնած էին լինում, հիվանդի հարազատները առանց խոսելու, լուռ ու մունջ, մի կուլա ջուր էին տանում սուրբ ծառի մոտ: Այնտեղ լվանում էին հիվանդի ձեռքերը, երեսն ու ոտքերը ու կուլան խփում ծառին՝ ջարդում: Աղոթում էին, մատաղ խոստանում, ապա հիվանդի հագուստից մի ծվեն կտրում ու կապում ծառի մոտ աճած մասրենու ճյուղին՝ հավատալով, որ հիվանդությունը հանձնում են ծառին: Եթե հիվանդը կազդուրվում էր ու առողջանում, վերագրում էին սրբի զորությանը, մատաղ կտրում ու մոմեր վառում:

Բռուշնոտ փիր. գտնվում է սբ.Դավթի մատուռից մոտ 1կմ ներքև, Խանագահի գյուղի տարածքում: Ձորակի ձախ կողմում կային 15-20 դարավոր բռնչենիներ:

Դրանց արանքում, սովորական քարերից, առանց շաղախի պատերով մի փոքրիկ մատուռ կար, որտեղ դրված էին կավե ճրագներ:

Սրբավայրը վերջին ժամանակներում հեռու գտնվելով հայաբնակ գյուղերից, նրանց համար որպես ուխտատեղի չէր ծառայում: Այնտեղ ուխտի էին գնում միայն թուրքերը: Նրանք իրենց հետ տանում էին գրաստների ջարդված պայտեր ու դրանք կախում այդ ծառերի ճյուղերից: Նրանք իրենց հնոտի հագուստներից ծվենններ էին կտրում, կապում մատուռի շուրջն աճած մացառներից: Թուրքերը այդ վայրն անվանում էին «Դաղդղան փիր»: Դաղդղան նշանակում է բռնչենի:

Կաղնու փիր. գտնվում է Բռուշնոտ փիրից մոտ 1կմ վերև, կաղնու անտառով պատված բլրի գագաթին:

Բլրի գագաթին կար մի զույգ հաստաբուն կաղնի, ծառերի տակ՝ մի աննշան մատուռ: Նշված երկու սրբավայրերն էլ այնքան անշուք էին, որ չեմ կարող ասել, թե այնտեղ մասունքներ կային թաղված: Հնարավոր է, որ պաշտամունքի առարկա են եղել ծառերը:

Երե փիր (վերևի սուրբ). գտնվում է Խանագահից 1կմ վերև: Սրբավայրի մոտ երկու փոքրիկ ձորակներ միանում են: Ձախ կողմի ձորակից սառնորակ աղբյուր է բխում: Ձորակի եզրերին երկու կաղնի ու բազմաթիվ սըզգի ծառեր կան: Սրբավայրը գտնվում էր լեռան թեքության վրա: Գյուղացիները ծառերի մոտ հասարակ պատեր էին շարել, ուխտավորների հանգստի ու ճաշկերույթի համար ստեղծել գեղեցիկ հարթակներ:

Սուրբ գերեզմանը գտնվում էր երկու ձորակների միացման լեզվակի վրա: Գերեզմանի վրա հասարակ մատուռ էր կառուցված, որի ներսում կար մի քանի ճրագ:

Համբարձման տոնին այնտեղ ուխտի էին գնում Խանագահ, Նորաշեն, Ղուլուդի, Սարդու գյուղերից:

Սուրբ գերեզմանի մասին խանագահցի ծերունիները պատմում էին.

– Հնում մի աղջիկ նշանված է լինում: Տեղի սովորության համաձայն աղջկա նշանածը գնում է օտարություն, որպեսզի դրամ վաստակի ու ամուսնանա: Անցնում են ամիսներ, տարիներ, փեսացուն չի գալիս: Աղջկա ծնողները որոշում են նրան տալ մեկ ուրիշի և նախապատրաստվում են հարսանիքի: Հարսանիքի գիշերը աղջիկը փախչում է: Նա մի զույգ մոմ է տանում, վառում նշված կաղնու վրա ու աղաչում աստծուն, որ սիրած

տղային հասցնի իրեն կամ առնի իր հոգին: Գյուղում փնտրում են աղջկան, բայց՝ իզուր: Հաջորդ առավոտ հովիվները աղջկան գտնում են մահացած: Նրան թաղում են նույն տեղում: Այդ օրվանից անմուրազ մահացած աղջկա շիրիմը երիտասարդների համար դառնում է ուխտատեղի:

Շարք-շարք քարեր. Խանագահի դիմացի գեղեցիկ բլրալանջն ունի արգավանդ հողեր: Այն կոչվում է Հանդ, իսկ բլրի գագաթը՝ «Հանդեն սըռը»:

Բլրի հարավային կողմը լերկ է ու հողազուրկ. տեղատարափ հորդ անձրևները քշել, տարել են եղած հողը: Մնում են քարքարուտներ, նոսր բուսականություն ու փշատերև խոճուկ մացառներ:

Բլրի հարավարևելյան լանջին, աննշան ծորակին զուգահեռ ձգված է սևագույն քարից, մոտ 60մ երկար մի հսկա պատ: Դրսից, ծորակի կողմից այն կուենա մոտ վեց, իսկ ներսից՝ երեք մետր բարձրություն: Պատի հաստությունը մոտ 80սմ է: Պատը երկարությամբ կարծես թե բաժանված է երեք հավասար մասի, ամեն հատվածում երկուական մեծ անցքերով, որոնք նման են դիտակետի: Քարե պատը կարծես թե շաղախով չի շարված, այլ հզոր ուժով քարերը միացված են իրար: Կարծիք կա, որ պատը բնության կերտածն է, նկատի ունենալով, որ ոչ միայն նույն տարածքում, այլև ողջ Ղարադաղում նման քարատեսակ չկա և մարդ արարածը չի կարող նման հսկա պատ շարել:

1941թ. աշնանը ես բարձրացել եմ այդ պատի վրա: Այնտեղ հնարավոր է բարձրանալ միայն կենտրոնից, որտեղ աստիճանածև ոտնատեղեր կան: Դիտակետերն առանց առարկության՝ ձեռքի աշխատանք են: Նույն ուղղությամբ կան հին պատերի մնացորդներ: Առեղծվածային շինության արևմտյան կողմում պատի հետքեր չկան: Առանց փորելու շրջապատից կարող ես հավաքել քարացած խխունջներ, ծկների կմախքներ և ծովային այլ կենդանիների ոսկորներ:

Օջաղեն շեն. Գյուղատեղը գտնվում է Խանագահից մոտ 7կմ հարավարևմուտք, Սիրուն սարի աղբյուրների ջրերից առաջացած գետակին չհասած, ցածր բլրալանջով անցնող ճանապարհից աջ: Նկատվում են բազմաթիվ կալատեղեր ու մարագների ավերակներ: Դրանք Օջաղեն շեն գյուղի հնադարյան կալատեղերն են: Գյուղը գտնվել է ոչ հեռու, բլրալանջին:

Խանգահացիները ավերակների քարերը հավաքել, կուտակումներ էին արել ու ազատված տեղերը վերածել վարելահողերի: Հերկելու ժամանակ հաճախ խոփը գետնի երես էր հանում կավե թրծած կճուճներ, պնակներ ու նետասլաքներ: Այդ գյուղի մասին ավանդություններ չեն պահպանվել:

Գուրսի խալիլ. թուրքերեն նշանակում է «ճգնավորի կացարան»: Այն գտնվում է փոքրիկ բլրակի գագաթին, որտեղ քարից ու կրից մի կառույց կար, որն ուներ փոքր դռնակ, դռան վերևում՝ նեղ լուսամուտ:

Բուրգեր կամ Աղջաղալա. Թավրիզից Ղարադաղ տանող ճանապարհին, Խոյնարի սարից իջնելիս, ցածր բլրալանջերն անցնելուց հետո մի բարձր բլուր կա, որի վրա է գտնվում Բուրգեր կամ Աղջաղալա կոչվող հնադարյան բերդը: Բուրգեր անունն ստացել է հյուսիսային կողմում եղած յոթ թոնրաձև բուրգերից, որոնք նախկինում եղել են կրակարաններ: Աղջաղալա է կոչվում դրանց սպիտակության համար: Բուրգերից հյուսիս-արևելք, բլրի թիկունքում կան աղյուսից շարված հսկա շինությունների ավերակներ: Բլրի գագաթի հարթության վրա կան կարասների կտորտանքներ ու աղյուսներ: Բերդի պարիսպները չեն պահպանվել, միակ մնացորդը եղել է հարավից:

Սուրբ Դավիթ կամ Փիր Դավութ. Բուրգեր բերդից 0,5կմ արևմուտք, կաղնու ծառերով շրջապատված խոր ձորակի գեղեցիկ բացատում է գտնվում հայերի սուրբ Դավիթ սրբավայրը, որին թուրքերն անվանում են Փիր Դավութ: Դա քարից, կրի շաղախով կառուցված կամարակապ մատուռ է, որի ներսի մակերեսը 10-12քմ է: Մատուռի ներսում մի գերեզման կա, վրան քանդակախաչ տապանաքար: Քարի վրա դրված էր հայերեն մի ավետարան:[26] Գերեզմանի շուրջը, կիսաբոլոր, 0,5մ բարձրությամբ հարթակ կար՝ նստելու ու հանգստանալու համար, որտեղ դրված էին կավե ծրագներ:

Մատուռի շրջակա գյուղերում հայեր չէին ապրում: Իմ կարծիքով, տեղի հայերը գաղթել են 1840-ական թվականներին: Մատուռի դիմացի լեռան արևահայաց լանջին կան հայկական գյուղի ավերակներ: Լավ է պահպանված գերեզմանատունը: Ի՞նչ անուն է ունեցել գյուղը, հայտնի չէ: Սուրբ Դավիթ մատուռը ուխտատեղի է շրջակա թրքաբնակ գյուղերի բնակիչների համար:

Աննաբաթ. սրբավայրը գտնվում է համանուն գյուղի կենտրոնի բլրակի վրա, արևելյան կողմում:

Սրբավայրը կառուցված է ճիշտ սբ. Դավթի մատուռի նման, փոքր շինություն է՝ քարից, կրաշաղախով: Պահպանվում էր անվթար ձևով: Նախկինում եղել է գավառի հայության ամենահնաշանավոր ուխտատեղիներից մեկը:

---

[26] 1946թ. հունվարի 14-ին, գաղթից 105 տարի անց ավետարանը տեսել եմ տապանաքարի վրա: Կարծում եմ, որ այն թողել է գաղթած հայերից մեկը:

Տեղի հայերի գաղթելուց հետո, գյուղը դարձել է թրքաբնակ, վերանվանվել Օջախքյանդ (Սրբաշեն)։ Թուրքերը տեր են դարձել նաև սրբավայրին, պահպանում են ամենայն սրբությամբ, ուխտի են գնում այնտեղ։

Խանագահի հայերի մոտ պահպանվել էր սուրբ Աննաբաթին վերաբերող մի ավանդություն. «Խանագահցի մի աղքատ մարդ ժառանգ չի ունենում։ Նա կնոջ հետ ուխտի է գնում սուրբ Աննաբաթ և ուխտ անում, որ եթե երեխա ունենա, հաջորդ տարի նորից կգա սրբի ոտքը, կբերի իր ունեցած միակ ոչխարն ու մատաղ կանի։

Նրա կինը տղա է ունենում. մոտենում են սուրբ Աննաբաթի ուխտագնացության օրերը, բայց միակ ոչխարը հարկահանները տանում են հարկի դիմաց։

Երկար մտածելուց հետո գյուղացին որոշում է խոստման համաձայն՝ գնալ սրբի դուռը։ Ճանապարհին, Քյումուրի գյուղի մոտակա անտառով անցնելիս, եղնիկի մի տարեկան ձագ է բռնում, տանում մատաղ անում։ Եղնիկի ձագի միսը շամփուրներին շարած, կրակի վրա դնելու պահին ուխտավորներից մեկը նրան ասում է, որ երեխան ուշաթափվել է։ Նա ծեռքի շամփուրները տնկում է գետնին, որ միսը չհողոտվի ու վազում երեխայի մոտ։

Այդ ժամանակ գետնին տնկած շամփուրները կանաչում ու աճում են, դառնում ծառեր և իրենց հովի տակ առնում սուրբ Աննաբաթի արևակեզ մատուռը»։

Այժմ էլ սուրբ Աննաբաթը շրջապատված է մի քանի երկնասլաց ծառերով, որոնք Ղարադաղի այլ վայրերում չեն հանդիպում։

Հավանաբար Աննաբաթ տեղանունը առաջացել է անապատ բառից, քանի որ այդ վայրը նախկինում եղել է լերկ, ծառերից ու բուսականությունից զուրկ։

Թիրվանի կամուրջ. Ղարադաղն ունի մի քանի սրընթաց ջրառատ գետակներ, որոնց վրայով անցնում են կարևոր նշանակություն ունեցող ճանապարհներ։ Գարնանը ծյան հալոցքի և ծմռանը՝ սառցապատման ժամանակ զգալիորեն դժվարանում է անցուդարձը. տեղի են ունենում դժբախտ պատահարներ։

Թիրավանի կամուրջը միակն է Ղարադաղում, որ կառուցված է քարից ու կրաշաղախից՝ Շիրվան գյուղաքաղաքը Թիրվան գյուղին կապելու համար։

Կամրջի քարերից մեկի վրա գրված է կառուցման մասին։ Պատի մեջ մեղուն բուն էր դրել, ու չնայած մեղրը հանելու համար թուրքերը խարխլել էին, այն դեռ կանգուն էր ու բանուկ։

Քյումուրի. Խանագահից հարավ տանող ճանապարհը գյուղի դիմացի բլրակի վրա ճյուղավորվում է. մեկը գնում է ուղիղ, մյուսը բարձրանում ձախ կողմում գտնվող «Բուրուգնեն» կոչվող լեռնագագաթը, որտեղ նորից բաժանվում է երկու մասի: Դրանցից մեկը տանում է դեպի արևելք, Դինավար թրքաբնակ գյուղը, մյուսը լեռնալանջով ցած է իջնում հարավ, արևաշատ մի ծորակ: Այս ծորակի աջ ու ձախ փեշերին են գտնվում Քյումուրի գյուղի ավերակները: Գյուղից վերև կա քար ու կրից կառուցված մի կիսավեր եկեղեցի:

Աղբյուրի ջրի ու շռայլ արևի ջերմության շնորհիվ ծորակում աճել են զանազան վայրի ծառեր, փշատերև մացառներ ու փարթամ բուսականություն, Քյումուրին դարձնելով վայրի կենդանիների ու գազանների կացարան:

Քյումուրի գյուղի հողերի հյուսիսային ու արևմտյան տարածքներն օգտագործում էին խանագահցիները, իսկ արևելյանն ու հարավայինը՝ դինավարցիները:

Շիրվան. Գյուղաքաղաքը գտնվում է Խանագահից մոտ 5կմ հեռավորության վրա: Շիրվանը ժամանակին եղել է փոքրիկ քաղաք: Դա են վկայում ոչ միայն բանավոր ավանդությունները, այլև բավականին մեծ տարածության վրա գտնվող շինությունների ավերակները: Քաղաքի ավերակներում աչքի է ընկնում բաղնիքի կիսավեր շենքը: Ավերակները տարածված են արևահայաց ծորակի երկու կողմերում, փոքր թեքություն ունեցող հարթության վրա: Աղբյուրը գտնվում է կենտրոնում:

Շիրվանի շրջկա ամբողջ տարածքը պառակներ[27] են:

Շրջակա գյուղերի թուրք և հայ ծերունիները պատմում էին, որ շիրվանցիները ժամանակին զբաղվել են արհեստներով: Հատկապես զարգացած է եղել ջուլհակությունն ու կտավի արտադրությունը: Նրանք առևտրական կապեր են ունեցել Գանձակի հետ:

Շիրվանի շրջակա ծորակներում մինչև օրս էլ աճում են ընկուզենիներ, վայրի խաղող, նուռ, թակողին, նուշ և այլ պտղատու ծառեր: Շիրվանցիները մասամբ զբաղվել են նաև այգեգործությամբ:

Ընդարձակ գերեզմանոցը գտնվում է ավերակների հարավարևելյան մասում: 1939թ. այնտեղ ուսումնասիրություններ կատարելիս, գտա մոտ 0,6մ երկարություն, 0,5մ լայնություն ունեցող գորշագույն մի գերեզմանա-

[27] Արևահայաց, հողազուրկ լեռնալանջեր, պատված աղքատիկ բուսականությամբ:

քար: Քարի մակերեսը լրիվ քանդակազարդ էր և վիմագիր. հավանաբար հուշական տառատեսակ էր:

Շիրվանի մասին շրջակա բնակչության մեջ պահվում է մի զարմանալի ավանդություն. «Քաղաքի ծաղկուն ժամանակ ի հայտ է գալիս մի խոշոր կատու: Կատուն տներից ձու է գողանում, բարձրանում ծառերի վրա, ծտեր որսում, իսկ որոշ ժամանակ անց սկսում է փախցնել հավի ճտեր ու հավեր: Կատուն ստեղծված է մկներ որսալու համար, ո՞վ է տեսել կատվից ձվակերություն ու թռչնակերություն, կա-չկա՝ Շիրվանը կործանվելու է, որոշում են նրա բնակիչները՝ դա համարելով երկնային նախազգուշացում ու գաղթում են»:

Շիրվանից 2կմ հարավ, սրընթաց գետակի դիմացի ափի կաղնու թավուտ անտառներով պատած լեռնալանջի գեղեցիկ բացատներում, շարքով գտնվում են Թիվա, Թիվիլ, Թիրվան և Թրվանա գյուղերը: Ըստ ավանդության՝ այդ չորս գյուղերի բնակիչները կատվից հալածված նախկին շիրվանցիներն են:

Շիրվանի հյուսիսային հողերն օգտագործում էին խանագահցիները և Թիրվանի թուրքերը:

Վանստան. գյուղատեղը գտնվում է Շիրվանից 10կմ հարավ-արևմուտք, համանուն սրընթաց գետակի ակունքների մոտ: Ղարադաղի ամենախոր ու մթին ձորակները, գահավեժ ժայռերը, զարհուրելի անտառները գտնվում են Վանստանի տարածքում: Անտառներում վխտում են վայրի վարազները, քարայծերի հոտերը, արջերն ու գայլերի ոհմակները: Թանկարժեք մորթի ունեցող կենդանիներից հանդիպում են կզաքիսը, ջրաշունը, փորսուղը, լուսանը, աղվեսը. պատահում են նաև հովազներ: Այս անտառի զարդն են եղել եղնիկն ու կխտարը:

Իրանական իշխանությունները թուրք բնակչությանը արգելել էին անգամ որսորդական հրացան ունենալ: Այս գործում հայերն ավելի ճարպիկ էին: Որոշ մարդիկ որսորդական հրացան ունենալու թույլտվություն ունեին: Շատերն էլ գաղտնի էին պահում ու ցանկացած ժամանակ, զբաղվում որսորդությամբ: Վանստանցիների անասունները հաճախակի էին ենթարկվում գիշատիչների հարձակումներին: Այդ իսկ պատճառով, նրանք գյուղում կառուցել էին եկվոր որսորդների բնակարան:

Վանստանի անտառները մի քանի օրով որսի էին գնում Խանագահի, Սարդուի, Նորաշենի և Ղշլաղի հայերը: Նրանք գիշերում էին որսորդների բնակարանում, անհատույց վառելիք, սնունդ ու այլ անհրաժեշտ օգնություն ստանում վանստանցիներից:

Հայկական գերեզմանոցը գտնվում է գյուղի հյուսիս-արևմուքում:

Մարի. ըստ ավանդության՝ գյուղի եկեղեցին կոչվել է Սուրբ Մարիամ Աստվածածին: Գյուղի անունը եկեղեցու անվան կրճատ ձևն է՝ Մարի: Գտնվում է Վանստանից 5-6կմ արևմուտք, համանուն գետակի ձախ ափին, հսկա անտառի բացատում: Բնությունն ու կենդանական աշխարհը նույնն են, ինչպես և Վանստանում:

Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի վերևում: Կառուցված է քարից, կրշաղախով ծածկը եղել է կամարակապ: Գյուղն ավերակ դառնալուց հետո ավերվել է նաև եկեղեցին: Պահպանվում են միայն խորանի ու բեմի կամարները: Կա հայկական ընդարձակ գերեզմանոց: Գյուղի աղբյուրի վրա կա հայերեն վիմագիր:

Գյուղի մասին պահպանվել է հետևյալ ավանդությունը. «Աշնանը ճանապարհի մոտ գյուղի քահանան ցանք էր կատարում: Ճանապարհով անցնում էր թուրքական մի մեծ քարավան: Քարավանի թուրքերից մեկը գալիս է քահանայի մոտ ու նրանից պահանջում ջրի կուլան, որ ջուր խմի:

Քահանան հասկանում է, որ թուրքը չար մտադրություն ունի, ասում է, թե ջուրը վեջացել է, երեխան գնացել է աղբյուրից բերելու: Թուրքը նկատում է, որ քահանայի սերմացուի խուրջինը, փարաջան ու կուլան դրված են մոտիկ թփի տակ: Նա կուլան վերցնում է, ջուրը դատարկում, մեջը միզում, դնում թփի տակ ու գնում:

Քահանան չի կարողանում տանել նման անպատվությունը, իսկույն վերցնում է ահագին մահակը ու թուրքին մի հարվածով գետին գլորում: Քահանան արձակում է եզներին, գնում գյուղ ու եղելությունը պատմում: Նա զգուշացնում է համագյուղացիներին սպասվելիք վտանգի մասին, քանի որ սպանության համար գյուղը կարող էր թալանի ենթարկվել: Որոշում են թեթև իրերը վերցնել ու գաղթել»:

Պատմում են, որ նրանք բնակություն են հաստատել Գանձակի մոտակայքում:

Մարի գյուղի արևմտյան հողերը պատկանում էին Սարդուին, հարավայինը՝ թաթարաբնակ Քիռինգանին, հյուսիսայինը՝ Չայքանդին (Գետաշեն):

Եզան փիր. Մարի գյուղից 1կմ արևմուտք, Սարդու տանող ճանապարհի եզրին է գտնվում «Եզան փիրը» (սուրբ եզ): Ընթերցողը կարող է զարմանալ, թե եզն է՞լ կարող է սուրբ լինել:

Ավանդությունը պատմում է, որ Մարի գյուղի եկեղեցու շինաքարը բերված է մոտ բլրակի քարհանքից: Վարպետները քարերը կտրում էին ու դարսում փայտե ամուր քարշակի վրա: Քարշակին լծված միակ եզը,

առանց մարդու միջամտության այն տանում, հասցնում էր եկեղեցու բակը: Այնտեղ բանվորները քարը դատարկում էին, իսկ եզը վերադառնում էր քարհանք:

Տարիներ անց եզը սատկում է. կենդանուն համարելով գիտակից էակ, նրա միսն ու կաշին սովորականի նման չեն օգտագործում, այլև թաղում են քարհանքում: Եզան գերեզմանի վրա քարերից մի փոքր օջախ են պատրաստում, այնտեղ դնում մի քանի ծիթաճրագ:

Հետագայում, գավառում անասունների համաճակ սկսվելիս, հայերն ու թուրքերը եզան գրեզմանի վրա մոմ էին վառում, այնտեղի հողից տանում, խառնում աղի հետ և տալիս հիվանդ անասուններին:

ՍԱՐԴՈՒ

Մարիից 3կմ արևմուտք, Պիզ սարի արևելյան ստորոտում է գտնվում Ղարադաղի հնագույն գյուղերից մեկը՝ Սարդուն: Այն գտնվում է զառիթափի վրա: Իր ծաղկուն ժամանակ ունեցել է 60 ընտանիք:

Ամենահին բնակիչներն են եղել Ղարիբանք, Մանցունք, Ջհանգիրանք, Բադունք, Միսրունք, Ազիրունք և ուրիշներ:

Գյուղը հայ մելիքների սեփականությունն է եղել: Վերջին մելիքը եղել է Խաչին (Խաչատուր): Պատմում են, որ նա գավառում հարգված ու ազդեցիկ մարդ է եղել, ճանաչված սնխչի:[28] Մահացել է մոտ 1910թ.: Նա ունեցել է երկու տղա՝ Մարտիրոս և Ղահրաման, որոնք հոր մահից հետո տեղափոխվել են Թիֆլիս:

Հետագայում Սարդուն դարձել է Մարդանաղա գյուղի տեր Մամեդ Ղուլի խանի սեփականությունը:

Խանը Սարդու գյուղն օժիտ է տալիս իր աղջկա՝ Խավար խանումին, որը փոքր Ղահրաման խանի կինն էր: Խավար խանումն էլ Սարդուն օժիտ է տալիս իր եղբոր՝ Ալի Ղուլի խանի կնոջը:

Սարդուի երիտասարդությունը կապ է ունեցել Թիֆլիսի հետ: Ամեն տարի աշնանը, դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո նրանք մեկնում էին այնտեղ: Զբաղվում էին զանազան արհեստներով, բանվորություն էին անում և գարնանը վերադառնում գյուղ:

---

[28] Ժողովրդական բժիշկ, որը կապում է կոտրած անդամները, (*Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 4, էջ 236) (*Խմբ.*):

Գյուղից վերև, մերկ տարածության վրա երիտասարդները սկսեցին կառուցել երկհարկանի, ապակեպատ լուսամուտներով գեղեցիկ տներ, որը մեծ առաջադիմություն էր գավառում:

Գյուղի վերևում հաստաբուն բռնչենու մոտ է գտնվում հնադարյան Սուրբ Գևորգ կամարակապ եկեղեցին՝ կառուցված քարից, կրաշաղախով: Մուտքի մոտ կա մենավոր մի շիրիմ, թաղված է Մանցունց Հարութը: Եկեղեցու դուռը քանդակազարդ է, վրան կան հայերեն գրեր:

Եկեղեցու ներսում՝ ուղիղ դռան վերևում, գորշագույն շաղախով պատը հարթեցված է մոտ 1քմ տարածությամբ: Գրատախտակի նմանվող հարթության վրա մեսրոպատառ գեղեցիկ հայերենով գրված է. «Սարդու գյուղը վերակառուցվել է մելիք Խաչատուրի որդի մելիք Կարապետի օրոք՝ 1860թ.»:

Գյուղի գերեզմանոցը գտնվում է եկեղեցուց արևմուտք:

Փիրեն խութ. Սարդու գյուղից Թավրիզ տանող ոլորապտույտ ճանապարհը Պիզ սարի անտառապատ լանջերով անընդհատ բարձրանում է վեր: Մոտ 20կմ անցնելով դուրս կգաս մի աննշան բլրակով հարթություն, որտեղ շինությունների ավերակներ կան:

Ավերակներում աճում են երկնասլաց կաղնիներ, որոնց համարելով սուրբ ծառեր՝ չեն կտրում: Փիրեն խութ նշանակում է սուրբ բլուր կամ բարձունք: Ավերակների մասին որևէ ավանդություն չի պահպանվել:

ՂՇԼԱՂ

Գտնվում է Սարդուից մոտ 12կմ արևմուտք: Հիմնվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Ըստ ծերունիների պատմածի՝ գյուղի հիմնադիրները եղել են Ղարաբաղի Բյութկյուն (այժմ Գեղանուշ) գյուղից: Հետագայում բնակվում են նաև մեղրեցիներ ու շավլեցիներ:

Աչքի ընկնող տոհմերից են եղել Բաղդասարանք, Բաբախանանք, Շահնազարանք, Պողոսանք, Առաքելանք, Տեր-Վարդանանք և ուրիշներ:

Սկզբնական շրջանում գյուղը պատկանել է համայնքին, որը ղեկավարել են մելիք Սարգիսը, մելիք Սահակը և ուրիշներ:

1905թ. Ղշլաղի տեր է դառնում մեծ Ղահրաման խանը, հայերի անվտանգությունը պահպանելու պայմանով:

1914թ., փոքր Ղահրաման խանը Ղշլաղը վաճառում է Միսան գյուղի տեր Հաջի խանին: 1947թ. Հաջի խանի թոռ Ղուլի խանը այն վաճառել է Ուշտուբիև գյուղի բնակիչ Միրվաթի տղային:

Ղշլաղ գյուղը

Ղշլաղցիների հիմնական զբաղմունքները եղել են հողագործությունն ու անասնապահությունը: Առաջներում զբաղվել են նաև երկաթագործությամբ: Այգեգործությունն ու բանջարաբուծությունը թույլ էր զարգացած:

Գյուղում կար եկեղեցի, որի պատերը կառուցված էին քարից, կավի շաղախով: Կտուրը ծածկված էր փայտե գերաններով: Գերեզմանոցը գտնվում էր գյուղի հյուսիսային մասում:

Մար-աղջիկ ղալա. Ղշլաղ գյուղից 4կմ հարավ-արևելք էին գտնվում Մար-աղջիկ կամ, ինչպես տեղի թուրքերն էին ասում, «Նանա գըզ գալա» բնակավայրի ավերակները:

Ըստ ավանդության՝ ժամանակին այն եղել է զարգացած, գեղեցիկ ու բարեկարգ, կավե պատերով պարսպապատված, շքեղ դարպասներով ավան, որի նմանը չի եղել Ղարադաղում:

Ավանի այգիները ջրելու համար գետակի ջուրը առվով հասցրել են այնտեղ:

Ավանի բերդի տիրակալը կին է եղել, որն ունեցել է մեկ աղջիկ: Ըստ պատմողների՝ ավանի հարստության ու տիրուհու աղջկա գեղեցկության լուրը հասնում է Դաղստանի լեզգիներին: Նրանք արշավում են, հարձակվում ավանի վրա, ավերում այն, կողոպտում հարստությունը, տիրուհուն ու աղջկան գերի վերցնում:

Ավերված ավանից քիչ ներքև կա մի ընդարձակ գերեզմանոց, որտեղ կա մի գույգ ուղիղ տնկած տաշած քար, մեկը մյուսից քիչ բարձր: Ասում են, որ գերությունից մորն ու աղջկան հաջողվում է փախչել: Նրանք հանդիպում են գերեզմանոցում, գրկախառնվում ու քարանում: Բարձր քարը մայրն է, ցածրը՝ աղջիկը:

Միզգիթին. Մար-աղջիկ ղալայից 3կմ հարավ-արևմուտք, լեռնալանջի վրա են գտնվում Միզգիթին գյուղի ավերակները: Միզգիթինն ունեցել է սրբատաշ քարերից կառուցված ուխտատեղի, որը նույնպես ավերված է: Զատկի տոնին այնտեղ ուխտի էին գնում Ղշլաղ գյուղի հայերը, իսկ տարվա տարբեր ամիսներին՝ մոտակա Օվլի և Նամնա գյուղերի թուրքերը:

Նախկինում եղել է հայաբնակ: Գյուղից ներքև դեռ մնում են գերեզմանոցի հետքերը:

Միզգիթինի հյուսիսային հողատարածությունները, ինչպես նաև անտառները օգտագործում էին ղշլաղցիները:

Թուխի. նախկինում եղել է հայաբնակ: Գյուղի ավերակները գտնվում են Ղշլաղից 10կմ հարավ-արևմուտք, բարձր լեռնալանջի վրա, կաղնու անտառներով ու ջրառատ աղբյուրներով շրջապատված մի ընդարձակ բացատում:

Զարմանալի է, որ մինչև օրս անվթար ձևով պահպանվել է քարաշեն կամարակապ եկեղեցին: Թուխիի եկեղեցին իր կառուցվածքով նման է Խանագահի, Սարդուի և Ղարադաղի մյուս հնադարյան եկեղեցիներին:

Թուխին դարձել էր Ղարադաղի թուրքերի ամենաշահավոր ուխտատեղին:

Հետաքրքիր է իմանալ, թե հայկական եկեղեցին ինչպե՞ս էր դարձել թուրքերի ուխտատեղի:

Այս հարցին ամենայն ճշտությամբ պատասխանեց Իրգութին գյուղի տանուտեր Հակոբ Գրիգորյանը. «Մոտավորապես 1910թ. Ուզունդուլ գավառից մի թուրք սեիդ[29] եկավ, ըստ իրենց սովորության՝ թրքաբնակ գյուղերում շրջագայության: Նրա անունը Զաբրահիլ էր: Գյուղերում նրան միշտ նույն հարցն են տվել, թե ինչո՞ւ Ղարադաղում ապրող հայերը բազմաթիվ սրբավայրեր ու ուխտատեղիներ ունեն, իսկ թուրքերը՝ ոչ:

Սեիդ Զաբրահիլը խորամանկ մարդ է լինում, նա Ուզունդուլից Ղարադաղ գնալիս, ճանապարհի մոտ, անտառի բացատում տեսել էր Թուխիի լքված ու անտեր եկեղեցին: Իր այցելությունն ավելի նպատակային դարձ-

[29] Սեիդ. համարվում են մահմեդական իմամների սերունդ, քարոզիչներ են, ազատ մուտք ունեին բոլոր բնակավայրերն ու ընտանիքները:

նելու և ավելի շատ արժեքավոր նվերներ ստանալու համար նա հավաքված թուրքերին պատասխանում է, որ նրանց համար ալլահը ուխտատեղի շատ վաղուց է կառուցել, սակայն տեղը չգիտեն: Այդ մասին ալլահը երազում հայտնել է իրեն ու պարտավորեցրել, որ գնա Ղարադաղ, հավաքի իր հավատացյալներին ու ցույց տա այն:

Անգրագետ, կրոնին գերի թուրքերը երկյուղածությամբ հավատում են սեիդին ու այդ օրվանից Թուխիի եկեղեցին ճանաչում որպես ալլահի կառուցած ուխտատեղի: Հետագայում սեիդին թաղում են Թութիում և ուխտատեղին վերանվանում Սեիդ Ջաբրահիլ»:

Նշան. Նախկինում հայաբնակ Նշան գյուղի ավերակները գտնվում են Ղշլաղից 3կմ հարավ-արևմուտք, մի գեղեցիկ հարթության վրա: Ավերակների արևմտյան մասում, ընկուզենու տակ երևում են ջրաղացի հետքեր: Գյուղի բնակչությունն օգտվել է քահրիզի[30] ջրից: Գյուղից ներքև կա գերեզմանոց: Նշան գյուղում զարգացած է եղել այգեգործությունը:

Հողատարածությունները ամբողջովին օգտագործում էին ղշլաղցիները:

Վրկնա. Նախկինում հայաբնակ Վրկնա գյուղի ավերակները գտնվում են Նշան գյուղից 3-4կմ արևմուտք, փոքր գետակի ձախ կողմում, լեռնալանջի հարթության վրա: Գերեզմանոցը գտնվում է գյուղից հյուսիս: Արևմուտքից գյուղ մտնող ճանապարհի եզրին, գյուղին շատ մոտ մի վիմագիր տաշած քար կար:

Նամնա. գտնվում է Ղշլաղից 4կմ հարավ-արևմուտք, ծորակի աջափնյա զառիթափի վրա, պտղատու խոշոռւկ այգիների մեջ: Ներկայումս այնտեղ ապրող թուրքերը միակն են Ղարադաղում, որ զբաղվում են բրուտագործությամբ: Պատմում են, որ այդ արհեստը նրանք սովորել են նախկինում այնտեղ ապրած հայերից: Պատրաստում էին գեղեցիկ «գևաթ»՝ չորաթան հարելու համար, հաց թխելու «սաջ» և տնային գործածության այլ իրեր:

Ըստ ավանդության՝ նամնացիները գաղթել են 1840թ.: Գաղթի ժամանակ գյուղի մելիք Բադալը տնային շատ իրեր հորում է մի ընկուզենու տակ:

1860թ. նրանք վերադառնում են Ղարադաղ, բայց Նամնայում արդեն թուրքեր էին ապրում: Հայերը չկարողանալով տիրանալ իրենց տներին, ստիպված ցրվում են գավառի տարբեր գյուղերում: Մելիք Բադալը բնակություն է հաստատում Օղա գյուղում:

---

[30] Քահրիզ -ստորգետնյա ջրանցքով բերված աղբյուր:

Որոշ ժամանակ անց, մելիքը գնում է իր պահած իրերը հանելու, բայց դրանք թուրքերն արդեն գտել էին: Մելիքը խորամանկ քայլի է դիմում. գարնանը երկու կլեկչի[31] է տանում Նամնա պղնձե իրերը կլայեկելու համար:

Գյուղացիները բերում են իրենց պղինձները, իսկ մելիք Բադալը սկսում է իրեն պատկանող իրերը ջոկել: Թուրքերը առարկել չեն կարողանում, քանի որ մելիքի բոլոր պղնձե իրերի վրա խաչեր էին քանդակված:

Նամնայի դիմացի լեռնալանջում մի մեծ արտատեղ մինչև օրս էլ կոչվում է «Թունի զամիսի»՝ Թունիի արտ: Թունյանները գաղթից վերադառնալուց հետո բնակվում էին Իրգութին գյուղում:

ԻՐԳՈՒԹԻՆ

Գտնվում է Նամնայից արևմուտք, Սիլյան մարի արևահայաց ցածրադիր զառիթափ լանջին: Հիմնադրվել է 1860թ.: Դա հաստատվում է այն փաստով, որ գյուղի բնակիչները, բնավեր թռչունների նման հավաքվել են տարբեր տեղերից: Թունեցիք նամնեցիներ էին, Օհանջանենք՝ մարիցիներ, Գյուքունք՝ մուսուդառուցիներ, Մեջնումանք, Քարամանք և Զարգարանք՝ միզգիթինցիներ:

1840թ. գաղթից վերադարձած հայերն ամենուր տեսել են, որ իրենց գյուղերը ավերվել են կամ դարձել թրքաբնակ: Նրանք ստիպված հավաքվել են մի նոր անկյուն, նոր գյուղ հիմնել: Գյուղը ղեկավարել են մելիք Մուսին, Գրիգորը, Ակոբը և ուրիշներ:

1905թ. գյուղին տեր է դառնում միսանցի Հաջի խանը: 1946թ. նրա ժառանգորդները այն վաճառեցին ուշտուբինցի Հաջի Իբրահիմին:

Իրգութին գյուղը լինելով լեռնային գոտում զուրկ էր արգավանդ վարելահողերից, եղածից էլ ստացվում էր ցածր բերք: Մասամբ զբաղվում էին նաև անասնապահությամբ:

Գյուղը հարուստ էր կաղնու անտառներով, որը հատում էին, փայտածուխ պատրաստում և Թավրիզում վաճառում:

Գյուղն ուներ քարաշեն եկեղեցի՝ ծածկված կաղնու գերաններով:

---

[31] Արհեստավոր, որ անագով ամաններ էր կլայեկում (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 2, էջ 442), (***խմբ.***):

1945թ. գարնանը Իրգութին գյուղի հասարակական մի հավաքի ժամանակ, փորձեցի ստուգաբանել գյուղի անունը՝ հարցնելով գյուղի տարեց ու բանիմաց մարդկանց:

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Ն. Մելիք-Թանգյանը Իրգութին գյուղում

Նրանցից մեկը՝ Թունոնց Ղահրամանը, առանց վարանելու պատասխանեց, որ Իրգութին բառացիորեն նշանակում է «իր գութը», «իր խիղճը»: Նրա ասածը հաստատեցին նաև տանուտեր Հակոբն ու ծխատեր քահանա տեր Գրիգորը:

Նրանց պատասխանը համոզիչ չէր, քանի որ գյուղի նախկին անունը եղել է «Ըրկթին», այսինքն՝ երկաթից: Գյուղն այդպես է կոչվել այն պատճառով, որ գտնվում է երկաթի հանքի վրա: Հավանաբար, ըրկթի բառը աղավաղվելով՝ դարձել է Իրգութին:

Մինչև 1918թ. գաղթը գյուղում գործում էր դարբնոց: Անվանի և հմուտ դարբիններ էին ուստա Թևանը, Գրիգորը, Ստեփանը և ուրիշներ: Նրանք հանքաքարը բերում էին Նամնա գյուղի մոտ գտնվող Նազանի լեռան լանջերի բաց հանքերից: Շատ պարզ եղանակով իրենց պատրաստած «քյուրաներում» (հնոց) հանքաքարը հալում էին ու պատրաստում գյուղատնտեսական գործիքներ:

Իրգութինի հարավային կողմից մի նեղ ճանապարհ ոլորաններով տանում էր դեպի բարձր լեռները: Գյուղից մոտ 400մ հեռու վեր էր խոյացել մի ոչ մեծ ժայռ, որի դիմացի հարթ տարածությունը գյուղատեղի էր: Հետագայում շինությունների քարերը հավաքել, կուտակել էին՝ տարածքը դարձնելով վարելահող:

Հին գյուղատեղը նշված ժայռից բաժանվում էր մի աննշան ձորակով: Ժայռի արևելյան կողմին քանդակված էր մարդու պատկեր, դրա վերևի քարերին մի քանի գրեր կային, որոնք ձևով ծիու պայտ էին հիշեցնում:

Ժայռի վրա քանդակված պատկերն անվանում էին սուրբ Սարգիս, իսկ ժայռին՝ «Քումեն քար»: Ղարադաղի բարբառով քում նշանակում է նպատակ, այսինքն՝ նպատակի քար: Այնտեղ ուխտի էին գնում Ջատկին:

Խաչեն խութ. Իրգութինի գյուղից 3-4կմ հյուսիս-արևմուտք, լեռան զառիթափին մի գեղեցիկ բլուր կա, որի գագաթի հարթ տարածքին առանձին գեղեցկություն են տալիս մի քանի սաղարթախիտ կաղնիներ, որոնք համարվում են սրբություն: Այնտեղ ուխտի էին գնում շրջակայքում բնակվող հայերն ու թուրքերը: Տեղացիները բլուրն անվանում էին Խաչեն խութ:

Պատմում էին, որ Իրգութինի դարբին ուստա Թևանի որդին՝ Գրիգորը երկար տարիներ աշխատել է Գանձակում: Օտարությունից վերադառնալուց հետո նրան ամուսնացնում են: Հարսանիքից յոթ օր անց Գրիգորը գնում է հոր դարբնոցը և տեսնում, որ զնդանը ամրացված է մի հասարակ կոճղի: Նա դիմելով հորը, զարմացած հարցնում է.

– Ուրիշ հարմար կոճղ չկա,՞ որ սա ես դրել, Խաչի խութի կաղնիները հարմար չե՞ն:

Հայրը պատասխանում է.

– Կաղնիները սուրբ են, սրբավայրի ծառերը կտրելը մեղք է:

– Հիմա որ ես գնամ կտրեմ, խաչը պետք է կացինը ծեռքիցս խլի՞,- հեգնանքով առարկում է որդին:

Հայրը որքան համոզում է, որդին չի լսում, հաջորդ օրը գնում է, կաղնիներից մեկը գետին տապալում, ահագին մեծությամ մի կոճղ կտրում, դնում քարշակի վրա, եզները լծում՝ բերում հոր դարբնոցի մոտ: Տուն վերադառնալով Գրիգորը չի կարողանում եզները արձակել, ասում է, որ անկողինը բացեն, մեջքը ցավում է: Տնեցիների հարցերին պատասխանում է.

– Որ ծառը կտրեցի, արյուն հոսեց, մեղք եմ գործել:

Երեք օր հետո երիտասարդը մահանում է:

Հայրը ծառի կոճղը անմիջապես տեղափոխում է գյուղի եկեղեցու բակը, այնտեղ էլ կատարում որդու թաղումը:[32]

Ջափարաբադ. Իրգութինից 3-4կմ հարավ-արևմուտք, լեռնային հարթավայրում, կաղնու անտառներով պարուրված սառնորակ աղբյուրի մոտ է գտնվում հնադարյան հայկական Ջափարաբադ գյուղը: Դրա վկան են մինչև օրս կանգուն քարից ու կրից կառուցված կիսավեր եկեղեցին ու ընդարձակ գերեզմանոցի հսկա տապանաքարերը:

Ըստ ավանդության՝ գյուղն ավերել են լեզգիները:

Ջափարաբադի մասին 1946թ., հետաքրքիր եղելություն պատմեցին մի խումբ իրգութինցիներ. «Մոտ 1900թ., հինգ իրգութինցիներ Թիֆլիսից վերադառնում են հայրենի գյուղ: Նրանց հետ էր նաև Երևանի մոտ գտնվող Ջափարաբադ (այժմ՝ Արգավանդ) գյուղից մի երիտասարդ: Երբ հասնում են Երևան, նա ընկերներին տուն է հրավիրում:

Երիտասարդի պապը հետաքրքրվում է հյուրերով ու տեղեկանում, որ ղարադաղցիներ են, ապրում են Ջափարաբադի մոտ, լավ տեղյակ են տեղանքին: Նա հայտնում է, որ ինքն այդ գյուղից է, որի ավերվելուց հետո տեղափոխվել են, Երևանի մոտ գյուղ հիմնել ու տվել նույն անունը:

Նա հայտնում է, որ Հին Ջափարաբադում զույգ արտատեղ կա, որոնց միջև գտնվող խոշոր քարի մոտ գանձ է թաղված:

Ծերունու թոռն իրգութինցիների հետ գնում է գանձը փնտրելու, բայց ապարդյուն:

Գյուղատեղի հողերը օգտագործում էին իրգութինցիները:

ԱՂԱՂԱՆ

Աղաղանը[33] գտնվում է Սիլյան սարի արևմտյան լանջին, խիստ զառիթափ տեղանքում: Գյուղը նայում է դեպի Վասպուրական: Աղաղանը հավանաբար հիմնվել է 18-րդ դարի երկրորդ կեսին: Բնակիչները պատմում էին, որ Իրգութինը նրանից մոտ տասը տարի շուտ է կառուցվել:

Աղաղանի հիմնադիրներից են եղել Վարդանանք, Աշուղանք, Ակոփանք, Լալայանք, Գևայանք և այլ տոհմեր: Գյուղում իշխել են Մելիք-Ջաքարյանները:

---

[32] Կաղնիները պատած են լինում խիտ, կանաչ մամուռով, ծառերի փչակները լցվում են աննձրևաջրով, որը մամուռից ու կեղևից արյան գույն է ստանում:

[33] Աղաղան Ղարադաղի բարբառով նշանակում է արջերի որջ: Ըստ ականատեսների՝ ամեն ծառի տակ մի քանի որջ է եղել:

1914թ. գյուղը դառնում է Հաջի խանի սեփականությունը:

Չնայած Աղաղանը Ղարադաղի համեմատաբար նոր գյուղերից է, այնտեղ այնպիսի նշանակալի իրադարձություններ են տեղի ունեցել, որոնց մասին կարելի է առանձին գիրք գրել:

Աղաղանում է իր առաջին ջոկատը կազմել հայ ազգի հերոս զավակ Եփրեմ խան Ասլիբեկյանը, այնտեղ է կազմակերպվել «Ղարադաղ» թերթի հրատարակությունը:

1918թ. օգոստոսին, վաղ առավոտյան Աղաղան է մտնում թուրքերի մի զինված հեծյալ ջոկատ՝ Մուխտար փաշայի գլխավորությամբ: Փաշան հավաքել է տալիս աղաղանցիներին ու հայտարարում, որ գյուղը վերածվում է զորանոցի, հարկավոր է երկու ժամվա ընթացքում այն ազատել՝ իրենց հետ տանելով միայն ուտելիք, հագուստ և կանացի զարդեղեն. մնացածը ենթակա է պետականացման: Աղաղանցիների աղաչանքը, լացն ու նվերները չեն օգնում: Անմիջապես սկսվում է բնակչության տեղահանումը, որոնց ասկյարների հսկողությամբ տանում են դեպի Ավան գյուղը:

Անտառի մի բացատ հասնելով ասկյարները պահանջում են իրենց հանձնել ոսկե զարդերը: Գյուղացիներին կողոպտելուց հետո սկսվում է մասսայական կոտարածը: Ամենից առաջ գնդակահարում են գյուղի քահանա տեր Արտակին: Անփորձ ու անզեն գյուղացիները մինչև ուշքի են գալիս, ճեղքում շրջապատումն ու փախչում մոտակա անտառները, բացատում մնում է 54 դիակ:

Կոտորածի զոհերի թաղումը կատարել են Խանագահ գյուղից տեր Եզնիկ Ոսկանյանը, Սիրյանանց Հարությունը, Դադունց Բագին, Սարդու գյուղից՝ Ավագ քյոխվան, Ղարիբենց Պետրոսը, Մանցուց Արշակը, Ղշլաղից՝ Սահակ քյոխվան, Թումաս Տեր-Պողոսյանը, Բաբաջան Բաբախանյանը, Իրգութին գյուղի ողջ հասարակությունը և կոտորածից փրկված աղաղանցիները:

Այս մասին պատմել է տեր Եզնիկ քահանա Ոսկանյանը:

Ղարադաղի ողջ հայերին կվիճակվեր աղաղանցիների ճակատագիրը, եթե չլիներ Ուշտուբին գյուղի թուրքերի վարմունքը: Նրանք անմիջապես զինվեցին ու Իրգութինի հայերի հետ փակեցին թուրքական ջոկատի առաջխաղացումը Սիլյան սարի լեռնանցում: Թուրքական ջոկատը նահանջում է և հեռանում:

Աղաղանի դիմաց, Ավան տանող ճանապարհին մի տաշած, վիմագիր քար կա, որը կոչվում է «Դերվիշի քար»:

Քյուրանդ. Դիզմար գավառակի արևմտյան ամենավերջին գյուղն է, որով Ղարադաղը սահմանազատվում էր Վասպուրական նահանգի Մարանդ գավառից: Աղաղան գյուղը հիմնվել է Քյուրանդի հողատարածության վրա:

Հետագայում Քյուրանդը դարձել է աղաղանցիների անասնապահական ձմեռանոց:

Քյուրանդի ավերակներից վեր, մերկ, քարքարոտ լեռնալանջն ի վեր, մի նեղ ոլորապտույտ կածան էր բարձրանում, որը տանում էր սրբավայրը, որը կիսավեր շինություն էր՝ կառուցված սրբատաշ քարից. պահպանվում էր միայն խորանը: Ջատկին այնտեղ ուխտի էին գնում Աղաղանի և Իրգութինի հայերը:

Քյուրանդի դիմացի լեռան բլրալանջին կա գյուղի ավերակ, որն ունի հայկական գերեզմանոց: Այդ վայրին թուրքերն անվանում էին «Գյոյ բուլաղ» (կապույտ աղբյուր):

Հարաս. Մեղրիից մոտ 20կմ ներքև Արաքսին է միանում Ուշտուբին գետը: Գետաբերանի հարթ տարածության վրա են գտնվում Հարաս[34] հայկական գյուղի ավերակները: Դեռ կանգուն են քարից, կրաշաղախով կառուցված եկեղեցու սպիտակ պատերը: Պատմում են, որ գյուղը եկեղեցու անունով է կոչվել:

Հարասը համարվում է Ղարադաղի ամենատաք վայրը: Հարասցիները զբաղվել են պտղաբուծությամբ ու խաղողագործությամբ: Գավառում մրգի հասունացումը սկսվում էր Հարասից: Այժմ այդ այգիները մշակում են ուշտուբինցիները:

Խանագահցիների մոտ Հարասի մասին հիշվում է հետևյալ ավանդությունը. «Մի թուրք հաճախակի անցնում էր Արաքսն ու գողանում այգիներում արածող հորթերից: Իմանալով այդ մասին՝ մի հարասցի անցնում է Արաքսը ու գողանում ավազակ թուրքի դանաև (երկու տարեկան հորթ): Նա անմիջապես մորթում է այն, տհալ (ապուխտ) պատրաստում ու լցնում կարասը: Ավազակ թուրքն իմանում է, գալիս՝ դանաև ետ է պահանջում: Հայն ասում է, որ ինքը տեղյակ չէ, թուրքը չի հավատում, առաջարկում է հային գնալ եկեղեցի և այնտեղ երդվել: Նա համաձայնվում է, մտնում եկեղեցի և երդվելով՝ ասում.

---

[34] Հարաս՝ Ղարադաղի բարբառով նշանակում է շտապ օգնության հասնող սուրբ, որին դիմում են օգնության կարիք ունենալիս:

«Հարաս ջան, Հարաս,
էս քորքը շատ ա գյողացած իմ դանաս,
Իս ալ՝ իրանը բերածըմ, կոխած կարաս,
Ինձ մեխկ չօնըմ, քորքեն դիվանը դու տաս»:

Ուշտուբին. գտնվում է Հարասից մոտ 1կմ հարավ, համանուն գետի ձախ ափին, քարքարոտ զառիթափի վրա:

Հնուց ի վեր տեղի բնակիչները զբաղվել են պտղաբուծությամբ ու խաղողագործությամբ: Գետի աջ ափին, գյուղի դիմացի մեծ հարթության վրա գտնվող խաղողի այգիների տարածքը անվանում են «Խալիֆա բաղի» (առաջնորդի այգի): Հայկական գերեզմանոցը գտնվում է գյուղի դիմացի բլրալանջին:

Քովնի. Մարդանաղա գետակի ափին Արաքսին խառնվելուց 2կմ վերև գտնվել է հայկական Քովնի կամ Քյավնի գյուղը: Գետի ափին փռված են խաղողի ու պտղատու այգիներ: Պտուղներից առաջին տեղն է գրավում ընտիր նուռը:

Ավերակ եկեղեցին գտնվում է գյուղի վերին մասում:

Գյուղի այժմյան թուրք բնակիչները երեք անգամ փորձել են այն մեջիդի վերափոխել, բայց երեք անգամն էլ գմբեթի մի մասը փլվել է:

Վարդանաշեն (Մարդանքյանդ). գտնվում է համանուն գետակի ափին, Արաքսին խառնվելու տեղից 4կմ վերև: Գյուղի շրջակայքը բուսականությունից զուրկ, քարքարոտ վայր է, կան հատուկենտ եղևնիներ: Այս գյուղի մոտ են միանում Խանագահի, Թիրավանի ու Վանստանի սրընթաց գետակները: Գետակների ափերին բազմաթիվ հողակտորներ կան, որոնք խնամքով մշակված և վերածված են խաղողի ու պտղատու այգիների:

Վարդանաշենի այգիների տարածքում էլ հետագայում հիմնվեց Մարդանաղա գյուղը, որը ամենահարուստներից մեկն էր գավառում: Վարդանաշենի ավերակները Մարդանաղա գյուղից բաժանում է մի փոքր բլրալանջ:

Դատելով ավերակներից՝ Վարդանաշենը եղել է գյուղաքաղաք: Ավերակների կենտրոնում մի կիսավեր մատուռ էր պահպանվել, որտեղ Մարդանաղա գյուղի կանայք ուրբաթ երեկոները մոմ էին վառում:

Գերեզմանոցը գտնվում է գետափին:

Նըղըլի. Քովնի գյուղից հյուսիս, լերկ քարքարուտներով ու ոլորաններով մի ճանապարհ է ձգվում դեպի լեռան գագաթ: Սարահարթում կաղնու անտառ կա, որի գեղեցիկ բացատներից մեկում են գտնվում Նըղըլի գյուղի ավերակները: Դրանց արևմտյան կողմում գերեզմանոցն է:

Նըղըլու մասին խանագահիցիները մի հետաքրքիր ավանդություն էին պատմում. «Գյուղի մելիքը զավակ չի ունենում, մի գիշեր, երազում նրա մոտ է գալիս մի ալեհեր ծերունի ու ասում.

– Շուտով դու արու զավակ կունենաս, բայց պետք է տեղափոխվես ուրիշ տեղ, եթե այստեղ մնաս, որդուդ ամուսնության օրը օձը կխայթի ու նա կմահանա: Կարճ ժամանակ անց մելիքն արու զավակ է ունենում: Ըստ պայմանի՝ նա քոչում է Ղարաբաղ: Մելիքի հետ քոչում են նաև բոլոր բնակիչները:

Ժամանակի հետ մեծանում, հասակ է առնում մելիքի որդին: Երբ նա նշանվում է, նախապատրաստվում են հարսանիքի:

Նախօրյակին գյուղի երիտասարդների հետ նա էլ է գնում ձիավարժության: Երիտասարդները որոշում են ձիերը քշել ու գնալ իրենց ծննդավայրը. հասնում են Նըղըլի: Մելիքի որդին ձիուց իջնում է, որ մտնի իրենց տուն, բայց մուտքի մոտ ձիու գանգ է լինում ընկած: Այն ոտքով մի կողմ է հրում, որ անցնի: Գանգի միջից մի օձ է սողում ու խայթում երիտասարդին, որը տեղում մահանում է»:

ՂՈՒԼՈՒԴԻ

Ղուլուդին գտնվում է Խանագահից 6-7, իսկ Արաքսից՝ 3-4կմ հյուսիս-արևմուտք, լեռնալանջի կաղնու անտառի արևահայաց բացատում:

Ավազակ խաների մշտական հարձակումներից, կողոպուտներից ու հալածանքներից ձանձրացած՝ Մեշափարա գավառակի Մումուդառու գյուղի հայերը ստիպված եղան 1880թ. հեռանալ հայրենի օջախներից: Ամեն մի տոհմ առանձին, տարբեր ճանապարհներով գաղթեցին գյուղից:

Գյուղի քահանա տեր Ավագը, վեց եղբայրների (Հակոբ, Հովհաննես, Միրզա, Բաղդասար, Վարդազար, Ղազար) հետ, բնակություն է հաստատում Ղուլուդիում, որտեղ այն ժամանակ ապրում էր թուրք խան Ղուլին և նրա ազգական մի քանի ընտանիքներ: Ղուլի խանը համաձայնվում է համատեղ բնակությանը, սակայն հայերը՝ նկատի ունենալով, որ դա կարող է տեղիք տալ անախորժությունների ու ընդհարումների, առաջարկում են խանին գյուղը վաճառել իրենց:

Գյուղը գնահատում են չորս գլուխ եզ, երկու ծնած կով, տասը ոչխար և մի զույգ «քանարա գյաբա» (երկար գորգ): Խանը համաձայնվում է այն պայմանով, որ գյուղի անունը չփոխեն, քանի որ զավակ չունի, թողնեն իր անունով՝ Ղուլուդի:

Հայերը մշտական բնակություն են հաստատում՝ գյուղի անունը թողնելով Ղուլուդի, այսինքն՝ Ղուլու գյուղ: Ղուլուդին ուներ որակյալ արգավանդ հողեր, հատկապես ցորենի մշակման համար: Լավ պայմաններ կային նաև անասնապահության համար:

1900թ., Ղուլուդին անվճար դարձավ Քլալա գյուղի բնակիչ Իսկանդար խանի սեփականությունը: Գյուղի հետագա պատմությունը նման է կուժ ու կուլայի հայտնի պատմությանը:

Ալաջուջա գյուղի տեր Ղահրաման խանի մահից հետո նրա գրաված ու սեփականացրած 20 հայաբնակ ու թրքաբնակ գյուղերին տեր դարձավ նրա որդին՝ փոքր Ղահրամանը, որը եղբայրներ ու ժառանգներ չուներ: Քլալա գյուղի Հիդայաթ խանը և Գանձառի Ռահիմ խանը որոշում են սպանել փոքր Ղահրամանին ու տիրանալ նրա կալվածքներին: 1917թ. Ղահրամանը փախավ Թավրիզ, Հիդայաթն ու Ռահիմը իրենց հրոսակներով սկսեցին անարգել ու անխնա հարձակվել խանին պատկանող գյուղերի վրա: Հատկապես հայկական գյուղերի բնակիչներից նրանք պահանջում էին, որ գրավոր ձևով հրաժարվեն Ղահրաման խանի հպատակությունից և ընդունեն իրենց խանությունը:

Ղահրաման խանը 600 հոգուց բաղկացած հեծելազորով հարձակվում է Հիդայաթի խանանիստ Քլալա և Ռահիմի՝ Գանձառի գյուղերի վրա, կողոպտում խաների ու նրանց հպատակ գյուղացիների ունեցվածքը, հրդեհում գյուղերը: Հայկական գյուղերից այս հարվածի տակ է ընկնում միայն Ղուլուդին, որին այդ ժամանակ տիրացել էր ավազակ Հիդայաթը: Ղուլուդեցիներն ընդամենը մի քանի ժամ առաջ են իմանում հարձակման մասին: Նրանց հաջողվում է փախուստի դիմել՝ վերցնելով միայն մի քանի օրվա հացի պաշար:

Ղուլուդիի վրա հարձակումը տեղի է ունեցել 1918թ. սեպտեմբերի 9-ին: Հարձակվողներին հաջողվում է ձերբակալել չորս մարդու՝ Բարսեղ Նազարյանին, Գասպար Բաղդասարյանին, Եղիսաբեթ Միրզոյանին և Զարուհի Օհանյանին: Նրանցից պահանջում են ասել պահված զարդերի, հարստությունների, գյուղի կանանց ու աղջիկների թաքստոցի վայրը: Նրանց բոլոր հարցերը մնում են անպատասխան, և չորսին էլ գնդակահարում են:

Ղուլուդեցի երկու աղջկա անտառի խորքում ձերբակալում են: Նրանցից մեկը ծիու գավակից ցատկում, փախչում է, իսկ մյուսին՝ Ասլի Հովհաննիսյանին հետները տանում են:

Հաշվարկներից պարզվել է, որ 40 օրերի ընթացքում, չհաշված շինություններին պատճառած վնասը, ավազակները Ղուլուդիից կողոպտել են

28 ջորի, 350 գլուխ խոշոր և 1500 գլուխ մանր եղջերավոր անասուն, 900 հավ, 160 բեռ հացահատիկ, մոտ 7000 թուման արծաթ դրամի արժողությամբ անկողիններ, հագուստեղեն, գորգեր, գործվածքեղեն, պղնձե իրեր և գյուղատնտեսական գործիքներ:

Ղուլուդի գյուղի «Սուրբ Նշան» խաչը.

1880թ. աշնանը Մեշափարա գավառակի Մումուդառու հայկական գյուղի բնակչությունը ստիպված էր ընդմիշտ թողնել այն ու տեղափոխվել այլ գյուղեր:

Քեյվան գավառակից Հասան խանը իր մոտ է կանչում Մումուդառու գյուղի քահանա տեր Ավագին, իր ցավակցությունը հայտնում գյուղի տեղահանման համար ու ասում. «Որպես վաղեմի ծանոթներ, ես ուզում եմ մի գաղտնիք ասել: Քեզ հայտնի է, որ իմ ավագ որդին երկար տարիներ զբաղվել է թալանով ու կողոպուտով: Մի անգամ Ղարաբաղում՝ Ղարախաչ գյուղի թալանի ժամանակ եկեղեցուց վերցնում ենք երկու խաչ, մեկը ոսկե, մյուսը՝ արծաթե: Հիմա, քանի որ գնում եք, կարող է այլևս իրար չտեսնենք, կամենում եմ դրանք քեզ տալ»:

Նա քահանային է հանձնում երկու խոշոր խաչերը:

Քահանան խորը հարգանքով ընդունելով դրանք պատրաստակամություն է հայտնում գինը վճարել: Խանը ժպտում է և ասում, որ սուրբ մասունքները գնահատման ու վաճառքի ենթակա չեն, ինքը դրանք նվեր է տալիս:

Տեր Ավագն իրեն ուղեկցող որդուն շտապ ուղարկում է տուն, պատվիրելով, որ ծիու 10 կապ պայտ ու գամ բերի:[35]

Այն ժամանակ ծիու պայտն ու գամը մեծ արժեք ունեին: Տեր Ավագը պայտերի կապոցը դնում է խանի առջև ու ասում.

– Մեծ խանն ապրած կենա, իհարկե քո որդին ոտքով չի գնացել Ղարախաչ՝ խաչերը բերելու, գնացել է ծիով, սրանք ես նվիրում եմ ծիերի մաշված պայտերի փոխարեն:

1918թ. Ղուլուդի գյուղի թալանից առաջ եկեղեցու խաչերը անտառում պահում են: 1919թ. ամբողջ գյուղով գաղթում են Թավրիզ:

---

[35] Կապը բաղկացած է 4 պայտից ու 24 գամից:

Տեր Ավագի թոռներից Հարություն Հակոբյանը, որը հետագայում պատմել է ինձ այդ մասին, երկու խաչերն էլ տանում է Թավրիզ, հանձնում Ատրպատականի Հայոց առաջնորդարանին:

1921թ. գարնանը ղուլուդցիները նորից վերադառնում են գյուղ: Վերադարձի ժամանակ արծաթե խաչը վերցնում են իրենց հետ, իսկ ոսկե խաչը մնում է առաջնորդարանի թանգարանում:

1941թ. Թավրիզում բնակվող ղուլուդցի Հովսեփ Սինասյանի կինը՝ Զմրուխտը խաչի հետագա ճակատագրի մասին պատմեց հետևյալը.

«1921թ. բոլոր ղուլուդցիները չէ, որ վերադառնում են հայրենի գյուղ, մի քանի ընտանիք մնում են Թավրիզում: 1922թ. աշնանային մի օր, հորեղբորս աղջկա՝ Շուշանի տանը, պատահաբար հանդիպեցի Ղշլաղ գյուղի քահանա տեր Սահակին, որը ծառայում էր առաջնորդարանում, հետաքրքրվեցի մեր գյուղի ոսկե խաչով: Տեր Սահակը խոստացավ մեզ տանել թանգարան ու, եթե խաչը տեղում լիներ, հանձներ մեզ: Խաչը տեղում էր, մենք ճանաչեցինք այն, բայց Շուշանը հրաժարվեց առանց մատաղ անելու սրբությունը տուն տանել: Հաջորդ առավոտ Շուշանի հետ գնացինք շուկա, մի ոչխար գնեցինք, գնացինք առաջնորդարան, ոսկե խաչը վերցրինք, մատաղ կտրեցինք ու տարանք տուն: Մի քանի տարի առաջ Շուշանը մեկնեց Ամերիկա՝ իր հետ տանելով ոսկե խաչը:

1946թ. օգոստոսին ղուլուդցիները ներգաղթեցին Խորհրդային Հայաստան, հաստատվեցին Վեդու շրջանի Արարատ գյուղում: Արծաթե խաչը, որին անվանում են «Սուրբ Նշան», Արմենակ Հովհաննիսյանը բերեց Հայաստան և հատուկ խնամքով պահում է իր տանը»:

1980թ. գնացի Արարատ: Խաչը պահվում էր Արմենակի որդի Սերյոժայի մոտ: Խաչի երեսը քանդակազարդ է, կենտրոնում, հասարակ ապակու տակ դրված էր ոսկորի մի փոքր կտոր: Չորս թևերից երեքի մեջ գունավոր քարեր էին ագուցված, մեկը ընկած էր: Խաչի հարթ, ոսկեջրած մյուս երեսին հայերեն փորագրված է. «Սուրբ Հովհաննես Մկրտիչ»:

Չինարոտ. գյուղատեղը գտնվում է Ղուլուդի գյուղից մոտ 1կմ ներքև: Դեռևս մնում են բնակավայրի ավերակներն ու հայկական հին գերեզմանոցը:

Չինարոտ գյուղի բնակիչներն զբաղվել են այգեգործությամբ: Մոտակա ձորակի ջուրը առվակով թեքել են դեպի հարավ-արևմուտք, բավականին մեծ տարածքով անջրդի հողեր յուրացրել:

Գյուղի նախկին անունը հայտնի չէ, Չինարոտ անվանվել է հետագայում, շատ չինարի ծառերի առկայության պատճառով: Ձորակում կա շատ բարձր ջրվեժ, որը Ղարադաղում եզակի է:

Շավլի. գյուղատեղը գտնվում է Դոռնի գետակի վերին հոսանքի ջրառատ ձորակներից մեկում: Բնությամբ ու կենդանական աշխարհով նման է Վանստանին, գտնվում է Արաքսից մոտ 5կմ հեռու:

Շավլին համարվում էր արջերի հայրենիք: Օրը ցերեկով նրանք դուրս էին գալիս որջերից, կեր որոնում, բարձրանում ծառերի վրա, վայրի պտուղներ, ընկույզ ուտում, երբեմն էլ հովիվների մոտից ոչխար փախցնում: Մոշն այնտեղ շատ առատ էր:

Գյուղը հնում պատկանել է Մելիք-Ազարյաններին, հետագայում դարձել փոքր Ղահրաման խանի սեփականությունը:

1923թ. նա գյուղը վաճառեց Թավրիզի բնակիչներ Բուդաղյան եղբայրներին:

Շավլիում հայերը բնակվել են մինչև 1930թ.: Գերեզմանոցը գտնվում էր գյուղից հարավ, բլրալանջին:

Խանագահցիների մոտ Շավլի գյուղի մասին պահպանվել էր հետևյալ բանաստեղծությունը.

Շավլի-Շավլի շեն գիծըմ,
Ցորեն արտըրըտ հընծըմ,
Տաշտ ու մաղը դեն գիծըմ:
Մանգու գետեն գյուլասը,
Խաղ կընչիլավ փընջըմ,
Սուլբուլոնե փիրփիտը,
Կըռ քթոլեն դեն գիծըմ:

Ղըլդի. գյուղատեղը գտնվում է Շավլիի առջևից հոսող գետակի ձախ ափին, 2կմ արևմուտք:

Շրջապատված է կաղնու անտառով, ունի արգավանդ հողեր, որոնք պատվել են խիտ մոշուտներով: Մնում են գյուղի ավերակներն ու գերեզմանոցը:

ՀԱՍԱՆՈՎ ԳԱՎԱՌԱԿ

ՀՈՒԺ

Հուժ գյուղը գտնվում է խիտ անտառներով, խոր ձորերով, երկնահաս ժայռերով շրջապատված արևահայաց մի գողտրիկ քարքարոտ բացատում: Ըստ նորաշենցի տարեց մարդկանց պատմածի՝ Հուժ գյուղը պատկանել է մելիք Դոլուխանյանին, առաջին անգամ կողոպտվել ու ավերվել է թաթարների կողմից:

Այդ մասին պատմում էին հետևյալ ավանդությունը. «Մի ժամանակ Արաքսպար հովտում սով է եղել, բայց Հուժ գյուղում ցորենի առատ բերք են հավաքել: Հուժեցիների կալերը գտնվել են գյուղից ներքև, փոքրիկ գետակի մոտակա բլրալանջերին: Կալսած բերքը քամուն տալու ժամանակ քամին դարմանն ու մղեղը տանում, լցնում է գետակի մեջ: Գետն այն հասցնում է մինչև Արաքս: Արաքսպար հովտում ապրող թաթարները խմելու ջուրը վերցնում էին Արաքսից: Սովյալ թաթարները զարմանում են, երբ ամեն առավոտ տեսնում են ջրի հետ եկող դարմանը: Նրանք գուշակում են, որ մոտակա տարածքում մի տեղ առատ ցորեն կա, դարմանի հետքերով գալիս, գտնում են Հուժ գյուղն ու կողոպտում ցորենի հարուստ բերքն ու բնակչության ունեցվածքը»:

1840թ. հուժեցիները գաղթում են Ղարաբաղ, իսկ 20 տարի անց, գավառի շատ հայերի օրինակով, ետ են վերադառնում: Անցած տարիների ընթացքում անմարդաբնակ գյուղը վերածվել էր փլատակների: Նրանք գերադասում են փնտրել մի հարմարավետ գյուղատեղ, քան վերակառուցել հինը:

Այդ նպատակով, Հուժից մոտ 10կմ վերև, անտառի մի գեղեցիկ ու ընդարձակ բացատում նոր գյուղ են հիմնում ու տալիս նախկին անունը: Դեռ նոր էին տնավորվել, երբ նրանց վրա ապօրինաբար սկսեց իշխել Դիզմար գավառակի գլխավոր խան Թաղին: Աչք ունենալով հայերի արգավանդ հողերի ու արոտավայրերի վրա՝ նա հրահրում է թուրքերին գողանալ նրանց անասուններն ու փչացնել ցանքերը:

Հայերն ստիպված խնամակալություն են խնդրում Թաղի խանից, որը նրանց առաջարկում է տեղափոխվել հայաբնակ Օղա գյուղի դիմաց գտնվող ընդարձակ տարածքն ու հիմնել նոր գյուղ, երաշխավորելով գույքի ու կյանքի ապահովությունը: Հայերը տեղափոխվում են և 1870թ. հիմնում նոր գյուղ, իսկ նրանց ազատված տներում Թաղի խանը բնակեցնում է իր ազգականներին:

Նորաշեն գյուղը

Հուժեցիները իրենց նոր բնակավայրն անվանում են Բաշլու: Այն ըստ ավանդության՝ նախկինում եղել է հայկական բնակավայր, որն ավերակ է դարձել անհիշելի ժամանակներում:

Թաղի խանը հասնելով իր նպատակին մոռանում է հայերին տված խոստումները, իսկ այն թուրքերը, որոնք առերես համաձայնել էին իրենց հողերից բաժին հանել հայերին, ներքուստ դժգոհ լինելով, կարճ ժամանակ անց սկսում են իրենց հողերը ետ խլել, գողություն անել, որը հանգեցնում է մշտական վեճերի, կռիվների ու սպանությունների:

Հուժեցիները խնդրում են Թավրիզի Հայոց առաջնորդարանի աջակցությունը իրենց ապահովության հարցում:

1880թ. Հայոց առաջնորդարանը մի վարդապետ է ուղարկում Ղարադաղ, որը մանրամասնորեն ծանոթանում է հուժեցիների վիճակին ու նրանց տեղափոխում երկու Հուժ գյուղերի մեջտեղում գտնվող սարահարթը, սառնորակ մի աղբյուրի մոտ, հիմնում մի նոր գյուղ՝ հողից ու անտառից օգտվելու իրավունքով: Նորակառույց գյուղն անվանում են Նորա-

շեն (Թազաշեն)։ Վարդապետը նրան արտոնություններ է տալիս, քանի որ նոր գյուղը կառուցվում է ազգային սեփականություն համարվող հողում։

Նորաշենի բնակիչներից հին հուժեցի էին Աբգար, Բաբա, Հայրապետ Դոլուխանյանները, Թովմաս, Հարություն Գրիգորյանները, Գաբրիել, Հարություն, Սահակ Բախտամյանները, Ակոբջան, Ջոհրապ Դավթյանները, Խոսրովենք, Բաղդասարենք, Սահակենք, թվով 26 ընտանիք։

1946թ. նորաշենցիների ներգաղթը Հայաստան տեղի չունեցավ։ Նրանք պետք է գաղթեին 1947թ., բայց քաղաքական իրադարձությունների պատճառով մնացին. 1948-50թթ. նրանք տեղափոխվեցին Թեհրան։

Հետագա տարիներին նրանցից շատերին հաջողվեց ներգաղթել Հայաստան։

Հուժ գյուղի մասունքները.

Սուրբ Գևորգ մենաստան. գյուղից ներքև, լեռնալանջի զառիթափի խոշոր քարերով շարված դարավանդի վրա, քար ու կրի շաղախով կառուցված մի եկեղեցի կա, որին անվանում էին Սուրբ Գևորգ մենաստան։

Եկեղեցու դիմաց երկհարկանի մի գեղեցիկ շինություն կար, որի առաջին հարկն օգտագործվում էր որպես ձիերի ախոռ, իսկ երկրորդը՝ ուխտավորների կացարան։ Եկեղեցու մասին գրավոր ոչ մի հիշատակություն չկա։

Մենաստանի շրջակայքում էին գտնվում գյուղի կալերը, որոնք շրջապատված էին կաղնիներով ու բռնչենիներով։ Դրանց ստվերում ուխտավորները հանգստանում, մատաղ էին կտրում, եփում ու ճաշում։ Ամեն մի ընտանիք կալատեղերում ուներ իր հաստատուն տեղը, և ամեն տարի ուխտի ժամանակ հանգրվանում էր նույն ծառի տակ, նույն օջախի մոտ, ինչպես իր սեփական տանը։

Հին Հուժ գյուղի բնակիչները՝ նորաշենցիները, մի հետաքրքիր ավանդություն ունեին, որը վերաբերում էր հին գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու դուռը տեղափոխելուն։ Երբ Հուժը կողոպտում ու ավերում են թաթարական հրոսակները, այն դառնում է անմարդաբնակ։ Մի թուրք եկեղեցու դուռը հանում է, շալակում ու տանում։ Տուն հասնելով թուրքը որքան չարչարվում է դուռը մեջքից չի կարողանում պոկել։ Համագյուղացիները հավաքվում են և գուշակում, որ եկեղեցին աստծո տունն է, նրա դուռը տեղից հանելն ու տանելը մեծ հանցանք է, հարկավոր է մատաղ խոստանալ և դուռը վերադարձնել իր տեղը։ Թուրքը խոստանում է մի ոչխար մատաղ անել, դուռը նորից վերադարձնում է եկեղեցու մոտ, այն պոկվում է մեջքից, տեղադրում է ու սարսափահար հեռանում։

Քյալմա. գյուղը գտնվում է Հուժից 4կմ հյուսիս-արևմուտք, բարձր ու արևաշատ մի բլրալանջի վրա: Քյալմա նշանակում է «մի բառ, մի խոսք»: Հնարավոր է ստուգաբանել նաև «քյալլա» (գագաթ, բարձունք): Քյալմա գյուղում վաղուց հայեր չեն բնակվում, դարձել է թրքաբնակ:

Պահպանվում է հայկական գերեզմանոցը:

Քյալմա գյուղի մասունքներից.

Քյաքուլ օնի (վարսեր ունի) սրբավայր. գյուղամիջի բլրակի գագաթին դեպի արևելք ուղղված մի գերեզմանքար կար, որի մոտ ուխտի էին գնում գավառի հայերն ու թուրքերը այն ժամանակ, երբ տարածվում էր կապույտ հազը:

Հիվանդները գնալով սրբավայր երեք անգամ պտույտ էին գործում սուրբ գերեզմանի շուրջը և ամեն պտույտից հետո անցնում տապանաքարի տակով, որը դրված էր մոտ 40սմ բարձրության երկու քարերի վրա: Անցնելու ժամանակ ընկույզի չափ մի քար էին դնում տապանաքարի վրա: Դա նշանակում էր, որ հիվանությունը թողնում են ուխտատեղիում: Տապանաքարի վրա այնքան քար էր կուտակվել, որ հնարավոր չէր տեսնել վրայի գիրը: Ծանր հիվանդների կամ փոքրահասակ երեխաների հագուստներիը անց էին կացնում քարի տակով և հագցնում նրանց: Ուխտավորները նաև մոմ էին վառում քարի վրա, նրա մոտ մատաղ կտրում, աղոթում: Տարվա տարբեր ամիսների ուխտի էին գնում նաև այլ նպատակներով:

Ճանջանոց. գյուղատեղը գտնվում է Քյալմայից 3կմ հարավ, իսկ Հուժից՝ 3կմ արևելք: Ավերակ է դարձել անհիշելի ժամանակներում ու այլևս ոչ ոք չի բնակվում արևաշատ ու գեղեցիկ լեռնալանջի վրա գտնվող այդ վայրում: Դաշտերից օգտվում են Նորաշենի և Քյալմայի գյուղացիները:

Պահպանվում է հայկական գերեզմանոցը:

Արդյո՞ք Ճանջանոց է եղել գյուղի իսկական անունը՝ ոչ ոք չի կարող հաստատ ասել, քանի որ այդ մասին ոչ մի գրավոր տեղեկություն կամ ավանդություն չի պահպանվել: Ղարադաղի հայերը մեղվին «ճանջ» են ասում: Նորաշենցիները այդ վայրին Ճանջանոց են անվանել շրջապատի քարափներում վայրի մեղուների առատության պատճառով: Եղել են դեպքեր, որ ամռան շոգին բարձր քարափներից, որտեղ մարդու ձեռքը չի հասել, մեղրը ցած է ծորել: Այդ առումով էլ վայրը Ճանջանոց է անվանվել:

Զիագու. գյուղը գտնվում է Ճանջանոցից 3կմ հարավ-արևելք, Հուժի մոտով հոսող գետակի աջ ափին: 1919թ. գաղթից հետո այնտեղ հայեր չեն բնակվել: Գյուղի վերևում կան մի քանի կրաշաղախ շինությունների

հետքեր, քարուքանդ որմեր, որոնք վկայում են, որ այն ժամանակին նշանավոր գյուղ է եղել:

ԼՈՒՄԱ

Լումա գյուղը գտնվում Հուժի գետակի ափին, Ջիագուից 4կմ արևելք: Լումա հայերեն նշանակում է «հարստության, գանձի ներդրում»: Իրոք, այն կարելի էր գանձ անվանել, քանի որ ուներ ցորենի մշակման շատ բերքատու դաշտեր ու անտառներ, աղքատ էր միայն աղբյուրներից:

Լումա գյուղը հիմնվել է 1880թ., այնտեղ հայեր են ապրել մինչև 1946թ.: Նույն թվականի օգոստոս ամսին գյուղի ողջ բնակչությունը գաղթել է Հայաստան: Լումացիների մի մասը բնակություն է հաստատել Կապանի շրջանում, մի մասն էլ՝ Երևանի Շահումյանի շրջանում:

Թուրք Լումա. գտնվում է հայաբնակ Լումայից 3կմ հարավ-արևելք: 1840թ. Լումայից հայերը գաղթել են Ղարաբաղ, Թարթար գետի հովիտը, 1860թ. վերադարձել են, բայց իրենց գյուղում արդեն թուրքեր էին բնակվում, որոնք չեն համաձայնում թողնել բարեբեր հողերը: Հայերն ստիպված 3կմ վերև անտառի բացատում, մի փոքրիկ աղբյուրի հույսով նոր գյուղ են հիմնում և անվանում Լումա, որի մասին խոսեցինք վերևում: Այսպիսով, հին Լուման մնաց թուրքերին, բայց գյուղի անունը չփոխվեց:

ՕՂԱ

Օղա գյուղը գտնվում է Նորաշենից 7-8կմ արևելք, մի գեղեցիկ լեռնալանջի արևաշատ ու հարթ տարածքի վրա:

Մեր կատարած ուսումնասիրություններից եկանք այն համոզման, որ Օղան դարեր առաջ եղել է կլոր, օղակածև, քարով ու կրով շարված պարսպապատերով բերդաքաղաք և դրա համար էլ, հավանաբար, ստացել Օղա անունը:

Օղա գյուղի անվանի մարդկանցից կարելի է հիշատակել մելիք Օհանջանին, մելիք Հովսեփին, Բաղդասար բեգին և այլոց, որոնք եղել են քաջակորով ու անվախ մարդիկ, իրենց կամքն են թելադրել գավառի խաներին ու բեգերին, միշտ զինված են եղել, որի շնորհիվ Օղա գյուղը երբեք կողոպուտի չի ենթարկվել:

Օղա գյուղում հայերը բնակվել են մինչև 1919թ. գաղթը, դրանից հետո այն դարձել է թրքաբնակ: Նրանք գյուղին նոր անուն են տվել, Ալլի բուլաղ (հիսուն աղբյուր), քանի որ նրա տարածքում կա 50 աղբյուր, որոնց ջրերը, կազմելով մի փոքրիկ գետակ, հոսում են դեպի մայր Արաքս:

Օղա գյուղի մասունքները.

Ճգնավորի լեռ. այն կալի կենտրոնում կուտակված ցորենի շեղջի է նման, կարծես թե ոչ մի կապ չունի շրջակա լեռների հետ, ինքնամփոփ է իր գեղեցիկ դիրքով, նման է փոքր Մասիսին: Դարեր առաջ այն ծածկված է եղել կաղնու խիտ անտառով, որը հետագայում վերացել է՝ տեղը զիջելով թփուտներին: Միայն լեռան գագաթին էին մնացել մի զույգ երկնահաս կաղնիներ, որոնք սրբություն էին համարվում հայերի ու թուրքերի համար: Նրանք բարձրանում էին լեռան գագաթը և մոմեր վառում կաղնիների բների վրա:

1927թ. փոթորիկը տապալել էր ծառերից մեկը, քսան տարի լեռնագագաթին կանգնած մենավոր կաղնին ընկել է 1947թ.:

Ճգնավորի ստորգետնյա կացարանի մասին առասպելներ էին պատմում, ասում էին, որ այդ կացարանից գետնուղի կա, որը դուրս է գալիս Օղա գյուղի մեջ: Պատմում էին, որ Ճգնավորի կացարանի քարե առաստաղից կանացի ստինքների նման ելուստներ են կախված, որոնցից կաթնագույն ջուր է կաթում և հատակի վրա քարանում: Քանի որ երևույթը անբացատրելի էր տեղի բնակիչների համար, այն կապում էին գերբնական երևույթների ու ուժերի հետ, համարելով սրբություն:

Հայերն ուխտի էին գնում Ճգնավորի վանքը, աղոթքներ անում, մոմեր վառում, կաթող ջրից հավաքում, լցնում փոքր կուլաների մեջ, տուն տանում տարբեր հիվանդություններ բուժելու համար: Սուրբ ջուրը օգտագործում էին աչքացավի, հոդացավերի, զանազան ուռուցքների բուժման համար: Ճգնավորում ուխտավորները մատաղ էին խոստանում, բայց կտրում էին այլ տեղերում:

Շատերը պնդում էին, որ Ճգնավորը, լինելով խուլ, ամայի ու ապահով տեղ, հաճախ ապաստարան էր դառնում «ղաչաղների» (հանցագործ, փախստական) համար:

1936թ. աշնանը խանագահցի մի խումբ երիտասարդներով որոշեցինք գնալ ու տեսնել առեղծվածային պատմական հնությունը: Մի առավոտ արևածագից շատ առաջ, ութ երիտասարդ և երեք սրտոտ պատանի ճանապարհ ընկանք: Մոտ երեք ժամ քայլելուց հետո հասանք Օղա գյուղ: Գյուղից ներքև, աղբյուրի մոտ մի քիչ հանգստանալուց և հաց ու պանիր ուտելուց հետո, ծագող արևի շողերի հետ բարձրացանք լեռն ի վեր տանող արահետով, անցանք ևս 1կմ ու հասանք Ճգնավորի կացարանի մուտքին, որը գտնվում է գագաթից մոտ 100մ ներքև, արևմտյան լանջին:

Մենք զինված էինք հրացաններով, զգուշանալով, որ ավազակներ կարող են հանդիպել, սկսեցինք աղմկել և կրակել:

Քարե աստիճաններով ցած իջանք ստորգետնյա քարակերտ մի դահլիճ: Ժողովրդի պատմածները լիովին համընկնում էին իրականությանը, քարե առաստաղից կախված էին «քարացած ստինքներ»՝ կաթկթող բաց կաթնագույն ջրով, հատակը ծածկված էր կենդանիների ոսկորներով և, որքան հիշում եմ՝ պատերի վրա կային գունագեղ նկարներ:

Դահլիճի չորս կողմում կային չորս փոքր սենյակներ, հավանաբար, ճգնավորների կացարաններ: Քարե աստիճանները առանձին անցքով շարունակվում էին ներքև իջնել: Մենք վերցրել էինք հին լաթի կտորներ, մահակներ ու մի կուլա նավթ: Լաթերն ամրացրինք ձողերի վրա, թաթախեցինք նավթի մեջ, վառեցինք ու ցած իջանք: Էլի մի քարակերտ հրաշք դահլիճ չորս պատերի մեջ, չորս խցիկներով: Աստիճանները շարունակում էին իջնել ցած: Տղաներից մի քանիսը հրաժարվեցին ճանապարհը շարունակել, միայն երեք հոգի՝ ռիսկի դիմելով ցած իջան և անմիջապես ետ եկան, քանի որ ջահերը հանգել էին օդի պակասության պատճառով:

1941թ. աշնանը Թավրիզում հանդիպեցի Բաղդասար բեգի կրտսեր որդի Արմենակին և նրանց համագյուղացի Ջհանենց Մարտիրոսին, որոնք բնիկ օղացի էին: Մեր զրույցի ժամանակ նրանք համառորեն պնդում էին, որ ճգնավորից ստորգետնյա ճանապարհը դուրս է գալիս գյուղի վերևի մասը, որտեղ մի մեծ սպիտակ քար կա դրված ելքի անցքի վրա:

Նրանք պատմեցին, որ 1916թ. գյուղի մի խումբ երիտասարդներ Արմենակի մեծ եղբայր Հովհաննեսի գլխավորությամբ ճգնավորից մտել են ստորգետնյա ուղին և դուրս եկել Օղա գյուղում: Ելքի մոտակայքում նրանք գտել են գյուղատնտեսական գործիքներ, տնային իրեր և պղնձե կաթսաներ:

Օղա գյուղի երկրորդ մասունքը.

Գյուղը գտնվում է ճգնավորի լեռան հարավային ստորոտում: Մենք լեռը բարձրացանք արևմտյան կողմից, որտեղից մոտ 0,5կմ արևելք մի գեղեցիկ ծորակ կա: Այն սկիզբ է առնում մի սառնորակ աղբյուրից, քիչ ներքև դարավոր ուռենիներ կան: Առաջին հայացքից էլ երևում է, որ աղբյուրի շուրջը մարդու ձեռքը շատ աշխատանք է կատարել, աղբյուրի տակ նավ դրել ու ջրի ճանապարհ բացել: Այնտեղ կառուցված էր փոքրիկ քարե ծածկ, որտեղ դրված էին զանազան ձևի կավե ծիքաճրագներ ու մոմ վառելու հարմարանքներ: Սրբավայրի անունը չի հիշվում:

Պատմում էին, որ ճգնավոր ուխտի գնացողները պարտավոր էին նախ գնալ աղբյուրի մոտ մոմ վառել, աղոթել, նոր միայն բարձրանալ սրբավայր:

Աղբյուրի մասին տեղացիները պատմում էին, որ ժամանակ առ ժամանակ դրա ջրերը վարարում են, ջրի հետ դուրս են գալիս կանացի զարդեր, գույնզգույն ուլունքներ և նման բաներ:

Ըսնըվար. գյուղը դարեր առաջ եղել է հայաբնակ, որը վկայում է մինչև օրս պահպանվող հայկական գերեզմանոցը: Ըսնըվարը, իմ կարծիքով, հավանաբար, ըստուծավար (աստծո մոտ կամ խղճին մոտ) իմաստ է ունեցել:

Թե Ըսնըվարում ե՞րբ են հայեր բնակվել, ի՞նչ պատճառով է ավերվել, ապա դարձել թրքաբնակ, հայտնի չէ:

Խանագահցների մոտ ըսնըվարցիների մասին պահպանվել է հետևյալ ավանդությունը. «Մի անգամ ըսնըվարցիները թուրքերից մի եզ են գողանում ու անմիջապես մորթում: Թուրքերն իմանալով, որ դա ըսնըվարցիների գործն է, շտապ գալիս են: Գյուղացիները մորթած եզը թաքցնելու համար տեղ չեն գտնում, ստիպված դիմում են խորամանկության. եզան վրա ծածկոց են փռում, կանանց հավաքում շուրջն ու սկսում լաց լինել, ինչպես հանգուցյալի վրա: Մի խանագահցի, որը ներկա է լինում արարողությանը, նկատում է, որ շտապելով եզան պոչը չեն ծածկել: Որպեսզի թուրքերը այն չտեսնեին, ու գաղտնիքը չբացահայտվեր, խանագահցին՝ ձևանալով սգի մասնակից, լացակումած ձայնով ասում է.

Ըսնըվեցիք, լեցեք, լեցեք,
Եզան հագին բեց ա,
Շուդավ ծծկեցեք»:

Ըսնըվարը դարձել էր թրքաբնակ, վերանվանվել Հասանբայլի ու դարձել Հասանով գավառակի կենտրոնը:

1942թ. ամռանը հյուրընկալվեցի Հասանբայլի գյուղում, 80-ամյա Մուհամեդ խանի տանը: Նրան խնդրեցի, որ պատմի իր իմացածը գյուղի և իրենց ազգատոհմի մասին, ինչո՞ւ է Ըսնըվարը վերանվանվել Հասանբայլի, և ինչո՞ւ է գավառակը կոչվում Հասանով:

Նա մի պահ մտածեց, ապա վերցրեց երկարապոչ չիբուխը, լցրեց թութունով, վառեց, ագահաբար ծխեց ու խորհրդավոր հարցրեց, թե իմ ինչի՞ն է պետք այդ բոլորն իմանալը:

– Մեծ խանն ապրած կենա, մտադիր եմ գրել մեր գավառի պատմությունը, այդ հացերը շատ կարևոր են:

Մի փոքր մտածելուց հետո խանն սկսեց պատմել.

– Մենք գրավոր տոհմագրություն չունենք, իմ մեծերից լսել եմ, որ մեր պապի պապը, Հասան անունով մի մարդ եղել է շահի պալատական: Հավատարիմ ծառայության համար շահը նրան բեգի տիտղոս է տվել և ուղարկել Ղարադաղ, իրավունք տալով, որտեղ որ կամենա՝ բնակություն հաստատի և ղեկավարի գավառը, գանձի պետական հարկն ու տուրքը: Հասան բեգը հավանել է Ըսնըվարը, վերակառուցել է և անվանել Հասանբայլու, որտեղ մենք բնակվում ենք սերնդեսերունդ: Ժամանակի ընթացքում մենք բազմացել ենք, օգտվելով երկրի թույլ իշխանությունից, տիրել ենք շատ գյուղերի, դարձրել մեր սեփականությունը, բեգից էլ անցել ենք խան տիտղոսին, այժմ ունենք 33 սեփական գյուղ, գավառակի մեծ մասը դարձել է մերը, դրա համար էլ, Դիզմարի արևելյան հողերն անջատելով, ստեղծել ենք մի նոր գավառակ, անվանել պապիս անունով՝ Հասանով:

Մեզ անվանում են «գյաբուր գասի յողուն», այսինքն՝ հաստկող: Այդ կոպիտ անունը մեզ տվել են մեր այն սովորության համար, որ մեր ասած խոսքից կամ բռնած գործից ետ չենք դառնա, եթե նույնիսկ 1000 թուման վնաս կրենք: Անցյալում մեր կրած կորուստներն ու վնասները դարձյալ մեզ համար դաս չեն դառնում: Իմ հայրը, Թաղի խանն ու մեծ եղբայրս, Մամեդ խանը մի հասարակ բանի համար հակառակվեցին դիվանի մարդկանց հետ: Դիվանն էլ նրանց մի քանի համախոհների հետ տարավ Թավրիզ ու գնդակահարեց: Հիմա իմ եղբոր որդին անսահման հարստության տեր է, բայց էլի աչքը ուրիշների ունեցվածքին է, ամբողջ օրը ալան-թալան է անում:

Մուսու շեն. գյուղատեղը գտնվում է Խոյնարավ գետակի աջ ափին, Հասանբայլու գյուղից 4կմ արևելք: Ով է եղել Մուսին, գյուղն ինչո՞ւ է անվանվել նրա անունով, ոչ ոք չգիտի: Հավանաբար, Մուսու շենը ավերվել է 1840թ. գաղթի ժամանակ:

Արազին. գյուղատեղը գտնվում է Խոյնարի լեռան վրա, Հասանբայլու գյուղից 10կմ հարավ: Հայաբնակ մեծ ու հարուստ գյուղ է եղել, այդ են վկայում նրա մեծ ու փոքր գերեզմանոցները: Ավերվելու մասին ոչ մի տեղեկություն չկա:

Արդաշիր. գյուղը գտնվում է Խոյնարավ գետակի աջ ափի արևահայաց լեռնալանջին, Հասանբայլու գյուղից մոտ 8կմ հարավ: Արդաշիրը Արտաշես անվան պարսկերեն ձևն է:

Արդաշիրը հնադարյան հայաբնակ գյուղ է եղել: Այնտեղ վաղուց արդեն թուրքեր են բնակվում: Գյուղի արևմտյան կողմում է գտնվում հայկական գերեզմանոցը:

Հասանով գավառակի մասունքները.

Իջևանատուն. 1941թ. աշնանային մի օր վայրի խոզ որսալու էինք գնացել Հայկական լեռների խորքերը, թրքաբնակ Աղբյանդ և Աղբուլաղ գյուղերի մոտ:

Վիրավոր վարազին գտնելու համար խումբը բաժանվել էր երկու մասի: Այդ տարի դեռ ձյուն չէր եկել, օրն ամպամած էր, սկսեց ձյուն գալ ու անծանոթ տեղանքում մոլորվեցի: Օրը մթնում էր ու ավելի ցրտում, համաձայն որսորդական օրենքի, ընկերներիս գտնելու հույսով մի քանի փամփուշտ կրակեցի, բայց ապարդյուն, ոչ մի պատասխան: Անորոշ թափառելուց հուսահատ, նկատեցի մի գեղեցիկ շինություն: Աչքերիս չհավատալով՝ մի պահ կանգնեցի ու քայլեցի շինության կողմը: Մեծ կառույց էր, հնարավոր էր գիշերելու տեղ գտնել: Կառուցված էր լեռ քարից, կրով ու ավազով, բաղկացած էր երեք մասից: Կենտրոնական մասը նման էր ընդարձակ դահլիճի՝ նախատեսված մոտ 100 մարդու հանգստի ու գիշերելու համար: Դահլիճի ներսից մուտքեր կային դեպի շինության երկու կողմերը, որտեղ կառուցված էին ծիերի ախոռներ: Կառույցի կտուրը նույնպես քարից ու կրից էր, փայտանյութ չէր օգտագործված:

Ղարադաղի հայ և թուրք բնակչության մեջ մի ավանդություն է պահպանվել: Պատմում էին, որ շահ Աբասը իր տերության հեռավոր վայրերում ու գլխավոր ճանապարհների վրա հրամայել է կառուցել 999 իջևանատուն: Պալատականները զարմացել ու հարցրել են.

– Շահն ապրած կենա, ինչո՞ւ հրաման չեք տալիս 1000 հատ կառուցել, մի՞թե մեկ շինության համար փողը չի բավականացնում:

–1000-ը կլոր թիվ է, վեհություն չունի, իսկ 999-ը խորհրդավոր է ու բովանդակալից,-պատասխանում է շահը:

Հավանաբար իջևանատների կառուցումը սակավաբնակ ամայի վայրերում ունեցել է երկու հիմնական նպատակ՝ պետական սահմանները հսկող զորքերի հանգստի և վաճառականների երթևեկության ու անվտանգության ապահովում:

Հետագա տարիներին նման իջևանատներ տեսել եմ նաև Քեյվան գավառակի Քիլեյբար և Քիյարքի գյուղերի միջև մի անշուք ծորակում, Ղասումաշեն գյուղից վերև, բարծունքի վրա:

Սպիտակ բերդ կամ Աղջաղալա. Նույնանուն բերդ կա նաև Դիզմար գավառակում: Սա գտնվում է Ըռղընան գետակի վերին հոսանքի ձախ ափին, բարձր ու անմատչելի ժայռաբլրի վրա, Լալաբեջան թրքաբնակ գյուղի մոտ:

Ըռղընան գետակի անունը հետաքրքիր ստուգաբանություն ունի: Խանագահից 5կմ արևմուտք, լեռնալանջի կաղնու անտառի բացատում, հին արտ կար, որին անվանում էին «Ըռղնանց արտ», չնայած գյուղում նման անունով տոհմ չէր բնակվում: 80-ամյա Արմենակ Հովսեփյանը պատմեց հետևյալը.

– Մեր ազգատոհմում, հին ժամանակ մի այրի կին է եղել, Հեղնար անունով, արտը իր անունով էլ կոչվել է՝ Հղնարանց արտ, հետագայում դարձել Ըռղնանց:

ՄԵՇԱՓԱՐԱ ԳԱՎԱՌԱԿ

Մեշափարա բառը թուրքերեն նշանակում է անտառակտոր, մեշա՝ անտառ, փարա՝ կտոր: Գավառակում կաղնու անտառները խիտ ու համատարած չեն, ինչպես Դիզմարում:

Մեշափարան Ղարադաղի ամենալեռնային տարածքն է, ունի հարուստ արոտավայրեր, սևահող վարելահողեր ու քարքարոտ բլրակներ:

Դարեր շարունակ փայտածուխ ստանալու համար հատած անտառները նվազել են, պահպանվել են միայն առանձին հատվածներում, հավանաբար այս պատճառով էլ գավառակն ստացել է նման անուն:

Գավառակն ունի պայտի ձև, կենտրոնից նրա մեջ է խրվել Ողանի սարը: Գյուղերից շատերը ընկած են սարի դիմաց:

ՈՂԱՆ

Ողան գյուղը համարվում է Մեշափարա գավառակի կենտրոնը, գոյության հարյուրամյակների ընթացքում նշանակալի դեր է ունեցել մյուս գյուղերի հայերի հովանավորման ու հուսադրման գործում: 1900-1921թթ., տեղի խաների հետ ունեցած հողային սահմանների վեճերում ու կռիվներում բավականին անվանի մարդկանց զոհեր է տվել:

Ողան գյուղը գտնվում է Պիզ լեռան հարավային կողմում, կաղնու անտառով պատված մի ընդարձակ հարթության վրա: 1840թ. գյուղն ամբողջովին գաղթել է Ղարաբաղի կողմերը: Քսան տարի անց վերադարձել են: Այդ ընթացքում շրջակա անտառներն այնպես էին աճել ու հզորացել, որ գյուղատեղը հազիվ են գտել: Անտառի նման հզոր աճը և շրջակայքում հայաբնակ գյուղերի բացակայությունը վախեցնում է ողանցիներին: Նրանք նպատակահարմար են գտնում ավերված գյուղից մոտ 5կմ արևմուտք, նույն լեռան արևահայաց լանջի մի բացատում նոր գյուղ հիմնել: Ընտրած տարածքում քարն ու շինափայտը առատ էին, ուստի կարճ ժամանակում նոր գյուղ են կառուցում ու տալիս հին անունը:

Կառուցում են նաև նոր եկեղեցի, այն օծում են ու անվանում Սուրբ Մարտիրոս:

Հին Ողանից այստեղ բնակություն են հաստատում Սարգիսենք, Մալքումենք, Եգանենք, տեր Գալուստենք, Հայրապետենք, Թումանենք և ուրիշներ:

Ողան գյուղի արևմտյան կողմի լեռնալանջերը մեծ թեքություն ունեն, այնտեղից դուրս են գալիս շատ անսովոր, բարակ թերթաքարեր: Գյուղի խմելու ջուրը բերված էր վերևի լեռան լանջից՝ դրանցով պատրաստված փակ ջրատարով: Հոսող սրընթաց ջուրը մշտապես ավազահատիկներ էր բերում:

Համառոտ անդրադառնանք Ողանի անցուդարձերին, կանգ առնելով մի քանի հետաքրքիր ու կարևոր դեպքերի վրա:

Հասանով գավառակի Ըսնըվար գյուղում որջակալած Հասան բեկի ժառանգները բազմացել ու գայլերի ոհմակ կազմած նոր ավարներ, նոր գյուղեր էին փնտրում, նրանց ազատ հող էր պետք սեփական գյուղեր կառուցելու համար: Նման տարածք հանդիսացավ Մեշափարա գավառակը, որի 16 հայկական գյուղերից բնակվում էին միայն հինգում: Հասանբայլու գյուղի Հաջի խանը ապօրինաբար տիրում է Շմքռի, Շփխանա, Ըրըժոն գյուղերի տարածքներին, հիմնում նոր գյուղ և անվանում Մաջիդլու: Մահմուդ խանը տիրում է Միքիդի և Չարու գյուղերի տարածքին ու հիմնում Ղարաթիքանլու գյուղը: Հետագայում նրա որդին Ողանից ոչ հեռու, Բըրզըվեր գյուղի տարածքում մի նոր գյուղ է հիմնում ու անվանում Վայան (Ողան):

Գազանների ոհմակի մեջ ամենանենգն ու ամենախորամանկը եղել է Հաջի խանը, որն իր դաժանության համար ստացել էր Ղարաթիքյան (սև փուշ) մականունը: Մտահոգվելով իր հետնորդների ապագայի մասին, նա ծրագրում է գավառակում ոչ մի հայ չթողնել:

Իր նենգ ծրագրերը իրականացնելու համար նա դիմում է խորամանկության: Մտերմություն է հաստատում Օրավ Քլալա գյուղի բնակիչ Հարություն բեգի հետ ու առաջարկում իր թոռնիկի թլպատման արարողության քիրվա (քավոր) դառնալ: Հարություն բեգը միամտաբար ընդունում է խանի առաջարկությունը: Ճաշկերույթի ժամանակ թունավորում են Հարություն բեգին:

1914թ., թունավորումից մի քանի օր անց, Հարություն բեգը մահանում է: Հաջի խանը մի խումբ ավազակներով գնում է Օրավ Քլալա, «քննում» մահվան հանգամանքները, ահաբեկման ու շանտաժի ենթարկում հայերին, նրանց մեղադրելով թունավորման համար:

Իր «քիրվայի» կորստի համար նա գյուղացիներից պահանջում է 1000 թուման արծաթ դրամ տուգանք: Եռօրյա ժամկետում տուգանքը չտալու դեպքում գյուղացիները պետք է հեռանային իրենց գյուղից: Խանը լավ գիտեր, որ 25 ընտանիքից բաղկացած փոքր գյուղը երբեք չէր կարող այդ չափի տուգանք վճարել: Երեք օրը չլրացած թուրք խուժանը թալանում ու կողոպտում է գյուղը:

Անզոր ու իրավազուրկ հայերը, չունենալով ոչ մի պաշտպան, հեռանում են հայրենի գյուղից: Հաջի խանը հասնում է իր նպատակին, նենգությամբ տեր դառնալով Օրավ Քլալային, անցնում է հաջորդ, Ողան գյուղին, բայց դա նշանակում էր առճակատել Թումանյան եղբայրների հետ:

Հաջի խանը շատ է չափում ու ծնում, մտածում, որ Թումանյան եղբայրները գտնվում են շատ հեռվում, Բաքու քաղաքում, Ռուսաստանի հողում, ինքը՝ Իրանի մի խուլ անկյունում, հնարավոր է, որ նրանք մոռացած լինեն իրենց այդ գյուղերի մասին:

Այդ ժամանակ Թումանյանների ունեցվածքին իշխում էր Բաղդասար բեգը, որը մշտապես բնակվում էր Ողան գյուղում:

Հաջի խանը հրավիրում է Բաղդասար բեգին, սիրաշահում նրան ու մեծ խնջույք կազմակերպում, հավատարմություն ու համերաշխություն խոստանում և առաջարկում, որ գավառի ղեկավարման գործում առաջինը լինի Բաղդասար բեգը, հետո՝ ինքը:

1915թ. ամռանը իր տղայի հարսանիքի ժամանակ նա թունավորում է Բաղդասար բեգին: Հաջի խանը այս անգամ էլ սկսում է Ողանում ոտնձգություններ անել, պահանջում իր «բարեկամի» արյան գինը՝ 1000 թուման տուգանք:

Թումանյան եղբայրները տեղեկանում են այս դեպքերի մասին: Նրանք համաձայնության են գալիս ցարական բանակում ծառայած, գնդապետի կոչում ունեցող, հիվանդության պատճառով զորացրված Ալեքսան անունով մի մարդու հետ, որն աշխատում էր իրենց առևտրական տանը:

Գնդապետ Ալեքսանը Թումանյան եղբայրներից բեգի կոչում է ստանում և գնում Ղարադաղ, վերականգնելու Թումանյանների ոտնահարված հողային սեփականատիրական իրավունքները, կառավարելու նրանց 19 գյուղերը:

Հաջի խանը սկզբում հաշվի չի առնում Ալեքսան բեգին, շարունակում է ասպատակությունները, որպեսզի իր ահից հեռանան նաև ողանցիները: Թուրքերն այրում են հայերի մարագները, արտերից տանում ցորենի խրձերը, գողանում անասունները, նույնիսկ սպանում մարդկանց:

Այս ամենին վերջ տալու համար Ալեքսան բեգը խիստ գաղտնի մի կազմակերպություն է ստեղծում, որի մեջ ընդգրկվում են Ողան և Վինա գյուղերի 50 հայրենասեր երիտասարդներ:

1916թ. աշնանը Ալեքսան բեգը մի խումբ երիտասարդների հետ անցնելով Արաքսը, գնում է Միջնևանում գտնվող ռուսական սահմանապահ զորամասի հրամանատարի մոտ, խնդրում ոսկով իրեն տրամադրել ռուսական զինվորի 50 ծեռք հագուստ: Նախկին գնդապետի խնդրանքը հարգում են:

1916թ. հոկտեմբերի մի գիշեր, երիտասարդական կազմակերպության բոլոր անդամները հավաքվում են Թումանյանների՝ Ողանում գտնվող «կանտորում» (գրասենյակ), որն իրենից ներկայացնում էր մի պարսպապատ անառիկ բերդ:

Բոլորը հագնում են ռուսական բանակի զինվորների հագուստ, զինվում հրացաններով, թիթեղյա ամաններով նավթ վերցնում, գիշերը շրջապատում Հաջի խանի կալվածքն ու հրդեհում այն: Գյուղացիները շտապում են խանի ընտանիքը փրկել, բայց «զինվորները» գործի են դնում հրացանները, կրակելով միայն տղամարդկանց վրա: Հաջի խանի 14 շնչից բաղկացած ընտանիքից միայն ավագ որդին, Ասադուլլահն է փրկվում:

Հաջորդ առավոտ լուրեր են տարածվում, որ Թումանյանները Հաջի խանից վրեժխնդիր լինելու համար Ռուսաստանից զորք են ուղարկել, որն էլ հրդեհել ու մոխիր է դարձրել խանի ամարաթը:

Ալեքսան բեգը, իր ստանձնած պարտականությունը ավարտած համարելով, վերադառնում է Բաքու:

Ասադուլլահ խանը վերադառնում է, վերակառուցում հոր տունն ու մտերմանում ողանցի ոմն Շամիրի հետ, որին համագյուղացիները «խանի շուն» մականունն էին տվել: Խանը սպառնում է անհավատարմության համար Շամիրի տունն ու ընտանիքը վառել, քանի որ ժամանակին չէր հայտնել «ռուսների» հարձակման մասին: Որպես փրկագին խանը պահանջում է Շամիրի քրոջը՝ Շուշանիկին: Շամիրը երեք օր ժամանակ է խնդրում:

Խանագահ գյուղի բնակիչ Զաքարիա Դանիելյանը որպես մեծահարուստ, մեծ համբավ ուներ ողջ գավառում: Մեղրի տեղ գտած չնամեղվի նման, Զաքարիային հանգիստ չէին թողնում Հասանբայլի գյուղի խաները, նրանք բոլոր միջոցներով սուտ մեղադրանքներ էին հորինում՝ նրան ենթարկելով դրամական տուգանքների: Զաքարիան, հույս ունենալով, որ կարող է ապահով զգալ Թումանյաններին պատկանող գյուղերում, 1915թ.

տեղափոխվում է Ողան: Ալեքսան բեգի օրոք նա հանդիսանում էր բեգի աջ թևը, իսկ նրա մեկնելուց հետո՝ փոխարինողը:

Շամիրը վերադառնալով գյուղ, քրոջը տեղյակ է պահում խանի հետ ունեցած ստոր գործարքի մասին: Շուշանը կտրուկ հրաժարվում է և գաղտնի տեղյակ պահում Զաքարիային, նրա միջոցով տղամարդու հագուստ ճարում ու, մի քանի մարդու ուղեկցությամբ, փախչում Թավրիզ:

Ասադուլլահ խանը բանտարկում է Զաքարիային, անմարդկային ձևով տանջում, պահանջում է Շուշանին վերադարձնել կամ փոխարենը որդու հարսնացուին տալ իրեն կնության: Տանջելուց ու ծեծելուց հետո նրան կապում են ծառից, որ գազաններին կեր դառնա:

Գիշերվա ուշ ժամին ճանապարհով անցնող մի թուրք գյուղացի լսում է աղերսող մարդու ձայնը, բացում է կապանքները և ազատում նրան: Հասնելով տուն Զաքարիան իր ունեցվածքի մի մասը պահ է տալիս իր բարեկամ տեր Գալուստին, մի մասը թաքցնում է, մյուս մասն էլ վերցնելով, իր ավագ որդի Աբգարի, կնոջ ու հարսի հետ անտառների արահետներով ճանապարհվում է դեպի Թավրիզ: Զաքարիայի կինը՝ Մանուշակը, փախուստի ժամանակ գրկին էր կապել վեց ամսական որդուն՝ Մարգարին, կուրծքը դրել երեխայի բերանում, որպեսզի լաց չլինի ու հետապնդող թշնամին չիմանա իրենց տեղը: Հասնում են ապահով տեղ, բացելով կրծքի կապերը, տեսնում է, որ երեխան շնչահեղձ է եղել:

Ասադուլլահ խանին է մնում Զաքարիայի 80 գլուխ այծն ու ոչխարը, 25 գլուխ խոշոր եղջերավոր անասունները, թռչունները և այլն:

1918-19թթ. խաների համատարած ասպատակությունների պատճառով գավառի ողջ հայության հետ Ողանի հայերն էլ գաղթեցին իրենց օջախներից դեպի Ղարաբաղ, Թավրիզ և այլուր:

1921թ. Ատրպատականի թեմի հայոց առաջնորդ տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի միջնորդությամբ պարսից կառավարությունը երաշխավորում է Ղարադաղի հայերի ապահովությունը: Ողան գյուղի բնակչության կեսը վերադարձավ:

1946թ. օգոստոսին, ողանցիների մի մասը ներգաղթեց Հայաստան: Գյուղում մնացած ընտանիքները, 1960-66թթ. գաղթեցին Թավրիզ ու Թեհրան. գյուղը դարձավ անմարդաբնակ:

Ողան գյուղի մասունքները.

Ղուշեն բուն. սրբավայր Ողանից մոտ 2կմ հյուսիս, լեռան ստորոտին: Քարափների տակ կար քարերից շարված մի փոքրիկ շինություն, որտեղ դրված էին զանազան ձևի կավե ճրագներ:

Ողանցիներից նրանք, ովքեր հեռու սրբավայրերը գնալու միջոց չունեին, ուխտի էին գնում այնտեղ:

Ողան գյուղից էին նշանավոր Թումանյան եղբայրները:

1945թ. «Մասիս» օրացույցում Հայկ Աճեմյանը համառոտ ու բովանդակալից կենսագրական հոդվածով բնութագրել է Թումանյաններին՝ զետեղելով նաև չորս եղբայրների լուսանկարները:

Թումանյան ազգատոհմի մասին տեղեկություններ ունենք 1735 թվականից. մելիք Սարգսի մասին:

Նա ապրել է Մեշափարա գավառակի Ողան գյուղում, եղել է հայտնի դարբին, ունեցել է սեփական արհեստանոց, պատրաստել գյուղատնտեսական բազմազան գործիքներ՝ խոփ, կացին, ցաքատ, թոխուր, պայտեր, գամեր և այլն:

Երկաթագործությունը դառնում է Թումանյանների տոհմական արհեստը, որով զբաղվում է մի քանի սերունդ, մելիք Սարգսի որդի Թումանը, նրա որդի Հարությունը, Հարությունի որդիներ Սարգիսը, Զաքարիան, Սիմոնը և Խաչատուրը:

Թումանյան չորս եղբայրները հայրենի Ողանում կառուցում են երկհարկանի ընդարձակ առևտրական տուն՝ 3մ բարձրությամբ պարսպով:

Թավրիզից զանազան ապրանքներ էին բերում ու վաճառում շրջակա գյուղերում:

Գավառի ավազակ խաները հաճախ կողոպտում ու թալանում էին Թումանյանների ունեցվածքը: Նրանք ստիպված են լինում փոխադրվել Մինջևան գավառակի կենտրոն Վինա հայաշատ գյուղը, որտեղ նույնպես կառուցում են երկհարկանի առևտրական տուն: Ավազակ թուրք խաներն ու քուրդ բեգերը այստեղ էլ շարունակում են կողոպուտն ու շանտաժները ու մնում անպատիժ:

Թումանյանները ստիպված տեղափոխվում են Թավրիզ և իրենց քեռիների հետ բացում ավելի ընդարձակ առևտրի տուն:

1870թ. նրանք կառավարության հետ Իրանի բանակի հեծելազորին պայտեր ու գամեր մատակարարելու պայմանագիր են կնքում, օգտագործելով Խանագահի երկաթահանքի հումքը:

Թումանյան եղբայրները անչափ հայրենասեր ու ժողովրդասեր էին, նրանց բարերարությամբ հազարավոր հայեր ընտանիքի ու ապրուստի տեր դարձան: Հետագայում Թումանյան եղբայրներն իրենց առևտրական տունը տեղափոխում են Բաքու, դառնում հանրաճանաչ դեմքեր: Կասպից ծովում նրանք սեփական առևտրական նավ ունեին, առևտուր էին անում

Ռուսական կայսրության, Անգլիայի, Հնդկաստանի, Իրանի ու այլ պետությունների հետ:

Թումանյան եղբայրները երբեք չէին մոռանում իրենց ծննդավայրը, գյուղացիության փրկությունը գտնելով այն բանում, որ գնեն Ղարադաղի հայաբնակ գյուղերը, իշխողներին զրկելով կալվածատիրական իրավունքից: Այդ նպատակով նրանք Ղարադաղում գնեցին 19 գյուղ, որոնցից գանձում էին չնչին հարկեր:

Թումանյան եղբայրների՝ Ղարադաղում ունեցած գյուղերն էին.

Հայաբնակ՝ Ողաև, Վինա, Քարագլուխ, Ամրադուլ, Գիմդիմնան, Նեփեշտ, թրքաբնակ՝ Միզգիթին, Բալան, Բեհրուզ, Բըզվեր, Չալանդարա, Քիլեյբար, Շեխհուսենլու, Աիմադլու, Մաջիդլու, Սուբան, Ղարաղոչ, Դաշարասի, Քեշիշքյանդի:

Նրանք ջանում էին կրթություն ու լուսավորություն տարածել ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում:

Այդ նպատակով նրանք Թավրիզում բացեցին երեք դպրոց՝ Նանարյան, Հայկազյան և Թամարյան, երկու դպրոց էլ կառուցեցին Ողան և Վինա գյուղերում: Գյուղական դպրոցների ուսուցիչների վարձատրության, գրենական պիտույքների և այլ կարիքների համար վճարում էր Թումանյան առևտրի տունը:

Առաջին համաշխարհային պատերազմը իր սև դրոշմը դրեց նաև Թումանյան եղբայրների առևտրական տան վրա, արտաքին աշխարհի հետ նրանց գործնական կապերը խզվեցին, մահացան անվանի եղբայրները: Մեծանուն տոհմից մնում էր մի մարդ՝ Սիմոն մահտեսու որդին, Վարդան աղան, որը 1930թ. վերադարձավ Ղարադաղ, իրենց սեփական Գիմդիմնան և իր անունով վերանվանեց Վարդանաշեն: Նա ապրեց մինչև խոր ծերություն. ուներ Ռուբեն անունով որդի և մի աղջիկ, որոնք ապրում էին Ամերիկայում:

Օրավ Քլալա. օրավ նշանակում է օրով, իսկ քլալա ղարադաղցիք ասում էին փականին: Գյուղը գտնվում է Ողանից հարավ-արևմուտք, արևահայաց լեռնալանջին:

Թե ինչու է գյուղին նման անուն տրվել, կարելի է միայն ենթադրել:

Արաքսը, հաղթահարելով Մեղրու դժվարին կիրճը, դուրս է գալիս հարթ ու լայնարձակ մի հովիտ, որտեղ Քլալա գյուղն է գտնվել: Հնարավոր է, որ այնտեղի բնակիչները, ինչ-որ ժամանակ գաղթել են, ապա վերադառնալով, տեսել, որ արդեն ուրիշներն են բնակվում, հիմնել են նոր գյուղ և ան-

վանել Օրավ Քլալա, որը կարող էր նշանակել ժամանակավոր կամ նոր Քլալա:

Օրավ Քլալան տվել է բնատուր զորությամբ օժտված մարդիկ, որոնց զարմանահրաշ գործերը ապշեցնում էին: Այնտեղ էր ծնվել սոփի (սուրբ) Ջավահիրը, որը օձի խայթոցից մարդկանց ու կենդանիներին բուժում էր թքով: Օձերը նրան այնքան մոտ ու հարազատ էին, ինչպես երեխայի համար խաղալիքները: Նա 1920թ. գաղթեց Հայաստան ու մինչև կյանքի վերջը զբաղվում էր այդ մասնագիտությամբ:

1910թ. Օրավ Քլալայում ծնվեց սոփի Սարգիսը: 1915թ. գյուղն ավերակ դառնալուց հետո, նրա ծնողները բնակություն հաստատեցին Հասանով գավառակի Լումա գյուղում:

Ջարմանալի բաներ էր անում նա, մտնում էր որևէ տուն և անմիջապես ասում, թե այդ տանը քանի օձ կա և ինչ գույնի: Չեռքի սովորական փայտով, կիսալուսնաձև գիծ էր քաշում դռան առաջ, ջուր լցնում պնակի մեջ, մի քանի անգամ թքում ջրի մեջ ու խառնում, շաղ տալիս տան մեջ և դրսում սպասում: Մի քանի րոպե հետո նրա նկարագրած օձը գալիս, կանգնում էր գծած շրջանակում:

Օձի խայթած մարդկանց ու կենդանիներին նա բուժում էր թքով: Նրա տանը ես վխտացող օձեր եմ տեսել, որոնք մարդկանց վնաս չէին տալիս:

Գավառի բոլոր խաներն ու բեգերը նախանձով էին նայում սոփի Սարգսին ու առաջարկում մահմեդականություն ընդունել՝ խոստանալով գեղեցիկ աղջիկներ, անսահման հարստություն, սեփական գյուղեր: ›Սոփի Սարգիսը մերժում էր այդ առաջարկությունները, բայց երկյուղ կրելով նրանցից՝ 1940թ. տեղափոխվեց Իրգութին գյուղ:

Ներքին Նեփեշտ. Մեշափարա գավառակի հարավ-արևելքում վեր է խոյացել գավառակի ամենաբարձր լեռնագագաթը՝ Սպիտակ սարը, որի վրա ծյունը նստում է հոկտեմբերին, հալվում հունիսին: Սպիտակ սարի ձյան հալոցքից բխող բազմաթիվ սառնորակ աղբյուրներից մի գետակ է գոյանում, որը միանում է Կալամբար գետին: Գետակի ծախ ափին՝ գեղեցիկ մի ձորակում է գտնվել Ներքին Նեփեշտ գյուղը: Բացի հայկական գերեզմանոցից, ոչինչ չի պահպանվել:

Միջին Նեփեշտ. Ներքին Նեփեշտից վեր, մոտ 2կմ հարավ-արևելք, գետակին ավելի մոտ է գտնվում Միջին Նեփեշտը: Այնտեղ հայերը բնակվել են մինչև 1918-19թթ. գաղթը, որից հետո այն չի բնակեցվել: Գյուղն ուներ քարաշեն, կրաշաղախ պատերով գեղեցիկ եկեղեցի:

Նահատակ. այսպես էին անվանում Միջին Նեփեշտից մոտ 0,5կմ արևելք գտնվող կաղնիների պուրակը: Ո՞վ է եղել նահատակը, ե՞րբ է նահատակվել, հայտնի չէ: Հայերի բնակության ժամանակ Նահատակում եկեղեցական արարողություններ են կատարել:

Վերին Նեփեշտ. գտնվում է Միջին Նեփեշտից 2կմ վերև, նույն ձորակի լանջին: Այստեղ հայերն ապրել են ընդհատումներով, գաղթել ու նորից վերադարձել են:

Վերին Նեփեշտում քար ու կրից կառուցված եկեղեցի կար, որը միակն էր Ղարադաղում, որ կիր ու ավազի շաղախից տափակ կտուր ուներ:

Գյուղին մոտ գտնվող ժայռերից մի հսկա ժայռաբեկոր պոկվելով, գլորվել ու մի բռնչենու մոտ խրվել էր հողի մեջ:

Ծառն ու քարը դարձել էին սրբավայր և ուխտատեղի: Տեղացիներն ասում էին, որ բռնչենին սուրբ ծառ է: Հսկա ժայռը, որ գլորվել ու առանց որևէ վնաս պատճառելու, կանգ է առել ծառի մոտ, դա ծառի զորությունից է, այն նախնիները պաշտել էին, նույնը շարունակում էին նաև նրանց սերունդները:

Ծառի բնին զանազան տեսակ հազարավոր գամեր կան խփված: Դա ուխտավորներն էին անում իրենց հիվանդությունները ծառին հանձնելու միտումով ու մատաղ խոստանում:

Սուրբ Նահատակ. գտնվում է Վերին Նեփեշտից 0,5կմ արևելք: Սուրբը կաղնիների պուրակ էր, որի մասին ոչ մի ավանդություն չի պահպանվել:

Տոն օրերին գնում էին Սբ. Նահատակ, աղոթում, մոմ վառում ու մատաղ կտրում:

Մուրազ ղուշ. կաղնիների այս պուրակի շրջակայքում կաչաղակի նման, բայց ավելի փոքր մի թռչուն կար, որը Ղարադաղի մյուս մասերում չէր հանդիպում: Տեղացիները նրան անվանում էին «մուրազ ղուշ»:

Երբ մորեխը սկսում էր ոչնչացնել ցանքերը, պուրակում գտնվող աղբյուրի ջրից տանում և ցողում էին դաշտերում, հավատալով սուրբ ջրի զորությանը, որ այն կվանի մորեխին: Այս թռչունները, կարծես հետևելով ջրին, նույն դաշտերն էին գնում ու կոտորում մորեխներին, կտուցի հարվածով բաժանելով երկու մասի, բայց չէին ուտում: Այդ թռչունը սուրբ էր համարվում, չէին որսում:

Սուրբ Սեյրանի. Վերին Նեփեշտից մոտ 25կմ վերև, Սպիտակ սարի դիմաց, գեղեցիկ բլրի գագաթին մի քար կար, որին անվանվում էին սուրբ Սեյրանի: Գավառի ամենանշանավոր սրբավայրերից մեկն է եղել, որտեղ ուխտի էին գնում Զատկին, Համբարձման տոնին ու Վարդավառին:

Սեյրանի մասին տեղացիները պատմում էին հետևյալ ավանդությունը. «Հին ժամանակ մի տղա ու մի աղջիկ սիրահարված են լինում: Գարնան ծաղկունքի մի օր նրանք «սեյր» անելու են գնում ծաղկաշատ լեռները, անսպասելի հանդիպում են թշնամիների, որոնք ուզում են աղջկան փախցնել: Փախչել չի հաջողվում, իրար գրկում են, օգնություն խնդրում աստծուց ու նույն պահին քարանում»:

ԳԻՐՄԻՆԱՎՈՒՆ

Գիրմինավունը գավառակի ամենագեղեցիկ գյուղն է, գտնվում է Ողանից 6կմ հարավ, ընդարձակ հարթության վրա, ունի խիտ անտառներ ու զովասուն աղբյուրներ: Այնտեղ հայերը բնակվել են մինչև 1919թ. գաղթը, որից հետո դարձել է թրքաբնակ:

Գյուղի անունը չի ստուգաբանվում: Հնարավոր է, որ նշանակում է կարմրագույն, կարմրավոր: Գյուղի եկեղեցին կառուցված է քարից, կրաղաշախով:

Իմ կարծիքով, ժամանակին եկեղեցին կոչվել է Կարմրավոր: Հետագայում տեղի խոսակցական լեզվում փոփոխվելով կարող էր դառնալ Գիրմինավուն:

Գիրմինավուն գյուղի մասունքները.

Սրբավայր. գյուղից 1կմ հարավ-արևմուտք, եղևնիների փոքր պուրակում քարից պատրաստված մի ծածկ կար: Պուրակի եղևնիները պաշտում էին որպես սրբություն, հիվանդություն ունեցողներն ու ուխտավորները մի զույգ մոմ էին վառում ծառերի տակ, աղոթում ու խնդրում նրանց օգնությունը:

Շամամա. շամամ նշանակում է կուրծք: Փոքրիկ քարանձավ էր, որտեղ կարող էր տեղավորվել 2-3 մարդ: Քարանձավի առաստաղից կախված կանացի ստինքների նման քարերից ջուր էր կաթում: Այնտեղ ուխտի էին գնում չբեր կանայք, զանազան հիվանդություն ունեցողները, կանգնում ջրի կաթիլների տակ ու աղոթում:

Սուրբ Հովհաննես. Գիրմինավուն գյուղից 4-5կմ հարավ-արևելք, անտառի բացատում կան հայկական գյուղի ավերակներ և մի կիսավեր եկեղեցի, որին անվանում էին Սուրբ Հովհաննես: Գյուղի անվան մասին տեղեկություն չի պահպանվել: Տոն օրերին գավառակի հայերը ուխտի էին գնում այնտեղ:

Գիրմինավուն գյուղի վերջին քահանա տեր Սահակի մասին պատմում էին, որ նա 2-3 օրով անհետանում էր գյուղից, վերադառնալուց հետո պատմում, որ Սուրբ Հովհաննեսում բոլոր սրբերը հավաքվել էին ժողովի, ինքն էլ է մասնակցել:

Շիրվան և Մումուդառու. Նեփեշտ գյուղից 8-10կմ վերև, Սպիտակ սարի աղբյուրներից գոյացած վճիտ գետակի ափին են գտնվում Շիրվան և Մումուդառու գյուղատեղերը: Նրանք շատ մոտ են, և անծանոթը կկարծի, թե մի գյուղ է եղել, գետակով բաժանված երկու թաղամասի: Շիրվանը գետակի աջ ափին է, Մումուդառուն՝ ձախ: Բանավոր հիշատակ ու ավանդություն չի պահպանվել գյուղերի մասին, միայն պատմում էին, որ Շիրվանում հարսանիք լինելիս, երբ զուռնան նվագում էր, մումուդառուցիները իրենց կտուրներին պարում էին:

Որպես հիշատակ, մնում են գյուղերի հայկական գերեզմանոցները:

Միզգիթին. գյուղատեղը գտնվում է Ողանից մոտ 10կմ հարավ-արևելք, գեղեցիկ հարթության վրա: Միզգիթին բառը պարսկերեն նշանակում է ուխտատեղի կամ վանք:

Ժամանակին եղել է գավառակի ամենամեծ գյուղերից մեկը: Այնտեղ հայեր բնակվել են մինչև 1900թ.: Հետագայում տարածքը դարձել է ամառային արոտավայր շրջակա թուրքերի անասունների համար:

ՄԻՆՋԵՎԱՆ ԳԱՎԱՌԱԿ

Մինջևան բառը թուրքերեն ստուգաբանվում է հազար երիտասարդ, մին նշանակում է հազար, ջավան՝ երիտասարդ: Մինջևան է անվանված նաև Արաքսի ձախ ափին գտնվող երկաթուղային կայարանը:

Ըստ ավանդության՝ Նադիր շահին, դեպի Ղարաբաղ արշավելիս, այդ վայրում դիմավորում են հազար երիտասարդներ և խնդրում զինվորագրվել նրա բանակում: Նադիր շահը տարածքին տալիս է Մինջևան անունը: Կա նաև ավանդության մեկ ուրիշ տարբերակ, ըստ որի՝ շահի դեմ ապստամբել են հազար երիտասարդներ, նրա հրամանով ծերբակալվել ու գլխատվել:

ՎԻՆԱ

Վինա գյուղը Մինջևան գավառակի կենտրոնն էր, ամենահայաշատ բնակավայրը:

Ըստ գյուղի տարեց մարդկանց՝ Վինայի իսկական անունը եղել է Բինա: Այն եղել է Ղարաբաղի մի քանի հայաբնակ գյուղերի ուևևորների ծմեռանոցը:[36] Նրանք ուշ աշնանը իրենց անասունները բերել են այստեղ ծմեռելու (բինա), վաղ գարնանը վերադարձել Ղարաբաղ: Այն ժամանակներում Արաքսը սահման չի եղել Ղարադաղի ու Ղարաբաղի միջև:

Հետագայում, հաշվի առնելով բինայի արգավանդ վարելահողերի առավելությունը, նրանք մշտական բնակություն են հաստատել այնտեղ:

Ժամանակի ընթացքում բինա բառը դարձել է Վինա:

Գյուղի հնագույն տոհմերն են Նարինյանները, Գյուլբուդաղյանները, Բաբախանյանները, Միրզոյանները, Սոփոնք:

Վինան Ղարադաղի ամենագեղեցիկ գյուղերից մեկն էր՝ ոչ միայն դիրքով, այլև կառուցապատմամբ: Գյուղը տարածված էր ընդարձակ, պայտաձև ձորահարթակին և շրջակա լեռնալանջերին:

Տները կառուցված էին առանձին, կրի շաղախով, կային նաև հնաձև «չարսու» տներ, որոնք իրենց կառուցվածքով եզակի էին Ղարադաղի հա-

[36] Պատմել է Բաբա Նարինյանը:

յաբնակ գյուղերում: Գյուղին առանձին գեղեցկություն էին տալիս տների բակերում գտնվող թթենիները:

Վինացիներ
(նկարները տրամադրել է Մարիամ Հակոբյանը)

Գյուղն օգտվում էր կենտրոնում գտնվող միակ սառնորակ ու վճիտ աղբյուրից: Թումանյան եղբայրների առևտրի տունը գտնվում էր գյուղի արևմտյան կողմում, երկհարկանի գեղեցիկ շինություն էր, շրջապատված բարձր պարսպով:

Վինա գյուղի մասունքները.

Սուրբ Հովհաննես եկեղեցի. գտնվում է գյուղից 0,5կմ հարավ, կաղնու անտառի մի ժայռոտ բացատում: Կամարակապ եկեղեցին կառուցված է քարից, կրաշաղախով, առջևում կա երկու տապանաքար: Ներսում, բեմի առջևում, Սուրբ Հովհաննեսի վիմագիր տապանաքարն է: Հայերեն գրվածք կա նաև մուտքի վերևում:

Գավառի հայերը Սուրբ Հովհաննես ուխտի էին գնում Սուրբ Ծննդյան, Զատկի, Համբարձման, Ծառզարդարի և Վարդավառի տոներին: Այնտեղ ուխտի էին գնում նաև Քեյվան գավառակի հայերն ու թուրքերը:

Հոգեկան խանգարում կամ այլ անբուժելի հիվանդություններ ունեցողներին տանում էին Սուրբ Հովհաննես, սրբի տապանաքարի վրա աղ էին շաղ տալիս, հիվանդը պառկում էր քարին ու աղը լիզում: Տապանաքարի տակից հող էին հանում՝ լիզում, այն գցում ծոցերը, աղոթում, մատաղ ու նվերներ խոստանում:

Սուրբ Հովհաննես եկեղեցու կառուցման մասին վինացի ծերունիները պատմում էին հետևյալ ավանդությունը. «Իրենց համագյուղացի Սո-

փոնք,[37] գյուղից դուրս գտնվող մի խոր ծորակում, որտեղ ծմռանը անասուններ են պահել, ունեցել են թթենու մեծ այգի, զբաղվել են նաև շերամապահությամբ և ստացած մետաքսաթելը արտահանել Գանձակ: Տարիների ընթացքում նրանք մեծ շահույթ են ստացել:

Մեծ հարստության տեր Սոփոնց ազգից մի մարդ ժառանգ չի ունենում, գնում է Երուսաղեմ, դառնում մահտեսի ու վերադառնում Վինա:

Երուսաղեմում ուխտ է անում, որ եթե տղա ժառանգ ունենա, անունը կդնի Հովհաննես ու եկեղեցի կկառուցի: Մահտեսին տղա է ունենում ու անմիջապես ձեռնամուխ լինում եկեղեցու կառուցմանը, որն ավարտելուց հետո Տաթևի վանքից վարդապետներ են գալիս, Ղարադաղի գավառի քահանաների ու հարուստների ներկայությամբ այն օծում ու, մահտեսու կամքով, անվանում Սուրբ Հովհաննես: Մկրտում են նաև մահտեսու նորածին որդուն և անվանում Հովհաննես: Յոթ օր, յոթ գիշեր երգով ու երաժշտությամբ տոնում են ու կերուխում անում:

Հովհաննեսը մեծանում է, հասակ առնում և խոր ծերության ժամանակ մահանում: Նրան թաղում են հոր կառուցած եկեղեցում»:

Վինա գյուղում Սոփոնց տանը մի խաչ էր պահվում, որին անվանում էին «Սուրբ Նշան»: Սոփոնց ազգից Դադաշ Բադալյանը, գաղթելով Հայաստան, բնակվում էր Արտաշատի շրջանի Այգեպատ գյուղում: Խաչի մասին նա պատմեց հետևյալը.

«Մեր նախնիներից մեկը՝ Սիմոն պապը, գնացել է Երուսաղեմ, դարձել մուղդուսի: Այնտեղից բերել է Սուրբ Նշան խաչը, որը մինչև օրս պահում ենք մեր օջախում, որպես մեր նախնիների հիշատակ»:

Հնարավոր է, որ Վինայի եկեղեցին կառուցել է Սիմոն մահտեսին:

Դ. Բադալյանը խաչը պահում էր իր տան առաջին հարկի մի առանձին սենյակում: Սենյակը զարդարված էր սրբանկարներով ու կրոնական գրքերով, կենտրոնում դրված էր մետաքսե թաշկինակով ծածկված խաչը: Այն շատ գեղեցիկ էր, պատված խորաքանդակ նախշերով, ուներ միջին մեծություն, կենտրոնում, փոքր ապակու տակ, դրված էր ոսկորի մասունք, որի շուրջը անընթեռնելի, հավանաբար հունարեն գրեր կային:

---

[37] Սոփի նշանակում է սուրբ, Սոփոնց ազգատոհմը հայտնի էր թունավոր օձեր բռնելու և թունավորումից բուժելու կարողությամբ:

Ալամա Սուրբ խաչ. կիսավեր մատուռ էր Վինա գյուղից մոտ 1կմ արևմուտք, մի աննշան ու մերկ բլրի վրա: Մատուռի մասին ավանդություն չի պահպանվել: Ալամ՝ ղարադաղցիների խոսվածքում նշանակում է ժողովուրդ:

Վարդանաբերդ. Վինա գյուղից մոտ 10կմ հյուսիս-արևմուտք, քարքարոտ ու լերկ մի բարձր բլրի վրա, թրծած աղյուսից կառուցած մի կիսավեր բերդ կար, որի միակ մուտքը եղել է հարավից: Արևմտյան կողմից, այն անառիկ դարձնելու համար, քանդել ու խոր ձորակ են ստեղծել: Բերդը ունի աղյուսե պատերով օղակածև պարիսպներ: Մի քանի շարից հետո պատերի մեջ դրված են եղևնու գերաններ՝ պատերի շարվածքին ու շինությանն ամրություն տալու նպատակով: Բերդի ներսում եղել են շինություններ, որոնք ավերված են: Շրջակա բնակիչներն այն քանդում և տանում էին որպես շինանյութ: Աղյուսը մանրում և օգտագործում էին նաև ամաններ փայլեցնելու համար:

Տեղի թուրքերը բերդն անվանում էին «Գյավուր գալա» (անօրենի բերդ), այն բանի համար, որ հարավարևելյան կողմում հայկական մեծ գերեզմանոց կար:

Ավերված բնակարաններից մեկում քարերից պատրաստած մի փոքր ծածկ կար, որը շրջակա հայերը, թուրքերը և քրդերը սուրբ օջախ էին համարում:

Հնարավոր է, որ բերդը պատմական Հայաստանի Վարդանանք գավառի Վարդանաբերդը լինի:[38]

Թաշտեն ձոր կամ Տաշտեն ձոր. գյուղատեղը գտնվում է Վինայից 3-4կմ արևմուտք, ընդարձակ ու գեղեցիկ տաշտածև մի ձորակի արևահայաց լանջին: Գյուղի մասին ոչ մի ավանդություն չի պահպանվել:

Ձորակը վերջանում է Սոթան գյուղի մոտ, հարուստ է ընկուզենիներով: Ոչ հեռու պահպանվում է հայկական գերեզմանոցը:

Սուրբ ծառ էր համարվում գյուղի աղբյուրի մոտ գտնվող չինարին: Ծառը մոմեր վառելուց հրդեհվել էր, առաջացել էր մեծ խոռոչ, բայց այն կանգուն ու դալար էր մնացել: Փչակում կավե մի քանի ծիթաձրագներ կային:

Այս չինարենու մոտ ամեն տարի Համբարձման տոնին ուխտի էին գնում Վինա գյուղի բնակիչները:

---

[38] *Լեո*, Հայոց պատմություն, հ.1, Եր., 1966, էջ 161:

ԳԻՆԴԻՄՆԱՆ

Գինդիմնան գյուղը գտնվում է Վինայից հարավ-արևմուտք, անտառային գոտում, լեռնալանջի վրա: Գյուղի անվան կապակցությամբ կա գեղեցիկ մի ավանդություն: Պատմում էին, որ դիվանի (պետության) ներկայացուցիչը գալիս է Ղարադաղի գյուղերը տեսնելու և հարկային օրենքներ սահմանելու: Այդ ժամանակ գյուղը նոր է կառուցված լինում և դեռ անուն չի ունենում: Գյուղի անվանի մարդիկ պարսիկ պաշտոնյային դիմավորում են ցորենի ալյուրից թխած լավաշով ու աղով: Պարսիկը տեսնելով երկար լավաշը, զարմացած բացականչում է. «գյանդիմնան», գյուղացիներն էլ իրենց հերթին են բացականչում. «Մեր գյուղին անվանենք Գյանդիմնան»:

Գյանդոմ պարսկերեն նշանակում է ցորեն, նան՝ հաց:

Գյուղը պատկանում էր Թումանյան եղբայրներին:

1930թ. այդ տոհմի վերջին ժառանգորդ Վարդան աղան վերադառնում է Ղարադաղ, բնակվում Գինդիմնանում և, իր անունը հավերժացնելու նպատակով, այն վերանվանում Վարդանաշեն:

ԱՄՐԱԴՈՒԼ

Ամրադուլ հայաբնակ փոքր գյուղը գտնվում էր Վինայից 10կմ հարավ:

Ամրադուլի բնակչությունը Հայաստան ներգաղթեց 1946 թ.:

Ամրադուլ գյուղի մասունքները.

Սուրբ Միսալամ. գյուղի գերեզմանոցի մոտ, կաղնու անտառի ծառերից մեկի տակ մի անշուք գերեզմանի վրա հասարակ քարերից սրբավայր կար: Գավառակի հայերն այնտեղ ուխտի էին գնում Համբարձման տոնին: Ըստ ամրադուլցիների՝ այնտեղ թաղված է մի մահտեսի, որի մասին ոչինչ չի հիշվում:

Ղարուկ խնա. ավերակները գտնվում են Վինայից 10-12կմ հարավ, անտառների խորքում: Հավանաբար մեծ գյուղ է եղել, ավերվել է անհիշելի ժամանակներում: Նրա վերաբերյալ ոչ մի ավանդություն չի պահպանվել:

Որպես հիշատակ ու հուշարձան մնում են տների փլատակներն ու հայկական գերեզմանոցը: Ղարուկ խնան կարելի է ստուգաբանել «ղարիբ» (օտար) և «խանե» բառերով, որը պարսկերեն կնշանակի օտարի տուն:

ՍԵՎԱՀՈՂ

Սևահող գյուղը գտնվում է Վինայից 10-12կմ հարավ-արևելք, անտառապատ լեռնալանջի վրա:

Այս անունը գյուղն ստացել է սևահողեր ունենալու պատճառով:

Ղարադաղի հայերից միայն սևահողցիներն էին, որ 1888-1905թթ. կարողացան դիմել ինքնապաշտպանության, ոչ մի խանի կամ բեգի հարկատու չդարձան, պաշտպանության համար ոչ մեկից խնամակալություն չխնդրեցին, մինչև վերջ մնացին իրենց հողի ու ջրի տերն ու տնօրենը:

Ինքնապաշտպանության կազմակերպման գործում ազդեցիկ դեր են ունեցել Մելիք-Մուշկամբարյանները, հատկապես աղա Ավետիսը, իսկ վերջին ժամանակներում՝ տանուտեր Արսենը:

Սևահողցիները 1946թ. Հայաստան չներգաղթեցին, միայն 1956թ. տեղափոխվեցին Թավրիզ ու Թեհրան:

ՔԱՐԱԳԼՈՒԽ

Քարագլուխը գտնվում է Վինայից 5կմ արևմուտք: Գյուղին շատ սազական անուն էին տվել. այն ծվարել էր երկու ծորակների միացման ժայռոտ լեզվակի վրա: Բնակչությանը ջուր տվող միակ խողուկ աղբյուրը գտնվում էր գյուղից դուրս, արևմտյան կողմում: Աղբյուրը այնքան սակավաջուր էր, որ գիշեր ու ցերեկ կժերը հերթի էին դրված: Ի՞նչն էր ստիպել մի բուռ հայերին ապրել նման քարքարոտ, սակավաջուր տարածքում, չնայած շրջակայքում հողաշատ ու ջրառատ հայկական գյուղատեղեր շատ կային, իրենք էլ չգիտեին:

Քարագլխի հայերին չվիճակվեց 1946թ. ներգաղթել Հայաստան, 1967թ. նրանք տեղափոխվեցին Թավրիզ ու Թեհրան:

Փալանկտոր. Քարագլուխ գյուղից մոտ 15կմ հարավ, բլրալանջի ընդարձակ տարածքում փռված են Փալանկտորի ավերակները: Նման անունը կապվում է բլրի փալանի տեսք ունենենալով: Հավանաբար, ժամանակին բավականին մեծ բնակավայր է եղել: Թուրքերն այն անվանում էին «Քյոհնա շահար» (հին քաղաք):

Շահդար. Վինա գյուղից Քարագլուխ տանող ճանապարհի կեսին այն բաժանվում է երկու մասի. ուղիղ ճանապարհը գնում է դեպի Քարագլուխ, իսկ ձախը՝ մոտ 25կմ անցնելով, հասնում է այգեպատ մի գյուղի: Այնտեղ աճում ու քաղցր պտուղ են տալիս խաղողը, նուռը, թուզը և շատ այլ

մրգատու ծառեր: Տարածքը մոտ է Արաքսպար գավառակին, բայց մտնում է Միջնեանի մեջ:

Գյուղը կոչվում է Հիմիշեն. բնակիչները շամլուներ են, խոսում են թուրքերեն: Գյուղի դիմացի բլրակի վրա, ծառերի գեղեցիկ պուրակում քարաշեն մի տուն կար, որի ընդարձակ սրահը վարագույրով բաժանված էր երկու մասի: Առաջինում գիշերում էին հեռավոր գյուղերից եկած ուխտավորները, իսկ երկրորդ մասում գտնվում էր սուրբ գերեզմանը: Գերեզմանի վրա կար պարսկերեն արձանագրությամբ փոքր տապանաքար:

Այնտեղ ուխտի էին գնում բոլոր ազգությունները, հատուկ օր չի ունեցել, հնարավոր է, որ կապված է եղել բերքահավաքի հետ, քանի որ ուխտագնացությունը հիմնականում կատարվում էր աշնանը:

ՔԵՅՎԱՆ ԳԱՎԱՌԱԿ

Քեյվան գավառակը գտնվում է Ղարադաղի արևելքում, սահմանակից է Մուղանի հարթավայրի Ասլանդուզ գավառին:

Քեյվան գավառակն ունի նպաստավոր խոնավ կլիմա և արգավանդ ու բերքատու վարելահողեր: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է և ցորենի մշակությունը:

Քեյվանի անտառները հարուստ են պտուղներով՝ տանձ, հոն, ընկույզ և այլն: Ձորակներում թագավորում են հարյուրավոր երկնահաս ընկուզենիներն ու թթենիները: Քեյվանի ընկույզի առատության մասին կար այսպիսի մի զրույց.

«Ըսիսան, որ մի տարե Քեյվանե քաշրը խռովալըն, ճուղուպուր չըն կերալ: Էտ տարեն Քեյվանե մահալումը օխտը խալվար ճուղուպուր ա իվիլացալ»:

Քեյվանում հնուց ծանոթ են եղել թթից օղի թորելուն ու գործածելուն: Օղու վերաբերյալ տարածված էր մի հետաքրքիր պատմություն. «Շատ տարիներ առաջ, Բաքվում, խանագահցի Դադոնց Հարութը ամուսնանում է սըղընցի մի աղջկա հետ և միասին գալիս են Խանագահ: Որոշ ժամանակ անց, տղայի հարազատները գնում են խնամապատվի:[39] Խնամիները, ճաշկերույթի ժամանակ նրանց օղի են հրամցնում: Վերադարձին մոտիկ հարևան ու բարեկամ մարդիկ՝ տեղի սովորության համաձայն հավաքվում, հարցուփորձ են անում:

– Ի՞նչ ասեմ,- պատմում է տղայի հայրը,-, քեյվանցիք էլ մեզ նման հայեր են, մեր նիստուկացին, մեր ադաթին նման, համա հաց ուտելիս մեզ մի տեսակ ջուր էին խմեցնում, որից հետո մարդ, իրենից անկախ սովորականից շատ էր ուտում, շատ էր խոսում, քեֆը լավանում էր, շատ քնել էր ուզում: Խնամիներն ասում էին, որ էդ ջրից շատ խմողները գժություն են անում, շատ խմել չի կարելի:

– Իրենց մոտ էդ ջրի աղբյուր կա՞, թե՞ ուրիշ բանից են սարքում,- հարցնում են նրան:

---

[39] Խնամապատիվ, խնամականչ. նշանադրությունից հետո աղջկա ծնողների հրավերը փեսայի կողմին (*Ստ. Մալխասյանց,* ՀԲԲ, հ. 2, էջ 271), (*Խմբ.*):

– Ամոթու չհարցրի, մտածեցի, որ մեր վրա կծիծաղեն, կասեն՝ խնամիները «դունյայից» (աշխարհ) բեխաբար են:

– Ադա, կարող ա՞ գինի ա, չեք իմացել:

– Չէ, գույնով ու համով նման չէր»:

ՍԸՂԸՆ

Սըղընը գյուղը Քեյվան գավառակի կենտրոնն էր, գտնվում էր հարավում:

Սըղընը տեղանունը հայերեն չէ, գյուղի անվան մասին ավանդությունն ասում է. «Շատ հնում, երբ հայերն այս գյուղը հիմնեցին, նրան տեր դարձավ գավառի գլխավոր խան Հաշիմը: Տարիներ անց Հաշիմը մահանում է, նրա ունեցվածքն ու գույքը տնօրինում է կինը՝ Զիբա խանումը: Խանի մահից կարճ ժամանակ անց, նրա կնոջը «սըղա» (խնամակալ, միայնակ) կնության է վերցնում մեկ այլ խան: Զիբա խանումի գյուղն անվանում են «Սղա քյանդի»:

Գյուղի հին ու ազդեցիկ տոհմերից են Միրզունք, Սարգիսանք, Մելքոնանք, Կարապետանք և Սարգիսբեգանք, որոնք մեծ դեր են կատարել գավառի ինքնապաշտպանության գործում:

Ինչպես սըղընցիների, այնպես էլ գավառի բոլոր հայաբնակ գյուղերի բնակչության հիմնական զբաղմունքը եղել է հողագործությունը. ցանում էին հիմնականում ցորեն: Մասամբ զբաղվում էին նաև անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, բանջարաբուծությամբ ու թռչնաբուծությամբ: Վերջին ժամանակներում սիսեռ էին մշակում, որը լավ բերք էր տալիս և բարձր գին ուներ Թավրիզում:

Գյուղն ուներ տարրական դպրոց և փայտածածկ եկեղեցի:

Դասումաշենի տանուտեր Մարիամ Հարոնյանը

ԴԱՍՈՒՄԱՇԵՆ

Գտնվում է Սըղընից 3-4կմ արևելք, «Տաք ջուր» տանող ճանապարհին, մեծությամբ գավառակի երկրորդ գյուղն էր:

Տարածքը հարուստ է թթենու, ընկուզենու, տանձենու, հոնի և այլ պտղատու ծառատեսակներով:

Հին ծեռագրերում հայտնի է Իսախանի շեն անվամբ. եղել է մելիք Իսախանի սեփականությունը: Հետագայում վերանվանվել է նրա ծոռներից մեկի՝ Ղասումի անունով:

Ղասումյան ազգատոհմից հիշատակման է արժանի Ջհանգիր Հայրապետի Ղասումյանը, որը պայքարեց խաների ու բեգերի դեմ:

Քեյվան գավառակի մասունքները.

Ջիվադիր. ուխտատեղին գտնվում է Սըղընի և Ղասումաշենի միջև, մի գեղեցիկ հարթության վրա, շրջապատված կաղնու հսկա ծառերով, որոնք բնորոշ են հայկական սրբավայրերին:

Ըստ տեղի հայերի սովորության՝ Ջիվադիրում էլ ամեն մի ընտանիք ուներ իր ծառն ու մատաղ եփելու օջախը: Գավառի հայերն ու մյուս ազգությունները այնտեղ ուխտի էին գնում Վարդավառի տոնին: Ուխտատեղիում հրեշտակի քանդակապատկերով ու գրերով տապանաքար կար: Հեռու վայրերից եկած ուխտավորները գիշերում էին սրբի գերեզմանի վրա կառուցված շինության մեջ:

Միլորի. Քեյվան գավառակի նշանավոր սրբավայրերից էր. գտնվում էր Ասրան գյուղի մոտ, գեղեցիկ մի բլրակի վրա: Սրբավայրի շրջակայքում, համատարած բռնչենի սուրբ ծառեր էին: Հայերն այնտեղ ուխտի էին գնում Համբարձման տոնին: Ծառերից մեկի տակ քարերից ծածկ էր պատրաստված՝ մոմերը քամուց ու անձրևից պաշտպանելու համար, որտեղ դրված էին ձիթածրագներ: Միլորի տեղանունը ստուգաբանել չկարողացանք, չի պահպանվել նաև որևէ ավանդություն:

Սըղընի բերդ. հարավից ավելի մոտ է Բերդին գյուղին:

Հնադարյան բերդը կառուցված է զարհուրելի ու անմատչելի մի լեռան գագաթին: Մուտքը արևելյան կողմից է. անմիջապես մուտքի մոտ է գտնվում աղբյուրը: Հնարավոր է, որ ջուրը բերված լինի այլ վայրից՝ ստորգետնյա ջրատարով:

Բերդի պարիսպը շարված է կարմրագույն աղյուսից՝ կիր ու ավազի շաղախով:

Նկատի ունենալով, որ գավառակի մյուս գյուղերի մասին հիշատակման արժանի հետաքրքիր տեղեկություններ չկան, դրանց կծանոթացնեմ ընդհանուր ակնարկով:

Քեյվանի արևելյան հատվածը, արևմտյանի համեմատ ունի աղքատիկ բուսականություն, արևահայաց, սակավաջուր լեռնալանջեր, աղքատ վարելահողեր, նոսր անտառներով քարքարոտ բլուրներ:

Լեռնալանջերին ծվարած են հայկական գյուղերը, որոնց բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Գյուղերը գտնվում են իրարից 4-6կմ հեռավորության վրա:

Հնում Ղասումաշենը պատկանել է մելիք Ղասումին: Միդավա, Նորաշենիկ և Ասրան գյուղերը եղել են մելիք Սարգսի սեփականությունը, իսկ Սիրուն, Բերդին, Դուգավդարա և Աշրաֆ գյուղերը եղել են համայնական:

1900-1905թթ. Քեյվանի հայաբնակ գյուղերին ապօրինաբար տեր դարձան Քյարիմ խանի սերունդները:

Ճորտատիրության դեմ արծվային պայքար սկսեցին Աշրաֆի և Դուգավդարայի հայերը, հույս ունեին, որ պարսկական կառավարությունը միջոցներ կձեռնարկի խաների ու բեգերի անօրինությունների դեմ:

Այստեղ տեղին է հիշկել հայկական մի հին առակ. «Մի գյուղացի ճանապարհով գնալիս տեսնում է, որ գայլը հարձակվել է անօգնական ոչխարի վրա և ուզում է հոշոտել: Նրան հաջողվում է ոչխարին ազատել ու անվնաս տուն տանել: Տուն հասնելով՝ մարդը ոչխարին դնում է գետնին, դանակը հանում, որ մորթի: Ոչխարը ծիծաղում է: Մարդը զարմացած հարցնում է, թե ինչո՞ւ է ծիծաղում: Ոչխարը պատասխանում է. «Դու ինձ ազատեցիր գայլից, ուրախացա, որ կյանք ունեցա ապրելու, բայց տեսնում եմ, որ վերջին գայլն էլ դու ես, քեզանից ազատվել չեմ կարող»:

Հայերի խնդրանքով գյուղեր եկած իշխանության ներկայացուցիչները, պահանջեցին համայնքների սեփականատիրությունը հաստատող գրավոր փաստաթղթեր: Նրանք այդպիսիք չունեին, նույնը պահանջեցին խաներից, նրանք էլ չունեին, ուստի գյուղերը պետականացվեցին:

Հետաքրքիր են գավառակի արևելյան հատվածում գտնվող գյուղերի անունների ստուգաբանությունները:

Սիրուն գյուղը անունն ստացել է շրջակա բնության գեղեցկության համար:[40]

Նուրիշկինը եղել է գավառակի ամենաուշ հիմնված գյուղերից մեկը, այդ պատճառով էլ կոչվել է Նուրիշկին, այսինքն՝ նորակառույց. հետագայում անունը ճշտվել է, դարձել Նորաշենիկ:

Աշրաֆ գյուղի անվան վերաբերյալ հիշվում է հետևյալ ավանդությունը. «Երբ պարսիկ մի գործակալ գալիս է գյուղի հարկերի չափը որոշելու,

---

[40] Գյուղանունը Ղարադաղի խոսվածքում հնչել է Սյուրյուն, Սյուրուն և Սուրուն ձևերով: XXդ. սկզբին ունեցել է 33 տնտեսություն (209 բնակիչ): Գյուղի բնակչությունը 1946թ. գաղթել է Հայաստան (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, եր.,1998, էջ 645), (*խմբ.*):

ամառ է լինում, ցորենի արտերը համատարած ծփում էին ծիրանի գույն հագած: Տեսնելով այդ գեղեցկությունը՝ նա հիացած բացականչում է. «Աշրաֆ, աշրաֆ», որը նշանակում է գանձ, հարստություն: Գյուղի անունը մնում է Աշրաֆ:

Ալբրիկ Պետրիկը իր պապի տապանաքարի մոտ

Դուգավդարա գյուղ գնալով՝ իշխանության ներկայացուցիչ պարսիկը տեսնում է, որ բոլոր գյուղացիները, երկուական եզ լծած, կալսում են ցորենի բերքը: Երկու եզը համարելով մեծ ունեցվածք, զարմացած պարսիկը բացականչում է. «Դուգավդարանդ», որը նշանակում է երկու եզ ունեն: Այդպես էլ պարսիկի խոսքերը դրոշմվում են գյուղին:

Ասրան գյուղի բնակիչները ևս իրենց գյուղի անունը կապում էին պարսիկ գործակալի հետ, որը գյուղ գնալով, տեսնում է, որ ցորենի հնձի ամենաեռուն օրերն են, բոլորը, մանգաղներն առած ջերմեռանդորեն, ասես մրցելով, արտերը հնձում են: Գյուղացիների՝ նման եռանդագին աշխատանքով հիացած, պարսիկը բացականչում է. «Ասլան, ասլան», որը նշանակում է առյուծ:

Ասրանում մելիք Սարգիսն ունեցել է մեծ ապարանք, որը մելիքության հետ կործանվել է:

Միակ գյուղն է, որ 1918թ. դարձել է թրքաբնակ:

ՔԵՅՎԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ

Անհրաժեշտ համարեցինք գավառակը բաժանել երկու մասի՝ ընթերցողին ավելի ճիշտ պատկերացում տալու համար, քանի որ արևմտյան մասն ունի հարուստ ու գեղեցիկ բնություն: Ձորակները հարուստ են ընկույզի, թթի, հոնի, կեռասի և հատկապես թակողինի ծառերով:

Ծանոթանանք նախկին հայկական գյուղերին, որոնք դարձել էին թրքաբնակ:

Աղալի բալա. գտնվում է արևմուտքից գավառակ մտնող ճանապարհի վրա, գետակի երկու ափերին: Աղալի և Բալա թաղամասերը բաժանվում են գետակով:

Գյուղից վերև գետակի ափի կաղնիների ու այլ ծառատեսակների պուրակի մոտ պահպանվել են հայկական հնադարյան գերեզմանոցը և ավերված եկեղեցին:

Իչիդարա. թուրքերեն նշանակում է միջնաձոր, գտնվում է Աղալի բալայից 4կմ հարավ, հարթության վրա: Պահպանվում է հայկական հնադարյան գերեզմանոցը:

Լումահոնի. գտնվում է Իչիդարայից մոտ 5կմ արևելք: Պահպանվում է հայկական հնադարյան գերեզմանոցը: Ներկայումս թրքաբնակ է:

Քիշմիրի. գտնվում է Լումահոնից մոտ 5կմ հարավ: Պահպանվում է հայկական հնադարյան գերեզմանոցը: Ներկայումս թրքաբնակ է:

Խոջանի գեղ. հայտնի է, որ հնուց ի վեր շատ գյուղեր անվանվել են հիմնադրողի կամ տիրոջ անունով ու տիտղոսով: Կարելի է ենթադրել, որ այն ժամանակին պատկանել է որևէ մեծահարուստ խոջայի: Գյուղն այժմ թրքաբնակ է. հնում նրա հայաբնակ լինելը վկայում է հայկական մեծ գերեզմանոցը:

Փիլիկոր. անունը մեզ է հասել հին ձեռագիր ցուցակից. այն ստուգաբանել չհաջողվեց, սակայն տեղում կատարված հարցումների միջոցով պարզվեց, որ գյուղին անվանում են նաև Փիր գյոռի կամ Փիր դիյան, որ նշանակում է սրբի գերեզման. փաստորեն, երեք անվանումներն էլ նույն իմաստն ունեն: Հավանաբար, անունը կապված է գյուղի մոտակա բլրակի վրա գտնվող գերեզմանի հետ, որը Վարդավառի տոնի ժամանակ ուխտավայր է շրջակա գյուղերի հայերի ու թուրքերի համար:

ԱՐԱՔՍՊԱՐ ԳԱՎԱՌԱԿ

Մայր Արաքսը, դժվարությամբ հաղթահարելով Մեղրու տարածքի ժայռապատ ծորերը, «Սպիտակ կապանքի» (Աղբանդ) մոտ դուրս է գալիս մոտ 200կմ երկարությամբ ընդարձակ ու լայն մի հովիտ: Արաքսի աջ ափով ձգված այդ 2-6կմ լայնությամբ հողաշերտին, որն արգավանդ է, բայց անմշակ, տեղի բնակչությունն անվանում է «յազի» (ընդարձակ, հարթ):

Հավանաբար, դարեր առաջ Արարատյան դաշտի նման հայաշատ է եղել նաև Արաքսպար հովիտը: Արաքսի հոսանքի հետ դեպի արևելք գնալով՝ ամենուրեք հայկական գյուղերի, սրբավայրերի, եկեղեցիների ու գերեզմանոցների ավերակներ ենք տեսնում:

Հիշատակենք Արաքսի ափերին գտնվող մի քանի գյուղեր:

Քլալա. գյուղը գտնվում էր հովտի սկզբնամասում: Քլալա բառը Ղարադաղի բարբառում նշանակում է փական, կողպեք, նույն իմաստն ունի նաև թուրքերենում: Ենթադրում եմ, որ այդպես է կոչվել Արաքսի՝ Մեղրու կիրճի կապանքներից դուրս գալու առիթով:

Քլալա գյուղում, հայերի գաղթից հետո բնակվում են թրքախոս քրդեր, որոնց հիմնական զբաղմունքը տեղի՝ ավանդական խաղողագործությունն ու այգեգործությունն է:

Քլալայի մասին պահպանվում է հետևյալ զրույցը, որը պատմել է գյուղի բնակիչ դերձակ Ջամանը. «Շատ տարիներ առաջ իմ հայր Ահմեդը և իր եղբայր Ասադը գյուղի մի խումբ երիտասարդների հետ աշխատելու են գնում Գանձակ: Աշխատում են մի մեծաճուն հայի մոտ, որն իմանալով, որ օտարականները Արաքսպարի Քլալա գյուղից են, շատ է ուրախանում:

Վերադառնալու ժամանակ հայը նրանց է հանձնում մի փաստաթուղթ ու ասում, որ Քլալան եղել է իրենց անձնական սեփականությունը, այդ փաստաթուղթը դրա վկայությունն է. կարող են գնալ և դրանով տիրանալ գյուղին:

Այն ժամանակ գյուղին ապօրինաբար տեր էր դարձել Նիվթիալի խանը: Նա իմանում է հորս մոտ գտնվող փաստաթղթի մասին, պահանջում, որ հանձնի իրեն: Հայրս հրաժարվում է, բայց խանը դժոխային պատժի է դիմում. կալում փշոտ մացառներ է փռում, հորս ու հորեղբորս մերկացնել

տալիս, ու լծելով կամին, հրամայում ոտաբոբիկ մացառները վերածել դարմանի: Դժոխային պատժից ազատվելու համար հայրս փաստաթուղթը հանձնում է խանին:

Քլալա գյուղի մասունքներից.

Ջրանցք. գյուղից մոտ 2կմ արևմուտք, որտեղ Արաքսը դուրս է գալիս կիրճից, լեռնային քարե կապանքը քանդել ու մի քանի տասնյակ մետր թունելով գետի ջրերը տարել՝ ոռոգել են «Ինջիրան» (թզնուտ) կոչվող արգավանդ դաշտը: Ներկայումս նշված ջրանցքով հնարավոր չէ ջուր տանել, քանի որ Արաքսի հունը ժամանակի ընթացքում բավականին իջել է:

Քարե պատնեշ. Ղուլուդի և Խանագահ գյուղերի տարածքների ջրերը Քլալայից վերև միանալով մի փոքր գետակ են դառնում ու թափվում Արաքսի մեջ:

Ղուլուդիից եկող առվակի աջակողմյան լեռնալանջին քար ու կրի և ավազի շաղախով պարիսպ է շարված, որը, հավանաբար ամբարտակ է եղել՝ ջրերը դեպի արևմտյան արգավանդ հողերը տանելու համար:

Դիտակետ կամ սրբավայր. Քլալա գյուղը գետակով բաժանվում է երկու թաղամասի: Գյուղի կենտրոնում, ժայռի գագաթին կան քարից կառուցված մի փոքր շինության հետքեր, որը հավանաբար դիտակետ կամ սրբավայր է եղել:

Քահրիզ. Ղարադաղի հայերն ու թուրքերը քահրիզ են անվանում ստորերկրյա արհեստական ջրանցքով տեղափոխվող աղբյուրներին: Քլալա գյուղից ներքև, խաղողի այգիների մոտ քահրիզի սառնորակ ջուր է բխում, որն անսովոր է տարածքի համար: Ջուրը բերված է 3կմ հեռավորությունից:

Դարանի. գյուղատեղը գտնվում է Քլալայից 4կմ հարավ-արևելք, լեռան գոգավոր հարթության վրա: Ըստ ավանդության՝ գյուղի բնակչությունը 1840թ. գաղթել է: Պատմում էին, որ գաղթել են ամռանը հնձի ժամանակ՝ բերքը թողնելով արտում ու կալում:

Գյուղի վերին մասում պահպանվում են քարաշեն, կամարակապ եկեղեցին ու գերեզմանոցը: Հետագայում, գյուղից 2կմ արևելք քրդերը նոր գյուղ են հիմնել ու անվանել Դարանի: Տեղանքը նման է թաքստոցի: Քրդերը տեղեկացրին, որ մոտակայքում հայկական գյուղատեղ կա, որին անվանում են «Փանհան»:

Կամարի. տեղի խոսվածքով՝ Քյամարի. հավանաբար նման անուն ստացել է գյուղի վերևի լեռնալանջով ձգվող սպիտակավուն քարերի շարաններից, որոնք հեռվից նման են մետաղե գեղեցիկ գոտիների:

Կամարին գտնվում է Արաքսին շատ մոտ. ավերակներում երևում են միայն եկեղեցու որմերը և հողին հավասարված գերեզմանոցը:

Վանքի. գտնվում է Կամարիից 4կմ հարավ-արևելք, հարթ տարածության վրա, շրջապատված դարավոր ընկուզենիներով: Գյուղից ներքև, ձորակում դեռ կային խնձորի այգիների մնացորդներ:

Գյուղատեղում երբեմն ապրում են քուրդ անասնապահներ: Որպես հուշ մնում է հայկական գերեզմանոցը:

Քառանի. գտնվում է Վանքիից 5կմ հյուսիս-արևելք, Արաքսին շատ մոտ, ունի արգավանդ հողեր: Գյուղի մասին ավանդություն չի պահպանվել. որպես հնության վկա մնում է հայկական գերեզմանոցը:

Այժմ բնակվում են թրքախոս քրդեր:

Գանձառի. գտնվում Քառանիից 3կմ արևելք: Գանձառի անունը լիովին համապատասխանում է գյուղի բնական հարստությանն ու արգավանդ հողերին: Գյուղի այժմյան բնակիչ թրքախոս քրդերը ցանում են հացահատիկ, եգիպտացորեն, ծխախոտ, բամբակ, բրինձ, մանրահատիկ լոբի և այլն ու ստանում առատ բերք:

Ըստ ավանդության՝ հնում գյուղը պատկանել է Մելիք-Ազարյաններին:

Գանձառի գյուղում նրանք սեփական ջրաղաց են ունեցել, որն այժմ էլ հիշվում է որպես «Քեշիշ դիարմանի» (քահանայի ջրաղաց):

Արաքսպար գավառակի մասունքները.

Ծակ քար. Ըռընգան գետից 10կմ արևելք, որտեղ Ողջի գետը խառնվում է Արաքսին, հակառակ կողմից հսկա մի ժայռագոտի վեր է խոյացել գետի վրա, ասես արգելելով Արաքսի ընթացքը: Արաքսն էլ խրոխտ ու համառ, շրջանցելով ժայռը, դրան թերակղզու տեսք է տվել ու թեքվել դեպի հյուսիս: Նույն տեղում ժայռը փակել է նաև մարդկանց անցուդարձը, բայց ժամանակին շինարար մարդը քանդել է այն տասնյակ մետր երկարությամբ ու թունել բացել:

Պատմում էին, որ Ծակ քարի մոտ, ժայռի վրա շինարարները գրել են. «Ձվի յոթ հատը մի փարա, վայ մեզանից հետո եկողներին»: Որքանով է ստույգ դա, չգիտենք:

Նովբանդ. այս գեղեցիկ ու պարզ անունը պարսկերեն է. նով նշանակում է նոր, բայց այստեղ ունի նավ, ջրատար իմաստ, բանդ՝ կապանք, նովբանդ՝ քարե ջրատար, առու, նավ: Ծակ քարից մոտ 10կմ արևելք [illegible]նայինի մի այլ հսկա զանգված է մխրճվել Արաքսի մեջ, կարծես օգնելով Ծակ քարի լեռնագոտուն՝ փոխելու գետի հունը:

Լեռան արևելյան կողմում տարածված է արգավանդ ու լայնարձակ մի մեծ հարթություն: Դարեր առաջ, երբ հովիտը մարդաշատ է եղել, լեռը ճեղքելով մարդիկ ջրանցք են կառուցել:

Հնարավոր է, որ ջրանցքները կառուցվել են ուրարտական շրջանում:

Խոդափիր. պատմական կամուրջը գտնվում է Կալամբար գետից 12-15կմ արևելք, Արաքս գետի վրա:

Նրա մոտակայքում հայկական մատուռ է եղել, որը կոչվել է Սբ. Աստվածածին: Պարսկական տիրապետությունից հետո սրբավայրի անունը թարգմանել և կոչել են «Խոդափիր» (խոդա՝ աստված, փիր՝ սուրբ):

Ժամանակը և վայրի ցեղերը ավերել են քարուկիր կամուրջը, հետագայում նրան շատ մոտ կառուցել են նորը: Երկուսն էլ մինչև օրս, Սբ. Աստվածածին մատուռի անունով կոչվում են Խոդափիրի կամուրջ:

Պատմում էին, որ մատուռում եղել է քարից քանդակված խոյ, որի գլուխը կոտրված է եղել: Ըստ ավանդության՝ խոյի գլխին գրված է եղել. «Ով խելք ունի թող ուտի խոյի գլուխը»: Մի անգամ ուխտի է գնում մի հովիվ ու գրագետ մարդկանց հարցնում գրվածքի իմաստը. լսելով այն, բարկացած հովիվը մահակով խփում՝ ջարդում է գլուխը, թե ինչպես կարելի է քարն ուտել: Գլխից դուրս է գալիս մի քսակ ոսկի:

Վինա գյուղի բնակիչները մեզ ստույգ տեղեկություն տվեցին այն մասին, որ Խոդափիրի փայտե կամուրջը կառուցել են վինացի Բաբախանյան եղբայրները. սեփականատիրական իրավունքի փաստաթղթերը գտնվում են Թեհրանում բնակվող նրանց ազգականներից մեկի մոտ:

Քիլիսա քյանդի. թուրքերեն նշանակում է եկեղեցու գյուղ: Քանի որ ձեռքի տակ գրավոր հիշատակություն կամ ավանդություն չկա, կարծում եմ, որ ժամանակին այն եղել է վանքապատկան կամ եկեղեցի է ունեցել:

Աղարսին. գտնվում է Ղասումաշենից արևելք, «Տաք ջուր» տանող ճանապարհին. պահպանվել է միայն հայկական գերեզմանոցը:

Խանագահ և Հուժ. Դիզմար և Հասանով գավառակների հայտնի գյուղերի անունները կրկնվում են նաև Արաքսպարում, հարյուրավոր կիլոմետր հեռավորության վրա: Հնարավոր է, որ 1840թ. գաղթի ժամանակ այդ գյուղերի բնակիչների մի մասը հաստատվել է այստեղ և բնակավայրերին տվել հին անունները:

Արաքսպար գավառակի Խանագահ գյուղի բնակիչ Մաշադի Ղասումի տունը սուրբ օջախի համարում ուներ: Գավառի հայ, թուրք և այլ ազգության բնակիչները «կատաղած» մարդկանց ու կենդանիներին տանում էին այնտեղ: Մի գիշեր մնալով հիվանդն ապաքինվում կամ մահանում էր:

Գյուղերում պահպանվում են հայկական հին գերեզմանոցները:

Ջառ կամ Ջառնա. գտնվում է Արաքսպար գավառակի արևելյան ծայրին. պահպանվում է հայկական հին գերեզմանոցը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեզ շատ էին հետաքրքրում Ղարադաղին վերաբերող վիճակագրական տեղեկությունները տարբեր ժամանակաշրջաններում, հայաբնակ գյուղերի քանակն ու բնակչության թիվը: Մեր կատարած բազմամյա ուսումնասիրությունները գոհացուցիչ տվյալներ չտվեցին:

Հնարավոր է, որ եղել են գրառումներ ու հաշվետվություններ, այլ գրավոր աղբյուրներ, որոնք անհետացել են ժամանակի հետ կամ դուրս են մնացել մեր կատարած աշխատանքից:

Ընթերցողին ներկայացնում ենք այն ամենը, ինչ կարողացել ենք գտնել գրավոր աղբյուրներում:

Ղարադաղի հայաբնակ գյուղերը 1513 թվականին

Գրավոր աղբյուրներից մեզ հասած ամենահին տեղեկությունը գտնում ենք Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ, որտեղ հետագայի գրիչները ավելացրել են Տաթևի վանքապատկան գյուղերի մի ցուցակ հետևյալ վերնագրով. «Տաթևի թեմի պտուղն այս է. ժամանակի ԺԴ գավառայն (արտագրված 1513թ. ձեռագրից):

Ղարադաղու գավառն

1. Վէղան
2. Շմբռի
3. Լումայ
4. Ջիակու
5. Հույժ
6. Խնակահան
7. Տռօնի
8. Շափխանէն
9. Ղըլղի
10. Մարի
11. Ուշնէպին
12. Կարմնալն
13. Խոճանի գէղն
14. Իսախանի շէնն
15. Մզկիթն
16. Թաշտէն ձորն
17. Բերդին յեդևն
18. Վինա
19. Քարագլուխն
20. Փալան կտօրն
21. Ներքին Ասրան
22. Վերին Ասրան
23. Նորաշէնիկ
24. Մահմարու
25. Ուհի Դարա
26. Լումահոնի
27. Քալաչու
28. Ղարաճանց տներն
29. Տամուրչի քէանդն
30. Խալիֆին հայերն
31. Փիլիկօռ
32. Ըրըժօն
33. Նըղլի
34. Սարդու
35. Սուրուննն
36. Քիշմիրի
37. Ներքին Եփէշտ
38. Միջին Եփէշտ
39. Վերին Եփէշտ
40. Մաքուդի
41. Ճանճանալու տներն
42. Չարու
43. Ղարուկխնա
44. Նորգէղն

Հնագույն ցուցակից պարզվում է, որ 16-րդ դարի սկզբներին Տաթևի վանքն ունեցել է 14 վանքապատկան գավառ, որոնցից է եղել նաև Ղարադաղը՝ բաղկացած 44 հայաբնակ գյուղերից: Ցուցակում նշված է նաև գանձվող «պտղի»[41] չափը, դրամական միավորով:

17-րդ դարի սկզբին շահ Աբասի ավերիչ արշավանքի, ինչպես նաև հետագա գաղթերի պատճառով հայաբնակ շատ գյուղեր դարձան անմարդաբնակ:

Հետագայում այլ ազգեր ու ցեղեր մուտք գործեցին Ղարադաղ, բնակություն հաստատեցին հայկական ամայացած գյուղերում՝ շատ դեպքերում պահպանելով դրանց հայկական անունները: Ցուցակում թվարկած 44 գյուղերը գտնելու համար, մոտ 430 տարի անց, 1946թ. հանդիպեցինք մեծ դժվարությունների: Երկար ուսումնասիրություններից հետո կարողացանք կազմել հետևյալ աղյուսակը թվարկած 44 գյուղերի վերաբերյալ:

Ձեռագիր ցուցակի հայաբնակ գյուղերն ըստ գավառակների 1946թ.

Գյուղը 1513թ.	Անվանումը 1946թ.	Գավառը	Ազգությունը
Վէղան	Ողան	Մեշափարա	հայեր
Շմքռի		անմարդաբնակ	
Լումա		Հասանով	թուրքեր
Ջիակու		Հասանով	թուրքեր
Հուժ		Հասանով	թուրքեր
Խնակահան	Խանագահ	Դիզմար	հայեր
Տռօնի		Դիզմար	հայեր
Շափխանէն		Մեշափարա	թուրքեր
Ղըլդի		Դիզմար	թուրքեր
Մարի		Դիզմար	թուրքեր
Ուշնէպին	Ուշտուբեն	Դիզմար	թուրքեր
Կարմնալն	Գիրմինավուն	Մեշափարա	թուրքեր
Խօճանի գէղն	Քիլիսա քյանդի	Քեյվան	թուրքեր
Իսախանի շէնն	Ղասումաշեն	Քեյվան	հայեր
Մզկիթն		Մեշափարա	թուրքեր
Թաշտէն ծօրն		Մինջևան	թուրքեր
Բէրդին յեդևն		Քեյվան	հայեր
Վինան		Մինջևան	հայեր
Քարագլուխն		Մինջևան	հայեր
Փալան կտօրն		Մինջևան	հայեր
Նէրքին Ասրան		Քեյվան	հայեր
Վէրին Ասրան		Քեյվան	հայեր
Նորաշէնիկ	Նուրիշկին	Քեյվան	հայեր

[41] Պտղի՝ բերքից պահվող եկեղեցական տուրք (*խմբ.*):

Մահմարու	Մըհդավա	Քեյվան	հայեր
Ուհի Դարա	Իզի դարա	Քեյվան	թուրքեր
Լումահոնի		Քեյվան	թուրքեր
Քալաչու	Քավանի-քովնի	Դիզմար	թուրքեր
Ղարաճանց տներն			
Տամուրչի քեանդն	Մուսուշենը	Հասանով	թուրքեր
Խալիֆին հայերն	Խալիֆա քյանդի	Արաքսպար	թուրքեր
Փալիկօռ	Քեշիշ քյանդի	Քեյվան	թուրքեր
Ըրըժօն	Քըժռօն	Մեշափարա	թուրքեր
Նըղլի		Դիզմար	թուրքեր
Սարդու		Դիզմար	հայեր
Սուրուննն		Քեյվան	հայեր
Քիշմիրի	Քեշիշ ղշլաղ	Արաքսպար	թուրքեր
Նէրքին Եփէշտ		Քեյվան	հայեր
Միջին Եփէշտ		Քեյվան	հայեր
Վէրին Եփէշտ		Քեյվան	հայեր
Մաքուդի	Միքիդի	Մեշափարա	թուրքեր
Ճանանլու տներն	Ջանանլու	Արաքսպար	
Չարու		Մեշափարա	
Ղարուկխնա		Մինջևան	
Նօր գէղն			

1513թ. հայաբնակ 44 գյուղերից 42-ը մեզ հաջողվեց տեղադրել ըստ գավառների:

1946թ. դրությամբ, նշված գյուղերի համար կազմեցինք հետևյալ ամփոփիչ ցուցակը.

Գավառակ	գյուղերի թիվը	հայաբնակ	թուրք	քուրդ
Քեյվան	14	6	3	5
Մինջևան	5	2	0	3
Մեշափարա	8	1	4	3
Հասանով	4	0	2	2
Դիզմար	8	2	2	4
Արաքսպար	3	0	2	1
Ընդամենը	**42**	**11**	**13**	**18**

Ղարադաղի հայերը եկեղեցական տուրքը տալիս էին Տաթևի վանքին, սակայն գյուղերը վանքապատկան չեն եղել, այլ պատկանել են գյուղացիներին ու մասամբ՝ հայ մելիքներին:

20-րդ դարի սկզբին Երվանդ Ֆրանգյանը, լինելով հայաբնակ բոլոր գավառներում, ուսումնասիրել է Ատրպատականի հայերի վիճակը, ապրելակերպը, զբաղմունքները և այլն: 1905թ. Թիֆլիսում հրատարակել է «Ատրպատական» խորագրով 296 էջանոց մի ժողովածու:

Ե. Ֆրանգյանը Ղարադաղի հինգ գավառակներում ապրող հայերի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում:

Քէյվան գավառակ

Գյուղ	տուն	բնակիչ
Սըղըն	100	600
Ղասումաշեն	60	360
Գեօկդարա	60	360
Ասրան	50	300
Բերդ	40	240
Սուրուն	30	180
Նորաշէն	20	120
Աշրապ	20	120
Մըհտաւու	20	120
Ընդամենը	**400**	**2400**

Տզմար գավառակ

Խանակեահ	96	576
Իւրկիւթ	51	306
Սարդու	48	288
Աղաղան	41	246
Ղշլաղ	39	234
Ղուլուտի	4	04
Ընդամենը	**309**	**854**

Մեշափար գավառակ

Ողան	65	390
Մէզկիթ	40	240
Կէրմանաւա	35	210
Քալալա	25	150
Նէփէշթ	16	96
Ընդամենը՝	**181**	**1086**

Մնջւան գավառակ

Վինէ	78	468
Էմրէդուլ	40	240
Քարագլուխ	35	210
Սևահող	25	150
Վարդանաշէն	23	138
Ընդամենը՝	**201**	**1206**

Հասանօվ գավառակ

Նորաշէն	40	240
Օղա	35	210
Լիւմա	18	108
Վիաքիւ	15	90
Ընդամենը՝	**108**	**648**

Ե. Ֆրանգյանի վիճակագրական տվյալներից պարզվում է, որ 20-րդ դարի սկզբներին Ղարադաղում եղել է 29 հայաբնակ գյուղ, 1199 տնտեսություն և 7194 բնակիչ:[42]

Համեմատելով 1513թ. տվյալների հետ, պարզվում է, որ մոտ չորս դարերի ընթացքում հայաբնակ գյուղերի քանակը պակասել է 15-ով:

Ատրպատական նահանգում հայաշատությամբ Ղարադաղը, Սալմաստ գավառից հետո, եղել է երկրորդը:

1946թ. պարսկահայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան կազմակերպելու համար կատարվեց հայ բնակչության նախնական հաշվառում: Ստորև տրվում են Ղարադաղի այդ տվյալները:

Քեյվան գավառակ

1. Սըղըն	62	372
2. Ղասումաշեն	35	210
3. Դուգավդարա	17	102
4. Բերդ	23	138
5. Սիրուն	19	114
6. Նուրիշկին	12	72
7. Աշրաֆ	13	78
8. Մըհդավա	10	60
Ընդամենը՝	**191**	**1146**

[42] Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Ղարադաղի 29 հայաբնակ գյուղերում կար 1132 ընտանիք (***Ե. Արտեհյան,*** Персидские армяне, Армянский вестник, 1916, 37-38, с. 4-5) (***խմբ.***):

Մեշափարա գավառակ

1. Ողան	25	150
2. Նեփեչտ	17	102
Ընդամենը՝	**42**	**252**

Հասանով գավառակ

1. Նորաշեն	27	162
2. Լումա	19	114
Ընդամենը՝	**46**	**276**

Միջնաման գավառակ

1. Վինա	98	588
2. Ամրադուլ	22	132
3. Քարագլուխ	45	270
4. Սևահող	13	78
Ընդամենը՝	**190**	**1140**

Դիզմար գավառակ

1. Խանագահ	56	336
2. Ղուլուդի	28	166
3. Սարդու	13	78
4. Ղշլաղ	31	186
5. Իրգութին	68	408
6. Աղաղան	23	138
Ընդամենը՝	**219**	**1312**

Ղարադաղի հայ բնակչության ցուցակը ծեռքի տակ չունենալով, մեկ ընտանիքի շնչերի թիվը միջին հաշվով վերցրել ենք վեց: Փորձնական հաշվարկ ենք կատարել Խանագահ գյուղում, որի բնակչությանը ճանաչում էի մեկ առ մեկ: Միջին թիվը համապատասխանում էր իրականությանը, չնայած Խանագահում 13 անձ ավելի էր:

Նման հաշվարկներ կատարվել են գավառի բոլոր գյուղերում:

Մեր կատարած վիճակագրական հաշվառումից պարզվեց, որ 1946թ. մայիսի 30-ի դրությամբ Ղարադաղում կար 23 հայաբնակ գյուղ, 688 ընտանիք, 4128 հայ:

Համեմատելով Ե. Ֆրանգյանի վիճակագրական տվյալների հետ, պարզվում է, որ անցած տարիների ընթացքում հայերի թիվը զգալիորեն նվազել էր:

Այս փաստագրական տվյալները մեկ անգամ ևս ապացուցում են, որ Ղարադաղի հայերը մշտական զրկանքներ կրելով ու հալածանքների ենթարկվելով գավառի խաների ու բեգերի կողմից, թողել ու հեռացել են հայրենի օջախներից: Վիճակագրական հաշվառման ժամանակ պարզվեց, որ միայն Խանագահ գյուղից, 1941-45թթ. Թեհրան ու Թավրիզ է գաղթել 28 ընտանիք:

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԵՐԸ

Ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմությունը, գրավոր շատ աղբյուրներ և ղարադաղցի հայերի բանավոր ավանդությունները, գալիս ենք այն համոզման, որ Ղարադաղի հայերը պատմության ընթացքում մի քանի անգամ ստիպված են եղել, թողնելով նահապետական օջախը, հայրենի հողը, զրկվելով ունեցվածքից, գաղթել ու թափառել օտարության մեջ, ենթարկվելով սովի, համաճարակների ու կոտորածների, տարիներ անց նորից վերադառնալ:

Գաղթից վերադարձածները հաճախ իրենց գյուղերում չէին կարողանում վերաբնակվել, քանի որ դրանց ապօրինաբար տիրել էին այլադավան ազգությունները:

Հայրենի հողում օտարացած հայը, ճարահատված հեռանում էր հարազատ գյուղից, գնում ու ծվարում էր անտառի մի բացատում, բնավեր թռչունի նման սկսում կառուցել մի նոր օջախ:

Ըստ մեր ուսումնասիրության՝ շահ Աբասի գործած ավերածություններից ու բռնագաղթից հետո Ղարադաղի հայերը գաղթի ճանապարհը բռնել են 1828, 1840, 1919-20 և վերջնականը՝ 1946 թվականներին:

1828թ. ԳԱՂԹԸ

1812-13թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց ռուսների հաղթանակով, կնքվեց Գյուլիստանի դաշնագիրը (12 հոկտեմբերի 1813թ.):

1826թ., խախտելով հաշտությունը, Աբաս Միրզան հարձակման անցավ ու պաշարեց Շուշին: Ռուսներն անցան հակահարձակման. իշխան Մադաթյանը 1826թ. դեկտեմբերին անցավ սահմանը և մտավ Ղարադաղ:

Մադաթյանի արշավանքից մեկ դար անց Ղարադաղի հայերը դեռևս հիշում էին նրա անունը, ավանդություններ պատմում արշավանքի մասին:

Արդեն 1827թ. դեկտեմբերին Ներսես Աշտարակեցին գիտեր, որ ռուսական սահմանը Արաքսից այն կողմ չի անցնելու, և պատվիրում է Նախիջևանի Բարսեղ եպիսկոպոսին, քանի դեռ ռուսները ետ չէին քաշվել,

համոզել ժողովրդին անցնել Արաքսն ու բնակություն հաստատել Արարատյան դաշտում:

Պարսկահայերի գաղթը կազմակերպելու նպատակով Ներսես Աշտարակեցին դիմում է գործնական քայլերի. Պարսկաստան է ուղարկում Ստեփանոս արքեպիսկոպոսին ու Հովսեփ վարդապետին: Նա շրջաբերականներով դիմում է պարսկահայերին, հորդորում նրանց գաղթել Արաքսից այս կողմ, Երևան ու Նախիջևան:

1828թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրով Արաքսը համարվեց սամանագիծ երկու տերությունների միջև:

Պայմանագրի 15-րդ հոդվածը վերաբերում էր քրիստոնյաների գաղթին, որի համար շատ ջանք էին թափել Ներսես Աշտարակեցին և ռուս գրող ու դիվանագետ Ալեքսանդր Գրիբոյեդովը: Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո Եղիազար Լազարյանը նշանակվեց Ատրպատականի հայերի գաղթի հանձնաժողովի նախագահ:

1828թ. փետրվարին նա Պասկևիչից ստանում է 19 կետից բաղկացած մի հրահանգ՝ կառավարության կողմից գաղթականներին տրվող իրավունքների և արտոնությունների մասին, ըստ որի գաղթելու իրավունք ունեին միայն Ատրպատականի քրիստոնյաները: Նրանք պետք է բնակվեին Երևանի, Նախիջևանի, մասամբ էլ՝ Ղարաբաղի անմարդաբնակ գյուղերում: Կարիքավոր գաղթականներին օգնելու նպատակով հատկացվեց 25000 ռուբլի (ընտանիքին 10ռ.):

Նոր բնակավայրերում գաղթականները վեց տարի ազատվում էին հարկերից և երեք տարի՝ պարհակներից:

Պարսկական կառավարությունը չէր կարող անտաբերությամբ դիտել, թե գյուղերն ու քաղաքները ինչպես էին դատարկվում աշխատասեր հայերից, ուստի թշնամական դիրք էր բռնել գաղթի նկատմամբ և ամեն կերպ փորձում էր խափանել այն:

Չնայած բազմաթիվ դժվարություններին, 1828-29թթ. Ատրպատականի Մարագա, Սալմաստ, Ուրմիա, Խոյ, Մակու և այլ գավառներից, Ղարադաղից ու Թավրիզից Հայկական մարզ և Ղարաբաղ գաղթեց մոտ 8000 ընտանիք, ավելի քան 50000 հայ:

1840թ. ԳԱՂԹԸ

Ըստ Մ. Բարխուդարյանի՝ Արցախի Նոր Առաքյուլ, Ջիլան գյուղ, Շաղախ գյուղ, Բինեաթլու շեն, Քարագլուխ, Ղուշչիլար, Նորաշեն, Տագ գյուղ և Հադրութավան գյուղերի բնակիչները եկել են Ղարադաղից 1840թ.:[43]

1840թ. գաղթի դրդապատճառը պարզելու համար ուսումնասիրեցինք այդ ժամանակին վերաբերող պատմություններ, գրականություն, բայց համոզիչ փաստեր չգտանք: Այդ գաղթի վերաբերյալ Ղարադաղի հայերի հիշողության մեջ դեռ պահպանվում էին բանավոր շատ տեղեկություններ ու ավանդություններ: Նշենք դրանցից մի քանիսը:

Խանագահ գյուղին պատկանող, դեպի Արաքսպար հովիտը նայող մի լեռնալանջի «Շահ ծառ» կոչվող հանդամասում հայրս 1940թ. ցորեն էր ցանել: Հնձի ժամանակ արտի եզրին գտնվող տանձենու տակ Անահիտ տատս հնձվորների համար ճաշ էր պատրաստում: Մեր արտի դիմաց, բլրալանջի անտառապատ ձորակի եզրին երևում էին ինչ-որ ավերակներ ու կիսաքանդ եկեղեցու ծյան պես սպիտակ պատեր:

Կեսօրվա հանգստի ժամին Անահիտ տատս, ցույց տալով ավերակները, ասաց.

– Օղուլ, էն խարաբա շէնը, վըօր ըրվալիս ա, հայու շէն լալ, անմըն ալ Դռօնի ա: Հինչուր իս քիյըմ նաղլը արիլիս, ինդի ալ իմ Հարութ պապա ինձ նաղլը արած: Կասի՝ մի տարէ թորք խանըրը ջլուսն արալ, եկալ նի դրռալ հայերէն շինիքկէն: Հայերին իստիպալըն՝ թա պէտք ա թուրքանաք: Հայերը շատըն ղանչանք արալ, վըօր իրացան ձէռք քաշըն: Հայերէն ղանչանք պաղատանքն անցաչի: Տըսալըն, վըօր ճար, իլլաջ չկա, իստիպված, տօն-տեղ թօղած, քօչալըն, գենցալ Ղըրբաղը: Էս դռռնեցէք, վըօր քօչալըն ամռնը լալ, խօռհնը արտմն ա մանցալ, հարած խօտը՝ չիմանը, աշան արած ցորենը՝ կալէրմը:

1941թ. Պարսկաստանի կառավարությունը անզոր եղավ վերահսկելու քաղաքական իրադարձությունները: Ղարադաղի խաներն, օգտվելով առիթից, իրենց ինքնիշխան հայտարարեցին ու սկսեցին անարգել կողոպտել ու թալանել հայկական գյուղերը: 1942թ. աշնանային մի օր Խանագահ գյուղի հասարակությունը հավաքվել էր քննարկելու այդ ավազակային հարձակումներից պաշտպանվելու հարցը: Գյուղի մեծահասակներից 70-ամյա Հարություն Սեյրանյանը խիստ զայրացած ծխում էր:

– Ինչո՞ւ ես զայրացել խնամի Հարութ,-հարցրի նրան:

---

[43] *Մ. Բարխուդարյան*, Արցախ, Բագու, 1895, էջ 63-68:

– Մեր թունբաթուն քնած պապերի հետ եմ: Իմ Առաքել պապը պատմում էր, որ 1840թ. էլի էս թուրք խաները շնացել, լցվել էին հայերի գյուղերը, ստիպել, որ մահմեդականություն ընդունեն: Հայերի խոստացած կաշառքները, նվերները, ոչ մի օգուտ չէին տվել, տեսել էին, որ էլ ճար չկա, թողել էին իրենց տուն ու տեղը, ինչ որ թեթև էր՝ վերցրել, ծաները՝ թողել, քոչել, գնացել էին Ղարաբաղի կողմերը: 20 տարի մնացել էին Ղարաբաղում, նորից ետ եկել:[44] Ախըր մեր պապերը էն ժամանակ, որ մնային Ղարաբաղում, այսօր մենք էս շուն խաներից նման դառնություններ չէինք տեսնի:

1945թ. ամռանը Վինա գյուղում Սիմոն Նարինյանը պատմեց հետևյալը. «1840թ. ամռանը, Քարիմխանլու գյուղի Հաշիմ խանը, կազմել է մի մեծ ավազակախումբ, որի մեջ եղել է նաև մի մոլլա: Նրանք ղուրանը վերցրել, մտել են հայկական գյուղերն ու հայերին պարտադրել, որ մահմեդականություն ընդունեն կամ մի քանի օրվա ընթացքում թողնեն իրենց տուն ու տեղն ու հեռանան: Հաշիմ խանի օրինակին են հետևում նաև գավառի մյուս թափթփուկ խաներն ու քուրդ բեգերը: Հայերն ստիպված թողնում են իրենց շեն օջախներն ու գաղթում Ղարաբաղի կողմերը:

Պարսկաստանի այն ժամանակվա շահը՝ Աբաս Միրզան, լուր ստանալով Ղարադաղի հայերի անօրինական գաղթի մասին շատ է զայրանում: Հանձնարարում է իր մոտ տանել Հաշիմ խանին, նրա կատարած «քաջագործությունների» (հայերին արտաքսելու) համար պարգևատրելու և Ղարադաղի գլխավոր խանի տիտղոսին արժանացնելու պատրվակով: Հաշիմ խանը իր շքախմբով ներկայանում է շահին:

Աբաս Միրզան անմիջապես գլխատել է տալիս Հաշիմ խանին: Շահի հրամանով Հաշիմ խանի գլուխն ուղարկում են Ղարադաղ, ամրացնում նիզակի վրա և ի ցույց բոլոր խաների ու բեգերի ման են տալիս բոլոր այն գյուղերում, որտեղից գաղթել էին հայերը և շահի անունից հայտարարում, որ Ղարադաղի հայերը ազատ կարող են վերադառնալ հայրենի օջախները, իսկ նրանք, ովքեր անհաշտ վերաբերմունք ցույց կտան հայերին, կարժանանան Հաշիմ խանի ճակատագրին:

Նման ցուցադրական դատից հետո շատ հայեր վերադարձան Ղարադաղ, մի մասն էլ՝ ելնելով անցյալի փորձից, մնաց Ղարաբաղում:

---

[44] Ըստ Խանագահ և Սարդու գյուղերի ծերունիների պատմածի՝ 1840թ. գաղթածները բնակվել են Ջրաբերդի գավառում, Թարթառ գետի հովտում:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Ղարադաղի ու Ղարաբաղի հայերը մշտական բարեկամական կապեր ունեին, աղջիկ էին տալիս, հարս բերում և այլն:

1840թ. գաղթի մասին հիշողություններ ենք գրանցել նաև Մինջևանի և Քեյվանի հայկական գյուղերում:

Հավանաբար 1840թ. գաղթին առնչվող մի արծանագրություն հաջողվեց գտնել 1946թ. Սարդու գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու ներսում, մուտքի վերևում, որտեղ սև գույնի ներկով, հայերեն գեղեցիկ ու խոշոր տառերով գրված էր. «Սարդու գյուղը վերակառուցված է Մելիք Խաչատուրի որդի Մելիք Կարապետի օրոք 1860թ.»:

Ղարադաղցի ծերունիների պատմածները, վիմագիր արձանագրությունը և ժողովրդի հիշողության մեջ մնացած ավանդությունները թույլ են տալիս ենթադրել, որ 1840թ. գաղթ է եղել:

1919-20թթ. ԳԱՂԹԸ

1914-15թթ. Արևմտյան Հայաստանի հայերի մասսայական տեղահանությունն ու կոտորածները ոգևորեցին նաև Ղարադաղի թուրք խաներին ու քուրդ բեգերին:

1916թ. Ղարադաղի հայերի կողոպուտն ու շանտաժը առաջինը ձեռնարկեցին Արաքսպարի Գանձառի գյուղի բնակիչներ, երեք եղբայր խաները, նրանց ազգական խաները Քլալա գյուղից, որոնք զինված ավազակախումբ էին ստեղծել, անարգել մտնում էին հայաբնակ գյուղերը, ծերբակալում ունևոր գյուղացիներին, նրանց մեղադրում դաշնակցականներին համակրելու մեջ, ծեծում, անարգում, շատ դեպքերում՝ կողոպտում ու հեռանում:

Հայերին կողոպտելը սկսեց մասսայական բնույթ կրել: Անպաշտպան ու իրավազուրկ հայերը նույնիսկ չէին կարողանում դաշտում աշխատել, գյուղից գյուղ գնալ, բոլոր դեպքերում ամեն մի պատահական թուրք փակում էր ճանապարհը ու կողոպտում նրանց: Դիմադրություն ցույց տվողներին սպանում էին ու մնում անպատիժ:

Պարսից կառավարությունը, ներքաշված լինելով քաղաքական խառն իրադարձությունների մեջ, միանգամայն անզոր էր զբաղվելու երկրի հեռավոր ծայրամասում կատարվող դեպքերով:

Ատրապատականի Հայոց թեմի առաջնորդը միայն կարողացավ Աբրահամ բեգ անունով մի մարդ ուղարկել Ղարադաղ, կողոպուտներից զերծ

պահելու համար առաջնորդարանին պատկանող Նորաշեն, Օղա և Ջիագու գյուղերը:

Ղարադաղում արդեն չկային նախկին ազդեցիկ մելիքները, որոնց շուրջ ժողովուրդը համախմբվեր ու հնարավորին չափ ինքնապաշտպանություն կազմակերպեր:

Նման իրադրությունում խաներն անարգել ու գազանաբար շարունակում էին հայ շինականի կողոպուտն ու սպանությունները:

Բերենք մի քանի փաստացի տվյալներ. Խանագահ գյուղի բնակիչ Վանեսանց Սարգիսը սպանվեց ցանք կատարելիս: Նրա տասնամյա որդուն՝ Երվանդին սրով մի քանի հարված էին հասցրել ու նետել մացառների մեջ, քշել, տարել մի զույգ եզներն ու ջորին: Երվանդը չմահացավ, բայց ողջ կյանքում մնաց հաշմանդամ: Դաշտում ցանք կատարելիս սպանեցին նաև Ներսունց Գրիգորին, տարան երկու եզ, մի ավանակ ու սերմացուն:

Գիշերը հարձակվեցին գյուղի ջրաղացի վրա, սպանեցին ջաղացպան Մըցկանաց Պապուն, տարան եղած հացահատիկը:

Խաներն իմանալով, որ իրենց ավազակությունների մասին Խանագահ գյուղից Թավրիզ բողոքի են գնացել մի քանի գյուղացիներ, Արփա-յուրդ կոչվող լեռնանցում փակում են ճանապարհն ու նրանց ձերբակալում: Թավրիզ գնացող պատվիրակներն էին գյուղի տանուտեր Աբունց Ակոփը և Մանուկենց Մանուկը: Երկուսին էլ սպանել էին ու դիակներն այլանդակել: Նրանց հետ զոհվեց նաև Նորաշեն գյուղի բնակիչ Գյուբունց Ներսեսի 18-ամյա որդին՝ Մարգարը:

Ողան գյուղի մոտ գտնվող Քժռոն գյուղի ավերակներում որջ դրած թուրք ավազակները 1916թ. Ողան գյուղի ցորենի հասունացած արտերը, որպես իրենց սեփականություն, սկսեցին հնձել ու տանել: Այս անպատվությունը չտանելով հայերը դիմեցին ձեռնամարտի: Զինված թուրքերն այդ օրը սպանեցին Բաղդասար բեգին, Գասպարենց Մկրտչին, Միրզա Հարութի տղա Օվակիմին: Այսքանով չբավարարվեցին թուրք ավազակները, սկսեցին ամեն օր հարձակվել գյուղի վրա՝ պահանջելով նորահարսեր ու աղջիկներ: Հարձակվեցին ջրաղացի վրա, սպանեցին ջաղացպան Սիմոնին և տարան այնտեղ եղած ցորենը, դաշտում սպանեցին ցանք կատարող Դանիելենց ուստա Ղազարի որդուն՝ Իսախանին, տարան մի զույգ եզները, ծին ու սերմացուն:

Ո՞ր մեկը թվարկենք, որի՞ մասին պատմենք...նման դեպքերն անթիվ են ու անհամար:

Նման գազանային վերաբերմունքից Ղարադաղի հայերը զրկվեցին դաշտ դուրս գալու, ցանք կատարելու, անասուն պահելու, մի խոսքով՝ ապրուստ ստեղծելու հնարավորությունից և արդյունքն եղավ այն, որ 1917թ. սով սկսվեց:

Այս բոլորից հետո էլ ի՞նչ էր մնում անելու Ղարադաղի կողոպտված, հալածված, ունեցվածքից զրկված, աղքատության ու սովի մատնված հայերին, եթե ոչ նորից հայրենի ծխի մարում, էլի գաղթ:

1919թ. աշնանը նրանք նորից բռնեցին գաղթի ճանապարհը: Այս անգամ ոչ միայն դեպի Ղարաբաղ, այլև՝ Երևան, Արարատյան դաշտ, Թիֆլիս, Գանձակ ու Բաքու, իսկ մեծ մասը՝ առաջին անգամ Թավրիզ: Գաղթը շարունակվեց մինչև 1920թ. գարուն, Ղարադաղը նորից հայազրկվեց:

Հայ գաղթականները վաղ առավոտյան հավաքվում էին Թավրիզի հրապարակներից մեկում, մի-մի պարան ուսերին գցած՝ ժամեր շարունակ հենված կացնի կամ բահի կոթին, մտատանջ ու դալկահար սպասում որևէ պատահական աշխատանքի: Եվ հաճախ էր պատահում, որ սեփական տան ու հողի, հաց ու ջրի տեր ղարադաղցի հայը Թավրիզի փողոցներում շաբաթներ շարունակ մնում էր անգործ, սոված ու հիվանդ: Գաղթականներից շատերը գիշերում էին բաց երկնքի տակ:

Հազարավոր գաղթականներ՝ ծեր ու մանուկ, զառամյալ կանայք, ամոթխած աղջիկներ, թխահեր պատանիներ հավաքվել, շրջապատել էին Թավրիզի հայոց առաջնորդարանը, խնդրելով աշխատանք, գիշերելու օթևան, մի կտոր ցամաք հաց:

Եվ ահա վրա է հասնում Թավրիզի ցրտաշունչ ձմեռը. մութ, խոնավ, հողե հատակով նկուղներում մի կերպ ծվարած գաղթականների մեջ տիֆ է տարածվում:

Ատրպատականի հայոց առաջնորդարանը միայն Ղարադաղի գաղթականների հարցով չէ, որ զբաղվում էր:

Հավաստի աղբյուրներից ստացած տվյալների համաձայն, թուրքական եղեռնից փրկված 40000 քրիստոնյաներ, այդ թվում 25000 հայեր և 15000 ասորիներ՝ ապաստանել էին Թավրիզում:

Ատրպատականի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանը հեռագրերով դիմում է էջմիածին՝ Վեհափառ կաթողիկոսին, «Եղբայրական օգնության» հանձնաժողովին, Կովկասի ազգային մարմիններին և այլուր, օգնություն խնդրում գաղթականներին սովից ու համաճարակներից փրկելու համար:

Կարճ ժամանակում առաջնորդարանն ստանում է մեծաքանակ սննդամթերք, տաք հագուստ, դեղորայք և դրամ: Շնորհաշատ առաջնորդը սկսում է օգնություն ցույց տալ գաղթականներին, բացում է ծրի ճաշարաններ, որբանոց, հիվանդանոց, կարիքավորներին տրամադրում դրամական օգնություն, կազմակերպում այլ միջոցառումներ:

Գաղթականների վիճակը որոշ չափով բարելավելուց հետո հայոց առաջնորդը բողոքով դիմեց Ատրպատականի նահանգապետին, պահանջելով «Ամենախիստ պատիժը տալ Ղարադաղի թափփուկ բոլոր այն խաներին, որոնք առիթ են ստեղծել ապօրինաբար սեփական օջախից հեռացնել հազարավոր հայերի և ստեղծել ազատ բոլոր պայմանները, որ Ղարադաղի հայերը վերադառնան հայրենի օջախները»:

Ատրպատականի նահանգապետ Ամիր-Դովլեն, ամենայն սիրով հարգեց հայոց առաջնորդի առաջարկը և Ղարադաղի սանձարձակ խաներին պատժելու գործը հանձնարարեց իր կրտսեր եղբայր Ամիր-Արշադին, որը բնակվում էր Ղարադաղին կից Ահարի գավառի Օվխառան գյուղում և հանդիսանում էր գավառի գլխավոր տիրակալը:

1921թ. վաղ գարնանը, քանի դեռ ծառերի տերևները չէին բացվել ու ավազակների համար անտառները դարձրել անմատչելի թաքստոցներ, Ամիր-Արշադը, 1000 հոգուց բաղկացած հեծելազորով, զինված հրացաններով ու մի քանի գնդացիրներով, արշավում է Ղարադաղ: Պատերազմական կարճ գործողություններից հետո ծերբակալում են Ռահիմ խանին, Հեյդար-Ղուլի խանին և նրանց ավազակախմբի անդամներին ու մահապատժի ենթարկում Վինա գյուղում:

1921թ. մայիսից կազմակերպվում է հայերի վերադարձը հայրենի օջախներ: Ղարադաղ վերադարձող ամեն շնչին անվերադարձ տրվում էր 10 թուման արծաթ դրամ՝ լծկան, անասուն, սերմացու և այլ անհրաժեշտ պարագաներ գնելու համար:

Հայերի վերադարձի անվտանգության ապահովումը հանձնարարվում է Ամիր-Արշադին, որը վերադարձող յուրաքանչյուր քարավանի ուղեկից էր նշանակում երկու զինված հեծյալ զինվոր:

Ղարադաղի Դիզմար, Հասանով և Մեշափարա գավառակներում հայերի անվտանգությունը պետք է ապահովեր Հասանով գյուղի բնակիչ Մամադ խանը, իսկ Քեյվան և Մինջևան գավառակներում՝ Քյարիմխանլու գյուղի բնակիչ Հեքիմ խանը:

Չնայած նման միջոցառումներին, Ղարադաղի հայերից ոմանք հրաժարվեցին վերադառնալ՝ նկատի ունենալով անցյալում կրած բազմաթիվ զրկանքներն ու հալածանքները:

Հայերի համար ստեղծված նոր, խաղաղ գոյակցության ապահովումից հետո մասամբ հայրենի օջախ վերադարձան նաև Ղարաբաղ, Բաքու և Թիֆլիս գաղթածները:

Ղարադաղի հայերի խաղաղ գոյակցությունը տևեց մինչև 1941թ., դաշնակից պետությունների մուտքը Իրան:

1946թ. ԳԱՂԹԸ

1946թ. գաղթը շատ էր տարբերվում նախորդներից: Այս անգամ Ղարադաղի հայերը ոչ թե գաղթում էին հալածանքներից խուճապահար, տանջանքով ու արցունքով, այլ ինքնակամ, հանգիստ ու հպարտ, երգով ու նվագով: Հայերին՝ սիրով, նվերներով, ափսոսանքով ու արցունքոտ աչքերով ճանապարհ էին դնում թուրք քիրվաները, ծանոթներն ու ընկերները: Հայերն այս անգամ զրկված չէին իրենց ունեցվածքից՝ ինչպես միշտ: Նրանք ազատորեն տանում էին շարժական գույքը, եզները, կովերը, ոչխարները, ծին ու ջորին՝ ինչ որ անհրաժեշտ էր ու հնարավոր:

Գաղթն սկսվեց ամռան ամիսներին, շատ արտեր մնացին չհնձված, խուրձը մնաց կալերում, կալսած ցորենը՝ պարկերում, ինչպես 1840թ.: Հայերի թողած հացահատիկը, տունն ու ջրաղացը, այգին ու արտը էլ չէր մնում խան ու բեգին, ինչպես նախկինում: Այս անգամ դրանք նվիրում էին քիրվաներին, որոնց հետ երկար ժամանակ ապրել էին հաշտ ու համերաշխ, կիսել մի կտոր հացը, վիշտն ու ուրախությունը:

Ղարադաղի հայերը դարավոր կապանքներից ազատված, բաց ճակատով, բոլոր խան ու բեգերից իրենց դարավոր վրեժն առած, հպարտ ու հանգիստ ներգաղթում էին Խորհրդային Հայաստան:

Ղարադաղի հայաբնակ գյուղերի բնակչության հաշվառումը 1946թ. գաղթի նախօրեին.

Գյուղ	Ընտանիք	Շունչ	Գավառակ	1946թ. ընտ.	շունչ	1947 ընտ	շունչ
Խանագահ	56	336	Դիզմար	56	336	-	-
Ղուլուդի	28	168	Դիզմար	28	168	-	-
Սարդու	13	78	Դիզմար	28	168	-	-
Ղշլաղ	31	186	Դիզմար	-	-	31	186
Իրգութին	68	408	Դիզմար	18	108	50	300

Աղաղան	23	138	Դիզմար	-	-	23	138
Նորաշեն	27	162	Հասանով	-	-	27	162
Լումա	19	114	Հասանով	19	114	-	-
Ողան	25	150	Մեշափարա	10	60	15	90
Նեփէշտ	17	102	Մեշափարա	-	-	17	102
Վինա	98	588	Մինջևան	32	192	66	396
Ամրադուլ	22	132	Մինջևան	-	-	22	132
Քարագլուխ	45	270	Մինջևան	7	42	38	228
Սևահող	13	78	Մինջևան	-	-	13	78
Վարդանաշեն	12	72	Մինջևան	-	-	12	72
Սըղըն	62	372	Քեյվան	6	36	56	336
Ղասումաշեն	35	210	Քեյվան	7	42	28	168
Դուգավդարա	17	102	Քեյվան	6	36	11	66
Բերդ	23	138	Քեյվան	23	138	-	-
Սիրուն	19	114	Քեյվան	19	114	-	-
Նուրիշկին	12	72	Քեյվան	-	-	12	72
Արշաֆ	13	78	Քեյվան	3	16	10	62
Մըհդավա	10	60	Քեյվան	-	-	10	60
Ընդամենը	**688**	**4128**		**247**	**1480**	**441**	**2648**

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ղարադաղի գավառում բնակվող բոլոր ազգությունները նստակյաց կյանք էին վարում, բացառությամբ Արաքսպար հովտի քրդերի, որոնք հուլիս և օգոստոս ամիսներին տեղափոխվում էին գավառի միջին տարածքը, վրաններ (չադիր) խփում անտառների բացատներում ու աղբյուրների մոտ: Հայերը նրանց նման տեղաշարժը անվանում էին «օբա»: Օրինակ՝ «Դռոնու օբան եկած ա, «Շահ ծառեն» դուզումը վեր եկած՝ չադիրնեն թխած»:

Խաշնարած քոչվոր շահսևականները, որոնց անվանում էին «էլ», բնակվում էին Ղարադաղի տարածքից դուրս, Մուղանի հարթավայրում: Նրանք ամեն տարի, ձյան հալոցքի հետ աստիճանաբար բարձրանում էին Ղարադաղի Հայկական լեռների ջրառատ ու զովասուն գագաթները և աշնանը, ձյան տեղումների հետ աստիճանաբար վերադառնում Մուղանի տաք հարթավայրն ու ձմեռում այնտեղ:

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Դաշտավարությունը Ղարադաղի հայերի ամենակարևոր զբաղմունքներից մեկն էր:

Դարերի խորքից սկսած, ինչպիսի գործիքներով, ինչպիսի եղանակով դաշտավարությունը կատարել էին նախնիները, նույնությամբ էլ շարունակվում էր մինչև 1946թ. գաղթը:

Զարմանալի է, որ ղարադաղցիներից շատերը լինելով ուրիշ շատ գավառներում, ուրիշ երկրներում, տեսել էին հողի մշակման նոր ու առաջնակարգ եղանակներ, բայց ոչ մի նորություն չէին ներմուծել:

Ղարադաղում ավանդաբար մշակում էին հետևյալ մշակաբույսերը. ցորեն (աշնանացան և գարնանացան), գարի (աշնանացան և գարնանացան), գարնանացան հաճար, գարնանացան կորեկ, կտվիատ (կտավատ), սիսեռ, քոշնան, ոսպ և քոնջիթ (քնջութ):

Ղարադաղում կար ցորենի չորս տեսակ՝ քիստավոր և անքիստ «զարդա» (ոսկեգույն): Քիստավորին ասում էին «ղըլչեղ»: Այդ ցորենի մի տե-

սակը, սևագույն քստեր ունենալու պատճառով, կոչվում էր «ղարա ղըլչեղ» (սևաքիստ):

Լավ ռանչպար հողագործը, հողի լեզուն իմացող գյուղացին գիտեր, թե որ արտում ինչպիսի ցորեն ցաներ, որ բարձր բերք ստանար:

Ջարդա ցորենի բոլոր տեսակները ցանում էին լեռնային բարձրադիր հողերում, նկատի ունենալով, որ այն շատ ցրտադիմացկուն է:

Կարմրահասկ ցորենը ցանում էին ոչ արևաշատ (ղուզեյ) խոնավ հողերում, որտեղ այն լավ էր աճում:

Սպիտակահասկ ցորենը վաղահաս էր, զերծ էր մնում հիվանդություններից, ցանում էին արևաշատ հողերում:

Համեմատաբար խոնավ տարածքներում էին ցանում նաև հաճարն ու գարնանացան ցորենը:

Հաճախ հաճարն ու գարնանացան ցորենը խառն էին ցանում, քանի որ դրանց աճն ու հասունությունը կատարվում էր հավասար: Կալսումից հետո, մաղերի միջոցով շատ հեշտությամբ դրանց հատիկները բաժանում էին:

Հացատեսակների մեջ ամենաընտիր, բարձրորակ ու համեղ լավաշը ստացվում էր գարնանացան ցորենից:

Ցորենից ձավարեղեն պատրաստելը ընդունված չէր: Օգտագործում էին միայն հաճարի ձավար, որին անվանում էին կուրկուտ:

Ձավարեղեն պատրաստում էին նաև կորեկից, որի հատիկները աղում էին երկանքով (ձըրք ըրկանք):

Կտվիատ (կտավատ). ցանում էին սահմանափակ քանակով, նկատի ունենալով, որ գավառում ձիթհաններ չկային: Ստացած կտավատի շատ մասն աղանձում էին, սանդերի մեջ ծեծում և օգտագործում զանազան ճաշերի մեջ, ինչպես տեղացիներն էին ասում. «ճաշը խենելու հետե»:

Ղարադաղի ողջ բնակչությունը յուղի պակասությունը լրացնում էր կտավատի ձեթով:

Ղարադաղի հայերը կտավատի ձեթով ճաշեր էին պատրաստում, ինչպես նաև նազուկի հես (խորիզ):

Հայերը ձեթ գնում էին Ուզնուդուլ գավառի թուրքերից, որոնք այն, տկերով, գրաստներին բարձած բերում և վաճառում էին նոյեմբերից մինչև ապրիլ:

Կտավատը օգտագործում էին նաև հեքիմները՝ զանազան հիվանդություններ բուժելու համար:

Քոնջիթ (քնջութ). կտավատի նման, համեղ ու սննդարար հատկություն ունեցող յուղատու բույս է, մանր սերմեր ունի, համով շատ նման է կանեփին, թուփը նման է սիսեռին՝ ցածր է ու բազմաճյուղ, ունի գեղեցիկ կլոր տերևներ, կանաչ ու բաց կապույտ երանգով:

Քնջութի սերմերը աղանձում, սանդի մեջ ծեծում և օգտագործում էին զանազան ճաշերի մեջ:

Քնջութը աղանձում, խառնում էին ցորենի աղանձի հետ և ուտում:

Այդ յուղատու սննդառատ բույսը ցանքաշրջանառությունից դուրս էր մնացել մի շատ հետաքրքիր ու անբացատրելի երևույթի պատճառով: Գյուղացիները գտել էին, որ հաջորդ տարվա ցանքի համար ցել կատարած և ցանքաշրջանառությունից դուրս թողած հողերում քնջութն աճում է այնպիսի փարթամությամբ, ինչպես ցանած արտերում: Մեզ համար գաղտնիք մնաց, այն աճում էր երկար տարիներ ցանելու հետևանքո՞վ, թե՞ այդ բույսի վայրի տեսակն էր տարածվել:

Գյուղի կանայք մանգաղներով քաղում էին առանց ցանելու աճած քնջութի ցողունները, փռում արևի տակ, երեկոյան հավաքում, թափ տալիս սփռոցների վրա: Նման ձևով մեկ անձը կարող էր օրական մի քանի կիլոգրամ հատիկ հավաքել:

Քոշնան. շատ նման է սիսեռին, սակայն հատիկները ավելի մանր են, մոխրականաչագույն:

Քոշնանը ունի շատ դառը համ, բայց բարձր սննդարարություն: Այն երկանքով աղում էին, մեծ ամաններում թրջում, խառնում դարմանի հետ ու կերակրում միայն լծկան եզներին, որոնց գիրացնում էր և ուժեղացնում:

Աղքատ շատ ընտանիքներ քոշնանը օգտագործել են որպես սննդամթերք:

Քոշնանը օգտագործում էին հետևյալ կարգով. լցնում էին մեծ տաշտերի կամ կաթսաների մեջ, վրան ավելացնում ջուր: Քոշնանի դառնությունը դուրս էր տալիս ջրի մեջ, այն քամում էին, աղանձում և ուտում:

Ղարադաղի հայերը դարեր շարունակ ապրելով օտար ազգի, օտար կրոնի, օտար պետության լծի տակ, բազմիցս ենթարկվել են ասպատակությունների, կողոպուտի ու թալանի: Անապահով վիճակը անդրադարձել էր տնտեսական, սոցիալական, մշակութային գրեթե բոլոր ոլորտներին:

Հայ շինականը նման պայմաններում զրկված էր տնտեսությունը զարգացնելու և առաջընթացի հնարավորություններից, նույնիսկ նահանջել էր, և աղքատության, անկայուն վիճակի պատճառով, հրաժարվել ավան-

դական արորից ու ցանքը կատարում էր բազուկների ուժով՝ «թոխուրի» միջոցով:

Խմհատ. ցորենի բերքատու վարելահողեր ունենալու համար գյուղացիները հատում էին անտառները: Կտրտած ծառերի պիտանի փայտը տնտեսության կարիքների համար տանում էին, մնացած ճյուղերը հավաքում, կուտակում էին կտրտած ծառերի բների վրա ու որոշ ժամանակ անց, չորանալուց հետո, այրում:

Անտառների կտրտմամբ տարածք ազատելն ու վարելահողերի վերածման աշխատանքը կոչվում էր խմհատ:

Նույն տարվա աշնանը, երբ անձրևներից հողը խոնավանում էր չուրուցով[45] վարում էին անտառից ազատված տարածքը, հողը լավ փխրեցնում ու ցորեն ցանում:

Ավանդաբար, եթե քաղաքական կայուն պայմաններ էին լինում, ղարադաղցի հայը թոխուրի փոխարեն ցանքը կատարում էր ալաթով՝ 2-4 եզներ լծած: Ալաթով մեկ օրում կարողանում էր վարել ու ցանել այնքան տարածություն, որ թոխուրով անհնար էր կատարել տասն օրում:

1922-40 թթ. շատ ու շատ ընտանիքներ կարողացան ունենալ այնքան վարելահողեր, որոնց մի մասը ցանում էին, մի մասն էլ հերկում ու թողնում հանգստանալու հաջորդ տարվա համար և այսպես՝ հաջորդաբար:

Արդեն 1940թ. Ղարադաղի բոլոր հայաբնակ գյուղերում, բոլոր ընտանիքների համար ամոթալի էր գարուց հաց թխելը:

Գարի ցանում էին գրաստներին, հավերին ու շներին կերակրելու համար:

Թուրքերի ու քրդերի համար գարին մնում էր որպես հիմնական հացամթերք: Նրանք, չունենալով հիմնական պաշար, միշտ կախման մեջ էին հայերից՝ գարի գնելու հարցում:

Շարիք. նշանակում է ընկերովի, կիսովի:

Ցանք կատարելու համար հարկավոր էր առնվազն երկու եզ, սակայն շատ գյուղացիներ ուժ ու միջոց չունեին երկու եզ պահելու: Այդ ժամանակ ամեն մի գյուղացի գնում էր մեկ գլուխ եզ:

Ցանքի ժամանակ համաձայնության գալով մի ազգականի կամ հարևանի հետ, միասին շարիք էին կազմում հավասար իրավունքներով:

Շարիք ցանքս կատարելն ուներ մի քանի տարբերակ. եթե շարիքի անդամներն ունեին մեկական եզ, հավասար չափի վարելահողեր ու սերմա-

---

[45] Չուրուց, չորոց, արոր, որին լծում էին չորս զույգ լծկան (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.4, էջ 28), (***խմբ.***):

ցու, նրանք միասին երկուսի արտերն էլ ցանում էին, հնծում, կալսում ու ստացած բերքն ու դարմանն էլ հավասար բաժանում: Շարիքությունը այսպես շարունակում էին այնքան ժամանակ, որ երկու կողմերն էլ միջոց էին ունենում գնել ևս մեկական եզ և ցանքը կատարել առանձին:

Շարիքության հաջորդ ձևը հետևյալն էր. մեկն ուներ մի լուծ եզ, մեկը՝ բերքատու լավ հող, մյուսն էլ լավ սերմացու: Երեքով միանում էին, դառնում շարիք, միասին ցանում, հնծում, կալսում և բերքը բաժանում երեք մասի:

Շարիքության տարբերակ էր նաև չարեքով (քառորդ) ցանքը, որի դեպքում այն մասնակիցը, որը ներդրում էր կատարել վարելահողի, լծկանի կամ սերմացուի ծևով, ստանում էր բերքի քառորդը:

Շարիքության ձևերից էր նաև «ավաշը», որը կատարում էին հետևյալ կարգով. հավասար միջոցներ ունեցող գյուղացիները փոխհամաձայնությամբ երկուսի արտերն էլ միասին ցանում էին, հնծում ու, նկատի ունենալով, որ հասունացման ժամանակները տարբեր են, բերքը չէին կիսում, ամեն մեկը իր արտից ստացած բերքը վերցնում էր իրեն:

Ղարադաղում աշնանային և գարնանային բոլոր ցանքերը «դեմի» (անջրդի) էին, քանի որ միջին գոտում բավարար քանակությամբ ջուր չկար, իսկ եղած աղբյուրների ջրերը հազիվ էին բավարարում այգիներին ու բանջարանոցներին, և ջրել հնարավոր չէր, որովհետև գրեթե բոլոր արտերը գտնվում էին թեք լեռնալանջերին ու անտառների բացատներում:

Նման տարածքներում, եթե հողը «նամ, քեշ» (խոնավություն) չունենար, ցանք անելն անհնարին էր. այն մնում էր բնության ողորմածության հույսին:

Ղարադաղցի հայը արտը վարելուց ու ցանելուց հետո մեկ էլ արտն էր գնում մանգաղը ծեռքին՝ հնծելու:

Ղարադաղում աշնանային անծրևներն սկսվում էին սեպտեմբերի սկզբներից, որը աշնանացանի համար լավագույն ժամանակն էր:

Աշնանամուտի առաջին օրերին տեղացած անծրևներից հողի բավարար խոնավություն ստանալուց հետո, ղարադաղցուն հարկավոր էր 15-20 օրվա բարենպաստ եղանակ՝ աշնանացանը կատարելու համար:

Աշնանացանը ժամանակին կատարելը համարվում էր եկող տարվա բարձր բերքի երաշխիք:

Ղարադաղցի հայ շինականը այն հավատն ուներ, որ աստված ամեն օր ամենատես աչքերով հետևում է իր ստեղծած մարդու արարքներին, և

մարդը պարտավոր է ամեն առավոտ, ամեն գործ նախածեռնելիս հիշել աստծուն, որպեսզի նրա օգնությամբ հեռու մնա չարիքից ու փորձանքից:

Հայ գյուղացին ցանքն սկսելիս, արտի եզրին, խուրջինից սերմացուն լցնելով «մեզարը» (գոգնոց), դեմքը դարձնում էր դեպի աղոթարան[46] ու ասում. «Հիսուս Քրիստոս, տեր աստված, տեր, քու պարի աշկը իմ արտեն կպահս: Մորուխ տարուց, մուկնը տարուց, կարկուտից, սել շառաչից (տեղատարափ անձրև ու հեղեղ), արաշտից, խնքրիսմ հըռե պահս:

Էս մի հափուռ սըրմը շաղմ տալիս ղուշերեն հետե, էս մի հափուռը՝ դերեն, դարվիշեն, սոփոն ու ղարաչուն: Քու կամքավտ, որ արտս անվնաս մնա, իս ալ խոսքմ տալիս, որ աշունքը մի հոլ մատաղ արըմ»:

Նման ցանկություններ ու բարի խոստումներ կատարելով աստծու հետ, սկսում էր ցանքը:

Աշնանացանի ավարտից հետո հայ շինականը համարում էր ընթացիկ տարվա դաշտային ծանր աշխատանքների հիմնական մասն ավարտված ու մտածում հաջորդ տարվա ցանքի նախապատրաստման մասին:

Չուրունց. երբ երկրում կայուն վիճակ էր ապահովվում խաղաղ գոյակցության համար, պետությունը որոշ ուշադրություն էր դարձնում գյուղացիության վրա, խաներն ու բեգերը ասպատակություններ, կողոպուտ ու գողություններ չէին կատարում, հայ շինականը կարողանում էր շունչ քաշել, իր քրտնաջան աշխատանքով դառնում էր ունևոր տնտեսության տեր, վերանում էր մեկը մյուսից կախումն ու շարիքությունը:

1936թ. դրությամբ արդեն մոտ մեկ տասնամյակ էր, որ ղարադաղցի հայ շինականը որոշ չափով ազատ շունչ էր քաշել, մեծ մասը ունևոր տնտեսություններ էին դարձել: Հայաբնակ գյուղերում հայերն այլևս հովվություն ու նախրապանություն չէին անում. դրանք վարձկան քրդեր կամ թուրքեր էին:

Հայ գյուղացին, ավանակի փոխարեն ծի կամ ջորի ուներ, մեկ եզան փոխարեն՝ չորսը, որը հնարավորություն էր տալիս ցանքը և ցելը կատարել չորս եզ լծած չուրունցով:

Չուրունց ունեցող գյուղացին արդեն լրիվ իրեն զինված էր համարում ընդարձակ ցանք կատարելու համար: Նա կարողանում էր բոլոր դաշտերը հանգիստ հերկել ու ցորեն ցանել, վերջ տալով գարուց հաց թխելուն, օգտագործել միայն ցորենից թխած խնկաբույր մետրանոց լավաշ հաց:

---

[46] Աղոթարան, առավոտյան լույսը, որի ծագելու ժամանակ դիմում էին արևածագին՝ աղոթքով (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 1, էջ 51), (***խմբ.***):

Ուժը տեղն եկած գյուղացուն, որն արդեն ուներ 2-4 սեփական եզ, չէին բավարարում լեռնալանջերի վրա գտնվող ցանքատարածությունները, նրան հարկավոր էին ընդարձակ ու խամ վարելահողեր, բարծր բերք ստանալու համար:

ՀՈՒՆՁ

Հունձը հիմնականում կատարում էին ձեռքով: Եթե արտը խիտ էր լինում, բարձր ցողունով, հասկը քաղում էին «խոտհարով» (կիսալուսնաձև, փայտե բռնակով մանգաղ):

Քանի որ գերհասունացման դեպքում գարնանացան գարու հասկերը հեշտությամբ կոտրվում էին, բերքը անկորուստ հավաքելու համար, հունձը կազմակերպում էին մի քանի օր առաջ, օգնում մեկը մյուսին:

Այդ ժամանակ արտատիրոջ լավ օգնականներն էին «դուլ» (այրի) կանայք, որոնք շատ էին բոլոր գյուղերում:

Կապված գարնանացան գարու հնձի հետ՝ Հովսեփ պապիս վերաբերյալ գյուղացիները մի եղելություն էին պատմում.

«Կասի, մի տարե Ուսուփ ապերը շենեն ըռշկին ղուզու արտը, գյուռնը գյորե լալ վարած: Էդ տարեն ալ սաղ գյորե լալ փռնած, դըղնած լալ՝ ծերան կտըրած:

Արտը հնձիլուց մի քանե օր առաչ Ուսուփ ապերը գինիս ա մի քանե դուլ կնանոց «դույուղ» ըրիլիս (տեղյակ պահում), որ օրեշ մարթկանց խոսք վեչ տան, գիրագի օրը գյոն քյոմագ արն, արտը հնձն:

Հուր որ դույուղ արիս, օմեն ալ խոսքն տալիս, որ «մի օրվա բեն ա, հախավ մի բեն չի,", կգյոնք, քյոմագ կարնք», ըսիսն՝ Ուսուփ ապրուն ումիդավ ըրիս (հույս տալիս):

Գիրագի քշանաց շատ շուդավ, Ուսուփ ապերը եր ա կնալիս, հինչ որ պետք ա նի տալիս խուրջունը, դիրիս էշեն երե, գինիս հոնձու հետե եկուղ կնանունցը, մինի մինի կնչիլիս.

– Աղջի Շուղո ել, գիննք արտը, որ սաբինքյան (առավոտյան հովին) հնձնք, վերջացնք:

- Ըմ, Ուսուփ ապեր, ասօր քյուխվենք հացն քընխիլիս, կանչածն, որ գինմ քյոմագ արմ: Պա՞ հաց թխիլը թողմ, թա՝ գյոլիսմ գյորե հնձմ, չէ Ուսուփ ապեր, կարիչմ գյոլ:

– Աի, մըռնի քի նման ումուդը,- ըսիս ա Ուսուփ ապերը, էշը քշիս, գինիս Հուրու կնչիլիս:

Հուրի ալ ըսիս ա.

– Ուսուփ ապեր ասօր դերեն կնգանը խոսքմ տված, գինմ բուրթ գիզմ: Պա՞ դերանց սարին սրահը թողած, գյոմ ըրևեն տակեն, թա՝ գյորեյմ հնձիս, չէ կարիչմ գյոլ:

– Ահ, թաղմ քի նման ալ ումուդը,- ըսիս ա Ուսուփ ապերը, էշը քշիս գինիս Դաստագյուլե կնչիլիս:

Դաստագյուլ ալ ըսիս ա.

– Ուսուփ ապեր, ախր իմ ղորփեր (հորեղբայր) Առաքել ալ ա ասած, որ գինմ գյորեն հնձիլու բյոմագ արմ, որ քի նհետ գյոմ, իմ ղորփեր կխռավի, ինձանե կնղանա, կարիչմ գյոլ:

– Ըմ, քաշկրն տանն քի նման ումուդեն ալ,- ըսիս ա Ուսուփ ապերը, քուռը-փեշման (դատարկածեռն) գալիս իրան բյուլփաքը (ընտանիք) հվաքիս՝ արտը հնձիս»:

Չիհ. երբ թոխուրին փոխարինեց ալաքը, սկսեցին ցանքը կատարել եզներով: Մինչև մարդահասակ հասնող ցորենի ցողունով ընդարձակ արտերը հնարավոր չէր ձեռքով քաղել կամ խոտհնձի համար նախատեսված խոտհարով հնձել:

Տեղացի հնարամիտ վարպետները սկսեցին պատրաստել չիհ՝ կիսալուսնաձև փայտե բռնակով, մանր, խիտ ու սուր ատամներով մանգաղ:

Գյուղացու համար հունձը ամենահրատապ գործն էր, այն աշխատում էին հնարավորինս շուտ և սեղմ ժամկետում ավարտել, բերքը փրկել կորուստներից:

Հունձը սեղմ ժամկետում ավարտելու համար մասնակցում էին ընտանիքի գրեթե բոլոր անդամները՝ սկսած 10-12 տարեկան տղաներից ու աղջիկներից, որոնք գրաստներով խուրձ էին տեղափոխում կալատեղ և մինչև զառամյալ ծերունիները, որոնք հնձվորների համար «կըմ» էին հյուսում, խտետներ հավաքում, մոտեցնում, գրաստներին խրձեր բարձում, երեխաներին ճամփու դնում, հնձվորի համար կժերով սառը ջուր բերում, մածնաբրդոշ պատրաստում և նման այլ գործեր անում:

Տան ավագ կինը մնում էր տանը, զբաղվում տնային աշխատանքով, խուրձ կրող երեխաներին ուղեկցում մինչև կալ, գրաստների վրայի բեռը իջեցնում և հնձվորիների համար ուտելիք ուղարկում:

Հնձվորի կինն էլ ամբողջ օրը չինը ձեռքին, ամուսնու հետ հունձ էր անում:

Եթե արտը հեռու էր գտնվում գյուղից հնձվոր տղամարդիկ երեկոյան տուն չէին գնում, գիշերում էին արտերում, ուշ երեկոյան և վաղ առավոտ-

յան հունճ կատարելու համար շահելով գնալ-գալու ժամանակն ու հանգիստը:

Հնձի ժամանակ, եթե հասկը հնձվորի ծեռքից վայր էր ընկնում, այն չէին վերցնում, համարելով, որ դա «ղսմաք» է, աստծու կամքով պատկանում է վայրի կենդանիներին, թռչուններին կամ այն այրի կանանց ու որբ երեխաներին, որոնք հնձից հետո հասկ էին հավաքում արտերում:

Ղարադաղի հայերի մեջ ավանդական կարգ կար. եթե հնձի ժամանակ չքավոր այրի կին կամ որբ երեխա էր գալիս հասկ հավաքելու, արտատերը նրան նվիրում էր մեկ խտիտ հասկ, եթե ազգական կամ մոտ հարևան էր լինում, տալիս էր մեկ խուրձ, որպեսզի նրանց բարի աղոթքներով ու մաղթանքներով աստծո բարի աչքը իրենց վրա լինի:

Հունճը կատարվում էր հետևյալ կարգով. հնձվորը՝ չոքած, աջ ծեռքով քաղում էր ցողունները, դրանք խփում էր ծնկին, թափ տալիս, մաքրում հողից, ապա բռով մեկ քաղած ցողունները դնում էր ձախ թևին, ամուր սեղմած պահում և շարունակում նման եղանակով քաղել, մինչև որ ծեռքին ցողուններ ավելացնելու տեղ չէր մնում: Ձախ թևին դարսած ցողունի չափն անվանում էին «խըտետ»: 5-6 խըտետ միացնելով, մեկ «խոռհնը» (խուրձ) էին կապում:

Չինով հնձում էին կանգնած դիրքում՝ ցորենի ցողունները 30-50սմ բարձրության վրա, կտրտում, բուռը ցողունով լցվելուց հետո հնձվորը, երկու ցողունով հնձածը փաթաթում էր բութ մատին ու շարունակում հնձել: Նորից որ բուռը լցվում էր, այս անգամ նորից երկու ցողունով՝ բռի ցողուններն ու բութ մատի վրա փաթաթած ցողունը միասին փաթաթում, հասկերով կապ էր գցում, դնում ցած:

Հնձվորը երեկոյան դադարեցնում էր հունճը, արտի ամենաերկար հասկերը ծեռքով քաղում էր արմատից, մի բուռը բաժանում երկու հավասար մասի, հասկերի կողմը ոլորելով, կապ գցում, պարզում գետնին, որին անվանում էին «կըմ»: Կըմի վրա մի քանի խըտետ ցողուն դնելով՝ կապում էին, և այսպես «խոռհնը» պատրաստ էր:

Եթե արտում կըմ պատրաստելու երկար ցողուններ չկային, օգտագործում էին գյուլմսուռի կոչվող թփի նուրբ ու ճկուն ճյուղերը:

ՓՈԽՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Բոլոր արտերը միանգամից չէին հասունանում: Ում արտը, որ շուտ էր հասունանում համաձայնության էր գալիս մյուս հարևանների հետ, որոնք օրվա հաշվարկով, փոխադարձաբար օգնում էին իրար:

Հաճախ հունձը սեղմ ժամկետում ավարտելու նպատակով, հնձվորներ էին վարձում հետևյալ պայմաններով.

Արտատերը հնձվորին տալիս էր օրվա սննդամթերքը և վճարում մեկ օրվա համար 1-2 ղռան դրամ կամ մեկ գուշ ցորեն: Արտատերն ու հնձվորը համաձայնության էին գալիս նաև վարձատրումը կատարել խրձով (10 խրձից մեկը):

Հայերի մոտ հունձ կատարելը շատ ծեռնտու էր Արաքսպար գավառակի քրդերի համար, որոնք ամռան շոգից փախչելով շահավետ աշխատանք էին կատարում զովասուն տարածքներում: Շահավետ էր նաև լեռնային գոտու թուրքերի համար, որոնց մոտ հունձը ավելի ուշ էր սկսվում:

Մաջի. Նշանակում էր համահամայնքային հունձ: Մաջի կարգով հունձը ընդունված էր Ղարադաղի բոլոր հայաբնակ գյուղերում:

Մաջին կատարվում էր հետևյալ կարգով. ընդարձակ վարելահող կամ նույն տարածքում մի քանի արտ ունեցող գյուղացիները, բերքը անկորուստ հավաքելու համար, հնձից մի քանի օր առաջ հայտարարում էին այն սկսելու օրն ու հրավիրում մաջի կատարելու:

Նման խնդրանքը համագյուղացիները միշտ հարգում էին և տալիս իրենց համաձայնությունը:

Մաջի կատարողը, եթե հարևան հայաբնակ գյուղերում ազգականներ, բարեկամներ, իսկ թրքաբնակ գյուղերում մոտիկ ծանոթ «քիրվա» ուներ, հրավիրում էր նաև նրանց, նախապատրաստվելով սննդով ապահովել աշխատողներին:

Վաղ առավոտյան, լուսաբացին գյուղի երաժիշտները մաջի հրավիրողի դռանը զուռնա-դհոլով, «սըհարի» նվագելով՝ ազդարարում էին հնձի մեկնելը: Հնձվորները արտատիրոջ տանը չէին հավաքվում, այլ վերցնում էին անհրաժեշտ պարագաներն ու խուրձ կրող պատանու հետ գնում արտ:

Մաջու տերն այդ օրը մեկ եզ, կով, մի քանի այծ կամ ոչխար էր մորթում աշխատողներին հյուրասիրելու համար: Արտում զուռնաչիները նվագում էին կոխի եղանակ, եռանդի բերում հնձվորներին: Նախապես աշխատանքի բաժանում էր կատարվում, թե ովքեր պետք է հնձեին, խուրձ կապեին, գրաստներին բարձեին, զանազան աշխատանք կատարեին՝ հնձվորներին սառը ջուր ու մածնաթան հասցնեին:

Արտում զուռնա-դհոլի ձայնը հնչելուն պես, հնձվորները, համաձայնության գալով բաժանվում էին խմբերի, բռնում իրենց «վարը» և մրցակցության մեջ մտնում, թե ովքեր կարող են արագ հնձել, ավարտել և

մրցակցի «վարի» գլուխը հնձել: Նման թեժ մրցություն էր ծավալվում տարբեր գյուղերից եկած հնձվոր երիտասարդների միջև, որոնք առանձին խմբերի բաժանված մրցում էին, աշխատելով ցուցադրել իրենց շնորհքը:

Աշխատանքի ժամանակ կատակներ էին անում նաև խուրձ կապողները: Եթե իրենց շարքերի հնձվորները չէին հասցնում խտետներ տալ խուրձը լրացնելու համար, բռնում էին հնձվորներից մեկին, դնում անավարտ խրծի վրա, կըմով կապում ու արտի հնձած տարածքով գլորում, ընդհանուր ծիծաղ պատճառելով հավաքվածներին:

Ջուռնա-դհոլի կոխի նվագի տակ, մեկ էլ էն էիր տեսնում, որ մի տարեց հնձվոր կոխի էր հրավիրում մի երիտասարդի, մի քանի խաբուսիկ ցատկերից հետո գրկում երիտասարդին ու գլորվում արտի հնձված տարածքով՝ նմանապես ծիծաղ պատճառում ամբոխին:

Մրցության մեջ էին մտնում նաև խուրձ կրող 10-14 տարեկան տղաներն ու աղջիկները՝ թե ով շուտ բարձած գրաստով խուրձը կտեղափոխի կալ և շուտ կվերադառնա: Միաժամանակ խուրձ կրողները կալից վերադառնալիս մրցում էին մտնում, թե ով գրաստը լավ «խըռեք տալ» (վազեցնել) գիտի:

Կեսօրվա կարճատև դադարի ժամանակ բոլորը միասին ճաշում էին ու վերսկսում աշխատանքը:

Մաջին կազմակերպում էին այնպես, որ աշխատանքն ավարտեին արևամուտից առաջ: Այլ գյուղերից հրավիրվածներն ու համագյուղացի տարեց մարդիկ վերադառնում էին իրենց տները, իսկ երիտասարդները, ավագների խորհրդով հնձում էին հիվանդների, այրիների ու չքավորների մոտակայքում գտնվող արտերը, որոնք ժամանակին հունձը կատարելու միջոց չունեին:

Հնձվորի վահանը. մարդիկ, որոնք ամեն տարի, հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 20-ը ամեն օր հունձ էին անում, ունեին հմուտ հնձվորի համբավ: Նրանք արտաքուստ և ունեցած շատ պարագաներով տարբերվում էին սովորական հնձվորներից:

Նման հնձվորները՝ ծղոտի կոշտությունից պաշտպանվելու, հասկերի քիստերը հագուստից ներս չներթափանցելու և արտում եղած փշոտ մոլախոտերից զերծ մնալու, հնձի ժամանակ չքրտնելու և արևահարությունից պաշտպանվելու համար, գլխներին դնում էին բարակ, սպիտակ կտորից կարած թասակ:

Քիստերը մարմնին չկպչելու և ծղոտից հագուստը չմաշվելու համար ոչխարի նուրբ մորթուց պատրաստած գոգնոց էին կապում, որը Ղարադաղի խոսվածքում հայտնի էր «յախա» կամ «փարթուկ» ձևերով: Գոգնոցը ծածկում էր հնձվորի կուրծքն ու որովայնը և իջնում ծնկներից ներքև. այն կապում էին վզից և գոտկատեղից:

Ղարադաղում կոշիկ չկար, բոլորը հագնում էին վայրի խոզի կամ եզան կաշվից գործած տրեխներ: Ոտքերին, ամառ թե ձմեռ հագնում էին բրդից գործած գուլպաներ: Հնձվորները ոտքերը քիստերից ու փշերից ապահովելու համար մինչև ծնկները հասնող ճիտքեր էին հագնում՝ պատրաստած ոչխարի մորթուց:

Ձախ ձեռքին, որը միշտ մնում էր հնձած ծղոտի ծանրության տակ, մինչև բազուկը ոչխարի փափուկ մորթուց ճիտք էին հագցնում:

Հնձվորը ծղոտից ավելի մեծ բուռ կազմելու, արագ ու շատ հնձելու, մատները ծղոտի կոշտությունից ու փշերից անվտանգ պահելու համար ձախ ձեռքի մատներին հագցնում էր փայտից պատրաստած գեղեցիկ մատնոցներ: Շատերի համար դժվար էր ընտելանալ փայտե մատնոցով հնձելուն, այդ իսկ պատճառով ոչխարի մորթուց ձեռնոց էին հագնում, որը ծածկում էր միայն ձախ ձեռքի երեսի մասը:

Օրվա աշխատանքը ավարտելուց հետո հնձվորն իր բոլոր պարագաները հավաքում, կապում էր մորթե գոգնոցի մեջ: Այն կոչվում էր «վահան», քանի որ պաշտպանում էր ծղոտից ու հասկի քիստերից:

Ղարադաղցիները հնձվորի մասին առած ունեին. «Հինչ հնձվոր, որ պոռտեն մաչեն ցորեն, գյորե վեչ կնենչի»:

Խրձերի տեղափոխումը. սիջիմնը 16-20մ երկարությամբ, «ղազիլից» (այծի մազ) հյուսած երկար ու հաստ, շատ ամուր պարան էր:

Սիջիմնը տանում էին արտ, գրաստը կանգնեցնում խրձերի մոտ և բարձում: Համետի (փալան) վերևի մասի կենտրոնում, «չվանի»[47] վրա կապում էին սիջիմնի ծայրը, տալով օղակի ձև: Խրձերը հերթով մտցնում էին օղակի մեջ: Ըստ ավանդական կարգի, գրաստին բարձում էին վեց խուրձ՝ հասկերը դեպի ներքև: Հազվադեպ, եթե գրաստը ջահել էր կամ արտը գտնվում էր գյուղին մոտ, ավելացնում էին ևս մեկը: Բեռը կապում էին սիջիմնով, այն անցկացնելով գրաստի փորի տակով: Եթե խուրձ տեղափոխող պատանու ուժը ներում էր, նա էր խուրձն իջեցնում կալում, իսկ եթե անչափահաս էր, մեկը գնում էր օգնելու:

[47] Չվան՝ համետը և բեռը գրաստի մեջքին կապող պարան:

Խուրձ տեղափոխելն ուներ մի անխուսափելի փորձանք. գրաստին խուրձ բարձողը, որքան էլ հմուտ լիներ, դրանց ծանրության տարբերության պատճառով, ճանապարհին ծռվում էին կենդանու մի կողմի վրա և բեռը թափվելու վտանգ առաջացնում: Եթե խուրձ կրողի ուժը ներում էր թեթև կողմում մի քարդնելով, վերացնում էր վտանգը, ճշտում բեռի հավասարակշռությունը: Հակառակ դեպքում նա օգնության էր կանչում մոտակայքում գտնվող որևէ մարդու:

Կալում խրձերը բացում էին, «ղոլի» կոչվող գործիքով հասկերին հարվածելով, հատիկն անջատում ծղոտից:

Դարմանը «մուղանով» (մղել բառից), որը 60-80սմ երկարությամբ, կենտրոնի անցքում փայտե ծող ամրացրած գործիք էր, հրում, լցնում էին մարագը:

Աշան. հացահատիկի կալսմանը Ղարադաղի հայերն ասում էին աշան. «Աս օր մընք ցորեննք աշան ըրիլիս»:

Կալսումը կատարում էին հետևյալ հերթականությամբ՝ քոշնան, ոսպ, կտավատ, սիսեռ, կորեկ, գարի և ցորեն:

Ընդեղենները ավելի շուտ էին կալսում այն պատճառով, որ ամեն մի տեսակը մեկ օր էր տևում, կարող էին փչանալ անգամ չնչին անձրևներից ու կալի շրջակայքում ավելորդ տեղ զբաղեցնել:

Կալսմանը մասնակցում էին ընտանիքի գրեթե բոլոր անդամները, սկսած 8-10 տարեկան երեխաներից, որոնք կիզիչ արևի տակ ամբողջ օրը կամ էին քշում, մինչև ծերունիներն ու պառավ կանայք, որոնց կարիքն էլ շատ մեծ էր բազմազան աշխատանքների կազմակերպման համար:

Ղարադաղցիները ձգտում էին կալսման աշխատանքները ավարտել մինչև սեպտեմբերի 10-ը, քանի դեռ անձրևները չէին սկսվել:

Կալսման ժամանակ կալում օգտագործվող զանազան ու բազմազան գործիքներն էին.

Կամնը (կամ). պատրաստում էին տեղի վարպետները ընկուզենու, հացենու կամ տանձենու բնափայտից: Այն ունենում էր 1,5մ երկարություն, մոտ 1մ լայնություն և 4-5սմ հաստություն: Կամը լինում էր միակտոր կամ երկու փայտից: Երկու կտոր լինելու դեպքում, դրանք երեք տեղից փայտե սեպերով միացնում էին:

Կամի առջևի մասին դեպի վերև տաշում՝ թեքություն էին տալիս, որպեսզի, ինչպես ղարադաղցիք էին ասում. «Քեթը բեցուր մնա, նի վեչ խրի քյուլաշեն տակը, խնգարի»:

Կամի թեք տեղից ամբողջ երկարությամբ տաշած փայտե գոտի էր դրված, որի կենտրոնի անցքում կապվում էր գյուլմասուրի նուրբ շիվերից հյուսած կլոր օղակը:

Կամի վերին մակերեսը հարթ էր: Կամի տակ փորված բազմաթիվ մանր փոսիկներում հագցնում էին կայծքարի սուր կտորներ և գրաստների կոտրտված պայտեր, ծղոտը կտրտելու համար:

Կամին մոտ 2մ երկար երկաթե շղթայով (ժանջիլ) լծում էին երկու եզ:

14-15 տարեկան մի տղա, որին անվանում էին հոտաղ, նստում էր առջևի լծի կենտրոնում, ոտքերը պատ գցում շղթայի վրա ու մշուկճպատով քշում եզներին:

Ի տարբերություն վարուցանի լծի, որն ուներ 3մ երկարություն, կամի լուծը կարճ էր՝ 2մ, պատրաստվում էր թեթև ու ամուր փայտից:

Նախքան կալսումը եզներին նալում էին (պայտում), որն ուներ երկու նպատակ. նախ՝ ամբողջ օրը ծղոտի մեջ պտտվող եզների «դռնաղները» (կճղակ) ծղոտը չէր կարող մաշել և երկրորդ, պայտած կճղակները օժանդակում էին հասկերի կտրտմանը:

Կըռ (կեռ). 1,5մ երկարությամբ փայտե գործիք էր, որի կեռ գլուխը հագնում էր կամի վրայի օղին, իսկ մյուս, երկճյուղ ծայրը միանում էր լծին:

Կալում սփռված հասկի վրա կամը, որի վրա մի երեխա էր կանգնում, ամբողջ օրը պտտվում էր:

Մի մարդ փռած ծղոտի մեջ կանգնած, գգգգում էր այն, հավասարեցնում դոլիով ու եղանով:

Ղարադաղում ժողովրդական մի խոսք կար. «Աշան արող եզնը ըշանեն նանե կոտի», այսինքն՝ առաջինը աշխատողը պետք է օգտվի ստեղծված բարիքից:

Կալսման ժամանակ եզները ուտում էին փռած ծղոտից ու հասկերից, որը չէր արգելվում, քանի որ բերքը առաջին հերթին լծկանի աշխատանքի պտուղն էր, նրա քրտինքի վաստակը: Եզներ կային, որ ամբողջ օրը ագահաբար հասկ էին ուտում ու մեծ քանակությամբ հացահատիկ փչացնում: Դա կանխելու համար նուրբ ճյուղերից հյուսած փոքրիկ կողովներ էին հագցնում կենդանու դնչին և նուրբ պարանով կապում եղջյուրներից:

Գյուղացիները մեծ ուշադրություն էին դարձնում կալի մաքրությանը: Ամբողջ օրը կալում պտտվող եզները մի քանի անգամ թրքում էին: Փայտից պատրաստում էին կողովներ, որոնց անվանում էին «թրեքտոն»: Կա-

մը քշող պատանին, ծղոտն ու հացահատիկը չկեղտոտվելու համար, միշտ պատրաստ պահում էր այն և դնում թրիքի տակ:

Ստացած մաքուր հացահատիկը լցնում էին ոչխարի կամ այծի կաշվից պատրաստած պարկերի մեջ ու տեղափոխում տուն:

Ղարադաղցի հայերը բերքը պահում էին քնդուկներում:



Գյուղատնտեսական գործիքներ

Ղոլի. փայտից պատրաստված, 2մ երկարությամբ գործիք էր, մի ծայրը բաժանված երկու կամ երեք ճյուղերի: Ղոլին օգտագործում էին արտում մնացած խրծերը տեղաշարժ անելու և տեղափոխելու համար:

Դրանք խստիվ արգելված էին ձեռքով անել, քանի որ հասկերին սիրահար մկները մտնում էին խրծերի տակ, իսկ օձերը դարանակալում էին նրանց: Խրծերի տեղաշարժելը ղոլիով մարդուն ապահովում էր օձի խայթոցից:

Խրծերը կալում տարածելուց ու փռելուց հետո, հասկերը սկսում էին ծեծել ղոլիով, քանի դեռ «քյուլաշը» (ցողուն) չէր փշրվել ու մանրացել:

Քիմիլի (քամելի). մարդու ձեռքի նման՝ հինգ մատերից բաղկացած փայտե գործիք էր, որը պատրաստում էին տեղի վարպետները: Երբ կալում ցողունները ջարդվում ու մանրանում էին, ղոլին անզոր էր լինում դրանք շրջել: Մանրացած ցողունը շրջում էին քիմիլիով. «Աշանը հալա դըռած, պերք ա քիմիլավ եղնք»:

Մանրացած ծղոտը հավաքում էին կալի մի կողմում ու թեղում: Այն արդեն պատրաստ էր քամու միջոցով քամելու, հատիկն ու դարմանը բաժանելու համար, որը կատարվում էր միայն եղանի միջոցով:

Թե (թի). պատրաստում էին ղարադաղցի հայ վարպետները: Զարմանալի է, որ հաստ ծառի բունը մեջտեղից ճղելով (տապակ), պատրաստում էին ընդամենը երկու թիակ, այն դեպքում, երբ նույն փայտից կարելի էր ստանալ տասնյակ գործիքներ: Կոթն ու հարթակը մեկ կտորից էր, մոտ 2մ երկարությամբ:

Այն օգտագործվում էր կալի հատակին կպած կալսված հասկերը շուռ տալու համար:

Թիակը պետք էր գալիս նաև ծղոտը հավաքելու, թեղ դնելու, մղեղը հեռացնելու, պարկերի ու ջվալների մեջ լցնելու համար:

Թոխուր. շատ նման էր քլունգին, սակայն նրա մի կողմը կարճ էր ու տափակ, ուներ սուր բերան, որը կացնի դեր էր կատարում փորելու ժամանակ՝ թփեր, մոշ ու մոլախոտեր արմատահան անելու համար:

Թոխուրի մյուս կողմն ուներ մոտ 20սմ երկարություն: Անցքի մոտ, որտեղ հագցնում էին 1մ երկարությամբ փայտե բռնակը, բարակ էր լինում, հետո, աստիճանաբար լայնանում էր, ունենում 10սմ լայնությամբ սուր բերան՝ հողը փորելու, փխրեցնելու և ցանած սերմը ծածկելու համար:

Հայ շինականի համար թոխուրը հանդես էր գալիս որպես գութան և արոր: Այսքանով հասկանալի է դառնում, որ մարդը՝ միայն ֆիզիկական ուժով, որքան հող կարող էր փորել, ցանք կատարել, որ կարողանար հասցնել ընտանիքի տարվա պահանջվող հացը, զանազան կարիքները, ծանր հարկերն ու տուրքը:

Նման անսպառ կարիքները հոգալու համար, տղամարդու կողքին, թոխուրը ձեռքին, ցանք կատարելու ժամանակ ղարադաղցի հայ կինն էր:

Քանի որ թոխուրով հնարավոր չէր մշակել հարթավայրային ծանր հողերը, ցանքի համար ընտրում էին լեռնալանջերի փխրուն սևահողերը:

Նման պայմաններում հայ շինականը չէր կարող աշնանացան ցորեն ցանել, հիմնականում ցանում էին գարնանացան հացահատիկ, որն էլ հացի հիմնական պաշարն էր: Անապահով տնտեսական և քաղաքական վիճակը հանգեցրել էր այն բանին, որ շատ դեպքերում ղարադաղցի հայը ստիպված էր հրաժարվել ավանդական լավաշից, հիմնականում տարածված էր բոմբի հացատեսակը:

Չնայած դրան ղարադաղցիները հմուտ երկրագործներ էին, նույնիսկ թոխուրով կարողանում էին հոգալ իրենց տնտեսական կարիքները: Լու-

սահոգի հայրս նույնիսկ առավելություն էր վերագրում թոխուրին, ասելով. «Օղուլ, ղորթ ա, վար արուղ թոխուրեն փոխալ ա ալաթը, համա դե թոխրը ռանչպարի հետե իրան տեղը մանցալ ա թոխր: Առանց թոխուրեն, ըլթավ արած վարը, ցանքը նախշուտ չի ինիս: Թոխուրը ըլաթեն հետեն վերացրիս ա էն օմեն բենը, որը կրիս չի անի ալաթը: Թոխուրը վերացրիս ա արտմը իլած «ալաղնեն» (մոլախոտ): Ալաթը կրիս չի վարի արտեն մաչեն ծառերեն, քարերեն կողքարկը, պդահած ըլաթեն թողած խարակնեն: Համա դե, էդ օմենը վերացրիս ա թոխրը: Թոխրն ա, որ թկիս, վերացրիս ա ցանքեն մաչեն ճումբուրը, բեց մանցած սըրմրը ծսկիլիս ա:

Ղորթ ա, ալաթը բիրիս ա արտեն բերքեն ծնունդը, թոխրն ալ՝ կդրիս ա վարեն կնոնքը, նխշուտցրիս արտը օմեն հինչավ»:

Ծխավիլ կամ ցխավիլ. ցախավելը կալսման ժամանակ օգտագործում էին կալի շրջակայքը մաքրելու, դուրս մնացած հասկերը ներս գցելու և թեղելու ժամանակ կալը մաքրելու համար:

Ավիլ. ավելով մաքրում էին կալը, հավաքում ցրված հացահատիկը և այլն:

Մղան. հայերեն մղել բառից է: 1-1,5սմ հաստությամբ, 30սմ երկարությամբ և 30սմ լայնությամբ տախտակի կտոր էր, որի կենտրոնում անցք էր բացված: Այնտեղ ամրացվում էր 2մ երկարությամբ փայտե ծող: Կալսված զանգվածը մղանով հրում՝ թեղ էին անում քամելու համար:

Զոլա. 3մ երկարությամբ փայտե ծող էր, երկու հատ դնում են կալի մեջ, թեղի առջևում՝ 2մ հեռավորության վրա, որպեսզի սահմանազատեին թեղն ու մաքրված հատիկը:

Եղանով թեղը քամելուց, հացահատիկն ու դարմանը անջատելուց հետո մեկ անգամ ևս քամում էին թիակով, որ ցորենի մեջ մնացած մղեղը նույնպես անջատվեր: Թեղը քամելուց հետո մղանով դարմանը հրում, լցնում էին մարագը:

Շըտարար. կաշվե փոկերից գործված խոշոր անցքերով մաղ էր: Դրանով հացահատիկի շեղջը մաղում էին, հեռացնում հասկերի մնացորդներն ու ցողունների կտորները:

Ըսղգիր. մեղրաբլիթի վեցանկյուն բջիջների նման, ասեղնագործ հյուսվածքով, մաղ էր:

Հատիկը երկրորդ անգամ մաղում էին ըսղգրով, անջատելով ցորենի «պաճը», պատյանից դուրս չեկած մասը:

Խախալ. խիտ ու մանր անցքերով մաղ էր: Հատիկը երրորդ անգամ մաղում էին խախալով, որի ժամանակ հատիկը մնում էր մաղում, իսկ հողի մնացորդներն ու զանազան խոտաբույսերի սերմերը թափվում էին:

Երբ հացահատիկը կալսում էին, գյուղատիրոջ ներկայացուցիչները՝ «դարղաները», խախալով չափում էին այն, յոթ չափ տալիս գյուղացուն, մեկ չափ վերցնում գյուղատիրոջ համար:

Եթե գյուղացին մեկ օրում չէր կարողանում օրվա կալսած բերքը քամել ու մաքրել, ուշ երեկոյան դարղան ցորենի շեղջը փայտե տախտակից պատրաստած մեծ կնիքով, չորս կողմից կնքում էր: Կնիքը կոչվում էր «դաջ»:

Շեղջը դաջվելու դեպքում գյուղացու գործը ծանրանում էր. նա ստիպված գիշերը մնում էր կալում ու արթուն հսկում, որպեսզի շեղջի դաջվածքը անխաթար մնա:

Գյուղացին իրավունք չուներ մոտենալ շեղջին, մինչև հաջորդ առավոտ դարղան չստուգեր դաջի առկայությունը:

Ըշուհս ցիլ. գյուղացիներն ստուգում էին հնձած արտերում մնացած 30-40սմ բարձրությամբ ցողունները, եթե մաքուր էին ու մոլախոտերով վարակված չէին, աշնան ցել էին կատարում: Ցողունը թողնում էին հողի տակ, որը ծմռանը փտելով պարարտացնում էր այն: Եթե արտը վարակված էր մոլախոտերով, ծղոտը այրում էին, մոխրով հողը պարարտացնում և ցրտահերկ անում:

Մարդիկ մոտավոր ճշտությամբ հաշվարկում էին իրենց ունեցած անասունների գլխաքանակը և կուտակած անասնակերի չափը: Եթե գտնում էին, որ կերը չի բավականացնի, հնձված արտերի ցողունները «քյալանթայով» (գերանդի) հնձում էին, կալսում ու վերածում դարմանի:

Հաջորդ տարվա վաղ գարնանը, գարնանացանն ավարտելուց հետո, մինչև խոտհնձի սկսվելը, աշնանացանի համար նախատեսված հողերը հերկում էին (ցելում):

Փարշում. խոտհունձը ավարտելուց հետո, նախքան հացահատիկի բերքահավաքը, գարնանը ցելած արտերը նորից հերկում էին: Ամռանը կատարած կրկնահերկին (ցել) անվանում էին «փարշում»:

Արտի փարշումն ուներ երկու նպատակ. նախ վերացնում էր գարնան ցելից հետո աճած մոլախոտերը, և երկրորդ՝ փխրուն հողը ջերմություն ավելի շատ էր կլանում:

Սերմացու. ղարադաղցի հայ գյուղացին, որպես բերքի որակի և քանակի կարևոր գործոն, մեծ տեղ էր տալիս սերմացուի որակին:

Սերմացուն ընտրում էին այնպիսի արտերից, որոնցում մոլախոտեր չկային, և ստացված բերքի հատիկները խոշոր էին և ընտիր:

Ընտիր ու մաքուր սերմացու ստանալու համար շատ ռանչպար մարդիկ սերմացուն «կորտում», նոր սերմացու էին բռնում:

Դա կատարում էին հետևյալ կարգով. կալի մոտ, ծածկի տակ մեծ կողովներ էին դնում: Հատիկը կալսելու ժամանակ ընտանիքից մեկ կամ երկու հոգի կողովների մոտ սփռոցներ էին փռում ու դրանց վրա խրծեր շարում: Խրծից հանում էին ամենախոշոր ու հասուն հասկերը, ապա մկրատով կտրում՝ առանձնացնում դրանց միջին մասը: Քանի որ հասկի ծայրամասերում հատիկները մանր են լինում, դրանք խառնում էին կալսվող ցողուններին: Կտրտած հասկերի առողջ մասը կալում լցնում էին կարպետների վրա, ղոլիներով ծեծում, հատիկներն անջատում, մաքրում ու պահում որպես սերմացու:

Հաճախ էր պատահում, որ տարբեր հողերում սերմը փոխվում էր:

Ցորենի այն հասկերը, որոնք նմանվում էին իրենց նախնադարյան տեսակին, ղարադաղցիները «շիլ-շիլ» էին անվանում: Դրանք սովորական ցողուններից բարձր էին լինում, ունեին մանր ու բարակ հատիկներ:

Խանագահ գյուղից հյուսիս գտնվող Դրնգու դաշտը հարուստ էր կվարցով, հողը բաց կապույտ գույնի էր: Այդ վարելահողում որքան էլ զտված, ընտիր ու մաքուր ցորեն ցանեին, դարձյալ բերքի 20% շիլ էր լինում: Հայրս դա բացատրում էր այսպես. «Դա հողի բնական հատկությունն է: Հողը եթե կամենա, շիլը ազնիվ ցորենի կվերափոխվի և հակառակը, ազնիվ ցորենի հատիկները՝ շիլի»:

Բռուդուղը հաճարի անբաժանելի ընկերն էր, հավատարիմ դրկիցը, ըստ էության՝ հաճարի նախահայրը: Սակայն ո՛չ սերմերով, ո՛չ ցողունով բոլորովին նման չէր հաճարին: Ինչպես շիլը ցորենի նկատմամբ, այնպես էլ բռուդուղը՝ հաճարի, բարձրացողուն էր, փարթամ և հասունանում էր հաճարի հետ:

Հնձելու ժամանակ հաճարից բռիդուղը առանձնացնելը դժվար էր: Հաճարի խրծերը կալ տեղափոխելուց հետո բռիդուղի ցողունները առանձնացնում էին:

Բռիդուղը համարվում էր փափուկ ու սննդարար անասնակեր:

Հաճախ գյուղամերձ այն հողակտորներում, որոնք նախատեսված էին բանջարաբոստանային կուլտուրաների համար, երկու բերք ստանալու նպատակով բռուդուղ կամ գարնանացան գարի էին ցանում: Դրանց

փարթամ աճած ցանքը չհասունացած վիճակում հնձում էին, չորացնում ու խրձեր կապում: Կանաչ զանգվածն անվանում էին «խասիլ»:

1939թ. գարնանը մեր ունեցած գյուղամերձ մի հողակտորում հայրս որոշեց բռիդուղ ցանել ու խասիլ անել: Ի զարմանս բոլորի, միայն հաճար աճեց, ինչպես ասում են. «Դեղու հետե մի թաք բիռիդուղ կարիչս լալ ճարի»:

Ըղվսհագի. կորեկին ուղեկցող մոլախոտ էր: Որքան մաքուր ու ընտիր սերմ ցանեիր, դարձյալ կտեսնեիր, որ ըղվսհագին փարթամ ու հպարտ, բարձր ցողունով կանգնած է կորեկի արտերում: Երևի նա էլ կորեկի նախահայրն է եղել: Շատ նման էր աղվեսի պոչի:

Երբեմն այն առանձին ցանում էին որպես անասնակեր. քաղում էին դեռ չհասունացած, կանաչ վիճակում, չորացնում ու խրձեր կապում: Նրա զանգվածն անվանում էին «բալիմնը»:

Ալաք (արոր). Ղարադաղում կար երկու տեսակ արոր. «կըռ ալաք»՝ պատրաստված ամբողջական, միակտոր կեռ փայտից և «ըմնը ալաք»՝ երկու կտորից, որն անվանում էին նաև «չխմալաք» (թուրքերեն չխմա՝ հանովի) բառից:



1 ԱԼԱՔ
2 ԽՈՓ
3 ՄԱՂ
4 ՄԱԽԱՄ
5 ՀՈՒՌ
6 ՄԱԱՍԱՆ
7 ԼՈՒՏ
8 ՍՄԱԼՔԱՊ
9 ՍՄԲՈՏԱՆ

ԳՈՐԾ Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԵՐԵՎԱՆ - 1983թ.

Արորը հողը վարելու փայտե գործիք էր:

Ալաքի վերևի մասն անվանում էին «ամնը», իսկ ներքևի մասը՝ «կոտտան»:

Վերևի մասը երեք անգամ երկար էր ներքևի մասից: Ծայրամասից մոտ 10սմ ներս ուներ երկու անցք, որտեղ ամրացվում էր երկաթե խոփը:

Երկաթե խոփից բացի, ալաթի բոլոր մասերն ու գործածվող պարագաները պատրաստում էին շատ ամուր փայտից:

Արորները և նրա հետ կցվող ու գործածվող բոլոր սարքերը պատրաստում էին տեղացի վարպետները:

Ալաթի հիմնական մասերն էին.

Մաջ (մաճ). 60-70սմ երկարությամբ փայտե ծող էր, որն ամրացվում էր արորի ետևի մասում: Մաճն ուներ 10-15սմ երկարությամբ երկու ուղղահայաց բռնակ, որոնցով մաճկալը կարգավորում էր «ծրեն» (ակոս) ուղիղ ընթացքը:

Մասան. կեռ ու նուրբ փայտե գործիք էր: Ետևի կողմում ուներ երկու անցք՝ արորին միացնելու համար, իսկ առջևի մասում՝ երեք անցք՝ լծին միացնելու համար: Մասանի երեք անցքերը առանձին նշանակություն ունեին: Եթե լուծը միացնում էին առաջինից, ակոսը մակերեսային էր լինում, միջինի դեպքում վարը ընթանում էր միջին խորությամբ, իսկ վերջինի դեպքում՝ ակոսը խորն էր լինում:

Լուծ. ուներ մոտ 3մ երկարություն, ծայրերին երկուական անցք:

Սմափադ կամ սամի. լծի վրա լինում էր չորսը: Անց էին կացնում լծի անցքերից՝ այն եզների վզին կապելու համար: Սմափադները պատրաստում էին ամուր փայտատեսակներից՝ կաղնի, սզնի և բռնչենի: Դրանք կրակի վրա տաքացնում էին, կիսալուսնի ձև տալիս: Սմափադի վերին մասը երկճյուղ էր լինում՝ լծի անցքից դուրս չգալու համար: Ներքևի մասում կլոր կտրվածք էին անում՝ պարանը կապելու համար:

Սմբոտան. այծի մազից գործած պարան էր, որով սամիները եզան վզի տակ կապում էին:

Մախառ. 16-20սմ երկարությամբ փայտե սեպեր էին, որոնք արորը միացնում էին մասանի և լծի հետ:

Հոռ. պատրաստում էին կաղնու կամ գյուլմասրի մինչև 1,5մ երկար շիվերից: Այն ճկում էին ու բարակ ծայրին օղակի ձև տալիս: Պատրաստում էին նման չորս օղակ, որոնցից երկուսը հագցնում էին արորի ու մասանի ծայրերին, մախառները անց էին կացնում դրանցով և կապում իրար:

Երրորդ օղը լծի կենտրոնում ամուր հյուսում էին ու մախառի միջոցով մասանը կապում լծի հետ:

Կաքավ. ընտրում էին կաղնու այնպիսի փայտ, որը ճյուղավորվում էր երկու մասի՝ մեկը ուղիղ, իսկ մյուսը՝ աղեղնաձև: Ճյուղերը կտրում էին

15-20սմ երկարությամբ, ապա աղեղնաձև ծյուղը՝ բաժանման հատվածից 3-4սմ վերև, կիսով չափ կտրում, որը ստանում էր զսպանակի հատկություն, դրան անվանում էին «կաքավ»:

Կաքավը շատ մեծ նշանակություն ուներ հողը վարելու ժամանակ: Եթե արորի ու մասանի միացման հատվածը ամուր չէր լինում, շարժվում էր, կաքավը հագցնում էին հոռերի արանքից և դրանց լրացուցիչ ամրություն տալիս: Եթե ցանկանում էին, որ վարը ոչ շատ խոր կատարվի, կաքավը հագցնում էին արորի ու մասանի արանքից, առջևի կողմից: Եթե ցանկանում էին վարը խորը կատարվի, կաքավը հագցնում էին արորի ու մասանի ետևի կողմից՝ դեպի ռանչպարը:

Մշուկճպատ (մշակի ճիպոտ). պատրաստում էին ճապկի թփատեսակի մոտ 1,5մ երկար ու սլացիկ շիվերից: Դրանք շատ ճկուն ու ամուր էին:

Ռանչպարը մշուկճպատով քշում էր եզներին և խոփի բերանը մաքրում հավաքված մոլախոտերից:

Ցանքսերի կնունքը. երբ ցանքը ավարտում էին, հողում շատ արմատահան եղած մոլախոտեր, հատկապես մոշի արմատներ էին մնում:

Երկար պոչերով ծյուղավորված «հաչա» էին կտրում ու դրանցով հավաքում ու դուրս տանում մոլախոտերը:

Մոշի մացառներով ու զանազան մոլախոտերով փակում էին դեպի արտը ձգված արահետներն ու ճանապարհները, որ կենդանիները մուտք չգործեին ու վնաս պատճառեին ցանքսերին: Արտից մոլախոտերի հեռացնելը ցանքատարածությանը տալիս էր գեղեցիկ տեսք, բույսերը աճում էին ազատ ու հավասար, և հունձն էլ կատարվում էր ազատ ու արագ:

Արտերի նման մաքրումը մոլախոտերից, գյուղացիները՝ առանձին ժպիտով, ասում էին. «Վարը կնքալնք, նխշուտցրալ»:

Աղուն. բառը, հավանաբար ծագել է «աղացք» բառից: Ղարադաղցիք ասում էին. «Ցորենը աղուն արնք, որ տաննք ջեղացը աղանք», այսիքն՝ աղալու ենթակա առանձնացրած ցորենը «աղունենք» (նախապատրաստենք) ջրաղաց տանելու, աղալու համար:

Հացահատիկը կալսելուց երկու օր անց առանձնացնում էին աշնանացանի սերմացուն, ապա մոտավոր ճշտությամբ հաշվարկում, թե որքան հատիկ է հարկավոր ընտանիքին մեկ տարվա համար: Եթե պաշարը բավարարում էր, մի մասը վաճառում էին, իսկ մնացածը բաժանում երկու մասի:

Խանձագահ գյուղի աղբյուրում ցորեն լվանալիս

Ղարադաղի հայերը հացահատիկը աղում էին երկու անգամ: Առաջին մասն աղում էին աշնանացանն ավարտելուց հետո, երբ ազատ ժամանակ էին ունենում և գետերի վարար ջրերը նպաստում էին ջրաղացների հաջող աշխատանքին: Երկրորդ մասն աղում էին գարնանային դաշտային աշխատանքներից առաջ:

Նման մեծաչափ հացահատիկը աղալուն անվանում էին «զումար»: Զումարը նախապես ջաղացպանի մոտ կանոնավոր հերթագրում էին:

Գարնանն աղալու համար նախատեսված հացահատիկը կտուրներին, կարպետների վրա, արևի տակ չորացնում էին ու քնդուկներում պահեստավորում: Աշնան բաժինը լցնում էին ջվալների մեջ, տեղափոխում գյուղի աղբյուրի մոտ: Աղբյուրի զուլալ ու սառը ջրի մեջ մեծ կարպետներ էին փռում, հատիկը լցնում ջրի մեջ: Կարպետները, դրսի կողմից, քարերով եզրավորում էին, տալիս տաշտի ձև, որպեսզի հատիկը չթափվեր:

Նման աշխատանքում փոխօգնության (ավաշ) մեծ կարիք էր զգացվում: Մասնակցում էր մի քանի կին, որոնցից մեկը բոբիկ ոտքերով տրորում էր ջրի մեջ լցրած հացահատիկը ու լվանում: Ջրի երեսն էին բարձրանում աղունի մեջ մնացած պաճը, մղեղը և խոտաբույսերի մնացորդնե-

րը, որոնք ջրհորդանի ծև տված կարպետի ծայրով լցվում էին առջևում դրած ցորնամաղի մեջ: Հավաքված զանգվածն օգտագործում էին հավերին կերակրելու համար:

Հացահատիկը մաքրելուց հետո կարպետի մի եզրը իջեցնում էին, ջուրը դատարկում ու լվացված ցորենը փռում կարպետների վրա: Ջուրը քամվելուց հետո աղունը լցնում էին ջվալների մեջ, տեղափոխում տուն: Այն փռում էին կտուրին արևի տակ, լավ չորացնում ու լցնում ջվալները: Աղալու ենթակա աղունը պատրաստ էր:

Ջումարի աղալը մեկ ընտանիքի համար հաճախ տևում էր 3-5 օր: Ջրաղացապանը ամեն մի ընտանիքի զումարն աղալուց հետո մեկ օր հայտարարում էր «աղնաղազի օր»:

Այն ընտանիքներին, որոնց ալյուրը սպառվել էր, դարանով հնարավորություն էր տրվում 1-2 պարկ ցորեն աղալ, մինչև իրենց հերթը կհասներ:

Նույն ձևով հերթով աղում էին նաև գարնան զումարը՝ հացի վեց ամսվա հերթական պաշարը:

Ըստ ավանդական կարգի՝ ամեն մի զումարից հետո ջրաղացպանը բաղարջ էր թխում:

ԽՈՏՀՈՒՆՋ

Ղարադաղում խոտհունձը սկսվում էր հունիսին և տևում մոտավորապես մեկ ամիս: Խոտհնձին ղարադաղցիներն ասում էին «խոտհար»: Խոտը հարում էին անտառամիջյան բացատներից, ցանքսի համար չօգտագործվող արտատեղերից, «չիմաններից» (խոնավ, հարթ տարածք): Շատ չիմաններ կոչվում էին տոհմի անուններով. Ուհանանց, Դերանց, Ուսուփանց, Շոռմանց և այլն:

Նորաշենցիներ Գասպար և Թովմաս Գրիգորյանները խոտհնձի ժամանակ

Խանագահ գյուղի դիմացի լեռնալանջերի մի հսկա տարածություն, մոտ 100 հեկտար, անվանում էին «էլեն ղորղը» (համայնքի արգելանոց): Նշված տարածքի խոտը համատեղ հարում էր գյուղի ողջ բնակչությունը և հավասար

բաժանում հնձվորների միջև, անկախ ունեցած անասունի գլխաքանակից:

Անասնակերի հայթայթման նպատակով, որոշ գյուղացիներ զանազան տարածքներ, անտառային բացատ կամ հին արտատեղ մաքրում էին մացառներից, քարերից ու մի քանի ճյուղ տնկում: Դա նշան էր, որ տարածքը հայտարարված է խոտի համար արգելանոց:

Համաձայն գոյություն ունեցող հասարակական օրենքի, ոչ ոք արգելված տարածքում անասուն արածեցնելու և խոտը հարելու իրավունք չուներ:

Խոտհարը բոլոր տարածքներում կատարվում էր տարին մեկ անգամ:

Մացառներից ու քարերից ազատ մաքուր տարածքներում խոտը հարում էին գերանդիով, իսկ քարքարոտ, մացառոտ տարածքներում՝ խոտհարով:

Խոտհարի ժամանակ ամենաանհրաժեշտ գործքին էր «գյալբարին»[48] (փոցխ), որը, թուրքերեն բառացիորեն նշանակում է մոտ արի: Դրանով հավաքում էին հնձած խոտը:

Բոլոր տարածքների հարած խոտից խրձեր չէին կապում, բացառությամբ այն բարձրացողուն մոլախոտերի, որոնք չէին ոլորվում և փշրվում էին:

Բոլոր խոտատեսակներից «բուրմա» էին պատրաստում, որը շատ ձեռնտու էր խոտի անկորուստ փոխադրման համար:

Բուրմա թուրքերեն նշանակում է «մի պտտիր»: Չորացած խոտը հավաքելուց հետո մի հոգի վերցնում էր 20-30սմ երկարությամբ կոկիկ ու կլոր փայտ: Մյուս ընկերը չոքում էր հավաքած խոտի մոտ, մի բուռ խոտ ծալում և ափերի մեջ պահում: Մեկը խոտի ծալվածքով անց էր կացնում փայտե ձողիկն ու պտտելով ետ գնում, իսկ մյուսը խոտը կռնատակով ու ձեռքերով համաչափ բաց էր թողնում, մինչև որ ոլորված խոտի զանգվածը ունենար մոտ երեք մետր երկարություն: Խոտը չափավորողը կանգնում էր, ոլորած խոտի ծայրը բռնում ձախ ձեռքով, իսկ աջ ձեռքը տարածում դեպի ոլորված խոտը: Մյուսը գործընկերը խոտը ոլորելով մոտենում էր, փայտիկը հանում ու խոտի ծայրը հանձնում նրան: Վերջինս, զանգվածը երեքտակելով, ստանում էր «8»-ածև մի զանգված:

Զանգվածի անցքերով անց էին կացնում ծայրամասերն ու սեղմում, ձևավորում բուրման:

---

[48] Գյալբարի. խոտ հավաքելու գործիք. մոտ 50-60սմ երկար փայտ է, որին ամրացված են փայտե մատներ: Կենտրոնում ունի երկու մետր երկար փայտե բռնակ:

Խոտհարքից բուրման տեղափոխում էին գրաստենրով, բարձելով 20-30 խուրձ: Խոտի խրձերը պահում էին մարագում, գեղեցիկ դասավորելով սյուների արանքներում:

Ղարադաղում ցանովի խոտաբույսերից տարածված էին միայն յոնջան (առվույտ) և խաշան (կորնգան):

Առվույտը ցանում էին ջրովի հողերում և հնձում 3-4 անգամ:

Կորնգանը ցանում էին խոնավ սևահողերում: Հնձում էին երկու անգամ և թողնում սերմացուի համար:

Առվույտից ու կորնգանից բուրմա չէին պատրաստում, միայն խրձեր էին կապում:

Ղարադաղում սովորություն կար որպես անասնակեր հայթայթել նաև զանազան բույսերի և ծառերի տերևներ ու ճյուղեր:

Աշնանը կաղնու դալար ճյուղերը կտրտում էին, առանց չորացնելու խրձեր կապում և թողնում դաշտում, որոնք չորանում էին կանաչ վիճակում:

Ձմռանը, երբ ազատ ժամանակ էին ունենում, բարձում էին գրաստներին և տեղափոխում գյուղ:

Երկար պարանի վրա հերթականությամբ մի քանի օղեր անելով անց էին կացնում մի քանի ճյուղ տերև և հարմար տեղերում, 0,5մ բարձրության վրա, պարանի ծայրերը կապում սյուներից: Այդպես կերակրում էին այծերին:

Անասնակերի պակասի դեպքում ճյուղերից տերևները զատում, խառնում էին դարմանին:

Այծերի կերի պակասի դեպքում օգտագործում էին «կուրուկ մախու» կոչվող դալար եղևնու այն տեսակը, որի բողբոջները նման են դեղնահատիկ կորեկի սերմերին: Այդ թփի ճյուղերը ձմռանը կտրտում ու կերակրում էին միայն այծերին:

Հերգ. Արևահայաց ու քարքարոտ տարածքներում աճում էր շատ փարթամ մի տեսակ խոտ, որին անվանում էին «հերգ»: Մեր կարծիքով, բառի արմատը հարդն է:

Հերգն ուներ սպիտակ ու նուրբ բարձր ցողուններ՝ մարդու մատներին նմանվող հասկերով: Փարթամ ու ծոխ թուփը շատ սննդարար կեր էր հանդիսանում թե՛ խոշոր և թե՛ մանր եղջերավոր անասունների համար:

Ձմռանը անասնակերի կարիքի դեպքում գյուղացիները մորթուց ձեռնոց էին հագնում ու ձեռքով քաղում այն, կտրտում, խառնում դարմանի հետ ու կերակրում անասուններին:

Հացի տիրվ (հացենու տերև). Ղարադաղի հայերը համոզված էին, որ հացենու կանաչ, փարթամ տերևները հաճելի ու սննդարար կեր են բոլոր կենդանիների համար: Հացենու տերևները մեծ ախորժակով ուտում էին եզները, կովերն ու ոչխարները:

Գյուղացիները, գրեթե աշնանացանի ողջ ընթացքում եզներին կերակրում էին հացենու տերևներով: Հացենին շատ էր տարածված Ղարադաղի անտառներում:

Եզնավոս կամ գյավան. Ղարադաղի շատ տարածքներում աճում էր վոսի երկու տեսակ: Առաջին տեսակին անվանում էին «կրկավոս», քանի որ պիտանի էր միայն կրակ վառելու համար: Կրկավոսը շատ նման էր սովորական ոզնու՝ չոր ու սուր համատարած փշերով. անծանոթը այն կշփոթեր ոզնու հետ:

Գարնանը այդ փշերը կյանք էին առնում, կանաչում, տալիս նուրբ շյուղեր ու մանուշակագույն գեղեցիկ ծաղիկներ, մեղուների համար քաղցր ու հարուստ սնունդ, մանր եղջերավոր անասունների համար հաճելի կեր, իսկ աշնանը նորից վերափոխվում չոր փշերի:

Կրկավոսը գյուղացիները աշնանը հավաքում էին և օգտագործում որպես կրակ վառելու հիանալի «կպչան»:

Ձմռան ցուրտ ու անձրևոտ օրերին, արոտավայրերում դրանք հովիվների համար խարույկի հիանալի վառելիք էին:

Եզնավոսի բուսական յուղով հարուստ արմատն ու ճյուղերը հրաշալի անասնակեր էր և գիրացնում էր կենդանիներին: Կաթնատու կենդանիներին նրանով չէին կերակրում, քանի որ կաթը դառնանում և շաղվում էր:

Այն գյուղացիները, որոնք ձմռանը անասնակերի կարիք էին ունենում, գնում էին դաշտ, փորում՝ բացում էին վոսի արմատները և թոխուրով կտրում: Այն բարձում էին գրաստներին, տանում, սալ քարի վրա կացնի «քյուփով» (ետևի կողմ) ծեծում ու հաստ, սև կեղևը ջարդում: Ձողերի սպիտակ ու բաց դեղնավուն միջուկը կտրտում, բաժան-բաժան էին անում, խառնում դարմանի հետ և կերակրում անասուններին:

Ղարադաղի հայերն ունեին հետևյալ առակը. «Քողցած եզնը բիչալա.

Տարն ասալ ա.

– Չոռ, ցավ, հի՞նչս ուզիլիս.

Եզնը ասալ ա.

– Ցավը, չոռը քի, քարեն նանե փափուկ հի՞նչս տվալ՝ կերաչըմ, սուս արալ»:

Ամեն մի ղարադաղցի հայ ձգտում էր ետ չմնալ հարևաններից, ավելի շատ անասուն ունենալ ու ավելի լավ ապրել:

Առակը դաժան իրականության արտացոլումն էր. երկարատև ձմռան ու գարնանային անխուսափելի անձրևների պատճառով շատ ու շատ տարիներ ունեցել են տխուր վախճան. անասնակերի պակասի պատճառով, բազմաչարչար գյուղացին մեծ կորուստներ էր կրում:

Հայ գյուղացին անասնակեր կուտակելու հարցում մնում էր անհաշվենկատ, որ դաժան ձմռանը չարչարանք, անասնակերի պակասություն չզգար և անասունների գլխաքանակի կորուստ չունենար:

1940թ. մարտ և ապրիլ ամիսներին բոլորի անասնակերը սպառվել էր, տաք գարնանային օրեր եղան, սակայն մայիսի սկզբին եղանակը կտրուկ փոխվեց, ձյունախառն անձրև տեղաց: Մայիսի 10-ին դաշտերը պատվեցին ձյան հաստ շերտով: Գյուղացիները նույնիսկ չէին կարողանում ձյան տակից քաղել գարու հասկակալած ցողունները, որ գոմերում կերակրեին սոված ու հյուծված անասուններին: Շատերը 20-40կմ հեռու գտնվող գյուղերից ջվալներով հարդ էին բերում անասուններին քաղցից փրկելու համար:

Ծղոտածածկ նոր մարագներ ունեցողները քանդում էին դրանք ու կերակրում անասուններին:

Շատերն էլ կաղնու, բոխու և ուռենու ճյուղեր էին կտրտում, լցնում սովյալ անասունների առաջ:

Մայիսի 15-ի առավոտյան սպասվում էր արևոտ ու տաք եղանակ: Նորաշենցիները խոշոր եղջերավոր անասունները տարան գյուղի դիմացի պառակը արոտի: Մարդիկ ոտքերով ու ցախավելներով մաքրում էին խոտի վրայի ձյունը: Կեսօրից հետո եղանակը կտրուկ փոխվեց, ցուրտ ու խոնավ քամի բարձրացավ, և սկսեց ձյունախառն անձրև տեղալ: Անասունները գյուղ բերել չհաջողվեց. դրանք ցրտահարվեցին ու կոտորվեցին:

Նման տխուր փաստեր շատ կարելի է բերել, բայց դրանք հայ շինականի համար խրատ ու դաս չէին լինում: Նորից ամռանը մանգաղով բարձրից կտրում էին հացահատիկի հասկը, իսկ ցողունը թողնում դաշտում: Գյուղացիներն, արդարանալով ասում էին. «Քյուլաշը որ տակնաց հնձնք, աշանը ծանդր կդըռնի, դիժեր հալ կարնի, դիժեր կքամնի: Ըդուր հետե բեցուրնք հնձիս. համ ալ երկար որ հնձնք, խուռհներեն հասկըրը տնիս տեղը, նի կքսվի տափրը, փուչանա»:

Նման արդարացուցիչ եզրակացությունը ճիշտ էր և ընդունելի, բայց հնարավոր էր հունձն ու կալսումը ավարտելուց հետո գերանդիով հնձել արտում մնացած ցողունն ու պահեստավորել:

Պարարտացում. Պարսկաստանում գործարանային արտադրության պարարտանյութեր գոյություն չունեին:

Ղարադաղցիների ավանդական միակ պարարտանյութը «փեհնն» էր (գոմաղբ):

Ղարադաղի հայերը գեղեցիկ սովորություն ունեին՝ գյուղը որքան էլ մեծ լիներ ու տարածված, խստիվ արգելված էր գոմաղբը գյուղամիջում թափել: Գյուղից դուրս մի քանի տեղ «փող» (աղբանոց) էր ընտրված, որտեղ թափում էին նաև գոմաղբը: Խանագահում դրանք մի քանիսն էին՝ «Սիմունց փողը», «Դադոնց փողը», «Ամունց փողը», «Մարդունց փողը» և այլն: Բոլորը պարտավոր էին կենցաղային աղբն ու գոմաղբը թափել նշանակված վայրում:

Աղբը գոմից տեղափոխում էին «ճվրանով» (կողով), թե տղամարդիկ և թե կանայք՝ շալակած:

Այսպիսով աղբանոցներում շատ գոմաղբ էր կուտակվում: Ձմռանը շատ գյուղացիներ օրեր շարունակ պարապ նստում էին տների պատերի տակ՝ գերանների վրա, զրուցում, վիճում, ծիծաղում ու օրն անցկացնում: Մի մասն էլ «փողերում» կուտակված գոմաղբը տեղափոխում էր գյուղամերձ արտերն ու առվույտի դաշտերը ու հավասար փռում:

Գոմաղբը դաշտ էին փոխադրում հետևյալ կարգով. մոտ 1մ բարձր, երկու կլոր կողով էին գործում, որոնց հատակը բացվում էր: Կողովները պարանով կապում էին գրաստի երկու կողմերին, բահով գոմաղբը լցնում դրանց մեջ ու տանում արտ: Կողովների վրա ամրացրած պարանները արձակելով, հատակները բացում էին ու գոմաղբը թափում:

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այգեգործությունը Ղարադաղի հայերի տնտեսական ավանդական ճյուղերից էր: Այգեգործության համար կային բնակլիմայական հիանալի պայմաններ, ամեն տարի ծառերը առատ բերք էին տալիս: Տնտեսության այդ ճյուղը չէր զարգանում, քանի որ բերքը չէր իրացվում, գյուղացին դրամական եկամուտ չէր ստանում:

Ղարադաղի տարածքում մեր կողմից կատարված ոչ լրիվ ուսումնասիրությունից հայտնաբերել ենք հինգ ջրատար առուներ:

Դիզմար գավառակի Օվլի թրքաբնակ գյուղից վերև, համանուն լեռնային գետակից բավականին խոշոր ջրատար առու է փորված անտառի միջով: Գետակի ջուրը թեքելով դեպի արևմուտք, 2-3կմ հեռավորության վրա, հասցրել են «Մար-աղջիկ» բերդը:

Բերդի ավերակ դառնալուց հետո դադրել է նաև ջրատար առվի օգտագործումը:

Ջրվեժի վերևից առու է փորված լեռնալանջով դեպի արևմուտք: Մոտավորապես 0.5կմ հեռու, ընդարձակ, արևաշատ լեռնալանջում դեռ երևում են դաշտամիջյան առուների հետքերը:

Քլալա գյուղից ներքև, Արաքսի ափով մոտավորապես 20-30 մետր երկարությամբ ստորգետնյա ջրատար է փորված, որով Արաքսի ջուրը հոսել է մոտակա ընդարձակ հարթավայրը: Շնորհիվ տարածքում գտնվող թզենիների, դաշտավայրը անվանում էին «Ինջիրան»:

Ջրանցքի բերանը Արաքսի հունից շատ բարձր է: Ներկայումս դժվար թե հնարավոր լինի ջրանցքից օգտնվելը: Ըստ երևույթին հնում Արաքսի հունը բավականին բարձր է եղել:

Արաքսպար հովտի գրեթե կենտրոնական մասում մի հսկա ժայռային զանգված է իջնում Արաքսի ջրերի վրա: Շատ հին ժամանակներում տեղի բնակիչները փորել են ժայռի կուրծքը, ջրատար առու անցկացրել, ոռոգելու համար ստեղծել բավականին ընդարձակ մի տարածություն: Ջրատարը կոչվում էր «Նովբանդի» (ջրատարի կապանք):

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, 1952թ. Վինա գյուղի մի քանի բնակիչներ ու մի քանի թուրքեր ընկերություն էին կազմակերպել, որը շարժիչի միջոցով Արաքսից ջուր է մղել դեպի Նովբանդի հարթավայրը, մշակել բամբակ, ծխախոտ և այլ տեխնիկական կուլտուրաներ:

Խանագահ գյուղը, որն այգեգործության գծով էլ առաջին տեղն էր գրավում գավառում, ուներ մոտ 100-120 հեկտար բազմատեսակ մրգերի այգիներ: Գյուղն արևելքից, հարավից ու արևմուտքից երիզող ջրառատ ձորակների տարածքները, մինչև 6կմ հեռավորությամբ, ամբողջովին պատած էին պտղատու այգիներով:

Ճիշտ պատկերացում տալու համար բերենք հետևյալ փաստը. Աբուլց կեռասի այգուց մինչև Մելիք-Աղաջանյանների կեռասի այգին, որը գտնվում էր Շոռի ձորում, մոտ 6կմ էր: Ողջ տարածքում, գետի ափերին և նրան հարող տասնյակ ձորակներում համատարած իշխում էր կարմիր ազնիվ կեռասենին: Ծառերի ընդհանուր քանակը, հավանաբար անցնում

էր 5000-ից: Շատ կեռասենիների բների հաստությունը անցնում էր մեկ մետրից:

Կեռասի ամենամյա անսպառ բերքից անվճար օգտվում էին նաև հարևան գյուղերի բնակիչները:

Այդ հսկա տարածքից գյուղացին չէր կարողանում նույնիսկ մի քանի ղռանի դրամական եկամուտ ստանալ, որի պատճառով այգեգործությանը կարևորություն չէին տալիս:

Հազվադեպ էր պատահում, որ կողովներով գրաստներին բարձած, կարմիր կեռասը Թավրիզ տանեին վաճառելու, որը տևում էր երեք օր ու գիշեր: Ծիրանը, կեռասը, հոնը և այլ մրգեր ճանապարհին փչանում էին, հնարավոր չէր լինում տեղ հասցնել:

Կեռասենուց հետո Խանագահի տարածքում շատ էին ընկուզենիները, որոնցից շատերն ունեին տասնյակ մետր բարձրություն ու մի քանի մետր հաստ բներ: Նրանց թիվը նույնպես անցնում էր հազարից: Նրանց բերքից օգտվում էին նաև շրջակա գյուղերի բնակիչները:

Ղարադաղի հայերի այգիներում տարածված էին պտղատու հետևյալ ծառատեսակները. թութին (թթենի), կարմուր գյուլասին (կեռասենի), քուռուգյուլասին (սև բալենի), խունձուրին (խնձորենի), տանձին (տանձենի), ծեռնին (ծիրանի), հուլին (դեղձենի), շլորին, դունբուլին (սալորենի), ընկուհուլին (սերկևլենի), ճղպորին (ընկուզենի), թկուղնին (տխլենի, պնդուկենի), հունին (հոնի) և այլն, իսկ ջրառատ ծորակներում՝ վայրի խաղողը, թուզը, նուռը, զկեռը և այլն:

Այգիների, ճամփաների, առուների ու գետակների եզրերին անթիվ-անհամար էին ազնիվ թթենիները, որը թույլ էր տալիս գյուղացիներին զբաղվելու շերամապահությամբ, իսկ վերջին շրջանում՝ նաև օղեթորությամբ:

Գյուղում դրամով միրգ վաճառելը ամոթ էր համարում և ընդունված չէր: Եթե որևէ մրգատեսակ չէին ունենում, բարեկամներն ու հարևանները նրանց բաժին էին ուղարկում:

Գյուղերի նախրապանները, հովիվները և գառնարածները իրավունք ունեին անարգել միրգ ուտել բոլորի այգիներից:

Ղարադաղցի հայերի, թուրքերի ու քրդերի մոտ կարծես օրենք էր՝ այգու մոտով անցնող բոլոր մարդկանց հրավիրել այգի ու հյուրասիրել:

Ղարադաղցիների մոտ կար հետևյալ նախապաշարմունքը. «Մուզդարեն (հովիվ), հղե գենցուղ, եկուղ ղարիբեն «եմիշեղեն» (մրգեղեն) չտվողը, էն դունյա՝ աստուծեն ըռշկին սվիրս կմնա»:

Կար նաև հետևյալ առածը. «Ծառը մի մարթ տնգիս ա, պտողը հարուր մի մարթ ուտիս ա»:

Հյուրասիրվողը պարտավոր էր մի բերան ասել. «Ղորմա ծառ տնգողուն, խողուղ գինձողուն»:

Այգիների թագուհին կարմիր կեռասենին էր, որն ընտիր, խոշոր ու քաղցր պտուղներ ուներ ու ամեն տարի լավ պտղաբերում էր: Կեռասենու մասին գյուղացիները կատակով ասում էին. «Գյուլուսոտենքը ինդիյն կիրմիրած, որ իրռնաց յիշիսս, հանցա կասս՝ կարմուր չալղաթ (ծածկոց) ինս շոռ ածած»:

Չնայած մրգերի նման առատությանը, մուրաբաներ, հյութեր և նման պահածոներ պատրաստելը ընդունված չէր: Միայն թթից էին մուրաբա պատրաստում, որն անվանում էին «ղիդա»:

Հատկապես չքավոր ընտանիքներում թթի չիրը փոխարինում էր շաքարին:

Չմռան պաշար էին հավաքում և օգտվում խնձորից ու տանձից, որոնք կտրտում էին, սփռոցների վրա փռում, արևի տակ չորացնում: Չմռանը լցնում էին գոլ ջրի մեջ, լվանում, փոքր-ինչ փափկելուց հետո՝ ուտում:

«Բադանի» տեսակի սպիտակ խոշոր ու քաղցր թութը ծածկոցների վրա արևի տակ չորացնում, տոպրակների մեջ պահում էին: Այն ծմռանը օգտագործում էին թեյի մեջ, որպես չամիչ:

Ծիրանը չորացնում էին և ծմռանը օգտագործում ջրիկ ճաշերի մեջ որպես քրտնաբեր միջոց: Նույն նպատակով օգտագործում էին նաև սալորի ու հոնի չիրը:

Հոնը և շլորը լավ հասունացած ժամանակ եփում էին պղնձե մեծ կաթսաներում, նոսր կտավով քամում, կորիզն ու կեղևը անջատում: Սառելուց հետո զանգվածը հավասար փռում էին հարթ լայն տախտակների կամ պղնձե սինիների վրա, արևի տակ չորացնում: Այն կոչվում էր «թթու լավաշ»:

Թթու լավաշն օգտագործում էին ջրիկ ճաշերի մեջ որպես քրտնաբերության հիանալի միջոց:

Երեխաների «կուլօռուց» (խոզուկ) հիվանդությունը բուժելու համար հոնի կամ շլորի թթու լավաշը թրջում էին գոլ ջրի մեջ, կապում կոկորդի վրա: Կարճ ժամանակում գեղձերի բորբոքումն անցնում էր:

Մխաշար.[49] այն պատրաստում էին հետևյալ կարգով. ոչ գերհասունացած հոնի կարմիր հատիկները լցնում էին մեծ տաշտի մեջ, վրան ավելացնում ջուր, խոշոր ու կոկիկ տափակավուն քարով տրորում, կորիզը առաձնացնում. ստացված զանգվածը կոչվում էր մխաշար:

Հարգի հյուրերի համար բրնձից փլավ պատրաստելիս մխաշարը խառնում էին չամչի հետ, լվանում, թրջում ու փափկեցնում, «խրուշ» պատրաստում ու առանձին պնակով մատուցում որպես ախորժակ բացող կերակրատեսակ:

Մխաշարը օգտագործում էին նաև ջրիկ ճաշերում՝ որպես քրտնաբեր միջոց: Չքավոր գյուղացիները, որոնք չէին կարողանում շաքար կամ չամիչ գնել, թեյ խմելու համար մխաշարը թրջում էին, փափկեցնում, չամչի փոխարեն օգտագործում:

Գյուղացիները բոլորից շատ, որպես ծմռան պաշար հավաքում էին ընկույզ ու թակողին: Ժողովում էին, լցնում պարկերը, ջվալները, անգամ՝ հացահատիկից ազատ մնացած քնդուկները:

Ընկույզի մաքուր միջուկն անվանում էին «հեղեփ»: Հեղեփը սանդի մեջ մանրացնելով լցնում էին ջրիկ ճաշերի մեջ որպես յուղային, սննդարար միջոց, որն անվանվում էր «խեն»: Օրինակ՝ սկեսուրը ասում էր. «Ա հառհնը, պատառ պուպու (ընկույզ) բեր, կուտուրատի, հեղեփը թակի, բեր ճաշը խենի»:

Ձմռան երեկոներին, երբ ժամանցի համար հավաքվում էին որևէ մեկի տանը, ընկույզ էին լցնում ցորնամաղի մեջ ու մատուցում: Երիտասարդները ընկույզով նաև ջուխտ ու կենտ էին խաղում, դրանք պահելով բռի մեջ:

Ղարադաղցի հայը, որքան էլ որ պտուղների առատ բարիքներից շատ օգտվեր, միևնույնն է, մրցության մեջ առաջին տեղը պատկանում էր անտառաբնակ արջերին, որոնք անխնա ջարդում էին ծառերի ճյուղերը, ուտում ու փչացնում մրգի մեծ մասը, հատկապես ընկույզը, կեռասը, հոնը և այլն:

Վաղ գարնանը, դեռ դաշտային աշխատանքները չսկսած, ղարադաղցի հայը գնում էր այգի: Իր հետ տանում էր այգում գործածվող հետևյալ գործիքները՝ բահը, թոխուրը, կացինը և ցակատը: Նա մեկ առ մեկ ստուգում էր ծառերի վիճակը, արմատահան էր անում ծերացած, բերքից ընկած ծառերը և անմիջապես նրա տեղը նորը տնկում:

---

[49]Մխաշար-չորացրած հոն՝ կորիզով (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.3, էջ 342), (***խմբ.***):

Ցակատով կտրտում էին ծառերի չոր ճյուղերը, դրանք խնամքով հավաքում և երեկոյան, աշխատանքն ավարտելուց հետո գրաստով կամ շալակով տուն տանում: Եթե ցախը շատ էր լինում դարսում էին այգու մի ազատ անկյունում, հետագայում տուն փոխադրելու նպատակով:

Այգին թոխուրով փորում էին, պատրաստում ջրատար առուներ: Բահով ու թոխուրով ծառերի շուրջը փոսիկներ էին պատրաստում ջրելու համար: Պտղատու ծառերը մինչև ծաղկաթափում չէին ջրում: Իրենց բազմամյա փորձից ելնելով, ղարադաղցիները գիտեին, որ այն նվազեցնում է բերքը:

Սակավադեպ այգիները պարարտացվում էին գոմաղբով:

Համապատասխան մասնագետներ ու բուժման միջոցներ չլինելու պատճառով, վնասատուների դեմ ոչ մի պայքար ու միջոց չէր կիրառվում: Այգիները «բուժողները» փայտփորիկներն էին, որոնց անվանում էին «ծռընկիտկիտ», ծիծեռնակները, սարյակները և նման այլ թռչուններ:

Տարերային աղետները՝ ցրտահարություն, կարկուտ, հեղեղ և զանազան հիվանդությունները վերագրում էին «ղսմաթին» (բախտ):

Վաղ գարնանը այգու չորս կողմը թոխուրով առու էին փորում ու դրա երկայնքով, իրարից 3մ հեռավորությամբ փայտե «հաչա» (հենակ) տնկում և դրանց վրա 5-6մ երկարությամբ փայտե «զոլա» (ձող) ամրացնում: Դաշտերից ցաքի փշոտ թփերի 1,5-2մ երկար ճյուղեր էին կտրտում և այգին ցանկապատում:

Ղարադաղում ամենադժվար ու դաժան աշխատանքը ցաքի կտրելն ու շալակով փոխադրելն էր:

Ցաքի կտրողը դաշտ էր տանում երկարապոչ ղոլի, 30-40սմ երկարությամբ փայտե բռնակով ցակատ, փոքր կարպետ և պարան:

Վաղ գարնանը ցաքի թփերը բացվում են, տալիս փափուկ ու փարթամ ծողիկներ ու կանաչ տերևներ, որոնք ախորժալի կեր են հանդիսանում ոչխարների ու այծերի համար: Տարվա ընթացքում ցաքին լրիվ փշապատվում է, տալիս վառ դեղնավուն ծաղիկներ:

Գյուղացին ձախ ձեռքով բռնած ղոլիով կռացնում էր ցաքու ճյուղերը, երկարապոչ ցակատով կտրտում, ղոլիով տեղափոխում, դարսում իրար վրա: Ըստ ցաքե կտրողի աչքաչափի, երբ գտնում էր, որ կտրտած ցաքը կլինի մի շալակ, վերցնում էր բավականին խոշոր քարեր, դնում կտրած ճյուղերի վրա, որ ծանրությունից սեղմվեն ու խտանան:

Կարպետը փռում էին թիկունքին, ցաքը պարանով կապում ու շալակով տեղափոխում այգու մոտ: Ցաքը հնարավոր չէր գրաստներին բարձած տեղափոխել:

Գյուղացին այգու մոտ ղոլիով մի քանի ծյուղ անջատում էր շալակից, շարքով շարում այգու շուրջը, փորվածքի մեջ, հենելով զոլաներին: Ցաքը շարելուց հետո բահով հող էին լցնում փորվածքի մեջ, ապա կաղնու կամ այլ ծառերի ծյուղեր կապում դրանց վրա: Այսպիսով այգին շրջափակում էին, որպեսզի կենդանիները ներս չմտնեին և վնաս չպատճառեին: Այգին ունենում էր մեկ մուտք, որն անվանում էին «բոթա» (անցք):

Այն գյուղերում, որտեղ ցաքը քիչ էր կամ շատ հեռու էր աճում, այգիները ցանկապատում էին կաղնու և բոխու մատղաշ ծյուղերի հյուսվածքով:

Ցաքը կտրելու և փոխադրելու աշխատանքը երբեմն կատարում էին չքավոր գյուղացիները, մեկ շալակի համար վարձատրվելով մեկ ղռան:

Ղարադաղում այգիները, բանջարանոցները, հացահատիկի արտերը և մեղվանոցները չէին հսկում: Նրանք համոզված էին, որ եթե մեկն ու մեկը փորձեր հարևանի ունեցվածքին ձեռք մեկնել, ապա ամենակարող աստված, որը երկնքից հսկում է և տեսնում ամեն ինչ, նրա ունեցվածքը կանիծի ու կենթարկի երկնային պատժի:

Նման արատավոր արարք նկատվելու ու բացահայտվելու դեպքում համայնքի ընդհանուր ժողով էին հրավիրում գյուղի հրապարակում ու պարսավանքի ենթարկում օրինազանցին:

Առուներ. այգիների, բանջարանոցների, առվույտի և այլ ջրովի տարածքների առուների մաքրման ու կարգի բերման համար կար համահասարակական կարգ: Ուշ աշնանը, ձմռանն ու վաղ գարնանը ջրատար առուները անգործության էին մատնվում:

Առուները հիմնականում վնասվում էին հեղեղներից և անասուններին արոտի տանելու ժամանակ:

Վաղ գարնանը գյուղական խորհուրդը որոշում էր ընդունում առուների նորոգման մասին:

Երեկոյան գզիրը գյուղի բոլոր թաղամասերում հայտարարում ու տեղյակ էր պահում «առուհանի» մասին: Հաջորդ օրը, վաղ առավոտյան գյուղացիներն իրենց բահերով ու թոխուրներով հավաքվում էին գյուղամիջում:

Եթե գյուղացին մի քանի տեղ ջրովի տարածք ուներ, պարտավոր էր դրանց առուների մաքրմանը մասնակցել:

Առուների մաքրման աշխատանքներին համահավասար մասնակցում էին տղամարդիկ, կանայք և 14-15 տարեկան երեխաները:

Տանուտերն ու համայնքի ղեկավարները գյուղացիներին բաժանում էին խմբերի ու սկսում աշխատանքը:

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գինեգործությունը շատ հնուց ծանոթ է եղել Ղարադաղի հայերին, չնայած հայաբնակ գյուղերում խաղող չէին մշակում, բացառությամբ Քեյվանի Բերդին գյուղի, սակայն շատ քիչ հայ ընտանիքներ կային, որոնց տներում սեփական ձեռքով պատրաստած կարմիր գինի չլիներ:

Խաղողագործության համար բարենպաստ պայմաններ ունեին Խանագահ և Սարդու գյուղերը: Հավանաբար, նկատի ունենալով, որ շրջապատված էին թրքաբնակ ու քրդաբնակ խաղողագործական գյուղերով և ցանկացած ժամանակ կարող էին էժան գներով խաղող, թուզ ու նուռ գնել, ծանոթ չէին խաղողի վազի մշակմանը:

Կարծում ենք, որ վերոհիշյալ գյուղերում խաղողագործությունը ժամանակին տնտեսության կարևոր ճյուղերից է եղել, որը հետագայում մոռացվել է: Խանագահ գյուղից ներքև գտնվող ջրատար առուներից մեկն անվանում էին «Բաղեն արխը»:

Նշված առվի տարածքի այգիներում, նռենիների ու թզենիների վրա տեղ-տեղ դեռևս մնում էին խաղողի վայրենացած վազեր, որոնք հասունանում էին ու առատ բերք տալիս: Դա ևս վկայում էր, որ խանագահցիները հնում զբաղվել են խաղողագործությամբ:

Խանագահ գյուղից մոտ 15կմ արևմուտք գտնվում էին Թիթի կոչվող գյուղի ավերակները:

Խանագահցիները տիրել էին Թիթի գյուղատեղին ու այն վերածել ծմեռանոցի: Ամեն տարի անասունները տանում, պահում էին Թիթի գյուղատեղում, որն ուներ փարթամ ու հարուստ արոտավայրեր: Այգիներում ու ջրառատ ձորակներում վայրենացած խաղողը, թուզը, նուռը և շատ այլ պտղատու ծառեր, մինչև 1946թ. գաղթը զարմանալիորեն պահպանվում էին և առատ բերք տալիս: Չնայած վայրի ձորակներում թագավորում էին արջերը և վայելում առատ խաղողն ու պտուղները, խանագահցիներին բավարար բաժին էր մնում: Գյուղացիներն ազատ ու անարգել հավաքում էր ցանկացած միրգը ու շալակով կամ գրաստով տուն տանում: Խանագահցին, փաստորեն խաղողագործությամբ զբաղվելու կարիքը չուներ:

Ղարադաղի հայերը գինի պատրաստելու համար խաղող էին գնում նաև մոտակա թրքաբնակ և քրդաբնակ Միսան, Ուշտուբին, Քյավանի, Սիմադավա, Մարդանաղա, Քլալա, Դառանի և այլ գյուղերից: Գինու համար

ընտրում էին սև գույնի «շահանի» խաղողը, որը գավառի խաղողատեսակների մեջ ամենաբարձր շաքարայնությունն ուներ:

Նույնիսկ 1946թ. դեռ թուրքեր կային, որ հրաժարվում էին գինի պատրաստելու համար խաղող վաճառել հայերին:

Կրոնին կառչած մոլեռանդ մի թուրքի հարցրի.

– Եթե քեզ խաղողը վաճառել է պետք, ի՞նչ նշանակություն ունի, թե գնողն այն ինչ կանի:

Մոլեռանդ մուսուլմանը մթագնած հայացքով նայեց ինձ ու ասաց.

– Դուք գիտեք չէ,՞ որ մեր փեյղամբար Ալին գինի խմելը արգելել է իսլամի օրենքին ենթակա մարդկանց: Հիմա, եթե ես խաղող տամ հային ու նա գինի պատրաստի, նշանակում է, որ ես իսլամի օրենքին դեմ եմ գնում: Ճիշտ է, ես գինի չեմ խմում, բայց դրանով օգնում եմ փեյղամբարի արգելած ու անիծած խմիչքի տարածմանը: Դրա համար էլ, ես աշխարհում փեյղամբարի մոտ ամոթանք կկրեմ ու ալլահի կողմից կդառնամ դժոխքի բաժին: Դա է պատճառը, որ չեմ կամենում իմ աշխատանքի բերքով սևերես դառնալ ամենակարող աստծո առջև:

Մոլեռանդ թուրքին ճիշտ բացատրություն տալու համար, ասեցի.

– Ահմադ քիրվա, ինչպես ձեր կրոնապետները, նմանապես և դուք՝ իսլամի շարքային ծառաներդ, ճիշտ չեք իմանում փեյղամբարի ասած խոսքի իմաստը: Ճիշտ է փեյղամբար Ալին աղոթելու գնալիս տեսնում է մի խումբ մարդիկ ծառերի տակ նստած ուտում են, գինի խմում ու զվարճանում: Տեսնելով ճամփով անցնող փեյղամբարին՝ նրանք գլուխ են խոնարհում և հրավիրում իրենց մոտ: Փեյղամբարը հարգում է մարդկանց, գնում է մի բաժակ գինի խմում և օրհնանքով ասում. «Թող ձեզ անուշ լինի»:

Մեջիդից վերադառնալիս փեյղամբարը տեսնում է, որ քեֆ անողները չափից ավելի են խմել, որի պատճառով վիճաբանում են ու ասում է. «Ձեր խմածը թող «զահրըմար» (օձի թույն) լինի»:

Պետք է ճիշտ հասկանալ փեյղամբարի խոսքի իմաստը: Նա կողմ է եղել գինին չափավոր խմելուն և զվարճանալուն և ինքն էլ խմել է, անիծել է ոչ թե գինուն, այլ գինին չհարգողներին, չափից դուրս խմողներին»:

Նման բացատրությունից գոհ ծանոթս երկար նայեց ինձ ու ասաց.

– Հավատում եմ քո ասածներին, բայց մեր մոլլաները ինչո՞ւ դա չեն հասկացել ու ճիշտ բացատրել մեզ:

– Չեմ կարող պատասխանել, գնացեք նման կոպիտ մեղքի համար պատասխան ստացեք մեղավորներից, ճշմարտությունը կեղծողներից:

Ծանոթս ընկավ երկմտության մեջ, գլուխը կախեց ու լռեց: Ապա մտածկոտ նայելով ինձ, ասաց.

– Ուզածդ խաղողը քաղիր, հալալ է քեզ:

Ղարադաղում գինու գործարան, գինու վաճառքի խանութ, գինետուն և գինու առուծախով զբաղվող մարդիկ երբեք չեն եղել: Բազմազգ բնակչություն ունեցող գավառում գինի խմել են միայն հայերը: Նրանք էլ այնքան գինի էին պատրաստում, որքան հարկավոր էր ընտանիքին, մոտավոր ճշտությամբ՝ 50-200 լիտր:

Քանի որ թուրքերը գինի չէին պատրաստում, խաղողը փոխանակում էին հիմնականում Ուզունդուզ գավառից բերված ցորենի հետ: Ցորենը խաղողի հետ փոխանակում էին «բարեբար» (հավասար), իսկ գարին՝ երկուսը մեկի հարաբերությամբ:

Հայ գյուղացին իր տան «ծրքատեղ»-ում (օժանդակ սենյակ) դնում էր խմոր հունցելու փայտե մեծ տաշտն ու խաղողը լցնում դրա մեջ: Եթե նախատեսված էր քիչ գինի պատրաստել, ապա 3-4 կին կամ տղամարդ իրար դիմաց չոքում ու խաղողը ձեռքերով ճզմում էին: Եթե պատրաստությունը մեծ քանակությամբ գինու համար էր՝ 150-200լ, ապա մի տղամարդ ոտքերը լվանում էր, փողքերը մինչև ծնկները քշտում, մտնում տաշտի մեջ ու խաղողը տրորում: Ճզմած խաղողի մնացորդը՝ «կընզեռնը» ափերի մեջ սեղմում՝ քամում էին և լցնում բակի մի ազատ անկյունում, որպես հավերի կեր:

Կաթսայի վրա ալրամաղ էին դնում, սովորական պնակով տաշտից խաղողի հյութը լցնում մաղի վրա, քամում ու լցնում կավե կարասի մեջ:

Խաղողի հյութը, որն սկսում էր եռ գալ, ասում էին «մաջառ» է դարձել, կարելի էր խմել:

Գինու եռը դադարելուց մեկ օր անց կարասից գինին դատարկում էին մեծ կաթսաների մեջ, զուլալեցնում, նորից լցնում կարասի մեջ և տախտակե կափարիչով ծածկում:

Նոր կարասներին ներսից և դրսից «էծու փինավ» (այծի ճրագու) էին քսում, որ գինին չներծծվի:

Հետաքրքիր էր գինու օգտագործումը ընտանիքում: Ճաշի ժամանակ ջրի պղնձե փարչը գինով լցնում էին, դնում սփռոցի կենտրոնում: Ըստ ցանկության՝ այն փոխանցում էին իրար ու խմում:

Օջախի գլխավորից բացի, գինի խմելու իրավունք ունեին ամուսնացած տղամարդիկ և տարեց կանայք: Տղաներն ու աղջիկները գինի խմելու իրավունք չունեին, բայց զուրկ չէին մնում, կարասի մոտ օգտվում էին:

Ընտանիքի մեծը, վերցնելով գինով լի փարչը, նայում էր վերև ու ասում. «Փառքդ շատ աստոծ, օմեն մի մարթու հալալ աշխադանքը դու իրան ղսմաք արի, օմեն մի քաղցածու փայ տոր, օմեն մի փորձանքից, չարից հըռե պահի, օրհնյալ աստոծ»:

Եթե տան անդամներից մեկը մի քանի հարազատների կամ ընկերների հրավիրում էր գինի հյուրասիրելու, փարչը լցնում էին ու հերթականությամբ խմում: Եթե փարչ չուներին, գինին մատուցում էին պղնձե «ջամով», որն ուներ մոտ երկու լիտր տարողություն: Նույն ամանից օգտվելը ընդունված էր, մեկը մյուսից չէին «խոկում» (զզվում):

Օղի. օղեթորումը Ղարադաղի Քեյվան գավառակի Սըղըն և Դասումաշեն գյուղերի հայերին ծանոթ է եղել դեռևս 1890-ական թվականներից:

Օղին թորում էին թթից:

1940-ական թվականներին թթից օղի սկսեցին թորել նաև Դիզմար գավառակի Լումա գյուղում:

Խանագահիցիները օղի էին թորում նաև մոշի անչափ առատ պտուղներից:

Թուրը հավաքում էին հետևյալ կարգով. մեծ ծածկոցներ էին փռում ծառի տակ, մեկը բարձրանում էր ծառի վրա, հերթականությամբ հարվածում ճյուղերին: Ծածկոցի վրա թափված թուրը լցնում էին կարասների մեջ ու ամեն օր փայտե ծողերով խառնում:

Շնորհաշատ մարդիկ իրենց բակերի ազատ մի անկյունում մոտ մեկ մետր բարձր օջախ էին պատրաստում: Պղնձե մեծ կաթսան դնում էին օջախի վրա ու թթի զանգվածը լցնելով դրա մեջ՝ եռացնում: Կաթսայի բերանը համապատասխան պղնձե կափարիչով փակում էին, եզրերը խմորով ամուր սվաղում: Կափարիչի վերևի մասում անցք էր լինում: Մոտավորապես 1.5մ երկարությամբ պղնձե կամ երկաթե խողովակ էին ամրացնում այդ անցքում, որի առջևում թորած օղին լցնելու համար դրվում էր միջին մեծության դատարկ կաթսա: Երկու կաթսաների արանքում դնում էին մի թիթեղյա մեծ ամաս, որի մեջ սառը ջուր էին լցնում: Այնպես էր հարմարեցված, որ օղին թորող խողովակը անցնում էր ջրի միջով: Տաքացած ջուրը աստիճանաբար փոխում էին:

Բարձրորակ օղի ստանալու համար ստացված հեղուկը թորում էին նաև երկրորդ անգամ:

Խանագահիցիները օղու թորման համար գտել էին ավելի հետաքրքիր ձև: Գյուղի արևելյան կողմում, գյուղից 200մ հեռու գտնվող ժայռից սառնորակ մի աղբյուր էր բխում: Ուստա Ալեքսանը, որը ջրաղացների կա-

ռուցման մասնագետ էր, այդ աղբյուրի մոտ, ընկուզենիների հովանու տակ օղու թորման օջախ էր պատրաստել: Աղբյուրի ծախ կողմում դրված էր օղու փոքրիկ կաթսան: Օղին թորող խողովակը անցնում էր աղբյուրի ջրի միջով:

Հայերին գինի պատրաստելն ու օգտագործելը, որպես հայկական ազգային խմիչք, մասնակիորեն թույլատրվում էր պարսից կառավարության կողմից, իսկ օղին արգելված էր: Հայտնաբերման դեպքում թորողները կենթարկվեին մեծ տուգանքների ու պատիժների: Այդ իսկ պատճառով օղին թորում էին խիստ գաղտնի:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐ

Ղարադաղը բնակլիմայական հիանալի պայմաններ ուներ բոստանային մշակաբույսերի աճեցման համար, սակայն այնտեղ ապրող թուրքերն ու քրդերը դրանով գրեթե չէին զբաղվում: Չնայած աղբյուրների ջրերի առատությանն ու բերքատու սևահողերի առկայությանը, բանջարաբոստանային կուլտուրաներից գաղափար չուներ լեռնային գոտու թուրք բնակչությունը:

Բանջարաբոստանային բարիքներից զուրկ էին նաև Արաքսպար գավառակի քրդերը, որոնք նմանապես ոչ մի գաղափար չէին կազմում՝ ունենալով հանդերձ արգավանդ ու բարեբեր հողեր: Նրանք ևս թուրքերի նման նայում էին հայ քիրվաների բարերարությանն ու ողորմածությանը:

Միայն Կալանբար գետից արևելք ընկած գոտում, որոշ քուրդ և թաթար գյուղացիներ, մասնակիորեն մշակում էին սպիտակ սոխ: Նրանք հիմնականում օգտվում էին հայաբնակ գյուղերի բերքից:

Հայերն էլ, որ գավառում միակն էին, որ զբաղվում էին բանջարաբոստանային կուլտուրաներով, հարկ եղածին պես չէին օգտվում նման բազմազան ու խիստ կարևոր բարիքներից:

Մարդանաղա, Միսան, Ուշտուբին, Քլալա, Դառանի և այլ գյուղերի բնակչության հիմնական զբաղմունքն ու ապրուստի միջոցը այգեգործությունն ու խաղողագործությունն էր: Նրանք նույնպես բանջարաբոստանային կուլտուրաներ չէին մշակում: Մի երկու գլուխ սոխի, սխտորի, վարունգի, լոբու և այլ բանջարեղենների համար ձեռք էին մեկնում հայ ծանոթներին ու քիրվաներին:

Հայերը մշակում էին հետևյալ բույսերը.

Մաշ (լոբի). տարածված էր կարմրահատ կլոր տեսակը, որը շատ բերքատու էր ու համեղ: Որոշ ընտանիքներ մինչև կես հեկտար տարածություն լոբի էին ցանում:

Գարնանը հողամասը լավ մշակում էին, վերածում առուների: Լոբու հատիկները ցանում էին զույգ-զույգ, 20սմ հեռավորությամբ: Ցողունները դեռ չբարձրացած, ամեն մի բույսի մոտ տնկում էին մոտ 2մ երկարությամբ հենակ՝ «մշափադ»: Լոբու ցողունները ծգվում էին մինչև 3մ և ավելի, որոնք փաթաթվում էին հենակներին:

Լոբին հայ գյուղացու սննդի համակարգում կարևոր նշանակություն ուներ: Կանաչ վիճակում քաղում, խաշում էին, կտրտում և յուղով տապակում: Կանաչ վիճակում քաղում էին, կտրտում, հով տեղում փռում ու չորացնում որպես ձմռան պաշար: Ձմռանը տաք ջրի մեջ լվանում, փափկացնում, եփում ու նույնպես յուղով տապակում էին: Լոբու չորացրած հատերը խաշում, օգտագործում էին ջրիկ ճաշեր պատրաստելու համար: Ճաշ էին պատրաստում նաև դդմի միջուկի հետ՝ անվանելով «մշըբրանի»:

Շատ ընտանիքներ լոբու չոր հատիկները ջվալներով բարձում էին գրաստներին, տանում՝ Թավրիզում վաճառելու:

Հատ ու կենտ շնորհքով մարդիկ կային, որ լոբին կանաչ վիճակում, կողովներով բարձում էին գրաստներին, հասցնում Թավրիզ և վաճառում:

Բրանի (դդում). խիզուկը դդմի տեղական տեսակն էր, որը կարելի էր խաշել և ուտել սկսած մի բռնցքաչափ դառնալուց, մինչև հասունանալը: Մինչև հասունանալն ուներ բաց կանաչ գույն ու վառ, խոշոր դեղին ծաղիկներ: Հասունանալուց հետո դդումները լինում էին սպիտակ, դեղին և կարմիր գույնի. ուներ հաստ, չոր ու ամուր կեղև:

Ղրբաղու բրանի. մինչև լրիվ հասունանալը շատ անհամ էր լինում, չէր ուտվում, լինում էր մուգ կանաչ և մոխրագույն, գրեթե կեղև չուներ: Լրիվ հասունության ժամանակ համեղանում ու քաղցրանում էր:

Ըստ ավանդության՝ դդմի այդ տեսակը բերված էր Ղարաբաղից, որի համար էլ անվանել էին «Ղրբաղու բրանի»:

Դդումը խաշում, ուտում էին, կտրտում՝ լոբու չոր հատիկների հետ, ճաշ էին եփում: Դդումը եփում, վրան կաթ էին ավելացնում, պատրաստում ջրիկ ճաշեր:

Հետևյալ ձևով այն օգտագործում էին նաև որպես դեղամիջոց. խիստ մրսած ու ուժեղ հազացող մարդուն տալիս էին թոնրի կամ օջախի մորմոտի մեջ խորոված դդում:

Դդմի սերմերը աղանձում էին, խառնում ցորենի, սիսեռի, քնջութի հատիկների հետ ու համեղ ուտելիք պատրաստում:

Բողկ. բողկը շատ հարգի էր. մոլի սիրահարներ էին հակապես թուրքերն ու քրդերը: Շատ հայ գյուղացիներ մինչև մեկ հեկտար բողկ էին ցանում, որը թրքաբնակ ու քրդաբնակ գյուղերում վաճառում կամ «բարեբար» (հավասար) փոխանակում էին ոսպի և քուռուշնայի հետ:

Խամբար (եգիպտացորեն). Ղարադաղի ողջ տարածքում եգիպտացորենը հայտնի էր «ղարղուդալի», իսկ տեղի հայերի խոսվածքում՝ խամբար ձևով:

Եգիպտացորենը հայերը մշակում էին որպես բոստանային կուլտուրա, ցանում էին վարունգի և դդմի առուների եզրերին: Օգտագործում էին խորոված ու եփած վիճակում, աղանձի համար և «կճախաշի» մեջ:

Եգիպտացորենը Արաքսպար հովտի քուրդ բնակչության հացի հիմնական պաշարն էր, ցանում էին տասնյակ հեկտարներով: Սովի տարիներին հայերն այնտեղից եգիպտացորեն էին բերում, ջրաղացում աղում, սաջի վրա կլոր, բոքոնի նման հաց թխում, «շփոթ» կոչվող ջրիկ ճաշ պատրաստում, աղանձ անում և այլն:

Պամադոր (պոմիդոր). պոմիդորը Ղարադաղում նորամուծություն էր, սերմերը բերել էին 1921թ. գաղթից վերադանալիս՝ Թավրիզից: Օգտագործում էին միայն կարմիր վիճակում, ջրիկ ճաշերում: Պոմիդորը հում վիճակում չէին ուտում, ասում էին. «Պամադորը որ հոմ օտս, փուրացավ կկպնվս»:

Պոմիդորից սալաթներ և տոմատ պատրաստելն ընդունված չէր:

1940թ. հետո Թավրիզի հայերից ընդօրինակեցին կանաչ պոմիդորը բոստանային զանազան կուլտուրաների հետ կարասներում թթու դնելը՝ ձմռան համար:

Տախտեղ (տաքդեղ). արադաղ մուտք գործեց 1921թ. հետո, սերմերը բերել էին Թավրիզից, օգտագործում էին միայն ճաշերի մեջ՝ որպես համեմունք:

Լավ հասունացած կարմիր հատերը թելի վրա շարում էին (շրանուկ), սրահների սյուներից կախում արևի տակ չորացնում և ձմռանն օգտագործում զանազան ճաշերի մեջ:

Սոդան (սոխ). սոխը բանջարանոցում տարածքով գրավում էր առաջին տեղը: Մյուս կուլտուրաների համեմատ, սոխը մշակում էին առանձնահատուկ խնամքով ու հոգատարությամբ:

Սոխի համար նախատեսվող տարածքը թոխուրով փխրեցնում էին և համատարած մոխիր սփռում: Այն ուներ երկու նպատակ. նախ՝ հողը փխրուն էր պահում, որը նպաստում էր խոնավություն ներծծելուն և երկրորդ՝ մոխիրը արգելք էր հանդիսանում զանազան միջատներին մուտք գործել դաշտ, և բերքը չէր ոչնչանում:

Սուղունատախտը (սոխ ցանելու տարածք) փոցխով լավ հարթեցնում էին, որ ջուրը հավասար բաշխվեր, հեռացնում էին անգամ փոքրիկ քարերը, մոլախոտերի արմատները և հողը հարթեցնում:

Սոխի սերմը տեղում ստանալ չէին կարողանում: Այն ամեն տարի գնում էին Թավրիզից: Սերմը ցանելիս, որպեսզի ցանքը հավասար ստացվեր, դրա քանակին համեմատ, երեք անգամ ավելի սովորական հող էին խառնում ու հավասարաչափ սփռում:

Կանաչ ու գլուխ սոխը տարվա բոլոր եղանակներին եղել են ղարադաղցի հայերի սփռոցի զարդերից:

Սոխի սիրահար և, կարելի է ասել, դրանով գերված էին թուրքերն ու քրդերը: Չնայած նրանք լավ պայմաններ ունեին սոխի մշակման համար, միշտ կարոտով էին նայում հայերի բանջարանոցներին, հուսալով, որ նրանք բաժին կհանեն նաև իրենց:

Հայերը կանաչ և գլուխ սոխը լցնում էին կողովների մեջ, տանում թրքաբնակ գյուղերում, մեկը չորսի հարաբերությամբ, փոխանակում խաղողի և, հավասար հարաբերությամբ, այլ մրգերի հետ:

Լեռնային թրքաբնակ գյուղերում սոխը փոխանակում էին բրդի, յուղի և պանրի հետ:

Սխտոր. այն օգտագործում էին միայն փիփերթ, ավելուկ, պիրպետան և նման այլ բույսերից պատրաստած ճաշերը համեմելու համար: Որպես կանաչեղեն չէին օգտագործում: Պատահում էր օգտագործում էին ամռանը մածունի հետ: Այդ իսկ պատճառով քիչ էին մշակում: Ամեն ընտանիքի սխտորի ցանքի տարածքը գրեթե մեկ քառակուսի մետրը չէր գերազանցում: Սխտորը ցանում էին հատ-հատ, իրար կողքի: Մշակումը և ջրելը կատարվում էր սոխի նման:

Սովորություն չկար սոխը կամ սխտորը հարևանին կամ բարեկամին ձեռքից ձեռք տալ: Այն դնում էին գետնին, որտեղից վերցնում էր մեկ ուրիշը: Ըստ Ղարադաղի հայերի հավատալիքների՝ քանի որ սոխն ու սխտորը կծու և մռու հատկություն ունեն, առձեռն փոխանցելը նշանակում էր տխրություն, ցավ ու մրմունջ կամենալ դիմացինին:

Ղարադաղի հայերը բանջարանոցներում սահմանափակ քանակությամբ ցանում էին հետևյալ կանաչիները. ռեհան, սամիթ, կոտեմ, գեշնիչ (համեմ):

Կանաչիները օգտագործում էին թարմ և չորացրած վիճակում, հատկապես ձմռանը ջրիկ ճաշերը համեմելու և դոլմա ճաշատեսակում օգտագործելու համար:

Կանաչիների սերմերը գյուղացիներն ստանում էին իրենց բերքից: Նրանք առանձնացնում էին առողջ ու փարթամ բույսերի ցողունները, դրանց հասուն սերմերը խնամքով պահում և հաջորդ գարնանը ցանում:

Ընթերցողի մոտ, անշուշտ, հարց կառաջանա, թե ինչո՞ւ բանջարաբոստանային կուլտուրաներին այսքան մանրամասն անդրադարձողը ոչ մի տող չի գրում սեխի, ձմերուկի, կարտոֆիլի, բադրիջանի, գազարի, բազուկի ու կաղամբի մասին:

Այդ հարցին մենք կտանք մի զարմանալի պատասխան. նման շատ անհրաժեշտ բոստանային կուլտուրաները մինչև 1946թ. գաղթը մուտք չէին գործել և ճանաչում գտել Ղարադաղում:

Չնայած ժամանակին փորձեր են կատարվել, դրանց մի մասը հիանալի աճել են, բարձր բերք ու եկամուտ տվել, սակայն ընդօրինակում, ճանաչում ու տարածում չեն ունեցել:

Բերենք մի քանի փաստացի օրինակներ Խանագահ գյուղից:

Գյուղի դիմացի «Հանդ» կոչվող դաշտում մոտ երկու հեկտար տարածությամբ մի վարելահող կար, որին գյուղացիներն անվանում էին «Մելիք-Ազարուևց գիգիրատեղը»: Ըստ գյուղի տարեց մարդկանց պատմածի՝ Մելիք-Ազարյանները նշված հողում գազար են ցանել և օգտագործել գլխավորապես ձմռանը՝ ոչխարներին կերակրելու համար, քանի որ այն բարձրացնում էր կաթնատվությունը:

Մոտավորապես 1910թ. սարդուցի Մանցուց Արշակը ամուսնանում է շիշկերտցի մի աղջկա հետ, որը այնտեղից կարտոֆիլ է բերում և ցանում Սարդու գյուղում: Քանի որ Սարդու գյուղի հողերը գավառում հացահատիկի ամենացածր բերքն էին տալիս, այնտեղ սկսեցին համատարած կարտոֆիլ ցանել, որը մեծ օգնություն եղավ հացի կարիք ունեցող գյուղացիներին:

1916թ. սարդուցի Պետրոս Ստեփանյանի աղջիկն ամուսնացավ Խանագահցի Հարություն Աղաջանյանի հետ: Սկսեցին կարտոֆիլ մշակել նաև Խանագահում, ու չնայած այնտեղ բարձր բերք էին ստանում, այդ արժեքավոր կուլտուրան գավառում ճանաչում չգտավ:

Ձմերուկ. պատմում էին, որ 1922թ., Թավրիզից Խանագահ ամառանոց եկած ոմն պարոն Մարգար, անջրդի պայմաններում ձմերուկ է մշակել և լավ բերք ստացել, որը օրինակ չի դարձել գյուղացիների համար:

Ճակնդեղ. խանագահցի Արմենակ Արզումանյանը Թավրիզից ճակնդեղի սերմ բերեց ու վարունգի առուների միջև, շարքերի ազատ տարածքներում ցանեց: Հրաշալի արդյունք տվեց. ճակնդեղը կշռում էր 8-10կգ: Դա նույնպես օրինակ չծառայեց մյուս գյուղացիների համար:

Նման շատ օրինակներ էլի կարելի է բերել: Այսքանից էլ ընթերցողի համար պարզ է ու հասկանալի, որ ղարադաղցիները բոլոր բնագավառներում կառչել էին հնին ու կանգ առել: Նորամուծության ու փոփոխության համար չէին մտահոգվում ու քայլեր չէին ձեռնարկում:

Ղարադաղի լեռնալանջերը, ջրառատ ձորակները, դաշտերն ու արտերը հարուստ էին բազմազան բուսատեսակներով, որոնցից օգտվում էին տեղի բնակիչները:

Գարնան ու ամռան ամիսներին, կանայք ու աղջիկները խմբերով դաշտ էին գնում, քաղում փիավա, շիրիշ, խազիզ, դեսնը և այլ բույսեր: Արևահայաց լանջերից հավաքում էին ուրց:

Ջովասուն դաշտերից հավաքում էին սխտորուկ, մնեշակ (մանուշակ), ծիծռնկաթըվ ու բենջար, արտատեղերում ու կորնգանի դաշտերում՝ սիպտակ բենջար:

Բարձրանիստ լեռների սևահողերից քաղում էին ավելուկ ու թրթնջուկ, ջրառատ գետակների ափերից՝ քեղ (բալդրղան):

Գյուղամերձ աղբաշատ հողերում հավաքում էին գարնան ավետաբեր խիլիվիլի, խաղենջ, փիրփիր, պիտպերաև, ճամփեզրերից՝ կինճկինճ, ծմեփուկ և այլն:

Հավաքում էին ցելած արտերում փարթամորեն աճած կաքնահամ խեժնուկ (սինճ), ճպռատուղ, սիբեխ և հրաշագործ բնության նման շատ ու շատ այլ բարքիներ:

Եթե մեկ առ մեկ թվարկենք բոլորի անունները, նրանց հավաքման ու օգտագործման ձևերը և բուժիչ հատկությունները, հարկ կլինի կազմել բազմահատորանոց գրքեր:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ղարադաղի հայաբնակ գյուղերը հիմնականում գտնվում էին միջին գոտում, ունեին բնակլիմայական նույն պայմանները, և ամեն տեղ պահում էին միևնույն տեսակի ընտանի կենդանիներ:

Սվըտավար (խոշոր եղջերավոր անասուն). արուին ասում էին «քյալ» (ցուլ), էգին՝ «կավ» (կով):

Երբ կովը ծնում էր, նրա տերը գրկում էր հորթին ու ասում. «Շիլ կինգյս, թողբը կինի, սարըմ կինս, ծորում կինս, քարմ կինս, մնաս վեչ քիշերը, հղեն կճարս, կգյոս տոն»: Գյուղացիները նույն խոսքերն էին ասում նաև նոր ծնված գառան և ուլի ականջին:

Հորթին ասում էին «վըրթ», իսկ արու և էգ հորթերին, մեկ տարին լրանալուց հետո՝ «դանա»:

Այն կովը, որ ծնել էր և հաջորդ տարին «բեր» չէր տալիս (չէր հղիանում) ու կթվում էր, ասում էին. «Աս տարե մըր կավը բեր չի եկած, մանցած ա մըզեմար»: Մըզեմար բառացիորեն նշանակում է «մոզու մայր»: Հետաքրքիր է, որ ղարադաղցիները մեկ տարեկան հորթին անվանում էին դանա, մոզի բառը չէին օգտագործում:

Ղշլաղ, Իրգութին և Աղաղան գյուղերի հայերը մեկ տարեկան հորթին անվանում էին «ջոնամագ»:

Երկու տարեկան արու հորթին ասում էին «քյալաչա» (ցուլիկ), իսկ երեք տարեկանին՝ «քյալ» (ցուլ):

Արու հորթերին, սովորաբար երկու տարեկանում, կռտում էին:

Ցլիկներին կռտողները բազմափորձ, մասնագետ մարդիկ էին, որոնց անվանում էին «կուրտարար»:

Առանձնապես աչքի ընկնող առողջ, առույգ, փարթամ աճ ունեցողներին կռտում էին 3-4 տարեկանում: Մինչև ամործատելը նրանց նկատմամբ առանձին հոգ էին տանում և պահում կովերին «բերքի» բերելու (բեղմնավորման) համար: Կռտած արուներին անվանում էին «եզնը» (եզ) և պահում էին միայն վարուցանի և կալսելու համար՝ որպես քաշող ուժ:

Ցլիկներին ամործատում էին մայիս և հունիս ամիսներին, հետևյալ կարգով. կենդանուն պարանով կապում էին սյունից, «կուրտարարը» տրորելով փափկացնում ու թմրեցնում էր ցուլիկի ամործիները, դրանք

սեղմում ու մտցնում մաշկի տակ: Ամորձիները պտտում, սնուցող երակը կտրում էին, ապա ծվարանի ազատված մաշկը, փորին հավասար ամուր կապում այծի մազից հյուսած թելով:

Կռտողի վարձատրությունը ամեն կենդանու համար մեկ ղռան էր:

Կռտած ցլիկին 7-10 օր կերակրում էին գոմում, որից հետո թելի կապը թուլացնում էին, արձակում ու տանում արոտի:

Ամորձատած կենդանուն անվանում էին «աչառնը» (արջառ), որն արդեն ենթակա էր լծելու:

Կովերի տարիքը որոշում էին ըստ ծնելու տարիների (ծրն). «մըր Նաղաշ կավը վեց ծրն ա»:

Երեք տարեկան էգին «հերենջ» էին անվանում:

Շատ գյուղացիներ, նայելով անասունի ատամներին՝ ճշտորեն որոշում էին տարիքը:

Սովորաբար կովերը բեղմնավորվում էին մայիս և հունիս ամիսներին:

Նախրապանը երեկոյան անասնատիրոջը տեղյակ էր պահում, որ նրա կովը «քըլվըզ» է, այսինքն՝ բեղմնավորման կարիք ունի:

Ըստ մեր ստուգաբանման՝ «քըլվըզ» նշանակում է քյալերի, ցուլերի վազք:

Հաջորդ օրը վաղ առավոտյան, կովի տերը պարանով կապում էր և ընտանիքի մեկ ուրիշ չափահաս անդամի հետ տանում գյուղից դուրս՝ նախրատափ, որտեղ էլ տեղի էր ունենում բեղմնավորումը:

Պարտադիր չէր, որ ամեն մի գյուղացի ցուլ ունենար: Համաձայն համայնքի ավանդական կարգի՝ նախրում գտնվող ցուլերը, առանց տերերի թույլտվության, օգտագործվում էին այդ նպատակով, ըստ այն սկզբունքի, որ. «Այս տարի ես ցուլ չունեմ, դուք ունեք, եկող տարի էլ ես կունենամ, դուք չեք ունենա»:

Ղարադաղում մեծ տեղ էին տալիս խոշոր եղջերավոր անասունների ցեղի բարելավմանը: Գավառում թուրքեր կային, որոնք միայն խոշոր եղջերավոր անասուն էին պահում և ընտիր ցուլեր ունեին: Հայ գյուղացիները չէին բավարարվում իրենց պահած ընտրովի ցուլերը պահելով, թուրքերից ցուլեր էին վարձում, բաց թողնում գյուղի նախրի մեջ: Վարձակալման ժամանակը լրանալուց հետո, ետ էին վերադարձնում:

Խոշոր եղջերավոր անասունների անունները

Անասունները ըստ գույների	Եզների անունները	Կովերի անունները
Սպիտակ	Ջեյրան	Մարալ
Սպիտակավուն	Աղբալ	Եղնեգ
Բաց սպիտակ	Փոլադ	
Սև	Ղարդաշ	Սուրմա
Բաց սևագույն	Խումար, Ջաղար	Սարեգ
Պոչը սպիտակ	Ծաղեգ	Ծաղկի
Ճակատը սպիտակ	Գյոլբաշ	Նաղաշ
Կարմիր	Սարու	Խինա
Մուգ կարմիր	Աբռաշ	Գյուլգյազ
Երկգույն	Ալա	Չալի
Շեկ	Բոզի	Ղոնեգ
Բաց կարմիր	Բադալ	Նոռնեգ
Ջանազան պուտերով	Խնձորեգ	.....
Մուգ կարմիր	.....	Նարգիզ
Խալ ունեցող	Խալդար	.....
Սևաշեկ.	Վարազ	.....
Սև աչքերով	Ղարագյոզ	.....

Վըչխար (ոչխար). խոշոր անասունից հետո, ղարադաղցի հայերի համար ամենակարևորը ոչխար ունենալն էր, որը տալիս էր բազմակողմանի եկամուտ: Բրդից գործում էին չուխա, բենջակ, շալվար, գուլպա, գլխարկ, պատրաստում անկողին, կարպետ, ջվալ, խուրջին և նման շատ տնային իրեր:

Ղարադաղում տարածված էր ոչխարի դմակավոր տեսակը:

Մայր ոչխարին անվանում էին «էգ», արուին՝ «ղոչ» (խոյ): Էգ գառները պահում էին միայն մայրական կազմի աճի համար:

Մեկ տարեկան գառին անվանում էին «գյոռնը», երկու տարեկանին՝ «թոխլի», երեք տարեկանին՝ «շիշագ», իսկ չորս տարեկանն արդեն մայր ոչխար էր:

Արու գառներից ամենաառողջն ու ընտիրը պահում էին որպես խոյ, ոչխարների բեղմնավորման համար:

Մյուս արու գառները 8-10 օրականում ամորձատում էին: Այդ գառների նկատմամբ, քանի որ ամորձիները կտրում էին, հատուկ խնամք էին տանում. պահում էին առանձին, տակերը տաք մոխիր լցնում, որ չմրսեին ու բորբոքում չստանային:

Գառը գյուղացու շատ կարիքներ էր հոգում. որևէ կարիքի դեպքում այն վաճառում էին, աղաներին, բեգերին ու խաներին «փեշքեշ» տանում, զանազան նպատակներով մատաղ անում և այլն:

Խոյերին լավ խնամում, գիրացնում էին, ուշ աշնանը մորթում ու ձմռան համար «տհալ» էին պատրաստում:

Ոչխարները խուզում էին տարին երկու անգամ, մայիսին և հոկտեմբերին: Առաջին խուզի բուրդը օգտագործում էին հագուստեղենի, կարպետ ու գորգ գործելու, իսկ երկրորդինը, որի բուրդը կարճ էր լինում՝ անկողին պատրաստելու համար:

Ոչխարները խոշոր եղջերավոր անասունների ու այծերի նման բազմազան անվանումներ չունեին:

Ըստ բրդի գույնի՝ ոչխարները բաժանվում էին չորս խմբի և ստանում տեսակին բնորոշ անվանումներ: Գույները հետևյալն էին՝ սպիտակ, սև, կարմիր և բանավիշա (մանուշակագույն): Օրինակ՝ սիպտակ վըչխարը, սըվ վըչխարը, կարմուր վըչխարը, բանավիշա վըչխարը:

Ոչխարներին անվանում էին նաև ըստ ականջների ձևերի. լայն ականջ ունեցողին՝ «ընջուկավր», նեղ, սրածև ականջ ունեցողին՝ «բալլա», կարճ ականջ ունեցողին՝ «քյառա», ականջազուրկին՝ «զուդի»:

Շատ հազվադեպ ոչխարների ականջների տակ կամ կոկորդի մոտ լինում էին երկու երկարավուն կիներ (պալար): Նման ոչխարին անվանում էին «կինդրիկավր վըչխար»: Հազվադեպ էր պատահում, որ մի ոչխարը երկու գույն ունենար: Նման ոչխարին անվանում էին «ալա վըչխար»:

Էծ (այծ). հայ գյուղացին շատ մեծ եկամուտ էր ստանում այծից: Այծի «ղազիլը» (մազ) շատ կարևոր ու անփոխարինելի հումք էր զանազան գործվածքների պատրաստման և պարաններ հյուսելու համար:

Այծի միսը օգտագործվում էր որպես սննդամթերք, մորթուց պատրաստում էին զանազան պարկեր, կաթից՝ կաթնամթերքներ և այլն, որոնք կարևոր նշանակություն ունեին գյուղացու տնտեսության մեջ:

Խանագահիցի նորահարսերը այծ կթելիս

Ղարադաղի հայերը էգ այծին անվանում էին «էծ», արուին՝ «թաքյա» (նոխազ), ամորձատած արուին՝ «բիզմա», մինչև մեկ տարեկան ուլին՝ «հոլ», երկու տարեկանին՝ «չաբուջ», երեք տարեկանին՝ «կուհար»:

Այծը Ղարադաղի հայերի ամենասիրած կենդանիներից էր: Դրա համար էլ այծերին տվել էին շատ հետաքրքիր ու գեղեցիկ անուններ: Արու և էգ այծերին տալիս էին միևնույն անունները.

Սպիտակ՝ Ձեյրան
Սև՝ Թուխի
Կարմիր՝ Խինա
Բաց կարմիր՝ Սարու
Մոխրագույն՝ Գյոգիշ
Երկու գույն ունեցող՝ Քյամար
Ճակատը սպիտակ՝ Ղաշղա
Լայն ականջավոր՝ Թալվար
Նեղ ականջավոր՝ Թալլու
Կարճ ականջավոր՝ Քյառա
Ականջների վրա պուտերով՝ Թանեգ
Վզի վրա խալ ունեցող՝ Խալդար
Վզին, ականջին կինդ ունեցող՝ Կինդրիկ
Սև շեկավուն մազեր ունեցող՝ Վարազ
Նեղ, երկար ականջներ ունեցող՝ Ղազտի
Ուղիղ եղջյուրավոր (ցից պոզավոր)՝ Դիքչա
Դարչնագույն մազերով՝ Մըրղըզ:

Ղարադաղի հայերը ուղտ, գոմեշ ու խոզ չէին պահում:

Հեծնելու և բեռնափոխադրման համար պահում էին ձի, ջորի և էշ (ավանակ):

Ձի. ձիերի սեռատարիքային անվանումները. արու՝ «վըրձ ձի», էգ՝ «մատակ», մեկ տարեկան՝ «քոռակ», երկու տարեկան՝ «դայ», երեք տարեկան՝ «կես բեռնը»:[50]

Չորս տարեկանից ձին համարվում էր լրիվ բեռնատար:

Քեյվան և Մինջևան գավառակները ունեին հարթ և հարմար տարածքներ ու ճանապարհներ, շահավետ էր բեռնափոխադրման համար ձի պահել:

Ղարադաղի հայերը ձիաբուծությամբ չէին զբաղվում, ձեռք էին բերում ու պահում արու ձիեր:

Ջորի. Դիզմար գավառակի տարածքը լեռնային էր, ուներ դժվարին ճանապարհներ: Այնտեղ ջորի պահելը հարմար ու շահավետ էր, քանի որ նման ճանապարհները հաղթահարելու համար ջորին ավելի դիմացկուն էր, քան թե ձին: Այդ առումով Դիզմար, Հասանով և Մեշափարա գավառակներում բեռնափոխադրման համար ջորի էին պահում:

Հանրահայտ փաստ է, որ ջորին սերունդ չի տալիս, ծնունդ է առնում ձիու և էշի խաչասերումից:

Ջորիների արուները շատ չար են լինում, այդ իսկ պատճառով երկու ամսականում հասակում ամորձատում էին:

Շատերին հետաքրքրող այն հարցին, թե «Ինչո՞ւ ջորին չի ծնում», ղարադաղցի հայը, իբրև գործին քաջատեղյակ՝ մեծ ոգևորությամբ կպատմեր հետևյալ ավանդազրույցը. «Ջհուդնեն, որ ուզեցալն Քրիստոսեն փռնն՝ խաչն, Քրիստոսը փախալ ա: Փխչիս տեղը ջիհալ ա մի ջորու: Ջորուն փռնալ ա, եր ինալ, գենցալ նի մտալ մի քուլոտ, գյող կացալ: Ջուհուդնեն շոռն եկած Քրիստոսեն ճարն՝ էտ վախտը ջորեն քուլորումը խըրխընջացալ ա: Ջուհուդնեն Քրիստոսեն տեղը գիդացալն:

Քրիստոսը ջորուն անիծալ ա, ասալ. «Քանե աշխարքը կա, դու անբերք մնաս: Էտ օրվանից ջորեն ծնիս չի»:

Գեղեցիկ ու արագավազ կարմիր գույնի ձիուն և ջորուն անվանում էին «ղամար»: Ղարադաղցիները մոխրագույն «գույնին» անվանում էին «բուզ ըռանգ»: Այդ առումով էլ մոխրագույն ձիուն և էշին անվանում էին «բուզ ձի» և «բուզ էշ»:

[50] Եթե ձիուն բարձում էին 200կգ բեռ, երեք տարեկանին կարելի էր բարձել 100կգ:

Արու ջորուն անվանում էին «վըրծ ջորե», էգ ջորուն՝ «մաչա ջորե», մինչև մեկ տարեկանին՝ «ջորու քուռուկ», երկու տարեկանին՝ «ջորու դայչա», երեք տարեկանին՝ «կես բեռնը», չորս տարեկանին՝ «բութուն բեռնը»:

Էշ (ավանակ). Ղարադաղի բնակչության չքավոր ու միջակ ընտանիքների միակ գրաստն էր:

Գուցե տարօրինակ թվա, բայց ղարադաղցու համար առաջին անհրաժեշտությունը ոչ թե լծկանն էր, որը կազատեր հողը ձեռքով մշակելու ծանր աշխատանքից ու կբարձրացներ աշխատանքի արդյունավետությունը, այլև գրաստը:

Գյուղացին գրաստ ունենալու դեպքում ազատվում էր թոխուրն ու սերմացուն շալակով փոխադրելուց, բերքը կալից տուն, տնից ջրաղաց տանելուց, անտառից ցախ տեղափոխելուց և նման շատ ուրիշ ծանր աշխատանքներից:

Ավանակ ունենալու անհրաժեշտությունը գյուղացին պատճառաբանում էր այպես. «Որ կարմ պատառ օժըս հվաքմ, պարտքու տակ վեչ ինգիմ, մի էշ իք օնըմ, շլակեն տակեն նանե պրծնմ, էտ լա ըստուծանե մի մըծ փառք կինի, ջանս պատառ կդինջանա»:

Գրաստներին զանազան անվանումներ չէին տալիս, ինչպես խոշոր անասուններին: Դրանք տրվում էին ըստ գույնի. սըվ ձի, սիպտակ ձի, կարմուր ձի: Նմանապես՝ սըվ ջորե, սիպտակ ջորե, կարմուր ջորե:

Որոշ հայաբնակ գյուղերում ամոթալի էին համարում «քած» (էգ) էշ պահելը, իսկ որոշ գյուղերում առավելություն էին տալիս:

Խանագահցիների համար շատ ամոթալի էր քած էշ պահելը: Եթե անգամ ամենաընտիր քած էշը ձրի տային, նա չէր ընդունի, քանի որ ամոթանք կտային ու կենթարկեին ծաղրուծանակի:

Նորաշեն ու Ղուլուդի գյուղերում նախապատվությունը տալիս էին քած էշին, ասելով. «Դե քած էշեն սորինը էն ա, որ տարուն մի քուռուկ ա ետ գըձիս: Մարթ ծխիս ա, տալիս մի ցավու»:

Արու էշին անվանում էին «վըրծ էշ», էգին՝ «քած էշ», 1-2 տարեկանին՝ «քուռուկ», երեք տարեկանին՝ «կես բեռնը», չորս տարեկանին՝ «բութուն բեռնը»:

Բոլոր գրաստներին՝ ձիուն, ջորուն, էշին պայտում էին երկաթե նալով: Նալը գրաստի ոտքին ամրացնում էին 4-6 երկաթե մեխով:

Ուշ գարնանը, ամռանը և աշնան սկզբին նալերը ամրացնում էին քառակուսի փոքրիկ գլխիկներով մեխերով, իսկ ձմռանը օգտագործում էին

սրածայր գլխիկներով մեխեր, որոնք մխրճվելով սառցապատ գետնի մեջ, թույլ չէին տալիս, որ գրաստի ոտքը «սոթ տա» (սահի):

Փալան (համետ). Ղարադաղում գրաստներով բեռների փոխադրման համար օգտագործում էին երկու տեսակ համետ:

Հայերը համետը կարել էին տալիս «քեչայից» (թաղիք), իսկ մյուս ազգությունները՝ «ջագյան» բուսատեսակից:

Թաղիքե համետը միայն առջևի մասում, որպես հենակ ուներ մեկ կամար, բեռը առաջ չգնալու համար:

Համետի կենտրոնում, հենակին մոտ փոքրիկ անցք էին թողնում օդափոխության համար, որպեսզի գրաստի մեջքը չքրտներ:

Ջագյան համետը նման էր ուղտի մեջքին: Այն առջևի և ետևի կողմերում ուներ ծվածև, դեպի վեր ցցված հենակներ: Ջագյան փալան էին անվանում այն պատճառով, որ գործվածքի հաստ ու ամուր կտորի մեջ ջագյան կոչվող խոտատեսակ էին լցնում: Ջագյան բույսն ուներ գորշ գույն, կլոր ու երկար ցուրբ ցողուններ, շատ ամուր, դիմացկուն ու ճկուն էր, ծանր բեռների տակ չէր փշրվում:

Ջագյան փալանի մեջ լցնում էին նաև ցորենի հաստ ու ընտիր ցողուններ:

Շոն (շուն). շունը ղարադաղցու հավատարիմն էր, նրա պահապանը, զենքը, ունեցվածքի հսկիչը, գողերի ու գայլերի հետ կռվի բռնվողն ու անբաժանելի ընկերը:

Շներին կերակրելու համար գարու ալյուրից առանձին «լեփ» (հաց) էին թխում ու «լակ» (ճաշ) եփում:

Ղարադաղում տարածված էր շների միայն հովվական գամփռ խոշոր տեսակը: Շները գիշերները գյուղի անդորրը հսկողն էին, նախիրների ու ոչխարի հոտերի պահապանները, որսորդների անբաժան ընկերները:

Պահելու համար գերադասում էին ընտրել «քյոփագ» (արու) շներին: Ամեն մի գյուղում հազիվ թե մեկ, երկու «դալ» (էգ) շուն գտնվեր:

Դալի «ցիյնելուց» (ծնել) հետո «թուլաները» (լակոտ) երեք օրական հասակում ջոկում էին, էգերին գյուղից դուրս գտնվող աղբանոցներում հորում: Ործ թուլաները պահում, մեծացնում և մեկ ամսականում բաժանում էին համագյուղացիներին՝ նվիրատվության կարգով, առանց վճարի:

Թուլաների ականջները և պոչը կտրում էին մեկ ամսականում:

Ականջները կտրում էին, որպեսզի անցքերը ազատ լինեին լսողության համար: Շունը ցուրտ եղանակին միշտ կծկվում է, պոչը դնում քթախորշերի վրա, տաքացնում շնչառությունն ու քնում: Այդ պատճառով պոչը (հա-

գի) կտրում էին, որ շնչառությունը ազատ լինի, հոտառությունը չխանգարվի նաև քնած ժամանակ:

Շների վերաբերյալ հայրս պատմում էր մի հետաքրքիր դեպք. «1904թ. գյուղում հովիվ էի, Մելիք-Աղաջանյանները Ջալալ անունով մի դալ ունեին, շատ ջանասեր ու կատաղի շուն էր: Ոչխարների արոտի ժամանակ, աշնանային մի օր շունը կորավ: Ափսոսում էինք շանը և հաջորդ օրը գնացինք փնտրելու:

Դրունգու կոչվող հեռու հանդամասում, որտեղ շունը կորել էր, մեր աղմուկ աղաղակի, բարձրածայն կանչի վրա, շների հաչոց լսեցինք անտառի մի բացատից: Եվ ի՞նչ, ի զարմանս բոլորիս, շունը գտնվում էր գայլերի ոհմակի մեջ: Մեր հարայ հրոցից, հրացանների կրակոցներից, գայլերը փախան, իսկ շունը եկավ մեզ մոտ: Հաջորդ գարնանը շունը ծնեց, հինգ թուլա ունեցավ: Բոլոր թուլաները գայլի նմանություն ունեին՝ մանավանդ գլուխներն ու ականջները: Հասկանալի դարձավ, որ շունը կորած ժամանակ սերվել էր գայլերի հետ:

Արուներից մեկին անվանեցինք «Ղարա» (սև), մյուսին՝ «Աղգիղարա»: էգ թուլան նման էր մորը, դրա համար էլ անվանեցինք նրա անունունով՝ «Ջալալ», որը երկու տարեկանում հարձակվում էր ոչխարի վրա և հոշոտում, ինչպես գայլ: Ղարան ու Աղգիղարան զարմանալի զգոն ու հավատարիմ շներ դարձան, ինչպես ժողովուրդն է ասում. «Օտար ձիավորին ձիուց ցած էին իջեցնում»:

Շների սեռատարիքային անվանումները. արու՝ «քյոփագ», էգ՝ «դալ» և «ղանջղ», մինչև մեկ տարեկան՝ «թուլա», երկու տարեկան՝ «անիգ», երեք տարեկան՝ «շոն»:

Շատ ու բազմազան էին շների անունները, արուների և էգերի անունների մեջ գրեթե տարբերություն չկար. Ալա, Ալաբաշ, Թոփաշ, Բասար, Բիստի, Ջալալ, Կենոփ, Ղարա, Աղգիղարա, Բոզդար, Սարու, Ղորխմազ, Խալդար, Գյոդակ, Ղարաջ, Բոզդար և այլն:

Կատու. հայերը կատուն սուրբ կենդանի էին համարում: Կատվին չէր կարելի սոված թողնել, ծեծել ու սպանել:

Կատուն ապահովում էր տան մաքրությունը: Ղարադաղցու տասնյակ քունջ ու պուճախ ունեցող տանը անպակաս էին մկները, որոնք կրծում, ծակոտում էին պարկերը, ջվալները, ընկնում կաթի, մածունի, յուղի կճուճների մեջ ու հարամում սննդամթերքը:

Հետաքրքիրն այն է, որ Ղարադաղի հայերը ծգտում էին պահել արու շուն, բայց նախընտրում էին էգ կատուն, քանի որ արուները գող էին, թափառական ու անհավատարիմ:

Կատուն, երբ ծնում էր, տեղյակ էին պահում բարեկամներին ու հարևաններին: Որքան պետք էր պահում էին, մյուսներին՝ հորում աղբանոցներում:

Ղարադաղցիները հավատացած էին, որ. «Կատուն մեխկ ա, կատուն սուրփ ա: Կատուն, մանցած հեյվաննոն նման, աստուծ չի ստեղծած, կատուն Քրիստոսեն ծրքը յուլլխն ա»:

Ղարադաղի հայերի մեջ պահպանվել էր հետևյալ ավանդությունը.

«Մհետ Քրիստոսը գինիս ա մի տան ղոնաղ ա ինգիս: Սուփրան բիրիսն՝ հաց դիրիս: Քրիստոսը հալա ձեռքը հացեն մըկնած վեչ, հալա մի թիքա կերած վեչ, մոկնրը տանը քյունջը-պճուխնան նանե դուսն ղըռնալիս, գյուլիս սուփրոմը հինչքան հաց կա դիրած, ուտիլիս:

Քրիստոսեն փիսն ա գյուլիս: Ջուբեն նանե յալլխը դուս ա ունիս, դիրիս ըռշկին, խաչակնքիս: Յալլխը ղըռնիս ա կատու, մոկներեն փռնիս՝ խղդուտիս: Էտ օրվանից կատուն արսայա գյուլիս, շտնալիս՝ օմեն տան հացը լցրիլիս: Ըդուր հետե ալ, կատուն՝ հունչոր Քրիստոսեն յալլխը, թակիլը, ուշունց տալը, ըսպանիլը մեխկը բեն ա»:

Կատուների սեռատարիքային անվանումները. արու՝ «առջակատու», էգ՝ «քած կատու», ձագ՝ «կատվու ծեգ»:

Ղարադաղի հայերը բեղմնավորման պահանջ ունեցող կենդանիներին ասում էին.

Կովին՝ «բեր» ա գյուլիս կամ «քլվըզ ա»,

Ոչխարին՝ «ղոչավ ա»,

Այծին՝ «թիքյավ ա»,

Ձիուն, էշին՝ «թիլաբավ ա»,

Շանը, գայլին, կատվին, արջին՝ «քոնքավ ա»:

Ղարադաղցիները շատ ջերմորեն էին կապված իրենց ունեցած բոլոր կենդանիների հետ:

Կենդանու կորուստը վիշտ ու տխրություն էր պատճառում ամբողջ ընտանիքին: Լացում ու սգում էին այնպես, ինչպես հարազատի կորստի համար:

Ղարադաղի հայերը աչքի ընկնող ծին, ջորին, եզը, կովը չարատեսությունից ու չար կամեցողությունից հեռու պահելու համար դիմում էին հետևյալ միջոցներին. բաց կապույտ կամ սպիտակ պուտերով սև գույնի

խոշոր ուլունքը թելով կապում էին կենդանու ճակատին կամ կախում վզից:

Գրբացների մոտ գիր էին անում, ծալում եռանկյունածև, կարում կապույտ կամ կանաչ կտորի մեջ և կապում կենդանու ճակատին կամ կախում վզից:

Սուրբ ծառ համարվող բռնչենի ծառի մատնաչափ փայտի կտորի վրա նախշեր էին անում ու որպես հմայիլ կապում անասունների ճակատին կամ կախում վզից:

Խոշոր եղջերավոր անասուններին քշելիս ասում էին՝ հօ, հօ-հօ,

Մոտ կանչելիս՝ բիժի, բիժի,

Մոլորվածին գտնելու համար՝ բիժըր, բիժըր,

Կանգնացնելու համար՝ օհօ, օհօ,

Ետ դարձնելու համար՝ իշ, իշ:

Արորին լծած եզներին, երբ ակոսը վերջացնում էին, հարկավոր էր ետ դարձնել: Այդ ժամանակ ծախ կողմի եզանն ասում էին՝ Աբռաշ իշ, իշ: Աջ կողմի եզը, որ պետք է շրջվեր, վերադառնար նոր ակոսը, անունը տալով, ասում էին՝ Խումար, հես, հես: Ճանապարհով շարժվելու համար՝ հօ, հօ, օհօ:

Ոչխարներին դաշտ տանելիս, ասում էին՝ քիսի, քիսի:

Այծերին քշելիս և կանգնեցնելիս, ասում էին՝ տու ք՛շ, տու ք՛շ, մոտ կանչելիս՝ բիչի-բիչի, բիչի-բիչի: Ոչխարների ու այծերի խառնված հոտը բաժանելիս՝ թեյ-թեյ:

Բոլոր գրաստներին դիմում էին միևնույն արտահայտությամբ.

Քշելիս՝ դահ (Դիզմար գավառակում),
Քեյվան գավառակում՝ չու, չու,
Կանգնեցնելիս՝ չոքը՛շ, չոքը՛շ,
Մոտ կանչելիս՝ քուռի, քուռի,
Սայթաքելիս՝ յալլահ հա յալլահ,

Բեռ կրող գրաստը, եթե կպչում էր ծառի, ժայռի և կորցնում հավասարակաշռությունը, ասում էին՝ փալհա, գնալու, ընթացքը արագացնելու՝ գյալհա:

Շանը հեռացնելիս՝ ա շոն կորեյ,
Մոտ կանչելիս՝ բչո, բչո,
Կռվացնելիս, քաջալերելիս՝ քուշ-քուշ,
Փաղաքշելիս՝ քուչի-քուչի,
Կատվին հեռացնելիս՝ փշտա, փիշտե,
Մոտ կանչելիս՝ փիշի, փիշի:

Անասունների հանած ձայները.

Եզնը բիչիս ա,

Եթե խոշոր անասունը խմբով էր ձայն հանում, ասում էին «տավարը նայեն գյուռ բիչալիս ա»,

Վըչխարը՝ բիչիս ա,
Էծը՝ մկկալիս ա,
Ձին, ջորին՝ խրխնջալիս ա,
Էշը՝ զըռզռալիս ա,
Շոնը՝ հչիս ա,
Խոզը՝ խըռխըռցրիս ա,
Կատուն՝ կլվընչալիս ա:

Տեղին է նշել մի քանի թռչունների արձակած ձայներին վերաբերվող գուշակությունները՝

Վըրծակը կնչիս ա՝ ղոնաղ ա գյուղական,
Հավը կըչկչալիս ա՝ ծու ա ըծլական,
Քաշը կըռկռալիս ա՝ ծուն կգյո,
Քչեղակը չըրթչըրթալիս ա՝ պարի խաբար կլըսնի,
Ծըտրը ծըլվըլալիսն՝ գյորունք ա բինվնական (բացվելու),
Ծիծեռնակնեն եկալըն՝ ալ գյորունք ա:

Բեղմնավորման ենթակա ոչխարին ասում էին «վըչխարը ղոչավ ա», իսկ այծին՝ «թիքյավ ա»:

Եթե կենդանիները, տարիքային առումով շուտ էին հղիանում, համարվում էին «բիջանսգյա»:

Որպես մատաղացու հարգված էր արու հորթը, գառը և ուլը: Այս առթիվ Ղարադաղի հայերն ունեին մի շատ հետաքրքիր ժողովրդական առած. «Վըրծ դանան, գյոռնը, հուլը՝ մատաղացու ըն աստուծե հետե, տղան ալ մատաղացու՝ իրան վաթանեն հետե»:

Ամեն տարի Սուրբ Խաչ տոնին հայտարարվում էր «բոստան փոզի» (բանջարեղենի վերջնական հավաքում):

Այդ օրը գառնարածները և հորթապահները մահակները ցած էին դնում և իրենց պարտականությունը համարում ավարտված: Գառները, ուլերը և հորթերը միացնում էին մայրական կազմին:

Նախրապաններն ու հովիվները իրենց աշխատանքը շարունակում էին մինչև ուշ աշուն՝ ձյան տեղումները:

Սեպտեմբերին բեղմնավորված ոչխարներն ու այծերը ծնում էին հաջորդ տարվա փետրվար ամսին:

Գարնանային ցրտերի ու կերի պակասի պատճառով մատղաշի կորուստները հասնում էին մեծ չափերի, սակայն խոյերին ոչխարի հոտին խառնելու ժամանակը չէին փոխում, պնդելով. «Մընք մըր պապերից եկած դիրվածքը կարի չնք փոխի: Օմեն մի մարթու, որ աստված ըստեղծած ա, իրան փայ ղսմաթն ալ իրան նետ տված ա: Պապականը թողած, նորեն հետեն գենցուղը կփիշմանի: Աստված հինչ ղսմաթ ա տված, ընդուրավ ալ պետք ա յոլա գինս»:

Քյաղ (ձմեռանոց). հայաբնակ և լեռնային գոտու շատ թրքաբնակ գյուղեր ունեին իրենց ձմեռանոցները: Ձմեռանոցները գտնվում էին գյուղերի մոտակա, համեմատաբար տաք ու բարենպաստ կլիմա ունեցող տարածքներում:

Ձմեռանոցների շրջակա արոտավայրերում գարնան, ամռան ու աշնան ամիսներին անասուններ արոտ տանելը խստիվ արգելվում էր. համարվում էր «ղորուղ» (արգելանոց):

Խանագահցիներն ունեին երկու ձմեռանոց՝ Թուռուդուլ և Թիթի, որոնք գտնվում էին գյուղից 10-15կմ արևմուտք:

Ձմեռանոցների շինությունները միանման էին, ունեին 10-12մ երկարություն և 6մ լայնություն: Դրանք ունենում էին մեկ մուտք և տախտակից պատրաստած դուռ:

Շինության առջև ցաքի մացառներով ցանկապատած ընդարձակ հարթ տարածք էր լինում, որը կոչվում էր «արխաջ»:

Արխաջը կարևոր նշանակություն ուներ ձմեռանոցի համար: Առավոտյան և երեկոյան անասուններին կերակրում էին այնտեղ: Տաք ու պարզկա եղանակներին անասունները գիշերում էին արխաջում:

Ձմեռանոցների կացարանը ցանկապատով բաժանում էին երեք մասի, խոշոր անասունի, ոչխարի ու այծի համար: Կենտրոնական մասը բնակելի հատվածն էր, պատի կենտրոնում՝ օջախը:

Օջախի աջ ու ձախ կողմերում, երկարությամբ փայտե թախտեր էին պատրաստում: Թախտերին փափուկ խոտ էին փռում ու ծածկում կարպետներով, որոնց վրա նստում և քնում էին:

Ձմեռանոցում ոչխարն արոտի էին տանում երկուսով: Հերթ էր սահմանված՝ տասը գլխի համար մեկ օր: Խոշորի համար հերթ չկար: Տարեց մարդիկ մոտիկ տարածքներում արածեցնում, չոր ցախ էին հավաքում երեկոյան օջախը վառելու կամ տուն ուղարկելու համար, մալմուլի և նռան թփերի ճկուն ճյուղերից ցախավել կապում և այլն:

Երբ երեկոյան անասունները տեղավորում էին ու ընթրում, հավաքվում էին ամենատարեց ու բանիմաց մարդու կացարանում: Մեծահասակները հետաքրքիր արկածներ, հեքիաթներ ու առակներ էին պատմում:

Ձմեռանոցներում նման հավաքներ տեղի էին ունենում ամեն երեկո:

Տարեց մարդիկ առանձնանում էին մի թախտի վրա, զրուցում իրենց հետաքրքրող առօրյա հոգսերից, պատմություններ ու հեքիաթներ պատմում, մյուս թախտի վրա էլ երիտասարդները հավաքվում, զբաղվում էին թղթախաղով, ընկույզով «բանգ» էին խաղում, ծիծաղում և ուրախանում:

Ձմեռանոցներում կանանց աշխատանքի կարիքն զգացվում էր, երբ սկսվում էր ծնի սեզոնը: Նրանք խնամում էին գառներին և ուլերին, կաթ էին մշակում և այլն:

Այդ սեզոնին շատերը ձմեռանոց հաց չէին տանում: Ձմեռանոցում ալյուրը կաթով շաղախում էին և օջախի կարմրած քարերի վրա ամեն օր բաղարջ թխում:

Ձմեռանոց գնում էին ուշ աշնանը և գյուղ վերադառնում գրեթե ապրիլին:

Բոլոր գյուղացիները չէին կարողանում օգտվել ձմեռանոցից. դրանք մատչելի էին միայն բազմանդամ և ունևոր ընտանիքներին:

Գյուղում մնացած անասունները վաղ գարնանը արոտի էին տանում հերթով, տասը գլուխ ոչխարի ու այծի համար՝ մեկ օր:

Գյուղական համայնքներում նախրապաններ ու հովիվներ նշանակում էին ապրիլին, երբ ձմեռանոցներից բոլորը վերադառնում էին:

Ապրիլին գյուղի տանուտերը հրավիրում էր հասարակության ընդհանուր ժողով, որտեղ ընտրվում և նշանակվում էին նախրապաններ ու հովիվներ, հաշվի առնելով նախորդ տարիների նրանց ժրաջան, հոգատար աշխատանքը: Նախրապաններն ու հովիվները պետք է վայելեին հասարակության սերն ու հարգանքը, մարդկաց վստահությունը:

Հովիվներին ու նախրապաններին անվանում էին «մուզդար» (պրս.՝ վարծու աշխատող): Մուզդարների վարձատրության չափը նշանակում էր ընդհանուր ժողովը, հետևյալ կարգով. նախրապանը ամեն մի գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար ստանում էր մեկ գուշ ցորեն (մոտ 5կգ): Ողջ սեզոնի ընթացքում, ամեն օր նախիրը գյուղ բերելուց հետո ամեն մի ընտանիքից վերցնում էր մեկ հաց:

Հովիվը մեկ գլուխ ոչխարի կամ այծի համար ստանում էր 10 շահի: Հովիվը, որպես վարձ հաց չէր ստանում, հաշվի առնելով այն, որ նրան իրավունք էր վերապահվում ամեն օր մի ոչխար կամ այծ կթել: Հովիվներին

իրավունք էր վերապահվում նաև կեսօրվա հանգստի ժամին կաթով հյուրասիրել նաև նույն հանդամասում գտնվող նախրապանին, հորթարածին և գառնարածին:

Հորթապահներն ու գառնարածները վարձատրվում էին կաթով: Ամեն շաբաթ օրվա երեկոյան կաթը պատկանում էր նրանց:

Նրանք մեծ պղնձե կաթսաներ էին դնում գյուղի հրապարակում: Ամեն մի հորթատեր ու գառնատեր նրանց հասանելիք կաթը տանում, լցնում էր դրանց մեջ:

Եթե փոքր գյուղ էր, որն ունենում էր մեկ նախիր կամ ոչխարի հոտ, հորթարածն ու գառնարածը վարձը ստանում էին առանձին:

Քանի դեռ անասունները կթվում էին երկու «ժեմ» (անգամ), առավոտյան և երեկոյան անասնատերերը պարտավոր էին երկու հերթի կաթն էլ հանձնել հորթապահներին ու գառնարածներին՝ շաբաթ երեկոյան և կիրակի առավոտյան:

Եթե մեծ գյուղ էր, և անասունների գլխաքանակը շատ էր լինում, խնամում էին երկու հոգով: Հավաքած կաթը հավասար բաժանում էին: Մուզդարների վարձատրությունը այսքանով սահմանափակվում էր:

Մուզդարները պարտավոր էին անվնաս պահել իրենց վստահությանն ու պահպանմանը հանձնած անասունները:

Մուզդարը պարտավոր էր վճարել կորցրած անասունի արժեքը: Եթե անասունին գայլերն էին հոշոտել, նա, որպես ապացույց պետք է ներկայացներ անասունի «բարաթան» (ճմուշ, հոշոտածից որևէ կտոր):

Մուզդարին իրավունք էր վերապահվում հոտի պահպանման համար իր հետ դաշտ տանել ցանկացած գյուղացու շուն:

Նկատի ունենալով, որ հրազեն պահելն ու օգտագործելը պետությունը խստիվ արգելել էր, գյուղական խորհուրդը, տանուտերի գլխավորությամբ, պարտավոր էր երաշխավորելու իշխանությունների ներկայացուցիչներին, որ հովիվները որսորդական հրազեն ունենային՝ անասուններին վայրի գազաններից ու գողերից պահպանելու համար:

Գյուղացիների ու մուզդարների միջև գրավոր պայմանագիր չէր կնքվում: Անասուններին արոտ տանելու համար կոնկրետ ամիս և օր չէր նշվում, տևում էր ապրիլի սկզբից մինչև նախրաթող (նոյեմբեր), երբ դաշտերը ծածկվում էին ձյան սպիտակ սավանով:

Մուզդարների վարձատրման ժամկետ չէր սահմանվում: Տարվա ընթացքում, երբ անասնատիրոջ միջոցները ներեին, նա առանց առարկությունների ու պատճառաբանությունների տալիս էր հասանելիք վարձը:

Շատ հաճախ անասնատերերի և մուզդարների միջև կատարվում էր հետևյալ գործարքը. եթե անասնատերը ի վիճակի չէր վարձը ցորենով վճարել, այդ դեպքում հաշվում էին մեկ գուշ ցորենի արժեքը և վճարումը կատարում դրամով: Լինում էր և հակառակը, երբ անասունի տերը ի վիճակի չէր լինում դրամով վճարել, բայց առատ ցորեն ուներ: Այս անգամ արդեն վճարումը կատարվում էր դրամին համարժեք ցորենով:

Պատահում էր նաև, որ շատ անասուն ունեցողները մուզդարներին վարձի դիմաց անասուն էին տալիս:

1936թ. գավառի հայերի տնտեսական վիճակն ու ապրելակերպը շատ էր բարձրացել: Մինչ այդ մուզդար դառնալու համար խնդրող մարդիկ, արդեն բավարար միջոցների տեր էին դարձել և հրաժարվում էին նախրապան ու հովիվ դառնալուց՝ համարելով դա չքավոր կյանքի ամոթալի զբաղմունք:

Այդ ժամանակներից հայաբնակ գյուղերում սկսեցին հայտնվել չքավոր թուրքեր և քրդեր՝ մուզդարություն անելու նպատակով:

Հայաբնակ գյուղերի տանուտերերը և ավագանու անդամները գնում էին թրքաբնակ ու քրդաբնակ գյուղերը և տեղի «քյուդխուդաների» համաձայնությամբ ու երաշխավորությամբ, չքավոր մարդկանց, որոնք անասուն պահելու փորձ ունեին, ժամանակավորապես, իրենց ընտանիքներով գյուղ էին բերում, ապահովելով կացարանով:

Մուզդարից անասունի գլխաքանակը թաքցնելը, կաթի ոչ լրիվ հանձնումը, համարվում էր սրբապղծություն:

Ղարադաղցիները այն կարծիքին էին, որ «Մուզդարը մեխկ ա, սաղ օրը իրիսը քոլեն, քարեն, քամուն, ըրևեն ա տալի: Մուզդարեն հախը կտրող մարթու բարաքյաթը աստուծ կկտրի»:

Մորթ. կենդանիների մորթը կատարում էին բացառապես տղամարդիկ:

Մսի առանձին մասերն ունեին ժողովրդական անվանումներ. առջևի ոտքերը՝ «երե», ետևինը՝ «բուդ»:

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐ

Ղարադաղն ուներ ընդարձակ տարածք ու նոսր բնակչություն: Փարթամ բուսականությամբ հարուստ ալպյան արոտավայրերը օգտագործում էին «էլը» (խաշնարած համայնքներ) և շահսուվարցիք, որոնք բնակվում էին Կասպից ծովի արևմտյան տարածքում, խաշնարածության համար

հարուստ արոտավայրեր ունեցող Մուղան հարթավայրում, որտեղ ձմեռը մուտք չի գործում:

էլի ամեն մի ղեկավար (էլդար) հազար գլխից ոչ պակաս ոչխար էր ունենում:

Նրանք հիմնականում քոչվոր ցեղեր էին, որոնք տարվա մեծ մասն անց էին կացնում Մուղանում և տներ չունեին: Ուր էլ լինեին, նրանց բնակարանները հատուկ եղեգե հենակների վրա ամրացված թաղիքածածկ «օբաներն» էին:

Խանագահի տարածքով Խոյնարի լեռնաշղթայի ալպյան արոտավայրերը բարձրացող Հաջի Իմանը 1000 գլուխ ոչխար ուներ: Նրանց բոլոր ոչխարները դմակավոր էին, ունեին սպիտակ, ծյունանման փափուկ բուրդ: Առանձին խոյերի դմակները կշռում էին 15-20կգ: Շատ խոյերի գետնահաս դմակի տակ փայտե գլանակ (գլդորան) էին դնում, նուրբ պարաններով կապում մեջքին, որ խոյը կարողանար տանել:

Հաջի Իմանի համայնքի բոլոր ընտանիքները համարվում էին նրա ծառաները: Ամբողջ ընտանիքներով ծառայում էին, աշխատում նրա համար: Տղամարդիկ հովիվներ էին, իսկ կանայք կթում էին ոչխարները, բուրդը լվանում, գզում ու թաղիք պատրաստում: Բրդից թել էին մանում, կարպետներ գործում: Ոտաբոբիկ պատանիներն ու աղջիկները խնամում, արոտի էին տանում գառներին, խնոցի հարում և մեծերին օգնում մնացած աշխատանքներում:

Գարնանը ծյան հալոցքի հետ կազմակերպվում էր արոտը, նրանք աստիճանաբար բարձրանում էին լեռներն ու ալպյան արոտավայրերը: Աշնանը, ծյան տեղումների հետ, աստիճանաբար իջնում էին լեռներից ու գնում Մուղանի հարթավայրը:

Մուղանի քոչվոր ցեղերը խոշոր եղջերավոր անասուն չէին պահում: Նրանց փոխադրամիջոցը ձին էր և ուղտը:

Էլը դեպի լեռնային գոտի շարժվելիս բնակության ոչ մի հետք չէր թողնում: Ինչ որ անհրաժեշտ էր և հնարավոր օբաներ կառուցելու համար, հետները տանում էին, իսկ մնացածը հրդեհում:

Բնակատեղերի հրդեհումը կապված էր այն բանի հետ, որ Մուղանում տարածված էին սև, մոխրագույն թունավոր օձեր, որոնց երկարությունը հասնում էր 4-5 մետրի: Ամռան շոգերից պատսպարվելու համար օձերը բուն էին դնում բնակատեղիներում և նրանց վերադարձի ժամանակ օձերի խայթոցներից՝ հաճախ մարդկային զոհեր էին լինում:

Ղարադաղի հայերը սար բարձրանալու լավ տարածքներ ունեին ամռան շոգին գյուղերից անասուններին դուրս բերելու համար, սակայն բազմազան աշխատանքները թույլ չէին տալիս գյուղից հեռանալ:

Ղարադաղցիները գյուղերի մերձակա տարածքներում ունեին փարթամ ու ընդարձակ արոտավայրեր, որոնք օգտագործում էին խնայողաբար, անտեղի շռայլումներ չէին կատարում:

Արոտավայրերը նպատակին օգտագործելու համար բոլոր գյուղերն ունեին սահմանված կարգ ու կանոն:

Համաձայն գյուղի հասարակության սահմանած կագի, գյուղի նախիրը, ոչխարի հոտը, գառներն ու հորթերը պետք է տանեին նույն հանդամասը: Դա արվում էր արոտավայրերը արդյունավետ օգտագործելու նպատակով: Արևոտ ու տաք օրերին օգտագործում էին լեռնային արոտավայրերը, անձրևոտ օրերին՝ արևահայաց, քարքարոտ վայրերը, իսկ ցուրտ, անբարենպաստ օրերին՝ ցածրադիր ու տաք դաշտերը:

ԹՌՉՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ղարադաղում ընտանի թռչուններից տարածված էր միայն հավը: Շատ ամոթ կլիներ այն ընտանիքին, որը 10-12 հավ ու մեկ աքլոր չունենար:

Խանագահցիներ Մինա Հովսեփյանը, Նուբար Սեյրանյանը, Թամար Ոսկանյանը, Նազլու Սարգսյանը, Զմրուխտ Վարդանյանը, Ոսկի Աղաջանյանը և շատ այլ ընտանիքներ պահում էին 100-ից ավելի հավ:

Եթե մարդ խիղճն ու աստվածը մոռանար ու որևէ ընտանիքից մինչև տասը հավ գողանար (նման դեպքերը բացառված էին), տերը չէր կարող տեղյակ լինել, քանի որ ամեն օր հավերին չէին հաշվում:

Հավի մասին կար ժողովրդական հետևյալ առածը. «Գյոռնը դեչանը հանդեն նհետ գյուլը, հավը ղունաղեն հղեյա դիրիս»: Եվ իրոք, ճիշտ ու տեղին էր ասված, եթե տուն հյուր էր եկել ու շտապում էր, հնարավոր չէր գնալ դաշտից գառ բերել ու նրան հյուրասիրել, ապա շտապ կարող էին հավ մորթել, ձու խաշել կամ ձվածեղ անել:

Հավերի խնամքով զբաղվում էր տանտիկինը (տընտեգյոն), իսկ նրա բացակայության դեպքում, ընտանիքի որևէ չափահաս անդամ:

Հավերին կերակրում էին օրը երկու անգամ: Առավոտյան կերակրում ու քշում էին փողոցներն ու մոտակա աղբանոցները և երեկոյան:

Հավերին տալիս էին ցորենի մանրուք, գարի, հացի և ճաշի մնացորդներ: Գարնանն ու ամռանը հանդից ու բանջարանոցից զանազան խոտեր

էին բերում, շաղ տալիս բակում ու կերակրում հավերին: Ձվատվությունը բարձրացնելու նպատակով ունևոր ընտանիքները նրանց շարունակ կերակրում էին գարու հատիկներով:

Հավերին ջուր էին տալիս փայտե փոքր տաշտակներում:

Հավերի ձու ածելու համար ազատ ախոռներում ու առանձին ազատ անկյուններում դարմանից հարթ ու փափուկ տեղեր էին պատրաստում և մեկ ձու դնում մեջը, որին անվանում էին «բիլական»:

Տնտեսուհին երեկոյան հավաբնում ստուգում էր, թե քանի հավ պետք է հաջորդ օրը ձու ածի: Եթե հավը սկսում էր կչկչալ, գիտեին, որ ձվարկելու ժամն է: Կուտ էին շաղ տալիս, առաջին անգամ ձու դնող վառեկին բռնում ու նստեցնում բնկալի վրա: Այնուհետև նա սովորում ու միշտ նույն տեղում էր ձվադրում:

Շատերը ձվարկման տեղեր չէին պատրաստում ու բնկալ չէին դնում, որի հետևանքով հավերը ձու էին ածում աղբանոցներում, մոտակա ավերակ շինություններում ու պատերի տակ:

Հաճախ էր պատահում, որ այդ հավերը բուն էին դնում պատերի տակ, ձվարկում, թուխս նստում և մի օր էլ, ճտերի հետ գալիս տուն:

Հավերին ձմռանը պահում էին գոմում պատրաստած հավաբներում: Հիվանդություններից զերծ պահելու համար հավաբունը միշտ մաքրում էին, տաք մոխիր փռում ու գոլ ջրով ցողում:

Ամեն ընտանիք պահում էր երկու տարեկան մի քանի աքլոր, որպեսզի հավերը բեղմնավորված ձու ածեին:

Գարնան, ամռան ու աշնան բարենպաստ եղանակներին հավերին պահում էին բարձր «թառերի» վրա: Գոմի կամ բակի որևէ պատին երկու մետր բարձրությամբ փայտ էին ամրացնում, իսկ դրանց վրա՝ զուգահեռ երկար ձողեր: Հավերին ընտելացնում էին բարձրանալ և գիշերել թառի վրա:

Տնտեսուհին նախօրոք հոգ էր տանում թուխս դնելու համար. հավաքում, ջոկում ու պահում էր ընտիր խոշոր ձվերը: Հավի «կըրթկըրթալը» թուխս նստելու նշան էր:

Տնտեսուհին գոմի կամ տան որևէ ապահով ու տաք անկյունում առանձին տեղ էր պատրաստում: Նա բռնում էր թուխս նստող հավին ու գոգնոցի մեջ դնելով 13,15 կամ 17 ձու, մոտենում էր թխսատեղին ու ասում. «Հիսուս Քրիստոս, դու պարին կադարս, թող պարի սհաթեն ինի»:

Գոգնոցից հանած առաջին ձուն երեք անգամ պտտում էր հավի գլխի շուրջն ու ասում. «Ա թխսը էս մի ձուն քո գյլխեն մատաղ ինի, ուզիս չըմ,

էն մանցածը սաղ-սալամաթ դուս կարս, առանց փորձանքի, ճոտը կտաս ինձ»:

Թխսի աջ ու ձախ կողմերում երկու աման էին դնում, ցորենի և ջրի համար, որպեսզի հաճախ վեր չկենար և ձվերը չսառեցներ:

Ձվերից դուրս եկած ճտերին երեք օր կերակրում էին պինդ եփած ձվով, յոթ օր՝ կաթի ու ցորենի ալյուրի շաղախով, այնուհետև՝ ցորեն ու ձավարի աղացած մանր հատիկներ էին տալիս:

Հետաքրքիր է, որ վայրի թռչուններից կաքավի ու սալամի բներում, անխտիր, ճտեր հանելուց հետո միշտ մեկ ձու էր մնում: Գյուղացիները գտնում էին, որ «էտ մի ձուն կքավեն գյլխըմատաղն ա»:

Մյուս վայրի թռչունների բնում ձու չէր մնում, որը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ հայ տնտեսուհիները թուխս դնելու ժամանակ «գըլխըմատաղ» ձուն չէին վերցնում կաքավի ու սալամի օրինակով:

Թուխս էին դնում այնպիսի հաշվարկով, որ մինչև մարտ ամիսը ճտերը դուրս գային:

Մարտին հավը թուխս չէին դնում. դա նորից շարունակում էին ապրիլից:

Ղարադաղցի որ կնոջն էլ հարցնեիր, թե ինչո՞ւ մարտ ամսին թուխս չեն դնում, նա հաստատ ու համոզված կպատասխաներ. «Մարդ ամեսը՝ հավերեն ճոտուրեն ամեսն ա, որ թոխսը դիրնք, ճոտերեն վեզը ձվանցը մաչեն վիգիուլուր կդըռնն, կկուտորվն, վըչ մինը պրծնի չի»:

Կանանց նման գերբնական համոզմունքը սեփական աչքերով տեսնելու համար 1942թ. մարտին խնդրեցի մորս, որ մի հավ թուխս դնի: Մայրս, որ անչափ սիրում էր ինձ, առաջարկս չմերժեց:

Լրացավ պայմանական 21 օրը, անցավ ևս երեք օր, թուխսը ոչ մի ճուտ չհանեց:

Մայրս հավաքեց թխսի տակի ձվերը ու հատ-հատ ջարդեց: Ջարմանքից մնացի քարացած՝ բոլոր ձվերում էլ հասունացած ճտեր կային, բայց վզները ոլորված էին ու անշնչացած:

Մայրս հուզմունքով ասաց.- «Տղաս, մի բենը, որ կասն պետք ա հվատաս: Սոտ բենը ասիչն՝ մեղք ա: Ջուն իմ «մղափունն» (ափսոսանք) չէր գյոլիս, ճոտուրը մեխկն լալ»:

Ղարադաղում քիչ քանակությամբ տարածված էր հավերի մի ուրիշ տեսակ, որին անվանում էին «լյումա» (անպոչ): Թե ինչ առավելություններ ունեին լյումա հավերը սովորական հավերից՝ մսատվությամբ և ձվատվությամբ, պարզ չէ, սակայն ունեին առանձնահատուկ գեղեցկություն:

Արաքսպար գավառակի քրդերը պահում էին հավի մի տեսակ, որն անվանում էին «լառի»:

Լառի աքլորները և հավերը շատ անճոռնի էին, սովորական հավերից տարբերվում էին բավականին երկար ոտքերով ու վզով:

Ասում էին, որ լառի հավերը լավ դիմացկուն են շոգ եղանակներին: Լառի հավ, մասնակիորեն, պահում էին նաև հայաբնակ գյուղերում:

Հավերի մեջ հաճախ տարածվող հիվանդությանը անվանում էին «չոբալաև»: Այն տարածվում էր շոգ եղանակներին՝ հիմնականում հուլիս և օգոստոս ամիսներին: Հիվանդ հավը հրաժարվում էր կուտ ուտելուց, ջուր խմելուց, մի քանի օրից հետո կատարը սևանում էր, մարմինը դառնում կապտագույն: Տնտեսուհիները հիվանդ հավերին կերակրում էին մանրացրած սխտորով ու մածունով, ջրի մեջ լցնում էին փայտածուխի մանրուք:

Ղարադաղի հայերը այն համոզմունքին էին, որ աքաղաղը պետք է կանչի գիշերվա կեսից մինչև արևամուտ:

Արևամուտից մինչև գիշերվա կեսը աքլորի կանչը համարվում էր բոթաբեր, տիրոջ ընտանիքին սպառնացող մոտալուտ վտանգի նախազգուշացում: Աքաղաղի նման անժամանակ կանչը լսելով, մարդիկ անհանգստանում էին, խնդրում աստծուն, որ անսպասելի վտանգը իրենց տնից հեռու տանի:

Բոթաբեր աքաղաղի վիզը դնում էին գոմի շեմի փայտի վրա և ցակատի կամ կացնի մեկ հարվածով կտրում:

Եղել են դեպքեր, երբ ծու ածող հավը սկսել է կանչել աքաղաղի նման:

Նման անսովոր երևույթը մեծ զարմանք ու մտահոգություն է բերել հայ շինականին: Հավի կանչն էլ համարում էին բոթաբերություն, անսպասելի մոտալուտ փորձանք, աղետ ընտանիքի անդամների կամ ունեցվածքի նկատմամբ: Աղետն ու փորձանքը կանխելու համար, անժամանակ կանչող աքաղաղի պատժին էին ենթարկում նաև կանչող հավին:

Ղարադաղցիները մեծ համոզմունքով հավատում էին, որ փետրվարը բոլոր թռչունների «համրության» ամիսն է:

Փետրվարին բոլոր թռչունների բերանները փակվում են ուրախության ձայների համար, իսկ գարնանամուտին՝ մարտ ամսին, բացվում:

Ղազ կամ հունդուշկա (հնդկահավ). այդ թռչունները կշռում էին 6-10կգ:

Սարդու գյուղի բնակիչ Ցաքաց Պապու տղան՝ Մկրտիչը, 1931թ. Թավրիզից հնդկահավի հինգ ծու էր բերել և դրել հավի թխսի տակ: Մի քանի

տարիների ընթացքում հնդկահավերը բազմացան, դարձան մի քանի տասնյակ:

Մկրտիչը հնդկահավի մի զույգ ճուտ տվեց Խանագահում ամուսնացած իր քրոջը՝ Շուշանին, մի զույգ էլ նվիրեց Նորաշենցի Ալահվերդուց Օվանիսին:

Սրանք էլ բազմացնելով, իրենց հերթին հարազատներին ու բարեկամներին նվեր տալով, այն տարածեցին Սարդու, Խանագահ ու Նորաշեն գյուղերի շատ ընտանիքներում:

Հնդկահավերը ազատ կյանք էին սիրում, ձվադրում ու բազմանում էին դաշտերում, գոմերում, բակերի ծածկերի տակ: Որքան էլ հարմարավետ բույն պատրաստեին, հնդկահավերը դրանցից հրաժարվում էին: Նրանք բնադրում էին մոշուտներում, թփուտներում ու մացառուտներում, ձվադրման տեղը գաղտնի էին պահում, ձվերը ծածկում խոտով ու տերևներով: Թուխս էին նստում իրենց ձվարկած տեղում:

Հնդկահավերը անչափ շատակեր էին, մորեխի նման ոչնչացնում էին պատահած արտը, ցանքն ու բանջարանոցը:

1940թ. բոլոր գյուղերում, որտեղ սկսել էին հնդկահավ պահել, համայնքների ժողովներում որոշեցին հնդկահավ պահել միայն տնային պայմաններում: Նկատի ունենալով նրանց պատճառած վնասը ցանքսերին ու բանջարանոցներին՝ արգելեցին դաշտ ու արոտ հանել:

Քանի որ հնարավոր չէր հնդկահավերին ողջ տարին պահել տնային պայմաններում, վերջ տրվեց թչունների այդ տեսակին:

Ղոնեգ (աղավնի). Ղարադաղում չկար մի քարափ ու երկնահաս ժայռ, որում չբնակվեին մոխրագույն աղավնիների երամներ:

Տնային պայմաններում աղավնի չէին պահում, քանի որ այդ թռչունը համարվում էր «բեղուր ղուշ» (անհաջողության թռչուն): Հավատում էին, որ այն տանը անհաջողություն է բերում, պատճառ դառնում վնասների ու կորուստների:

Խանագահցի Աշոտ Աղաջանյանը ապրում էր միայնակ: Իր մտքերն ու հոգսերը փարատելու համար 1936թ. Թավրիզից բերեց երկու զույգ աղավնի: Կարճ ժամանակում դրանք բազմացան ու դարձան մի քանի տասնյակից կազմված երամ:

1940թ. Աշոտը տեղափոխվեց Թավրիզ:

Աղավնիների երամը մնալով անտեր ու անխնամ՝ միացավ գյուղի մոտակա քարափների մոխրագույն աղավնիներին: 1946թ. գաղթի ժամա-

նակ վայրի աղավնիների երամների մեջ դեռևս աչքի էին ընկնում սպիտակ ու դարչնագույն թռչունները:

ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ղարադաղի բարենպաստ կլիման, բնությունը, ջրերի առատությունը, բազմազան ծաղիկներն ու ծառերը մեղվապահության համար հրաշալի պայմաններ էին ստեղծում:

Շատ ընտանիքներ պահում էին մինչև 50-60 փեթակ, չնայած ընտանիքին կապահովեր նույնիսկ 2-3-ը:

Խանագահի, ինչպես և Ղարադաղի գրեթե բոլոր հայ ու թուրք ընտանիքները զբաղվում էին մեղվապահությամբ, որը մեծ եկամուտ էր տալիս:

Մեղրի սակավ բերքը գրեթե բացառված էր. կայուն բերք ամեն տարի լինում էր:

Ղարադաղի հայերը մեղվին անվանում էին «մղրաճանջ», պարսիկ՝ «մղրճանջու ծեգ», փեթակին՝ «ղոլեբ», մեղվանոցին՝ «ճինջանուց»:

Մեղվանոցը դնում էին ճանապարհներից ու աղմուկից հեռու այնպիսի հարմար տեղերում, որ մեղուների թռիչքը ազատ լիներ:

Մեղվանոցներն աշխատում էին հեռու պահել կողմնակի մարդկանցից, որպեսզի աչքով չտային, չիմանային փեթակների քանակը, մեղուների աշխատանքը և այլն:

Գյուղի ծայրամասում ապրող ընտանիքները փեթակները դնում էին տներին կից ապահով տեղերում:

Նրանք, ովքեր բնակվում էին գյուղի կենտրոնում և ապահով տեղ չուներին, փեթակները դնում էին գյուղին մոտ գտնվող այգում կամ բանջարանոցում:

Փեթակները չէին տեղափոխում, ողջ տարին դրանք մնում էին նույն տեղում:

Փեթակի, մեղրի ու պարսի գողություն չկար, քանի որ ղարադաղցիները համոզված էին, որ գողի ունեցվածքը կհարամվեր ու կոչնչանար:

Փեթակ. պատրաստում էին մասրենու նուրբ ու սլացիկ, 1-1,5մ երկարություն ունեցող ճկուն ճյուղերից:

Մասրենու հաստ ճյուղերը դանակով ճղում, բաժանում էին երկու մասի: Դրանք 4-5սմ հեռավորությամբ՝ 40սմ տրամագծով սկավառակաձև տնկում էին գետնին, ապա ավելի նուրբ, երկու մասի բաժանված ճյուղերով՝ հյուսում:

Ճյուղերի հարթ կողմերը թե տնկածների, և թե հյուսողների, լինում էին ներսի կողմից: Փեթակի երկարությունը լինում էր 1,2մ:

Փեթակի ճակատային կողմում մեղուների ելումուտի համար ամրացնում էին փոքր անցքով տախտակի կտոր: Փեթակի ետևի կողմը փակում էին կլոր տախտակով, որը փոքրիկ բռնակ ուներ:

Փեթակը երկարությամբ բաժանում էին երեք հավասար մասերի:

Առաձին մասերը ներսից, հատվող փայտածողերով սահմանազատում էին: Դա նշանակում էր, որ մեղրը հանելիս իրավունք չկար փայտածողերն անցնել, մեղրի անհրաժեշտ պաշար թողնելով մեղուների ձմեռման համար:

Ամռան շոգ ամիսներին եզների ու կովերի թրիքը հավաքում էին, վրան փայտի մաղած մոխիր շաղ տալիս, ոտքերով լավ տրորում և պատրաստած հումքով փեթակը դրսից սվաղում, դնում արևի տակ, չորացնում:

1940թ. մուտք գործեց փայտե արկղը, որը մեծ ւսրդյունք տվեց. առանձին մարդիկ սկսեցին զբաղվել միայն մեղվաբուծությամբ: Ստացված բերքը վաճառում էին Թեհրանում ու Թավրիզում:

Մեղու ունեցողները, հաճախ վաղ առավոտյան գնում էին մեղվանոց, ստուգում մեղվի աշխատանքը՝ ըստ փեթակների: Տեսնելով, որ փեթակում մեղուների մեծ աճ կա, մեղուները գտնվում են արտակարգ եռուզեռի մեջ, գուշակում էին, որ մեղվի ընտանիքը պատրաստվում է «ծեգ» (պարս) տալու, և ամենօրյա հսկողություն էին սահմանում: 8-12 տարեկան երեխաներին հանձնարարում էին մնալ մեղվանոցի մոտ, խաղալ այնտեղ ու հսկել պարսի դուրս գալուն:

Պարսի դուրս գալուց հետո, երբ սկսում էր աղմկոտ թռիչքը, երեխաները երկու քար վերցնելով ափերի մեջ՝ խփում էին իրար ու աղմուկ բարձրացնում, այն նպատակով, որ մեղուները հավաքվեն մի տեղ, փախուստի չդիմեն, և շտապ լուր էին ուղարկում տուն:

Շատ էր պատահում, որ պարսը, մոտակայքում վայրէջքի հարմար տեղ չգտնելով, բնավորվում էր ծառերի փչակներում կամ ժայռերի անցքերում:

Ծառերի վրա իջած պարսը բռնում էին երկու հոգով:

Նախ, շտապ մի քիչ մածուն էին կոկում ջրի մեջ, վերածում թանի ու շաղ տալիս փեթակի մեջ՝ զովության և մեղուների ուշադրությունը գրավելու համար:

Հին հագուստի ծվեններ էին փաթաթում փայտերի վրա, այրում, ծուխ արձակում: Նման միջոցն անվանում էին «մոլ»: Մեղուներից պաշտպանվելու համար դիմացանց գոյություն չուներ: Մեղուների խայթոցներից

պաշտպանվելու համար գլուխների վրա փոքր ծածկոց էին գցում: Մեկը փեթակը պահում էր ճյուղից կախված պարսի տակ, իսկ մյուսը բարձրանում էր ծառի վրա ու ճյուղին ոտքով ուժեղ հարվածելով, պարսը ցած գցում փեթակի մեջ:

Փեթակի բերանը շտապ կապում էին և տանում մեղվանոց: Միայն հաջորդ առավոտ փեթակը դնում էին մեղվանոցում, հին փեթակների վրա:

Սովորաբար մեղրը կտրում էին հուլիս և օգոստոս ամիսներին:

Մեղրը փեթակներից հանելու համար առանձին պարագաներ չկային: Հավասար իրավունքով մեղրը փեթակից կտրում էին տղամարդիկ և կանայք, նայած թե որ մեկն էր հմուտ ու շնորհքով:

Մեղրը կտրելու համար մեղվանոց էին տանում պղինձներ ու ընդարձակ ամաններ՝ «սահնը», «թոփի», «բիդյա», «ջամ»:

Մեղրը փեթակից հանելու ու կտրելու գործիքներն էին մեծ, երկարակոթ դանակը, թոնրից հաց հանելու «ծհանը», փայտե կարճ բռնակով «հարթակը» (փոքր թիակ) և ցնցոտիներից պատրաստած «մոլը»:

Վերցնում էին փեթակի խուփը, դանակով անջատում ու մաքրում ավելորդ մոմերը, ձախ ձեռքով թիակը պահում մեղրաբլիթի տակ, աջ ձեռքով ծհանի տափակ կողմով հրում, մեղրաբլիթը շուռ տալիս թիակի վրա ու դուրս հանում: Այն դնում էին ամանում, ծածկոցով ծածկում, որ մեղուները չհավաքվեն մեղրի վրա: Նախապես ամանով ջուր էին տանում մեղր կտրողի ձեռքերն ու կտրող գործիքները լվանալու համար:

Մեղվանոցից մեղրը տուն էին փոխադրում կողմնակի մարդկանցից թաքուն՝ «չար աչքից, չար շնչից, չար ոտքից» հեռու մնալու համար:

Մեղրից, ըստ ընդունված կարգի՝ գյուղի չունևորներին ու միայնակ պառավներին բաժին էին տալիս:

Սովորություն կար փեթակները ընտանիքի անդամների անուններով նշել, թե ում փեթակից որքան մեղր կստացվի:

Փորձառու մեղվապահները պատրաստում էին փեթակի կեսի չափ առանձին փեթակներ (եդագ) այն մեղվաընտանիքի համար, որը շատ ուժեղ էր ու բերքատու: Այն կցում էին հիմնական փեթակին և թրիքով սվաղում միացման հանգույցը:

Մեղվաընտանիքը մեղրաբլիթներով լցնում էր նաև նոր տարածքը: Եդագը անջատում էին փեթակից, երկու կողմերն ամուր փակում, փոխադրում տուն ու պահում էին մի զով ու հարմար տեղում: Հետագայում, կարիքի դեպքում, բացում և օգտագործում էին:

Մեղրամոմը մի քանի տարի մնալով փեթակում սևանում էր, դառնում անօգտագործելի: Մեղուները հնարավորություն չունեին փչացած մոմը դուրս հանել ու նորը պատրաստել: Նման դեպքերում, վաղ գարնանը մեղվաընտանիքը տեղափոխում էին նոր փեթակ՝ թափ տալու միջոցով:

Մեղրը ավանդաբար կարևոր տեղ ուներ ժողովրդական բժշկության բնագավառում:

Երբ հարվածի ու կտրվածքի պատճառով արյունահոսություն էր առաջանում, անմիջապես վնասված տեղում մեղր էին դնում ու կապում: Արյան հոսքը շատ արագ դադարում էր:

Աղիքային և ստամոքսային ցավեր ունեցողներին մեղր էին կերցնում և մեղրով թեյ խմեցնում:

Երեկոյան ամանի մեջ ջուր էին լցնում, մեղր գցում, լավ խառնում, լուծում ջրի մեջ և հաջորդ առավոտ անոթի վիճակում խմեցնում երկարատև գլխացավ ունեցողներին: Ամեն օր դա կրկնում էին մինչև հիվանդը ապաքինվում էր: Այն կոչվում էր «շարբաթ»:

Շամ (մեղրամոմ). մոմը լայն կիրառություն ուներ Ղարադաղի հայերի կենցաղում:

Այն օգտագործում էին ծննդյան, նշանդրեքի, հարսանիքի ու մահվան ծիսակատարությունների ժամանակ: Բոլոր սրբավայրերում և ուխտատեղիներում մեղրամոմից պատրաստած մոմեր էին այրում: Ուրիշ հումքերից մոմ ստանալու եղանակներին ծանոթ չէր ղարադաղցին:

Մոմը պատրաստում էին հետևյալ եղանակով. այն լցնում էին մեծ թավայի կամ պղնձի մեջ, մարմանդ կրակի վրա դնում ու հալում: Ստացված հեղուկը լցնում էին քաթանից կարած տոպրակի մեջ, քամում ու մզում մի ընդարձակ ամանի մեջ, որը սառում, դառնում էր մոմաբլիթ:

Մոմեր պատրաստելու համար նախապես բամբակի հաստ թել էին մանում հետո կրկնապատկում ու ոլորում:

Մոմը պղնձե թավայի մեջ հալում էին, երկծյուղ մի փայտիկի ծյուղերի արանքով թել մտցնում դրա մեջ ու թելի ծայրից բռնելով, դանդաղ քաշում:

Պատրաստի մոմը կախում էին չուգունե երկարավուն թեյնիկի մեջ, որում նախապես գոլ ջուր էին լցնում: Ջրի մեջ մոմը ողորկանում էր, դառնում կոկիկ ու փայլուն:

«Մահլամ». մոմը լցնում էին թավայի մեջ, ավելացնում նույն չափով հալած յուղ, դնում մարմանդ կրակի վրա, գդալով անընդհատ տրորում, մինչև որ մոմն ու յուղը դառնում էին համասեռ:

Մահլամը օգտագործում էին չորացած վերքերը բուժելու համար, քսում կոշտացած ու ճաքճքած ծեռքերին և այլն:

Ղարադաղում բազմատեսակ շատ օձեր կային, որոնք ամեն տարի շատ մարդկանց ու տնային կենդանիների վնաս էին պատճառում:

Սոֆին (գերբնական ուժի տեր մարդ, որն իր քքով բուժում էր օձից խայթված մարդկանց ու կենդանիներին) որևէ մեկից վերցնում էր ակնամոմի մի փոքր կտոր, մի քանի անգամ քքում վրան ու ամրացնում նրա արխալուղի կամ վերնաշապիկի կոճակի վրա:

Մարդը համոզված էր լինում, որ ակնամոմը քանի մնում է իր կոճակի վրա, նրան ոչ մի օձ չի մոտենա:

Ղարադաղում գոյություն ունեին երկու տեսակ մեղուներ. առաջինն ուներ համեստ բնավորություն, բաց կանաչավուն գույն, մեղրաբլիթները պատրաստում էր կլոր՝ լիալուսնածև:

Երկրորդ տեսակ մեղուները ունեին մուգ կանաչավուն գույն՝ շատ արագաթռիչք էին ու կատաղի, խայթը շատ թունավոր էր: Մարդկանց դժվարությամբ էին փեթակին մոտ թողնում, մեղրաբլիթները պատրաստում էին թեքությամբ՝ շրջանակածև:

Ղուլուղի գյուղի բնակիչ Գրիգոր Հակոբյանի մեղվանոցում

Ոչ հաճախ, բայց երբեմն պատահել են դեպքեր, որ մեղվապահի անփութության պատճառով, փեթակի ետևի խուփը լավ ամրացրած չլինելով՝ մուկ, օձ, տարբեր միջատներ են մտել դրանց մեջ, որոնց մեղուները սպանում էին, ապա, որպեսզի փեթակում նեխվածություն չառաջանար, ակնամոմով զմռսում:

1936թ. Թավրիզից Ղարադաղ վերադարձավ ղուլուդցի Գրիգոր Հակոբյանը, որն ուներ միջնակարգ կրթություն և շուրջ տասը տարի աշակերտել էր քաղաքամերձ տարածքում մեղվապահությամբ ու մեղվաբուժությամբ զբաղվող մարդկանց:

Վերադառնալով հայրենի գյուղ նա հետամուտ եղավ նորամուծություն կատարել մեղվապահության մեջ:

Մարդանաղա գյուղում գնեց հաստաբուն բարդիներ, սղոցել տվեց ու տախտակներից պատրաստեց նորաձև փեթակներ: Գյուղ բերեց մեղրազտիչ մեքենա և այլ անհրաժեշտ պարագաներ:

Մեղվի նոր փեթակների, իմացությունների ու տարածքի բարենպաստ պայմանների շնորհիվ նա մեծ արդյունքի հասավ: Իր ունեցած 45-50 փեթակից, առանց տեղափոխման տարեկան ստանում էր 2,5-3 տոննա մաքուր ապրանքային մեղր:

Մեղվապահության նման նորածևությունից ստացվող մեծ շահութաբերությունից տեղյակ եղան շատերը, սակայն մեղուների խնամքի գաղտնիքը չիմանալու պատճառով, այն միայն մասնակի տարածում գտավ Խանագահ և թրքաբնակ Մարդանաղա գյուղերում:

1946թ. գաղթի ժամանակ Գրիգոր Հակոբյանը, խանագահցի եղբայրներ Գալուստ և Արմենակ Արզումանյանները, Արշակ Ավագյանը և շատ ուրիշներ իրենց մեղվի փեթակները մեծ չարչարանքներով բերեցին Հայաստան:

Գրիգոր Հակոբյանը հիսնամյա աշխատանքի փորձից ելնելով՝ մեղվաբուժության վերաբերյալ մի շատ հետաքրքիր աշխատություն գրեց, որի հրատարակման համար համապատասխան օգնություն չստացավ:

Գրիգոր Հակոբյանը մահացավ 1981թ.: Նրա աշխատությունը մնաց անհայտ խավարում:

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ղարադաղ շերամապահությունը մուտք է գործել շատ հնուց, անհիշելի ժամանակներում:

Այն դաշտավարության, անասնապահության, թռչնապահության և մեղվապահության նման տարածում չուներ, քանի որ բոլոր գյուղերը բարենպաստ կլիմա և թթենիների ընդարձակ այգիներ չունեին:

Շերամապահությամբ զբաղվում էին Խանագահ, Սարդու, Վինա, Սըղըն և Ղասումաշեն գյուղերում:

Մեր կատարած ուսումնասիրություններից պարզվեց, որ շերամապահությունը անցյալում ավելի մեծ տարածում է ունեցել, քան XX դարում: Դրա վկայությունն էին Խանագահ և Մարդանաղա գյուղերի միջև մինչև մեր օրերը պահպանված թթենիների այգիները, որոնք տնկված էին կանոնավոր շարքերով:

Թթենիները «ջըռ» (վայրի) էին, որն էլ վկայում է, որ դրանք աճեցրել են շերամապահության համար:

Վինացի տարեց մարդիկ (Արսեն Բաբախանյան, Սիմոն Նարինյան, Աշոտ Գյուլբուդաղյան) պատմում էին. «Մի քանի դար առաջ Մղդուսոնց

ազգը մեծ հարստության տեր է դարձել մետաքսի առևտրով: Վինա գյուղի ծմեռանոցի ծորում նրանք թթենու մեծ այգի են ունեցել, զբաղվել են շերամապահությամբ և ստացած մետաքսը արտահանել Գանձակ քաղաք ու մեծ շահույթ ստացել»:

Մեր օրերում՝ 1921-1946թթ. շերամապահությունը որոշ չափով գոյատևում էր Խանագահ, Սարդու, Ղուլուդի գյուղերում: Խանագահում շատ քիչ ընտանիքներ կային, որ շերամապահությամբ չէին զբաղվում:

Շերամապահության հետ կապված տեղական անվանումները. «բրամա» (բոժոժ), «բուրուշիմ» (աբրեշում, մետաքս), «կազ» (եփած, մշակած բոժոժ), «բրմու վըռհնը» (շերամի որդ):

Կազ բառն ուներ նաև մետաքս իմաստը՝ կազի թել, կազի գործվածք և այլն:

Շերամի խնամքով զբաղվում էին միայն կանայք: Մեծ քանակությամբ պահելու դեպքում տղամարդկանց կարիքը զգացվում էր միայն թթենու տերև մատակարարելու համար:

Բոժոժի բերքի հավաքման ժամանակ տնտեսուհին ընտրում, առանձնացնում էր ամենախոշոր ու առողջ բոժոժները և պահում սերմի համար:

Հաջորդ տարվա գարնանը, մարտ և ապրիլ ամիսներին, նայած տարվա եղանակին, տնտեսուհին շերամի ծվերը դասավորում էր մաքուր ու տաք կտորի մեջ, ցերեկ ու գիշեր պահում իր ծոցում, մինչև որ դուրս էին գալիս փոքրիկ թրթուրները:

Թրթուրներին թթենու նորաբաց բողբոջների վրա տեղափոխելով, մաքուր շոր էին փռում սինիների մեջ ու տարածում: Տաք ու անվտանգ պահելու համար մաղ էին դնում սինու վրա ու շորերով ծածկում:

Եթե գարունն անբարենպաստ էր լինում, և թթենիները ուշ էին բողբոջում, թրթուրներին կերակրում էին «միջենակ» կոչվող բույսի տերևներով, որոնք վաղ գարնանն աճում էին գերեզմանոցների տարածքներում: Միջենակն ուներ երկարավուն մոխրագույն տերևներ:

Շերամը պահելու համար ընտրում էին մաքուր, չոր, լուսավոր, ոչ շատ սառը և ոչ էլ շատ տաք առանձին սենյակներ, կողմնակի մարդկանց տեսողությունից, ոտնամուտից, շնչից և աղմուկից հեռու, պահպանելով մշտական մաքուր օդ:

Շերամի ամենամեծ թշնամիներն էին մրջյունները, մկները, հավերը և օձերը, որոնց հրապուրում էր շերամի յուրահատուկ հոտը:

Մրջյունների դեմ պայքարելու համար շերամի չորս կողմերի տարածքում շաղ էին տալիս փայտի մաղած մոխիր: Մոխիրը պարզ ու հստակ շե-

րամապահին տեղյակ էր պահում հավերի, մկների, օձերի մուտքը շերամատուն:

Մկներին ոչնչացնում էին թակարդներով: Շերամատանը մկների որսը կատուներով խստիվ արգելված էր, որովհետև կատուն էլ կտրորեր, կվնասեր շերամներին:

Ամենասարսափելի, վտանգավոր թշնամուց՝ օձից ազատվելու համար հրավիրում էին «սոփուն»:

Շերամը երեք անգամ երկարատև քուն էր մտնում:

Առաջին քունը, որն անվանում էին «կուճի քոն» (փոքր քուն) տևում էր երեք օր, երկրորդը հինգ օր՝ անվանում էին «մաջնակ քոն» (միջին քուն), երրորդը յոթ օր՝ անվանում էին «մըծ քոն» (մեծ քուն):

Շերամը մեծ քնից արթնանալով, դառնում էր ագահ, շատակեր ու անկուշտ: Մինչև երրորդ քունը կերակրում էին վայրի թթենու տերևներով:

Մեծ քնից արթնանալուց հետո կերակրում էին միայն պատվաստած թթենու տերևներով:

Ղարադաղի հայերը շերամի մեծ քնի վերաբերյալ ունեին հետաքրքիր զրույց:

Եթե մեկը մի հարևանի պետք է օգներ ու դա չէր անում, մի ուրիշը հարցնում էր.

– «Աս օր Դովունց Նաբի պետք ա քի քյոմագ լալ արի, պա խի՞ չի ըրվալիս, քյոմագ արի:

Գործատերը պատասխանում էր.

– Նաբի աս օր մըծ քոնով ա եկած»:

Կամ, եթե մեկը հիվանդ էր լինում, մեկ ուրիշը նրա հարևանին հարցնում էր. «Ադա Հարութ, հրևանդ՝ Խաչի մի քանե օր ա ըրվալիս չի, կարուղ ա՞ ալուզ ա»:

Հարևանը պատասխանում էր. «Խաչի մըծ քոնով ա եկած, վայ թա բրամ ա արի», նկատի առնելով, որ շերամը մեծ քնից հետո բոժոժ է գործում ու մահանում:

Շերամը մեծ քնից ու մի քանի օր ագահաբար ուտելուց հետո սկսում էր որոնել բոժոժ գործելու միջավայր:

Շերամապահը ընտանիքի մի քանի անդամների հետ գնում էր հանդ, սխնու ու սփռնու խիտ ճյուղերից, բոխու փայտացած շիվերից փնջեր կապում ու դրանք շարում շերամատանը:

Բոժոժը հավաքում էին հարևաններից ու բարեկամներից թաքուն, չար աչքից հեռու պահելու նպատակով:

Բոժոժը լինում էր երկու գույնի՝ սպիտակ և դեղին:

Բոժոժը հավաքելուց ու սերմացուն առանձնացնելուց հետո վերցնում էին փայտի մաքուր մոխիր, լցնում մեծ պղնձի մեջ, ջրի մեջ լավ տրորում, խառնում ու թողնում զուլալվի: Մաքուր մոխրաջուրը քամում, փոխադրում էին ուրիշ պղնձի մեջ ու եռացնում: Եռացող ջրի մեջ բոժոժը եփում էին: Բավարար չափով եփելուց հետո բոժոժները միանում էին, դառնում համասեռ զանգված: Տաք վիճակում զանգվածը թափ էին տալիս, շերամներից լրիվ մաքրում: Մոտավորապես 0,5կգ քաշ ունեցող զանգվածն անվանում էին «մի հաց» կամ «մի կաժ»:

Թյուրիմացության մեջ չընկնելու համար հիշեցնենք, որ ստացված մետաքսաթելն անվանում էին «կազ», իսկ զանգվածը՝ «կաժ»:

Կաժը բաժանում էին երկու մասի: Մի մասը ներկում էին ծիածանի բոլոր գույներով, որոնցից հասունացած աղջիկներն ու նորահարսերը պատրաստում էին բազմազան զարդարանքներ:

Ներկած կտավի բոլոր գույներից շատ փոքրիկ փնջիկներ էին կապում և շատ մանր բազմազան գույների ուլունքների հետ արանք-արանք շարում թելի վրա: Այդ շարանները Զատկի ուրբաթ օրը կապում էին երեխաների թևին՝ որպես հմայիլ:

Նույն շարաններից կապում կամ կախում էին օրորոցներից, դրանց փնջիկներով զարդարում հարսանեկան թագը, ծիու և ջորու վզից կապելու «հեքյալի» (հմայիլ) եզրերը:

Մետաքսի գունավոր փնջիկներով զարդարում էին նաև խնոցու կարագի հասունությունը որոշող փայտիկը:

Կաժի մնացած մասը իլիկով մանում էին և ներկում ցանկացած գույնով:

Աղջիկներն ու նորահարսերը մետաքսի զանազան գույնի թելերից ասեղնագործում էին գոգնոցների եզրերը, երիտասարդ տղաների բենջակ, պատանիների արախչի, դեռատի երեխաների յախա և նման շատ բաներ:

Կարմիր, կանաչ և կապույտ գույնի մետաքսաթելերից տեղի ջուլհակները գեղեցիկ ու քառանկյուն գործվածք էին գործում:

Այդ գործվածքից բոլոր կանանց համար պարտադիր կարում էին չարշիվ (գլխի ծածկոց):

Ամեն հայ կին հասարակական վայրեր, եկեղեցի, հարսանիքի գնալիս և սգո թափորին մասնակցելիս պետք է գլուխը ծածկեր կազի չարշիվով:

Տեղական մետաքսե գործվածքից կարում էին նաև օժիտի վերմակի երես, «գիրդի չարշիվ» (նորապսակներին տանը առանձնացնող վարագույր) և նման այլ անհրաժեշտ պարագաներ:

Մարդանաղա գյուղից Ազիմ անունով մի մարդ 1938թ. վաղ գարնանը Թավրիզից, փոքրիկ ստվարաթղթե տուփերով, բերել էր շերամի բուծված ձվիկներ ու պայմանագրային կարգով բաժանել շերամապահությունից հասկացող գյուղացիներին:

Շերամապահը պարտավոր էր իր վերցրած ամեն մի տուփ շերամի ձվիկների դիմաց նրան հանձնել մեկ բաթման (մոտ 5կգ) բոժոժ, դրա համար ստանալով հինգ թուման վարձ:

Ազիմը Թավրիզից գյուղ էր բերել չուգունե մի քանի կաթսա և անհրաժեշտ սարքեր ու բացել փոքր ձեռնարկություն: Հավաքած բոժոժը վերածում էր մետաքսաթելի, որը վաճառում էր Թավրիզում:

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ղարադաղն աշխարհի ամենագեղեցիկ ու գողտրիկ անկյուններից մեկն էր, ուներ հարուստ ու թավ անտառներ, խոր ու մթին ձորեր, երկնահաս ու անմատչելի քերծեր, բազմահազար սառնորակ աղբյուրներ, ջրառատ գետակներ ու հարուստ կենդանական աշխարհ:

Ղարադաղում տարածված էին որսի հետևյալ կենդանիները, որոնք վխտում էին անհաշիվ քանակությամբ՝ «բոլիգներով» ու «սուրուներով». խոզ, քարայծ, արղալիճ (վայրի ոչխար), լպրաստակ (նապաստակ):

Մինչև XX դարի առաջին տասնամյակը եղել են նաև եղնիկներ ու գյխտարներ (կխտար), որոնք անտառների մասսայական ոչնչացման պատճառով իսպառ վերացել էին:

Խանագահ գյուղից հյուսիս-արևելք, լեռնալանջին երկու հսկա կամարաձև ժայռեր կային, որոնց տակ արևից և անձրևներից պաշտպանվում էին հարյուրավոր կենդանիներ: Այդ ժայռերն անվանում էին «Եղնեն քարը»: Գյուղի ծերունիների պատմելով՝ հնում, երբ տարածքը պատված է եղել կաղնու անտառով, եղնիկները ցերեկը մոտակա աղբյուրներից ջուր են խմել և հանգստացել այդ ժայռերի հովում:

Որսի թռչուններն էին միրհավը, կաքավը, սալիմը և լորը: Որսում էին նաև ղըռոն, ղումրի (տատրակ) և չարդ:

Ղարադաղի հայերը 14-15 տարեկան հասակից հմտորեն տիրապետում էին զենքերի օգտագործմանը:

Չնայած պարսկական կառավարությունը արգելում էր անգամ որսորդական հրացանները, ամեն հայ շինական գաղտնի զենք էր պահում:

Հայերը գտել էին պետական արգելքը հաղթահարելու և որսորդական հրացան ունենալու մի հեշտ միջոց. Թավրիզում բնակվող, ճանաչված ու անվանի որևէ հայ համապատասխան պետական գրասենյակում գրավոր փաստաթուղթ էր վերցնում որսորդական զենքի օգտագործման համար: Նման մի քանի թույլտվությունը բավական էր, որ օգտագործելով նրանց փաստաթղթերը, գյուղում զենք պահեին նաև ուրիշները:

Համոզմունք կար, որ որսորդությունը լոկ զբաղմունք ու սեր չէ, այլ տրված է առանձին մարդկանց որպես գերբնական շնորհ, աստվածատուր է: Նման որսորդներին սահմանված էր կենդանիներ որսալու չափը:

Երբ «աստվածատուր» որսորդի խփած կենդանին արյունաքամ կանգնում էր գլխի վրա, դա աստվածային նշան էր համարվում, հրաման, որ նա այլևս իրավունք չունի որսորդությամբ զբաղվելու, զենքը պետք է տանը կախված մնար:

Ծերուկները «աստվածատուր» որսորդներից հիշատակում էին Սարդու գյուղից Բաղդասարին, որի մականունը «Ալա փափախ» էր, քանի որ, գառան սև ու սպիտակ մորթիներից կարած գլխարկ էր կրում:[51] Հիշում էին նաև խանագահցի Ղահրամանին, նորաշենցի Ուսեփին և ուրիշներին, որոնք որսը կանգնեցրել էին գլխի վրա:

Որսորդական հրացաններից տարածված էին չախմախլուն և չաշնին: Չախմախլուն գործածվել է մինչև XIX դարի վերջը: Կայծքարով կրակող այդ հրացանները լիցքավորվում էին փողից: Չախմախլուն գնդակ էր կրակում, իսկ չաշնին՝ կոտորակ:

Չաշնի հրացանները տարբեր չափեր ու փողի հաստություն ունեին: Դրանք կոչվում էին ծուլող վարպետի անունով՝ «Շաբան», «Իբրահիմ փաշա», «Ուստա Զալի», «Սարվազին» և այլն:

Փողերից լցվող հրացաններին, որոնց տրված էր «Դայան, դոլդրմ» (թուրք.՝ սպասիր լցնեմ) ծաղրական անունը, ամենատարածվածն էին:

Դրանք լիցքավորվում էին հետևյալ կերպ. փոքր կուլայի ձև ունեցող, մոտ 0,5կգ տարողությամբ «դարբասից» կամ «բարութամանից» (վառոդաման), որը պատրաստված էր հաստ կաշվից, որսորդն աչքաչափով վառոդը լցնում էր հրացանի մեջ, մի քիչ փափուկ փալաս խցանում ու հրացանի մոտ մեկ մետրանոց շամփուրով (շիշ) նստեցնում վառոդի վրա: Եթե թռչունի որսի էին գնում, հրացանը լցնում էին «ղրմու» (արծիճ) մանր հատիկներ, իսկ եթե խոշոր կենդանու՝ գնդակով (գյուլլա):

---

[51] Ղարադաղցիները երկու գույն ունեցող կենդանիներին անվանում էին «ալա»:

Երբեմն, ռիսկի դիմելով, հրացանները լիցքավորում էին զույգ գնդակով, որը կարող էր դժբախտ պատահարների պատճառ դառնալ: Երբեմն վառոդի ուժը չէր բավարարում զույգ գնդակը դուրս մղելու, և հրացանը բացվում էր ետևի կողմից ու վնաս պատճառում որսորդին:

Ըստ ավանդական կարգի՝ որսի էին գնում խմբերով: Որսի գնալու նախորդ երեկոյան հավաքվում էին ավագ որսորդի տանը և քննարկում անելիքները:

Խմբով որսի գնալիս պարտադիր չէր, որ բոլորը զինված լինեին հրացաններով:

Որսորդները իրենց հետ տանում էին նաև այն մարդկանց, որոնք որսի շներ ունեին: Որսին մասնակցում էին նաև արագավազ ու տոկուն մարդիկ, որոնք փակում էին որսի փախուստի ճանապարհը:

Հաճախ որսը տևում էր 3-5 օր: Որսորդներն իրենց հետ հացի ու սննդամթերքի մի քանի օրվա պաշար էին վերցնում: Դրանց ծանրությունից ազատ լինելու համար իրենց հետ տանում էին ուժեղ երիտասարդների, որոնց անվանում էին «շլկավր»: Շալակավորների պարտականությունն էր նաև հարուստ որս անելու դեպքում վերադառնալ գյուղ, գրաստներ տանել ու որսի միսը տեղափոխել:

Որսի դուրս գալուց առաջ որոշում էին, թե կեսօրին որտեղ են հավաքվելու հանգստի և հաց ուտելու համար, գիշերելու վայրը և այլն:

Տնից դուրս էին գալիս աքլորի գիշերվա առաջին կանչից հետո:

Որսորդները հավատք ունեին, որ որսի մեկնելիս հրացանը պետք է իրենց հանձնեին ընտանիքի «թեթև ու բարի» ձեռք ունեցող անդամները:

Որսորդները տնից ու գյուղից դուրս էին գալիս անխոս ու անշշուկ, որպեսզի չար աչք, ծանր շունչ ու ոտք ունեցող մարդկանց չհանդիպեին:

Եթե մարդ հանդիպեր, որսորդն առաջինն էր խոսում. «Վըրսըմ գինիս, սիվբա դուվս ջիհալ, քու վընննը փուրծլականմ, տըսնամ խեր ա,՞ քա չէ»: Հարուստ որսով վերադառնալու դեպքում, հաշվի առնելով հանդիպած մարդու ոտքի բարի լինելը, որսից բաժին էին տալիս նաև նրան:

Հակառակ դեպքում, համաձայն հավատքի՝ հայհոյում էին ոտքը ծանր լինելու համար:

Որսի ընթացքում խոզ խփողին առաջին հերթին տալիս էին «գյուլլի բաժին»: Այն լինում էր կենդանու գլուխը, ոտքերը, մի «բուդը» (ազդր) և մեջքի մասից մի զույգ տրեխացու կաշի:

Հաճախ էր պատահում, որ վիրավորված ու գազազած վարազը կեռ, թրածև խոշոր ժանիքներով մահացու հարված էր հասցնում որսորդներին:

Եղել են դեպքեր, որ վարազները հարձակվող շանը թրատել են մեկ հարվածով:

Ալավերդի Պետրիկը որսից հետո

Որսի միսը հավասար բաժանում էին որսորդների, շնատերերի ու շալակակիրների միջև: Բաժին էին հանում նաև որսի ժամանակ պատահաբար հանդիպած մարդկանց:

Քանի որ թուրքերը խոզի միս չէին ուտում, քարայծի և այլ կենդանիների որսի մսից էլ հրաժարվում էին, համարելով «հարամ, հայի մորթած», հանդիպած թուրքին մի քանի ղռան էին տալիս:

Որսի մսից բաժին էին տալիս մոտիկ ազգականներին, հարևաններին և որսից բացակա ընկերներին:

«Ծմութկան» (նոր ծննդաբերած) կնոջը արգելվում էր որսի մսից օգտվել, քանի դեռ քառասունքի մեջ էր գտնվում, հավատալով, որ որսի միս ուտելու դեպքում երեխան կլինի թուլակազմ ու հիվանդոտ:

Ղարադաղում սովորություն կար ամեն աշնան մի քանի անասուն մորթել ու ծմռան համար «տհալ» (ղավուրմա) պատրաստել: Որսորդները տհալ պատրաստում էին նաև խոզի մսից:

Որսի կենդանիների, հատկապես վայրի խոզի մազերն ու ժանիքներն օգտագործում էին որպես հմայիլ:

Վարազի կտրիչ թրածև ժանիքները ծնոտից հանում էին, ծակում ու կարում փոքրիկների հագուստի ուսին՝ որպես երեխային չար աչքից հեռու պահող հմայիլ:

Ղարադաղի լեռնային գոտու թուրքերի ցանքատարածություններին մեծ վնաս էին պատճառում խոզերի «բոլուգները», անասուններին՝ գայլերի ոհմակները:

Արաքսպար հովտի բրնձի ու եգիպտացորենի դաշտերը ցաք ու ցրիվ էին տալիս խոզերը:

Բնակչությանը չէր թույլատրվում զենք օգտագործել, վայրի գազաններից պաշտպանել բերքն ու անասունները: Չկար պաշտպանություն պետության կողմից: Այդ առումով էլ հայ որսորդները մեծ հարգանք ու պատիվ ունեին թուրքերի ու քրդերի մոտ:

Նրանք իրենց գյուղերում կառուցել էին առանձին տներ հայ որսորդների գիշերելու համար, նրանց ապահովում էին վառելիքով ու սննդամթերքով:

Ղարադաղում չկար որսի համար սահմանած օրենք և պետական հսկողություն, որսորդական միություն կամ ընկերություն: Որսում էին անսահմանափակ քանակությամբ, տարվա բոլոր եղանակներին:

Գոյություն ունեին որսորդների խմբեր, որոնք ձևավորվում էին ըստ բնավորության հատկանիշների:

Արջը Ղարադաղի անտառների անվախ ու աներկյուղ հիմնական բնակիչներից էր: Օրը ցերեկով բարձրանում էին ընկույզի ու տանձի ծառերի վրա, պտուղները թափ տալիս, քոթոթներն էլ ծառերի տակ դրանք հավաքում էին:

Արջը որսի կենդանի չէր համարվում, քանի որ միսը չէին ուտում: Որսում էին միայն այն արջերին, որոնք «համագիթ» էին (համարձակ, անվախ), մտնում էին այգիներն ու մեղվանոցները, վնաս պատճառում:

Հոդացավ ունեցող և անբացատրելի հիվանդությամբ տառապող հիվանդներին խորհուրդ էր տրվում արջի միս ուտել, արջի յուղ քսել հիվանդ ոտքերին ու կախել տաք թոնրում:

Շատ հնուց խանագահիցների համար ավանդույթ էր դարձել ուշ աշնանը և ձմռան տաք օրերին, հաճույքի համար գնալ արջաորսի:

Որսորդներն ու հովիվները նախապես գտնում էին որջը:

Որսորդները շներին «քրս» էին տալիս, որջի մեջ հրացան կրակում, չոր խոտեր, մացառներ այրում, ծուխ լցնում որջի մեջ և գազանին այնտեղից հանում: Որսորդները կրակում ու հետապնդում էին փախչող արջին, հարայհրոց անում, քաջալերում շներին:

Շատ էր պատահում, որ արջի որսը տևում էր մի ամբողջ օր:

Արջը խփելուց հետո եզներ էին տանում, քարշ տալով բերում գյուղ, ձգում հրապարակում, ուր հավաքվում, զարմանքով ու հրճվանքով դիտում էր գյուղի ողջ հասարակությունը և մեկը մյուսին պատմում որսորդների խիզախության մասին:

Արջառոսը ոչ բոլոր դեպքերում էր ուրախ ու անվտանգ վերջանում, բազմիցս դեպքեր են եղել, որ վիրավոր արջը հարձակվել է որսորդի վրա՝ մահացու վնասվածքներ հասցրել:

Վիրավոր արջերի հետ մենամարտի են բռնվել խանագահցի Նաբունց Թումասը, Հաթունց Թաթոսը, Բալունց Ջաքարը և ուրիշներ:

Բալունց Ջաքարին հաջողվել էր փափախը կոխել արջի երախը, խցանել կոկորդը և շնչասպառ անելով, գլորել գետին:

Ջաքարի նման արարքը տարածվեց ամբողջ գավառում, և նրան ճանաչում էին «արջ խեղդող Ջաքար» մականունով:

1916թ. ծմռանը, որսի ժամանակ վիրավոր արջը անսպասելի հայտնվում է հորս՝ Հարություն Աղաջանյանի դիմաց: Չկարողանալով օգտագործել հրացանը, նա ձեռքի հովվական մահակով ուժգին հարվածներ է հասցնում արջի ճակատին. գազանի աչքերը դուրս են գալիս, և գլորվում է գետին:

Պատմում էին, որ 1924թ. Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ Ն. Մելիք-Թանգայանը գնում է Ղարադաղի հայաբնակ գյուղերը շրջագայության՝ ծանոթանալու հայ շինականների առօրյային ու ապրելակերպին:

Խանագահ գյուղում, հակառակի նման, նրա այցի օրը որսորդները մի մեծ արջ են խփած լինում:

Արջը դրված է լինում գյուղի հրապարակում ի տես ամբոխի:

Սրբազան հայրը շքախմբով գալիս, նայում է գազանին ու զարմացած հարցնում.

– Էս հսկա արջը ո՞վ է որսացել:

Ամբոխի միջից հրացանը ձեռքին առաջ է գալիս Հութունց Ենգիբարը և սրբազան հորը պատասխանում.

– Առաջնըրթը ապրած կանա, իսըմ վեր գիձած:

– Այ տղա մի պատմի՝ տեսնենք էս հսկա գազանը դու ո՞նց ես որսացել:

Ենգիբարը, հրացանի փողը հենելով ծնոտին, օրինակ բերելով, պատմում է.

– Դե հի՞նչ ասըմ, էս պատեն քյունջը հասաբալի (ենթադրենք) արջու ըղան ա (որջ), դու արջնս, նիյս մտած ըղանը, տեր Կարապետ նա, տեր Մարդուրիս՝ իմ շներսն, քուշմ տալիս քի երե, դու ըղանեն նանե դուսս գյալիս, իս ալ՝ թրախկ, թվանգս տրքցրիսմ ճկատետ, շոռս գյալիս, վեր ինգիս:

Առաջնորդը, նման տգեղ համեմատության համար զայրացած, ասում է.

– Այ տղա, դու հինչ ավանակ մարդ ես:

Ենգիբարը չի իմանում, որ ավանակ էշին են ասում: Նա ենթադրում է, որ առաջնորդը գովեց իրեն:

Ենգիբարը հպարտացած պատասխանում է.

– Սրբազան հայր, իս հի՞նչ ավանակմ, ավանակ-ավանակ՝ իմ պապ, իմ հարն լալի, որ մի գյուլլավ էրկու արջալն վեր գիծած»:

Ղարադաղցի որսորդները հավատում էին, որ կենդանիները գիտեն մարդկանց կողմից տրված իրենց անունները և որսի ժամանակ լսելով որսորդների խոսակցությունը, զգոնանում են, զգում վտանգը և դիմում փախուստի: Այդ առումով, որսորդները շատ կենդանիների տվել էին գաղտնանուններ՝ գայլին՝ «բալլա դայի», արջին՝ «բրդոտ», աղվեսին՝ «հագին ծաղեկ», խոզին՝ «կուշտամազը», նապաստակին՝ «էշեն քուռուկը», օձին՝ «վըղակերը»:[52]

Կային որսորդներ, որոնց անվանում էին «թալաչի» (թակարդ լարող կամ թակարդ դնող): Նրանք հրազեն չէին օգտագործում: Արժեքավոր մորթի ունեցող կենդանիներին ու գազանիկներին որսալու նրանց զենքը տեղացի դարբինների պատրաստած թակարդն էր: Այդ առումով, թալաչիները որսորդ չէին համարվում և գործնական առնչություն չունեին իրար հետ:

Թալաչիների գործը սեզոնային էր, սկսվում էր ծյուն տեղալուց հետո: Թալաչին անգիր գիտեր, թե ծյան վրայի ոտնահետքերն ինչ կենդանու են պատկանում:

Բազմամյա փորձ ունեցող և տարածքին ծանոթ թալաչիները կարողանում էին որս կատարել նաև չոր եղանակներին: Իմանալով տարածքում գտնվող փչակների, ժայռերի ճեղքերի ու անցքերի, կենդանիների հին բների տեղերը, դրանց մուտքերի առջևում մանր հող էին փռում և մի քանի օր հետևում, ստուգում էին, եթե հողի վրա հետքեր էր նկատվում, արդեն գիտեին, թե ինչ կենդանի կա: Աննշան փոս էին փորում, թակարդը տեղադրում, աննշան չափով հողով ծածկում և թակարդի կենտրոնում դնում այնպիսի կեր, որն այդ կենդանին սիրում էր:

Թակարդին ամրացրած երկաթե կարճ շղթա էր լինում, մի ծայրին երկաթե սուր բրիչ, որն ամուր խրում էին հողում, որպեսզի կենդանին, թակարդն ընկնելով՝ փախուստի չդիմի կամ թակարդը քաշի բնի մեջ:

Թալաչին որսի գնալիս տանում էր նաև փոքր թոխուր՝ կարիքի դեպքում հողը փորելու համար:

---

[52] Որսորդության մասին պատմել է Սարդու գյուղի նախկին բնակիչ Երվանդ Բաղդասարյանը, Հայաստան է ներգաղթել 1946թ.: Բնակվում էր Ղափանի շրջանի Ողջի ավանում:

Ձմռան ամիսներին կաքավներին ավելի շատ որսում էին թակարդներով: Որսորդները գտնում էին դրանց կենտրոնացման դաշտերը, բավականին տարածություններ մացառներով ցանկապատում, մի քանի տեղ թողնելով անցումներ: Դրանց ուղղությամբ գետինը փորում էին մոտ 40-50սմ խորությամբ, փոսիկների վրա դնում նուրբ փայտիկներից պատրաստած թակարդներ ու դրանց վրա չոր տերևներ փռում:

Կաքավները դաշտ մտնելիս հանդիպում էին ցանկապատներին, մուտքը գտնելով, սկսում իրար ետևից ներս մտնել ու ընկնել թակարդի մեջ: Այն կարող էր որսալ մի քանի կաքավ:

Կաքավներին ոչնչացնում էին նաև արծիվները, բազեները, աղվեսները և օձերը, որոնք գտնելով կաքավի բույնը կուլ էին տալիս ձվերը:

Նրանց ձվերը ոչնչացնում էին նաև անխուսափելի կարկուտները, հեղեղները, որսորդները, հովիվները և հնձվորները:

Դալվա. Եթե կենդանիներ որսալու համար թակարդը պատրաստում էին դարբինները, ապա թռչուններ որսալու թակարդը պատրաստում էին փայտից՝ ամեն մի շնորհաշատ մարդ:

Կաքավների ամենաանգութ թշնամիները որսորդներն էին, որոնք դալվայով կախարդում ու ոչնչացնում էին կաքավների ամբողջ երամներ:

Դալվան սովորական կտորից 1-1,5մ երկարությամբ ու 1մ լայնությամբ պաստառ էր, որի վերևի մասում երկու կլոր անցք էր արված, որտեղով դրա ետևում թաքնված որսորդը դիտում էր կաքավներին: Մի անցք էլ կենտրոնում էր լինում՝ հրացանի փողը մեկնելու համար: Պաստառի մի կողմի երեսի վրա կարված էին փայլուն, զանազան գույների կտորներ, որոնցով կախարդվում էին կաքավները, հավաքվում մի տեղ ու գերված նայում:

Դալվան ձիգ ու անշարժ կանգնելու համար ետևի մասից երկու փայտե ձողեր էին ամրացնում:

Որսորդն, օգտվելով կաքավների կախարդումից ու մի տեղ հավաքվելուց, հրացանի ամեն մի կրակոցով հեշտությամբ խփում էր 3-10 թռչուն:

Որսորդները պատմում էին, որ կաքավները երկու տեսակ էին: Ոչ բոլոր կաքավներն էին, որ կախարդվում էին դալվայի վրա գտնվող գույներով: Այն կաքավները, որոնց կրծքի փետուրները բաց մանուշակագույն էին, թռչում, հեռանում էին, իսկ վառ կարմիր փետրավորները գերվում էին դալվայից:

Գայլերը շատ էին տարածված Ղարադաղում: Ամենուրեք նրանց կարելի էր տեսնել ոհմակներով, որոնք հաճախ հարձակվում էին գյուղերի նախիրների ու հոտերի վրա ու մեծ վնասներ պատճառում:

Դեպքեր շատ են եղել, որ ձմռան ամիսներին հարձակվել են մարդկանց վրա ու հոշոտել: Պատահական որսով հնարավոր չէր նվազեցնել նրանց բազմաթիվ ոհմակները:

Երբեմն որսորդները մայիս և հունիս ամիսներին կազմակերպում էին գայլաորս: Տեղյակ լինելով նրանց որջերի տեղերին, հայտնաբերում ու ծագերի հետ ոչնչացնում էին: Նման միջոցառումներ ամբողջ գավառում, բոլոր գյուղերում տեղի չէին ունենում:

Շատ հետաքրքիր էր ձմռան ամիսներին խորամանկ գայլերի կողմից գյուղամիջից շների որսալու ձևը: Գյուղին մոտեցող գայլերի ոհմակի հոտն առած շները հաչում, մատնում էին իրենց տեղերը: Ոհմակը հարմար տեղում, պատերի տակ, ցանկապատերի մոտ դարանակալում էր: Գայլերից մեկը մոտենում էր շանը: Շունը հարձակվում էր գայլի վրա: Գայլը դիմում էր սուտ փախուստի: Շունը ոգևորված հարձակվում ու հետապնդում էր փախչող գայլին: Գյուղից բավականին հեռացած շան վրա հանկարծ հարձակվում էր փախչող գայլը: Շունը վախեցած նահանջում էր: Այդ պահին դարանակալած գայլերը դուրս էին գալիս թաքստոցից, փակում շան փախուստի ճամփան ու հոշոտում:

Գայլերի ոհմակները վերացնելու համար որսորդները դիմում էին նաև արգելված միջոցների. գայլերի հոշոտված կենդանու լեշը թունավորում էին, չնայած դա պետության կողմից խստիվ արգելված էր: Հայտնաբերման դեպքում ենթարկում էին խիստ պատիժների ու դրամական տուգանքների:

Ղարադաղցիներն ունեին երեք տեսակ ինքնաշեն թակարդ. գազաններ, կաքավ և սալամ ու մկներ որսալու համար:

Դրանք պատրաստում էին տեղացի հմուտ դարբինները: Նրանք երկաթի երկու տափակ ծողիկներին կիսալուսնի ձև էին տալիս, ծայրերը միացնում իրար: Մի կողմում ամրացվում էր տափակ բռնակ, որը ուներ զսպանակի հատկություն: Այն սեղմելով կիսալուսնաձև կողերը բացում էին:

Թակարդը լարում, դնում էին կենդանու որջի առջևում ու հողով կամ չոր տերևներով ծածկում: Թակարդի կենտրոնում դնում էին տվյալ կենդանու սիրած սննդից մի պատառիկ: Բավական էր, որ կենդանին ոտքը կամ դունչը մոտեցներ թակարդի կենտրոնին՝ ակնթարթորեն ծողիկը վեր

էր թռչում ատամից, և երկու ծողերը ամուր սեղմում, կաշկանդում էին կենդանուն:

Մուկ բռնելու թակարդ. վերցնում էին 10սմ երկար, մատիտի հաստությամբ փայտե ծողիկ, մի ծայրին ամրացնում ընկույզ, մյուս ծայրին՝ ընկույզի չափ խմոր: Պատրաստած սարքը դնում էին մի հարթ ամանի մեջ, մի խոր ամաև էլ կործում էին նրա վրա այնպես, որ մի ծայրը նստում էր ամանի եզրին, մյուս ծայրը՝ ընկույզի: Այսպիսով, ներս մտնելու ազատ անցք էր մնում:

Մուկը, որ ծողիկին ամրացրած խմորը սկսում էր կրծել, վերևի խուփը շարժվում էր, սահում ընկույզից ու մկան ելքի ճամփան փակում:

Թակարդը դուրս էին տանում. երկու հոգի, ավելներ առած սպասում էին, կամաց բացում այն ու դրանցով խփում:

Չկնորսություն. Ղարադաղի տարածքում լճեր և լճակներ չկային: Չկնորսությամբ զբաղվողներ գրեթե չեն եղել:

Գետերի սրընթացության, հածախակի տեղատարափ անձրևների և ձնհալից առաջացող պղտոր հեղեղների պատճառով ծկները քիչ էին:

Այն գետակներում, որոնց ջրերը մշտապես թափվում էին Արաքսի մեջ, ջրերի հանդարտ ու զուլալ ժամանակ, Արաքսից եկող մանր ծկնատեսակներ էին լինում:

Այդ տարածքներում բնակվում էին քրդեր ու թուրքեր, որոնց կրոնը խստիվ արգելում էր ծկան օգտագործումը, քանի որ, ըստ նրանց մեկնաբանության՝ «Չկան գլխին խաչ կա, ծուկն ստեղծել է Քրիստոսը, մահմեդականը չպետք է ծուկ ուտի: Ուտողը դժոխքի բաժին կդառնա»:

Հայերի զբաղեցրած տարածքի գետերում ծուկ չկար, չնայած կարմրախայտ ծկներ երևացել են Քիլեյբար, Ըռղնան, Վանստան գետերի վերին հոսանքներում, բայց չեն բռնել:

Ամեն տարի Արաքսի հորդանալուց հետո հարյուրավոր տոննա լոքո ծուկ էր ափ նետվում, բայց օգտվող չէր լինում, այն գիշատիչների կեր էր դառնում:

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Ղարադաղի հայ, թուրք, քուրդ բնակչությունը միշտ էլ իր աղքատիկ, խղճուկ ապրող ընտանիքի կարիքները հոգալու, իր ցավերը դարմանելու համար կարիք է ունեցել աշխատանքի մեկնել այլ վայրեր:

Զարմանալի է, որ մինչև 1918թ. գաղթը ղարադաղցիները Իրանի Թավրիզ, Ռեշտ, Էնզելի և այլ քաղաքների հետ կապ չեն ունեցել:

Նրանք աշնանը վար ու ցանքը ավարտելուց հետո խմբերով աշխատանքի էին մեկնում Գանձակ, Շուշի, Ղափան, Թիֆլիս, Բաքու և այլ վայրեր:

Նրանք նաև Լոռու և Ղարաբաղի անտառներում փայտածուխ էին պատրաստում:

Նկատի ունենալով Ղարադաղի աշխարհագրական դիրքը, մեր կարծիքով, նրանց համար շատ հարմար էր գնալ դեպի Անդրկովկաս, քան թե Իրանի խորքերը:

Խանագահցի տարեց մարդկանց՝ Զաքարիա Դանիելյանին, Հարություն Սերյանյանին, Մարտիրոս Դադյանին հարցրի, թե ո՞վ է եղել առաջին մարդը, որ մեկնել է օտարություն, ո՞ւր է գնացել և ինչո՞վ է զբաղվել:

Նրանք պատասխանեցին. «Թա որ թվին լալ՝ կարիչնք ասի: Մի տարե Աբունց Հարութը կորալ ա: Իրք տարուն եդը եկալ ա: Դե էն ա մտռնուս, որ շենեն կնաեեքը ըսիսն լալ: Հարութ գենցած լալ, դուս եկած Գյանջա քաղաքը, ղալին փող ա բերած: Տանը հետե ալ՝ ղալին չիթ կոտոր ա բերած: Հարութ ըսիս ա՝ Գյանջա հայու մեծ շիհար ա, փահլու բենը լիգն ա, մարթ ա պիտիս, որ ըշխատի: էքսի տարեն մի դաստա ջահիլ հվաքալ ա, ալլա գենցալ Գյանջա, շհարեն անմը մընք հալա լսած չընք լալ: Ինդիյնք գիդացալ, որ Գյանջա ըշխարքեն ծոնդն ա, տեղեն դենը ալ աշխարք էկա: էտ վախտը մընք 10-12 տրեկան խոխանք լալ»:

Այն երիտասարդները, որոնց ընտանիքները բազմանդամ էին և աշխատող ձեռքի կարիք չէր զգացվում, շահավետ աշխատանք գտնելով, մնում էին երկար ժամանակով՝ 1-3 տարի:

Արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելու նպատակով մեկնողներ չէին լինում, բոլորը գնում էին միայն դրամ վաստակելու, պապական և հայրական պարտքերը մարելու նպատակով:

Պատահում էր, որ շնորհքով երիտասարդներից ոմանք, երկարատև մնալով օտարության մեջ, ձեռք էին բերում հացթուխի, ծեփագործի, ներկարարի, որմնադրի որակավորում: Նրանց մի մասը ամուսնանում, մնում էր այդ քաղաքներում ու ընդմիշտ օտարանում:

Ըստ ավանդական սովորության՝ արհեստավորները ձգտում էին իրենց արհեստը սովորեցնել զավակներից մեկին, այն դառնում էր ժառանգական:

Արհեստավորները նաև աշակերտներ էին պահում, հետևյալ կարգով. շագիրդը (աշակերտ) մեկ տարի պետք է աշխատեր արհեստավորի մոտ, իր հացով ու հագուստով: Վարպետը մեկ տարի նրան աշխատավարձ չէր տալիս:

Տարին լրանալուց հետո, եթե վարպետը տեսնում էր, որ աշակերտը աշխատասեր է և արհեստը սովորելու ձգտում ունի, աշխատավարձ էր նշանակում ու պահում իր մոտ, իսկ եթե անընդունակ էր լինում՝ թողնում էր:

Նման դեպքերում դիմում էին գյուղական խորհրդին:

Գյուղական խորհուրդը քննարկում էր հարցը: Եթե աշակերտի հեռանալը հարգելի պատճառով էր, նրա կատարած աշխատանքի վարձը վճարում էին և մնացած գործը հանձնարարում մեկ ուրիշին, իսկ եթե գտել էր ավելի շահավետ գործ և հեռացել, զրկում էին կատարած աշխատանքի վարձից:

Ղարադաղում տարածված արհեստներն էին.

ա. Ջուլհակություն

բ. Դամիրչություն - երկաթագործություն

գ. Դուլգյարություն - հյուսնություն

դ. Պատ շարուղ - որմնադիր

ե. Դարզեթուն - դերձակություն

զ. Ղունդաղսազ - զինագործ

է. Ջարգյար - ոսկերիչ

ը.Դալլաք - սափրիչ, վարսավիր

Կոշկակար, գլխարկ կարող և կլայեկող հայ վարպետներ չեն եղել:

Գավառում կոշիկ հագել են միայն մելիքները, խաներն ու բեգերը: Նրանք կոշիկներ ձեռք էին բերում տարբեր քաղաքներից, հագնում էին միայն «չաքմա» (երկարաճիտ կոշիկ):

Գավառի ողջ բնակչությունը տրեխ էր հագնում՝ հայերը խոզի, իսկ մյուս ազգությունները՝ խոշոր եղջերավոր անասունի կաշվից:

Տրեխ գործող վարպետներ չկային, ամեն գյուղացի իր ընտանիքի անդամների տրեխ գործողն էր:

Գլխարկ. Ղարադաղում գլխարկի (փափախ) մի քանի տեսակներ կային. մորթե, թելե, չթե: Ամեն գյուղացի և իր կինը եղել են իրենց ընտանիքի անդամների գլխարկ կարողը: Կանայք երբեք գլխարկ չեն կրել:

Հնում հայերը գլխներին դնում էին գառան սև գույնի մորթուց կարած ծագարաձև գլխարկ: XX դարի սկզբից տարածվեց կլոր մորթե փափախը:

1920-ական թվականներին սովորություն դարձավ բրդե սև թելից ճաղերով գործած գլխարկ կրելը (թիլի փափախ): Կլոր թասածև, եզրերը ծալած գլխարկը գործում էին կանայք:

Չթի փափախ կամ արախչի դնում էին հիմնականում երիտասարդներն ու պատանիները, իսկ Իրգութին և Նորաշեն գյուղերում՝ նաև տղամարդիկ: Գույնզգույն փայլուն կտորներից կարում ու եզրերը ասեղնագործում էին կանայք:

Կլայեկչություն. Այս արհեստը խիստ կարևոր էր ղարադաղցիների համար, նկատի ունենալով, որ նրանց ունեցած բոլոր կաթսաներն ու գործածվող տնային ամանեղենը պղնձից էին: Գավառում կլայեկողներ չկային: Ամեն տարի, վաղ գարնանը, փետրվար, մարտ ամիսներին ուրիշ գավառներից էին արհեստավորներ գալիս:

Դարբնություն. Ղարադաղի բնակչության ամենաանհրաժեշտ արհեստներից մեկն էր:

Հայաբնակ գրեթե բոլոր գյուղերում դարբիններ և դարբնոցներ կային, թրքաբնակ գյուղերում՝ հատ ու կենտ, իսկ քրդաբնակ գյուղերում չկային:

Հայ դարբինները գրեթե ամբողջ տարին աշխատանք ունեին. գյուղացիների պատվերով պատրաստում էին խոփ, կացին, ցաքատ, թոխուր և այլ գործիքներ, նորոգում կոտրվածներն ու մաշվածները:

Երկաթի հումքը բերում էին Թավրիզից, իսկ վառելիքը փայտածուխն էր: Դարբնոցները գտնվում էին դարբնի տանը կից, առանձին շինություններում:

Դարբնոցի շինությունն ու գործիքները պարզ ու հասարակ էին. քյուրա (հնոց), փուքս, զնդան, չագյուջ (մուրճ), գյազ (աքցան) և այլ մանր-մունր գործիքներ:

Փուքսը լինում էր երկկողմանի, արջի մորթուց, որը շատ ճկուն ու փափուկ էր:

Պատմում էին, որ ղշլաղցի դարբին Սահակը և ղուլուդցի Վարթոնց Բադալը արջի քոթոթներ են բռնել, պահել, մեծացրել ու վարժեցրել կանոնավոր փուքս փչելուն:

Դուլգյարություն. Հյուսնությունը կարևոր ու անհրաժեշտ արհեստ էր, քանի որ գյուղատնտեսական գործիքները հիմնականում պատրաստում էին փայտից:

Հյուսները նաև դռներ էին պատրաստում: Քանի որ թուրքերն ու քրդերը նման արհեստավորներ չունեին, դիմում էին հայերին, որոնք շաբաթներով մնում էին նրանց գյուղերում, պատվերը կատարում ու վարձատրվում:

Պատ շարող (որմնադիր). Ղարադաղի խոսվածքում որմնադրին անվանում էին նաև «բաննահ»:

Չնայած Ղարադաղի տարածքը հարուստ էր շինաքարերով, ավանդաբար սովորություն չի եղել դրանց հատուկ մշակումը: Նույնիսկ մինչև 1946թ. տներն ու շինությունները կառուցում էին հասարակ անմշակ քարերից, կավահողի ու դարմանի մանրունքի խառնուրդով պատրաստած ցեխով:

Հայ վարպետները կառուցում էին նաև թուրք և քուրդ խաների ու բեգերի կանոնավոր տները: Քանի որ այդ ազգությունները շատ խեղճ էին որմնադրությունից, տուն կառուցելիս միշտ հրավիրում էին հայ վարպետներին:

Դարզի (դերձակություն). Դերձակությունը շատ թույլ էր զարգացած Ղարադաղում: Ամեն մայր իր ընտանքի դերձակն էր:

Եթե կտորը ձևել չէր իմանում, ձևել էր տալիս հմուտ մի կնոջ ու ինքն էլ ասեղով կարում: Ոչ կարի մեքենան էր մուտք գործել Ղարադաղ, ոչ արդուկը և ոչ էլ որևէ նորածևություն: Բոլոր տեսակի հագուստները կարում էին աչքաչափով. կարճ կամ երկար, լայն կամ նեղ լինելը նշանակություն չուներ, միայն թե նոր լիներ: Հոր փոխանը կամ բլուզը կարճացնում, հագցնում էին տղային, նա ուրախանում էր նոր հագուստ ունենալու համար: Մոր կարկատաններով «օյման» (շրջազգեստ) կարճացնում, տալիս էին աղջկան, որը թև էր առնում ու թռչկոտում գեղեցիկ հագուստի համար:

Գավառում եղած մի քանի դերձակները, Իրգութին գյուղում ուստա Սուրենը, Մարդանաղայում՝ Նուստարը, Քլալայում՝ Ջամանը, Լումայում՝ Արամը, Ղասումաշենում՝ Ջհանգիրը և այլոք, ամիսներ շարունակ գործ չէին ունենում: Նրանց հիմնական պատվիրատուներն էին գավառի խաներն ու բեգերը, որոնք շատ հաճախ հրաժարվում էին վճարելուց:

Ղունդաղսազ (զինագործ). Զինագործներ կային Խանագահում՝ ուստա Գյուռքյար, Ողանում՝ ուստա Հարաբետ, Վինայում՝ ուստա Մանցի:

Թուրք և քուրդ զինագործներ չկային:

Զարգյար (ոսկերիչ). Ոսկերչությունը հնում ավելի զարգացած է եղել, քան մեր օրերում: Դրա պատճառը, մեր կարծիքով չարչիների ի հայտ գալն էր, որոնք բերում և տարածում էին նաև կանացի բազմատեսակ զարդեր, ուլունքներ ու հարդարանքի առարկաներ:

Արժեքավոր մետաղներից տարածվածն ու զարդարանքի համար օգտագործվողը արծաթն էր:

Դալլաք (վարսավիր). Մեր կարծիքով, հնում հայերը վարսավիրներ չեն ունեցել և նրանց կարիքը չկար, քանի որ բոլորն էլ մորուքավոր էին:

Կարիքի դեպքում, որոշ չափով գլխի մազերի հարդարումը կատարել են շնորհաշատ հատ ու կենտ մարդիկ:

Հայաբնակ գյուղերում վարսավիրները երևացել են XX դարի սկզբներին:

Ամեն մարդու հարդարանքի համար մեկ տարվա ընթացքում նրանք ստանում էին մեկ գուշ ցորեն:

Վարսավիրի պարագաներն էին ծալովի «արծիլին», սրոնզը, մկրատը, փոքրիկ հայելին ու մի սավան:

Դալլաքությունը լայն տարածում ուներ թուրքերի ու քրդերի մոտ, քանի որ նրանք թլպատում էին նաև երեխաներին:

Դանակագործություն. Ղարադաղցի տղամարդը պարտադիր պետք է գրպանում դանակ ունենար:

Տեղացի դարբինները պատրաստում էին դանակի պողպատե «րհան» (շեղբ): Շնորհաշատ մարդիկ այծի եղջյուրը կրակի վրա տաքացնում, մաքրում, կիսալուսնի ձև էին տալիս ու միացնում շեղբին, որը բացվում ու փակվում էր:

Ջուլհակություն. Այս արհեստի առաջացման մասին ոչ մի տեղեկություն ու ավանդություն չէր պահպանվել:

Մինչև 1946թ. գաղթը Խանագահ գյուղի յուրաքանչյուր հինգ տնից մեկն ուներ ջլկվըրեն (ջուլհակահոր): Խանագահի ջուլհակները բամբակե, բրդե և մետաքսե գործվածքներով սպասարկում էին շրջակա հայ, թուրք և քուրդ գյուղացիներին:

Դազգահի մասերի պատրաստումից ու նորոգումից բացի, բոլոր աշխատանքները կատարում էին կանայք: Գործող վարպետները կանայք

էին, որոնք արհեստի նրբությունները սովորեցնում էին տան աղջիկներին ու հարսներին և գործելու վարպետությունը փոխանցում սերնդից սերունդ:

Բամբակի կորիզը «չղրխ» գործիքով անջատում և «անղը»[53] գործիքով գզում էին տղամարդիկ, իսկ բուրդը սանրով գզելը, ճախարակով մանելը, ոլորելը, հենք դնելը, թելերը ներկելը, գործելն ու հագուստեղեն կարելը կատարում էին կանայք:

Ջուլհակի սարքերն էին.

Հընք. գործվածքի թելի զանգված:

Սանդրք. լինում էր երեք տեսակ՝ բրդի, բամբակի և մետաքսի: Սանրի ատամները պատրաստում էին ազնիվ եղեգից՝ ղարղուհից: Դրանց կայունություն և ամրություն տալու համար, լցնում էին կտավատի ձեթի մեջ:

Ասպ. այն զույգ էր լինում. պահում էր թելերի ու հինվածքի ուղղությունը և կարգավորում գործելու ընթացքը:

Մուքուք. գործող էլիպսաձև գործիք:

Մաստա. 10սմ երկարությամբ եղեգե ծողիկ, որի վրա փաթաթում էին թելն ու հագցնում մուքուքի մեջ:

Վըլե. թելի օղակաձև զանգված:

Վլատու. ինքնաշեն, տանձաձև փայտե գործիք, 20-25սմ բարձրությամբ, չորս անկյունով ամրացրած լուսնաձև տափակ քարի վրա: Վըլեն հագցնում են այդ գործիքի վրա, որը պտտվում էր, թելը բացում, չքողնելով, որ խճճվի:

Հայ կանայք գործում էին գորգեր, կարպետներ ու զանազան գործվածքներ: Թուրքերի մոտ դա թույլ էր զարգացած, իսկ քրդերի մոտ գրեթե գոյություն չուներ:

Գործվածքեղեն. Ղարադաղի ամբողջ տարածքում ոչ մի արդյունաբերական ձեռնարկություն չի եղել:

Հաճախ գյուղերում շրջագայում էին չարչիները, որոնք գալիս էին հեռու քաղաքներից, բերում գրաստներին բարձած կտորեղեն ու զանազան մանրուքներ: Կտորեղեն էին բերում նաև զանազան քաղաքներ աշխատանքի մեկնած երիտասարդները:

Տարեց մարդիկ պատմում էին, որ Խանագահ գյուղից մոտ 10կմ հարավ գտնվող Շիրվան ավերակ բնակատեղին ժամանակին եղել է բարեկարգ ու շեն քաղաք, որը նույնիսկ բաղնիք է ունեցել: Շիրվանցիների հիմնական զբաղմունքը եղել է ջուլհակությունը, նրանք առևտրական կա-

---

[53] Անեղ-գզրարի աղեղնաձև գործիք, որի լարին թակով խփելով գզում են բուրդ և բամբակ (*Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ.1, էջ 110), (*խմբ.*):

պեր են ունեցել Գանձակի հետ, որտեղ արտահանվել ու վաճառվել է նրանց գործած կտավը, քաթանն ու մետաքսը:

Կանայք ոչխարի սև բուրդը մանում էին ճախարակով, դազգահի վրա հինում ու գործում: Ստացված գործվածքը ցանցառ էր լինում: Գործվածքին կայունություն և խտություն տալու համար պղնձե մեծ կաթսայում ջուր էին եռացնում և այն դնում ջրի մեջ: Մեկ ժամ անց հանում էին ու քամում: Տաք թոնրի վրա նուրբ ճյուղերից գործած լաստ էին դնում ու խոնավ գործվածքը դնում լաստի վրա: Երեք երիտասարդ թիկնում էին թոնրի մի կողմում, երեքն էլ հակառակ կողմում: Խոնավ կտորն ու երիտասարդների ոտքերը ծածկում էին մեծ ծածկոցով, որ գոլորշիացումը քիչ լինի և մոտ մեկ ժամ բոբիկ ոտքերով գործվածքը հրում էին ետ ու առաջ: Նման գործողությունից հետո բրդե գործվածքը խտանում էր ու նրբանում: Կտորը հարելուց հետո հարթեցնում էին, չորացնում ու կարում իրենց ցանկացած հագուստը:

Հայերը բամբակ գնում էին Արաքսպար հովտից: Բամբակազտիչ մեքենայով բամբակի կորիզը հանում էին: Մաքուր բամբակը հատուկ վարպետները գգում էին գործիքով, որը կոչվում էր անըղնը: Գզած բամբակը մանում էին ճախարակով, ստացված թելերից գործում կտավ ու ղադակ քաթան: Ներկում էին, հագուստեղեն, անկողնու երեսներ և այլ պիտույքներ կարում:

Գորգ. գորգագործությունը տարածված էր Ղարադաղում. գործում էին կանայք: Գորգն իր ուրույն տեղն ուներ տնային կարիքների համար: Գորգի հենքը, հինվածքը լինում էր բամբակի թելից, գործվածքը՝ բրդե զանազան գույնի թելերից: Գավառում տարածված էր «քյանարա» կոչվող տեսակը: Այն ունենում էր 2-3մ երկարություն և 1մ լայնություն:

Պարտադիր կարգով, գորգերը լինում էին զույգ, օջախի աջ ու ձախ կողմերում փռելու համար:

Նաֆռաշ (անկողնակալ). նաֆռաշի դիմացի երեսը գործում էին գորգածև, ետևի մասը՝ կարպետածև: Կարում էին իրար վրա և ստանում ընդարձակ քսակ՝ 1,2մ երկարությամբ և 1մ լայնությամբ: Նաֆռաշում տեղավորում էին մեկ ծեռք անկողին: Հարգարժան հյուր ունենալու դեպքում, հենվելու համար նաֆռաշը դնում էին նրա թիկունքի տակ: Երեկոյան, քնելուց առաջ անկողինը հանում էին:

Հարկ է նշել, որ Ղարադաղում սեղան և աթոռ չկար. նստում էին գորգերով կամ կարպետներով ծածկված հատակին:

Կարպետ. դրանք մի քանի տեսակ էին.

Սադա (միագույն). օգտագործում էին ամեն տեղ, ամեն կարիքի դեպքում:

Զոլավոր. գործում էին գույնզգույն թելերից, մոտ 10սմ լայնությամբ շերտերով:

Դարախլու. գործում էին մաքուր բրդի գույնզգույն թելերից: Դարախլու անունն ստացել է փամփշտակալին նման լինելու պատճառով, որն անվանում էին «դարախ»: Այն հիշեցնում էր երկու ծեռքերի ագուցված մատներ:

Գյուլանդար (ծաղկազարդ). Գործում էին մաքուր բրդի նուրբ ու գույնզգույն թելերից, տալով ծաղիկների ու վարդերի տեսք:

Դարախլու և գյուլանդար կարպետները գործում էին որպես օժիտի մաս: Դարախլու կարպետները փռում էին հատակին, հասարակ կարպետների վրա: Գյուլանդար կարպետը գորգին համարժեք էր. կախում էին պատից: Բոլոր կարպետները գրեթե նույն չափերն ունեին՝ 3մ երկարություն և 1,5մ լայնություն:

Ջուլ. այն հավասար էր կես կարպետի: Գործում էին հասարակ կարպետի նման և օգտագործում գրաստների վրա գցելու համար:

Ջվալ. ջվալները երկու չափի էին լինում, երկար ու կարճ: Ղարադաղից Թավրիզ արտահանվող փայտածուխը տեղափոխում էին երկար ջվալներով: Դրանք ունեին 1,5մ երկարություն և 0,8մ լայնություն: Կարճ ջվալն ուներ մոտ 1մ երկարություն և 0,5-0,6մ լայնություն: Սրանցով հացահատիկ էին տեղափոխում կալից տուն կամ ջրաղաց:

Խուրջուն (խուրջին). լինում էր երկու տեսակ, մեծ ու փոքր: Մեծի գործվածքը համընկնում էր հասարակ կարպետի հետ: Օգտագործում էին սերմացուն արտ տանելու, գյուղատնտեսական գործիքների փոխադրման համար և այլ նպատակներով:

Փոքր խուրջուն (հաբգա). երեսի կողմը գործում էին գորգածև, ետևի կողմը՝ կարպետածև: Օգտագործում էին ճամփորդելու ժամանակ, ուսին կրելով թեթև բեռներ:

Աղաքսակ. գեղեցիկ էին նաև աղաքսակները, որոնք գործում էին շերտավոր, դարախլու և գյուլանդար կարպետների նախշերով:

Ներսի կողմից պաստառապատում էին կտավով, որպեսզի աղը մաքուր մնար: Աղաքսակն ունենում էր 40-50սմ երկարություն և 25-30սմ լայնություն: Բերանի մոտ նեղ էր լինում, այնպես, որ ծեռք մտներ: Կողքերին ամրացվում էին բռնելու և տեղափոխելու կանթերը: Նույնպիսի կանթեր

ունենում էին նաև ջվալները, գրաստների վրա պարաններով կապելու համար: Բոլոր տեսակ կանթերը տեղի բարբառում կոչվում էին «տանգ»:

Ղարադաղում աղաքսակի մասին մի հանելուկ կար. «Ամեն տան մի բեն կա, փորը լիքը, վիզը՝ թեք»:

Մետաքս. բոժոժից ստացած զանգվածը ձեռքի իլիկով մանում և մետաքսաթել էին ստանում:

Մետաքսաթելը օգտագործում էին ասեղնագործության համար: Դազգահով նուրբ գործվածք էին անում, որից կարում էին վարագույրներ, վերմակի երեսներ, կանանց ծածկոցներ:

Պարան. օգտագործում էին տարբեր ձևերի ու չափերի բազմազան պարաններ: Ամրության համար բոլոր տեսակի պարանները հյուսում էին այծի մազից:

Սիջիմն. մոտ 10մ երկար պարան էր, որն օգտագործում էին գրաստին խոտի խրձեր ու փայտ բարձելու ժամանակ:

Սիջիմնը հյուսելիս ծայրը կապում էին սրահի սյանը: Ունենում էր առանձին կծիկներ արած հինգ ճյուղ: Երկու հաղթանդամ երիտասարդ կանգնում էին դեմ դիմաց ու հաջորդաբար թելերը փոխանցում իրար: Կես մետր երկարությամբ գործելուց հետո փաթաթում էին սյունին, որ գործվածքը ծիգ ու ամուր լինի: Սիջիմնը գործելուց հետո նրա մի ծայրին ամուր կապում էին երկճյուղ ամուր փայտից «գեփը»: Գեփի մի ճյուղը ուղիղ էր լինում, 15 սմ երկարությամբ, իսկ մյուսը՝ աղեղնաձև, սիջիմնը լավ ծգելու և ամուր պահելու համար:

Սիջիմնը գործում էին ձմռան ազատ օրերին:

Շալակաքող. օգտագործում էին շալակով խոտ, փայտ և այլ բաներ տեղափոխելու համար:

Չաթու. ունենում էր երկու մետր երկարություն. օգտագործում էին կժով ջուր կրելու, հորթ կապելու և այլ դեպքերում:

Լուքտակոթ. օգտագործում էին գրաստների սանձերի փոխարեն:

Չաթախ. ինչպես և չաթուն, թուրքերեն նշանակում է բարձիկ: Սրանցով գրաստների վրա կապում էին երկու կողմերի վրա դրված հակերը: Դրանք ավելի նուրբ գործվածք ունեին:

Չվան. եթե բոլոր տեսակ պարանները հյուսում էին մի ծայրը ամրացնելով տան սյուներից մեկին և ստանում կլոր պարան, ապա չվանի համար թելերը հինում էին գետնի վրա, մոտ 10սմ բարձրությամբ: Չվանի լայնքը լինում էր 5-8սմ: Չվանով համետը ամրացնում էին գրաստի վրա:

Սմբոտաև. բարակ նուրբ պարան էր, որը կապում էին լծի անցքերից հանած սամիներին ու կապում եզան վզի տակ:

ՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐ

Ներկերի սիրահար են եղել Ղարադաղի հայերը, որոնք ճանաչում էին իրենց շրջապատում գտնվող հարուստ ներկատու բույսերը:

Կարմիր ներկը ստանում էին տորոնից, որը տարածված էր բոլոր արևահայաց լանջերին, դարչնագույնը՝ կաղնու կեղևից, ալ կարմիրը՝ սընջի թփի դալար ճյուղերից, դեղինը՝ կուժխուլի թփի ճյուղերից, սևը՝ ընկուզենու կեղևից և դեղին խոտից, կանաչը՝ նռան ու սոխի չորացրած կեղևներից:

Ղարադաղի հայերի խոսվածքում, գույնին անվանում էին «ըռանգ». սիպտակ-սպիտակ, սըվ-սև, կարմուր-կարմիր, կապուտ-կապույտ, կանեչ-կանաչ, դեղեն-դեղին, զառ-ոսկեգույն, բոզ կամ մուխր ըռանգ-մոխրագույն, սուրմեհի-վառ կապույտ, աբի-բաց կապույտ (երկնագույն), օրունչ-դարչնագույն, շիլա-վառ կարմիր, ասալի-մանուշակագույն:

Նրանք, բացի կապույտից, բոլոր գույները ստանում էին խոտաբույսերից և զանազան թփերի ու ծառերի կեղևներից, որոնք հավաքում էին ամռանամուտին:

Հագուստների հիմնական գույներն էին սպիտակը, կապույտը և կանաչը:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մինչև 1946թ. գաղթը Ղարադաղում ապրաքների ու անասունների վաճառքի և փոխանակման շուկաներ ու տոնավաճառներ չեն եղել:

Եթե մեկը որևէ անասուն գնելու կարիք էր ունենում, նախ հետաքրքրվում էր գյուղում ու փորձում ծեռք բերել համագյուղացիներից: Երբ գյուղում չէր ճարում, մի հարազատի հետ գնում էր հարևան գյուղերը, հարցումներ անում և իր հավանած անասունը գնում էր կանխիկ դրամով:

Պատահում էր, որ գնորդի մոտ ապրանքի կամ անասունի արժեքին համապատասխան դրամ չէր լինում: Նման դեպքերում գնորդի հետ եղած մարդու երաշխավորությամբ և երկու անձանց վկայությամբ գնորդը պարտավորվում էր որոշակի ժամկետում պարտքը տալ:

Նման գործարքների ժամանակ գրություն չէին կազմում:

Հաճախ էր պատահում, որ վաճառքի անասուն, գրաստ և այլ ապրանք

ունեցողները միանում, շրջում էին գյուղերում և դրանք վաճառում:

Թանխա. նշանակում է վաճառվող ապրանքին համարժեք այլ ապրանքների գնահատում:

Եթե եզը գնահատված էր հինգ թուման և գնորդը այդքան կանխիկ դրամ չուներ, պակասող դրամի չափով կարող էր այլ ապրանք տալ: Վաճառողի համաձայնությամբ ու մի քանի հարևանների միջնորդությամբ ու վկայությամբ, գնորդը տալիս էր երկու այծ, հատը մեկ թուման, մեկ մոզի, երկու թուման արժեքով և մեկ թուման կանխիկ դրամ:

Առուտուրական (առևտրական). այդպես էին անվանում այն մարդկանց, որոնց հիմնական զբաղմունքը խոշոր եղջերավոր անասունների և գրաստների առուծախն էր: Նրանք մանր եղջերավոր անասունների առուծախ չէին կատարում:

Նման առևտրով զբաղվում էին հայերն ու թուրքերը: Շրջագայում էին միայնակ, իրենց ծեռնտու գնով անասուն գնում և շահույթով վաճառում մեկ ուրիշ տեղ:

Չոդառ. այդպես էին անվանում այն մարդկանց, որոնք զբաղվում էին միայն մանր եղջերավոր անասունների առք ու վաճառքով:

Չոդառները շրջում էին 3-4 հոգով, հիմնականում աշնան ամիսներին, երբ անասունները գիրացած էին լինում:

Որպես մսացու գնում էին այծեր, նոխազներ, ոչխարներ, խոյեր և վաճառում «ղասաբներին» (մսագործ):

Չարչի (մանրավաճառ). չարչիությամբ զբաղվում էին թուրք տղամարդիկ, որոնք ապրանքը բարձում էին գրաստներին ու շրջում գյուղերում: Նրանք վաճառում էին բազմազան մանր-մունր իրեր ու զարդարանքներ՝ ասեղ, ուլունք, մկրատ, գրպանի դանակ, ծաղկավոր չիթ, բյազ և այլն: Վաճառքը կատարվում էր կանխիկ դրամով:

Յուջաթ (պարտամուրհակ). եղել են հայ և թուրք վաշխառուներ, որոնք կանխիկ դրամը դնելով շրջանառության մեջ, տոկոսով տվել են կարիքավորներին և շահույթ ստացել:

Վաշխառու մարդուն Ղարադաղի հայերն անվանում էին «փուղատար» (դրամատեր), թուրքերը՝ «փուլլի»:

Աշնանը նրանք էժան գներով հացահատիկ ու անասուն էին գնում ու գարնանը, թանկ գներով՝ վերավաճառում:

Քաղաքից կտորեղեն, թեյ, շաքար, բրինձ, նավթ և անհրաժեշտ այլ ապրանքներ էին բերում, վաճառում թանկ գներով և ծեռք բերած դրամը տոկոսով տալիս գյուղացիներին:

Նրանք հետաքրքրվում էին տոկոսով դրամ վերցնելու դրդապատճա-

ռով և այն ժամանակին վերադարձնելու հնարավորությամբ:

Գյուղացին տոկոսով դրամ էր վերցնում տղային պսակելու, լծկան եզ կամ կթան կով, գրաստ և այլն գնելու համար:

Պարտքը մարելու գյուղացու հույսը ցանքն էր, բերքի մի մասի կամ անասունի վաճառքը և օտարությունում աշխատող տղայի վաստակը:

Եթե մարդը վերը նշված հույսը չուներ ստիպված էր լինում «բեշարի» (գրավ) դնել արժեքավոր իրեր, կահկարասի, տուն, արտ, այգի և այլն:

Նա իրավունք չուներ գրավ դրած ունեցվածքը վաճառել, քանի դեռ պարտքը չէր մարել:

Պարտքի ժամկետը լրանալուց հետո, եթե չէին կարողանում այն մարել, գրավին տիրանում էր վաշխառուն:

Պարտամուրհակը գրում էին մեկ տարուց մինչև մի քանի տարի ժամանակով:

Հայաբնակ գյուղերում մուրհակը գրում էին քահանան, տիրացուն կամ ուսուցիչը և հաստատում այն: Թուրք վաշխառուից պարտք վերցնելիս, այն գրում ու հաստատում էր գյուղի մոլլան:

Մուրհակը տրվում էր հետևյալ բովանդակությամբ.

Հուշաթ. «Ես, Խանագահ գյուղի բնակիչ Հաթամ Մարգարի Բադալյանս, մեր գյուղի քահանա տեր Եզնիկ Ոսկանյանի վկայությամբ, համագյուղացի Օհանջան Բեգլարյանից պարտք վերցրեցի հինգ թուման արծաթ կանխիկ դրամ, մեկ տարի ժամանակով, ամեն մի թումանին տարեկան մեկ ղռան սալամավ (տոկոս): Պարտքս ժամանակին չտալու համար բեշարըմ թողում իմ ունեցած մի գյուլոխ եզնը»:

Մուրհակի տակ քահանան նշում էր տարեթիվն ու ամիսը, պարտք վերցնող գյուղացին բութ մատը թանաքոտում էր ու դրոշմում այն, որից հետո վարկատուն վերցնում էր մուրհակը և տալիս նշված գումարը:

Քանի որ գյուղացիները անգրագետ էին՝ բութ մատով դրոշմելը նշանակում էր կնքել և ստորագրել:

Պարտքի մարման ժամկետը լրանալուց հետո, եթե գյուղացին ի վիճակի չէր լինում այն մարել, ըստ վաշխառուի խղճի, կար երեք պայման:

ա. Վաշխառուն կարող էր պահանջել մեկ տարվա տոկոսը, պատռել հին հուջաթը և գրել նորը:

բ. Առաջացած տոկոսի գումարը ավելացնել «մայի» (վերցրած գումար) վրա և գրել նոր հուջաթ, տոկոսը դարձնելով տոկոսաբեր:

գ. Վաշխառուն կարող էր չհամաձայնվել վերը նշված պայմաններին և պահանջել գրավը:

Օրինակի համար, որպես գրավ դրված եզին տիրանալուց հետո, վաշխառուն այն վերածում էր դրամական գնահատման: Ասենք թե, եզը արժեր հինգ թուման,[54] նա վերցնում էր եզը հինգ թուման պարտքի դիմաց և պահանջում մեկ տարում առաջացած հինգ ղռան տոկոսը:

Վաշխառուն առանց գրավի պարտք չէր տալիս. գրավ էին վերցնում ամեն ինչ՝ գրաստ, կով, ոչխար, այծ, ցանած արտ, վարելահող, տնային կահկարասի և անգամ՝ տուն:

Բեհ (կանխավճար). կանխավճարը մեծ դեր էր խաղում առևտրում և շինարար վարպետների կատարած աշխատանքի վարձատրության համար:

Բերենք երկու օրինակ. մարդը պայմանավորվում էր մեկից ծի գնել, գնի շուրջ համաձայնվում էին, սակայն գնորդի դրամը չէր բավարարում: Նման դեպքում, ժամկետ էին սահմանում, որի ընթացքում հարկավոր էր գումարը վճարել: Պայմանը չխախտելու համար գնորդը ապրանքի տիրոջը կանխավճար էր տալիս, որը կոչվում էր բեհ:

Երբ սահմանված ժամկետում գնորդը ուշանում էր, ապրանքի տերը իրավունք ուներ այն վաճառել մեկ ուրիշի, վերադարձնելով վերցրած կանխավճարը:

Գավառի տարբեր ազգությունների մեջ կար մի գեղեցիկ ավանդույթ, ըստ որի, երբ մի հայ որևէ այլազգուց անասուն էր գնում կամ վաճառում նրան, նրանք դառնում էին մշտական ծանոթներ՝ «քիրվա» (քավոր), որը փոխանցվում էր սերնդեսերունդ:

Ղարադաղում ամենամեծահարուստ մարդը Զաքարիա Դանիելյանն էր, մի շատ զարգացած, ծանրակշիռ անձնավորություն: Բոլորը նրան ճանաչում էին «Փուլչի Զաքարիա» անունով:

Ամառ թե ձմեռ, աշուն թե գարուն օր չկար, որ մի քանի տասնյակ մարդիկ նրա հետ չառնչվեին դրամի, հացահատիկի, անասուն ծեռք բերելու և այլ հարցերով:

Զաքարիան բոլոր ազգությունների մարդկանց հավասար կարգով հարգում էր, շահում նրանց սիրտն ու կարիքը, ոչ մեկին ծեռնունայն ճանապարհ չէր դնում: Դրա համար նրան մեղադրողներ էլ կային, թե. «Հաց, փող օնս, տոր քու հայ քյասիբ-քյուսիբին, խյ ես տալիս թորքին, քյուրդին, որ տանըն օտըն, ետնե ալ ուրանան, իլածըդ էլ գինա կորչի, էտ հայու խելք ա՞, որ դու ըրել ես»: Նման մեղադրանքներին Զաքարիան պատասխանում էր. «Մաշալալլի քու խըլքեն, պա որ թորքին, քյուրդին դերտակ

[54] Մեկ թումանը հավասար է տասը ղռանի:

հղե դնեմ, հայեն ալ պարկը լցնեմ, տամ շալակը, խըլքըտ հի՞նչ ա կտրում, էդ հայը կկարի՞ սաղ սալամաթ տոն հասնի»:



1857թ. Խանագահի բնակիչներ Նիկողայոս և Մարտիրոս Տեր-Զաքարյաններին տրված սեփականության վկայագիր

Վաղուց լսել էի, որ Մարդանաղա գյուղում Թահմազ անունով մի հարուստ թուրք կա, որը հայերին դրամ, հացահատիկ ու տարբեր ապրանք-

ներ է տալիս պարտքով, իսկ թուքերին ու թաթարներին չի տալիս: Այդ պատճառով թուրքերը նրան անվանում էին «էրմանի քեշիշի» (հայի տերտեր), նկատի ունենալով նրա մտերմությունը հայերի հետ:

Թահմազի նման վերբերմունքը հետաքրքիր էր, ու ցանկանում էի հանդիպել նրան և իմանալ պատճառը: 1942թ. աշնանային մի օր հաջողվեց հանդիպել նրան: Տխրադեմ, ծանրակշիռ, մոտ 70 տարեկան սպիտակահեր, թավ մորուքով զրուցասեր մարդ էր: Տեսքով, իրոք նման էր հայ տերտերի, համագյուղացիները նրան բնորոշ մականուն էին տվել: Մի քիչ զրուցելուց հետո նրան հարցրի, թե ո՞րն է նման անվան պատճառը:

Թահմազը թեթև ծիծաղեց ու ասաց.

– Ուրեմն ապաշնորհները այդ մասին ձեզ էլ են հայտնել, ի՞նչ կա որ, ասում են՝ թող ասեն, տերտերներն էլ վատ մարդիկ չեն, իրենց ժողովրդի հոգսերով տարված մարդիկ են, աստծո հրամանը կատարողներ:

Ես էլ աստծո ստեղծած մարդ եմ, բայց աստծո մտքից ընկած: Որոշ ապրուստ եմ ստեղծել, ապրում եմ: Գոհ եմ աստծո տվածից, բայց, որ աստված ինձ զավակ չի տվել, դրա համար իմ ազգը ինձ երեսով է տալիս:

Աղքատ մարդիկ շատ կան: Թուրք, քուրդ գալիս են դրամ, հացահատիկ են խնդրում, տալիս եմ, տոկոս էլ չեմ վերցնում, որ միգուցե աստված նկատի ունենա իմ բարերարությունը, ինձ էլ մի զավակ տա:

Ես մինչև անգամ աստծո տան դուռն եմ գնացել, հասել Քաբուլ, օջախիս ծուխը չկտրելու համար աստծուց մի զավակ խնդրել, բայց իմ խնդրանքը երևի աստծուն չհասավ, ժառանգ չտվեց: Ժողովրդին կատարած բարերարությունս էլ չանցավ, ում որ դրամ ու հացահատիկ տվեցի, ժամկետը լրանալուց հետո ետ չստացա, կարծես թե բոլորը իրար բերանում թքած լինեին: Ինձ նախատելով ասում էին. «Տվածդ մեզանից ետ ես վերցնում, որ ի՞նչ անես, ո՞ւմ համար ես հավաքում, վաղը, մյուս օրը մեռնելու ես, ունեցվածքդ շան ու գելի բաժին պիտի դառնա, անժառանգ մարդ ես:

Տեսա, որ ժողովուրդը ուտող՝ ուրացող է դարձել, աստված էլ ձայնս չլսեց, էլ ոչ մի թուրքի ու քրդի նեղությանը չեմ հասնում, պարտքով դրամ ու հացահատիկ միայն հայերին եմ տալիս, նրանք բարեխիղճ են ու պարտաճանաչ, լավությունը չմոռացող: Պարտքերը բերում են ժամանակին մարում, շատ ժամանակ, որ չեն կարողանում տոկոսը մարել, դրա դիմաց մի աքլոր, մի քանի ցախավել, ավել կամ խաղողի հենասյուն են բերում, պարտքի տակ չեն մնում: Դրա համար էլ ինձ նման մականուն են տվել, թող ասեն «հայի տերտեր», հայից լավը չկա»:

Փոշման փուլի (զղջման դրամ). վաճառողին գումարի մի մասը տալուց հետո գնորդը հայտնում էր, որ փոշմանել է: Նման դեպքում ապրանքի տերը վերցրած կանխավճարը չէր վերադարձնում:

Նման գործարքներ լինում էին նաև շինարարության ժամանակ. որմնադիր վարպետին կանխավճար էին տալիս: Պայմանազանց չլինելու համար վարպետը գործատիրոջից կանխավճար էր վերցնում: Պայմանը խախտելու դեպքում, եթե գործատերը ուրիշ վարպետ էր ընտրում, գումարը չէր վերադարձվում:

Միակ պահել (մահակ պահել). առուծախի ամենահետաքրքիր ձևն էր: Դա կատարվում էր հետևյալ կերպ. մեկից անասուն գնելու դեպքում, որպեսզի հետագայում զղջում, առարկություն և խոսակցություն չլիներ կատարված գործարքի շուրջ, անասնատերն ու գնորդը մի մահակ էին վերցնում, ամեն մեկը մի ծայրից բռնում, կամարի ձև տալով, բարձր պահում էին: Մեկ ուրիշը գնված անասունը մահակի տակով անց էր կացնում: Դա նշանակում էր կատարած առևտրի վերջնական ու անվիճելի պայման: Եթե մահակ պահելուց անմիջապես հետո անասունը սատկեր, վաճառողը պատասխանատու չէր:

Գյուղացին որևէ կենդանի վաճառելիս պարտավոր էր գնողին ամենայն հավատքով տեղյակ պահել վաճառվող անասունի թերությունների ու բնավորության մասին:

Եթե վաճառողը ճիշտ տեղեկություն չտար կենդանու բնավորության մասին, հետագայում, բացահայտվելուց և ապացուցվելուց հետո անասնատերը պարտավոր էր առանց որևէ առարկման ետ վերցնել այն:

Լուկդա փող (սանձի վարձ). երբ վաճառողը պարանը կամ սանձը հանձնում էր գնորդին, վերջինս, ըստ իր սրտի կամեցողության՝ դրամ էր նվիրում ու ասում՝ «Օրախ ծախսս»:

Անասունի, արտի, տան, այգու առուծախը կատարվում էր բարեկամների ու հարևանների ներկայությամբ, որոնք մասնակցում էին նաև գնի շուրջ համաձայնության գալուն:

Վաճառողը, սեղմելով գնողի ձեռքը, ասում էր. «Աստված խեր (բարի) տա»:

Վաճառված անասունի գինը հանձնելով վաճառողին, գնողն ասում էր. «Բարաքյաթով ինի» (անսպառ լինի):

Կորած իր, գործիք կամ անասուն գտնողը պարտավոր էր առանց որևէ առարկության այն հանձնել տիրոջը:

Եթե մի թանկարժեք իր կամ անասուն էին գտնում մի քանիսով և մեկ շաբաթվա ընթացքում տերը չէր հայտնվում, գտածոն վերածում էին դրամի ու հավասար կիսում:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ղարադաղում ոչ մի բարեկարգ ճանապարհ չի եղել, թե սայլերի և թե ավտոմեքենաների համար:

Ղարադաղում մինչև 1946թ. չիմացան ինչ բան է անիվը և որքան օգտակար ու շահավետ է գյուղացու համար: Այս առումով ոչ պետությունն էր մտահոգված և ոչ էլ ուժասպառ գյուղացին:

Դրա պատճառը միայն այն չէր, որ Ղարադաղի տարածքը, լինելով լեռնային գոտի, ունի սարսափելի լեռներ ու անդնդախոր ձորեր, որոնք ճանապարհների կառուցումը անհնարին էին դարձնում:

Մեր կարծիքով, հնում բարեկարգ ճանապարհ է եղել Արաքսի ափի երկայնքով: Մենք դա ենթադրում ենք ելնելով այն բանից, որ Կապանի ուղղությամբ Ղարադաղի կողմից Արաքսի ջրերը մխրճված հսկա լեռնազանգվածի վրա, անհիշելի ժամանակներից մարդիկ փորել են ժայռի կուրծքը, մոտ 10-12մ երկարությամբ և 3մ բարձրությամբ թունել բացել երթևեկության համար:

Նշված թունելը հայերն անվանում էին «Ծակ քար», իսկ թուրքերը՝ «Դալիգ դաշ»: Այստեղ մեր միտքն ընկնում է մոլորության մեջ այն առումով, որ Ղարադաղի տարածքում, Արաքսի ափի երկայնքով, Ծակ քարից 50-60կմ ներքև, մոտավորապես Մեղրու դիմացի ժայռոտ տարածքը խիստ անանցանելի է: Ճանապարհն այնքան նեղ է ու քարքարոտ, որ գյուղացին, գրաստի պոչը բռնած, հարայ հրոցով գրաստին քաջալերելով, աստծո ու մարգարեների անունները տալով, խնդրելով, լեղին ջուր կտրած, կարողանում էր հաղթահարել ժայռերի կապանքներով անցնող «յոլաղը» (նեղ կածան):

Նշված տարածքի կածանները ունեն հետևյալ անունները. «Իթ բանդի» (շան կապանք), «Փիշիգ բանդի» (կատվի կապանք), «Ղաթր բանդի» (ջորու կապանք) և այլն: Կապանքներին նման անուններ տրված են այն պատճառով, որ նույնիսկ այդ կենդանիները հազիվ կարող էին դրանք անվտանգ անցնել:

Դրանք խիստ դժվարին ու վտանգավոր էին երթևեկության համար, բավական էր գրաստի մի անզգույշ քայլ, և կենդանին կսահեր ու տիրոջ հետ կգլորվեր Արաքսի պղտոր ջրերի մեջ: Նման դժբախտ պատահարներ երբեմն տեղի են ունեցել:

Իրանի շահ Ռզա Փեհլևին երկրի բոլոր գավառներում շրջագայելու համար հրաման տվեց, որ Թավրիզից մինչև Ղարադաղ մահալի կենտրոն Ահար քաղաք ավտոխճուղի կառուցեն:

Խճուղու կառուցումն սկսվեց 1928թ. գարնանը և ավարտվեց 1931թ. աշնանը: Պետությունը ինչ-որ գումար էր հատկացրել մոտ 200կմ խճուղու կառուցման համար, սակայն ոչ մի դինար չտրվեց բահ ու քլունգով աշխատող գյուղացիներին: Ռզա շահի «նիզամիները» (զինվոր) ցրվեցին Ղարադաղի գյուղերով մեկ, ամեն մի ընտանիքից մի աշխատավոր անձ հավաքագրեցին, որը պարտավոր էր մեկ ամիս որպես «բեգյար» (անվարձ) աշխատել: Հացը, սննդամթերքն ու գործիքները պետք է հոգար աշխատողը: Պետությունը մոտակա գյուղերում միայն ապահովում էր գիշերման ծրի տեղով:

Խանագահիցիներն աշխատում էին գյուղից 100-120կմ հեռավորության վրա, Ուզունդուզ գավառի էլերդ գյուղի դիմացի լեռնալանջին: Այն ընտանիքները, որոնք աշխատող տղամարդ չունեին, պարտավոր էին մեկ ուրիշին վարձել:

1930թ. սարալանջին բացվեց երկու շինություն, որոնցով ոչ ոք չհետաքրքրվեց:

Էլերդի մոլլան, տեսնելով վիմափոր ստորգետնյա քարե կառույցները, աղոթք կարդաց ու հավաքվածներին բացատրեց. «Աշխարհի բոլոր շեյթանները աստծո աչքից հեռու մնալու համար բնակվում են գետնի տակ, միայն գիշերներն են դուրս գալիս գետնի երես և չարագործություններ կատարում: Հայտնաբերված ստորգետնյա կառույցը սատանաների կացարան է, նրանք սաստիկ կզայրանան ու մեծ չարիքներ կգործեն, վնաս կպատճառեն էլերդի գյուղացիներին: Հարկավոր է խնդրել աստծուն, զոհաբերություն կատարել, գնալ մեջիդում երկար աղոթել, որ աստված գթա ու շեյթաններին տեղափոխի հեռու մի տեղ»:

Ղարադաղցիները սայլերի համար երթևեկելու բարեկարգ ճանապարհների մեծ կարիք ունեին:

Գազով ու նավթով հարուստ Իրանի Թավրիզ խոշոր քաղաքը որպես վառելանյութ փայտածուխ էր օգտագործում, որի 80%-ը ստանում էր Ղարադաղից: Ճանապարհներ չլինելու պատճառով ամեն օր մի քանի հարյուր գրաստներ՝ ձի, ջորի ու ավանակ, ջվալներով ածուխ էին տեղափոխում, անցնելով 180-200կմ ճանապարհ, որը տևում էր երեք օր:

Ղարադաղցու թշվառության ու աղքատության հիմնական պատճառն այն էր, որ ունեցած բերքն ու բարիքը, մթերքը, միրգը և անասունները չէր կարողանում քաղաք տանել, վաճառել ու օգուտ ստանալ:

Քրքաշան. ճանապարհներ չլինելու պատճառով պատրաստել էին մի հետաքրքիր սարք, որն անվանում էին քրքաշան (քարշ տալ բառից):

Քրքաշանը պատրաստում էին հետևյալ ձևով. ընտրում էին մի «հաչա» (երկճյուղ) ծառ: Ծառը կտրում էին, ամեն մի ճյուղից թողնում 1մ երկար մի հատված: Դրանց վրա անցքեր էին փորում, «սըպ» (սեպ) խփում, ճյուղերի բաժանման հատվածում էլ անցք էին բացում, որտեղով անց էին կացնում երկաթե շղթա, որի մի ծայրը կապում էին լծին:

Տապանաքար և ջրաղացաքար տեղափոխելիս դրանք դնում էին քըրքաշանի վրա ու շղթայով կապում: Հարմար տեղանքում եզներ էին լծում, իսկ եթե ճանապարհը նեղ էր լինում ու դժվարին՝ մարդիկ էին լծվում:

Փոխադրության համար կար նաև ավելի դժվարին ու ծանր գործ: Դա ծառերի բներից փորած ու գյուղերին մոտակա բարակ աղբյուրների մոտ դրվող, անասուններին ջրելու և ջրաղացների նավերն էին, որոնց երկարությունը 3-5մ էր:

Դրանց փոխադրման համար ոչ մի սարք, տեխնիկա գոյություն չուներ, նման աշխատանքները կատարվում էին մեծ դժվարությամբ, մարդկանց ու քաշող կենդանիների ուժով:

Կամուրջներ. կամուրջների շատ մեծ կարիք ուներ Ղարադաղի բնակչությունը, քանի որ տարածքի գետերը սրընթաց էին ու վտանգավոր, հատկապես գարնանը՝ ձյան հալոցքի և աշնան հորդառատ անձրևների ժամանակ:

Քիլեյբար, Արըղնա, Թիրվան, Վանստան և նման այլ գետեր ամեն տարի աղետի էին ենթարկում բազմաթիվ մարդկանց ու կենդանիների, կամուրջներ և անցումներ չլինելու պատճառով:

Միայն մի հնադարյան միաթռիչք փոքրիկ կամուրջ կար, որը գտնվում էր Շիրվան քաղաքից Թիրվան գյուղ տանող ճանապարհի վրա: Կամրջի կամարի արևմտյան կողմում, հավանաբար շինարարությանը վերաբերվող վիմագիր կար, բայց թե ինչ լեզվով, ինձ հայտնի չէ:

Մալթութդի (գրաստների հավաքագրում պետության կողմից).

Ամեն տարի գարնանը կամ աշնանը հանկարծակի գյուղերն էին գնում մի խումբ զինվորականներ ու հայտարարում, որ «մալթութդտի» է, զորավարժությունների համար հարկավոր է հավաքել գյուղացիների ձիերն ու ջորիները, պետական գույք տեղափոխելու համար: Ամեն մի գյուղացի պարտավոր էր իր գրաստով ներկայանալ հավաքակայան:

Այդ միջոցառման ժամանակ մի քանի տեղ փակում էին Ղարադաղից

Թավրիզ տանող գլխավոր ճանապարհը ու բոլոր կարավանները տանում զորավարժության հավաքակայան:

10-15 օր առանց վարձատրության գյուղացուն և նրա գրաստն աշխատեցնում էին:

Զորավարժությունից հետո պետական հանձնաժողովը մեկ առ մեկ ստուգում էր գրաստների առողջական վիճակը և ուզած կենդանին պետականացնում, տիրոջը վճարելով շուկայական գնի կեսը:

Ղարադաղցիները բեռները փոխադրում էին միայն գրաստներով:

Արաքսպար հովտում բնակվող քրդերն ու թաթարները պահում էին նաև գոմեշներ և օգտագործում որպես քաշող ուժ:

Ղարադաղի հայերը «մալթուդտու» վերաբերյալ ունեին մի գեղեցիկ, ծիծաղաշարժ առակ. «էշերեն խաբարն տվալ, որ մալթուդի ա: Էշրը դեչաը գյուլխու ինգիլը, լպրստակնեն փախալն, գյող կացալ:

– Դուք ալ հո էշ չեք, խեյեք փխչիլիս-, զարմացած ասալն լպրստակնուն:

Լպրստակրը պատասխանալն.

– Իրանեն ղզախեն (գինվոր) դեչաը հսկցրնք, որ մընք էշ չընք, լպրստրակնք, հվատաչըն՝ կասն խփիս եք, ձեր ընջուկնեն էշու ընջուկնու նմանա, լա դուք էշ եք, որ կաննեք: Կտանն էշու տեղ կբեռնն»:

1934-35թթ. Իրանի կառավարությունը սահմանապահ ուղեկալների համար հեռախոսային կապ անցկացրեց Արաքսի երկայնքով, Խոդափիրիհի կամրջից մինչև Ջուլֆա: Նման մեծ ու ծանր աշխատանքը նորից դրվեց Ղարադաղի աղքատ ու թշվառ գյուղացիների վրա:

Գյուղերի յուրաքանչյուր երկու ընտանիք պարտավոր էր հեռախոսային մեկ սյուն տանել Արաքսի ափ, նշված տեղում փոս փորել ու տեղադրել, առանց որևէ վարձի:

ՉԱՓ ՈՒ ԿՇԻՌ

Ղարադաղում օգտագործվող չափի միավորները չունեին պետական ստանդարտ: Բավական է նշել, որ 1946թ. դրությամբ գավառ դեռևս մուտք չէր գործել մետրը և կիլոգրամը: Շարունակում էին գործածել ավանդական գեզը,[55] մանը, գուշը և այլ չափեր:

[55] Գազ, կանգուն-երկայնության պարսկական չափ, հավասար է 112սմ (***Մտ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.1, էջ 402), (***Խմբ.***):

Գեզ. երկարության չափ, կտորեղեն, հողեր, շինություններ և այլն չափելու համար: Պատրաստում էին տեղի հյուսն վարպետները: Նրանք վերցնում էին փայտի չոր ու կոկիկ մատի հաստության մի ծողիկ, կտրում հինգ թզի չափով:

Վարպետները դրանք իրար հետ չէին համաձայնեցնում, ստացվում էին տարբեր չափեր, քանի որ մեկի թիզը մյուսինից կարճ կամ երկար էր լինում: Այնուհետև վարպետը փայտե ծողիկը բաժանում էր չորս հավասար մասի, որպեսզի որոշեին նաև կեսն ու քառորդը:

Եթե չափվող տարածությունը գազից մի քիչ ավել էր լինում, օգնության էին գալիս ձեռքի թիզը կամ մատները: Օրինակ, շենքի երկարությունն է՝ հինգ գեզ, երկու թիզ, մի չեռ (բութ մատի և ցուցամատի բացվածք), երեք մատ (կողք կողքի):

Արշին.[56] արշինով գործարք էին կատարում չարչիներն ու կտորեղենի առևտրականները: Եթե առևտրականը արշին չէր ունենում, գազի չափին էլ չէր հավատում, կտորի մի ծայրը բռնում էր ձախ ձեռքով ու տարածում, իսկ մյուս ծայրը բռնում էր աջ ձեռքով ու հասցնում քթին:

Ման (բաթման). կշռաչափ:

Իստիլ. հավասար էր մոտ 300 գրամի: Չորս իստիլը հավասար էր մեկ չարեքի (քառորդ):

Չորս չարեքը հավասար էր մեկ բաթմանի: Այսպիսով, մեկ չարեքը հավասար էր 1,2 կգ, մեկ բաթմանը՝ 4,8կգ:

Ղոշա. թուրքերեն նշանակում է զույգ: Արաքսպար գավառակում, մյուսների հետ համեմատած, կշռաքարերն ունեին կրկնակի ծանրություն: Նրանց մեկ ղոշան հավասար էր երկու բաթմանի: Բաթմանի և ղոշայի կշռաքարերն անվանում էին «սախաթ» (ծանրակշիռ):

Մսխալի. շատ արժեքավոր հազվագյուտ ապրանքները, ազնիվ մետաղները, թանկարժեք քարերը, համեմունքները, ներկանյութերը և այլն կշռում էին մատնոցածև պնակներով ու գդալներով: Չափի միավորը մսխալին[57] էր:

Փոնձա. հեղուկաչափի միավոր էր: Ղարադաղում հեղուկ նյութերից առուծախի ենթակա էին նավթն ու կտավատի ձեթը: Դրանց չափի միավորը փոնձան էր, որը հավասար էր իստիլին:

---

[56] Արշին-երկարության ռուսական չափ, 711,187 միլիմետր (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.1, էջ 277), (***Խմբ.***):

[57] Մսխալ-ծանրության չափ, 1,5գր (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.3, էջ 370), (***Խմբ.***):

Նշենք, որ իստիլ բառը գործածում էին միայն հայերը, իսկ մյուս ազգությունները՝ փոնճա բառը:

Գուշ. ընդեղենի և հացահատիկների չափի միավոր էր: Այն կիրառվում էր Դիզմար,Հասանով և Մեշափարա գավառակներում, որտեղ հացահատիկն այնքան էլ առատ չէր: Մինջևան, Քեյվան և Արաքսպար հացառատ գավառակներում առևտուրը կատարում էին ջվալներով:

Հյուսն վարպետները փորում էին ծառի ոչ մեծ բները, նրան տալով մոտ 5կգ տարողությամբ ամանի ձև, որը կոչվում էր գուշ:

Պարզ է, որ ամեն վարպետ ուներ իր չափը և, քանի որ միմյանց հետ չէին համագործակցում, տարբերությունը կարող էր հասնել մինչև 0,5կգ:

Մարզան. այդպես էին անվանում ութ գուշին, որը հավասար էր մոտ 40կգ:

Ջվալ. կազմում էր 2,5 մարզան:

Բեռ. երկու ջվալ հացահատիկը մեկ բեռ էր: Այսպիսով, մեկ բեռը մոտ հինգ մարզան էր կամ 200կգ:

Խալվար.[58] հավասար էր հինգ բեռի: Մոտավոր հաշվարկով խալվարը հավասարվում է մոտ մեկ տոննայի:

Դինգանա. փայտե չափ, պատրաստում էին հյուսները, տալով մոտ 1կգ տարողությամբ, բռնակով գավաթի ձև: Հիմնականում օգտագործում էին ջրաղացներում աղացվող հատիկի «շիադը» (վարծ) վերցնելիս: Մեկ մարզան հատիկ աղալու համար վերցնում էին մեկ դինգանա հատիկ:

Միամիտ հայ գյուղացիները կարծում էին, որ հնարավոր չէ չափուկշռի մեջ խաբել, հավատալով, որ աստված վերևից նայում է և նման հանցանք կատարողներին անպայման կուղարկի դժոխք, որտեղ նրանք կտանջվեն եռացող ձյութի մեջ:

Վաշխառուն իր սև գործը կատարելուց հետո եկեղեցի էր գնում, աղոթում սրբապատկերի առջև, աստծուց ներողություն խնդրում իր ապրուստը ստեղծելիս կատարած նենգությունների համար, չէ՞ որ ապրանքը գնելու ու վաճառելու համար նա պահում էր առանձին չափեր:

---

[58] Խալվար (իշաբեռ)-ծանրության չափ, Երևանում հավասար էր 30 փթի, մոտ 491կգ (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.2, էջ 229), (***խմբ.***):

ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ղարադաղը եղել է Պատնական Հայաստանի ամենալեռնոտ գավառներից մեկը: Որպեսզի գյուղերը բնության անխուսափելի աղետներից՝ ժայռերի գահավիժումներից, գետակների վարարումներից, հեղեղներից, ծնասաիքերից (շափա) և գարնան քամիներից զերծ մնային, դրանք կառուցվում էին արևահայաց լեռնալանջերին: Դրա շնորհիվ է, որ դարերի ընթացքում չի արձանագրվել նման աղետների ենթարկված ոչ մի հայկական գյուղ, մինչդեռ դրանք շատ էին լինում թրքաբնակ գյուղերում:

Հարթ տարածության վրա քիչ գյուղեր կային, դրանցից էին Ղշլաղը Դիզմար գավառակում, Օղանն՝ Հասանովում և Գիրմինավուլը՝ Մեշափարայում:

Ղարադաղում միայն Վինա գյուղի տներն էին կառուցված առանձին, և տների շուրջը կային ընդարձակ հողամասեր ու թթենիներ:

Մյուս բոլոր գյուղերը գրեթե գտնվում էին լեռնալանջերին, ունեին խիտ կառուցվածք, տները իրար կպած, նեղլիկ, ծուռ ու մուռ փողոցներով:

Ոչ մի գյուղում բոստան ու բանջարանոց չկար: Դրանք գտնվում էին գյուղից դուրս:

Գյուղերի սահմանազատումները. Գավառի ամեն մի գյուղ ուներ իր տարածքի սահմանները, որոնց անվանում էին «սադ» (սահման): Դրանք բաժանվում էին աչքի ընկնող ճանապարհներով, լեռնագագաթներով, բլուրներով, գետակներով, ժայռերով, ձորակներով և բնական այլ նշաններով:

Այն տարածքներում, որտեղ աչքի ընկնող սահմանազատման նշաններ չկային, մոտ մեկ մետր խոր փոսեր էին փորում, դրանք լցնում փայտածուխով, հողով ծածկում ու քարակույտեր անում, քանի որ ածուխը չէր փտում, դարեր շարունակ կարող էր մնալ որպես սահմանի նշան:

Սահմանների հարցում հետագա սերունդների միջև վեճերի լուծման համար դրանք հաստատուն վկայություններ էին:

Գավառի ընդարձակ տարածքի համեմատությամբ բնակչությունը շատ քիչ էր, այն նոսր էր բնակեցված: Մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում խիտ բնակչություն ուներ միայն Արաքսպար հովիտը: Մեր կար-

ծիքով նախկինում Ղարադաղը խիտ բնակչություն է ունեցել, երբ բնակվել են միայն հայեր:

ՏՆԵՐԸ

Տների կառուցվածքը գրեթե համաչափ էր. մոտ 12մ երկարություն, 10մ լայնություն և երեք մետր բարձրություն: Պատերը շարում էին լեռ քարից, ընտիր հողի կամ մաքուր կավի շաղախով: Ամրության համար շաղախին խառնում էին հարդի մանրուք (մղեղ): Պատերն ունենում էին 60-80սմ հաստություն:

Տան ներսում կանգնեցնում էին ինը սյուն, երեքը՝ ներքին պատի երկարությամբ, երեքը՝ կենտրոնով, երեքը՝ վերևով: Հետաքրքիր է, որ մոտ 12մ երկարությամբ գերանները երկու ծայրում էլ գրեթե նույն հաստությունն ունեին: Կաղնի գերանների վրա, նրանց ուղղահայաց, 50-60 սմ հեռավորությամբ կլոր կոճեր էին շարում: Կոճերի վրա ուրագատաշ կարճ տախտակներ (փարդու) էին փռում: Բոլոր գերանները, սյուները, կոճերը, փարդուները լինում էին միայն կաղնուց:

Տեսարան Խանագահի գյուղից
կենտրոնում՝ արքեպիսկոպոս Ն. Մելիք-Թանգյան, 1924թ.

Տախտակապատ ծածկի վրա փռում էին փշատերև մացառներ կամ «վոս» փշոտ թփեր, որպեսզի մկներն ու օձերը բուն չդնեին այնտեղ: Տանիքին փռված փշատերև մացառները ծածկում էին ընտիր հողի կամ կավի շաղախով և հարթեցնում: Անձրևաջրերը դյուրությամբ հեռացնելու համար կտուրին փոքր թեքություն էին տալիս: Որպեսզի տան պատերը չխո-

նավանային թափվող ջրերից, կտուրի եզրերին հատուկ ծև էին տալիս ու փայտե ջրհորդաններ (ղռոթկան) դնում: Տան պատերը ազատ էին կտուրի ծանրությունից, այն ընկնում էր սյուների վրա:

Տան տափը (հատակ). այն սվաղում, հարթեցնում էին ընտիր կավահողից պատրաստած շաղախով, որ խոնավությունից զերծ մնա:

Տան հատակը հարթ էր լինում, սվաղված կավի ամուր շաղախով. սալահատակման կամ տախտակապատման սովորություն չկար:

Տան հատակին, օջախի շուրջը փռում էին հասարակ կարպետներ, որոնց վրա բացում էին անկողիններն ու քնում:

Հուրդ. ձմռան ցուրտ օրերին տունը ջերմացնողը օջախն էր, որը սովորաբար գտնվում էր տան հարավային պատի կենտրոնում և ուներ գեղեցիկ ծխնելույզ (բուխարի): Ցերեկները տները լուսավորվում էին երդիկներից, որոնք գտնվում էին կտուրի վրա: Տներն ունեին երկու երդիկ, մեկը՝ անմիջապես օջախի ուղությամբ, մյուսը՝ տան վերևի մասում, եթե տանը ջևահոր կար՝ դրա վերևում:

Անձրևային ու ցուրտ օրերին երդիկները տափակ քարերով կամ տախտակներով փակում էին. այս դեպքում տունը լուսավորվում էր օջախում վառվող կրակի բոցով (օլավ):

Բոլոր տներն ունեին կաղնու կամ ընկուզենու տախտակից պատրաստված դռներ: Տեղի արհեստավորները դռան վրա հարմարեցնում էին կրիայի ծև ունեցող փայտե փական, որին անվանում էին կորէ (կրիա): Փականն ունենում էր սանրածև, ատամնավոր փայտե բանալի:

Տան պատերը հարթ էին, կավի ցեխով սվաղված: Ամեն տարի, գարնանը կամ աշնանը սպիտակ կավ էին բերում, լցնում տաշտերի մեջ, ջրով լուծում ու ստանում մածուցիկ նյութ, որը նուրբ ավելներով շփում էին պատերին: Մածուցիկ կավը արագ չորանում, ամրանում էր պատի վրա և այն դարձնում ձյան նման սպիտակ:

Տնային իրերի տեղադրման համար տան պատերի մեջ, շատ հազվադեպ, փորվածքներ էին անում, որոնց անվանում էին «պառհան» (պատի հանվածք):

Քնդուկ (պահեստ). տան ներսում երկու քնդուկ էր դրվում, ամեն մեկը երկու բաժնից, յուրաքանչյուրը երկու մետր երկարությամբ, նույնքան բարձրությամբ և 70-80սմ լայնությամբ:

Քնդուկները պատրաստում էին հում աղյուսից ու կավով սվաղում: Քնդուկներում պահում էին ցորեն, գարի, այլ հացահատիկներ և այլուր: Դրանք դրվում էին քարե կամ կավե հենակների վրա, գետնից մոտ 30սմ

բարձր, որպեսզի մկները ներս չմտնեին: Քնդուկը ճակատի ցածր մասում ունենում էր մոտ 30սմ տրամագծով կլոր անցք:

Հացահատիկը և այլ մթերքները վերևից լցնում էին և ամուր փակում: Ներքևի անցքը խցանում էին շորով ու, կարիքի դեպքում բացելով, վերցնում պարունակությունից:

Տան դռնից մի քանի մետր դեպի ներս, մեջտեղի սյունից մինչև պատի մոտի սյունը, նույն ձևով պատրաստված էին իրար զուգահեռ զույգ քնդուկներ: Դրանք տան ներսում նմանվում էին միջնապատի, պաշտպանում էին դռնից ներս խուժող ցրտից ու տան կահկարասին անտեսանելի դարձնում ներս մտնողների համար:

Սաքու (հարթակ). տան ներսի արևմտյան պատի ողջ երկարությամբ, մոտ մեկ մետր բարձրությամբ և 80սմ լայնությամբ, տախտակներից հարթակ էին կապում ու սվաղում, որը առանձին բաժանմունքներ ուներ: Այն կոչվում էր սաքու:

Սաքուի վրա դասավորում էին լամը (անկողին), ծալքը (կարպետ և ջեջիմ), սանդուղը, ղութին և նման բաներ:

Տեղաշորը (անկողին) բաղկացած էր «բալիշից, բերցից, դոշակից և յորղանից»: Ունևոր ընտանիքներում կարպետի վրա փռում էին «քյանաբա խալի»:

Տանը հյուր լինելիս, գորգի վրա փռում էին նաև ներքնակներ:

Ներքնակի, վերմակի, բալիշի մեջ բուրդ էին լցնում: Շատ քիչ չքավոր ընտանիքներ օգտագործում էին նաև բամբակ:

Անկողինները պահելու տեղը կոչվում էր լմատեղ, իսկ սնդուկներինը, գորգերինը, կարպետներինը՝ ծլքատեղ: Սաքուի ներքևի մասը նույնպես բաժանված էր հատվածների, որտեղ պահում էին կարագի, յուղի, պանրի ու զանազան ընդեղենների կճուճներ, օշնակներ, պարկեր և այլն:

Սաքու էին կապում նաև տան վերին պատի տակ, որտեղ պահվում էին կաթսաները, պղնձե պնակները, կովկիթները և այլն:

Տան վերին անկյուններից մեկում տեղադրված էր լինում ջուլկահորը (ջուլհակի դազգահ)՝ ամբողջովին պատրաստված փայտից, տեղի վարպետների ձեռքով: Ջուլկահոր լինում էր միայն այն տներում, որոնց կանայք կարողանում էին բրդից, բամբակից ու մետասաթելից զանազան գործվածքներ անել:

Տան ամբողջ երկարությամբ, մուտքի կողմից դեպի դուրս սյունազարդ ծածկ էին կապում, որը կոչվում էր սրահ (պատշգամբ): Սրահն ունենում էր 5-8 սյուն:

Սյունասրահի մի մասը, 1-1,5մ բարձրությամբ նուրբ ծյուղերով հյուսում (չափարում) էին, կավի շաղախով սվաղում: Դա արգելակում էր քամու, փոշու և անձրևի ներթափանցումը: Սրահի արևելյան պատի մեջ օջախ էր լինում, որը տարվա ընթացքում ավելի շատ էր օգտագործվում, քան տան ներսինը, քանի որ Ղարադաղի հայերը, գարնանից, երբ եղանակները տաքանում էին, մինչև ուշ աշուն բնակվում էին սրահում: Դեռ ավելին, ամռան շոգերին համատարած ընթրում էին կտուրին, այնտեղ էլ գիշերը քնում:

Եթե գոմը տան շարունակությունն էր կազմում, սրահը ծգվում էր նաև այդ շինության առջևով:

Չարդախլու տոն (չարսու տուն). «չարդախլու տուն», բառացիորեն նշանակում է չորս անկյուն ունեցող տուն: Եթե Ղարադաղում տափակ ու հարթ կտուրով տները կառուցում էին մոտ 12մ երկարությամբ ու 10մ լայնությամբ, ապա չարդախլու տներն ունեին հավասար՝ տասական մետր չափեր ու 4մ բարձրություն: Կառույցի չորս անկյուններում տնկում էին մեկական սյուն, սյուների վրա դնում չորս գերան, ապա գերաններն իրար վրա չորս կողմից շարելով, ծագարածև բարձրացնում: Կենտրոնում 0,5մ կողմերով երդիկ էին թողնում, որտեղից լույսն էր թափանցում: Գերաններ-ի վրա կլոր կամ կոպիտ տաշած փայտեր էին դնում, ծածկում փշատերև մացառներով ու սվաղում ընտիր կավահողով: Տան թոնիրը լինում էր ուղիղ կենտրոնում, երդիկի տակ:

Չարդախլու տներն օջախ չէին ունենում, այդ իսկ պատճառով թոնիրն ամեն օր վառում էին: Ձմռան օրերին թոնրի վրա դրվում էր ավանդական քուրսին:

Ղարադաղում չարդախլու տներ կային միայն Վինա, Քարագլուխ, Սըղըն և Դասումաշեն գյուղերում: Դիզմար, Մեշափարա և Հասանով գավառակներում նման տներ չկային:

Չերքատեղ. ունենում էր երկու բաժին, որոնք ծառայում էին որպես մառան ու պահեստ: Չերքատեղ էր կոչվում այն պատճառով, որ ամենօրյա, մշտապես գործածվող իրերը, կահկարասին, գործիքները պահվում էին այնտեղ: Առաջին հատվածում, որտեղ պահվում էին պղնձե ամանները, նաև կաթնամթերք էին պատրաստում: Երկրորդ բաժինը, որը առաջինից անջատված էր լինում միջնորմով կամ չափարով, գյուղատնտեսական և դաշտային գործիքների՝ ալաթի, լծերի, թոխուրի, բահի, թիակի, քիմիլու, կամի, մասանի, խոփի, մաջի, մշակճպատի և այլնի պահեստն էր:

Պտռհան (պատի խորշ). տան մեջ լինում էին մի քանի, տարբեր չափե-

րի, ըստ պատրաստող վարպետի ճաշակի ու ցանկության: Դրանք լինում էին օջախի աջ ու ձախ կողմերում և արևմտյան պատին:

Պատրհաններում դնում էին զանազան մանր- մունր իրեր, գործիքներ և նման այլ բաներ:

Թունռնատուն (թոնրատուն). սովորություն կար թոնիրը տեղադրել ոչ թե տան կենտրոնում, ինչպես ընդունված էր Հայաստանի շատ գավառներում, այլ վերին անկյուններից մեկում: Շատ ընտանիքներ ունեին երկու թոնիր, տան մեջ և սրահում:

Թոնիրներն ունենում էին 1-1,2մ խորություն և նույն չափով բոլորածև լայնություն: Դրանք հորված էին գետնի մեջ և, լավ վառվելու համար, ստորգետնյա օդանցք ունեին, որին անվանում էին սունդուն:

Թոնիրները պատրաստում էին մասնագետ կանայք, հատուկ կավի լավ մշակած շաղախից:

Շնորհիվ Ղարադաղի մեղմ կլիմայի թոնիրն օգտագործվում էր միայն հացաթխման համար: Մյուս բոլոր դեպքերում օգտագործում էին օջախը:

Թոնիրների մեջ երբեմն երեխա, հորթ, գառ, հավ էին ընկնում: Դրա պատճառով հետագա շրջանում թոնիրները դարձել էին ընդհանուր: Ամեն տոհմ ուներ մեկ թոնրատուն, որից հերթով օգտվում էին տոհմի բոլոր ընտանիքներն ու մոտ հարևանները: Տան մեջ թոնիրների վերացումը ոչ միայն կանխեց դժբախտ պատահարները, այլև նպաստեց ծխի վերացմանն ու սանիտարական վիճակի բարելավմանը, վառելիքի զգալի տնտեսմանը: Լավաշ հացը թխում էին ամիսը մեկ անգամ:

Գյուղ (գոմ). Ղարադաղի հայերը անասնապահական շինությանն անվանում էին գյուղ, իսկ անասունների կերակրման տեղին՝ ախուռ:

Գոմերը տներից մեծ ու ընդարձակ էին լինում, այդ իսկ պատճառով հարսանեկան խնջույքներն այնտեղ էին կազմակերպում, որպեսզի ողջ համայնքը մասնակցեր: Մեծ ընտանիքները առանձին գոմեր էին ունենում խոշոր եղջերավոր անասունի և ոչխարի համար: Վերջինիս մի անկյունում էր գտնվում նաև հավանոցը:

Ընդհանրապես գոմը տանը կից էր լինում, իսկ վերջին ժամանակներս երկհարկանի տներ էին կառուցում և գոմը տեղադրում առաջին հարկում:

Հայաթ (բակ). բակը գտնվում էր անմիջապես գոմի առջևում: Ղարադաղում գարնանը, ամռանն ու աշնանը կենդանիներին գոմում չէին պահում, այլ բակում: Բակի մի հատվածը ծածկ էր ունենում, որը կենդանիներին պաշտպանում էր արևից ու անձրևից: Բակերի առջևի մասը, 1-2մ բարձրությամբ ցանկապատվում էր դալար շիվերով:

Կալ. Ղարադաղում գյուղամիջում կամ տներին կից կալ ու մարագ գոյություն չուներ: Հրդեհներից զերծ մնալու համար բոլոր կալերը գտնվում էին 200-1000 մ հեռավորության վրա:

Ողջ գավառում կալերը միատեսակ էին, ընդարձակ ու հարթ: Աշխատում էին կալերի համար ընտրել այնպիսի վայրեր, որտեղ քամիները ազատ հոսք ունենային:

Հունձը սկսվելուց մի քանի օր առաջ կալերը մաքրում էին մոլախոտերից, ջրում էին, ապա 10-12 գլուխ խոշոր եղջերավոր անասուն քշում այնտեղ, մի քանի ժամ պտտեցնում, որպեսզի հողը տրորվեր, այնքան, որ կալի հատակը լավ խմորվեր: Ընտիր կավահողին դարմանի մղմեղ էին խառնում, լավ տրորում, կալի հատակը սվաղում և թակ կոչվող փայտե գործիքով հատակին խփելով, հարթեցնում ու ամրություն տալիս:

Բերքի կալսման առաջին օրը գյուղի քահանան ու տիրացուն, ավետարանով, խաչ ու բուրվառով շրջում էին և բոլորի կալերը օրհնում: Տեղի բարբառում դա կոչվում էր «կալօրհնանք»: Հավատում էին, որ կալօրհնանք անելով աստված բերքին առատություն (բարաքյաթ) կտա, այն հեղեղներից, հրդեհներից ու այլ աղետներից հեռու կպահի:

Կալսման վերջին օրերին քահանան կարպետներ էր փռում գյուղի կենտրոնում գտնվող մի ընդարձակ տան կտուրին ու գյուղի երևելի մարդկանց հետ նստում դրանց կողքին: Գզիրը բարձր կանչելով շրջում էր գյուղում ու հայտարարում **կալպաղի** հավաքման մասին: Կալպաղի համար չափ ու քանակ չէր սահմանված, ամեն մի գյուղացի, ըստ իր խղճի ու կամեցողության՝ բերքից բերում ու լցնում էր կարպետների վրա:

Մարագ. Ղարադաղում մարագը կպած էր լինում կալին: Կար երկու տեսակ մարագ: Իրգութին, Աղաղան, Ղշլաղ և Սարդու գյուղերի մարագները կառուցում էին տան նման հողածածկ, տափակ կտուրներով: Նույն կլիմայական պայմաններում գտնվող Խանագահ, Ղուլուդի, Նորաշեն, Ողան, Վինա, Քարագլուխ և այլ գյուղերի մարագները, որոնց անվանում էին «**ծղմարագ**» (ծղոտե մարագ), բոլորովին այլ կառուցվածք ունեին:

Ծղմարագի վերին ճակատը կպած էր լինում կալին և անցք էր ունենում դարմանը անմիջապես կալից այնտեղ լցնելու համար: Ներքին ճակատի մի անկյունում դուռն էր լինում: Մարագն ունենում էր 5-6մ բարձրություն: Ներքին ճակատը մոտ երկու մետր բարձրությամբ քարե պատ էր, որի վերին մասը ցանկապատվում էր բարակ շիվերով, որպեսզի այնտեղ մշտապես օդափոխություն կատարվեր: Մարագի երկու կողմերի պատերի բարձրությունը երեք մետր էր լինում, լայնությունը հասնում էր 5-6մ: Մա-

րագի կենտրոնի երկարությամբ մոտ վեց մետր բարձր 3-4 սյուն էին տնկում: Սյուների վրա գերաններ էին գցում, ապա գերանների ու կողային պատերի միջև փայտե երկար ճաղեր ամրացնում. ստացվում էր բարձր թեքություն: Ճաղերի վրա, դրանց զուգահեռ իրարից մոտ մեկ մետր հեռավորությամբ, երկար ու բարակ փայտե ձողեր էին կապում: Ձողերի վրա՝ ներքևից վերև հաջորդաբար կապում էին ցորենի հասուն ու երկար ցողուններ, որոնք նախապես արմատներով քաղում էին և հասկերը անջատում: Դրանք ծառայում էին որպես մարագի տանիք:

Ծղոտե մարագների վրա մեխ չէր գործածվում, անհրաժեշտ բոլոր ամրացումներն ու կապերը կատարվում էին առանձին թփերի նուրբ ու ճկուն ճյուղերից, որոնք տեղի խոսվածքում կոչվում էին «հոռ»:

Ծղոտե մարագները գեղեցիկ էին: Այդ կառույցներում անասնակերը երկար ժամանակ էր պահպանվում, մաքուր էր մնում, քանի որ անձրևի կաթիլները սահում էին ցողունների վրայով ու ընկնում գետնին:

ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՄԱՆԵՂԵՆ

Օջախը՝ պատի մեջ շարած բուխարիով, լինում էր հարավային պատի կենտրոնում:

Օջախի կրակի կարգավորման և օջախի վրա ճաշ եփելու համար գործածվում էր երկու իր:

Մաշա (ուենելի). երկաթե նուրբ, օղակածև ծալվածքով երկտակ ձող էր, որը գործիքին տալիս էր զսպանակի հատկություն: Դրանով օջախից կրակ էին վերցնում և այրվող փայտերը կարգավորում:

Մաշայի երկու ճյուղերի ծայրերը, թչունի կտուցի նման, դեպի ցած կեռ էին, այրվող փայտերը բռնելու համար: Պատրաստում էին տեղի դարբինները:

Խըճարկաթ (խաչերկաթ). ուներ 30-40սմ երկարություն և 5սմ լայնություն: Այն դնում էին օջախի վրա, որպես կաթսաների պատվանդան:

Լինում էր նաև խաչերկաթի մեծ տեսակը, որը ճաշ եփելիս և ջուր տաքացնելիս դնում էին թոնրի բերանին: Այն օգտագործում էին նաև հագուստեղեն կախելու ու չորացնելու նպատակով:

Բուխարու վերևում, պատի վրա փայտե ձողիկ էին ամրացնում, խոնավ գուլպաներ և հագուստեղեն կախելու ու չորացնելու համար:

Սանդուղ (սնդուկ). լինում էին թիթեղապատ, գեղեցիկ ձևավորված, տարբեր նախշերով ու փայլուն գույներով: Մեծ դժվարությամբ բերում էին Գանձակից, Թիֆլիսից, Բաքվից ու Թավրիզից:

Ղութի. պատրաստում էին տեղի վարպետները, սովորական տախտակներից:

Սնդուկներում և ղութիներում կապոցների մեջ, առանձին կապած, պահում էին հագուստեղեն, զանազան կտորներ, զարդեր ու իրեր:

Թախտաչան. տան հյուսիսային պատի երկարությամբ, մեկ մետր լայնությամբ և կես մետր բարձրությամբ քարերից, կավի շաղախով, մի ընդարձակ հարթակ էին պատրաստում, որին անվանվում էին թախտաչան: Եթե տանը ջլկահոր էր լինում, տեղադրվում էր թախտաչանի վերջավորության մոտ, հյուսիսարևելյան անկյունում: Եթե ջլկահոր չկար, թախտաչանը շարունակվում էր մինչև պատի վերջը:

Թախտաչանը նախատեսված էր պղնձե ամանեղեն պահելու համար: Նրա վրա հերթականությամբ դասավորում էին հետևյալ ամանեղենը, որոնք Ղարադաղի հայերի գործածական խոհանոցային պարագաներն էին.

Մըծ ղզղան. 30-100լ տարողությամբ պղնձե կաթսա:

Կուճի ղզղան. 50լ:

Թինջիրա. 10լ:

Ղբլեգ. նուրբ պղնձից, բռնակներով ու խուփով, երեք լիտր:

Բիդիա. նուրբ պղնձից, դրսի կողմից զարդանախշերով, 8-10լ տարողությամբ, օգտագործում էին կով, ոչխար, այծ կթելու համար:

Թոփի. հաստ պղնձից, 3-5լ տարողությամբ, օգտագործում էին անասուններ կթելու, երբեմն ճաշ եփելու համար:

Սահնը. պղնձե աման, հատակին ունենում էր նուրբ կլոր օղակաձև գոտի, դրսից զարդանախշերով, օգտագործում էին բրդոշ պատրաստելու և մատուցելու համար:

Ջամ. պղնձե աման, զանգան տեսակի ճաշեր մատուցելու համար: Ջամերը լինում էին մեծ և փոքր, հատակը տափակ և եզրավոր գոտիով, դրսից զարդանախշերով,

Փիյալա. փոքր պնակ, 0,5լ տարողությամբ, երեխաներին կերակուր և ջուր տալու համար: Լինում էր երկու տեսակ, դրսից զարդանախշերով:

Փարչ. ջրի աման, մեծ և փոքր, 1-1,5լ տարողությամբ, գեղեցիկ ձևավորված, դրսից զարդանախշերով:

Բողշաբ. հարթ պնակ, ափսե՝ փլավի համար:

Լագյան. պղնձե կլոր ու լայն աման. օգտագործում էին գլուխ ու ոտք լվանալու և թեթև լվացքի համար:

Ջըրքը լագյան. ուներ երկու լիտր տարողություն, եզրերը գեղեցիկ ձևավորված, ներքին մասը կլոր էր, բերանը լայն: Այն օգտագործում էին ձեռքերը լվանալու համար:

Սինի (սկուտեղ). կլոր ընդարձակ աման էր, որն օգտագործում էին սփռոցի փոխարեն, ճաշի ժամանակ դնելով մի քանի մարդու առաջ:

Միջմեհի. սինու կեսի չափի սկուտեղ էր, եզրերում գեղեցիկ ելուստներով ձևավորված, զարդանախշերով: Օգտագործում էին 1-2 մարդու ուտելիք և հարսանյաց հանդեսներում նվերներ մատուցելու համար:

Կուճի սինի. փոքր սինի էր, ուներ երկու ափսեի ծավալ: Օգտագործում էին թեյ մատուցելու և «սիմավարի» (հեշտաեռ) տակ դնելու համար, որ կրակը գետին չքափվեր:

Քթավր. ծվածեղ պատրաստելու կոթավոր աման:

Միսի կոժ (պղնձե կուժ). Ղարադաղում կավի կժերից բացի, կային նաև 10 և 20լ տարողությամբ, գեղեցիկ ձևավորված, երկար ու նեղ վզով, պարան անցկացնելու ու շալակելու համար կանթով պղնձե կժեր:

Չնայած Ղարադաղն ունի պղնձի շատ հարուստ հանքավայրեր, պղնձագործություն գոյություն չուներ: Վերը նշված բոլոր իրերը և պնակները մինչև 1918 թ. բերում էին անդրկովկասյան քաղաքներից, հատկապես՝ Կապանից, իսկ 1920թ. հետո՝ Թավրիզից:

ԿԱՎԱՆՈԹՆԵՐ

Ղարադաղցիները կավե թրծած բոլոր կահ-կարասիներին անվանում էին «սախսե»:

Ամբողջ գավառում բրուտագործությամբ զբաղվում էին միայն Դիզմար գավառակի Նամնա գյուղի թուրքերը: Նրանք պատրաստում էին միայն ցածր կլոր կճուճներ, գևաթ և խեցե: Մնացած բոլոր տեսակի կավե իրերը ձեռք էին բերում Թավրիզից և այլ տեղերից:

Կարաս. օգտագործում էին գինու համար, 80-100լ տարողությամբ:

Խնեցե (խնոցի). մածունից, հարելու միջոցով կարագ ստանալու համար, 30-40լ տարողությամբ:

Կոժ (կուժ). 20-25լ տարողությամբ:

Դորագ. կես կուժ, որն օգտագործում էին դաշտ ջուր տանելու համար՝ 10-12լ տարողությամբ:

Կոլա. մեկ և երկու կանթանի, 1-2լ տարողությամբ, աղբյուրից ջուր բերելու համար:

Բաստի. անվանում էին նաև օշնակ: Կժածև կճուճ էր, որը տարբերվում էր միայն բերանի լայնությամբ, որով ձեռք էր մտնում: Օգտագործում էին հորած պանրի ու շոռի համար:

Շիր տված օշնակ. կապույտ, կանաչ, կարմիր՝ գունազարդ, դրսից և ներսից, որը թույլ չէր տալիս լցրած պարունակությանը ներծծվել: Նման օշնակները ունեին 5-20կգ տարողություն, լայն բերան և երկու կանք: Օգտագործում էին կարագ, հալած յուղ, տիալ լցնելու և երկար ժամանակ պահելու համար: Բերանները փակում էին «սերեկով» (ոչխարի, այծի ստամոքսից պատրաստված բերանակապ):

Կճոճ (կճուճ). կճուճները լինում էին տարբեր չափերի՝ 1-10լ տարողությամբ: Բոլորի կառուցվածքը միատեսակ էր, ցածր, լայն բերան և երկու բռնակ: Օգտագործում էին կաթի, մածունի և զանազան ճաշեր եփելու համար:

Գևաթ. հավանաբար անունն առաջացել է հայերեն գավաթ բառից, բայց բնավ էլ գավաթի նման չէր, լայն, ընդարձակ, 5-6լ տարողությամբ կլոր աման էր, նախատեսված չորաթան հարելու համար:

Խեցե (խեցի). ծվածև աման էր, դնում էին օջախի կրակի վրա, հաց և նազուկ թխում, հացահատիկ և ընդեղեններ բովում փոխինձների համար և այլն:

Փիթի. կավե, բաժակածև, լայն բերանով, 1-2լ տարողությամբ աման էր, որի մեջ նույն անունով ճաշ էին եփում: Չքավոր ընտանիքներն օգտագործում էին նաև յուղ ու պանիր պահելու համար:

Բղուղ. կառուցվածքով և տեսքով նման էր փիթուն, տարողությամբ կրկնակի մեծ, օգտագործում էին պանիր պահելու համար:

Քյուլիզ. կծի բերանը երբ կտրվում էր, ներքևի մասը մնում էր անվնաս, դեն չէին նետում, պահում, օգտագործում էին աղ դրած պանիր պահելու ու այլ կարիքների համար:

Բեզնիգ. կարասն ու խնոցին, որոնք ջարդվում էին և ներքևի մասը կիսով չափ մնում էր անվնաս, անվանում էին բեզնիգ: Բեզնիգը դնում էին օժանդակ սենյակի մի անկյունում, որտեղ պահում էին կաթնամթերքը և մեջը ջուր, թան, պանրաջուր, «շմադ» (սիճուկ) լցնում:

Կոծեգ. նշանակում է կավե ամանը կոծկել ու կարկատել: Կավե այն կահ-կարասիները, որոնց վրա փոքր կոտրվածք կամ ճաք էր առաջանում, ափսոսում էին դեն նետել, կոծկում էին ու նորոգում:

Կոծկումը կատարում էին հետևյալ կերպ. մի ամանի մեջ լցնում էին գարու ալյուր, ավելացնում մանրած բամբակ, հավկիթ՝ կլեպի հետ ու, հեղուկով լավ շաղախում: Պատրաստված զանգվածով սվաղում էին կավամանի կոտրված, ճաքած տեղին և երեսպատում նուրբ փափուկ քաթանի (թանձիփ) ծվենով, ճաքին համաչափ և դնում արևի տակ՝ չորացնում:

Պղծված պնակ. Ղարադաղցի հայ կանայք հոգ էին տանում հիգիենայի ու մաքրության մասին: Նրանք ամանները միշտ փակ էին պահում, որպեսզի շուն, կատու, մուկ, օձ ու զանազան միջատներ չպղծեին դրանք:

ՓԱՅՏԵ ԻՐԵՐ

Օտագործում էին փայտե հետևյալ իրերը.

Տաշտ. հաստաբուն ծառը կացնով կտրում էին, սեպերով ճղում, բաժանում երկու մասի: «Հորեգ» ուրագով տաշելով, մեկ կտոր բնափայտից պատրաստում էին մեկ տաշտ, որն օգտագործում էին միայն խմոր հունցելու համար: Տաշտերն ունենում էին 1-1,5մ երկարություն և 40-50սմ լայնություն:

Տաշտակ. տաշտակները լինում էին տարբեր չափերի և օգտագործվում տարբեր նպատակների ու կարիքների համար՝ քիչ քանակության խմոր հունցելու, գլուխ, ոտքեր, հագուստեղեն լվանալու, շներին լակ տալու և այլնի համար:

Խնեցի (խնոցի). հաստաբուն ուռենին կամ տանձենին կտրում էին մոտ 1,2մ երկարությամբ, դուրով մեջը փորում, տակառի ձև տալիս: Երկու ծայրերը տախտակով փակում էին: Կենտրոնում անցք էին բացում, մածուն կամ ջուր լցնելու և դատարկելու համար:

Կանայք պնդում էին, որ «փադե խնեցեն սախսե խնեցուն նանե կարագը շատ ա տալիս»:

Թփորա (սկուտեղ). բնափայտի մեկ կտորից տաշած, գեղեցիկ պատրաստած պնակ, ծառայում էր որպես սինի: Թփորայով հյուրերին հաց էին մատուցում, վրան խմորի գունդ էին շարում, տանում թոնրի մոտ, բրինձ, ծավարեղեն էին մաքրում և այլն:

Գյուշ. պատրաստում էին միակտոր բնափայտից, տարողությունը մոտ 5կգ էր:

Չամչիգ (չերեփ). պատրաստում էին բնափայտի մեկ կտորից:

Քթոլ (գդալ). պատրաստում էին տանձենու և սզնու փայտից: Դրանք լինում էին տարբեր չափերի, ուղիղ և կեռ պոչով:

Սանդ. պատրաստում էին տանձենու, կաղնու և այլ ամուր ծառերի միակտոր բնափայտից: Սանդի կենտրոնում փոս էին անում, զանազան ընդեղեններից փոխինձ պատրաստելու, ընկույզի միջուկ և բոնչի հատիկներ մանրելու համար: Սանդի եզրերին ազատ տարածք էր լինում՝ ծեծած մանրուքը գետնին չթափվելու համար:

Թոխմաղ. փայտե գլխիկով, փայտե կոթով գործիք էր, որը փոխարի-

նում էր մուրճին: Թոխմաղով թակում, մանրում էին սանդի պարունակությունը, հյուսն վարպետները օգտագործում էին որպես մուրճ:

Քշքամե. հավանաբար քաշել և քամել իմաստն ունի, անվանում էին նաև տյավքամե: Մեկ կտոր բնափայտից պատրաստած, բռնակով, խոր աման էր, հարթ հատակին մանր անցքեր էին արված: Դնում էին պղնձի վրա, խաշած ծավարը, բրինձը կամ կանաչեղենը շուռ տալիս մեջը, եղած ջուրը քամում:

Իլիգ. կար երկու տեսակ. մեկը պողպատից, ճախարակի համար, իսկ մյուսը՝ «ծրքըիլիգը» (ծեռքի իլիկ), փայտից: Ձեռքի իլիկով մանում էին մետաքսաթել, բամբակե նուրբ թելեր, ասեղնագործության և զանազան կարերի համար:

Բրդի սանդրք. խոշոր սանր, որով բուրդ էին գզում:

Չխարակ (ճախարակ). կանանց համար ամենաանհրաժեշտ գործիքն էր, բրդից, բամբակից, այծի մազից թելեր մանելու ու ոլորելու համար:

Զլկավըր (ջուլհակահոր). տեղադրված էր լինում տան հյուսիսարևելյան անկյունում:

Վըստեն. այդպես էին անվանում գորգ և կարպետ գործելու հաստոցին: Այն երբեք տան մեջ չէին տեղադրում, դրվում էր տան առջևի սրահում կամ օժանդակ շինությունում:

Քթուլամաև (գդալամաև). նուրբ շիվերից գործած նեղ, կլոր ու երկար փոքրիկ կողով էր: Կախում էին տան վերին մեջտեղի սյունից և մեջը դնում շերեփներն ու գդալները: Պատառաքաղ գոյություն չուներ:

Մեր թվարկած տնային բոլոր այս իրերը պատրաստում էին տեղացի հյուսները, ոչ մի բան դրսից չէր բերվում:

ՏՆԵՐԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ

Ամբողջ տարին, երեկոները տունը լուսավորողը օջախի կրակն էր: Երեկոները միայն ընթրիքի ժամին լուսավորության կարիք կար, որից հետո ծրագրում էին հաջորդ օրվա աշխատանքը, զրուցում ու քնում:

Շնորհքով մարդիկ լուսավորության համար անտառից բերում էին եղևնու չոր ճյուղեր ու փայտածուխի հորերում առաջացած կիսայրված փայտ (սուլա), որոնք բոցավառվում ու պարզ լույս էին տալիս:

Ղարադաղի հայերի մոտ սնոտի հավատ կար, որ արևամուտից հետո չէր կարելի կրակը, կշեռքն ու թթխմորը տնից դուրս հանել, տալ ուրիշին, քանի որ դրանք հանդիսանում էին տան «բարաքյաքը»:

Այս առումով սովորություն կար արևամուտից հետո դրանք ուրիշի չտալ, սակայն լինում էին դեպքեր, որ մերժել հնարավոր չէր լինում:

Նման դեպքերում, կրակ, կշեռք կամ թթխմոր վերցնող կինը արձակում էր իր գոգնոցը, ի պահ թողնում տեղում ու տանում դրանք: Հաջորդ առավոտ վերադարձնում էր, ինչ որ տարել էր ու ստանում գոգնոցը:

Ծուծուն. Ղարադաղի շատ ծորակների արևահայաց եզրերին ու անտառներում աճում է մի թփատեսակ, որին անվանում էին «սընջի», որի ճյուղերը կտրտում, հասկեր էին կապում և Թավրիզում վաճառում ներկարարներին:

Սընջու ուղիղ ու սլացիկ ճյուղերը ցակատով կտրում էին, դնում սալ քարի վրա ու կացնի ետևի մասով՝ «քյուփով» ծեծում: Այն չէր կոտրվում, ամբողջ երկարությամբ քրքրվում էր, դառնում մանրաթող, դրա համար էլ անվանել են «ծուծուն» (ծեծվածք):

Ծուծունի ծայրը վառում էին, մոմի նման սկզբից մինչև վերջ այրվում էր, անձրևից ու քամուց չէր հանգչում:

Ծուծունը օգտագործում էին մութ ժամանակ ինչ-որ տեղ գնալիս, գիշերը այգին ջրելիս, կորած անասունները որոնելիս:

Ճրեգ. ղարադաղցիներին հայտնի էին չորս տեսակ ճրագներ: Չեթի ճրագը գործածվել է հնում, երբ մարդիկ գաղափար չեն ունեցել նավթից: Դրանք պատրաստում էին ընտիր կավից, տղամարդու ափի չափ, լինում էին երեք ձևի՝ կլոր, էլիպսաձև և եռանկյունաձև:

Տան կենտրոնական սյան մեջտեղում տախտակի փոքր հարթակ էին ամրացնում, որին անվանում էին ճրգակալ կամ ճրգատեղ: Կավե ճրագը դնում էին ճրագատեղի վրա, կտավատի ձեթ լցնում: Չեթի մեջ դնում էին բամբակե «փիթելա» (պատրույգ):

Տունը լուսավորելու համար ճրագը վառում էին միայն հյուր ունենալիս, այդ ընթացքում ընտանիքի երիտասարդ անդամներից մեկը՝ տղա, աղջիկ կամ նորահարս, կանգնում էր ճրագի մոտ ու լավ լուսավորելու համար անընդհատ կարգավորում պատրույգը:

Չեթի ճրագները կենցաղից դուրս գալով փոխադրվեցին գյուղերին մոտակա սրբավայրերը և պահվում էին որպես մասունքներ:

Ժեշտի ճրեգ, նոթե ճրեգ (թիթեղյա ճրագ). 20-րդ դարի սկզբին նավթը մուտք գործեց նաև Ղարադաղ: Այն Ջուլֆայից 16-20լ տարողությամբ թիթեղյա տարաներով, ձիերին, ջորիներին և ուղտերին բարձած՝ բերում, վաճառում էին թուրք առևտրականները:

Չեթի ճրագին փոխարինեց բամբակե պատրույգով նավթի ճրագը: Այն պատրաստում էին թիթեղի նուրբ թերթիկից՝ 100-200գր տարողությամբ:

Թիթեղյա ծրագների տեղը նմանապես տան կենտրոնական սյան վրա գտնվող հարթակն էր:

Շուշա լամփ (ապակով լամպ). 1908-10թթ. Մելիք-Ազարյան Բալան առաջին անգամ Բաքվից գյուղ բերեց նման լամպ: Այն գյուղացիներին մեծ զարմանք էր պատճառել, թե ինչպես կարող է նավթը վառվել ապակու մեջ և առանց ծուխ անելու լուսավորել ամբողջ տունը: Եվ, որպես հրաշք երևույթ, երեկոյան գյուղացիները գնում էին Բալայի տուն, երկյուղածությամբ նայում «շուշա լամփին» ու մնում զարմացած:

Հետագայում նման լամպ ունեցան գրեթե բոլոր հայերը:

Փանար (լապտեր). ղարադաղցիների համար մեծ հրաշք էր նաև նավթով լուսավորող ձեռքի գերմանական լապտերը, որը 1938 թվականից բերում էին Թավրիզից:

Դրանք փոխարինեցին ծուծունին. քամուց ու անձրևից չհանգչող լապտերը դարձավ ղարադաղցիների անբաժանելի ուղեկիցը, մութ ժամանակ այգի գնալու և կորած անասուններ փնտրելու համար:

Կրակ պահելը. Ղարադաղի ամեն հայ ընտանիք աշխատում էր, որ օջախի կրակը միշտ վառ մնա: **Բոլոր** ընտանիքների ցախանոցներում ամուր փայտի հաստ ու դիմացկուն կտորներ էին պահում:

Երեկոյան քնելու ժամանակ փայտի մի կտոր թաղում էին կրակի մորմոտի մեջ, օջախի կենտրոնում: Առավոտյան վեր էին կենում, մոխիրը բացում և փայտի այրվող կտորով օջախը վառում: Եվ այսպես, օջախի կրակը մնում էր անմար:

Հաբութ, կիծաքար, չախմախ. մինչև «քիմիտիրէն» (լուցկի) գործածումը Ղարադաղի հայերը կրակ ստանում էին «ղավխի» (հաբեթ), կայծքարի ու պողպատի մատնաչափ կտորի ՝ «չախմախի» միջոցով:

Բոլոր տղամարդիկ պարտադիր մշտապես արխալուղի գրպանում ունենում էին կայծքար, պողպատի կտոր և փոքրիկ, ծրարածև հաբեթի քսակ:

Կրակ ստանալու համար հաբեթի մի մասնիկ դնում էին կայծքարի վրա ու մետաղով հարվածելով, կայծից կրակ ստանում:

Եթե տան օջախի կրակը անզգուշորեն մարում էր, տան տղամարդն էլ տանը չէր լինում, որ կրակ ստանար, տանտիկինը վերցնում էր մի «քաքուռնը» (աթար), գնում այն հարևանի տուն, որի բուխարուց ծուխ էր բարձրանում ու կրակ բերում:

ՀԱԳՈՒՍՏ ԵՎ ՋԱՐԴԵՂԵՆ

ԿԱՆԱՑԻ ՏԱՐԱՋ

Ղարադաղի հայերի հագուստը իրենց նման պարզ էր ու համեստ, անփոփոխ, մոդայից հեռու. ինչ հագուստ, որ հագել էր պապը, հագնում էր նաև նրա տղան, թոռն ու ծոռը:

Խանագահցի Մինա Աղաջանյանը

Հայ կանանց հագուստը նույնպես պարզ էր ու նահապետական, որ փոխանցվում էր սերնդե սերունդ: Նրանք հագնում էին տեղական կտավից կարված, երկար թևքերով շապիկ: Այն հաճախ ներկում էին կանաչ ու կարմիր գույներով:

Օյմա (շրջազգեստ). վերնազգեստը երկար էր, հասնում էր գետին: Այն առանձին մասեր չուներ, բաղկացած էր մեկ կտորից, որը կրծքի մասում բացվածք ուներ: Կոճակների փոխարեն, զանազան կանթած մետաղադրամներ էին շարում: Չքավոր կանանց զգեստը նույնպես կտավից էր, ներկած նույն գույներով: Ունևոր կանայք կրում էին «ղադաքից» (փայլուն սատին) կարված շրջազգեստներ, աղջիկները՝ կարմիր, միջին տարիքի կանայք՝ կանաչ, տարեց կանայք՝ կապույտ կամ սև գույների հագուստ:

Տարեց կանանց շրջազգեստները վերին մասում աստառ ունեին՝ գոտիկից ներքև ծալերով:

Միջին տարիքի կանանց համար սահմանված էր «օխտը գեզ» կտոր: Շրջազգեստին գեղեցիկ տեսք տալու համար փեշերի ներքևից, 4-5սմ լայնությամբ «քյոբա» (առանձին ծալվածք) էին դնում ներսի կողմից:

Քյուլիջա (կանացի արխալուղ). կանայք շրջազգեստի վրա հագնում էին թևքերով կամ անթև արխալուղ, որոնց կուրծքը բաց էր լինում, երկու կողմից շարած մետաղադրամներով, զանգակածև ու բուրվառածև բոժոժիկներով, որոնք, շարժվելիս մեղմ ձայներ էին արձակում: Կանացի արխալուղները կարում էին կանաչ, կապույտ ու սև գույնի թավիշից:

Վարտիք. կանացի վարտիքները կարում էին կտավից կամ բյազից, ներկում կարմիր, կանաչ կամ դարչնագույն ներկերով: Աղջիկների, նորահարսերի ու միջին տարիքի կանանց վարտիքների փողքերը երեսապատում էին կարմիր կամ կանաչ գույնի «շիլա» կոչվող կտորով, իսկ տարեց կանանցը՝ երկու գույնի կտավով:

Նորաշենցի եղիսաբեթ Գրիգորյանը տոնական հագուստով

Լաչակ. հայ աղջիկները՝ մոտ 10 տարեկանից գլխաշոր էին կրում: Այն քառանկյուն ձև ուներ, որը եռանկյունածև ծալում էին, գլուխը ծածկում, երկու ծայրերը կոկորդի տակից անցկացնում ու տանում, ծոծրակի մոտ կապում: Աղջիկը, մինչև նշանվելը, չէր կարող գլխին որևէ զարդ, անգամ հասարակ գնդասեղ կրել: Այդ իրավունքն ունեին միայն նշանվածներն ու նորապսակները:

Տարեց կանայք ավանդաբար գլխներին դնում էին «դոստակ» (օղակ), որը թասի ձև ուներ:

Դոստակ. պատրաստում էին կեչու կամ մայրու նուրբ ու ամուր կեղևից, ապա աստառապատում կանաչ կամ կապույտ գույնի նուրբ բյազով: Դոստակի ճակատային մասում շարում էին ոսկե, արծաթե և այլ մետաղներից կանթած դրամներ՝ մի քանի շարք, իրար վրա:

1910թ., սարդուցի Մանցուց Արշակը պանդխտությունից գյուղ վերադառնալու ժամանակ ամուսնանում է Շիշկերտ գյուղից մի աղջկա հետ և հետը տանում գյուղ: Նորահարսը դոստակին կրում էր պայտածև մի զարդ՝ պատրաստած կեչու մշակած կեղևից, պատված թավշյա կանաչ կտորով, ճակատի երկայնքով շարված արծաթե միատեսակ նուրբ թերթիկներով, որոնք նման էին հաճարի հատիկների, որը շիշկետրցիք անվանում էին «խախալ»: Այն շատ դուր եկավ ղարադաղցի կանանց ու աղջիկներին ու տարածվեց Սարդու, Խանագահ, Իրգութին, Ղշլաղ, Աղաղան, Նորաշեն, Ղուլուդի, Լումա և այլ գյուղերում: Խախալի վրա շարվող արծաթե թերթիկները, որ տեղի բարբառում կոչվում էին «ղազմա», միատեսակ չէին: Արծաթագործները հնարեցին տարբեր զարդամոտիվներ, իսկ շնորհաշատ կանայք արծաթե զարդերի փոխարեն խախալի թավշյա կտորի վրա շատ մանր, գույնզգույն ուլունքներից գեղեցիկ ծաղիկներ էին ձևավորում:

Ծեր կանայք խախալի զարդերը հանում էին, թողնում միայն թավիշը:

Գոգնոց. գոգնոց կապելը պարտադիր էր Ղարադաղի հայ կանանց համար՝ դեռատի աղջիկներից սկսած մինչև զառամյալ կանայք: Աղջիկներն ու նորահարսերը կապում էին սպիտակ գույնի գոգնոց՝ ներքևի մասը ասեղնագործած գույնզգույն թելերով, իսկ տարեց կանայք՝ մուգ գույնի: Բոլոր գոգնոցները աջ կողմում պետք է գրպան ունենային:

Գուլպա. հայերը, ահել թե ջահել, կին թե տղամարդ հագնում էին երկարաճիտ գուլպաներ, որոնք հասնում էին ծնկներին: Գուլպաները գործում էին կանայք, տարվա բոլոր եղանակներին: Բամբակի թելից գուլպա հագնում էին ծայրահեղ դեպքում, չքավոր ընտանիքներում: Գուլպաները գործում էին բազմագույն թելերից ու գեղեցիկ նախշազարդում:

Քլալա գյուղի Հովսեփյան գերդաստանի երեք հարս. ձախից՝ Մալաք, Մինա և Մարիամ, 1930թ.

Արախչի. Արախչին գլխարկի տեսակ էր, որը տ կրում էին աղջիկներն ու նորահարսերը, փոքրահասակ տղաներն ու երիտասարդները, իսկ Իրգութին և Նորաշեն գյուղերում՝ նաև տղամարդիկ: Այն բյազի կտորից էր կարվում, կլոր տեսք ուներ, վրան կային զանազան գույների եռանկյունաձև կտորներ. դրանց եզրերն ասեղնագործում էին:

Տրեխ. Տղամարդկանց տրեխները

պատրաստում էին միայն վայրի խոզի, իսկ կանանցն ու երեխաներինը՝ կովի կաշվից: Խոզի թարմ կաշին մշակում էին փայտի մոխրով ու մի քանի օր պահում գարու խոշոր ալյուրից պատրաստած շփոթի մեջ: Կաշին շփոթից հանելով, ձեռքով երկար ժամանակ տրորում էին, որից այն փափկում էր, դառնում ճկուն: Այն մշակելու ժամանակ նաև աղ էին օգտագործում: Նման ձևով մշակված կաշվից գործած տրեխները ջերմությունից չէին չորանում, ոչ էլ՝ խոնավությունից ընդարձակվում: Տրեխների փոկերը կովի կաշվից էին պատրաստում:

Կոշիկ. Ղարադաղի հայերը դարեր շարունակ ոչ կոշկակար են ունեցել, ոչ կոշիկ նորոգող: Երկարաճիտ կոշիկներ (չաքմա) հագնում էին միայն մելիքները, խաներն ու բեգերը, որոնք դրանք ձեռք էին բերում Անդրկովկասի քաղաքներից: Կանայք մեծ մասամբ տրեխներ էին հագնում կամ ոտաբոբիկ էին մնում: Գյուղից գյուղ գնալիս կամ դաշտային աշխատանքների ժամանակ ոտաբոբիկ էին նաև թուրքերի կանայք: Երիտասարդները, որոնք մեկնում էին օտար քաղաքներ և դրամ վաստակում, վերադառնալիս, եթե մտադիր էին ամուսնանալ, իրենց հետ բերում էին մի զույգ չուստ՝ նորահարսի համար:

Զարդեր. Ղարադաղցի հայ տղամարդիկ զարդեր չէին կրում:

Վարդիշաղ Հովսեփյանը արծաթ դրամներից պատրաստված վզնոցով

Աղջիկներն ու կանայք ունենում էին մատանիներ, ականջօղեր, վզնոցներ, տարբեր գույների ուլունքներ՝ կենտրոնում արծաթե կանթած դրամ: Ունևորների աղջիկներն ու հարսերը կրում էին արծաթե դրամներից վզնոցներ՝ արծաթե շղթայով: Երբեմն դրանց կշիռը հասնում էր կես կիլոգրամի: Ձեռքերին կապում էին զանազան ուլունքների շարաններ .կամ արծաթե սալվիներ:

Քյամար. արծաթե գոտին լինում էր երկու տեսակ. լրիվ արծաթից կամ գունավոր (զառ)

կտորի վրա շարած տարբեր արծաթե խոշոր հատիկներով: Աղջիկները երազում էին նման գոտիներ ունենալ, որոնք անցնում էին հաջորդ սերունդներին:

Արծաթե գոտի. պատկանել է խանագահիցի Միհա Աղաջանյանին

Յախա (կրծկալ). 1-4 տարեկան երեխաների համար գեղեցիկ ու փայլուն կտորներից կարում էին կրծկալներ, որն անվանում էին յախա: Կրծկալները ասեղնագործում էին մետաքսե գույնզգույն թելերով, կենտրոնում ամրացնում մեկ «աչքի ուլունք»: Կրծկալի աջ ուսի վրա կարում էին բռնչենու մի կտոր փայտ:

Ծոցագրպան. նշանված աղջիկները, իրենց ապագա ամուսինների համար ասեղնագործում էին գրպան, կարում նշանածի բաճկոնի ձախ կողմի ներսում: Գրպանը նախշազարդելու համար, վերցնում էին բամբակե գործվածքի մի ամուր կտոր, վրան կարում տարբեր ձևերի ու գույների փայլուն կտորներ և մետաքսե գույնզգույն թելերով ասեղնագործում:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՐԱԶ

Տղամարդիկ հագնում էին սպիտակ բյազից կարած հալավ (շապիկ), փոխան (վարտիք) կամ վընաշոր (ոտնաշոր), սև, կապույտ կամ կանաչ գույնի սատինե արխալուղ: Երիտասարդները հագնում էին նաև միագույն բլուզ (վերնաշապիկ) և շալվար (անդրավարտիք), որի վերին մասում կապում էին խոնջանը: Այն բամբակից կամ մետաքսաթելից պատրաստած նուրբ պարան էր, որ գոտու դեր էր կատարում: Փոխանը, որ հաճախ ներկում էին կապույտ գույնով, նույնպես խոնջանով էր լինում.

Բրդից գործված անդրավարտիքի փողքերը մտցնում էին գուլպաների մեջ, հազվադեպ դրանք թողնում էին ազատ կախված:

Արխալուղի ու բլուզի վրա կապում էին արծաթե, պղնձե կամ այլ մետաղե ճարմանդ ունեցող կաշվե լայն գոտի:

Արխալուղի ու բլուզի ծայրամասերը անդրավարտիքի մեջ դնելը ընդունված չէր, պարտադիր ձևով դրանք ազատ կախված էին մնում:

Հագնում էին բրդե ու բամբակե միագույն գուլպաներ և գույնզգույն, զանազան նաշխերով երկարաճիտ գուլպաներ:

Գուլպաների վրա հագնում էին եզան կամ վայրի խոզի կաշվից գործած տրեխներ: Տրեխների երեսների վրա անց էին կացնում բրդի կամ բամբակի թելից հյուսած (5-7 թել), գույնզգույն, երկար պարան, որը կոչվում էր «տըրխետան»: Ծերունիների տըրխետանը ներկում էին կապույտ, իսկ երիտասարդներինը՝ կարմիր, երբեմն նաև՝ սպիտակ գույներով:

Տըրխետանների ու գուլպաների ծայրերին ամրացնում էին մետաքսե, բրդե ու բամբակե նուրբ թելիկներից բազմագույն փնջիկներ:

Բենջակ (բաճկոն). արխալուղի վրայից հագնում էին բոլոր տարիքի տղամարդիկ: Այն կարում էին կանայք, սև գույնի բրդե գործվածքից: Նույն կտորից կարում էին նաև անդրավարտիք:

Չօխա (վերարկու). հագնում էին ծերունիները և միջին տարիքի տղամարդիկ: Այն կարում էին բենջակի կտորից: Մեծահարուստները ձեռք էին բերում Գանձակից, Թիֆլիսից ու Բաքվից:

Փափախ (գլխարկ). հնուց ի վեր Ղարադաղի հայերը գլուխները ծածկում էին սև գույնի գառան մորթուց կարված ձագարաձև փափախով:

Կանայք գործածում էին բրդե սև թելից, ձեռքի ճաղերով գործած գլխարկներ, որոնք 20-25սմ երկարությամբ, տոպրակաձև գործվածքներ էին, որի վերջավորությունը երեք անգամ դեպի դուրս էին ծալում: Ցուրտ եղանակներին ծալվածքը բացում էին, ծածկում նաև ականջները:

Մոտավորապես 1900-ական թվականներին, Ղարադաղում տարածվեց քեչայից (թաղիք) գլխարկը: Դրանք գեղեցիկ ու ճաշակով ասեղնագործվում էին սպիտակ, կանաչ, կարմիր ու սև գույնի թելերով:

Թաղիքե գլխարկները մորթե փափախների նման դիմացկուն չէին, տարիների ընթացքում քայքայվում էին, ընդարձակվում, բուրդն ու թելերը կախվում. հիգիենիկ տեսակետից էլ աննպաստ էին, վարակի աղբյուր, քանի որ ավելի շատ կեղտ ու քրտինք էին ներծծում, բնական գույնը փոխում ու դառնում անճանաչելի:

Իրանում առանց գլխարկի տղամարդը համարվում էր անպատիվ ու անամոթ: Ամառ թե ձմեռ, տանը թե դրսում գլխարկ էին դնում:

Նման թաղիքե գլխարկների պատճառով տարածվող մաշկային հիվանդությունները կանխելու համար Ռզա շահ Փեհլևին 1930թ. հրաման արձակեց, որ Իրանի բոլոր ազգությունների տղամարդիկ կրեն միայն «փեհլևի» տիպի գլխարկ՝ այնպիսին, ինչպիսին կրում էր շահը:

Փեհլևի գլխարկը պատրաստում էին ամուր ստվարաթղթից՝ պատելով սև գույնի կտորով: Այն կլոր ծև ուներ՝ վերին մասը տափակ, առջևի մասում բռնակով: Սկզբում տղամարդիկ հրաժարվեցին նման գլխարկ կրել, բայց շահը հատուկ հրաման արձակեց՝ այն պարտադիր դարձնել բոլորի համար: Բանը հասավ նրան, որ հատուկ պետական պաշտոնյաներ նշանակվեցին՝ փեհլևի գլխարկը տարածելու համար:

ՍՆՆԴԻ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՑ

Լավաշ. Ղարադաղում թխում էին բազմատեսակ հացեր: Հիմնական ու ամենատարածված հացատեսակը լավաշն էր: Թխում էին թոնրի մեջ ամիսը մեկ անգամ: Տան կամ մառանի մի անկյունում, գետնից մոտ մեկ մետր բարձրությամբ, առաստաղից պարաններ էին կախում, դրանց կապում բարակ ճյուղերից հյուսած լաստ, լավաշը դարսում վրան ու կտորով ծածկում:

Բոմբի. կլոր լիսեռածև հաց էր՝ կենտրոնում անցքով: Թխում էին այն դեպքում, երբ վառելիքի կամ ալյուրի պակաս էր լինում կամ ծանրաբեռնված էին լինում որևէ աշխատանքով: Շատ հարմար էր դաշտային աշխատանք կատարողների համար, անց էին կացնում թևին, միաժամանակ ուտում և աշխատում:

Բոմբի՝ ջրի իրես. այս հացը ձեռքի ծև ուներ. թխելու ժամանակ երեսին ջուր էին քսում, այստեղից էլ գալիս է անվանումը: Թխում էին հազվադեպ՝ գարնանացան գարու ալյուրից: Այդ հացը հիմնականում օգտագործում էին թուրքերն ու չքավոր հայերը:

Բաղարջ. թխում էին դեպքից դեպք, երբ միջոց չկար լավաշ թխելու: Բաղարջի գնդերը սովորականից մոտ երկու անգամ մեծ էին լինում: Բաղարջի երեսը փայտե գդալով նախշում էին և վրան ձու քսում:

Ջաղացի բաղարջ. թխում էին տղամարդիկ, ջրաղացում: Ջրաղացպանը փայտե տաշտի մեջ ալյուր էր լցնում, առանց թթխմորի, սառը ջրով հունցում, խոշոր ու հաստ բաղարջներ պատրաստում: Ջրաղացի օջախի քարերը սովորականներից բավականին մեծ էին լինում: Օջախում ուժեղ կրակ էին անում, քարերը տաքացնում ու «թըրեկ» (թերհաս) բաղարջները կպցնում դրանց: Այդ հացի մեջ աղը պակաս էր լինում, դժվարամարս էր, բայց հաճելի համ ուներ:

Կորեկի հաց. սովի տարիներին կորեկը մանր աղում էին ու սաջի վրա թխում մանր, բլիթանման հացեր:

Գաթա. թխում էին թոնրի մեջ, հազվադեպ՝ տոն օրերին: Գաթայի խմորը պատրաստում էին ցորենի ալյուրից՝ հալած յուղով: Գաթայի խորիզը

(հես) շաղախում էին ալյուրից, յուղից ու մեղրից՝ կրակի վրա բովելով: Գաթայի եզրերին գեղեցիկ ծև էին տալիս, երեսը գդալի պոչով նախշում և ծվի դեղնուց քսում:

Կրկենի. ամեն հայ ընտանիք՝ հարուստ թե աղքատ, պարտավոր էր հունվարի հինգի երեկոյան կրկենի թխել: Պատրաստում էին մեկ հատ, բայց բավականին խոշոր՝ տալով էլիպսի ձև: Կրկենու խմորը շաղախում էին առանց թթխմորի, ցորենի ալյուրից, բայց շատ պինդ՝ նրա մեջ դնելով մեկ մետաղադրամ: Նախապես օջախում վառած կրակը թողնում էին իջներ, դառնար մորմոտ, ապա այն լայն բացում էին օջախի առջևի հարթակում: Կրկենին դնում էին մեջը և հավասարաչափ ծածկում մոխրով ու հետևում հավասար եփվելուն: Թխվելուց հետո դանակով կտրտում, բաժանում էին հավասար մասերի: Եթե կտրելիս դրամը դեմ առներ դանակին, հավատում էին, որ այդ տարի ընտանիքի ունեցվածքին լուրջ վտանգ է սպառնալու: Նման դեպքում հարկավոր էր որևէ սրբի անունով մատաղ խոստանալ: Եթե ընկնում էր ընտանիքի անդամներից որևէ մեկին, նշանակում էր, որ ընտանիքի հաջողությունն ու բարեկեցությունը կապված է նրա հետ:

Քանի որ կրկենին համեղ ուտելիք էր, շատ ընտանիքներ ծմռան ամիսներին հաճախ էին պատրաստում՝ յուղի կամ ձեթի միջուկով:

Ջադի. այդպես էին անվանում կորեկի ալյուրից թխած հացը: Օգտագործում էին սովի տարիներին՝ չքավոր ընտանիքները:

Խամբար. Արաքսպար հովտի չքավոր բնակչության հացի հիմնական պաշարը եգիպտացորենն էր, որը նրանց խոսվածքում կոչվում էր ղարդուղալի: Սովի, երաշտի ու այլ պատճառներով հացահատիկի պակասության դեպքում չքավոր հայերը Արաքսպար հովտից գնում էին ու բոմբի հացի նման թխում:

Կօտեմ. խմորի գունդը տախտակի վրա հավասար բացում էին, կենտրոնում դնում նախապես կտրտած և համեմունքներով շաղախված կանաչեղենի միջուկը, որը կարող էր լինել մեկ կամ մի քանի տեսակ վայրի բույսերից: Կանաչ զանգվածը հավասարաչափ փռում էին խմորի բացվածքի վրա, չորս կողմի ծայրերը վրա բերում, տալով նշածև տեսք: Վարպետ կանայք կօտեմը թխում էին թոնրի մեջ: Ընդունված էր թխել նաև կավե խեցու վրա: Վերջին ժամանակներում օգտագործում էին նաև մետաղաթիթեղ, որն անվանում էին «սաջ»:

Նազուկ. բոլոր հացամթերքներից ամենանուրբն ու ամենափափուկն էր: Խմորի գունդը բարակ բացում էին, վրան դնում կտավատի ձեթով

պատրաստած միջուկ, որի ծայրերը հավաքում էին, տալով լիալուսնի ձև: Թխում էին թոնիրներում և խեցու վրա:

Մռլոցե. ըստ Ղարադաղի հայերի սովորության՝ Զատկի վերջին շաբաթվա օրերը հանգուցյալների հիշատակի օրեր էին, որի ժամանակ մատաղ էին անում ու բաժանում համագյուղացիներին:

Հարուստները մատաղ էին անում, իսկ չունևորները տափակ ու գեղեցիկ բաղարջներ էին թխում և նույնպես բաժանում: Նման բաղարջը տեղի բարբառում կոչվում էր «մռլոցե», բառացիորեն՝ մեռածների բաժին:

Միջինք. Բարեկենդանի ուրախ ու հաճելի օրերն անցնելուց հետո, սկսվում էր Մեծ պասը, որը տևում էր յոթ շաբաթ: Մեծ պասի 24-րդ օրը անցնելուց հետո նշում էին պասի կիսվելը: Այդ օրը պատրաստում էին մի հացատեսակ, որն անվանում էին «միջինք», որը պատրաստման եղանակով և նշածև տեսքով նման էր կօտեմին:

Միջուկը պատրաստում էին հատիկ լոբու եփած հատիկներից, քաղցրահամ դդմի նուրբ ու մանր կտորներից ու համեմունքներից: Միջինք թխվածքը առաջին հերթին ուղարկում էին նշանված աղջիկներին ու նորահարսերին:

ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ

Բազմազան ու յուրօրինակ էր Ղարադաղի հայերի խոհանոցը: Ստորև ընթերցողին ենք ներկայացնում բնորոշ ճաշատեսակներից մի քանիսը:

Շփոթ. յուղը կամ ձեթը լցնում էին պղնձի մեջ ու դաղում: Ցորենի ալյուրը առանձին ամանում հարում էին ջրով, որ գնդիկներ չմնային, ապա լցնում դաղած յուղի վրա ու անընդհատ խառնում, մինչև դառնար օսլայանման զանգված: Մատուցում էին տաք վիճակում: Շփոթը ամենահարմար ուտելիքն էր անատամ, ծեր մարդկանց համար: Շփոթ կարելի էր պատրաստել նաև եգիպտացորենի ալյուրից:

Սպիտակ շփոթ. պատրաստում էին հազվադեպ, հատկապես հարգարժան հյուրեր ունենալու դեպքում կամ Համբարձման տոնին:

Հաճարի ծավարը լցնում էին պղնձի մեջ, ջուր ավելացնում, մեկ օր պահում, որպեսզի այն լավ փափկեր. ձեռքերով տրորում էին, մառլայով քամում ու եփում, մինչև որ ստացվեր օսլայանման զանգված: Լցնում էին պնակների մեջ, վրան ավելացնում քաղ, կարագ կամ յուղ ու մատուցում:

Սոռն. այդպես էին անվանում ցորենի բոված ու երկանքով աղացած մանրուքին: Պատրաստում էին սովորական շփոթի նման:

Խաշիլ. ցորենի բոված հատիկները երկանքով աղում էին, ալրմաղով մաղում, խոշոր աղացածը լցնում պղնձի մեջ, եռացնում, ապա ավելացնում մաները ու անընդհատ խառնում, մինչև որ զանգվածը ստանար խմորի տեսք: Լցնում էին պնակների մեջ, տալիս բուրգի ձև, գագաթին փոքր փոսիկ անում, մեջը յուղ լցնում, շուրջը՝ չորաթան:

Չափովի. չափովի կամ քաշովի, նույն ճաշատեսակն էր: Ասում էին չափովի, քանի որ ջուրն ու ծավարը լցնում էին 1:2 հարաբերությամբ (երկու բաժակ ջուր, մեկ բաժակ ծավար կամ բրինձ): Եփում էին և խառնում նախօրոք դաղված յուղի հետ:

Չալ չափովի. սովորական չափովիից տարբերվում է նրանով, որ ծավարի հետ ավելացնում էին ոսպ կամ Արաքսպար հովտում աճող լոբու մի տեսակ (մաշ), որը շատ մանր հատիկներ ունի ու շատ համեղ է:

Ղարադաղում ցորենի հատիկներից ծավարեղեն պատրաստելու կամ արիշտա կտրելու սովորություն չկար: Այնտեղ հիմնականում օգտագործում էին բրինձ և հաճարի ծավար:

Բրինձ գնում էին Արաքսպար հովտից, որտեղ այն առատ էր:

Սիսեռն օգտագործում էին ճաշատեսակներ պատրաստելու համար: Այն լցնում էին մեծ տաշտերի ու կաթսաների մեջ ու վրան ջուր լցնում: Մեկ օր մնալով ջրի մեջ՝ սիսեռը խոնավանում ու խոշորանում էր: Թրջած սիսեռը արևի տակ, կարպետների վրա փռում, չորացնում էին, երկանքով աղում ու թեփահան անում: Սիսեռի դեղին միջուկին անվանում էին «լափա», որից համեղ ճաշեր էին եփում:

Պրպետուկ. սիսեռի թփերը մոմակալված ժամանակ քաղում լցնում էին թեժ կրակի վրա: Սիսեռի պարպուճակները (պարկուճ) աղանձվում, թափվում էին կրակի մեջ: Կրակից հանում, տրորում էին սիսեռի աղանձված համեղ հատիկները և ուտում:

Սիսեռի աղանձված հատիկներն անվանում էին «պրպետուկ»:

Հելաք. ջրիկ ճաշ էր, պատրաստում էին միայն հիվանդների համար որպես քրտնաբեր, բուժիչ հատկություն ունեցող կերակուր:

Ջուրը լցնում էին պղնձի մեջ, առանց յուղի եռացնում, ավելացնում բրինձ, հոնի կամ սալորի չիր, կանաչեղեն, լավ եփում և մատուցում տաք վիճակում: Ուտելուց հետո հիվանդը քրտնում էր:

Շորվա. ամենատարածված ու ամենահեշտ եփվող ճաշատեսակն էր, որ պատրաստում էին նաև դաշտերում աշխատողներն ու գոմահանդե-

րում[59] ծմեռողները: Յուղը դաղում էին թավայի մեջ, ջուր ավելացնում, չոր կանաչի կամ այլ համեմունքներ, մեկ երկու ծու: Ուտում էին չոր հացով:

Փլավ. բրնձով փլավը ամենատարածված ու հարգի կերակուրն էր: Պատրաստում էին բոլոր տոներին և հարսանյաց հանդեսների ժամանակ:

Ջուրը եռացնում էին, բրինձը լցնում մեջը, քիչ եփում: Կիսաեփ բրինձը քամիչով քամում էին, խառնում դաղած յուղի հետ, որ «դամը» քաշվեր: Փլավն այնպես էին եփում, որ բրինձը հատիկներով մնար: Երբեմն յուղը դաղելուց հետո բրինձը դատարկում էին լավաշի վրա, որից այն ծվածեղի տեսք էր ստանում: Մատուցելիս ամեն մի պնակի վրա դնում էին այդ լավաշից մի կտոր: Փլավի հետ մատուցում էին եփած հավ կամ կաքավ: Երբեմն յուղին ավելացնում էին սոխ, համեմունքներ, չոր լիմոն, ծիրանի կամ սալորի չիր, կրակի վրա լավ խառնում ու առանձին պնակով մատուցում: Դրան անվանում էին «խրուշ»:

Սամեր. կորեկը երկանքով աղում էին ու թեփազատում: Ստացված ծավարն ու նրանից ստացված ջրիկ ճաշն անվանում էին «սամեր»: Սամերը լցնում էին պղնձի մեջ, որոշ ժամանակ ջրով եփելուց հետո ավելացնում կաթ:

Յուղծու (ծվածեղ). ծվածեղով հյուրասիրելը հարգանքի նշան էր: Ծվածեղ էին պատրաստում նորափեսայի, հարսնացուի, մեծապատիվ հյուրերի համար: Նշանդրեք, հարսնատես, ուրախ տեղեր գնալիս ծվածեղ տանելը պարտադիր էր: Ունևոր ընտանիքներում ծվածեղի վրա դնում էին նաև մեղրաբլիթ: Չքավոր ընտանիքներում շաքարը մանրում էին ու շաղ տալիս վրան:

Ղարադաղցիների խոհանոցը հարուստ չի եղել մսեղենով: Նրանք ծանոթ չեն եղել քյուֆթա, խաշ, ծեծած կամ աղացած մսով ճաշերին:

Յախնի. պատրաստում էին խոշոր եղջերավոր անասունի մսից հարսանյաց հանդեսների ժամանակ, երբ մեծ բազմություն էր հավաքվում: Միսն ամբողջովին կտրտում, լցնում էին մեծ կաթսաների մեջ ու եփում՝ ավելացնելով արևելյան համեմունքներ՝ հատկապես դեղին արմատ: Յուրաքանչյուր պնակում դնում էին մի կտոր միս և մի քանի շերեփ մսապուր: Ուտում էին լավաշով՝ առանց գդալի:

---

[59] Գոմահանդ, գոմերի մոտ ընկած ծմեռվա արոտատեղ (*Մտ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ.1, էջ 458), (*խմբ.*):

Բոզբաշ. Բոլոր տեսակ յուղոտ ու ոսկրոտ մսերը կտրտում, լցնում էին կճուճի մեջ և եփում: Աղից բացի ոչինչ չէին ավելացնում: Ուտում էին յախնու նման:

Խաշլամա. պատրաստում էին նապաստակի, վայրի խոզի և նիհար անասունի մսից: Կտրտում էին, լցնում ջրի մեջ ու խաշում՝ ավելացնելով միայն աղ:

Մսով քաշովի. մսի մանր կտորները եփում էին ջրի մեջ, ավելացնում ծավար կամ բրինձ: Եփում էին այնքան ժամանակ մինչև պղնձի մեջ ջուր չմնար:

Խորոված. խորոված մսի սիրահար էին Ղարադաղի հայերը՝ հատկապես վայրի խոզ որսալու ժամանակ: Անտառի բացատում խարույկ էին անում, չորս կողմում նստելու համար քարեր շարում: Ամեն մեկը ճկուն փայտից շիշ (շամփուր) էր պատրաստում, որսի մսի ուզած տեղից կտրում, շարում էր փայտին, խորովում ու լավաշով ուտում:

Տոլմա. սիրված ճաշատեսակ էր: Մսաղաց գոյություն չուներ: Միսը մանր կտրտում էին, ավելացնում ծավար կամ բրինձ, համեմունքներ, կանաչեղեն, փաթաթում խաղողի տերևով:

Կուրկոտ (կորկոտ). Ղարադաղի հայերը ծավարին կուրկոտ էին ասում, այդպես էր կոչվում նաև նրանից պատրաստվող ճաշատեսակը: Այն փոխարինում էր խաշին ու հարիսային: Երբ հացը թխում, վերջացնում էին, թոնրում բավականին կրակ էր մնում: Վայրի խոզի, խոշոր անասունի, ոչխարի կամ այծի ոտք ու գլխից, մսի ոսկրոտ մասերից լցնում էին պղնձի մեջ, ավելացնում հաճարի ծավար, ջուր և ուշ երեկոյան դնում թոնրի մեջ: Հանում էին առավոտյան:

Չխրթմա. հավը եփում էին, թավայի մեջ յուղով տապակում, ավելացնում ջուր և զանազան համեմունքներ:

Տհալ (ղավուրմա). ամեն աշնան յուրաքանչյուր ընտանիք իր ունեցած մանր կամ խոշոր եղջերավոր անասուններից մեկն առանձնացնում էր, գիրացնում ու մորթում տհալ պատրաստելու համար: Միսը խաշում էին, յուղի մեջ տապակում, լցնում հատուկ կարասի մեջ, վրան այնքան յուղ լցնում, որ միսը ծածկվեր: Սառեցնում էին ու պահում ամբողջ ձմեռ՝ օգտագործելով զանազան ճաշեր պատրաստելու համար: Տհալ պատրաստում էին նաև որսի մսից:

ԿԱԹ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔ

Կաթը ամենաանհրաժեշտ մթերքներից մեկն էր: Գարնանը, երբ կաթն առատ էր, բայց յուղայնությունը ցածր, կաթից ողջ տարվա համար միայն պանիր էին պատրաստում: Պանրի սիճուկը եփում, պատրաստում էին քաղցրահամ լոռ: Ամռան ու աշնան կաթից պատրաստում էին մածուն, որը փայտե կամ կավե խնոցիներով հարելով, կարագ էին ստանում:

Մեծ կճուճների մեջ կարագն աղ էին դնում, որոշ ժամանակ պահում, ապա հալում և յուղ ստանում: Խնոցու թանը եռացնելով՝ շոռ էին ստանում, քամում, զատում սիճուկից, ապա ավելացնում աղ, պանրի կտորներ, լցնում կճուճների մեջ, որոնց անվանում էին «օշնակ»: Շոռն ու պանիրը լավ սեղմում էին, օշնակի բերանին դնում ուրցի ու դաղձի թարմ ցողուններ: Մարագի մի անկյունում հոր էին փորում, այն շուռ տված դնում դրա մեջ, չոր ու մաքուր կավով ծածկում: Օգտագործում էին ծմռանը:

Շիլա (կաթնով). բրինձը ջրով եփում էին և կաթ ավելացնում: Ստացված թանձր զանգվածի վրա շաքարավազ էին շաղ տալիս:

Կաթնաբրդոշ. ամենահեշտ պատրաստվող ճաշատեսակն էր. հում կամ եռացրած կաթի մեջ հաց էին կտրտում:

Մածնակաթնաբրդոշ. սովորություն կար մածունին կաթ խառնել և հացով ուտել: Սրա օգտագործումը խստիվ արգելված էր մինչև Համբարձման տոնը: Հակառակ դեպքում, հավատում էին, որ կարկուտ կտեղա, մեծ վնաս կտա ցանքերին ու անասուններին:

Բրդոշ. մածունը տոպրակների մեջ քամում էին, պնակների մեջ լցնում, ջրով բացում, ավելացնում աղ, վարունգ, սոխ, կանաչի, չոր հաց: Ուտում էին գդալներով կամ մեկ գդալով՝ փոխանցելով իրար: Դա կոչվում էր գդալփոխի:

Օգտագործում էին մեծ մասամբ ամռան ամիսներին, հնձի ժամանակ, դաշտերում:

Բուլամա. թուքերեն բառ է, նշանակում է՝ մի խառնիր: Պատրաստում էին հովիվները, երբ կեսօրին ոչխարը բերում էին աղբյուրի մոտ՝ հանգստանալու: Ոչխարի կաթի մեջ հաց էին կտրտում ու դնում կրակին: Եփվելուց հետո վերցնում, ամանով դնում էին հոսող ջրի մեջ, սառեցնում և ուտում: Սովորություն կար հյուրասիրել մոտակա դաշտերում աշխատողներին:

Կաթնասեր. կաթի սերը օգտագործում էին թարմ վիճակում: Նրանից ուրիշ ոչինչ չէին պատրաստում, ոչ էլ պահում էին ծմռանը օգտագործելու համար:

Թանով. այդպես էին անվանում սպասին: Պատրաստում էին խնոցու թարմ թանից, ավելացնելով ծավար կամ բրինձ: Որպես կանաչեղեն օգտագործում էին դաղձ:

Չորաթան. ամռան ամիսներին խնոցու թանի մի մասն օգտագործում էին չորաթան պատրաստելու համար: Թանը մարմանդ կրակով եփում էին, սիճուկն առանձնացնում շոռից, այն տոպրակի մեջ քամում, բաժանում մանր մասերի, թզի տեսք տալիս: Չորացնում էին արևի տակ:

Վինացի Սիրվարդ Միրզոյանը չորաթան պատրաստելիս

Չմռանը գոլ ջրում, ձեռքով լավ հարում էին կավե պնակում (գևաթ), օգտագործում խաշիլի կամ ծավարով ճաշի մեջ:

Արևի տակ չորացող չորաթանի մեծ սիրահար էին կաչաղակները, որոնք գողանում էին դրանք:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆ

Ղարադաղում գազար, բազուկ, կարտոֆիլ, բամիա և նման այլ բանջարեղեններ, չնայած բարեբեր կլիմային ու հողերին, չէին աճեցնում: Դրանից կարելի է պատկերացում կազմել, թե ինչքան աղքատիկ էր ղարադաղցիների խոհանոցն այս առումով:

Մաշ (լոբի). լոբու մշակությունը շատ էր տարածված հայկական գյուղերում. կային ընտանիքներ, որոնց լոբու մարգերը զբաղեցնում էին կես հեկտար տարածք: Կանաչ և չոր լոբին վաճառում էին Թավրիզում:

Կանաչ լոբին կտրտում և չորացնում էին, ծմռանը տարբեր ճաշեր էին պատրաստում նաև չոր հատիկներից:

Բրանի (դդում). տարածված էր երկու տեսակ. «խիզուկ», որը մինչև հասունանալը ցանկացած ժամանակ կարելի էր եփել ու ուտել և Ղարաբաղի «բրանիհ», որը խակ ժամանակ չէին օգտագործում:

Կաթով եփած կտրտած դդմի ճաշը կոչվում էր կաթնով բրանի, իսկ չոր լոբու հատիկներովը՝ մաշու բրանի:

Ցրտահարված ու հազացող մարդկանց խորոված դդում էին տալիս:

Ավելուկ. ամենատարածված ուտելի բույսերից էր: Քաղում էին կանաչ վիճակում, հյուսում, չորացնում հով տեղում: Ձմռանը կտրտում էին, եփում, ավելացնում ոսպ, ընկույզի միջուկ, հոնի կամ շլորի չիր, սխտոր:

Սպիտակ բանջար. բույսն ունի երկու լայն տերև, կենտրոնից աճում է շշաձև ծողիկ, որը նման է եգիպտացորենի ծաղկեփնջերին: Քաղում էին հունիսի սկզբին: Ավելուկի նման հյուսում էին ու չորացնում: Օգտագործում էին ծավարի հետ՝ եփելով թոնրում կամ օջախի վրա:

ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ՏՈՀՄ

Համայնք. Գյուղի բոլոր տոհմերը միասին կոչվում էին «էլ»: Համայնքի անդամ էին համարվում գյուղում մշտապես բնակվող ընտանիքները, անկախ կաից և ունեցվածքից. եթե տան բուխարուց ծուխ էր ելնում, ուրեմն համայնքի իրավասու անդամ էր:

Թեյփա (տոհմ). Ղարադաղում չկար մի գյուղ, որ բաղկացած լիներ մեկ տոհմից:

Սըրնջամ. պարսկերեն՝ «սար» (գյուղ) և «անջամ» (միասին, համատեղ) բառերից է կազմված, բառացիորեն նշանակում էր գյուղի միասնություն, համատեղ խորհուրդ:

Մասլահաթ. տարին մեկ անգամ հրավիրվում էր բոլոր տոհմերի, ամեն մի ընտանիքի գլխավորի պարտադիր մասնակցությամբ մասլահաթ, որն, ըստ էության, գյուղի հասարակության խորհրդի նիստ էր:

Նիստում գյուղի ամենախելացի, բանիմաց, ազդեցիկ ու գործունյա, 40-ից ոչ պակաս տարիք ունեցող տղամարդուն ընտրում էին «քյոխվա» (տանուտեր):

Նույն նիստում մեկ տարի ժամկետով ընտրում էին նաև «աղսախկալներ» (սպիտակ մորուքավոր), ամեն տոհմից մեկ մարդ, որոնց տարիքը, նմանապես չպետք է 40-ից ցածր լիներ:

Գյուղին վերաբերող բոլոր կարևոր ու անհրաժեշտ հարցերը միասնական խորհրդով լուծում էին քյոխվան ու աղսախկալները, որոնք գյուղական խորհրդի անդամ էին:

Ժողովին մասնակցելու իրավունք չունեին չամուսնացած տղամարդիկ և կանայք:

Խորհուրդը ունենում էր կենտ թվով (5-9) անդամ, ելնելով գյուղի մեծությունից և տոհմերի թվից:

Տանուտերը և աղսախկալները ընտրվում էին մեկ տարի ժամանակով:

Ժողովում ընտրված տանուտերը վարձատրվում էր: Մոտավոր ճշտությամբ հաշվում էին, թե մեկ տարվա ընթացքում տանուտերը որքան ծախս կկատարի գործարքների, խաներին ու բեգերին հյուրասիրելու և այլնի համար, նկատի ունենալով միայն հացը, թեյը և շաքարը: Մնացած սննդամթերքը հոգում էին գյուղացիները՝ հերթականությամբ:

Աղսախկալները չէին վարձատրվում, ազատվում էին միայն հյուրասիրության սննդամթերք տալուց:

Տանուտերին ծառայություններ մատուցելու համար ժողովն ընտրում էր նաև «փեյքար» (գզիր): Նրա համար սահմանում էին դրամական վարձատրություն, որը համահավասար բաժանում էին ընտանիքների վրա, անկախ նրանց սոցիալական վիճակից:

Նման հարկերից ազատվում էին միայն այն այրի կանայք ու ծերունիները, որոնք օտարության մեջ աշխատող անձ չունեին:

Եթե տանուտերն ունենում էր առանձին «օթախ» (հյուրասենյակ), գյուղ եկած պաշտոնյաներին ընդունում էր այնտեղ, հակառակ դեպքում գուղից բացակայող մեկի տունը կարգավորում, պահում էին որպես հյուրասենյակ: Մի գոմ պատրաստ պահում էին հյուրերի ձիերի համար:

Հյուրասենյակի կահավորումը և սպասքներով ապահովումը, հերթականությամբ կատարում էին գյուղի տոհմերը, ամիսը մեկ անգամ:

Տանուտեր. Տանուտերը լինում էր համայնքի ամենահարգված, բանիմաց, փորձառու, խիզախ անդամներից մեկը: Նա հողից օգտվում էր հավասար իրավունքներով, միայն մեկ բացառությամբ. համայնքի համաձայնությամբ օգտագործում էր գյուղի մարած ծխերի կամ օտարության մեկնած ընտանիքների տունը, վարելահողերն ու խոտհարքները:

Տանուտերը աշխատում էր գյուղ եկած պաշտոնյաներին ճանապարհել օրվա ընթացքում, որպեսզի գիշերը չմնային ու ավելորդ ծախսեր, նեղություն ու գլխացավանք չպատճառեին:

Ընտանեկան վեճերը տոհմի ղեկավարի միջնորդությամբ չլուծվելու դեպքում, դիմում էին տանուտերին, որի որոշումը վերջնական էր:

Գյուղական համայնքը տարին մեկ անգամ ընդհանուր ժողով էր գումարում և ամփոփում անցած տարվա արդյունքները: Զեկուցումով հանդես էր գալիս գյուղի տանուտերը: Համայնքի անդամները գնահատում էին նրա կատարած աշխատանքը, եթե այն անբավարար էին համարում, ընտրում էին մեկ այլ մարդու:

Դրացիություն. «Հրևան» (հարևան, դրկից) հասկացողությունը շատ էր գնահատվում Ղարադաղի հայերի մոտ:

Ապրելով կողք-կողքի, պատը պատին կից, կտուրը կտուրի հետ՝ ունեին համահավասար իրավունքներ ու փոխադարձ հարգանք:

Հարևանների մեջ կար համեստություն և ունեին ամոթի զգացում. «Չէ որ տղայի, աղջկա տեր ենք, վաղը նրանց ամուսնացնելու, բախտավորելու համար բարեկամություն պետք է տեղի ունենա, հանկարծ հարևանից

տեղեկանան, որ հարևանը անհաշտ է, ընտանիքն անհամերաշխ, դա որքան ամոթալի կլինի ընտանիքի համար»:

Հարևանության վերաբերյալ ասացվածք կար՝ «Կռենքեն նման սորին բեն չկա, որ ցվիս ա՝ դուսս ունիս, պրծնիս, կնեգդ, որ լուզվանեգ ա, կարողս մի տեղավ թողս, գինս՝ պրծնս: Համա դե որ հրևանդ կռվարար ա, համա դե, ճարտ հինչ, պետք ա տոնդ քանդս, հռանաս՝ պրծնս»:

Նման հարցերը նկատի ունենալով, հարևանները իրար նկատմամբ բարի, մարդասեր, համեստ ու անվնաս էին լինում:

Հարևանի կտուր բարձրանալը, նստելը, ման գալը, տան առջևով անցնելը, թոնիրում հաց թխելը, հարևանի որոշ պարագաներից օգտվելը երբեք չէր արգելվում, ազատ իրավունք էր վերապահվում: Դեռ ավելին՝ եթե մեկը ցորեն էր աղունում, կարիքի դեպքում հարևանի կարպետը վերցնում էր նույնիսկ նրա բացակայության դեպքում:

Հաց թխելիս հարևաններին թարմ հաց էին ուղարկում: Ընտիր ճաշ եփելիս՝ կորկոտ, խաշիլ, յախնի, հրավիրում էին նաև հարևաններին:

Եթե մեկը իր այգում ընտիր միրգ էր ունենում, որից հարևանը չուներ, բաժին էր ուղարկում:

Նորահարսերն ու հասուն աղջիկները աղբյուրի ճամփին պառավ կնոջ հանդիպելիս գլուխ էին խոնարհում, ձեռքը համբուրում, ջրի կուժն առնում, լցնում էին, տալիս շալակը, երբեմն էլ տանում, հասցնում տուն, նրանից ստանում բարի մաղթանքներ. «Աստուծ պահի քու նշանածը, աստուծ պահի ախպերդ» և այլն:

Իհարկե որքան էլ ծգտեին բարի դրացիության, միևնույնն է, չարիքներ լինում էին, երբեմն վիճում, կռվում էին երեխաները, անասունները վնաս էին պատճառում արտերին, բանջարանոցներին, վեճեր էին առաջանում արտերի, խորհարքների սահմանների հարցում, հակառակություն էր առաջանում եղբայրների միջև, հոր ունեցվածքը բաժանելու ժամանակ և այլն, որոնք տեղիք էին տալիս խոսակցության:

Հայ եկեղեցու օրենքով խստիվ արգելվում էր, որ խռով մարդը մտնի եկեղեցի: Դա մարդկանց մեջ խռովության և թշնամության վերացման հիանալի ու պարտադիր միջոց էր:

Նոր տարուն, Զրօրհնեքին, Զատկին, Վարդավառին և այլ տոներին եկեղեցի գնալը պարտադիր էր բոլոր քրիստոնյաների համար:

Գյուղի քահանան, տանուտերը և տոհմի ավագը տեղյակ լինելով խռովության մասին, տոնի նախօրեին նրանց հրավիրում էին տանուտերի տուն: Իմանալով մեղավորն ով է, տանում էին մյուսի տուն և հաշտեցնում:

Այն կատարվում էր իրար ծեռք բռնելով, մեկը մյուսի անունը տալով և ողջագուրվելով:

Պատահում էր նաև, որ երկու պատանի, որոնք եղբայրներ չէին ունենում, ջերմ ու անկեղծ սիրով կապվում էին իրար, կամ երկու աղջիկ, որոնք քույր չունեին, մեկը մյուսին քույր էր անվանում կամ մեկը եղբայր չուներ, մյուսը՝ քույր:

Նման զույգերը իրենց քույր ու եղբայր դառնալը վավերացնելու համար, որևէ տոն օր եկեղեցում դանակով կտրում էին ճկույթ մատերը, արյունը արյունին խառնելով՝ համարվում էին արյունակից հարազատներ: Նրանք իրավունք չունեին ամուսնանալ իրար հետ, սրբությամբ պահպանելով հարազատ ծնողներից ծնվածների սկզբունքը:

Պատահում էր, որ եղբայրները բաժանվելիս որևէ արտ, այգի, բանջարանոց չէին կարողանում կիսել: Նման դեպքում այն միասին մշակում ու ստացած բերքն ու եկամուտը հավասար բաժանում էին:

Եթե երկու հարևանների արտերի միջև՝ «զահմանի» (սահման) վրա բերքատու ծառ էր աճում՝ տանձենի, ընկուզենի և այլն, բերքը հավասար կիսում էին:

Ավանդաբար Ղարադաղի հայկական համայնքները թույլ չեն տվել, որ իրենց գյուղերում այլ ազգություններ բնակվեն:

1936թ. սկսած, գավառի գրեթե բոլոր հայերը թոթափեցին չքավորությունը, հասել էին այն մակարդակին, որ ամոթալի էին համարում հովիվ աշխատել:

Հայերը ստիպված էին որպես հովիվ վարձակալել թուրքերի և քրդերի, որոնք գալիս էին ընտանիքներով, իրենց համայնքների թույլտվությամբ:

Հայերը հրավիրված հովիվների և նրանց ընտանիքների հետ հարևանություն էին անում ջերմ սիրով և հարգանքով:

Հաշտ ու խաղաղ էին ապրում նաև սահմանակից գյուղերի տարբեր ազգությունների բնակիչների հետ: Երբեմն հողային մասնակի վեճեր էին լինում, որոնք լուծում էին երկու համայնքների ղեկավարները, խուսափելով հարևան գյուղերի միջև թշնամանք առաջանալուց:

Ազգակցական անվանումներ. Ղարադաղի խոսվածքին բնորոշ դիմելաձևերն էին. պապին՝ պապա, տատին՝ նանա, հորը՝ հայրիկ, դադա, դադաշ, աղա, ամի, ապեր, մորը՝ մամա, ազի, ազա, հորեղբորը՝ ղորբեր, ամի, հորաքրոջը՝ հաքոր, բիբի, եղբորը՝ ապի, քրոջը՝ քուր, բաջի:

Մոր կողմի հարազատներին դիմելու ձևերն էին. մոր հորը՝ պապա, մոր մորը՝ նանա, մորեղբորը՝ քեռի և դայի, մորաքրոջը՝ մաքոր և խալա, մո-

րեղբոր որդուն՝ դայօղլի, մորեղբոր աղջկան՝ դայաղզի, մորաքրոջ տղային՝ մոքրօղլի և խալօղլի:

Ամուսնու ընտանքի անդամները հարսի նկատմամբ. կեսրար՝ պատրոն, սկեսուր՝ ըսկեսուր, ամուսնու եղբայր՝ տաքիր, ամուսնու քույր՝ տալ, բաջի, ամուսնու մեծ եղբոր կին՝ զիզա:

Հարսի ընտանքի անդամները փեսայի նկատմամբ. աներ՝ ափե, հանր, զոքանչ՝ զեմքուչ, կնոջ եղբայր՝ հընր տղա, կնոջ քույր՝ քենի, կնոջ քրոջ ամուսին՝ բաջանաղ, կնոջ ազգական աղջկա ամուսին՝ միրաղ:

Հարսի հարազատները փեսայի հորն ասում էին խնամե, մորը՝ խնմակեն:

Ծննդի ու ամուսնության կնքահորը, երաշխավորին անվանում էին բելի, քավորի կնոջը՝ բիլամար, քավորի քրոջը՝ բիլաքոր:

Գյուղի քահանային դիմում էին դեր, աղեր, կիանա, նրա կնոջը՝ աղրան կնեգ, իրիցակեն:

Տանուտերին անվանում էին քյոխվա, նրա կնոջը՝ քյոխվակեն:

Ղարադաղում հնավանդ սովորություն կար, որը պահպանվում էր մինչև մեր օրերը, որ ամուսիններն իրար անունով չդիմեին, դա մեղք էր համարվում և ամոթալի արարք:

Կանայք իրենց ամուսինների մասին խոսելիս նրանց անվանում էին «բայիրչի» կամ «չոլչի»: Բայիր և չոլ բառերը նշանակում են դաշտ և հանդ:

Օրինակ. հարևանուհին հարևանուհուն հարցնում էր.

– Ասօր ձեր բայրչին հի՞նչ տեղ ա գենցած:

– Մըր բայրչին գենցած ա ծմակը՝ փադու,- պատասխանում էր նա:

Հարևանը հարևանին, նրա կնոջ մասին, հարցնում էր.

– Չեր տնեցեն ըշտեղ ա:՞

– Մըր տնեցեն գենցած ա բղչորը ջրի:

Եթե կինը համագյուղացի էր լինում, ամուսինը նրան դիմում էր հոր անունով.

– Ըվեքե աղչիգ, հաց բեր:

– Թումասե աղչիգ, կվերը կթի, եդե ա:

– Թութոսե աղչիգ, ճրեգը վառի, բեվախտ ա:

Եթե կինը այլ տեղից էր լինում, դիմում էին այդ գյուղի անունով, օրինակ.

– Թազաշինացե, խմիլա ջուր բեր:

– Սրդվեցե, իս գինիսմ արտը հնձիլու:

– Վինեցե, խուրջոնը բեր:

Կանայք, տղամարդկանց դիմում էին «աղա» ձևով.

Օրինակ

– Ադա, եք մոտե, բենմ ըսիլիս:

Հայերը թուրք և այլազգի ծանոթ տղամարդկանց և կանանց դիմում էին «քիրվա» ձևով:

Կերակրվելն ու նստելաձևը. Ղարադաղցիները օրվա ընթացքում սնվում էին երեք անգամ. քշնահաց (նախաճաշ), կեսօրվա հաց (ճաշ) և ըրկունահաց (ընթրիք):

Հայերը, մեծ թե փոքր, կին թե տղամարդ, հարուստ թե աղքատ, նստում էին գետնի վրա՝ «ծլպատակ» (ծալապատիկ):

Միայն եկեղեցիներում աղոթք էին կատարում ծնկաչոք:

Ղարադաղի բոլոր ազգությունների աղաները, բեգերը, խաները և հոգևորականները նստում էին ծալապատիկ, իսկ գյուղացիները՝ թե վերադասի ներկայությամբ, թե իրենց տներում, նստում էին ծնկաչոք:

Ինչպես նշել ենք, Թավրիզի նման խոշոր քաղաքին փայտածուխ մատակարարող Ղարադաղի ժողովուրդը տանը նստում էր հատակին: Չուներին սեղան, աթոռ, թախտ, մահճակալ ու նման պարագաներ, որոնց պատրաստման համար և փայտանյութ կար և հյուսն վարպետներ:

Հաց ուտելու ժամանակ ընտանիքի անդամները բաժանվում էին երկու խմբի: Օջախի աջ կողմում, ըստ տարիքի՝ շրջան կազմած ու ծալապատիկ նստում էին տղամարդիկ, իսկ ձախ կողմում՝ կանայք, հարսներն ու աղջիկները: Շատ ամոթ էր, որ տղամարդիկ նրանց տեսնեին հաց ուտելիս:

Շրջանի կենտրոնում փռում էին կտավե կամ նման այլ սպիտակ կտորից կարած սփռոցը: Սփռոցի վրա նախ դնում էին փայտից պատրաստած աղամանները՝ երկու աչքից, պտտվող կափարիչներով՝ մեկ աչքում աղը, մյուսում՝ սև կամ կարմիր տաքդեղը: Աղից հետո սփռոցի վրա դնում էին լավաշ հաց ու պղնձե մեծ թասով ջուր, որից օգտվում էին բոլորը: Չքավոր և աղքատ ընտանիքներում գրեթե բոլոր ճաշատեսակները ուտում էին մեկ ամանում՝ «քութուլփոխի», գդալը փոխանցելով իրար:

Ընտանիքի ղեկավարը աղոթում էր «Հայր մերը», խաչակնքում սփռոցը, և սկսում էին լուռ օգտվել դրա բարիքներից: Եթե աղոթքը չգիտեր, խաչակնքում էր ու մի քանի մաղթանք կատարում՝ «Տեր աստված. շառից, փորձանքից մեզ հըռե պահի, մըր հալալ քրտնքավ աշխատած հացը մըզ ղսմաթ արի»:

Ծխամոլությունն. Ղարադաղում ծխելը լայն տարածում չուներ, ծխում էին միայն հատ ու կենտ ունևոր տղամարդիկ: Կին ծխող չկար. դա խիստ ամոթ էր համարվում:

Պարսավանքի, ամոթանքի և ծաղր ու ծանակի էր ենթարկվում շարքային գյուղացու ծխելը:

Խանագահ գյուղի 30 ընտանիքում կար ընդամենը վեց ծխող:

Գյուղի քահանան և տիրացու Հարութը ծխում էին «մուշտիքով» (ինքնաշեն փայտե ծողիկի վրա թղթի փաթաթումով), ուստա Ալեքսանն ու Սափարունց Մարտիոսը՝ չիբուխով: Նրանք ծխախոտի սերմեր ունեին, ցանում էին իրենց բանջարանոցներում ու բարձր բերք ստանում:

Բռնոթի (քթախոտ). քթախոտի օգտագործումը ավելի սահմանափակ էր. Խանագահ գյուղում ծխում էր միայն Նաբունց Թումասը: Քթախոտ ավելի շատ կանայք էին օգտագործում: Պատրաստում էին թութունի ծողերից:

Ղարադաղի բարբառով, շաբաթվա օրերն էին. ուրկշաբթի, իրքշաբթի չուրքշաբթի, հինգշաբթի, օրբաթ, շաբաթ և կիրակի:

Օրը բաժանվում էր չորս մասի. քշանաց (առավոտ), կես օր, ըրակու (երեկո) և քիշեր (գիշեր):

Հետևելով եկեղեցու պատվիրաններին, ըստ որի, աստված աշխարհը ստեղծել է վեց օրում ու մի օր հանգստացել, նրա ստեղծած մարդն էլ պետք է հետևեր նրան և կիրակի օրը հանգստանար:

Պատահում էր, որ հնձի ու ցանքի եռուն օրերին, որոշ մարդիկ, խախտելով ընդունված կարգը աշխատում էին: Նման դեպքերում գյուղի ղեկավարները հասարակության մեջ նրանց պարսավանքի էին ենթարկում ու ամոթանք տալիս:

Կիրակի օրը աշխատելը համարվում էր օրինազանցություն, սահմանված կարգի խախտում:

Եթե մեկը կիրակի օրը ցանք էր կատարում, տանուտերը երկու երիտասարդ էր ուղարկում օրինազանց գյուղացու մոտ: Նրանք չէին թողնում, որ նա գործն ավարտի, արձակում էին եզները ու խոփը բերում, հանձնում տանուտերին:

Երեկոյան այդ գյուղացուն տանուտերի մոտ էին կանչում, որտեղ և հավաքված էին լինում գյուղական խարհրդի անդամները և մի քանի հարգված գյուղացիներ: Նրանք այդ մարդուն պարսավանքի էին ենթարկում աստծո սահմանած օրենքը խախտելու և հասարակությանը վատ օրինակ ծառայելու համար:

Ղարադաղի հայերը աշխատանքի մասին ունեին հետևյալ ասացվածքները. «Քշանը շուդ գինի բեն, առաջդ դիբի լուսնա գյոլիս», «Ըրակունը բենե շուդ ետ դըռ, որ առաջդ մբեննա գյոլիս»:

Համաձայն դրանց, ղարադաղցիները բոլոր աշխատանքերը սկսում էին վաղ առավոտյան, արևածագից առաջ:

ԸՆՏԱՆԻՔ

Ընտանիքի ղեկավարը հայրն էր: Հոր խոսքը, որոշումն ու կարգադրությունը պարտադիր և անվիճելի էր ընտանիքի անդամների համար: Ամեն հաջորդ օրվա անելիքները որոշում էին երեկոյան, ընթրիքից հետո:

Ընտանիքում տեղի ունեցող մեծ հարցերին՝ բաժանում, ամուսնություն և այլն, պարտադիր պետք է տեղյակ լիներ տոհմի ղեկավարը և տար իր համաձայնությունը:

Ղարադաղցի հայերը, տնտեսական շահավետ գործունեություն վարելու համար, անհրաժեշտ էին համարում ունենալ բազմանդամ ընտանիք: Դա օգտակար էր և շահավետ.մեկը զբաղվում էր դաշտավարությամբ, մյուսը՝ անասնապահությամբ, մեկը տնտեսության ներքին գործերով, առ ու ծախով և այլ անհրաժեշտ գործերով: Դրա համար էլ եղբայրը եղբորից շուտ բաժանվելը երբեք ձեռնտու չէր:

Եղբայրը՝ եղբորից, տղան՝ հորից բաժանվելիս, եթե ունենում էին երկու ընտանիքի համար բնակարանի և օժանդակ շինության հարմարություն, կիսում էին այն կամ պակասը լրացնում միասնական ուժերով:

Շնորհիվ այն բանի, որ բոլոր գյուղերն էլ ունեին ազատ տարածքներ, նոր ընտանիք կազմողի տունն ու օժանդակ շինությունները, միասնական ուժերով կառուցում էին տոհմի շինություններին կից, մոտիկ տարածքում, այնպես, որ ամեն տոհմ կազմում էր առանձին թաղամաս:

Պատահում էր նաև, որ բաժանվելու ժամանակ ունեցվածքի բաժանման առիթով վեճեր էին առաջանում: Եթե տոհմի ավագի խորհրդով համաձայնության չէին գալիս, միջնորդում էր գյուղական խորհուրդը՝ տանուտերի գլխավորությամբ, որի վճիռը վերջնական էր:

Եթե ընտանիքի հայրը մահանում էր կամ անկարող էր ղեկավարել այն, նման դեպքերում այդ պարտականությունն իր վրա էր վերցնում մայրը, իսկ նրա անկարողության կամ բացակայության դեպքում՝ ավագ որդին:

Իրփիվերի (այրի). այրի կանայք շատ էին լինում: Անկախ տարիքից, եթե բախտ էր վիճակվում, նորից էին ամուսնանում, եթե ոչ, մնում էին իրենց տանը, իրենց նամուսով ապրում:

Այրի կանայք, եթե եկամտաբեր վարելահողեր էին ունենում, տալիս էին որևէ ունևոր համագյուղացու՝ կիսովի մշակելու համար: Նրանք մշակում էին այգիներն ու բանջարանոցները, ամռանը հնձած արտերում հասկ էին

հավաքում, ունևոր ընտանիքների համար հաց թխում, բուրդ գզում, կարպետ գործում և այլ աշխատանքներ կատարելով, գլուխները պահում:

Դժբախտացած ու այրիացած երիտասարդ կանայք, անկախ այն բանից, երեխաներ ունեին, թե ոչ, իրավունք չունեին առանց կեսարարի, սկեսուրի կամ տեգոր համաձայնության ամուսնանալ:

Եթե ընտանիքի ավագը համաձայնվում էր, որ հարսն ամուսնանար, երեխաների հարցը վճռում էին հետևյալ կերպ. պապը, տատը, հորեղբայրը կամ քեռին, ըստ իրենց խղճի, երեխաներին վերցնում էին իրենց խնամակալության տակ:

Եթե այրի կինը երկու երեխա էր ունենում, տղա և աղջիկ, նոր ամուսնու համաձայնությամբ, աղջկան տանում էր իր հետ, տղային թողնում հոր կողմի հարազատների խնամքին:

Տընըփըսե (տնփեսա). տնփեսայի անհրաժեշտություն հաճախ էր առաջանում, քանի որ տղամարդկանց կորուստ շատ էր լինում, անգլուխ մնացած ընտանիքի ղեկավարման համար տղամարդու կարիք էր զգացվում:

Որբացած ընտանիքի տոհմի տղամարդիկ հավաքվում, խորհրդակցում էին տնփեսա ընտրելու համար: Երբեմն, նման հարցեր քննարկում էր նաև համայնքի խորհուրդը:

Տնփեսան դառնում էր դժբախտացած ընտանիքի ունեցվածքի տերն ու ղեկավարը:

Տնփեսան լինում էր երկու տարբերակով. եթե դժբախտացած ընտանիքի մայրը երիտասարդ կին էր լինում, տնփեսան ամուսնանում էր նրա հետ, իսկ եթե դժբախտացած ընտանիքի մայրը մեծ տարիքի էր լինում, և այդ ընտանիքում լինում էր հարսնացու աղջիկ, ամուսնանում էր աղջկա հետ:

Ղարադաղում տնփեսայի մասին մի հետաքրքիր առակ է եղել: Ասում էին. «Ըղվեսեն փռնալն, սաղ սաղ մորթեն վեր արալ, հրցրալ՝ քեփտ հունցո՞ւր ա: Աղվեսն ասալ ա՝ փառք ինի աստուծեն, հալա տընփըսու նանե շատ սորինմ»:

Հոքավորթի (հոգեորդի). որդեգրություն հազվադեպ էր լինում, այն դեպքերում միայն, երբ ընտանիքը ժառանգ չէր ունենում կամ թե եղածը աղջիկ էր լինում, ամուսնանում էր ու հոր տնից մեկնում, նման դեպքում առաջանում էր որդեգրության կարիք:

Սոնգսըզ (անժառանգ, չբեր) լինելու դեպքում, որդեգրությունը կատարվում էր գյուղի քահանայի կազմած գրավոր փաստաթղթով՝ երկու հարազատների վկայությամբ, որդեգրողի և որդեգրվողի փոխհամաձայնությամբ:

Ըստ գրավոր փաստաթղթի՝ որդեգրողը իր ունեցվածքը հանձնում էր որդեգրվողին և ճանաչում որպես հարազատ զավակ:

Որդեգրվողը պարտավորվում էր որդեգրողներին ճանաչել որպես հարազատ ծնողների և խնամել մինչև խոր ծերություն ու մահ:

Կնգաանը դուս արել (ապահարզան). պատմության մեջ Ղարադաղում ապահարզան տեղի չէր ունեցել, քանի որ ամուսնությունը տեղի էր ունենում եկեղեցում, սուրբ խաչի վկայությամբ, երբ քահանան հարցնում էր.

– Որդյակս, կյանքում հիվանդանալ կա, հաշմանդամություն կա, աստված մի արասցե, տե՞ր ես:

– Այո, տեր եմ,-գլխի խոնարհումով ու սուրբ խաչը համբուրելով,- պատասխանում էին նորապսակները:

Մինչև կյանքի վերջը նրանք հավատարիմ էին մնում սուրբ երդումին:

1934թ. բացառիկ մի դեպք տեղի ունեցավ Խանագահ գյուղում: Ոմն Աշոտ, աչք ունենալով բանակում մահացած ընկերոջ կնոջ վրա, սուտ հորինումներ կատարեց հարազատ կնոջ նկատմամբ և հարց հարուցեց Ատրպատականի հայոց առաջնորդարանին՝ կնոջից ապահարզան ստանալու: Նա իր ներկայացրած մեղադրանքը հաստատել չկարողացավ, և առաջնորդարանը ամուսնալուծություն չկատարեց:

Գյուղի հասարակության տված ամոթանքի ճնշման տակ Աշոտը թողեց գյուղն ու ընդմիշտ հեռացավ անհայտ հասցեով:

Դուշմանեթուն (թշնամություն). թշնամություն երբեմն պատահում էր, որն առաջանում էր հողի համար, ամուսնական հարցերում, հազվադեպ՝ ինչ-որ գողության համար: Երկու կողմերն էլ միմյանց հայհոյում էին, անպատվում, ծեծում ու խռովում:

Հայ քրիստոնյան, որևէ մեկի հետ խռով լինելու դեպքում, իրավունք չուներ եկեղեցի մտնել, իսկ հայ շինականը, եթե ոչ բոլոր կիրակի օրերին, ապա տոներին պարտադիր պետք է եկեղեցի գնար:

Գյուղի տանուտերը, քահանան և խորհրդի անդամները նիստ էին գումարում, քննարկում երկու համագյուղացիների խռովության հանգամանքները և նրանց հաշտեցնում:

Պատմության մեջ Ղարադաղում հայը հային սպանելու դեպք տեղի չի ունեցել, հայտնի չէ:

Նահապետական ադաթ էր հնուց Ղարադաղում, որ 8-15 տարեկան տղաներն ու աղջիկները համարվում էին իրենց ծնողների «ձերքուցը» (օգնական):

Վաղ առավոտյան նրանք վեր էին կենում, տան գործում օգնում՝ կովը, ոչխարները, այծերը բռնում, որ կթեն, ավլում տունը, գոմը, բակը, աղբը

տանում աղբանոց, ջուր բերում, օգնում խնոցի հարելուն:

Նրանք նաև կերակրում էին փոքր երեխաներին, օգնում հաց թխելիս, գունդը բերում, հացը դարսում և այլն:

Երեխաները մասնակցում էին նաև երկրագործական աշխատանքներին. ջրում էին բանջարանոցները, կամ քշում, գրաստներով խուրձը տեղափոխում կալ:

Գարնանը երեխաներն էին գառները, ուլերը, հորթերը տանում արոտի և նման շատ աշխատանքներ էին կատարում:

Դաշտում, անասուններ արածացնելիս, երբ օրը անձրևային էր լիում, ամպամած, երեխաները կաքավների նման հավաքվում էին մի բարձր քարի վրա, որ աստծուն մոտ լինեն, երգեցիկ ձայնով, հավատքով լի, միաբերան արտասանում էին.

Աստուծ, Աստուծ, ջաև Աստուծ,
Թողբը երքեն կախ Աստուծ,
Կարմուր կավը կորած ա,
Կանեչ չիմանը խըրված ա:
Թողբը ետ տար պռակեն,
Հըռե մնանք կրակեն,
Ճարնք մըր կորած կավը,
Նըստնք, արնք մըր խաղը,
Օրախ, օրախ տոն գիննք,
Շելակ փատը վեր դիրնք:

Ղարադաղցի պատանիներն ու աղջիկները երբեք դատարկ ձեռքով դաշտից տուն չէին վերադառնում:

Եթե գարուն էր լինում, «մեզարները» (սփռոց), «փեշկիրները» (գոգնոց) լիքը վայրի բանջարներ էին քաղում, եթե աշուն էր լինում, վայրի պտուղներ էին հավաքում:

Բանջարեղեն ու պտուղներ չլինելու դեպքում չոր ցախ էին բերում:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔ

Գավառի տարեց մարդիկ պատմում էին. «Քյոհնա այումեն տղերքը գինիսն լալ Գյանջա, Ղըրբաղը՝ աշխատանքի, փող ըշխադն, բերն փսակվն: Դե, մըր մըծրը ըսիսն լալ, որ ղարիբեթուն գենցած իրք տղեցն նանե, մինը անջաղ լալ գյուլիս, դուս գյուլիս տոն: Մի քանենը մի բաբաթ ապրուստ ծրիլավ փսկվիս, մնալիս լալ: Մի քանենն ալ, բեբաշար, անտեր, խըղճ ինիլավ, մռնիսն լալ ղարիբթուններում: Մի խոսքավ՝ ղարիբեթուն գենցած 30 ջահիլեն նանե, 10 հոգի անջաղն լալ ետ դըռնալիս, գյուլիս տոն: Ղրդաղեն շինքկնոմը ըղջգերքը մնալիս, պռվիսն լալ: Շատ ըղջգերք նիյն լալ մտիս թուրնը, «մռլնգո» կընչիլիս. «Մռլնգյո, ինձ օզուղ տղան թող գյո»:

Դե, մընք տըսած չընք, համա դե լսածնք, որ պդահած ա, աղջիկը տըսած ա, որ իրան օզուղ չոնի, թաքուն ուզեցած ա մի ծանութ թորքու նետ փախչի»:

Նման դեպքում աղջկա ծնողները, տեղեկանալով նրա մտադրության մասին, այն խափանելու համար, համայնքի խորհրդի հետ համատեղ, դիմել են հետևյալ միջոցներին. անմիջապես հետամուտ են եղել, գտել համապատասխան մեկին ու աղջկան ամուսնացրել, շտապ տարել են մեկ ուրիշ հայաբնակ գյուղ, որտեղ ունեին ազգականներ ու բարեկամներ: Երբեմն, աղջկան՝ տղայի հագուստով, տարել են Ղարաբաղ, Բաքու, Թավրիզ և ուրիշ քաղաքներ, որտեղ հարազատներ ունեին:

Ղարադաղում ամուսնության վերաբերյալ շատ ասացվածքներ կային.

Պառավ ըղջիգյանը մարթ ա հասալ, ասալ ա՝ բիրթբիրթոտ ա:

Ինձ մարթ ա պետք, փափաղը գլխեն, բուրթը՝ ըռխեն:

Թող ինձ՝ մրթամաչ մարթս ինի, հազար թիման՝ պարտքս ինի:

Երկու հարևան երիտասարդ կանայք, մանավանդ, հարս բերված լինելով այլ վայրերից, գյուղում ազգականներ չունենալով, մտերմանում, դառնում էին սրտամոտ հարազատներ:

Հաճախ էր պատահում, որ եթե երկուսով լինում էին հղիության մեջ, որոշում էին կայացնում՝ «ահդ» (ուխտ) անում, որ տղա ու աղջիկ ծնվելու դեպքում, դառնան խնամիներ:

Եթե մի մարդ մեկ ուրիշի հետ շատ մտերիմ էր լինում, գործակից, «համքյար» (նույն արհեստի տեր), կամենում էին ավելի մտերմանալ ու

բարեկամանալ, տղատերը գնում, ընկերոջ նորածին աղջկա օրորոցի ծողափայտի վրա խաչ էր քանդակում և ասում. «Էս աղջիկ խոխան իմ տղես բախտեն, որ մծաևա, հըռե տան դըրքու նաեե, աստված մի արասցե, քոռ ինի, թուխալ ինի, իմ բախտեն, իս տարմ»: Նման նշանադրությունը կոչվում էր «բաշիքյարթմա», թուրքերեն բացատրվում է գլուխը կտրած, այսինքն՝ նշանադրված:

Նույն օրվանից դառնում էին խնամիներ և սկսում բարեկամություն անել:

Ուզանգան. հայերեն ուզող բառն է: Գրեթե բոլոր գյուղերում այրի կանայք կային, որոնք զբաղվում էին ուզանգանությամբ, միջնորդություն էին անում, խոսք տանում ու բերում:

Նման կանայք, կարելի է ասել, գյուղի վիճակագիրն էին: Մանրամասն գիտեին, թե ով ամուսնացնելու տղա ունի, ով հասունացած, օժիտով աղջիկ, ով ում է համապատասխանում և այլն:

Խնամաքար. նշանակում է խնամախոսության քար: Այն ընտանիքները, որոնք հասուն աղջիկ ունեին, տան առջև, բակի դարպասի մոտ, տափակ քար էին դնում, նստելու համար:

Այդ ընտանիքի հետ խնամիություն հաստատելու մտադրություն ունեցողը նստում էր այդ քարի վրա:

Իմանալով եկողի մտադրությունը՝ նրան ներս էին հրավիրում և նշանադրության մասին նախնական զրույց ունենում:

Բարգյահ. աղջկա տուն գնացող խնամախոսը մի մատանի, արծաթ դրամ կամ զարդ էր տանում, հանձնում աղջկա ծնողներին երեք օր ժամկետով:

Եթե փեսացուն այլ գյուղից էր լինում, երեք օրում ուսումնասիրում, մանրամասն տեղեկանում էին տղայի և նրա ծնողների մասին, որից հետո պատասխանում էին խնամախոսին:

Համաձայնության դեպքում, միջնորդի միջոցով, հայտնում էին նշանադրության ժամկետը, եթե ոչ, վերադարձնում էին դրամը կամ զարդը:

Նման նախնական նշանադրությունը անվանում էին «բարգյահ դնել»:

Ղարադաղի հայերի համար Հզետեգ (Զատիկ), Հնդերսման (Համբարձում), Վըրթվըր (Վարդավառ) տոները դարձել էին տղա նշանելու և աղջիկ ընտրելու առիթներ:

Նշանդրեք. Տղայի և աղջկա հարազատների համաձայնությունից հետո որոշում էին նշանադրման օրը:

Համաձայնված օրվա երեկոյան տղայի կողմի մի քանի տղամարդ և կին նախապատրաստվում էին, զանազան նվերներով խոնչա (սկուտեղ) պատրաստում և գնում աղջկա տուն:

Աղջկա կողմը հրավիրում էր իր հարազատներից:

Նշանվող տղան, ըստ ավանդույթի, նշանդրեքին չէր մասնակցում:

Որոշ ժամանակ անց, մեկ շաբաթից մինչև մեկ ամսվա ընթացքում, աղջկա ծնողների համաձայնությամբ, փեսացուն իրավունք էր ստանում գնալ նշանածին տեսակցելու:

Առաջին այցին փեսացուն նշանածին տեսնելու էր գնում քավորի ուղեկցությամբ:

1921թ. գաղթից վերադառնալուց հետո նահապետական ադաթին ավելացավ նշանդրեքի մի նոր ծև. «նշանադրում քահանայի ծիսակատարությամբ»:

Այս նոր ծևի նշանդրեքին ներկա էր լինում նաև փեսացուն: Քահանան օրհնում էր նշանը, որից հետո փեսացուն օրհնված մատանին դնում էր հարսնացուի մատին: Ներկաները միաբերան մաղթում էին. «Աստված շնհավր արի, պարի բախտ ինն, մի բերցե պռավն» և այլն:

Վերջում տեղի էր ունենում ճաշկերույթ, երբեմն էլ երաժշտություն, պար, երգ ու ուրախություն:

Նշանի ժամանակ քահանան օրհնում էր նաև հարսնացուի համար նվեր բերած քաղցրավենիքը, խնձորն ու նուռը կամ «քյալլա» (գլուխ) բրագծև շաքարը, որոնք բաժանում էին ներկաներին:

Այն կանայք, որոնք նշանելու աղջիկ ունեին, օրհնված մրգից ու շաքարից տուն էին տանում, որպեսզի նրանք էլ ուտեին, որ բարեբախտ լինեին և հասնեին իրենց մուրազին:

Վիճաբանական նշանդրեք. հաճախ էր պատահում, որ մի մեծանուն մարդու հետ բարեկամություն հաստատելու համար տարբեր մարդիկ կամենում էին խնամիանալ:

Աղջկա հայրը նման դեպքում հաշվի չէր առնում տղայի խելքն ու շնորքը. ընտրում էր հարուստին ու աղջկան տալիս նրան:

Իսկ եթե բոլոր ուզողներն էլ միևնույն ունեցվածքի տեր մարդիկ էին լինում, որպեսզի խռովություն ու թշնամություն չառաջանար, աղջկա հայրը հատուկ օր էր նշանակում, որ բոլորը ներկայացնեն իրենց նշանը:

Բոլորը գալիս էին, նստում, իրենց առջև թաշկինակներ փռում, մատանիները դնում վրան՝ ընտրությունը թողնելով աղջկան: Աղջկա որոշումը վերջնական էր:

Եկեղեցին արգելում էր այլազգիների հետ ամուսնությունը:

Իր ամուսնության մասին մայրս պատմել է հետևյալը. «Ես հազիվ 15 տարեկան էի, աշուն էր: Իմ ընկերների հետ դաշտում եզներն ու կովերն

էինք արածեցնում: Օրվա երկրորդ կեսին քույրս եկավ, ինձ հայտնեց, որ մեր տուն անծանոթ մարդիկ են եկել, հայրիկը շտապ կանչում է: Անասունները թողեցինք ընկերներիս մոտ, վերադարձանք տուն:

Մեր տանը մի քանի ազգականներ էին հավաքվել: Նրանց հետ երկու անծանոթ մարդիկ էին նստել, մեկը տարիքով էր, մյուսը՝ երիտասարդ: Բոլորը մի հարցի շուրջ վիճաբանում էին: Հայրս բոլորից բարձր էր խոսում, ինչ-որ բանում համառում: Երկար վիճաբանությունից հետո, երբ արդեն մութն ընկնում էր, երիտասարդը դուրս եկավ տնից:

Նա հագել էր սև գույնի երկարաճիտ կոշիկներ, սև գույնի անդրավարտիք, բլուզ՝ վրան կապած կաշվե լայն գոտի: Գլխին դրած էր գառան սև մորթուց փափախ, մոխրագույն չուխայի տակից կապել էր երեք փամփըշտակալ, երկուսը աջ ու ձախ ուսերին, մյուսը՝ գոտիկի վրայով, մեջքին, ուներ նաև հրացան:

Երիտասարդը գոմից դուրս քաշեց իր սևաթույր ձին, թռավ մեջքին ու մթության մեջ անհետացավ:

Կարճ ժամանակ անց նա վերադարձավ, ձիու վրայից ցած բերեց մի խուրջին՝ լիքը մրգերով, նուռ, թուզ, խաղող, խնձոր և այլն:

Պարզվեց, որ նա գնացել է Մարդանաղա գյուղ ու այնտեղից բերել նշանդրեքին անհրաժեշտ մրգեր ու զարդեր:

Բարեկամ կանայք փայտե և պղնձե սինիներում մրգերն ու զարդերը դասավորեցին, նռների վրա մոմեր վառեցին ու տարան ներս:

Հայրս ինձ ներս հրավիրեց: Հորեղբորս աղջկա՝ Զմրուխտի հետ, ներս գնացի: Հայրս ինձ բացատրեց, որ նշանում է անծանոթ երիտասարդի հետ: Ժամանակի ադաթի համաձայն ակամա գլուխս խոնարհեցի:

Անծանոթ երիտասարդը, հորս կարգադրությամբ, մի ոսկե մատանի հագցրեց մատիս: Ես շտապ, շառագունած, դուրս եկա տնից: Ներսից լսվեցին տղամարդկանց ուրախ բացականչություններ ու բաժակների շրխկոցներ: Բարեկամ աղջիկները շնորհավորեցին իմ նշանդրեքը: Այսքանով ավարտվեց իմ նշանդրեքը:

Հաջորդ կիրակի, վաղ առավոտյան, մեր գյուղի դիմացի բլրի վրա զուռնա դհոլի նվագի ձայն լսվեց: Մոտ 100 ձիավորներ, բոլորը զինված հրացաններով, ձի խաղացնելով ու հրացան արձակելով, եկան մեր տուն: Դա իմ հարսանյաց հանդեսն էր»:

Հարսանիքը հարուստ ու աղքատ չէր հարցնում, կարող էր ճոխության մեջ տարբերություն լինել, բայց տևողության մեջ՝ ոչ, պարտադիր տևում էր երեք օր, երեք գիշեր, եթե նախապատրաստության օրերն էլ հաշվենք, յոթ օր ու գիշեր:

Խանագահցի Գալուստ Դանիելյանի հարսանիքը

Հարսանիքները ընդհանրապես սկսում էին ուշ աշնանը, երբ ավարտում էին դաշտային աշխատանքները, հոկտեմբերի կեսերից մինչև «կրակ վառոց, դրնդեզ, դըռնդոռենջ»՝ փետրվարի տասը:

Կրակվառոցից մինչև Զատիկ, եկեղեցական օրենքով արգելվում էր հարսանիքը, որից հետո սկսվում էին գարնան աշխատանքները, և հարսանիքներ տեղի չէին ունենում: Լինում էին հրատապ դեպքերում, հազվադեպ:

Քյարտա մասլահաթ (գյուղական խորհուրդ). Գյուղացին, երբ մտադրվում էր տղային ամուսնացնել ու հարսանիք անել, դիմում էր գյուղի տանուտերին՝ թույլտվություն ստանալու համար:

Տանուտերը հրավիրում էր գյուղական խորհրդի նիստ, որի ժամանակ քննարկում էին հետևյալ հարցերը.

ամուսնության համար չկա չհասություն, տղան և աղջիկը ամուսնության համար հասուն են.

հարսանիքի նախատեսված օրվան վերաբերող եկեղեցական պսակադրության արգելք չկա.

նույն օրը գյուղում ուրիշ հարսանիք չկա:

Գյուղական խորհրդի նիստին, որին պարտադիր ներկա էին լինում քահանան և աղջկա հայրը, այս բոլոր հարցերը ճշտելուց հետո, թույլատրվում էր տղայի հորը, նշանակված օրվա համար, նախապատրաստվել հարսանիքին:

Տան մասլահաթ (խորհրդակցություն). տղայի հայրը, մի երեկո խորհրդակցության էր հրավիրում տոհմի աչքի ընկնող մարդկանց և քավորին, որոնք քննարկում էին հարսանիքի կազմակերպման և ծախսերը հոգալու հարցերը, մոտավոր ճշտությամբ որոշում, թե որքան մարդ կմասնակցի հարսանիքին, որքան հաց թխեն, ինչ մսացու մորթեն, որքան բրինձ ու յուղ է հարկավոր և այլն: Որոշում էին նաև թե ով պետք է լինի հարսանիքի «թոյբաշին» (ղեկավար)՝ տղայի հայրը կամ տոհմի ամենաազդեցիկ մարդը:

Քավոր. քավորը լինում էր «պորտիցպորտ» (սերենդեսերունդ), նրան փոխարինելն ու նորին ընտրելը ընդունված չէր:

Խորհրդակցության ժամանակ քավորի մասին առանձին խոսք չէր լինում, բավական էր, որ տեղյակ լիներ հարսանիքի մասին, գիտեր իր աներ-լիքներն ու պարտականությունները:

Տղայի հայրը մի երեկո, տոհմի անվանի մի երկու մարդկանց հետ, գնում էր աղջկա տուն, հայտնում հարսանիքի օրվա մասին և խնդրում նրանց համաձայնությունը, քննարկում առաջարկություններն ու պահանջները:

Հարսնացուի հայրը տեղեկանում էր, թե խնամիները քանի հոգով են գնալու հարսին տանելու, ինչ «խալաթ» (նվեր) են բերելու իր ընտանիքի անդամների և մոտիկ հարազատների համար:

Տղայի հայրն էլ իրավունք ուներ խնամուց նվերներ պահանջել իր հարազատների համար:

Աղջկա հայրը կարող էր պահանջել, որ խնամին հարսանյաց ճաշկերույթի համար միս, յուղ և բրինձ ուղարկի: Հաճախ էր պատահում, որ աղջկա հայրը սննդամթերք չէր պահանջում ու հայտարարում էր. «Իմ աղջկա պատվի համար ամեն մի ծախս ես եմ կատարում, ոչ մի պահանջ չունեմ»:

Խալաթի հարցում երբեմն վեճեր էին առաջանում:

Հաճախ որոշում էին, որպեսզի իրարից չնեղանային, նվերների պահանջ չդնել, թողնում էին ըստ հայեցողության և սրտի կամեցողության:

Ծայրահեղ դեպքերում պատահում էր, որ աղջկա հայրը անչափ շատ սննդամթերք էր պահանջում խնամուց, որի դեպքում կտրուկ պատասխան էր ստանում. «Իդի ա, իս քու տանը հացու նստի չըմ, կգյոմ իմ հռհնցվեն շորըր գեց կտամ, եր օնըմ, տանմ»:

Խմիչք. Ղարադաղում, ըստ ավանդական կարգի՝ հարսանյաց հանդեսների ժամանակ օգտագործվել է միայն գինի՝ շատ չափավոր կարգով, իսկ օղի գոյություն չի ունեցել:

1921թ. գաղթից վերադառնալուց հետո հարսանյաց հանդեսներում խստիվ արգելվել է նաև գինու օգտագործումը, չնայած շատերի տներում անարատ գինի է եղել:

Հարսանյաց հանդեսի օրերին երիտասարդները, հասարակության աչքից հեռու, գաղտնի գինի էին խմում, բայց սահմանափակ չափով:

Տըշտըմաղը վեր դիրիլը. Հարսանիքի նախածեռնումը կամ նախապատրաստական աշխատանքը սկսում էին երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերին:

Կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը համարում էին անբարենպաստ, անհաջող, փակ և չար:

«Տըշտըմաղը վեր էին դնում», այսինքն՝ տաշտը և մաղը նախապատրաստում էին ալյուր մաղելու օրվա երկրորդ կեսին:

Խմորը հունցում էին գիշերը, որ «քցախի» (հասունանա), թոնիրը վառում էին լուսաբացին և արևածագի հետ սկսում հացաթխումը: Հարսանիքի համար թխում էին միայն լավաշ հաց: Այդ արարողության ժամանակ հավաքվում էին տոհմի գրեթե բոլոր կանայք, մասնակցում էին նաև հարևանուհիները:

Ալյուրը պարկերից կամ ջվալներից վերցնողն ու մաղի մեջ լցնողը անպայման պետք է լիներ դեռահաս տղա, որպեսզի նորապսակների առաջին ծնունդը տղա լիներ:

Հավաքված կանայք, ալյուրը մաղելիս բարի մաղթանքներ էին ուղղում նորապսակներին. «Տեր աստուծ, թող բարեբախտ ինն, պարի սիաքեն ինի, ծուցըռնեն լիգյը ինի, մի բերցու երե հիշիվեն» և այլն:

Հացը թխելուց հետո երկուական լավաշ էին ուղարկում տոհմի ամեն մի ընտանիքին, մոտիկ հարևաններին, գյուղի միայնակ ու ծեր բոլոր կանանց ու ալևոր մարդկանց:

Արևածագից առաջ «լուսըբեցեն» մարդիկ դեռ վաղորդյան քաղցր քնի մեջ էին լինում, որ զուռնաչիները հարսանյաց տան առջևից կամ կտուրից «սհարի» (վաղորդյան) նվագով, քնից արթնացնում ու հարսանյաց հանդեսի էին հրավիրում բոլոր գյուղացիներին:

Խանագահցի Նորահարս Միհնա Աղաջանյանը

Սհարին ուներ երաժշտական «օխտը փարդա» (յոթ տարբերակ), մեկը մյուսից հմայիչ ու խրոխտ: Սհարին վերջանում էր պարային եղանակով:

Ղարադաղում հարսանյաց հանդեսի համար գրավոր կամ բանավոր հրավեր չկար: Լսելով զուռնայի սհարի կանչը, բոլորը պարտավոր էին գնալ, ներկայանալ և ուրախանալ: Համայնքի բոլոր անդամները, որպես միասնական ընտանիք, պարտադիր կարգով մասնակցում էին ուրախություններին ու տխրություններին:

Նվագողները երեք հոգի էին լինում՝ ուստան, դամբյաշը (նվագակցող) և դոմբի թակողը (թմբկահար):

Հարսանիքի ժամանակ, դրսում միշտ զուռնա էին նվագում, իսկ ներսում՝ բալաբան (նայ, դուդուկ)։ Դհոլին ձեռքով խփելու սովորություն չկար, խփում էին փայտիկներով։

Զուռնաչիներին երեկոյան ընկերակցում էին աշուղը՝ իր գովական սազով ու բալաբանչին։ Նրանք նվագում էին ու «թիռինգյա» պարելով, հեքիաթներ ասում, «Աշուղ ղարիբ», «Աշուղ Առաքել», «Բեշիշ օղլի», «Քյոռ օղլի», «Շահսանամ», «Թութի ղուշը» և այլն։

Հռհնքեն (հարսանիքի) **մսացուն**. Առավոտյան նախաճաշից հետո դրսում նորից զուռնաչիները սկսում էին նվագել, երիտասարդները պարում ու կոխ էին բռնում։

Զուռնաչիները աչալուրջ ու զգոն էին լինում, նվագով դիմավորում շրջակա գյուղերից հարսանիք եկողներին։ Նրանք էլ, որպես հարգանքի նշան, նվագողներին դրամ էին նվիրում։

Նախաճաշից հետո զուռնա դհոլի նվագի տակ գյուղի ղասաբը (մսագործ) գոմից դուրս էր բերում մսացուն, որը լինում էր գիրացրած եզ, ստերջ կով, արջառ կամ երինջ։

Հարսանիքի մսացուի եղջյուրներին ամրացնում էին երկու վառվող մոմ, վզից, ճակատից, ականջներից կախում վզնոցներ, պատրաստած չամչից, փշատից, արմավից, եգիպտացորենի աղանձած հատիկներից, ընկույզի միջուկից և այլ չոր մրգերից, մետաքսի գույնզգույն փնջերով ծաղկեփնջից։

Մսագործը՝ դանակը ձեռքին պարելով մսացուն տանում էր սպանդի տեղը։

Զուռնաչիները նվագում էին կոխի եղանակ, ջահելների սիրտը սկսում էր ավելի արագ բաբախել։ Նրանք նայում էին իրար երեսի, ո՞վ ռիսկ կանի գետին գլորել մսացու կենդանուն, իսկ եթե չհաջողվի, չէ՞ որ ամբոխը նայում է, կդառնան ծաղր ու ծանակի առարկա։

Պատանիները վրա էին գալիս, կողոպտում մսացուի համեղ ու բազմազան զարդարանքը. տիրում էր համընդհանուր ուրախություն ու ծիծաղ։

Թգի կապուց. բառացիորեն նշանակում է թագադրում։

Մսացուն մորթելու տեսարանը՝ «թամաշան» ավարտելուց հետո, երիտասարդ աղջիկներն ու նորահարսերը ձեռնամուխ էին լինում թագադրությանը։

Նրանք ձեռքի տակ չունենալով համապատասխան ներկեր հարսանյաց հանդեսի տան դռան վրա, շրջակայքում ու պատերին ցորենի ալյուրից պատրաստած շփոթով գեղեցիկ պատկերներ էին նկարում՝ ծառեր, ծաղիկներ, մանրանկարներ։

Երիտասարդները գյուղի հյուսների հետ թախտ էին պատրաստում տան այն տեղում, որտեղ պետք է նստեին թագավորն ու թագուհին, քավորը և իր շքախումբը:

Պատերին փակցնում էին գորգեր, գեղեցիկ կարպետներ, մրգերից պատրաստած շարաններ կախում:

Մակար և վաքիլ. մակար ղարադաղցիների մոտ նշանակում է զինվոր, իսկ վաքիլ՝ երաշխավոր, ղեկավար, հրամանատար:

Ըստ եկեղեցական օրենքի՝ քահանաները այսպես էին բացատրում. «Երեք օր ու գիշեր երկրի թագավորությունը հանձնվում է նորապսակներին, փեսացուն հանդիսանում է թագավորը, հարսնացուն՝ թագուհին: Քավորը, սուրբ խաչով՝ պսակադրման կենդանի վկան է, իսկ երիտասարդ մակարները թագավորի զինվորներն են: Վաքիլը նրանց հրամանատարն ու զորապետն է»:

Մսացուն մորթելուց և թագադրման նախապատրաստական աշխատանքն ավարտելուց հետո, վաքիլն իր մոտ էր կանչում մակարներին: Մակարները ներկայանում էին սիրած հրացանով զինված, թուրը կողքից կախած:

Վաքիլը մակարներին ցուցումներ էր տալիս, որ լինեն աջալուրջ, զգոն, համերաշխ, չօգտագործեն մարտական փամփուշտներ, համայնքի անդամների և հրավիրված հյուրերի առջև լինեն օրինակելի, արժանանան նրանց գովեստին ու բարձր գնահատմանը:

Օսկապ (ուսկապ). հարսանյաց հանդեսի առաջին օրը, մսացուն մորթելուց ու թագադրման նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց, վաքիլի կողմից մակարների «զորաբանակը» կարգի բերելուց հետո տեղի էր ունենում ճաշկերույթ: Ճաշկերույթի վերջում փեսացուի մայրը կամ քույրը, ավագ եղբոր կինը կամ մոտ հարազատ կանանցից մեկը, երաժշտության տակ պարելով, ձեռքին բռնած երկու կանաչ մեծ թաշկինակ, որոնք հանդիսանում են «օսկապներ», փեսացուի համար պատրաստված «թագը», նուրբ փայտիկների վրա աստղածև հյուսած մետաքսի թելերից, ծիածանի յոթ գույներից, ծայրերին բոժոժի գույնզգույն փնջիկներ և միանման կարմիր, կանաչ փայլուն կտորներից սպիտակ կտորի վրա ձևավորած երեք վարդ, հանդիսատեսների առջև տանում էր, թագը ամրացնում փեսացուի գլխարկի առջևի մասում, երկու ծաղիկներ պիջակի աջ ու ձախ կրծքի վրա և մի կանաչ օսկապ, աղեղնածև՝ կրծքի վրա:

Մեկ օսկապ էլ, նույնպես աղեղնածև, թևի տակով կապում էին քավորի ձախ ուսին և մեկ ծաղկանշան խփում պիջակի ձախ կրծքին:

Օսկապի արարողությունն ավարտելուց հետո, քավորը հարսանքավորներին հրավիրում էր իր տուն՝ խնջույքը շարունակելու այնտեղ:

Քավորի հրավերքից հետո նվագողները դուրս էին գալիս, դռանը սկսում նվագել:

Մակարները հրացանների համազարկերով ազդարարում էին քավորի տուն գնալը:

Փեսացուի տնից մինչև քավորի տուն մակարները, հրացանները բարձր պահած, պարում էին ու կրակում:

Քավորի տուն գնում էին միայն երիտասարդ տղաները, մեծահասակ տղամարդիկ, կանայք և աղջիկները չէին գնում:

Քավորի տանը հանդես էր գալիս գյուղի «դալլաքը» (վարսավիր):

Տան մի հարմար տեղում դասավորում էր գործիքները, նվիրատվության դրամի համար մի սիրուն թաշկինակ փռում կողքին և ածելին ձեռքին բռնած, հարայ հրոցով պարում: Ամենից առաջ քավորն էր փեսացուին հրավիրում «իրսը վեր անի» (սափրվել), հարդարվի և արծաթ մի դրամ էր դնում թաշկինակի վրա:

Քավորի տանը ժխոր էր տիրում: Մի կողմից վարսավիրի հարայ հրոցը. «Հայ, ծիլին կտրիս չի, փող բերեք», մի կողմում մի քանի երիտասարդ փորձում էին պարել սովորել, մի անկյունում երաժշտություն սիրողներն էին փորձեր կատարում, մեկ ուրիշ խումբ, որտեղ սիրավեպերի սիրահարներն էին, իրենց շնորհքն էին ցուցադրում, մի խոսքով, քավորի տուն չէր, այլ արևելյան տոնական շուկա:

Վարսավիրի աշխատանքը ավարտելուց հետո երաժիշտները պարի եղանակ էին նվագում:

Քավորի մայրը, քույրը կամ եղբոր կինը, պար էին ածում երկու կարմիր օսկապ ու տանում՝ մեկը կապում փեսացուի ուսին, մյուսը՝ քավորի:

Երեկոյան քավորի տանը ընթրիք էր տրվում, որի ժամանակ, բոլորի աչքից հեռու նա երիտասարդներին հյուրասիրում էր գինով: Գինին՝ պղնձե մեծ ամաններով, մի քանի տեղ դնում էին սփռոցի վրա:

Գինին խմելիս թամադա նշանակելու և բաժակները լցնելու սովորություն չկար: Խմել ցանկացողը թասը լցնում էր, մի քանի բարի մաղթանքներ անում. «Շեն կենա քավորը, աստված շնհավր անի, օրախ հրսանեք ինի, բախտավոր ինն» և այլն ու խմում ցանկացածի չափ ու թասը դնում սփռոցի վրա: Բոլորը խմում էին նույն թասով, մեկը մյուսից «խոկալ» (զզվել) կամ խուսափել չկար: Ցած դրած թասը վերցնում էր մյուսը և այսպես, հաջորդաբար, նման մաղթանքներով, փոխանցում էին իրար:

Քավորի տան ընթրիքից հետո նվագը, պարը, աշուղական ելույթը, ուրախությունը տևում էր մինչև ուշ գիշեր:

Ադաթ կար հնուց, որ հարսանիքի առաջին գիշերը պետք էր քավորն ու փեսացուն, ըստ իրենց ցանկության, գիշերեին միասին, քավորի կամ փեսայի տանը: Եթե համաձայնվում էին գնալ, գիշերել փեսայի տանը, նորից լսվում էր մակարների հրացանների համազարկերի ձայնը:

Ջուռնա դհոլի նվագով ու պարելով, քավորին ու փեսային տանում էին տուն, բարի գիշեր մաղթելով, ցրվում:

Երբ հարսանքավորները գնում էին քավորի տուն, այդ ժամանակ փեսացուի հայրը, եթե խոստացած էր լինում հարսնացուի հորը «խարջ» տալ, միս, բրինձ, յուղ և այլն, հարազատներից երկու մարդու միջոցով ուղարկում էր:

Այսքանով վերջանում էր հարսանյաց հանդեսի առաջին օրը:

Մենք խոսեցինք օսկապի մասին, սակայն նկատի ունենալով, որ օսկապը երկու տեղ էին կապում, կանաչը փեսայի տանը, կարմիրը՝ քավորի, նշենք, թե, ըստ Ղարադաղի հայերի մոտ պահպանված ավանդության՝ օսկապն ինչ ծագում ունի:

Պատմում էին, որ. «Հրբ ջրհեղեղը վերջացալ ա, ջուրրը քաշվալն ծովրը, աշխարքեն տափրը (հող, գետին), սարրը բեցն դըռալ, կնեչալ, աստված Նոյեն ասալ ա.

– Նոյ, մհեգ իրավունքմ տալիս, որ քու տապանեն նանե դուս գյոս, ըշխարքեն երե գինս ապրս, ջրհեղեղը պրծած ա:

Նոյը աստուծեն ասալ ա.

– Իս վխիսմ, ալլա ջրհեղեղ կարս, հինչ որ առաջին ջրհեղեղուց փրկածմ, ազատած, կկտորս, կմնամ մանակ:

Աստուծ ասալ ա.

– Նոյ, ուրթումնը (երդում) ուտիմ, որ ալ ջրհեղեղ արիչմ:

Նոյ ասալ ա.

– Տեր աստված, քու ասած խոսկեն հի՞նչ նշանավ հվատամ:

Էտ վախտը աստուծ երգընքից ըշխարքեն երե կանեչկարմուր (ծիծաղաձան) ա կապալ, Նոյեն ասալ.

– Նոյ, էս իմ կապած կնչկարմուրը իմ կերած ուրթումնեն վկա եմ թուղիս: Աշխարքը ջրիլու, ծառ, ծաղեգ, կանեչ պիհիլու հետե, շատ թոռ կգյոմ, գյուռչաք (ամպրոպ) կարմ, վերջմը կնչկարմուրը կկապմ, որ դու վախս վեչ, գիտաս, որ իս իմ ուրթումնեն, խոսքես տարնմ: Ալ ոչ մի վախտ ջրհեղեղ արիչմ:

Նոյը հվտացալ ա աստոծեն, դուս ա եկալ իրան տապանից ըշխարքեն իրսը:

Էն օրից, դեչանն աս օր ալ, աստված տար ա կացած իրան ուրթումնեն: Հինչքան թոռ ա գյուլիս, գյուռչաթ ըրիլիս, սհաթտա նշանաց ա տալիս կնչկարմուրը, որ վախեք վեչ, ջրհեղեղ արիչմ:

Էտ օրեն նհետ, ադաթ ա դըռած, հու որ փսկվիս ա, իրան քավերեն նհետ կնչկարմուր օսկապ կապած, գինիս ա աստուծեն տոնը, եգեղեցեն՝ սուրփ փսակի: Յանի թե քու ուրթումետ կնեչկարմուր նշանավը, գյուլիսնք քու տոնը՝ եգեղեցեն, ուրթումը ուտիս, որ մընք մըր փսակդիրման օրեն նհետ, դեչանը մըր մահ գիրեզմանը, հավատարիմ կմնանք քու անմեն, հավատքետ, սուրփ օրենքետ, եգեղեցուտ:

Դու ալ պարի ինս, սուրփ ձեռքտ, պարի աղոթքտ մըզ երե պահս, միշտ պարի աչքավ եշս մըզ, չարից, շառից, փորձանքից ալ հըռե պահս:

Ահա կնչկարմուր օսկապեն նաղլը»:

Հարսանյաց հանդեսի երկրորդ օրն էլ սկսվում է վաղ առավոտյան, արևածագից առաջ՝ զուռնա դհոլի նվագի կանչով, հարսանքատուն հրավիրելով գյուղի ողջ հասարակությանը:

Տեղի էին ունենում պարեր, նախաճաշկերույթ, որից հետո մեծ սինիների մեջ բերում և մեկ առ մեկ ցույց էին տալիս, թե ինչ հագուստներ են տանում հարսնացուի համար:

Հանդիսականներին հարսնացուի հագուստը ցուցադրում էր փեսայի մայրը կամ տոհմի տարիքավոր մի կին:

Աղվես. հարսանիքի երկրորդ օրվա առավոտյան փեսայի տնից մի տղամարդ էին ուղարկում հարսի տուն: Ուղարկած մարդուն անվանում էին «աղվես», որը լուր էր տալիս խնամիներին, թե երբ պետք է գան հարսանքավորները, որ պատրաստ լինեն դիմավորելու:

Եթե հարսը ուրիշ գյուղից էր, աղվեսին ուղարկում էին հարսանիքի նախորդ օրվա երեկոյան:

Լուր տանող մարդուն հարսնացուի մայրը պարտավոր էր, պարտադիր կարգով, մեկ աքլոր նվիրել:

Հավանաբար լուր տանողին աղվես անունն են տվել, քանի որ այդ կենդանին աքլորի ու հավի սիրահար է:

Աղվես ուղարկելն ուներ այն նպատակը, որ ինչ-ինչ պատճառով հարսանիքի խափանման մասին խնամիները տեղյակ լինեին:

Հարսնացուի հագուստները և մանր-մունր նվերները տանելիս, ըստ ադաթի՝ պարտադիր էր նվեր տանել հարսի հոր համար, մի «խչըղ» (ար-

խալուղ),[60] իսկ մոր համար՝ «օխտը գեցեն նհետ մի օյմացու» (շրջազգեստի կտոր):

Տղայի տանը նախաճաշելուց, հարսնացուի հագուստն ու նվերները ցուցադրելուց հետո նվագախումբը տան առջևում զուռնա-դհոլով սկսում էր նվագել պարեղանակներ, տղաներն ու աղջիկները՝ առանձին խմբերով պարում էին: Մակարները նույնպես պարում էին հրացանները ձեռքներին ու կրակում օդում:

Երիտասարդ կանայք ու նորահարսերը գեղեցիկ դասավորած սինիներով տնից դուրս էին բերում հարսնացուի նվերները, գլխներից բարծր պահում ու պարացնում

Թոյբաշին հրաման էր արծակվում, որ շարժվեն դեպի խնամու տուն:

Խնամիների տուն գնալը մակարները ազդարարում էին հրացանների համազարկերով, իսկ զուռնաչիները մեկնելու ժամանակ նվագում էին առանձին պարեղանակ:

Երիտասարդ տղաները կանանց ձեռքից վերցնում էին նվերներով սինիները՝ նմանապես գլխից վեր պահած, պարացնելով տանում մինչև հարսնացուի տուն:

Քավորի, թագավորի, նվագախմբի և նվերներ տանողների հետ, խնամիների տուն, առանց արգելքի ու սահմանափակման, կարող էր գնալ ամեն մի հրավիրված մարդ:

Հարսանքավորների թափորը, երբ ճանապարհվում էր դեպի խնամիների տուն, փեսայի մայրը մի լիքը ամանա ջուր էր շաղ տալիս նրանց ետևից ու մաղթանքներ կատարում. «Պարի սհաքեն ինի, օրախ գինն, օրախ գյոն, աստուծ, դու չարը խափանս, պարի բախտութուն տաս»:

ՀԱՐՍԱՆԻՔԸ ԱՂՋԿԱ ՀՈՐ ՏԱՆԸ

Հարսանիքը սկսվելուց մեկ օր առաջ աղջկա մայրը հրավիրում էր տոհմի և հարևան կանանց, աղջկա համար պատրաստած «ջհեզը» (օժիտ) ցույց տալու նպատակով:

Հրավիրվածները, ըստ իրենց կամեցողության և ցանկության նվերներ էին տանում ամուսնացող աղջկա համար: Նվերը լինում էր մի զույգ գուլպա, գլխաշոր, գոգնոց, հագուստի կտոր ու զարդարանքներ:

Հարսանքավորների թափորին դիմավորում էին հարսնացուի տան մոտ ու հրավիրում ներս:

---

[60] Երբ արխալուղը կենցաղից դուրս եկավ, փոխարենը տանում էին վերնաշապիկ կամ «շալվար»:

Տան հատակը լրիվ ծածկված էր լինում կարպետներով, իսկ պատերի տակ, ողջ երկայնքով՝ գորգերով: Մեծապատիվ հյուրերի համար գորգերի վրա փռում էին դոշակներ (ներքնակ):

Քավորի ու թագավորի համար առանձին թախտ էին պատրաստում:

Կարճատև նվագից ու պարից հետո բոլորը ծալապատիկ, շրջան բոլորած, նստում էին:

Աղջկա տոհմից մի երիտասարդ, տրեխները հանած, բրդե գույնզգույն, մինչև ծնկերը հասնող սիրուն գուլպաներ հագած, ջրով լիքը «ըրթվան» (չուգունե թեյնիկ) աջ ձեռքով բռնած, իսկ ձախ ձեռքում «լվըցամանը» (ձեռքերը լվանալու պնակ), ձախ ուսին սրբիչը ձգած, գնում, ամենից առաջ չոքում էր գյուղի քահանայի առջև: Քահանան փարաջայի թևերը քշտում էր, ձեռքերը պարզում դեպի երիտասարդն ու ասում. «Աստված շնհավր անի, պարի բախտ ինն»:

Երիտասարդը ջուր էր լցնում քահանայի ձեքերին և այսպես շարունակ, հերթականությամբ բոլոր հյուրերը լվացվում էին, կրկնելով քահանայի մաղթանքը:

Ձեռք լվալը վերջանալուց հետո անմիջապես փռում էին սպիտակ սփռոցներն ու դասավորում չորեքտակ ծալած լավաշ հացերն ու ճաշի պնակները:

Ճաշկերույթը օրհնում էր քահանան, «Հայր մեր, որ յերկինս ես» աղոթքով, և բոլորը լուռ ճաշում էին: Ճաշկերույթից հետո անմիջապես տաք թեյ էին մատուցում, որից հետո սփռոցը հավաքում էին ու հարսնացուի համար տարած նվերներով սինիները բերում, դնում քահանայի առջևը: Մի պահ լռություն էր տիրում:

Փեսացուի կողմից մի երիտասարդ կին, որը կարող էր լինել փեսայի մեծ եղբոր կինը, ամուսնացած քույրը, քավորի մայրը կամ կինը՝ գալիս, գլխիկոր չոքում էր սինիների մոտ:

Քանի որ կանանց խոսելը տղամարդկանց մոտ, մանավանդ մեջլիսներում ամոթալի էր և համարվում էր անհամեստություն, նվերները և պսակի հագուստը բերող կնոջ կողքին նստում էր ճաշկերույթը ղեկավարող տղամարդը:

Նվերները ներկայացնող կինը մեկ առ մեկ վերցնում էր դրանք ու ցածրաձայն, կողքին չոքած տղամարդուն ասում ի՞նչ նվեր է և ո՞ւմ համար է բերված: Նախ վերցնում էր հարսի պսակի հագուստը, տալիս կողքի տղամարդուն ու ասում. «էս հարսանը փսակեն շորրն ա»:

Տղամարդն այն, ի տես բոլորի պահած, բարձր ձայնով ասում էր. «էս

հարսանը փսակեն շորրն ա, բուրուշումից, իրան օմեն հինչավը, շեն կենա խնամեն»:

Բոլոր ներկաները ուրախ ու միաձայն կրկնում էին. «Շեն կենա խնամեն, շեն կենա, ազափներեն ալ արժան ինի»:

– Էս մի կարած խըլեչ՝ խնամուն:

Էլի կրկնում էին. «Շեն կենա խնամին»:

– Էս սաթինից, օխտը տեղեն նիետ մի օյմացու հռինը մորը հետե:

– Շեն կենա խնամին, ազափներեն արժան ինի:

Նվերները ցուցադրելուց հետո, վերջում մի զույգ սիրուն նախշերով գուլպա նվեր էին տալիս «նվերնեն կնչողուն»:

Շամվառէք (մոմավառություն).

Հարսնացուի պսակի հագուստեղենի ու նվերների սինիներում մի քանի տասնյակ մոմ էր դրված լինում: Գյուղի տիրացուն մոտենում էր, մոմերը ամրացնում սինիների եզրերին, դրանցում դրված խնձորների, նռների և այլ մրգերի վրա ու նայում փեսայի հոր դեմքին: Հայրը կռահում էր, որ տիրացուն մոմերը վառելու համար նվեր է պահանջում, գրպանից հանում էր արծաթ մի դրամ և նվիրում նրան:

Վհնացի Նիկոլ Հովհաննիսյանի հարսանյաց հանդեսը, 1952թ.

– Աստված շնհավր արի,- ասում էր տիրացուն և մոմերը վառում:

Փսկդրամ (պսակադրամ). Ատրպատականի թեմի Հայոց առաջնորդարանի խորհրդի կողմից, առաջնորդարանի պահպանման համար նորապսակներից գանձվող դրամական տուրք, պսակադրամ էր սահմանված:

Ղարադաղի հայաբնակ գյուղերը բաժանել էին երեք խմբի՝ ունևոր, միջակ և չքավոր:

Առաջին խմբի ունևոր, միջակ և չքավոր գյուղացիները, տղային պսակելիս համահավասար՝ քահանային, տալիս էին քսան, երկրորդ խմբինը՝ տասնհինգ, իսկ երրորդ խմբինը՝ տասը ղռան:

Փոխանակ գյուղացիներին բաժանեին երեք խմբի, գյուղերն էին բաժանել:

Քահանան փեսայի հորից ստանալով սահմանված գումարը, մի քանի ղռան էլ, ըստ ցանկության իր համար էր պահանջում:

Քահանան օրհնում էր փեսայի գլխարկը, հանձնում նրան, իսկ հարսի հագուստը տանում էին նրան հագցնելու:

Սինիներում եղած միրգն ու քացրավենիքները բաժանում էին հանդիսականներին, որոնք տալիս էին իրենց մաղթանքները. «Աստված շնհավր անի, բախտավոր ինն, պարի սհաթեն ինի» և այլն:

Նույն ժամանակ փեսայի ու հարսի հարազատները մոտենում էին քահանային, համբուրում նրա ձեռքը, սուրբ խաչը ու մանր դրամներ դնում ավետարանի վրա:

Նորից սկսվում էր նվագն ու պարը:

Տան մի անկյունը վարագույրներով անջատում էին հարսի համար:

Հարսի մոտ առանձացած էին լինում նրա ընկերուհիները, երկու կողմերի բարեկամների աղջիկներն ու նորահարսերը:

Պսակի օրհնված հագուստեղենը հարսնացուի մոտ էին տանում միայն քավորի կինը, ամուսնացած քույրը կամ եղբոր կինը:

Հարսի հագուստը հագցնելիս երգելն ընդունված չէր, միայն կատարում էին սովորական մաղթանքներ՝ «Շնհավր ինի, բախտավոր ինեք, աստուծեն պարի աղոթքը, պարի աչքը ծըզ հետե ինի» և այլն:

Նորից լսվում էին մակարների հրացանների համազարկերը:

Ջուռնաչին փչում էր «Վայ աման, ազի ջան, տընհիսն» երաժշտությունը:

Երիտասարդ տղաները խմբով երգում էին.

Վայ աման, ազի ջան տընհիսն,
Հորից, մորից հընհիսն:
Թազա հարսանը տոն չինի,
Քիշեր, ցիրեկ քոն չինի:
Վայ աման, ազի ջան՝ տընհիսն,
Հորից, մորից հընհիսն:
Ջվեն հետե խոսս վեչ,
Օմեն խոսք ալ ասս վեչ:
Բերանետ փակ կպահս,
Դադետ առաչ կտանս:
Այ աման, վայ աման տընհիսն,
Հորից, մորից հընհիսն:
Յա տալ կինի, յա տիքրակեն,
Կլսս միշտ ընդունց խոսքեն:
Պատրուն, ըսկուսոր քուշտեն,
Դընռնս հալալ կթնակեր:
Վայ աման, վայ աման տընհիսն,
Հորից, մորից հընհիսն:

Նման հուզմունքալից երգ ու երաժշտության տակ հարսին դուրս էին բերում «փարդի» (վարագույր) ետևից, դեմքը կանաչ կամ կարմիր շղարշով ծածկած:

Հարսի աջ կողքին կանգնած էր լինում «հռհնախպերը» (հարսնեղբայր), ձախ կողքին՝ «հռհնաքուրը» (հարսնաքույր), թիկունքի կողմում՝ քավորի ներկայացուցիչը:

Նրանց էին մոտենում քավորն ու թագավորը, որին իր տեղը զիջում էր հարսնեղբայրը և կանգնում քավորի կողքին:

Դռան շեմի մոտ թագուհու հարազատներից մի պատանի արգելում էր հարսին տնից տանել, պահանջելով դրամ կամ նվեր:

Քավորը մի արծաթ դրամ էր նվիրում պատանուն, արգելքը վերացնում:

Կթնափող (կաթի դրամ). հարսանյաց շքախումբը, որ տնից դուրս էր գալիս խնամին կամ թոյբաշին մոտենում էր հարսի մորը և ըստ ցանկության ու կարողության՝ մի անորոշ գումար տալիս նրան, խնդրում, որ աղջկան տված կաթը «հալալ անի»:

Մայրը վերցնում էր դրամը, մայրական բարի մաղթանքներ կատարում, և ցուցաբերած հարգանքի համար շնորհակալություն հայտնում:

Հարսանիքի թափորի ճանապարվելուց հետո, հարսի մայրը ջուր էր շաղ տալիս նրանց ետևից և բարի մաղթանքներ կատարում:

Հարսնացուի հոր տնից մինչև եկեղեցու դուռը անդադար նվագում ու պարում էին, բացականչություններ և հրացանաձգություն կատարում:

Փողոցով թափորը անցնելիս, բարեկամ ու հարևան կանայք տների կտուրներից ընկույզ, փշատ, զանազան չոր մրգեր են թափում քավորի, թագավորի և թագուհու գլխներին:

Ամեն տան մոտով անցնելիս տղամարդիկ, կանայք, նորահարսերը հարսանյաց թափորին դիմավորում են սինիների ու թփորաների մեջ դասավորած լավաշով, ձվածեղով, մեղրաբլիթով, տհալով, խաշած լոբով ու կարմիր գինով:

Հարսանեկան թափորը եկեղեցի գնալիս սահմանափակում չկար, թե ովքեր պետք է գնան, ըստ ցանկության, տարեց մարդկանցից մինչև պատանիներն ու դեռատի աղջիկները կարող էին մասնակցել:

Պսակ. եկեղեցում քահանան նորապսակների գլուխները մոտեցնում էր իրար, շուրջառը փռում նրանց վրա, խաչը դնում գլխներին և ծիսակատարությունն սկսում:

Ըստ ադաթի՝ շուրջառի տակ, նորապսակները առնում էին սիրո առաջին համբյուրը կամ մատանի էին փոխանակում, զարդեր, մետաքսե թաշ-

կինակ և այլն: Այս բոլորը պետք է կատարվեր զգուշորեն, որ հարսանքավորների նրանց բևեռված սրատես աչքերը ոչ մի բան չտեսնեին:

Քահանան վերցնում էր շուրջառը, ապա հերթով դիմելով նորապսակներին, հարցնում.

– Որդյակս, ահավասիկ այսօր առողջ է քո ընտրած հարսնացուն: Աստված մի արասցե, կյանքում հիվանդանալ կա, հաշմանդամանալ կա, սուրբ խաչիս և սուրբ ավետարանիս առջև երդվիր, որ ցմահ տեր ես:

Նորապսակը գլուխը խոնարհում էր սուրբ խաչին ու սուրբ ավետարանին, համբուրում ու կրկնում երեք անգամ.

– Այո, տեր հայր, տեր եմ:

Քահանան նույնը երեք անգամ կրկնել էր տալիս հարսնացուին, որը գլխի խոնարհումով տալիս էր իր համաձայնությունը:

Եկեղեցում պսակադրումն ու երդման արարողությունն ավարտելուց հետո քավորը քահանային էր հանձնում երկու զույգ կանաչ ու կարմիր թելեր ու մի կտոր մեղրամոմ:

Քահանան թելերից մեկը գցում էր թագավորի վզին, մյուսը՝ թագուհու և դրանց ծայրերը մոմով ամրացնում, սուրբ խաչի վրա ակնեղենով կնքում, որը նշանակում էր, որ մինչև հարսանյաց հանդեսի ավարտը խստիվ արգելվում է միասին անկողին մտնել:

Պսակադրման արարողության ավարտից հետո անմիջապես որոտում էին մակարների հրացանները, ազդարարելով նորապսակների դուրս գալը եկեղեցուց:

Ջուռնաչիները նվագում էին «Գղեցուն հավան» (եկեղեցու եղանակ):

Թափորը շարժվում էր դեպի հարսանյաց տուն:

Եկեղեցուց մինչև տուն հատուկ, խիստ հսկողության տակ էին առնում նորապսակ թագավորին ու թագուհուն, որ հանկարծ նրանց արանքով որևէ մեկը կամա թե ակամա չանցնի: Նորապսակների արանքով անցնելը համարվում էր հետապնդող սատանայի անցում՝ մարդու կերպարանքով:

Հավատում էին, որ եթե նրանց արանքով անցնեին, ողջ կյանքում նորապսակները կմնային ծախորդության ու դժբախտության մեջ:

Ադաթ կար հնուց, որ խստիվ արգելվում էր նաև նորապսակներին եկեղեցի բերած ճամփով ու փողոցով ետ տանելը: Անպայման պետք էր տանել մեկ ուրիշ ճանապարհով:

Կար այն հավատքը, որ եթե նորապսակներին նույն ճանապարհով ետ տանեն, հարսնացուի աչքը կմնար հոր տան վրա և վաղ թե ուշ կվերադառնար այնտեղ, ընտանեկան համերաշխություն չէր լինի:

Հարսանյաց հանդեսի թափորը դուրս գալով եկեղեցուց, եկած ճանապարհը փոխելով, հրացանների կրակոցներով, նվագով, պարելով ու ուրախության ճիչերով գնում էր օրվա թագավորի տուն:

Վերադարձին նույնպես փողոցների անկյուններում, տների առջև հարսանյաց թափորին հյուրասիրում էին սինիներում դրված մեղրաբլիթներով, ձվածեղով, գինով. մրգեր էին շաղ տալիս նորապսակների վրա:

Հասնելով փեսայի տան բակի դարպասին հարսանյաց թափորը մի պահ կանգ էր առնում: Փեսայի հայրը, ըստ իր ունեցվածքի ու կամեցողության՝ նորահարսի ոտքերի տակ մատաղ էր կտրում (աքաղաղ, նոխազ կամ խոյ): Նորապսակները մատաղի վրայով անցնում, տուն էին մտնում:

Եթե հարսը հարևան գյուղից էր լինում, մթերքներով լի սինիներով, նվագ ու պարով նրանց դիմավորում էին գյուղից դուրս, մի հարթ տարածքում կամ կալում:

Եթե հարսին հարևան գյուղերից էին բերում, նստեցնում էին գրաստի վրա: «Մաչա» (էգ) ջորու վրա նորահարսին նստեցնելը խստիվ արգելվում էր, նկատի ունենալով, որ ջորին չբեր է:

Եթե հարսը գյուղից էր լինում, երբեք գրաստի վրա չէին նստեցնում, ոտքով գնում էին եկեղեցի և ոտքով էլ վերադառնում:

Շլթաղ. նշանակում է ապօրինություն, անմեղ մարդկանց մեղադրանք հարուցել և ենթարկել տուգանքի:

Կատակով շլթաղ անելը զուռնաչիների կողմից մուտք էր գործել նաև հարսանյաց հանդեսներ: Նորապսակները, երբ ներս էին մտնում տուն, դհոլչին ոտքը դնում էր դռան շեմին ու արգելում հարազատների տեսությունը նորապսակների հետ: Նրանք էլ ստիպված դհոլչուն մանր դրամ էին տալիս, գուլպա, տրխետան և նման այլ նվերներ խոստանում:

Ղարադաղում սովորություն կար հարսանիքի ժամանակ պարողներին դրամական նվեր (շաբաշ) տալ: Շաբաշ էին տալիս հիմնականում մանր մետաղադրամներ՝ շահիներ, որոնք, ըստ աղաթի՝ դրանք դնում էին դհոլչու բերանում:

Դհոլչին շահիները բերանում պահում էր այնքան ժամանակ, մինչև պարն ավարտվում էր և դադարում էր նվագը:

Այդ ժամանակ դհոլչին բերանում հավաքած մանր դրամը դատարկում էր գրպանի մեջ:

Փեսայի տնից, երբ հարսանքավորները մեկնում էին հարսի տուն, քավորի մայրը, կինը կամ մեկ ուրիշ հարազատ կին, փեսայի մոր հետ տղայի հոր տանը կամ շինության որևէ առանձին մասում նորահարսի համար

նստելու տեղ էր պատրաստում, որն անվանում էին «հռհինը օթախ» (հարսի սենյակ):

Այն կարող էր լինել տան վերին մի անկյունում կամ օժանդակ շինության սենյակներից մեկում և առանձնացվում էր մետաքսե վարագույրներով:

Նորահարսի օթյակի պատերին գորգեր էին փակցնում, հատակին կարպետներ փռում, դրանց վրա՝ գորգ, նստելու համար՝ ներքնակ: Օթյակի օճորքից կախում էին հացի իրար կպած զույգ բլիթներ:

Բլիթների եզրերից կախում էին չոր մրգերից պատրաստած մի քանի շարաններ: Դա նշանակում էր, որ նորապսակներին ցանկանում են ամուսնական միասնություն, հացի ու մրգի առատություն:

Փըսուն հորը, մորը կոխ ածիլը. նորապսակներին եկեղեցուց բերելուց հետո անմիջապես ներս չէին տանում, քանի որ մատաղ կտրելուց հետո բավականին ժամանակ տան բակում զուռնա էին նվագում ու պարում:

Փեսայի տոհմից երկու հոգի հանդես էին բերում փեսայի հորն ու մորը և պարեցնում:

Զուռնաչին, գործին տեղյակ լինելով, իսկույն նվագում էր կոխի եղանակ:

Փեսայի հայրը կնոջ հետ կոխ էր բռնում: Այնպես էին կազմակերպում, որ կինն էր ամուսնուն գետնում, ծիծաղ ու զվարճանք պատճառելով հանդիսատեսներին:

Փեսայի ծնողներին հրապարակ բերողներն իրենց գրպանները նախապես ալյուր էին լցնում, որը շաղ էին տալիս կոխի բռնված ամուսինների գլխներին, որով ցանկանում էին «խոր ծերության ու սպիտակ մազերի հասնել՝ հացի առատությամբ»:

Հարսանը փահմը (հասկացողություն). հարսի օթյակը պատրաստելիս նրա նստելու տեղի ներքնակի տակ կաթսա, կովկիթ և նման որևէ բան էին դնում, նորահարսի գիտելիքը, հասկացողությունը փորձելու համար:

Եթե հարսը ներքնակի տակ դրած իրը հանում էր ու նստում, որոշում էին, որ բանիմաց է և գիտակից, իսկ եթե նստում էր ամանի վրա, որոշում էին, որ նա դեռ շատ ու շատ բաներ չգիտի, հարկավոր է սովորեցնել:

Հարսանը վեր բիրիլ. նորահարսը մտնելով օթյակ, անմիջապես չէր նստում, սպասում էր սկեսուրին:

Սկեսուրը ներկայանում էր հարսին, բարի մաղթանքներ ասելով. «Վընամուտդ պարին ինի, գյուղտ պարի սհաթեն ինի, իմ ջոխտ աշկես երե տըղ օնըս, տոնս-տեղս, դովլաթս քի փեշքյաշ» և այլ բարի խոսքեր, համբուրում ճակատը, նվիրում մատանի, արծաթ դրամ կամ զարդ և առաջարկում նստել:

Նորահարսը, արժանանալով սկեսուրի նման բարի մաղթանքներին, նստում էր:

Նորահարսի գիրկն էին տալիս 1-6 տարեկան մի տղա երեխա, որ նրանց առաջնեկը տղա լինի:

Նորահարսը տեղյակ լինելով նման ադաթին, իր մոտ ունենում էր բրդե թելերից գեղեցիկ գործած մանկական գուլպա և անմիջապես հագցնում էր երեխային:

ՋՀԵՋ (ՕԺԻՏ)

Երբ աղջկա հոր տնից հարսին տանում էին եկեղեցի՝ պսակադրման, նույն ժամանակ օժիտը ուղարկում էին փեսայի տուն:

Հարսին իր օթյակում ընդունելուց հետո տեղի էր ունենում օժիտի ցուցադրումը:

Օժիտին և բերված նվերներին քաջածանոթ էր լինում նորահարսի ազգականներից մի կին, իսկ ցուցադրողը լինում էր «ղավալներից» (նվագող) մեկը՝ զուռնաչին կամ դհոլչին:

Օժիտը ներկայացնող կինը՝ գլխիկոր դրանք վերցնում էր, ցածր ձայնով ծանոթացնում ղավալին, նա էլ ցուցադրելով ամբոխին, բարձրաձայն գոչում էր.

«Հառհինը մի ձեռք յողրան-դոշակ ա բերած, շեն կենա խնամեն, ազափներեն ալ արժան ինի»:

Ներկաները կրկնում էին. «Շեն կենա, շեն կենա»:

Մի նափռաշ:

Մի դարախլու կարպետ:

Մի խուրջին:

Մի ծսկան (բրդե նուրբ գործվածք խմորի «բուլերեն» երեսին փռելու համար):

Մի ըղըքսակ:

Մի կազի չարշիվ:

Հենգ ջոխտ բրթից նախշուռ գյուլբենե, խնամեն հուր որ օզի՝ կտա:

Մի ջեջիմնը:

Մի փիրդիքաքող (նորահարսի օթյակի վարագույրը իր պարանով):

Մի ուսաշոր:

Իրք ձեռք հարսանը հետե հաքուստ, օմեն հինչավ, տակնաց դեչանը դիյեր:

էրկու բլուզ, էրկու հալավ, խնամեն հուր որ օզի՝ կտա:

էս ալ մի չաթու ա:
Օխտը հատ կուժու խցական:
Օխտը հատ «հեքյալ»:
Օխտը հատ փողու քիսա:
Օխտը հատ «ղավլխ» (կայծքարի ու հաբեթի քսակ):
Օխտը հատ արախչի:
Օխտը հատ յախա:
Օխտը ջոխտ խոխու գյուլբենե:
Օխտը ջոխտ տրխտննե:
Մի կարած «խըլեչ» խնամուն:
Մի փոխան ալ փըսամորը:

Հանդիսատեսներին ծիծաղ պատճառելու համար փոխանը գցում էր ուսերի վրա. «Տըսեք, տըսեք, փուխանեն փոխկրը «շիլա յա», դիյերը «աբի յա», «խոնջանն ալ՝ կազի ա»:

Վերջում հայտարարում էր, որ ինչ որ ուղարկված է յոթ հատ, թողնեն խնամու հայեցողությանը, նորահարսի անունից նվերներ տալու:

Օժիտը ցուցադրողին մի զույգ գուլպա էին նվիրում:

Օժիտ բերող կնոջը, խնամին՝ ըստ արժանավույն նվեր էր տալիս հագուստի կտոր, արծաթ դրամ և այլն:

Գյուլլա գիծիլ (գնդակածգություն). հարսի օժիտը տեսնելուց հետո վաքիլը երկու մակարների հետ գնում էր քավորի տուն և պահանջում «գյուլլա նշանու հետե» (նշանառության համար) մեկ կենդանի:

Քավորը, եթե ունևոր ընտանիքից էր լինում տալիս էր մեկ խոյ կամ նոխազ, եթե չքավոր էր լինում՝ աքլոր:

Քավորի տված կենդանին տանում, գյուղից դուրս կապում էին բլրալանջի բաց տարածությունում:

Քավորը, թագավորը, մակարներն ու որսորդները կանգնում էին հեռու տարածության վրա այնպես, որ հրացանի գնդակը հազիվ հասներ անմեղ զոհին: Սահմանած տարածությանը անվանում էին «մի գյուլլը մանծիլ»:

Գնդակածգության վայրում հավաքվում էին գյուղի անվանի մարդիկ, զենքի սիրահարներ, պատանիներ՝ մի մեծ բազմություն:

Ջոհի վրա առաջինը կրակում էր թագավորը: Եթե գնդակը նպատակին չէր հասնում, երկրորդ նշանառուն լինում էր քավորը: Եթե քավորի գնդակն էլ նպատակին չէր հասնում հերթը վաքիլինն էր, որից հետո, ըստ ցանկության՝ ով որ կամենար՝ մակար, հին որսորդ, զենքի սիրահար և ուրիշներ, կրակում էին:

Եթե առաջին կամ երկրորդ գնդակը հասնում էին նպատակին զինավարժությունը չէր դադարում. մակարներից ու որսորդներից որևէ մեկը գնում, իրենց տնից աքլոր կամ հավ էր բերում, կապում նույն տեղում ու շարունակում էին նշանառությունը:

Երբեմ 5-6 աքաղաղ ու հավ էին բերում. գնդակածգությունը հաճախ շարունակվում էր մինչև արևամուտ:

Կենդանին ու թռչունները երիտասարդները տանում էին վաքիլի տուն և հարսանիքից հետո գիշերը հավաքվում այնտեղ, իրենց հետ տանելով գինի, ուտելիք ու քեֆ էին կազմակերպում, նվագում, պարում ու ուրախանում:

Մեջլիս (համահամանքային հավաք). օժիտը տեսնելուց հետո հարսանքատանը անմիջապես ձեռնամուխ էին լինում մեջլիսի ընդունմանն ու սպասարկմանը:

Մի քանի երիտասարդներ, խուրջինները գցած գրաստների վրա՝ բարեկամ ու հարևան ընտանիքներից մեջլիսի ճաշկերույթի համար հավաքում էին պղնձե ամաններ: Նրանք գդալներ չէին հավաքում, նկատի ունենալով, որ երկու ճաշերն էլ ուտում էին առանց գդալի:

Մատուցվող ճաշերն էին փլավն ու յախնին:

Փլավը լավաշով պատառ էին անում, իսկ յախնին լավաշով բրդում էին և նույնպես ուտում ձեռքով:

«Չամչիտ (շերեփ) փռնողը, ճաշ իփուղը» լինում էր տոհմի ամենատարեց կինը՝ «աղթիրչագը» (սպիտակ ծամերով):

Արևամուտից հետո հարսանքատուն էր գալիս գյուղի ողջ հասարակությունը: Անկախ նրանից, բարեկամ են, թե ազգական, բոլոր համագյուղացիները առանց հրավերի մեջլիս էին գնում ու մասնակցում ընթրիքին:

Այդ ժամին տարերքի մեջ էին լինում թոյբաշին ու իր «փեյքարները» (գզիր), որոնք շտապ տեղեկություն էին հայտնում, թե ով է բացակայում մեջլիսից: Գնում էին տները, տեղեկանում բացակայության պատճառը, հաշվում էին, թե քանի ծերունի, պառավ, հիվանդ կա, որոնք չեն կարող մասնակցել մեջլիսին:

Նրանց համար երկու լավաշ և մեկ աման փլավ կամ յախնի էին ուղարկում պատանիների և աղջիկների միջոցով:

Նրանք՝ այն գոհանակությամբ ընդունելով, տալիս էին իրենց բարի մաղթանքներն ու օրհնանքները. «Աստված շնհավր արի, պարի սհաթեն ինի, անփորձանք ինն»:

Մեջլիսը նստում էր ընթրիքի. ճաշատան մի անկյունում առանձին

թախտ էին կազմում քավորի, թագավորի և նրանց շքախմբի համար:

Նորահարսի մեջլիս գալը ադաթ չէր, ինչպես նաև կանանց մեջլիս նստելը տղամարդկանց հետ նույն հարկի տակ: Կանանց մեջլիսը հավաքվում, նստում էր առանձին:

Այդ տարին մահացած մարդու անչափահաս տղային նստեցնում էին մեջլիսի այն տեղում, որտեղ նրա հայրը պետք է նստեր:

Մեջլիսն սկսելուց առաջ ջուր էին բերում, բոլորը հերթով լվանում էին ձեռքերը, փռում էին սփռոցները, շարում աղամանները, չորս տակ ծալած լավաշ հացը: Քահանան օրհնում էր սփռոցը, աղն ու հացը:

Օրհնության պահին բոլորը վերցնում էին գլխարկները:

Ճաշը մատուցում էին յուրաքանչյուրի համար առանձին ամանով, մի քանի պատանիներին՝ մի ամանով:

Ընթրիքը կատարվում էր քար լռությամբ:

Աշփազը (պրս.՝ խոհարար), նախապես իմանալով մասնակիցների մոտավոր թիվը, աչքաչափով պետք է այնքան ճաշ պատրաստեր, որ մեջլիսին բավարարելուց բացի, մի բան էլ ավելանար, ուենեար բարձր որակ ու արժանանար մարդկանց գովասանքին:

Խոհարարը ամենից առաջ երեք աման էր լցնում, սինու վրա դասավորում, շուրջը լավաշներ շարում, մի զույգ մոմ վառում, կպցնում սինու եզրին: Այն տալիս էր տոհմից որևէ նշանված աղջկա կամ նորահարսի, ուղարկում քավորին նվեր՝ ստանալու համար նրա թույլտվությունը մեջլիսի ճաշը մատուցել:

Քավորը ընդունում էր ճաշերը, բերողին արծաթ մի դրամ նվիրում, որից հետո խոհարարի օգնականները ճաշը տանում էին մեջլիս:

Մեջլիսի ընթրիքը ավարտելուց հետո տղամարդկանց հետ համատեղվում էր նաև կանանց մեջլիսը:

Երիտասարդ կանայք իրենց հետ թաքուն, մետաքսե ծածկոցի տակ, բերում էին նաև նորապսակ թագուհուն:

Սկսվում էր նվագն ու պարը: Պարում էին միայն լավ պարել իմացող մարդիկ: Կանայք մեջլիսում չէին պարում:

Հասուն աղջիկներն ու նորահարսերը «կնչկարմուր» ծառեր էին նվիրում քավորին, թագավորին, հարսի եղբորը, վաքիլին և նրանց շքախմբի անդամներին:

Կնչկարմուր ծառեր էին նվիրում նաև նորապսակ հարս թագուհուն, քանի դեռ նա ծպտյալ մեջլիս չէր եկել:

Կնչկարմուր ծառը հետևյալ կարգով էին պատրաստում. նորահարսերն

ու նշանված աղջիկները նախապես ընտրում և տանը պահում էին ուռենու և եղևնու այնպիսի դալար ճյուղեր, որոնք ունենային նուրբ ու բարակ յոթ ոստեր:

Հարսանիքների ժամանակ ամեն մի ճյուղին փաթաթում էին մետաքսե գույնզգույն թելիկներ, ծառին տալիս ծիածանի յոթ գույն: Ամեն մի ճյուղի ծայրին ամրացված նռան կամ խնձորի վրա մոմ էին փակցնում, ճյուղերից կախում ընտիր չոր մրգեր ու քաղցրավենիքներ:

Նման ծառերի պատրաստման նպատակն այն էր, որ նորապսակներին կամենում էին լուսավոր ապագա և առատություն, «Աստծո և Նոյի երդման նման», ի նշան ծիածանի՝ հավատարիմ ու համերաշխ լինել:

Ծըլվեգ. հավանաբար առաջացել է ծալել բառից: Դա մոտավորապես 20մ երկարություն ունեցող, մեղրամոմից պատրաստված՝ թելի կծիկի նման փաթաթած մոմ էր:

Ծլվեգը պատրաստում էր փեսայի տոհմի մի հասունացած աղջիկ կամ նորահարս:

Ծըլվեգը դնելով մի փոքրիկ սկուտեղի մեջ, եզրին ամրացնում էին մի զույգ վառվող մոմ և նվիրում քավորին, նախապես մոմի ծայրերը թաքցնելով էին նրա խառնիխուռն փաթաթած ծալքերի տակ:

Քավորը, ընդունելով ծըլվեգը, պարտավոր էր գտնել ծայրն ու վառել:

Եթե քավորը չէր կարողանում այն գտնել, իրեն «պարտված» էր ճանաչում և բերող աղջկան նվիրում էր արծաթ դրամ:

Աղջիկը իսկույն գտնում էր մոմի ծայրը, վառում ու հանձնում քավորին:

Ծըլվեգն ուներ այն խորհուրդը, որ քավորին ցանկանում էին լինել նորապսակ զույգի «հարատև լուսավոր ճանապարհի» երաշխավոր:

Քավորը պարտավոր էր ծըլվեգի լույսը անմար ու վառ պահել մինչև հանդեսի վերջը:

Նվագից ու պարից հետո ասպարեզ էին գալիս աշուղն ու բալաբանչին, սազն ու բալաբանը ծայնակցելով, սկսում սիրավեպեր ու հեքիաթներ պատմել: Հաճախ աշուղը երգում ու պատմում էր հավաքվածների պատվիրած սիրավեպն ու հեքիաթը:

Եթե աշուղ չէր լինում, գյուղի երիտասարդությունը կազմակերպվում էր թատերական բեմադրություն: Ներկայացնում էին «Պռավեն դավան», «Աղան նա հոտաղը», «Հայ դային», «Ճղուպուր ծախողն ու բուրթ ծախողը», «Քալալ Խաչի ուռուս ա դըռած» և այլն:

Յայլի պարը միակն էր, որ ղարադաղցիները պարում էին ճկույթը ճկույթով բռնած, միայն տղամարդիկ: Շատերը հանդես էին գալիս յայլի

անչափ ծիծաղաշարժ պարի համար: Յայլին ուներ «օխտը փարդա» (յոթ տեսակ նվագ):

Յայլի բաշին (պարի ղեկավար) խմբի հետ պարելով, առանձին գործողություններ էր կատարում:

Յայլին ուներ մարտական խստություն և շատ ծիծաղաշարժ էր: Բոլոր պարողները, ամենայն խստությամբ պետք է ենթարկվեին ղեկավարին, կատարեին նրա կարգադրությունները և օրինակեին նրան: Պարից հեռանալը, խռովելը և նեղանալը ընդունված չէր: Այն ավելի հետաքրքիր ու ծիծաղաշարժ բնույթ էր կրում, երբ հաջողվում էր պարի մեջ ներգրավել պարի կարգից ու գործող ձևերից անտեղյակ ու անծանոթ մարդկանց: Նմանները հաճախ լինում էին հարևան գյուղերից եկած հյուրեր և գյուղի փեսաներ:

Յայլի բաշին, կարգապահության համար ձեռքին ունենում էր մտրակ: Չենթարկվողներին, իր կատարած գործողությունը անմիջապես չկատարողներին կատակով մտրակում էր ու տուգանքի ենթարկում: Տուգանքները վերջում հավաքում էին ու քեֆ անում:

Օրինակ, եթե յայլի բաշին գրպանից թաշկինակ էր հանում, անմիջապես պետք էր թաշկինակ հանեին բոլորը և կախեին բերաններից. չունեցողները տուգանվում էին:

Յայլի բաշին շալակում էր 10-12 տարեկան մի տղայի, կսմթում, աղաղակ առաջացնում, օրինակում էին մաև մնացածները:

– Երեխաները, որ աղմկում են, ուրեմը միջատ կա վրաները հարկավոր է ստուգել:

Սկսում էին երեխաների փոխանները հանել, նրանք ամոթից ավելի էին աղմկում, տիրում էր ընդհանուր ծիծաղ:

– Չէ,- հայտարարում էր յայլի բաշին,- կա-չկա, երեխաները սոված են, որ աղմկում են, հարկավոր է ծիծ տալ, որ ձենները կտրեն:

Բացում էին մազակալած կրծքները, քսում երեխաների բերաններին: Երեխաները հրաժարվում էին, ավելի բարձր աղմուկ, աղաղակ հանում, ժողովրդին ծիծաղ պատճառում:

Յայլի բաշին նորից կրկնում էր արագ պար, հետո ծալապատիկ նստում, ծաղրանքի ենթարկում պառավ կանանց, թե նիրհելով ինչպես են բուրդ գզում, ճախարակ մանում, գուլպա գործում և այլն:

Պարի վերջում յայլի բաշին սկսում էր հանել անդրավարտիքը: Նրանք, ովքեր գիտեին յայլու կատակները, նախապես երկու անդրավարտիք էին հագնում: Նրանք, ովքեր անտեղյակ էին լինում, հանում էին անդրավար-

տիքները, պարը շարունակում փոխանակ՝ ծիծաղ ու քրքիջ առաջացնելով: Ոմանք տուգանք էին խոստանում, ոմանք ծողոպորում, թողնում պարն ու դիմում փախուստի:

Հարսանիքի երկրորդ օրվա երեկոն վերջանում էր յայլի կատակներով ու ամբոխի բարձր տրամադրությամբ:

Հարսանիքի երրորդ օրը սկսվում էր արշալույսին ավանդական զուռնա-դհոլի սհարի նվագի կանչով:

Երրորդ օրվա առավոտյան փեսայի հոր հրավերով հարսանքատուն էին գնում միայն քահանան, տանուտերը, համայնքի խորհրդի անդամները, տոհմի մեծերը և խնամիները: Երաժշտությունն ու պարը շարունակվում էր նաև այդ օրը:

Կուրկուտ. Ղարադաղում խաշն ու հարիսան ընդունված չէին, դրանց փոխարինում էր կուրկուտ (ձավար) ճաշատեսակը: Եթե հարսանքատերն ունևոր էր լինում՝ կուրկուտի հետ մատուցում էին նաև գինի: Կուրկուտից հետո անմիջապես թեյ էին մատուցում:

Նախաճաշից հետո նորից շարունակվում էր նվագն ու պարը, քեֆն ու ուրախությունը, որից հետո հայտարարվում էր հարսանյաց հանդեսի ավարտը:

Համագյուղացիները բարի մաղթանքներով գնում էին իրենց տները, հարևան գյուղերից եկողները ճանապարհվում էին իրենց գյուղերը:

Հարսանքավորների գնալուց հետո, քահանան վերցնում էր նորապսակների թագն ու պսակը, կնքված կանաչ-կարմիր թելերը արծակում, լցնում ալրամաղի մեջ, նրանց գլուխները խոնարհում, մոտեցնում իրար, ալրամաղը, սուրբ խաչն ու ավետարանը գլուխների վրա դնում, կատարում եկեղեցական կարգն ու տալիս ամուսնական ազատ իրավունք:

Նորապսակների ննջարանը. եթե ընտանիքն ունենում էր օժանդակ հարմարություն կամ առանձին սենյակ, այն նորապսակների համար ծառայում էր որպես ննջարան:

Եթե մեկ ընդհանուր բնակարան էր, ամուսնության առաջին գիշերը ընտանիքի բոլոր անդամները տնից գնում էին որևէ հարազատի կամ հարևանի տուն:

Հաջորդ օրը տան հարմար մի անկյուն վարագույրներով փակում էին, դարձնում նորապսակների ննջարան:

Նորապսակների տեղաշորը. հարսանյաց հանդեսն ավարտելուց հետո, երրորդ օրվա երեկոյան փեսայի մոր ներկայությամբ, քավորի մայրը կամ կինը վարագույրի ետևի առանձնարանում պատրաստում էր նորապսակների անկողինը, նորահարսի պատվի նշանի համար փռելով առանձին սպիտակ սավան:

Հռհնաքոր. հարսնաքույրը պարտադիր լինում էր ամուսնացած երիտասարդ կին:

Աղջկան հոր տնից հանելուց մինչև անկողին պատրաստելը հարսնաքույրը գիշեր ու ցերեկ մնում էր հարսի կողքին. նրա անբաժանելի ուղեկիցն էր ու խորհրդականը:

Անկողինը պատրաստելուց հետո փեսայի մայրը նվեր էր տալիս հարսնաքրոջը՝ արծաթ դրամ, գլխաշոր, հագուստի կտոր և այլն, որից հետո հարսնաքույրը շնորհակալությամբ գնում էր:

Հաջորդ առավոտ քավորի կինը կամ մայրը, փեսայի մոր հետ ստուգում էին նորահարսի պատվի առկայությունը և օրվա ընթացքում հավաքում տոհմի կանանց «ըշկըլուսունքի» (աչքալուսանք): Հավաքված կանայք համբուրում էին նորահարսի ճակատը, բարի մաղթանքներ կատարում և աչքալուսանք տալիս սկեսուրին:

Եթե հարսը համագյուղացի էր լինում, ճաշից հետո երկու երիտասարդ կանանց միջոցով «պատվի նշանով սավանը» ուղարկում էին հարսի մորը՝ աչքալուսանքի:

Հարսի մայրը այդ կանանց նվերներ էր տալիս և իրենց ազգատոհմի կանանց հրավիրում տուն:

Եթե նորահարսը ուրիշ գյուղից էր լինում, աչքալուսանքի սավանը ուղարկում էին ծիավորի միջոցով:

Գյլխըլվա. հարսանիքից յոթ օր անց հարսի հարազատներից երկու երիտասարդ կին գնում էին նորահարսին լողացնում և հագուստը փոխում:

Հարսանը վեր բիրիլը. նորահարսը մինչև «գյլխըլվան» մնում էր օթյակում, ոչ մեկի աչքին չէր երևում: Դրանից հետո տոհմի մարդիկ պարտավոր էին գնալ հարսին տեսակցության: «Հարսը վեր բիրել» նշանակում էր, որ նա դեռևս որպես «թագուհի» նստած է «գահին» (թախտին), հարկավոր է «վեր բիրել» (իջեցնել), իրավունք տալով մասնակցել տան գործերին և օգնել տնեցիներին:

Քանի դեռ չէին գնացել հարսին «վեր բիրելու», եթե հյուր էր գալիս, հարսը անմիջապես վարագույրի ետևն էր մտնում:

Համաձայն ադաթի՝ տոհմի կանայք հավաքվում էին, բրնձով փլավ, յախնի, մսով տոլմա կամ հավի չխրթմա պատրաստում և տղամարդկանց հետ, ճաշով պղինձը վերցնելով, գնում հարսին «վեր բերելու»:

Հյուրերը շարքով ծալապատիկ նստում էին: Նորահարսի սկեսուրը կամ կեսարը իրավունք էին տալիս նորահարսին դուրս գալ օթյակից:

Նա գալիս էր դեմքը շղարթով ծածկած, հերթով համբուրում հյուրերի աջ ձեռքը: Ամեն մեկը նորահարսին նվիրում էր արծաթ դրամ: Ընթրիքի ժամանակ նորապսակներին խրատում ու մաղթանքներ էին անում:

Նշանադրությանն ու հարսին «վեր բերելու» արարողությանը, ըստ ավանդական կարգի՝ փեսան չէր մասնակցում:

Ըղչիգյանը պադևը (աղջկա պատիվ). ես գրում եմ, որ «Ղարադաղի հայերի մեջ չի պատահել մի դեպք, որ նորահարսը պատվազուրկ լինի», իմանալով, որ դա ճիշտ չէր կարող լինել, սակայն, որպեսզի կանանց համար խոսակցության առարկա չդառնար պահել եմ խիստ գաղտնի:

Նմանապես գրի եմ առնում, որ «երբեք չի բացահայտված դեպք, որ տղան զուրկ է եղել ընդունակությունից»: Անշուշտ դեպքեր եղած կլինեն, բայց դրանք էլ, նմանապես խիստ գաղտնի են պահվել: Չեն բացահայտել, որպեսզի տղան ողջ կյանքում ամոթալի վիճակում չմնա, հավատալով, որ դա «կառավարվում է աստծո կամքով և հետագայում կարող է վերականգնվել»:

Նման դեպքերում, ինչպես ժողովրդական առածն է ասում. «Կոժը, կոլան կուտրիսն լալ հարսանը գյլխեն»:

Հարսի չբերության դեպքում դիմում էին հետևյալ միջոցներին. տանում էին «պառավական բուժման», ուխտատեղիներ, աղոթք, մատաղ անում, գրբացների մոտ գիր ու հմայիլներ անում և այլն:

Եթե այդ ամենը չէր օգնում, հավատում էին, որ «Աստուծեն բենն ա, կամենմ չի այալ ինի, տալիս չի, զոռավ բեն չի ինի, ըտունց ճկատեն ալ իտի ա գիրված»:

Քռասունք. «Հարսին վեր բերելուց» հետո նրան իրավունք էր տրվում օթյակից դուրս գալ, մարդկանց աչքին երևալ ու տան աշխատանքներին մասնակցել: Սակայն, քանի դեռ ամուսնության քառասունքը չէր լրանում, հարսն իրավունք չուներ բակից դուրս գնալ: Քառասունքը լրանալուց հետո հարսին իրավունք էր վերապահվում փողոց դուրս գալ, աղբյուրը ջրի գնալ և այլն:

Չխոսկանություն. նորահարսը քավորի և կեսրարի հետ ցմահ չխոսկան էր մնում: Կեսրարի հետ, եթե տանը փոքր երեխաներ էին լինում, խոսում էր նրանց միջոցով: Եթե երեխաներ չկային, մինչև քառասունքը լրանալը, ասելիքը հասկացնում էր ձեռքերի շարժումներով, որից հետո կամացուկ ու ցածր ձայնով կարող էր խոսել:

Նորահարսը չխոսկան էր մնում տոհմի բոլոր տարեց տղամարդկանց և պառավ կանանց հետ:

Նորահարսին իրավունք էր վերապահվում տեգոր և տոհմի մյուս անդամների հետ խոսել միայն առաջին երեխան ծնվելուց հետո:

Չխոսկանության սովորությունը պահպանվեց մինչև 1946թ. գաղթը:

Իրեսեն յալղուրը (շղարշ). նորահարսի դեմքը շղարշով ծածկելու ընդհանուր ժամկետ չկար, թե որքան ժամանակ պետք դեմքը ծածկած պահեր:

Դա կապված էր ընտանիքի ղեկավարի կամքից ու թույլտվությունից:

Քառասունքից հետո այն կարող էր կրել 3-6 ամիս կամ մեկ տարի:

Իրփիվերուն փսակը (որբևայրու պսակ). հաճախ էր պատահում այրի տղամարդու և կնոջ պսակադրություն: Նման դեպքերում քահանան ծեսը կատարում էր թոնրի վրա:

Փսակ փափախեն նհետ. մենք արդեն նշել ենք, որ ղարադաղցի չքավոր գյուղացին տղային նշանելուց հետո ուղարկում էր օտարության՝ աշխատելու և փող վաստակելու:

Հաճախ էր պատահում, որ նշանված տղային չէր վիճակվում նախատեսված ժամկետին վերադառնալ. հաջող աշխատանք չէր գտնում, անհաջողության մեջ էր ընկնում, «ծեռքը դատարկ տուն գալ» չէր ցանկանում և ուշանում էր:

Նման դեպքերում երբեմն աղջկա հայրը պարտադրում էր տղայի հորը, որ կամ իր «ամանաթը» տանի կամ նշանի մատանին ետ վերցնի՝ նկատի ունենալով, որ աղջկան ուրիշ ուզող կա:

Տղայի հայրը նշանած աղջկան բերում էր իր տուն, հրավիրում էր քահանային, որը աղջկան պսակում էր փեսացուի փափախի հետ, թոնրի վրա: Փափախի հետ պսակած հարսնացուն մնում էր տղայի հոր տանը, մինչև նա վերադառնար օտարությունից:

Ղափազու ղուշ (թռչուն վանդակում). սովորաբար Ղարադաղում տղաներին ու աղջիկներին նշանում էին 14-16 տարեկանում:

Մշտապես դաշտում, այգում, արտում ու կալում աշխատող աղջիկը նշանվելուց հետո դառնում էր «ղափազու ղուշ»:

Ինչպես նորահարսին, այնպես էլ նշանված աղջկան խստիվ արգելվում էր տնից դուրս գալ:

Նշանված աղջկա պարտականությունն էր տանը նստել, զբաղվել տնտեսությամբ, ճաշ եփել, կար ու կարկատան անել, ասեղնագործել, կարպետ գործել և մոր գլխավորությամբ օժիտ պատրաստել:

Նշանված աղջկան «վեր բերելուց» մի քանի օր անց աղջկա ծնողները փեսացուին հրավիրում էին «նշնծատես»:

Փեսացուն առաջին անգամ «հըներեն» (աներոջ) տուն էր գնում քավորի հետ:

Փեսացուի ոտքը բացելով, նրան իրավունք էր վերապահվում ազատ գնալ աներոջ տուն: Տան տղայի իրավունքով նա աներոջն օգնում էր զանազան աշխատանքներում. անտառից փայտ էր բերում գրաստով, ծմռանը մաքրում կտուրի ձյունը, օգնում վարի, հնձի, կալի և այլ աշխատանքներում, բայց նշանածի հետ ազատ խոսելն ու հանդիպելը խստիվ արգելվում էր:

Նշանված տղայի ու աղջկա հանդիպումը, որքան էլ խստորեն արգելված էր, բայց նրանք, զգուշությամբ հանդիպման միջոցներ էին գտնում:

Եթե հսկողությունը շատ խիստ էր լինում, հանդիպումները կազմակերպում էին աղջկա եղբոր կինը, մոտիկ հարևանի նորահարսը, աղջկա սրտամոտ ընկերուհիները:

Սովորաբար հանդիպման վայրը հացատունը, գոմը, բակի անկյունը և նման այլ թաքուն տեղեր էին լինում:

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Կանանց գաղտնիքը. Ղարադաղի հայ կանայք ամենայն խստությամբ միշտ էլ տղամարդկանցից գաղտնի են պահել դաշտանի երևույթը:

Շատ տղամարդիկ տեղյակ են եղել ամեն ամիս՝ լուսնի նորելով, կանանց հետ տեղի ունեցող երևույթի վերաբերյալ, հարցում կատարել կնոջից, փաստ բերել այդ օրերին սեռական հարաբերությունից խուսափելը:

Կանայք միշտ խուսափել են ճշգրիտ տեղեկություն հայտնելուց, դիմելով նույնիսկ ստախոսության ու խաբեության:

Դաշտանի օրերին, հրաժարվելով սեռական հարաբերությունից, կանայք «փոխանները թարս էին հագնում, խոնջանը կապելով ետևի կողմում»՝ դրանով իսկ հասկացնելով ամուսնուն, որ առողջական վիճակը վատ է:

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայերը յուրահատուկ հավատ ունեին ծննդյան մասին, համարելով, որ ժառանգը աստծո տվածն է և նրանից չի կարելի դժգոհել: Ծննդի ընդհատումը և մարդասպանությունը համարվում էր աստծո կամքին հակառակել: Հայ օջախները միշտ լի են եղել զավակներով: Զարմանալի է, որ Ղարադաղում ծնվող երեխաների 70-80%-ը տղաներ էին: Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի քանի փաստեր Խանագահ գյուղից. Ամուսնց Առաքելը ուներ յոթ տղա՝ Աղաջան, Աբրահամ, Պողոս, Ավագ, Սամսոն, Հարություն և Մուշեղ, Թորոսենց Հարութը ուներ յոթ տղա ու երկու աղջիկ՝ Մարկոս, Մարտիրոս, Հակոբ, Վարդազար, Առաքել, Ներսես, Ավետ, Վարդուհի և Հոռոմ:

Դադունց Մարտիրոսն ունեցել է տասը զավակ, ինը տղա և մեկ աղջիկ՝ Արմենակ, Առաքել, Սամսոն, Ալեքսան, Վաղարշակ, Թովմաս, Սմբատ, Նորայր, Սամվել և Ալմաստ:

Աղաջանենց Հովսեփն ունեցել է հինգ տղա և երկու աղջիկ՝ Հայրապետ, Խաչատուր, Հարություն, Ալեքսան, Գաբրիել և Հռիփսիմե, Մարիամ:

1930-ական թվականներին Թավրիզ քաղաքից շատ հովեկներ էին գալիս Ղարադաղի հայաբնակ գյուղերում ամառային հանգիստն անցկացնե-

լու: Եկվոր կանայք իրենց սև դրոշմն էին դրել հայ գեղջկուհիների մտքի վրա. «Որ ունեք, ո՞ւմ է պետք երեխաների շատությունը: Նրանք ջան ուտողներ են, հոգի ուտողներ, տանջանքի ու չարչարանքի միջոց, թող քիչ լինեն, որ դուք էլ լավ ապրեք»:

Աղջիկներ քիչ էին ծնվում: Շատ դեպքերում, տեղեկանալով, որ մեկի օջախում աղջիկ է ծնվել, շտապ գնում էին, երեխայի օրորոցի վրա խաչ քանդակում՝ նրան «բաշիքյարթմա» (գլխի նշան) անում: Երեխան դեռ օրորոցում՝ նշանում էին, ասելով. «Իմ բախտես, խոխան մըծանա, խելոնք ինի, թա չար, թոփալ ինի, թա քոռ՝ իս տարըմ»:

Շատ դեպքեում, տղային ամուսնացնելու համար մի քանի օր գյուղից գյուղ ման էին գալիս, հարսնացու փնտրում:

Հղիության ժամանակ կանանց ազատում էին ծանր աշխատանքներից:

Ծննդաբերությանը մոտ օրերին նրանց ազատում էին բոլոր աշխատանքներից: Եթե տանը ուրիշ կին չէր լինում և ինքն էլ հարևան գյուղից էր, մի քանի շաբաթով հարևանուհիներց մեկը օգնում էր տնային գործերում:

Խոսակցական լեզվում կանանց հղիության մասին արտահայտվում էին մի քանի կերպ՝ «խուխով ա», «վընը ծանդր ա», «փորը լիքն ա»:

Տատմար (տատմեր). բոլոր գյուղերում կային բազմափորձ կանայք, որոնց անվանում էին տատմար: Այն ժառանգաբար փոխանցվում էր:

Ծնունդը տեղի էր ունենում անկողնում:

Ծննդի ժամանակ տղամարդկանց ներկայությունը խստիվ արգելվում էր:

Ծննդկան կնոջը մաքրում էր տատմերը, ուշ ժամերին, բոլորի աչքից հեռու: Նա ընկերքը հորում էր գյուղից դուրս, աղբանոցում:

Տատմերը, օրգանիզմի ամրության համար աղ էր ցանում նորածնի վրա:

«Ծմուքկանեն» (ծննդկան) առաջին անգամ կերակրում էին ցորենի ալյուրից և հալած յուղից պատրաստած «խավեծ» ճաշատեսակով, որպես օրգանիզմն ամրապնդող ու արնահոսությունը կանխող միջոց:

Բազմազավակությունից հրաժարվելու նպատակով հղիության ընդհատումը և խեղանդամ երեխային սպանելը խստիվ արգելված էր, քանի որ նշանակում էր աստծո կամքին դեմ գնալ: Տիրապետում էր այն հավատքը, որ երեխային աստված է տալիս: Աստծո կամքին դեմ գնալը մեծ հանցագործություն էր համարվում:

Հավատում էին, որ աստծո կամքին դեմ լինողը իր «օխտը պորտով» կդատապարտվի տանջանքի ու կդառնա դժոխքի բաժին:

Ծննդաբերող կնոջ գլխատակին սուր էին դնում, հավատալով, որ «քաշկրը» կարող են իրենց երեխային փոխել նորածնի հետ: Սուրն ու պողպատը համարվում էին սատանաներին հալածող հմայիլներ:

Մկրտություն. ըստ հայ եկեղեցու օրենքի՝ հայ քրիստոնյան պարտավոր էր երեխայի ծնվելու յոթերորդ օրը նրան «մեռոնել» (մկրտել), բայց ոչ ուշ քան մինչև քառասունքը լրանալը:

Եթե երեխան մահանար առանց մկրտվելու, եկեղեցական օրենքն արգելում էր թաղել համայնքի գերեզմանոցում, քանի որ նա համարվում էր «հարամ, ոչ հայ»: Նման դեպքերից զերծ մնալու համար՝ թուլակազմ կամ հիվանդ նորածինների ծնողները շտապում էին նրանց «մեռոնաջրել»:

Երեխային մկրտելուց առաջ տատմերը լողացնում էր և պահում ձեռքերի վրա, քահանայի առջև: Քահանան բացելով սուրբ մեռոնի սրվակը, բերանակալը թաթախելով մեռոնի մեջ, կատարում էր հետևյալ կարգը. մեռոնը քսում էր նախ երեխայի բերանին և ասում՝ «լինես բարեխոս»,

քսում աչքերին՝ «լինես բարետես»,
ճակատին՝ «լինես բարի մտածող»,
ականջներին՝ «լինես բարին լսող»,
սրտին՝ «լինես բարեսիրտ»,
ձեռքերին՝ «լինես բարեգործ»,
ոտքերին՝ «լինես բարեքայլ»,
պորտին՝ «լինես բարի ծնունդ»,
թիկունքին՝ «թիկունքդ միշտ ամուր լինի»:

Ապա տատմերը երեխային բարուրում ու հանձնում էր քավորին:

Քավորը երեխային պահում էր ձեռքերի վրա:

Քահանան մի զույգ մոմ էր վառում, տալիս քավորին և հարցնում.

– Քավոր, երեխան ի՞նչ է պահանջում սուրբ մկրտությունից, սուրբ խաչից, սուրբ ավետարանից:

– Երեխան խնդրում է հավատք, հույս, սեր,- պատասխանում էր քավորը:

Կնունքի ծիսակատարությունն ավարտելուց հետո երեխայի մայրը ծնկի էր գալիս քավորի առջև, համբուրում նրա ձեռքերը և գիրկն ընդունում երեխային:

Եղել են դեպքեր, որ թուրքերը իրենց մտերիմ հայերին քիրվա են նշանակել որդիների թլփատման ժամանակ:

Միաժամանակ եղել են հայեր, որ իրենց երեխաների մկրտության քավոր են ընտրել թուրք ծանոթներին:

Նեննի (ճոճ). ծննդկանը մի քանի շաբաթ երեխային իր ծոցում պահելուց հետո քնեցնում էր «նեննու» վրա:

Տան կենտրոնական և պատի մոտի սյուներից երկու պարան էին կապում, դրանց կենտրոնում փոքր կարպետ, ջվալ կամ մի այլ գործվածք փաթաթում, հետո պարանների միջև՝ երկու տեղ փայտիկներ ամրացնում, որպեսզի բաց տարածություն ստացվեր: Այդ մասում, կարպետի վրա, փոքրիկ ու փափուկ անկողին էին պատրաստում և երեխային դնելով այնտեղ՝ օրորում:

Ուրուրունց (օրորոց). Ղարադաղում օրորոցները նման են եղել Հայաստանի շատ գավառներում տարածվածներին, որոնք պատրաստում էին հյուսն վարպետները:

Այն նստում էր երկու աղեղնաձև փայտերի վրա, հանգիստ օրորվելու համար վերևում ունենում էր երկու կամարաձև փայտ, միացված օրորոցի ոտքերին: Վերևում կամարները լծակով միանում էին: Լծակից կախում էին գույնզգույն ուլունքների շարաններ, արծաթե, պղնձե բոժոժիկներ, զանգակներ և հմայիլներ:

Օրորոցի հատակը կենտրոնում կլոր անցք ունեցող տախտակ էր, որի վրա դոշակ էին դնում: Դոշակի մեջ հաճարի թեփ էին լցնում, չխոնավանալու համար: Ներքնակի կենտրոնում անցք էր լինում, որով անց էին կացնում ուղիղ, չիբուխածև «լոլակը»՝ երեխայի միզելու համար: Լոլակի տակ, հատակին դնում էին պղնձե կամ փայտե աման, որպես միզաման:

Լոլակի վերին մասը լինում էր երկու ծևով՝ տղաներինը կլոր, իսկ աղջիկներինը՝ երկարավուն: Երեխաներին ցավ չպատճառելու համար լոլակին փափուկ շորեր էին փաթաթում:

Երեխաներին փափուկ շորերում բարուրում էին և դնում օրորոցում: Գլխատակին բամբակից կամ փետուրից բարձ էին դնում, բարձի տակ՝ որպես հմայիլ, նապաստակի պոչ, նկատի ունենալով, որ նապաստակը քնասեր կենդանի է, երեխան էլ քնասեր կդառնա:

Օրորոցի մի կողմի վրա մատի հաստությամբ ծիպոտ էին անցկացնում ու թելերով կապում: Ճիպոտին մեկ թիզ լայնությամբ երկու երկար կտոր էին ացկացնում, երեխայի վրայով տանում օրորոցի մյուս կողմում առանձին փայտիկներով կապում: Դա կոչվում էր «կուպանե» (հավանաբար՝ կապել բառից): Դրանցից մեկով երեխայի ոտքերն էին կապում, մյուսով՝ ձեռքերը, որպեսզի օրորոցից չընկներ:

Խոխան ծծավ ա դըռած. երբեմն պատահում էր, որ երեխամայրը անկողնում կամ օրորոցի մոտ, երեխային կրծքով կերակրելիս անզգուշաբար քնում էր՝ կուրծքը երեխայի բերանում:

Նման դեպքում մայրը ծանրանալով երեխայի վրա՝ շնչահեղձ էր անում:

Թերզարգացած երեխաներ. պատահում էր, որ թերզարգացած, ուշ քայլող, լեզուն ուշ բացվող և այլ արատներ ունեցող երեխաներ էին լինում: Նման երևույթներ, եթե եղել էին նաև նախնիների մոտ, համարում էին տոհմական:

Ծնողներ կային, որ նման դեպքերում անհանգստանում էին և դիմում գրբացության, բախտագուշակության, երեխային տանում էին սրբավայրեր, մատաղ կտրում, խնդրում աստծուն, աղոթքներ անում և այլն:

Երեխայի սնվելը. ըստ տեղի ադաթի՝ երեխան պետք է մոր կաթով սնվեր ինն ամսից մինչև մեկ տարի:

Արհեստական սննդով երեխային կերակրելն ու մի քանի ամսում մոր կրծքից կտրելը մեղք էր համարվում:

Երբեմն, մոր հիվանդության կամ հղիության պատճառով, անհրաժեշտություն էր առաջանում երեխային կրծքից կտրել: Նման դեպքերում երեխային կերակրում էին միայն կովի կաթով:

Հիշվում էին դեպքեր, որ երեխան մոր կաթով սնվել է 8-10 տարի:

Պատմում էին, որ «խանագահցի Դերանց Բալան եքքա (մեծ) տղա լալ, չոլումը տավար պիիս տեղը, որ մորը կաթը մընն լալ ինգիս՝ ետ լալ դըռնալիս, գյուլիս տոն, մորը ծիծը ուտիս, ալլա՝ ետ դըռնալիս, գինիս տվարեն կոշտը»:

Պատահում էր, որ հիվանդության պատճառով գեղեցիկ ու փարթամ երեխան նահանջ էր ապրում, գնալով նիհարում ու գունատվում:

Պառավ կանայք գուշակում էին, որ «խոխան քաշկափոխ ա դըռած», այսինքն՝ փարթամ ու գեղեցիկ երեխային սատանաները փոխել են իրենց տգեղ ու հիվանդոտ երեխայի հետ:

Ծնողները հավատում էին նրանց, հուզվում ու մտահոգվում, թե ինչպես կարելի է վերադարձնել իրենց երեխային:

Գուշակները հաստատ համոզված էին, որ «քաշկերը» բնակվում են թուրքերի գերեզմանոցներում:

Խորհուրդ էին տալիս երեխային տանել՝ դնել թուրքերի գերեզմանոցում, հեռվում կանգնել ու ասել. «Քաշկը-քաշկը, իմ խոխան բեր, քու խոխան տար»: Քաշկերը տեղեկանալով երեխայի փոխանակման գաղտնիքի բացահայտման մասին, երեխային փոխում էին: Ըստ գուշակների՝ փոխելը հասկացվում էր երեխայի լացով: Երեխան, որ լացում է, ուրեմն փոխանակումը կատարված էր, պետք էր շտապ գնալ ու նրան վերցնել:

Պատմում էին, որ 1910-11թթ., խանագահցի Աբունց Հաբու երեխան քշկափոխ է եղել: Նրան դրել էին մոտակա թրքաբնակ գյուղի գերեզմանո-

ցում և ծայն տվել, որ քաշկերը երեխային փոխեն:

Քիչ ժամանակ անց, լսելով երեխայի աղիողորմ լացն ու ճիչը, ուրախացած վազել են երեխային վերցնելու և տեսել, որ նրան գայլը հոշոտում է: Գայլը, նկատելով մոտեցող մարդկանց, երեխային բերանն էր առել ու փախել:

Կճախաշ (ատամհատիկ). ամեն ծնողի մի նոր երջանկություն է պատճառում, երբ երեխան ատամ է հանում՝ «կըռենք ա հնիս»:

Երեխայի առաջին ատամ հանելը Ղարադաղի հայ կանայք նշանավորում էին կճախաշ եփելով:

Ատամհատիկը եփում էին մեծ պղնձով, յոթ տեսակ հատիկից՝ ցորեն, սիսեռ, ոսպ, լոբի, մաշ, եգիպտացորեն և չամիչ. ավելացնում էին նաև հոնի կամ սալորի թթու լավաշ:

Ատամհատիկը տոհմի և հարևան կանանց ու երեխաների համար յուրահատուկ զվարճության ծես էր համարվում:

Արարողությանը մասնակցում էին հիմնականում կանայք ու երեխաները: Կանայք երեխային նվեր էին տանում՝ արախչի, յախա, գուլպա, հագուստ, աչքահուլունք և այլն:

Տան կամ սրահի կենտրոնում կարպետ էին փռում, սփռոց փռում, որի վրա նստեցնում էին երեխային ու փոքրիկ հյուրերին:

Երեխայի առջև լցնում էին յոթ տեսակ խաղալիք՝ «ալաթ» (արոր), «ղալամ» (գրիչ), «թիվանք» (հրացան), «կուճի մհակ» (փոքր ձեռնափայտ), մկրատ, «կուճի խոխա» (խրծիկ) և «ավիլ» (ավել):

Երեխայի վերցրած խաղալիքով գուշակում էին, թե նա ինչ զբաղմունքի տեր մարդ կդառնա.

արորը վերցնողը կդառնար «ռանչպար» (հողագործ),
ղալամը՝ «միրզա» (գրագիր),
հրացանը՝ վըրսկան (որսորդ),
կուճի մհակը՝ «չոբան» (հովիվ),
մկրատը՝ «դարզի» (դերձակ),
կուճի խոխան՝ բազմազավակ,
ավելը՝ տնարար, մաքրասեր:

Ամեն ինչը յոթ հատից էին ընտրում, քանի որ յոթը բարի ու հաջողության թիվ էր համարվում:

Գուշակություն կատարելուց հետո քամած ատամհատիկը լցնում էին երեխայի գլխին: Շուրջը նստած երեխաները վրա էին տալիս, հավաքում, ուտում ու զվարճանում:

Հավաքված կանանց ատամհատիկը մատուցում էին պնակներով. բաժին էին ուղարկում նաև գյուղի պառավ կանանց:

Երեխայի սուտ վաճառք. այն ծնողները, որոնց երեխաները մահանում էին մինչև մեկ տարեկան դառնալը, դիմում էին հետևյալ հմայական միջոցին:

Երեխայի հայրը, տատը կամ մեկ այլ հարազատ, երեխային գրկում էր վաղ առավոտյան դուրս բերում տնից: Բախտի բերումով ով որ հանդիպեր՝ հարազատ, ծանոթ, անծանոթ, տղամարդ թե կին, երեխային հանձնում էր նրան ու ասում.

– Խոխան ծխիլիսմ:

Հանդիպած մարդը սիրով գրկում էր երեխային և ասում.

– Խոխան ապրած կենա, աստուծեն մտեն մնա, հարավ-մարավ մըծանա:

– Դե, խնդրիսմ՝ խոխան ծախս, իս օնմ,- ասում էր երեխա հանձնողը ու գրպանից հանում, նվիրում մի արծաթ դրամ:

– Խոխեն աստված երկար կյանք տա, բախշի ծնուղնոն, իս ալ՝ քավեր դըռնմ,- պատասխանում էր օտարականը, վերցնում դրամը, երեխային հանձնում տիրոջն ու համածայն ադաթի՝ դառնում երեխայի քավորը:

Երեխայի սուտ վաճառքը թուրքերի մոտ. Նման դեպքերում թուրքերը դիմում էին հետևյալ միջոցին. եթե իրենց գյուղ հայ էր գաիս, կանայք երեխային տանում էին նրա մոտ ու խնդրում, որ նա աջ ոտքը բարձրացնի ու կամարածև պահի:

Հայը կատարում էր նրանց խնդրանքը:

Կանացից մեկը երեք անգամ երեխային անց էր կացնում նրա ոտքի տակով և հանձնելով հային, ասում.

– Երեխան նվիրում եմ քեզ:

Նա բարեմաղթանքներով գրկում էր երեխային:

Թուրք կինը արծաթ մի դրամ նվիրում էր նրան ու խնդրում, որ երեխային վաճառի իրեն:

Հայը նույն բարեմաղթանքներով երեխային վերադարձնում էր թուրք կնոջը:

Երեխաների անվանման կարգը. մկրտության ծիսակատարությունն ավարտելուց հետո քահանան երեխայի ծնողներին հայտնում էր, թե այդ օրը մկրտված երեխաներին ինչ անուններ են սահմանված:

Ծնողներին ազատ իրավունք էր վերապահվում ընտրել քահանայի առաջարկած անուններից մեկը կամ առաջարկել իրենց նախատեսած որևէ անուն, որը քահանան գրանցում էր մատյանում:

Կնքահայրը նույնպես իրավունք ուներ երեխային տալ իր ընտրած կամ ուխտած անունը:

Հարգի սովորություն էր երեխային անվանել տոհմի անվանի մարդկանց՝ պապի, հոր, հորեղբոր, օտարության մեջ երիտասարդ տարիքում մահացած եղբոր, որդու, ազգականի անուններով:

Եթե հղիության մեջ գտնվող կնոջ ամուսինը մահանում էր, տղա ծնվելու դեպքում անվանում էին հոր անունով, բայց անունը չէին տալիս, այլ դիմում էին Հայրիկ, Դադի կամ Դադաշ ձևերով, որ թուրքերեն նշանակում է հայր:

Պապի անունը տալու դեպքում, դիմում էին Բաբա ձևով, հորեղբոր անունը վերցնելիս՝ Ամիջան, փոքր տարիքում մահացած երեխայի անունը վերցնելիս՝ Բալա և այլն:

Եթե կինը մահանում էր ծննդաբերության ժամանակ, և երեխան աղջիկ էր լինում, մոր անունով մկրտելով, դիմում էին Նանաջան, Նանի, Նանասի և այլ ձևերով:

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայ տղամարդկանց հատ ու կենտ անուններ էին համընկնում թուրքերի անունների հետ, իսկ կանանց անունների կեսից ավելին համընկնում էին:

Օրինակ՝ Վարդան (Մարդան), Մըսրոբ (Միսրով), Մովսես (Մուսա), Հովսեփ (Յուսուֆ), Իսրայել (Իսրափուլ), Ջհան, Ջհանգիր (Ջհան, Ջհանգիր), Իսախան, Իսաջան (Իսախան, Իսաջան):

Նույն անուններն ունեին գավառի թուրք, քուրդ, ղարաչի, թաթար, շամլու ազգության կանայք՝ Հուրի, Հուրզադ, Շահդանա, Սոնա, Նարգիզ, Նուբար, Ջառղալամ, Գյուլի, Սավգյուլ, Նառգյուլ, Դաստագյուլ, Բողչագյուլ, Նարինգյուլ, Շամամ, Թամամ, Նուբար, Մինա, Մարալ, Ջեյրան և այլն:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ

Աբգար - Ափկար
Աբել - Աբել
Աբիսողոմ - Աբիսողոմ
Աբրահամ - Ափըրհամ, Ափի
Ադամ - Ադամ
Ազարիա - Ազըրյա

Աթանես - Աթանես
Ալեքսան - Ալիքսան
Աիարոն - Աիարոն
Աղաբեգ - Աղաբեգ
Աղաջան - Աղաջան
Աղասի - Աղասի
Աղավել - Աղավել
Ամիջան - Ամիջան
Ամուն - Ամուն
Անդրանիկ - Անդո, Անդի
Անդրեաս - Անդրյաս
Անթևան - Անթևան
Անուշավան - Անուշավան
Աշոտ - Աշոտ, Աշի
Առաքել -Առաքել
Առուշան - Առուշան

Բաբա - Բաբա
Բաբախան - Բաբախան
Բաբկեն - Բաբգեն
Բագի - Բագի
Բագրատ – Պակրատ, Պակի
Բադալ – Բադալ
Բալա - Բալա
Բալաբեգ - Բալաբեգ
Բալասան - Բալասան

Գաբրիել – Կափրիել, Կափի
Գալուստ – Կալուստ, Կալոն
Գասպար – Քյասպար
Գարեգին - Գարեգին
Գարսևան - Գարսո

Դանիել – Տընել
Դավիթ - Դավութ, Դովի

Եգան - Եգան

Ասլան - Ասլան
Ավագ - Ավեք
Ավետիս - Ավետիս, Ավետ, Ավո
Արա - Արա
Արամ - Արամ
Արզուման - Արզուման
Արիստակես - Առըսի
Արծրուն - Արծրուն
Արմենակ - Արմինակ
Արշակ - Արշակ
Արշավիր - Արշավիր, Շավի
Արսեն - Արսեն
Արտաշես - Արտաշես, Արտաշ
Արտավազդ - Արտավազդ
Արտեմ - Արտեմ

Բախտիար - Բախտիար
Բաղիշ - Բաղիշ
Բաղրամ - Բաղրամ
Բայանդուր - Բայանդուր
Բայլար - Բայլար
Բարխուդար - Բարխուդար
Բարսեղ - Բարսի
Բենիամին - Բենո
Բուդաղ - Բուդաղ

Գյուլբուդաղ - Գյուլբուդաղ
Գրիգոր - Գյուրուքյուր, Գյուքի
Գուրգեն - Գուրգեն
Գևորգ - Կևորք, Կևի

Դարչո - Դարչո

Եդիգար - Եդիգար

Եզնիկ - Եզնիկ
Եղիազար - Եղազար, Եղո
Եղիշե - Եղիշ

Ջավեն - Ջավեն
Ջարզանդ - Ջարզանդ

Թադևոս – Թաթոս
Թաթուլ – Թաթուլ
Թավադ - Թավադ
Թովմաս – Թումաս, Թումի

Ժիրայր – Ժիրայր, Ժորա, Ժիրի

Իշխան – Իշխան, Իշի
Իսահակ – Իսահակ

Լազար – Լազար
Լալազար – Լալազար

Խաչատուր – Խաչատուր, Խաչի, Խեչան
Խոսրով – Խոսրով

Ծերուն – Ծըրոնի

Կարանի – Կարանի
Կարապետ – Կարաբետ,Կաբի

Հաբեթ – Հաբետ
Հայկ – Հայկ
Հայկազուն – Հայկազ
Հայրապետ – Հարաբետ, Հաբի
Հայրիկ – Հայրիկ
Հակոբ - Ակուփ
Հակոբջան - Ակուփջան

Եսայի - Եսայի
Երջանիկ - Երջո
Երվանդ - Երվանդ

Ջաքարիա - Ջաքյարա, Ջաքի
Ջոհրապ - Ջոհրաբ

Թորգոմ – Թորգոմ
Թորոս – Թորոս
Թուման – Թուման
Թևան – Թևան

Իսրայել – Իսրայել

Լևոն – Լևոն, Լևի

Խորեն – Խորեն
Խուրշուդ - Խուրշուդ

Կոստանդին – Կոստո

Համբարձում – Համբարձում, Համբի
Հարազատ - Հարազադ
Հարություն – Հարութ, Հաթի, Հութի, Թունի
Հովակիմ – Օվակիմ
Հովասափ - Հուվասափ

Հովհաննես – Օվանիս, Ավանես, Օվի
Հովնաթան – Հովնաթան
Հովսեփ - Ուսուփ, Ուսի

Ղազար – Ղազար
Ղասում – Ղասում
Ղարիբ - Ղարիբ

Մամիկոն – Մամիկոն
Մայիս – Մայիս
Մանվել – Մանվել
Մանուկ – Մանուկ
Մանուչար – Մանուչար
Մարգար – Մարգար
Մարտիրոս – Մարդուրուս, Մադի
Մարութ – Մարութ
Մելիք – Մելիք
Մելքոն – Մալքյում
Մեխակ – Մեխակ
Մեսրոպ - Մեսրոբ

Նազար – Նազար
Նավասարդ - Նըվասարդ
Նարին – Նարին
Նիկալա - Նիկալա, Նիկոլ

Շահբազ - Շահբազ
Շահեն - Շահեն
Շամիր – Շամիր
Շավարշ – Շավարշ, Շավի

Ոսկան – Ոսկան

Պապիկ – Պապի, Պապոն

Հրահատ – Հրահատ
Հրանտ – Հրանտ
Հունան – Հունան

Ղուկաս – Ղուկաս
Ղևոնդ - Ղևո

Մինաս – Մինաս
Միրզա - Միրզա
Մկրտիչ – Մկրտիչ, Մակրտեչ, Մակի
Մնացական – Մըցական, Մանցի
Մովսես – Մովսես
Մուխայել – Մուխայել, Մուխան
Մուշեղ – Մուշեղ
Մուշղամբար – Մուշղամբար
Մուրադ - Մուրադ

Նիկողոս – Նիկողոս
Նշան – Նշան
Նորայր – Նորի

Շմավոն – Շմավոն

Պատվական – Պատվական, Պատի, Պատո
Պարույր – Պարույր

Ջաբրայիլ – Ջաբրայիլ
Ջավադ - Ջավադ
Ջիվան – Ջիվան

Ռաֆայել – Ռափայել
Ռուբեն – Ուռուբեն

Սահակ – Սահակ
Սամվել – Սամվել, Սամի
Սավադ - Սավադ
Սարուխան – Սարուխան
Սաֆար – Սափար
Սեյրան – Սեյրան

Վազգեն – Վազգեն
Վահան – Վահան
Վաղարշակ – Վաղի
Վանո – Վանո
Վաչագան – Վաչագան, Վաչո
Վարազդատ – Վարո

Տաճատ – Տաճատ

Ցոլակ – Ցոլակ

Փաշա - Փաշա

Քերոբ - Քերոբ
Քյարամ – Քյարամ

Օհան – Օհան, Ուհի

Ֆարհադ - Փարհադ

Պետրոս – Պըտի, Պետրուս
Պիղատոս – Պիղատոս
Պողոս – Պուղուզ

Ջհան – Ջհան
Ջհանգիր – Ջհանգիր
Ջումշուդ - Ջումշուդ

Ռուսեն – Ուռուսեն
Ռուստամ – Ըռըստամ

Սերոբ - Սերոբ
Սիմոն – Սիմոն
Սմբատ – Սումբաք, Սումբի
Սոկրատ – Սոկրատ, Սոկի
Սուրեն – Սուրեն, Սուրի

Վարդազար – Վարդազար
Վարդան – Վարթան
Վարդգես – Վարդկես
Վարշամ – Վարշամ
Վիրապ – Վիրաբ

Տարիել – Տարիել

Փարսադան – Փարսադան

Քոչար – Քոչար

Օհանջան – Օհանջան

ԿԱՆԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ

Ալմաստ - Ալմաստ
Աղուն - Աղուն
Անահիտ - Անայի
Անի - Անի
Աննման - Աննման
Անուշ - Անուշ
Աշխեն - Աշխեն
Աստղիկ - Աստղի

Բավական - Բավական

Գայանե - Գայանե
Գյուլգյազ - Գյուլգյազ
Գյուլզարդ - Գյուլզարդ
Գյուլի - Գյուլի

Դաստագյուլ - Դաստագյուլ
Դիլբար - Դիլբար, Դիբի
Դշխուհի - Դշխուհի

Եղսապետ - Եղսապետ, Եղսա
Եվա - Եվա

Ջառղալամ - Ջառղալամ,
Ջառի
Ջառվարդ - Ջառվարթ

Էմուշ - Էմուշ

Թագուհի – Թագուհի,
Թաքուշ, Թավքի
Թամամ – Թամամ, Թամի,
Թամար

Արաքսի - Արաքսի
Արեգնազ - Արեգնազ
Արծվիկ - Արծվիկ
Արմանուշ - Արմանուշ
Արշալույս - Արշալույս
Արփի - Արփի
Արուսյակ - Արուսյակ
Արևհատ - Արևհատ

Բուրաստան - Բուրաստան

Գյուլնազ - Գյուլնազ
Գյուլնարա - Գյուլնարա
Գոհար - Գոհար

Դոնարա - Դոնարա
Դունյա - Դունյա

Երանուհի - Երանուհի

Ջարդաթ - Ջարդաթ
Ջարուհի - Ջարուհի
Ջվարդ - Ջվարթ

Թառլան – Թառլան, Թառի
Թելլու – Թելլու

Իլիզա - Իլիզա, Իլի

Լուսինե - Լուսի

Խաթայի –Խաթայի
Խոնարհ – Խոնար

Ծաղկանուշ – Ծաղկանուշ

Հազարվարդ - Հազարվարթ
Համեստ – Համեստ
Հայաստան – Հայաստան
Հայկանուշ – Հայկանուշ
Հասմիկ – Հասմիկ

Մայրանուշ –Մայրանուշ
Մանուշակ – Մնեշակ
Մարիամ – Մարյամ, Մարի

Յուղաբեր – Յեղի

Նաբաթ – Նաբաթ
Նազլու – Նազլու, Նազիկ
Նախշում – Նախշուշ
Նանաջան – Նանաջան,
Նանի, Նանասի
Նարգիզ - Նարգիզ
Նոյեմ – Նոյեմ

Շահանդուխտ – Շահանդուխտ
Շահդանա - Շահդանա, Շահի
Շամամ – Շամամ
Շարմաղ – Շարմաղ

Ոսկի – Վրսկի

Իսկուհի – Իսկուհի, Կուհի

Խումար – Խումար

Ծովինար – Ծովնար, Ծովի

Հեղինե - Հեղի, Հեղուշ
Հերիքնազ - Հերիքնազ
Հռիփսիմե - Հռռումսիմա
Հուրզադ - Հուրզադ
Հուրի – Հուրի

Մարջան – Մարջան
Մինա - Մինա

Նոյեմզար – Նոյեմզար
Նորամայր – Նորամայր, Նորա
Նվարդ - Նվարթ, Նըվի
Նուբար – Նուբար
Նունուֆար – Նունուֆար,
Նունիկ
Նուշի – Նուշի

Շողեր –Շողեր, Շուղի
Շուշան- Շուշան, Շուշի

Չինար – Չինար

Պայծառ – Պայծառ

Ջավահիր – Ջավահիր, Ջավի

Ռեհան – Ռեհան

Սաթենիկ – Սաթենիկ, Սաթի
Սալբի – Սալբի, Սալբինազ
Սանամ – Սանամ
Սավգյուլ – Սավգյուլ
Սարինգյուլ – Սարինգյուլ
Սինամ – Սինամ
Սիրանուշ – Սիրանուշ, Սիրուշ, Սիրուն

Վազգանուշ – Վազգանուշ
Վարդանուշ – Վարդանուշ
Վարդենի – Վարթի
Վարդիթեր – Վարթիթեր

Տիրամայր – Տիրուն

Փերի – Փարի

Քնար – Քնար

Օվսաննա - Օսան

Չեյրան – Չեյրան

Ռոզա - Ռոզա, Օզի

Սոնա - Սոնա
Սրբուհի – Սրփուհի
Սուսամբար – Սուսամբար, Սուսաննա
Սուսաննա - Սուսաննա
Սիրվարդ - Սիրվարդ, Սիվի
Սղաթել – Սղաթել

Վարդիշաղ – Վարթիշաղ
Վարդուհի – Վարթուհի
Վարսենիկ – Վարսենիկ, Վարսի

Ցողեր – Ցողեր, Ցողի, Ցողիկ

Փեփրոն – Փեփրոն

Քրիստինե - Քրիստի

Մականուններ. ղարադաղցիք բարձրահասակ մարդկանց անվանում էին «Երկար լոլոզ», «Շալման», «Ճըղուպուր թափ տըվող», կարճահասակներին՝ «Բուռնուխիչակ» (հավաբնի հենակ), «Սիս-ըռնը քանդուղ» (նկատի ունենալով սիսեռի կարճ ցողունը) և «Հաճար օտուղ» (նկատի ունենալով փորսուղին), լայնաթիկունք, ցածրահասակ, դանդաղաշարժ մարդկանց՝ «Քոլու արջ» և այլն:

Ղարդաղում մարդկանց մականունով դիմելը խիստ վիրավորական էր:

Ներգաղթից հետո ծանոթացա Հայաստանի տարբեր շրջանների սովորություններին: Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի գրեթե բոլոր բնակիչները մականուն ունեն: Զարմանալին այն է, որ նրանք տեր էին կանգնում իրենց մականունին ու հպարտանում դրանցով՝ որպես տիտղոս: Բերենք մի քանի օրինակ. Հիտլեր Համբո, Թափտըղ Համբո, Չալալ Համբո, Ղոլո Համբո, Հոզո Առաքել, Բոզո Երվանդ, Պուլուզ Հրաչ, Դալի Հարութ, Խալիֆա Գեղամ, Կոկոշ Գրիգոր:

Արտասովոր բնավորություններ. ղարադաղցի շատ հայ տղամարդիկ հետաքրքիր ու արտասովոր բնավորություն ունեին: Ընկերոջ, հարևանի, ծանոթ-անծանոթի հետ զրուցելիս, նախքան խոսք ասելը օգտագործել յուրահատուկ մի արտահայտություն:

Օրինակներ Խանագահ գյուղից.

Տեր Եզնիկ քահանա Ոսկանյան.- ***Թո~ւ հա~,*** ըրկե ըշտեղը՞ս լալ գենցած:

Տընյելաց Զաքյարա.- ***Վի լալամ,*** պա քի ասած չը՞մ լալ քշանաց կգյոս կոշտըս:

Սիրյանաց Ավեք.- ***Ուլորում,*** տարեն արաշտ ա անց կացալ:

Ուսուփ ապրուց Հարութուն.- ***Հա~ էլի,*** դուզ մարթը դուզումը կմնա:

Ամուց Ավեք.- ***Ա թարս,*** մոտե եք, քի նըհետ բեն օնըմ:

Դադուց Բագի.- ***Ուրեմը շամ վըրթի,*** աս օր մըր տավարը խի՞ չըս տարալ հանդը:

Դադուց Խալաճ.- ***Ա հատրնս,*** Թարվիզ գինիլուց ինձ տեղյակ կպահըս:

Դադուց Ալեքսան.- ***Զառքեշ քյոփօղլի,*** քու բիրանըմը դուզ խոսքը կավըչնի

Վընեսաց Երվանդ.- ***Վալադ արգինա,*** մըր բաղեն ծերանը դուվը՞ս քաղած:

Շըհումաց Հարաբետ.- ***Նա-հա,*** ջահիլ վախտըս իմ մի վընննը միշտ Բաքու լալ:

Մարդուց Գյուրուքյուր.- ***Հը՛, ստո ա,*** քու թիվանգյը էքուց կսարքըմ:

Կևուց Ղազար. - ***Ուռումի,*** էքուց վընչխընռնեն պետք ա լըղըցրընք:

Աննայուց Մարդուրուս.- ***Մարթ Աստուծ,*** աշխարքեն բենը ոչ միևը գիդա չի:

Ափրամաց Առըսի.- ***Մոք,*** լուսը չըբեցված գենցալըմ մի ճվարան թոզ բերալ:

Աբուց Ուսուփ.- ***Ա հայ,*** էքուց գինիլականըմ Թարվիզ, խոսք օնը՞ս ասի:

Ստըփանաց Ալիքսան.- *խոսք-օրինակ*, մարթ պետք ա ասած խոսքեն տար կանա:

Սիրյանաց Հարութուն.- *խուլասա*, այամըս փոխված ա, աշխարքն ալ նըհետը:

ԾԱՂՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Ղարադաղի հայերը սովորություն ունեին ծաղրական ու զվարճակլի անուններ դնել մարդկանց:

Խանագահիցիներին հարևան գյուղացիներն անվանում էին «մհակ շոռ ըծողնե» (մահակներով զինվածներ), նկատի ունենալով, որ նրանք միշտ պատրաստ էին մահակներով դիմավորել հակառակորդներին, զանազան վեճերի ու սահմանների պահպանման ժամանակ:

Ջորբա (անհնազանդ) խանագահիցիների և հնազանդ, խելոք ղշլաղցիների վերաբերյալ մի գեղեցիկ առակ էին հորինել աշուղները: Ասում էին

«Մամուրը թկիսն խնգիեցեք,

Ջարման քշիսն ղշլղեցեք»:

Մամուրները հարկահավաք տեսուչներ էին, որոնք հաճախ բնակչությունից ապօրինի հարկեր էին պահանջում: Խանագահիցիները հրաժարվում են հարկ տալուց, տեսուչին ծեծում, գյուղից դուրս են քշում: Մամուրները գնում էին Ղշլաղ, վրեժ լուծում նրանցից, ենթարկում դրամական տուգանքի:

Ղուլուդի գյուղում, որ մոտ էր Արաքսին, ձմռանը միշտ ցուրտ քամի էր լինում, որին անվանում էին «սիլյան» (փոթորիկ): Այդ պատճառով նրանց անվանում էին «սիլյան թկծնե»:

Սարդու գյուղի շատ տարածքներ սպիտակագույն հողեր էին, որին անվանում էին «չլա վըղ»: Այդ առումով, Սարդու գյուղի հայերի ծաղրական անունն էր «չլըվղեցե»:

Հասանով գավառակի Նորաշեն գյուղը շատ մոտ էր Հուժի Սուրբ Գևորգ մենաստանին, որտեղ ուխտի էին գնում գրեթե ամբողջ գավառի հայաբնակ գյուղերից:

Նորաշենցիներին ծաղրական անուն տալով ասում էին «մատաղ ուտողնե»:

Դիզմար գավառակում պատմում էին, որ Քեյվանից մի մարդ հյուրընկալվում է իր ծանոթի տանը: Հակառակի պես հացը վերջացած է լինում, կինը գնում է հարևանից երկու լավաշ փոխ առնում, բերում: Տանտիրոջ

երեխան սոված է լինում, մորից մի կտոր հաց է խնդրում: Երեխայի մայրը հացից մի կտոր կտրում, առանձին դնում է սփռոցի անկյունում ու երեխային ասում.

– Օղլ, ամոթ ա, դու սուս արի, ղոնաղը հացն օտի, էս մի կուտոր հացը կտամ քի:

Հյուրը անհամեստ է դուրս գալիս, ուտում է նաև առանձնացրած կտորը: Սոված երեխան, տեսնելով, որ նա հացի այդ կտորն էլ կերավ, հուսահատ գոռում է ու ասում.

– Վայ ազի եք է...ղոնաղը էն մի կոտր հացն ալ ա կերալ, ինձ թողալ քողցած:

Քեյվան գավառակից մի գյուղացի հյուր է լինում Դիզմարի գյուղերից մեկում ու պահանջում ճոխ սեղան բացել, քանի որ հեռու տեղից է եկել ու սոված է:

Երբ նա է հյուրընկալում դիզմարցուն, հաց ուտելիս գրկում է իր փոքրիկ տղային, երկու պատառ հաց ուտում ու, դիմելով երեխային, ասում.

– Իս նա իմ բալան էնքան հացնք կերալ, որ օռալնի եզնը դըռալ, ալ ուտիլիս չընք, որ օտնք, կտրաքնք:

Ասում է ու սփռոցից ետ քաշվում: Ճարը կտրած դիզմարցին սոված ետ է քաշվում սփռոցից, մնում սոված:

Քեյվանցու նման անշնորհքության համար, դիզմարցին որոշում է վրեժխնդիր լինել: Մի անգամ էլ՝ քեյվանցու տանը հյուրընկալության ժամանակ, տանտերը երկու պատառ ուտելուց հետո սփռոցից հեռանալով որդուն ասում է.

– Իս նա իմ բալան էնքան կերալնք, որ եզննք դըռալ, ալ բոլա օտնք, փուրնես կճղվի:

Դիզմարցին, երեսը պնդելով, պատասխանում է.

– Ղոնախ ա, ուզիսս եզնը դըռ, ուզիսս դավա դըռ, էտ քու բենն ա: Իս երկար հղեյմ եկած, հալա ուտիլավ դանա յալ չըդըռած, մարթմ, պետք ա օտմ, քուշտանամ: Հաց բերեք, դիրեք սոփրոմը, սոփրան լիքը պիեցեք: Մարթը եշալ ա կնգանը իրեսեն, կնեգը՝ մարթեն, լուզվենեն մանցալ ա կապ ինգյած:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Մինչև 1946թ. գաղթը Ղարադաղում ոչ բժիշկ է եղել, ոչ էլ դեղատուն, բացառությամբ մի բժշկի, որը 1936թ. հաստատվեց Խանագահ գյուղում:

Ըստ նրա պատմածի՝ Արևմտյան Հայաստանից էր, անունը՝ Յունուս: Տեղացիները նրան անվանում էին «դոխտուր Յունուս»: Բժիշկը խուլ էր և վատ էր տեսնում, այս առումով, տեղացիները հեգնանքով հիշում էին ժողովրդական առածը. «Քաչալը, որ դեղ սարքող ինի առաջ իր գյլխեն հետե դեղ կանի»:

Ժողովուրդն ավելի շատ հավատում էր հեքիմներին, քան նորեկ բժշկին: Նրան դիմում էին միայն ծայրահեղ դեպքերում, երբ հիվանդը հայտնվում էր անհուսալի վիճակում: Նրան դիմում էին նաև գավառի մյուս գյուղերի հայ և թուրք բնակիչները:

Ղարադաղը համատարած անգրագիտության գավառ էր: Գրագետ ուսուցիչներ չկային: Միակ գրաճանաչը համարվում էր գյուղի քահանան, որը եկեղեցուն կից դասարան էր բացում, որտեղ երեխաները սովորում էին նոյեմբերից մինչև փետրվար:

Մարդիկ աստծո հետ էին կապում իրենց գոյությունը. բնության անբացատրելի երևույթները վերագրում էին գերբնական ուժերին, հավատում սատանայի գոյությանը:

Հեքիմ. այդպես էին անվանում այն մարդկանց, որոնք իրենց նախնիներից ժառանգած բուժելու փորձ ունեին:

Բուժումը կատարում էին փորձառու տղամարդիկ ու պառավ կանայք՝ բույսերից պատրաստած դեղերով ու գուշակություններով:

Ղարադաղի բոլոր ազգություններն այն խոր հավատն ունեին, որ մարդ ծնվում է աստծո հրամանով, ապրում աստծո ողորմածությամբ ու մահանում աստծո կարգադրությամբ: Մահվան վերաբերյալ ամեն ղարադաղցի՝ ամենայն լրջությամբ կպատասխաներ. «Աստված մարդու ճկատեն հինչ որ գիրած ա, էն ալ կկատարվի: Ճկատեն գիրածը ոչ կինա փոխիլ, ոչ ալ կինա ճինջիլ»:

Բարձր ջերմությունը բուժում էին հիվանդին տալով դաղձով թեյ, առաջարկում հելաթ (բրնձի ճաշ, հոնի կամ սալորի չրով) որպես քրտնաբեր միջոց: Մրսածին (սաթրջամ) ուրցով թեյ էին տալիս:

Ուժեղ մրսած հիվանդի թիկունքին «քյուֆ» էին գցում: Դրանք կավե բաժակածև անոթներ էին:

Հեքիմը բամբակի մի կտոր էր դնում դրանց հատակին, մոմով այրում և արագորեն ամրացնում հիվանդի թիկունքին: Բամբակն այրվելով՝ օդը հանում էր անոթից, և այն ամուր կպչում էր մարմնին: Որոշ ժամանակ անց դրանք պոկում էին: Եթե անոթի կպած տեղը կարմրում էր, հույս էին տալիս, թե հիվանդը կառողջանա, իսկ կապտելու կամ սևանալու դեպքում՝ թիկունքից արյուն էին հանում: Սուր ածելիով կտրվածք էին անում, արյուն բաց թողնում ապա քյուֆը շրջելով դադարեցնում արյունահոսությունը: Եթե հիվանդը մահանում էր հեքիմը մեղք չուներ. դա համարում էին ճակատագիր:

Երկարատև գլխացավ ունեցողին պառկեցնում էին հատակին ու ճակատին «պոզ գցում»:

Հեքիմը կովի եղջյուրի ծայրը, մոտ 5սմ երկարությամբ կտրում էր, հղկում, լավ հարթեցնում ու ծայրին շատ փոքր անցք բացում: Նա լեզվի ծայրին մեղրամոմի փոքր մասնիկ էր դնում, հիվանդի ճակատի կենտրոնին էր դնում եղջյուրից պատրաստած գործիքը, ծծում նրանում եղած օդը, որից հետո, մեծ վարպետությամբ բերանում պահած մոմը լեզվով ամրացնում եղջյուրի անցքին, որպեսզի օդը ներս չթափանցեր: Այսպիսով եղջյուրը ամուր կպչում էր ճակատին: Որոշ ժամանակ անց այն պոկում էին: Եթե ճակատը կարմրում էր, ուրեմն գլխացավը կանցներ, եթե կապտեր՝ արյուն էին վերցնում:

Կար գլխացավի բուժման մեկ այլ միջոց. յոթ տեսակ վայրի բույսեր (աղինջ, ավելուկ, ժեփոռ, դաղձ, ուրց, մանուշակ և պուտպուտ) էին հավաքում, լցնում պղնձի մեջ ու եփում: Հիվանդի գլխին մեծ ծածկոց էին գցում, և պղնձի բերանը բացելով, գոլորշին ուղղում դեպի հիվանդը: Նա դրանից լավ քրտնում ու գլխացավն անցնում էր:

Հոդացավ ունեցողին ամռան շոգին պառկեցնում էին ավազի մեջ մինչև լավ քրտներ: Հիվանդ հոդերը ծեծում էին եղինջի ցողուններով:

Ցավող աչքի մեջ երեխամայր կինը իր կաթից կթում էր: Խորհուրդ էին տալիս նաև աչքը մեզով լվանալ:

Թարախային ուռուցքը, որը չէր բացվում, կրակի վրա տաքացրած ճախարակի իլիկով ծակում էին:

Ոսկորի ջարդվածքը բուժելու համար կապույտ գույնի թղթի վրա հավասարաչափ սփռում էին խնկի մանրուք, սպիրտով խոնավացնում ու կապում կոտրվածքին:

Կոկորդի ուռածության դեպքում, հիվանդին թթու ուտելիքներ էին տալիս, հոնի կամ շլորի չիրը թրջում էին, կորիզները հանում, պատրաստում համասեռ զանգված ու կտորի վրա քսելով՝ կապում կոկորդին:

Ղարադաղում առանձնապես վարակիչ հիվանդություններ չկային:

Մանկական հիվանդություններից տարածված էին «ծաղեգ» (ծաղիկ), «կրմրոկ» (կարմրուկ), «կալօռուց» (կոկորդի ուռուցք) և «ըշկացավ» (աչքացավ) հիվանդությունները:

Կարմրուկն ու ծաղիկը ամեն գարնան անարգել ու անխնա հնձվորի նման տանում էին հարյուրավոր երեխաների դեռատի կյանքը:

1938թ. գարնանը 29 ընտանիքից բաղկացած Ղուլուդի գյուղում ծաղիկ հիվանդությունը խլեց 38 մանկան կյանք: Նմանապես, ամեն տարի ջերմախտից մահանում էին Արաքսպար հովտի քուրդ և թաթար հարյուրավոր երեխաներ:

Մարդը բողոքում էր «կողքս ծկիս ա», «փորս ցվիս ա», «գյուլոխս ցվիս ա», բայց դրանք վերագրում էին մրսելուն, բուժման հիմնական միջոց համարելով քրտնաբերությունը:

Խեղանդամներ, լուսնոտներ ու հոգեկան հիվանդներ շատ հազվադեպ էին լինում: Նմաններին համարում էին աստծո կողմից պատժվածներ:

Նրանց փրկության համար դիմում էին գրբացության, սրբավայրեր էին տանում, մոմ վառում, մատաղ կտրում և այլն:

ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔ

Հավատում էին, որ հոգին մարդու շունչն է, մարդը գոյություն ունի հոգով: Երբ հոգին բաժանվում և հեռանում է մարդուց, նա դադարում է ապրելուց ու գոյություն ունենալուց:

Երազում հանգուցյալ տեսնելը բացատրում էին տան նկատմամբ հոգու կարոտով, ժառանգներին հանդիպելու ցանկությամբ: Երազների շուրջ գրեթե բոլորը գուշակություններ էին անում, որոշում հանգուցյալին երազում տեսնելու խորհուրդը, համարում, որ հոգուն բաժին հաց չեն տվել, սոված է, աչքը թողել է ունեցվածքի վրա: Նման դեպքում հարկավոր էր հոգու հաց տալ, մատաղ անել, բաժանել աղքատներին, մոմ վառել սրբավայրերում և նման միջոցներով հանգուցյալի չար ոտքը կտրել օջախից:

Եթե երազում հանգուցյալ տեսնելը ընտանիքին անսպասելի հաջողություն էր բերում, նրա հոգու համար մատաղ էին անում, սրբավայրում մոմ վառում, ողորմի տալիս:

Ղարադաղում ավանդույթ կար ժառանգներին դաստիարակել բարեխոս ու բարերար, որպեսզի օջախի հանգուցյալներին ողորմի տան: Նման նպատակով շնորհաշատ մարդիկ աղբյուր էին շինում, քանդված ճանապարհներ բարեկարգում, ծառ տնկում և նման բարեգործություններ կատարում՝ ի շահ իրենց օջախների ննջեցյալների հիշատակի:

ՄԱՀ ԵՎ ՀՈԳԻ

Ղարադաղցի հայերը հավատում էին, որ հոգին գոյություն ունի. «Պա որ հոքի գոյություն չօնի, մարքը հո՞ւնց ա ըպրիլիս: Աստված, որ մարքեն ըստեղծմ ա՝ հոքին ալ նհետը ըստեղծմ ա: Պա խե՞յն ըսիս՝ աստոծ հոքին հանալ ա: Աստոծեն հրամանավը, որ մարք մռնիս ա հոքին աստուծենն ա, հոքին տնիս ա: Աստոծեն կուշտեն սուրփ հոքիները օմեն մի հոքու նհետ առանձին առանձին դատաստանն նստիս: Ըստուգիսն, դինիս քշեռքմ քշռիլիս՝ գիդալիս, որ էդ հոգին ըշխարքմս հինչուր ա ապրած: Թա չար ա իլած, փիս բենր ա արած, ուրեշու տոն ա քանդած, նամարդութուն ա

արած իդի հոքվենուն չրչրիսն, օղծու դայիշավ թկիս, եռը եկած կոպրը երե ըծիս, կրակ տալիս՝ վռիլիս: Թա արթար ինիս, միշտ պարի բեն ա ինիս արած, պարի կամեցած իդի հոքինեն մնալիսն հավերժական»:

Ղարադաղի հայերը հավատում էին, որ մարդը ծնվում է աստծո կարգադրությամբ և մահանում աստծո հրամանով:

Հավատում էին, որ հոգին մշտապես գտնվում է մարդու կրծքավանդակի ձախ մասում, սրտին մոտ. դրա ապացույցն այն է, որ խաչակնքելիս ձեռքը դեպի ձախ տանելով՝ ասում են. «...և հոգուն...»:

Աստծո հրամանով Գաբրիել հրեշտակապետը գալիս, սրով մորթում է մարդուն ու հոգին ամպի նման դուրս է գալիս մարմնից: Մարդու հոգին և նրա աջ ու ձախ ուսերի վրա գտնվող բարի ու չար հրեշտակները պահպանում են մարմինը, մինչև այն հողին հանձնելը, որից հետո հոգին ու հրեշտակները համբարձվում են երկինք:

ԹԱՂՈՒՄ

Մահացության վերաբերյալ վիճակագրական ստույգ կամ մոտավոր տվյալներ հնարավոր չէ տալ, քանի որ գավառի ողջ տարածքում չկար ոչ մի բժիշկ, հիվանդանոց ու դեղատուն:

Հիվանդը, երբ հոգեվարքի մեջ էր լինում, աչքերը խամրում ու մշուշապատվում էին՝ մերձավորները գուշակում էին նրա մոտալուտ մահը և հիվանդի մոտ հրավիրում քահանային:

Քահանան «հաղորդում» էր հիվանդին, նրան տալով սուրբ մասունք և նրան խոստովանեցնում էր, թե կյանքում ինչ վատ բաներ է կատարել, ինչ մեղք է գործել, ինչ է ծանրացած հոգու վրա, ինչ պիտի կատարեր, որ չի կատարել, ում է պարտք մնում, ումից ստանալիք ունի, ունեցվածքը ում է կտակում և այլն:

Հիվանդը հավատով ու ամենայն ջերմեռանդությամբ պատմում էր իր կյանքում ունեցած հոգեկան գաղտնիքները:

Աջալ (մահ). մահացողի մոտից հեռացնում էին երիտասարդներին, պատանիներին ու երեխաներին: Նրա մոտ մնում էին միայն տարեց տղամարդիկ ու կանայք: Մահացող կնոջ մոտից հեռանում էին նաև տղամարդիկ:

Նախ փակում էին հանգուցյալի աչքերն ու բերանը ու անմիջապես փոխադրում օժանդակ շինություն, որտեղ նրա հագուստը հանում և սառը ջրով լողացնում էին:

Ղարադաղում հնուց սովորություն կար, որ սրտամոտ ընկեր կամ հա-

րազատ տղամարդիկ իրար հանձնարարում էին. «Ով շուտ մահանա, մյուսի հոգու պարտքը լինի, որ նրան ինքը լողացնի»:

Հանգուցյալին լողացնելուց հետո պատանում էին և տեղափոխում եկեղեցի:[61] Պատանը լինում էր բամբակե սպիտակ բյազ, փաթուսխա կամ քաթան:

Գիշերը տանը հանգուցյալին պահելու սովորություն չկար:

Իրիսաքաշ. հանգուցյալի հարազատները 1-3մ երկարությամբ կտոր, գլխավորապես՝ ծաղկավոր չիթ էին փռում հանգուցյալի վրա:

Զնազա (պատգարակ). գյուղն ուներ մեկ պատգարակ, որը պահվում էր եկեղեցում:[62] Դրանով էին հանգուցյալին տանում եկեղեցի: Հաջորդ օրը հանգուցյալին նույն պատգարակով գերեզմանոց էին տանում և այն վերադարձնում եկեղեցի:

Գերեզմանը փորելուց առաջ հանգուցյալի հասակը թելով չափում էին և թաղում նրա հետ:

Հանգուցյալին լողացնելը, գերեզման փորելը և նման այլ աշխատանքները կատարվում էին ծրի՝ համարելով հոգու պարտք:

Հանգուցյալին լողացնելու պարագաները մինչև յոթերորդ օրը պահում էին «փրսվեր դիրած» (երեսնիվայր):

Հանգուցյալի հագուստը պահում էին առանձին բողչայի մեջ: Իքնահողեքին, յոթին և քառասունքին բողչան տանը բացում էին, կանայք շուրջբոլորը նստում ու ողբում էին:

Նոջեցյալին եկեղեցուց գերեզմանատուն տանելիս ետ չէին նայում, որ նրա աչքը չմնար իր տան, ունեցվածքի ու գյուղի վրա:

Չար աչք, չար շունչ, չար ոտք ունեցող մարդկանց թաղման ժամանակ նրա ետևից ջարդում էին ոչ պիտանի կավե կուժ, կուլա և այլն (սախսե), որպեսզի չարատես հանգուցյալի ոտքը ջարդվի և նրա հոգին գյուղ չվերադառնա:

Բայաթի (տխրության երգ). Ղարադաղի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերում կանայք կային, որոնք տխուր ու երգեցիկ ձայնով թուրքերեն ողբում էին հանգուցյալին, գովում նրա աշխատասիրությունը, պատմում կրած չարչարանքների, թերի թողած գործերի և այլնի մասին, իսկ մյուս կանայք ձայնակցում էին ու լացում:

Հավանաբար, բայաթիները թուրքերեն էին երգում այն պատճառով, որ գրեթե բոլոր թաղումներին մասնակցում էին նաև ծանոթ թուրքերը, ինչ-

[61] Մինչև 1919թ. գաղթը, հանգուցյալին պատանում էին, 1921թ. գաղթից վերադառնալուց հետո թաղումը կատարում էին հագուստով:
[62] 1921թ. սկսեցին թաղումը կատարել դագաղով:

պես նրանց հուղարկավորություններին մասնակցում էին հայերը:

Հանգուցյալին եկեղեցի տանելու հաջորդ օրը, առավոտյան եկեղեցի էին գնում տղամարդիկ և կանայք. պատանիներին արգելվում էր:

Եկեղեցի էին գնում նաև շրջակա գյուղերից եկած հայերն ու թուրքերը:

Եկեղեցական կարգը կատարելուց հետո տղամարդիկ պատգարակը վերցնում և տանում էին գերեզմանոց:

Երիտասարդներին ու պատանիներին գերեզմանատուն գնալն ու թաղմանը մասնակցելը արգելվում էր:

Հավատում էին, որ հանգուցյալի հոգին մինչև դիակի թաղումը մնում է նրա գլխավերևում կանգնած՝ անտեսանելի: Թաղումից հետո, անմիջապես մահվան հրեշտակի ուղեկցությամբ համբարձվում է երկինք:

Թափորի հետ գերեզմանատուն էր գնում նաև քահանան, կատարում սահմանված արարողությունը և խաչով կնքում գերեզմանը, որ մնա անփոփոխ, մինչև Քրիստոսի գալուստը:

Թաղման մասնակիցները դիակը հողին հանձնելուց հետո բռնում էին հանգուցյալի մերձավորների ձեռքը ու մխիթարական խոսքեր ասում:

Սգո թափորի համագյուղացի մասնակիցները գնում էին իրենց տները՝ հրավիրելով հարևան գյուղերից եկած ծանոթներին:

Հանգուցյալի տուն էին գնում միայն տոհմի տարեց մարդիկ:

Մահվան ու թաղման վերաբերյալ Ղարադաղի հայերն ունեին մի քանի անեծք. «Բոյետ թիլ չափմ», «Իրստ կարմ», «Կոխ տամ քի», «Վըչ օրհնած վըղ ինգյս» և այլն:

Իքնահողեք. թաղման հաջորդ առավոտ հանգուցյալի տանը հավաքվում էին տոհմի և մերձավոր տարեց կանայք:

Հանգուցյալի հագուստի բողչայի վրա լացում էին, մի հին ամանի մեջ կրակ լցնում, տանում գերեզմանոց, դնում շիրիմի վրա, ողբում ու խունկ ծխում:

Իքնահողեքին տղամարդիկ գերեզմանոց չէին գնում:

Օխտը (յոթ). մինչև յոթերորդ օրը ընտանիքի բոլոր անդամները խոր սուգ էին պահում: Նրանք անգամ ճաշ չէին եփում, հաց թխում, տնից դուրս գալիս և այլն: Այդ ընթացքում անհրաժեշտ գործերը կատարում էին մերձավորները:

Տոհմի մարդիկ, մերձավորները, հարևանները, համաձայնության գալով՝ հերթականությամբ ճաշ էին եփում, պղնձով տանում հանգուցյալի տուն, ընտանիքի անդամների հետ ընթրում, զրուցում ու մխիթարական խոսքեր ասում:

Թաղման յոթերորդ օրը տղամարդիկ և կանայք գնում էին հանգուցյալի

գերեզմանին լացում, ողբում և խունկ ծխում:

Հանգուցյալի յոթը կատարելուց հետո ընտանիքը կամաց-կամաց մտնում էր բնական հունի մեջ, անցնում աշխատանքի:

Քառասունք (քառասունք). յոթից հետո հանգուցյալի ընտանիքի անդամները ձեռնարկում էին որոշ աշխատանքներ, սակայն մինչև քառասունքը լրանալը մնում էին սգի մեջ: Ինչպես ընտանիքի անդամները, այնպես էլ մերձավորները 40 օր հագուստ չէին փոխում, մազերը չէին կտրում, հարդարվում, լողանում և այլն:

Քառասունքին տղամարդիկ և կանայք այցելում էին հանգուցյալի գերեզմանին, խունկ ծխում, լացում ու ողբում:

Սուգ էր պահում նաև ողջ գյուղը, նվագ, ուրախություն և հարսանիք չէին անում:

Եթե գյուղում ուրախության խիստ անհրաժեշտ դեպք էր լինում, այդ տոհմի անվանի մարդիկ քահանային տանում էին հանգուցյալի տուն և թույլտվություն վերցնում:

Քահանայի ներկայությունը թաղման օրը, յոթին ու քառասունքին պարտադիր էր:

Քառասունքը կատարելուց հետո միայն հանգուցյալի ընտանիքը մտնում էր ընդհանուր հունի մեջ՝ մաքրվել, լվացվել, հարդարվել, ուրախություն և այլն:

Հանգուցյալի այրին ամուսնանալու իրավունք ուներ միայն մահվան տարին լրանալուց հետո:

Հույժ կարևոր դեպքերում, եթե կային անչափահաս երեխաներ, տան ու դաշտի աշխատանքները մնացել էին խափանված, բացառության կարգով՝ այրին կարող էր ամուսնանալ քառասունքը լրանալուց հետո:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ՀԱՑ, ՀԱՐԿ ԿԱՄ ՔԵԼԵԽ

Համաձայն գոյություն ունեցող կարգի՝ հանգուցյալի ընտանիքը պարտավոր էր նրա հոգու հանգստության համար մեկ անգամ հաց տալ հասարակությանը: Ասում էին, քանի դեռ հոգեհանգստի հացը չեն տվել, հանգուցյալը անհանգիստ է լինում, աչքը տան և ունեցվածքի վրա, մտքով միշտ ետ է նայում, սպասում իր բաժնին:

Այս առումով հանգուցյալի տերը աշխատում էր որքան հնարավոր է շուտ տալ հանգուցյալի բաժին «հոգու հացը» և նրա աչքը կտրել տնից, հոգուն հանգստություն տալ:

Կապված ընտանիքի հնարավորությանն ու միջոցին, հոգու հացը, ըստ

ադաթի՝ տալիս էին թաղման օրը, յոթին, քառասունքին կամ մահվան տարեդարձի օրը, նույնիսկ տարիներ անց, երբ ուժերը ներեր:

Հոգեհանգստի հացը տալու օրը եկեղեցում կատարվում էր ժամերգություն, որին մասնակցում էին համայնքի անդամները:

Գերիզմանաքար (տապանաքար). Ղարադաղում տարածված էր տապանաքարի տափակ տեսակը, որը բոլոր գերեզմանոցներում դրվում էր երկարությամբ:

Հարուստ, ունևոր և անվանի հանգուցյալների տապանաքարերին քարտաշ վարպետները խորաքանդակ գրում էին անունը, հայրանունը և ազգանունը:

Մնացած բոլորի տապանաքարերը դաշտերից բերված բնական, անմշակ քարեր էին:

ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պարսկաստանի հողատիրական իրավունքի մասին ճշգրիտ տեղեկություն տալն անհնար է: Դա մի երկիր էր, որը չուներ գրավոր օրենքներ, օրենսգրքեր, որոնցով ղեկավարեր ողջ տերությունը: Երկար տարիներ երկիրը դատապարտված է եղել անիշխանության, բաժանված լինելով տարբեր էլերի (համայնք), շեյխերի, խաների, բեգերի ու կալվածատերերի միջև: Պարսկաստանի հողը, հարստությունը և կառավարումը կենտրոնացված չէր, բաժանված էր առանձին խմբերի միջև: Նման պայմաններում հողատիրության իրավունքն ու հարկերը տարբեր վայրերում տարբեր էին:

Դարադաղում հողը եղել է համայնքների սեփականությունը: Ամեն գյուղ ունեցել է իր հողատարածքը: Սահմաններ էին հանդիսանում լեռնագագաթները, բլուրները, ձորակները, գետակները և ճանապարհները:

Համայնքի բոլոր անդամներն իրավունք ունեին իրենց հարմար վայրում՝ ուզած չափով վարելահող (արտ) ստեղծել, կտրտելով ու հրկիզելով անտառի մի հատված: Այն դառնում էր տվյալ ընտանիքի սեփականությունը՝ սերնդե սերունդ տիրելու իրավունքով:

Ղաբալա (վաճառքի փաստաթուղթ). արտատեր գյուղացին իրավունք ուներ այն վաճառել, հաստատելով գրավոր փաստաթղթով, որը կոչվում էր «ղաբալա»: Ղաբալայի հիմնական նպատակն էր խուսափել ժառանգների հետագա վեճերից:

Ղաբալան գրում էր գյուղի քահանան կամ գրագիրը՝ մեկ օրինակից, համայնքի երկու երևելի անձանց երաշխավորությամբ, նրանց անունները նշելով փաստաթղթում:

Ղաբալայի իսկությունը հաստատվում էր քահանայի կամ գրագրի ստորագրությամբ, վաճառողի, գնողի և երկու վկաների բութ մատերի կնքումով:

Պանդխտության գնացած գյուղացին իր արտը չէր վաճառում, այլ ժամանակավոր օգտագործման իրավունքով տալիս էր որևէ ազգականի կամ մտերիմ հարևանի, եթե մոտ հարազատ չուներ, այն մնում էր գյուղական համայնքի իրավասության տակ:

Տարիներ անց (1-20) օտարության մեկնած գյուղացին, նրա եղբայրը կամ որդին, եթե վերադառնում էին, համայնքը նույն արտերը նրանց էր հատկացնում:

Ղարադաղում հնում հայ մելիքներ են եղել, որոնք ունեցել են սեփական գյուղեր, սակայն, դարերի ընթացքում կորցրել են իրենց իրավունքները:

Հայ մելիքները 19-րդ դարի վերջերին արդեն կորցրել էին հողատիրության իրավունքը և բնակվում էին որպես համայնքի սովորական անդամներ ու հողից օգտվում հավասար իրավունքով: Նրանք մելիք տիտղոսը կրում էին որպես հուշ:

Հնում Մելիք-Ազարյանները բավականին հողեր ու գյուղեր են ունեցել Ղարաբաղում ու Ղարադաղի Արաքսպար հովտում: Կորցնելով սեփականատիրական իրավունքը նրանց սերունդները հետագայում բնակություն հաստատեցին Խանագահ գյուղում:

Օղա գյուղի Մելիք-Օհանջանյանների սերունդները նմանապես տեղափոխվել էին Խանագահ:

Ղարադաղի հայերի մեջ կար մարդասիրական բացառիկ հարգանք ու խնամակալություն իրենց գյուղերում մշտական բնակություն հաստատող ընտանիքների նկատմամբ:

Համայնքը հասարակության ժողով էր հրավիրում, նորեկ ընտանիքին ընդունում որպես համայնքի լիարժեք անդամ, նրան հատկացնում ժամանակավոր կացարան և վարելահող, մինչև կարողանար տուն կառուցել, անտառ հատել ու վարելահող ստեղծել:

Սեփականության իրավունք. Ղարադաղում ավանդաբար ընտանիքի գլխավորին էին պատկանում տունը, օժանդակ շինությունները, արտերը, անասունները և մնացած ունեցվածքը:

Ընտանիքի ղեկավարն առանց ընտանիքի անդամների հետ խորհրդակցելու և պետության ներկայացուցչին, տանուտերին կամ քահանային տեղյակ պահելու կամ թույլտվություն վերցնելու, իրավունք ուներ շարժական և անշարժ ունեցվածքը վաճառել, նվիրել և այլն:

Ընտանիքի ղեկավարին իրավունք էր վերապահվում ունեցվածքից զրկել որդիներից որևէ մեկին: Նման դեպքերում հոր ունեցվածքից զրկված ժառանգի բողոքը հաշվի չէր առնվում տանուտերի ու քահանայի կողմից: Ծնողի որոշումը մնում էր ուժի մեջ:

Եթե մի հասունացած ու ամուսնացած տղամարդ իրեն հորից ավելի խելացի էր համարում և ընտանիքի ղեկավարումը վերցնում էր իր ձեռքը,

առանց հոր թույլատվության, և հայրը բողոքում էր տանուտերին, նման զավակին հրավիրում էին գյուղխորհրդի նիստի և ենթարկում պարսավանքի:

Ընտանիքի գլխավորի մահից հետո ղեկավարությունն անցնում էր հանգուցյալի կնոջը:

Ընտանիքի մորը իրավունք էր վերապահվում իր հոժար կամքով ընտանիքի ղեկավարությունը հանձնել չափահաս որդուն:

Ընտանիքի ղեկավարի մահից հետո, եթե չափահաս որդին բաժանվում էր մորից կամ եղբորից, և եթե ընտանիքում լինում էին անչափահաս տղամարդիկ, նրանց հավասար բաժին էր տրվում հոր ունեցվածքից, անասուններից և բնակարանից:

Ծնողների մահից հետո բաժանված որդուն և ամուսնացած աղջկան իրավունք չէր վերապահվում ծնողների ունեցվածքից բաժին պահանջել:

Հայրը որդուց, եղբայրը՝ եղբորից բաժանվելիս, եթե չունեին երկու ընտանիքների համար բավարար բնակարան ու շինություններ, նախքան բաժանվելը լուծում էին այդ հարցը: Ունեցած շինությանը կից նորն էին կառուցում կամ գյուղից մշտապես գաղթած տոհմի որևէ անդամի անբնակ շինությունը նորոգում էին, կարգի բերում, հարմարություն ստեղծում ու բաժանվում:

Եթե այրիացած տղամարդը ունենում էր անչափահաս երեխաներ և ամուսնանում էր անչափահաս երեխաներ ունեցող այրի կնոջ հետ, նրանք երեխաներին խնամում էին ամենայն հարազատությամբ, հավասար իրավունքներով, մինչև ամուսնացնելը, իրենց նպատակին հասցնելը՝ համարելով հարազատ ժառանգներ:

Եթե երկրորդ կինը հետը տղա զավակ էր տանում նոր ամուսնու տուն, նա ամուսնանալուց հետո, կարող էր վերադառնալ հարազատ հոր տուն և ժառանգել նրա ողջ ունեցվածքը:

Հաճախ էր պատահում նաև, որ երիտասարդ տղամարդու մահից հետո, նրա կնոջ հետ ամուսնանում էր բազմանդամ չքավոր ընտանիքի չափահաս մի երիտասարդ և խնամում երեխաներին: Հետագայում ծնված երեխաները էլ ստանում էին նախկինների հետ համահավասար ժառանգական իրավունք՝ տղա թե աղջիկ:

Կտակ. պատահում էր, որ մարդը «սոնգսըզ» (անժառանգ) էր լինում կամ միայն աղջիկ էր ունենում, որն ամուսնանում ու բնակվում էր հեռու գավառում կամ քաղաքում, ծնողների տան հետ կապ չէր ունենում:

Նման դեպքերում, մարդն իր ունեցվածքը գրավոր կտակում էր տոհմի

մի երիտասարդի, որը նրա և կնոջ մահից հետո պարտավոր էր կատարել նրանց թաղումը, որից հետո, համաձայն կտակի՝ կարող էր տիրանալ նրանց ունեցվածքին:

Կտակը գրվում էր մեկ օրինակից, այն հաստատում էր գյուղի քահանան, երկու հարազատների կամ հարևանների վկայությամբ: Կտակը ուժի մեջ էր մտնում կտակողի, այն ստացողի և երկու վկաների բութ մատները դրոշմելով գրության վրա և քահանայի ստորագրությամբ:

Պատահում էր, որ անժառանգ մարդը տղա էր որդեգրում իր տոհմից և ամուսնացնելով կնոջ տոհմի մի աղջկա հետ, հարազատ ժառանգների իրավունքով՝ ունեցվածքը և տան ղեկավարումը հանձնում նրան:

Գյուղից մշտապես հեռացողները վաճառում էին իրենց պատկանող ողջ անշարժ ունեցվածքը:

Պատահում էր, որ գյուղացին, ինչ-որ հանգամանքից ելնելով, ընտանիքով մշտապես մեկնում էր գյուղից, սակայն ինչ-որ բան աչքի տակ ունենալով՝ տունը, այգին, վարելահողերը թողնում էր համայնքին:

Համայնքը նման գյուղացու ունեցած սեփականության հարցը ընդհանուր ժողովի ժամանակ դնում էր քննարկման. լավ վարելահողերը և պտղատու այգիները հատկացնում գյուղի եկեղեցուն, մնացածը հանձնում բազմանդամ, սակավ հողատեր ընտանիքներին:

Եկեղեցական արտ. եկեղեցիներին մշտապես դրամական միջոցներ էին հարկավոր լինում՝ նորոգումների, կահավորման, խունկ, մոմ գնելու և այլնի համար:

Այդ նպատակով գյուղից տեղափոխվողների, գաղթից չվերադարձողների, ծուխը մարած ընտանիքների լավագույն բերքատու հողերը համայնքը հատկացնում էր եկեղեցուն:

Ունևոր գյուղացիները, համայնքի համաձայնությամբ մշակում էին եկեղեցական հողերը, ցանած սերմացուն վերցնում, մնացած բերքը կիսում:

Եկեղեցուն պատկանող բերքի բաժինը վաճառում էին, դրամը հանձնում գյուղի տիրացուին, որը համարվում էր եկեղեցու եկամուտների գանձապահը:

Եկամուտների գումարը գյուղական խորհրդի հանձնարարությամբ ի պահ էր տրվում տիրացուին, և կարիքի դեպքում ծախսվում գյուղական խորհրդի թույտվությամբ:

Պանդխտությունից վերադարձող երիտասարդները եկեղեցուն նվերներ էին տալիս կամ կազմակերպում դրամական հանգանակություն: Հավաքած գումարով խաչ, ժամագրքեր, սփռոցներ, մահուդե վարագույր և անհրաժեշտ այլ գույք էին գնում, նվիրում եկեղեցուն:

Մշտլեղ. հավանաբար, պարսկերեն «մոժդեհ» բառի իմաստն ունի, որը

նշանակում է աչքալուսանք կամ որևէ գտածո տիրոջը հանձնելու կամ որևէ բարի լուր հաղորդելու համար նվիրատվություն:

Երբ կորած իրը կամ անասունը գտնվում էր, գտնողն ասում էր. «Դե, մշտլեղս տոր, կուրցրածդ տամ կամ թե կուրցրածեդ տեղը ասմ»:

Կորցնողը իր սրտից ցանկացած մի բան էր խոստանում գտնողին ու ապրանքն ստանում:

Մեղու գտնելը. Ղարադաղի հայ և թուրք բնակչության մեջ լայն տարածում էր գտել մեղվապահությունը:

Հմուտ մարդիկ կային, որ աշնան օրերին ակնամոմի հոտից գնում, գտնում էին մեղվի բնակված տեղը:

Գյուղացին, եթե գարնան ու ամռան ամիսներին դաշտերում, ծառերի փչակներում և ժայռերի խոռոչներում մեղվի ընտանիք էր գտնում, նախ ստուգում էր, թե իրենից առաջ մեղվի տեղը իմացող եղել է թե ոչ:

Մեղուն առաջինը գտնողը բնի մուտքի մոտ մի մեխ էր խփում, դանակով խաչ փորում կամ նման մի նշան անում, որով այն դառնում էր գտնողի սեփականությունը: Մեղուն թողնում էին տեղում մինչև աշուն, որ շատ մեղր կուտակի:

Նշան դրած մեղվի հետագա գտնողները իրավունք չունեին տեր դառնալ և օգտվել:

Եթե որևէ մեկը համարձակվեր թաքուն օգտվել մեղրից և հայտնաբերվեր, գյուղական խորհրդի կողմից կենթարկվեր հասարակական պարսավանքի ու տուգանքի:

Եթե մեղուն տեղ էր գտել հարևանի պտղատու ծառի խոռոչում և հնարավոր էր առանց ծառին վնաս պատճառելու մեղրը հանել, մեղու գտնողին իրավունք էր վերապահվում մեղրին տիրանալ միայնակ, իսկ եթե մեղրը հանելիս պետք էր վնասել ծառը՝ մեղրը կիսում էին:

Ջրի իրավունք. աղբյուրներն ու գետակները համարվում էին գյուղացիների հավասար սեփականություն, համայնքի ունեցվածք. ով որքան կարող էր, որքան հնարավորություն ուներ օգտագործում էր առանց հարկի ու վարձի:

Ջրի մեծ պահանջ էր զգացվում ամռան ամիսներին բանջարանոցները, այգիներն ու առվույտի ցանքերը ջրելու համար:

Հնձի, կալսման և այլ աշխատանքներով տղամարդկանց ծանրաբեռնված լինելու պատճառով, ոռոգման գործով զբաղվում էին առավելապես կանայք և աղջիկները:

Որպեսզի ջրի օգտագործման ժամանակ վեճեր ու խռովություն չլիներ,

գյուղական խորհուրդը ամեն ջրատար առվի վրա, հասարակական հիմունքներով, նշանակում էր հարգանք վայելող և ազդեցիկ մի կնոջ, որը պարտավոր էր ջրին հսկել ու հերթ սահմանել, այն առանց խախտումների օգտագործելու համար:

Նոքյար (բատրակ, ծառա). Ղարադաղում ունևոր ընտանիքները միշտ նոքյար[63] պահելու կարիք ունեին:

Բազմանդամ չքավոր գյուղացիներն էլ կարիք ունեին իրենց 13-15 տարեկան տղաներին նոքյար տալու, տնտեսական ծանր բեռը թեթևացնելու համար:

Բատրակ վարձում էին հիմնականում դաշտային, տնային աշխատանքների և հովվություն անելու համար:

Բատրակ աշխատում էին հետևյալ պայմաններով. վարձակալողը պարտավորվում էր տալ օրվա հացն ու սնունդը, տարվա ընթացքում երկու ձեռք հնամաշ հագուստ և երկու զույգ տրեխ:

Ծառայության ժամկետը սահմանվում էր մեկ տարի, հինգ թուման վարձով:

Ժամկետը լրանալուց հետո բատրակը կարող էր նորից, նույն պայմանով, շարունակել ծառայությունը կամ հասանելիք վարձը ստանալով հեռանալ:

Լինում էին դեպքեր, որ բարեխիղճ մարդիկ բատրակ վերցնելով մի որբ պատանու՝ խնամակալ էին դառնում մինչև նրա չափահաս դառնալը, համապատասխան մի աղջկա հետ ամուսնացնում, դարձնում տան ու տեղի տեր:

ՀԱՐԿԵՐ

Քանի որ Պարսկաստանում համընդհանուր հարկային օրենք չկար, յուրաքանչյուր կալվածատեր, խան կամ բեգ ըստ իր խղճի՝ հարկ էր սահմանում:

Դարադաղում դարեր շարունակ պետական դատական համակարգ չի գործել: Խաները, կալվածատերերն ու մոլլաները են հանդիսացել իրենց իրավասության տակ գտնվող գյուղերի դատավորն ու դատարանը: Գյուղերում ամենամանր հանցանքներից մինչև մարդասպանության դեպքերը նրանք էին քննում ու ըստ իրենց հայեցողության՝ վճիռներ կայացնում:

---

[63] Նոքար-պրս.՝ ծառա (*Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ.3, էջ 485), (*խմբ.*):

Որևէ հարցի շուրջ ոչ ճիշտ վճիռ կայացնելու դեպքում բողոքավոր կողմը դիմում էր գավառի գլխավոր մոլլային, որի ընդունած որոշումը համարվում էր «շարիաթ» (օրենք) ու վերջնական:

Հայաբնակ գյուղերում դատական և վիճելի հարցերը լուծում էին տանուտերը, քահանան կամ «աղսակալները»:[64]

1940-ական թվականներին, Ղարադաղի գլխավոր մոլլան ապրում էր Արաքսպարի քրդաբնակ Դառանի գյուղում: Նրա մայրը հայուհի էր, Մարի անունով:

Մարիի մայրը Խանագահից էր, անունը՝ Մնեշակ, Բալունց Հաթամի աղջիկը, որն ամուսնացած էր Խանագահում 1887 թվականից բնակվող, ռուս Պյոտրի հետ: Հետագայում նա ընտանիքով տեղափոխվել էր Արաքս գետին մոտ գտնվող հայաբնակ Շավլի գյուղը, որտեղից քուրդ բեգերը առևանգել էին գեղեցկուհի Մարիին:

Իրանում հողատիրության ու հարկերի անօրինականության և բազմազանության վիճակի մասին հարկ համարեցի տեղեկանալ գավառի օրենքի գլուխ կանգնած կրոնավորից: Մոլլա Աբասը խելացի ու համեստ անձնավորություն էր, ավարտել էր Թավրիզի «քալաբիեն», որը համարվում էր Իրանի կրոնական համալսարաններից մեկը:

Մոլլա Աբասը բացատրեց, որ իսլամական աշխարհում հողատիրության և հողային հարկերի վճարման հիմնական օրենքը Ղորանն ու շարիաթն են: Ըստ շարիաթի՝ սեփականություն չպետք է լինի: Միայն տերության գլուխը կարող էր հողեր նվիրել կամ հատկացնել կապալառուներին: Միաժամանակ շարիաթով նախատեսված էր, որ հողի մշակումից ստացած բերքի 8/10-ը հասնում է մշակողին, 1/10-ը՝ դովլաթին (պետությանը), իսկ 1/10-ը՝ կապալառուներին:

Իրանում իշխող դինաստիաների հաճախակի փոփոխությունը, երկրում տիրող անտերությունն ու անիշխանությունը հանգեցրել էին այն բանին, որ կապալառուները օգտվելով վերը նշված հանգամանքներից, դարձան հողատերեր, խաներ ու բեգեր: Երկրում առաջացավ երկու դասակարգ՝ ուժեղներ, տիրող, հրամայող, ուտող և ռայաթ (ճորտ գյուղացի) աշխատող, կերակրող ու իրավազուրկ:

Ղարադաղում գոյություն ուներ հողատիրության ու հարկերի վճարման չորս կարգ. խալիսէ՝ արքունական, թորփաղլըղ՝ համայնական, աղալըղ՝

[64] Աղսակալ, թուրքերեն նշանակում է սպիտակ մորուքավոր: Նրանք ընտրվում էին համայնքի ժողովի կողմից, տանուտիրոջ և քահանայի հետ համայնքին վերաբերող հարցերը լուծելու համար, որպես խորհրդական: Պետք է լինեին 50 տարեկանից բարձր:

կապալառության իրավունքով և թաբեհլըղ, որն առաջացավ 1897-1904թթ., «խնամակալության» հիմունքներով:

Հնում, երբ Ղարադաղում խաներ, բեգեր ու կալվածատերեր չեն եղել, գոյություն է ունեցել հարկերի վճարման մեկ ընդհանուր կարգ:

Ղարադաղցիները պետությանը վճարել են հետևյալ հարկերը. միլիաթ (գլխահարկ), անտառի հարկ՝ ժանգալաթ և ղալլա (հացհատիկի հարկ):

Միլիաթի հարկադրման ու գանձման կարգը. պետական գործակալները, որոնց ղարադաղցիները «ղզըլբաշ» (ոսկե գլուխ) էին անվանում, գյուղերում կազմակերպում էին հարկերի հավաքումը:

Գործակալները հաշվառում էին տվյալ գյուղերի մինչև հիսուն տարեկան բոլոր աշխատունակ տղամարդկանց:

Աշխատունակ մեկ շնչի գլխահարկը հինգ ղռան արծաթ դրամ էր:

Բոլոր տարիքի կանայք ազատված էին գլխահարկից:

Խանագահցիները, ողջ գյուղով տարեկան վճարում էին 84 թուման և հինգ ղռան գլխահարկ (մեկ թումանը 18 ղռան է): Այստեղից պարզվում է, որ հաշվառման ժամանակ եղել է 165 աշխատունակ տղամարդ:

Նկատի ունենալով, որ հաջորդ տարիներին մի քանի ամուսնություն և բնակչության տարիքային փոփոխություններ կլինեին, ամեն տարի աշխատող տղամարդկանց հաշվառում չէր կատարվում:

Հարկադրումից տարիներ անց, եթե գյուղում հարկադրվող մարդկանց թիվը փոխվում էր, պետությանը հանձնվող գումարը մնում էր անփոփոխ, փոխվում էր յուրաքանչյուր շնչից գանձվող գումարի չափը միայն:

Գլխահարկը գանձվում էր տարին մեկ անգամ, աշնան ամիսներին: Որպեսզի գործակալները երկար ժամանակ չմնային գյուղում ու ավելորդ ծախսեր չպատճառեին համայնքին, տանուտերը նախապես հարկը գանձում էր և ստացականով համձնում գործակալներին:

Հարկերի վերաբաշխում կատարվում էր պատերազմների և բնակչության տեղաշարժերի հետ կապված:

Ժանգալաթ. Ղարադաղի անտառները համարվում էին պետության ունեցվածքն ու հարստությունը:

Գյուղական համայնքը իրավունք ուներ անտառից վառելափայտ, բնակարանի շինանյութ և գյուղատնտեսական գործիքներ պատրաստելու հումք հայթայթել:

Անտառի հարկը վճարում էին համաձայն համայնքի ծխերի քանակի: Գյուղական համայնքում ծուխը համարվում էր մեկ ընտանիք: Այն կարող էր բաղկացած լինել 1-20 անձից:

Անտառահարկից ծայրահեղ դեպքում ազատվում էին միայնակ, անաշխատունակ տարեցները, որոնք եկամուտներ չունեին: Այն ընտանիքները, որոնք պանդխտության մեկնած մարդիկ ունեին, հարկից չէին ազատվում:

Ամեն մի ծխի հարկը 2 ղռան 10 շահի էր: Խանագահիցները տարեկան վճարում էին 33 թուման, 2 ղռան և 10 շահի անտառահարկ:

Ղալլա (հացահատիկ). Ղարադաղում հացահատիկի հարկադրումը կատարվում էր հեևյալ կարգով. դիվանի կողմից նշանակված ղզըլբաշները գյուղ էին գնում, համայնքի ղեկավար անձանց հետ ծիերով շրջում դաշտերում ու մոտավոր հաշվառում, թե քանի օրավար[65] վարելահող կա: Ցանքի ենթակա հողատարածության հաշվառումից հետո հաշվում էին համայանքի ունեցած եզները, քանի որ ցանքը կատարվում էր եզների միջոցով:

Վարելահողերի և եզների հաշվարկից հետո մոտավոր ճշտությամբ որոշում էին, թե գյուղացին միջին հաշվով մեկ օրում քանի բաթման[66] հացահատիկ կարող է ցանել:

Համաձայն ընդունված կարգի գյուղացին պարտավոր էր յուրաքանչյուր տասն օրվա կատարած ցանքի սերմացուի տասներորդի չափով հատիկ հանձնել պետությանը:

Հաշվառված էր, որ Խանագահում ամեն գյուղացի տարվա ընթացքում, միջին հաշվով 20 օր ցանք է կատարում՝ օրական վեց բաթման: Նա պարտավոր էր տալ 12 բաթման հացահատիկի հարկ, վեց բաթման ցորեն, նույնքան էլ գարի:

Խանագահիցներն ամեն տարի, որպես հարկ երկու խալվար[67] ցորեն ու երկու խալվար գարի էին տալիս, չնայած ցանում էին նաև հաճար, կորեկ, ոսպ, քնջութ, կտավատ, սիսեռ և այլն:

Սրանք համարվում էին մասնակի ցանք. հարկադրման ենթակա չէին:

Ղարադաղի հայերը հարկեր չէին վճարում նաև խոտհարքներից, պտղատու այգիներից, բոստաններից, բանջարանոցներից, մեղուներից, ընտանի կենդանիներից ու թռչուններից:

Գյուղական համայնքի ընդհանուր ժողովը, հաշվի առնելով վերը նշված նրբությունները, հացահատիկի հարկի գանձումը կատարում էր

---

[65] Օրավար, գութանով մեկ օրում վարած վարելահողի չափ, (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.4, էջ 615), (***Խմբ.***):

[66] Բաթման՝ 5 կգ:

[67] Խալվար՝ 0,5 տոննա:

ըստ ծխի կատարած ցանքի չափերի՝ պահպանելով պետությանը տալիք հարկի չափը:

Բահրա. բառն ըստ իմաստի աղվաղված է. պետք է լինի «դահրա», որը պարսկերեն նշանակում է տասնյակ, մեկ տասնորդական:

Իրանում պետական գյուղերի գյուղացիներն, ինչպես արդեն նշել ենք, ըստ շարիաթի՝ ստացած բերքի տասանորդը, որպես հարկ հանձնում էին պետությանը, այստեղից էլ առաջացել է դահրան, որը դարձել է բահրա:

Ղարադաղում, քանի որ կար հողատիրության մի քանի կարգ, հարկերի չափերը տարբեր էին:

1923թ. պետականացված էին նաև Ղարադաղի Դուգավդարա, Աշրաֆ, Մըհդավա, Նուրիշկին և Ասրան հայաբնակ գյուղերը:

Մեշափարա գավառակի Ողան գյուղի բնակիչներ Թումանյան եղբայրները, Մեշափարա, Մինջևան և Արաքսպար գավառակներում ունեին հայաբնակ, քրդաբնակ, թաթարաբնակ և շամլուաբնակ 19 գյուղ: Նրանք նույնպես հարկ էին վերցնում պետության սամանած կարգով՝ տասանորդ:

Պետության սահմանած չափով բահրա էին վճարում նաև Հասանով գավառակում գտնվող, Ատրպատականի հայոց առաջնորդարանին պատկանող, Նորաշեն, Զիագու և Հուժ գյուղերը:

Մամադ ղուլի խան Սովլաք Մուլքին, որը տիրացել էր Մարդանաղա, Քովնի և Ըհմուդու այգեգործական հայտնի գյուղերին, բահրա էր գանձում բոլոր պտղատու այգիներից ու առանձին ծառերից, բերքի 1/7 չափով:

Թավրիզաբնակ Հովհաննես և Մուշեղ Բուդաղյան եղբայրները, իրենց պատկանող հայաբնակ Շավլի և քրդաբնակ Դռոնի, Ալաջուջա, Իբրամսամի և Փիսյան գյուղերից հարկը գանձում էին կալվածատիրական իրավունքով, բերքի 2/10 չափով:

Ղարադաղի մնացած բոլոր գյուղերը, որոնք գտնվում էին տարբեր խաների խնամակալության տակ, պետությանը տրվող հարկերից բացի, խնամակալ խաներին բահրա էին տալիս հացահատիկի բերքի 1/8 չափով:

Ղարադաղի գյուղացիությունը չէր ազատվում միայն այս հարկերով, ամենածանր բեռը կազմում էին հետևյալ պարտականություններն ու անորոշ տուրքերը.

1. բեգար
2. գյօրիշլըղ-անամ
3. յաս-սավդաթ

4. փեշքաշ
5. սուրսաթ
6. շառ և շլթաղ
7. բաղի
8. ըռըշվաթ
9. օթախ փուլի
10. սեյվաթ:

Բեգար. անվարձահատույց աշխատանք էր, որը ամեն գյուղացի պարտավոր էր, խանի հայեցողությամբ տարվա ընթացքում մի քանի օր և նույնիսկ շաբաթ կատարել նրա համար. մշակել այգին, ցանել ու հնձել արտը, կալսել բերքը, աշխատել շինարարությունում և այլն:

Գյորիշլըղ. խանի կամ կալվածատիրոջ ուխտագնացության, նրանց ընտանիքներում ծննդյան, նշանադրության, պսակի, նոր տարվա կապակցությամբ և նման այլ առիթներով, գյուղացիները պարտավոր էին համապատասխան նվերներ գնել ու տանուտերի, քահանայի ու համայնքի մի քանի երևելի մարդկանց հետ ուղարկել «տեսակցության նվիրատվության»:

Այդ նվերները բազմազան ու անսահմանափակ կարող էին լինել՝ արջառ, ոչխար, հավ, մի երկու փութ ընտիր բրինձ, շաքար, թեյ, դրամ և այլն:

Եթե որևէ գյուղից այցի չգնային, խանը մի քանի ավազակների ուղարկում էր նրանց պատկանող մի քանի անասուն գողանալու կամ ինչ-որ վնաս պատճառելու: Գյուղացիներն իրենց կորուստը ետ ստանալու համար ստիպված դիմում էին խանին՝ տանելով շատ ավելի արժեքավոր նվերներ:

Յաս սավդաթ. գրեթե նույն նվիրատվությունն էր, բայց այն տարբերությամբ, որ վերջինս կատարվում էր խանի ազգատոհմի որևէ անդամի մահվան դեպքում և կրոնական սգի օրերին:

Փեշքաշ. կալվածատերը կամ խանը տարվա ընթացքում ցանկություն էր հայտնում լինել գյուղերում, տեսնել ժողովրդի ապրուստն ու անասունները: Տանուտերը պարտավոր էր առավոտյան՝ նախիրն ու ոչխարների հոտը դաշտ տանելիս կամ երեկոյան, գյուղի ծայրամասում խանին ցույց տալ գյուղացիների անասունները: Այդ ժամանակ կալվածատերը հավանած անասունները մատնացույց անելով տանուտերին հայտնում էր իր ցանկությունը՝ որպես նվեր վերցնել դրանք: Տանուտերը մերժել չէր կարող, հակառակ դեպքում կգողանային:

Փեշքաշը տարածվում էր նաև այլ ունեցվածքի վրա, այգու, արտի, պտղատու ծառերի և անգամ հագուստի:

Սուրսաթ. բազմաթիվ հարկերին ու տուրքերին, 1926թ. ավելացավ սուրսաթը: Այն Ղարադաղի գյուղացիներից ապօրինաբար վերցնում էին Իրանի սահմանը Արաքս գետի երկարությամբ հսկող զորամասերը, չնայած պետականորեն նախատեսված էր, որ զորամասերը պարտավոր էին գյուղացիներից կանխիկ դրամով գնել իրենց անհրաժեշտ սննդամթերքը, սակայն խավարի աշխարում այդ օրենքն էլ չկիրառվեց:

Սահմանապահները մերձակա գյուղերից ծրի հավաքում էին ցորեն, գարի, հավ, հավկիթ, դրմաև և այլ անհրաժեշտ սննդամթերք ու անասնակեր: Այդ ապօրինի հարկը ժողովուրդն անվանեց «սուրսաթ»:

Շառ. ամենատարածվածն ու ամենավտանգավորն էր Ղարադաղի բնակչության համար: Այն կազմակերպում և հրահրում էին խաները, բեգերն ու սահմանապահ զորամասերի հրամանատարները:

Իմանալով, որ որևէ հայ գյուղացի ապրուստի լավ միջոց ու տնտեսած դրամ ունի, նրանք սովորեցնում էին երկու աղքատ քրդերի, որ նրանից կանխիկ դրամ կամ հացահատիկ պարտք վերցնեն ու ժամանակին չվերադարձնեն:

Հետագայում քուրդը պետք է դեպքը նկարագրեր այսպես. ինքը չի կարողացել պարտքը ժամանակին վերադարձնել, հայը իր տուն է եկել, պարտքը պահանջելու, ինքը տանը չի եղել ու նա, օգտվելով իր բացակայությունից, խաբել ու բռնաբարել է կնոջն ու տան իրերը հավաքել, տարել: Մյուս քուրդն էլ վկայում էր, որ ինքն ականատես է եղել:

Այսքանն էլ բավական էր «անարգված» խանի կամ հրամանատարի համար. սկսվում էր ամենօրյա քաշքշուկ, ծեծ, տուգանք, այնքան ժամանակ, մինչև համոզվեին, որ տվյալ գյուղացին հասել է չքավորության:

Շառը կատարում էին բազմատեսակ պատրվակներով՝ գյուղացին զենք ունի պահած, մյուսը կապ ունի հակապետական մարդկաց հետ, սննդամթերք է մատակարարում փախստականներին և նման այլ «հանցանքների» համար:

Շառից ազատվելու միակ ելքը երդումն էր, բայց դրան բոլորին չէր հաջողվում հասնել: Շառի ենթարկված հայ գյուղացու տանուտերը, եթե ազդեցիկ մարդ էր լինում, թիկունք էր կանգնում նրան ու շառ անողներից պահանջում գնալ մոլլայի մոտ ու առերես երդվել ղուրանով: Քանի որ թուրքերն ու քրդերը սարսափում էին ղուրանով երդվելուց, շատ հայեր փրկվում էին անխուսափելի շառից:

Շլթաղ. Ղարադաղում ծնունդ առավ սահմանապահ զինվորների հայտնվելով: Նրանք լավ տեղյակ էին, որ Իրանի ողջ տարածքում գյուղացի-

ներին խստիվ արգելված էր հրազեն պահելն ու օգտագործելը: Անգամ որսորդական հասարակ հրացան ունենալու համար պարտադիր պետք էր թույլատվություն ունենալ, որն ստանալ հաջողվում էր հազարից մեկին:

Ղարադաղցին զենք ունենալու համար փասաթուղթ չէր կարող ձեռք բերել, միաժամանակ այդ միջավայրում հայը առանց հրազենի ապրել չէր կարող: Զենքը նրա անբաժանելի ու անհրաժեշտ բարեկամն էր, որի շնորհիվ կարողանում էին ապրել օտար լծի տակ, անհրաժեշտության դեպքում դիմում ինքնապաշտպանության, գազաններից պահպանում անասուններին, իսկ ազատ ժամանակ զբաղվում որսորդությամբ:

Սահմանապահ պարսիկ զինվորները, քաջատեղյակ լինելով այդ մասին, վաղ առավոտյան կամ երեկոյան, երբ հովիվներն ու նախրապաններն դաշտ էին գնում կամ վերադառնում, թաքնվում էին մոտակա թփուտներում ու այգիներում, ձերբակալում զենք կրող մարդկանց, տանում տանուտերի մոտ ու պահանջում հրացան ունենալու թույլատվությունը, մեղադրելով գաղտնի զենք պահելու համար:

Տանուտերը լավ իմանալով, որ նրանց նպատակը զենքը չէ, այլ անձնական շահը, հավաստիացնում էր, որ գյուղացին զենքը գաղտնի կամ ինքնակամ չի պահում, այլ համայնքի անասունները գազաններից պաշտպանելու նպատակով: Ապա գյուղացուց մի քանի ղռան դրամ էր վերցնում, հանձնում զինվորներին ու ճանապարհ դնում:

Զինվորները դրամ էին շորթում ամենատարբեր առիթներով. օրինակ, գյուղացին նստած ավանակին շտապում էր դաշտում աշխատելու: Նրա ճանապարհը փակում էր մի զինվոր ու հրամայում գրաստը տալ իրեն ու ուղեկցել մինչև հարևան գյուղը: Ճարահատյալ մարդը աշխատանքից չուշանաու համար, նախապես գրպանում պահած երկու ղռանը տալիս էր զինվորին ու շարունակում ճանապարհը:

Գյուղացուց վերցրած դրամը կոչվում էր «շլթաղ» (ապօրինություն), քանի որ զինվորին չէր կարգադրված պետական սահմանի հսկողությունը թողնել, զբաղվել նրա հրացանով:

Բաղի. տարվա ընթացքում մեկ կամ երկու անգամ գյուղերում հայտնվում էին պետական պաշտոնյաներ, տանուտերին մի գրություն հանձնում, որում գրված էր լինում, «Ստուգելով Ձեր գյուղի կողմից պետությանը հանձնվող հարկերն ու տուրքերը պարզվեց, որ վերջին հինգ տարում, հարկերի ոչ ճիշտ հանձնման պատճառով առաջացել է 20 թուման բաղի: Առաջարկվում է գրությունն ստանալուն պես, տասն օրվա ընթացքում, մարել առաջացած բաղին»:

Տանուտերը երդվում էր բոլոր սրբերի անուններով, որպես ապացույց բերում բոլոր տարիների անդորրագրերը, բայց չէին հավատում: Տանուտերն ու աղսախկալները խորհրդակցելով, գալիս էին այն համոզման, որ պետական պաշտոնյաների ներկայացրած գրությունը շլթաղի մի տարբերակ է և հարկավոր է նրանց երկու թուման կաշառք տալ, որպեսզի թուղթը պատռեն ու գնան, քան թե շաբաթներով հետաքննություն կատարվի:

Ըռշվաթ (կաշառք). նման էր լեռնային մի հաստաշերտ սառույցի, մշտապես նստած ղարադաղցիների վրա, որից ազատվելու հնարավորություն չկար: Գյուղացին կաշառք էր տալիս խանին, որպեսզի Արաքսպար հովտից լեռները բարձրացող խաշնարած ցեղերին թույլ չտար փչացնել իրենց արոտավայրերն ու խոտհարքները, հացահատիկի ցանքերն ու բերքը: Կաշառք էին տալիս պետական պաշտոնյաներին, որոնք պահանջում էին համայնքի ունեցած բոլոր գրաստները մեկ ամսով տրամադրել պետությանը, զորքին ռազմամթերք ու սնունդ մատակարարելու համար:

Կաշառք էին տալիս համայնքի հողային սահմանների, տարբեր գյուղերի հովիվների միջև ծագած վեճերի ու հազար ու մի նման իրավիճակների դեպքում:

Օթախփուլի. բառացիորեն նշանակում էր սենյակի վարձ: Բազմաթիվ հարկերի ու տուրքերի շարքում, կարելի է ասել, որ ամենատեղին հարկն էր: Համայնքի ժողովի ժամանակ որոշում էին գյուղ այցելող հյուրերի և պաշտոնյաների համար ծախսվող շաքարի ու թեյի չափը:

Համայնքի ընդհանուր ժողովի սահմանած այդ վարձը կոչվում էր օթախփուլի:

Սեյվաթ. անհրաժեշտության դեպքում գյուղի տանուտերը համայնքի ժողով էր հրավիրում, որտեղ քննարկվում էր, թե նախորդ ժողովից հետո համայնքի տարբեր կարիքների համար ինչ ծախսեր են կատարվել: Ստացված գումարը հավասարաչափ բաժանում (սեյվաթ) էին գյուղի բոլոր ծխերի վրա, անկախ շնչերի թվից:

Ղարադաղցին հայոց առաջնորդարանին վճարում էր շնչադրամ՝ երկու շահի, գյուղի քահանային՝ հացահատիկից «կալապտուղ»:

Նույնիսկ օձ բռնողն էր բաժին պահանջում, իբր գերբնական ուժով մարդկանց խայթոցներից պաշտպանելու վարձ:

ՊԱՏԻԺՆԵՐ

Թող զարմանալի չթվա, որ 20-րդ դարի Պարսկաստանում դեռ գոյություն ունեին հնավանդ պատիժներ, որոնք դարեդար շարունակվում էին կիրառվել:

Ռզա շահի օրոք ընդունվեցին օրենքներ, կազմվեց դատական համակարգ, բայց դրանք գործում էին միայն քաղաքներում:

Գավառներում դատավարությունը մնաց խաների, բեգերի ու մոլլաների իրավասության տակ, նրանց կամքի ու խղճի թելադրանքին:

Քանի որ և հավի գողը, և մարդասպանը հանդիսանում էին խանի ռայաթը, կամայականորեն նա կարող էր առաջինին մահապատիժ սահմանել, իսկ երկրորդին ազատ արձակել:

Նախնական պատիժները գործադրվում էին թեթև հանցանքների դեպքում՝ մանր ապրանքների գողություն, խաբեբայություն, կրոնի կամ օրենքի անարգում, խուլիգանություն և այլն: Նման հանցանքների համար հանցագործի ոտքերը դնում էին ֆալախկայի մեջ, կապում, ծեծում ու պահում այնքան ժամանակ, մինչև խոստովաներ կատարած հանցանքը:

Հանցանքը չխոստովանելու դեպքում կար ավելի սարսափելի պատիժ: Գյուղի հրապարակում խարույկ էին անում, երկաթե շամփուրներ շիկացնում ու երեսնիվար պառկեցրած հանցագործի մեջքն այրում դրանցով:

Նույն հանցանքների համար կարող էին մեղավորի գլուխը ածելիով սափրել ու պղնձե շիկացած թաս հագցնել գլխին կամ կապել ծառին ու ոտքերի տակ կրակ վառել:

Շատ ավելի ծանր պատիժներ կային, որ գործի էին դնում մեծ հանցանքների ժամանակ: Եթե մարդասպանը հանձն չէր առնում հանցանքը, նրա եղունգների տակ չոր, սուր եղեգներ էին խրում, ամորձիներից քար էին կախում և նման այլ սարսափելի պատիժներ տալիս:

Զարհուրելի պատիժներ են եղել. կտրել են հանցագործի ձեռքը, ոտքը, քիթը կամ ականջը, հանել աչքը: Ընդունված են եղել նաև հրապարակային գնդակահարությունն ու կախաղանը:

Պատահել է նաև, որ մեղապարտին կանգնեցրել են ծանապարհի եզրին փորած խոր փոսի մեջ, միայն գլուխը թողել դրսում և փոսը լցրել կրով ու տանջամահ արել:

Մարդասպանությունը բացահայտելուց ու հաստատելուց հետո կար դատավճռի մի քանի տարբերակ. նախ՝ արյան դիմաց արյուն, ապա

փրկագին, որը լինում էր 100-200 արծաթ թումանի կամ դրան համարժեք գույք ու ընտանի կենդանիներ:

Ջարհուրելի պատիժներ էին տալիս անառակ կանանց, դնում էին տոպրակի մեջ, այնտեղ գցում կատու և շուն, տոպրակի բերանը կապում և ճիպոտներով ծեծում: Տարօրինակ էին նաև անչափասների համար սահմանված պատիժները: Ջու, հավ և նման մանր բաներ գողացած երեխայի քիթը ծակում էին, երկար ու ամուր թել անցկացնում: Գգիրը բռնում էր թելից ու շրջում գյուղում, որ դաս լինի բոլորի համար:

Սովորական պատիժը կոչվում էր «ջարմա» (տուգանք): Այն փրկություն էր բոլոր հանցագործների համար, խուլիգանությունից մինչև մարդասպանություն:

Փող ունես՝ մարդ սպանիր, ջարման տուր խանին, ազատ շունչ քաշիր՝ առանց որևէ պատիժ կրելու:

Ջարմաներով սահմանված գումարների ստացման հիմնական երաշխիքը ծեծն էր, մարդուն ծեծում էին անողոք ձևով, այդ իսկ պատճառով շատերը պատրաստ էին ամեն տեսակ պատիժներ կրել, մեծ գումար ջարմա տալ, քան ծեծի ենթարկվել:

1918թ. Գանձառի գյուղի խան Ռահիմը 20 հոգուց բաղկացած ավազակախմբով գնում է Խանագահ, տանուտերից ու գյուղի երևելիներից պահանջում, որ հրաժարվեն Ղահրաման խանի խնամակալությունից և ենթարկվեն իրեն: Խանագահցիները հրաժարվում են այդ պահանջը կատարել:

Խանի հրոսակները շտապ խարույկ են վառում գյուղի հրապարակում, տանուտերին ու երևելիներին տանում նրա մոտ, շամփուրներ կարմրացնում, որ այրեն նրանց մերկացրած մարմինները: Նման խայտառակությունից խուսափելու համար համայնքը խանից խնդրում է փրկագին նշանակել: Խանը պահանջում է 1000 թումանի ջարմա:

Սարդու գյուղի բնակիչ Ջհանգիրենց Բաղդասարը գավառում ճանաչված էր որպես ունևոր ու հարուստ մարդ, խաները նրան կողոպտելու մի քանի անհաջող փորձ էին արել:

1918թ. աշնանային մի առավոտ Բաղդասարը ցանքի է գնում: Գյուղից դուրս նրա ճանապարհը փակում են սրերով զինված երկու թուրք ավազակներ, ձեռքերն ու ոտքերը կապում, մի զույգ եզն ու սերմացուն տանում: Բավականին չարչարվելուց հետո Բաղդասարը արձակում է կապանքները, մոտենում գյուղին, ձայն տալիս ու հայտնում եղելությունը:

Նրա որդին՝ Արտեմը, լսելով հոր ծայնը իսկույն վերցնում է հրացանն ու շտապում օգնության: Նրա հետ գնում են շատ համագյուղացիներ, հասնում են ավազակներին, ծայն տալիս, որ ավարը թողնեն ու հեռանան: Ավազակները վստահ լինելով, որ խանը իրենց թիկունքին կանգնած է, և հայը երբեք չի համարձակվի թուրք սպանել, հաշվի չեն առնում կրակոցները, հանգիստ քշում են ավարը:

Արտեմը հասկանում է նրանց մտադրությունը, որոշում է մոտ կրակել, որպեսզի վախենան ու փախչեն, բայց գնդակը կպչում է թուրքերից մեկի ոտքին, մյուսը փախչում է ու հայտնում խանին:

Հայը թուրքի արյուն թափի Ղարադաղում՝ դա անհավատալի դեպք էր:

Մամադ խանին նման պատեհ առիթ էր պետք: Անմիջապես ոտքի է հանում հպատակ գյուղի ողջ թուրք խուժանին ու հարձակվում Սարդուի վրա:

Բաղդասարին շատ քիչ բան է հաջողվում փրկել իր ունեցվածքից. նրա հսկայական հարստությունը՝ հացահատիկը, անասունները, գորգերը, անկողիններն ու ողջ կահկարասին թուրք խուժանը տանում է:

Խնամակալություն. 1896-97թթ. Պարսկաստանի ներքաղաքական խառը իրավիճակից օգտվելով, Ղարադաղի գավառում մի քանի թուրք գործեղներ փորձեցին դառնալ ինքնիշխան տերեր: Նրանք գյուղացիներին առաջարկեցին ենթարկվել իրենց ու դառնալ հարկատու, խոստանալով ապահովել նրանց կյանքը, սակայն Ղարադաղի հայերը նրանց առաջարկը չընդունեցին, հուսալով, որ իրենց կաջակցի հայոց առաջնորդարանը:

Ե. Ֆրանգյանը հայոց առաջնորդարանի մասին գրում է. «Ատրպատականի թեմը ծանր և պատասխանատու է: Վերջին 50 տարվա տարեգրության մեջ հիշվում են միայն Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարյանի և Մուշեղյան արքեպիսկոպոսի անունները, որոնք կարողացել են զորեղ դիրք ստեղծել առաջնորդի համար, բարձր պահել առաջնորդարանի հեղինակությունը՝ պարսից պաշտոնյաների առաջ: Նրանք ունեցել են խիստ և ուժեղ բնավորություն և զորեղ կամք: Եվ, ինչպես պատմում են, պարսիկ պաշտոնյաները դողում էին, սարսափում նրանցից: Գավառներում մեծ ափսոսանքով ու հիացմունքով են հիշում նրանց անունը: Նրանք գավառացու համար եղել են զորեղ պահապան»:[68]

Ղարադաղի հայերը մեծ հույս էին կապում այն ժամանակվա առաջնորդ եղիշե վարդապետ Մուրադյանի հետ, որ նա էլ, իր նախորդների նման զորեղ ուժ կունենա հայերի իրավունքների պաշտպանության գոր-

[68] *Ե. Ֆրանգյան,* Ատրպատական, էջ 152-153:

ծում, ու սուրհանդակների միջոցով դիմում են նրան, որ օգնի իրենց կյանքի ու մահվան պայքարում, բայց գավառներում ապրող հայերին հուզող հարցերով նա չէր հետաքրքրվում:

Ահա թե ինչպես է բնութագրում նրան Ե. Ֆրանգյանը. «Ներկա առաջնորդ Սուրադյանին ամենայն իրավմամբ կարելի է կոչել Թավրիզի առաջնորդ: Նա հենց սկզբից խրվեց Թավրիզի բոլոր հասարակական հարցերի մեջ և մոռացավ իրենից մի քանի տասնեակ աղաջ (մղոն) հեռավորության վրա ապրող և հեծող ժողովրդին»:[69]

Ղարադաղի հայերը երկար պայքարից, շատ դառնություններ կրելուց և մարդկային զոհեր տալուց հետո, օգնություն չստանալով Ատրպատականի հայոց առաջնորդարանից, ճարահատյալ ենթարվեցին խաների կամքին՝ պայմանով, որ երաշխավորվի իրենց անվտանգությունը:

Գավառի ամենամեծ ու ազդեցիկ Խանագահ գյուղը խնամակալական իրավունքով պայմանագիր կնքեց Ալաջուլա գյուղի քուրդ խան Ղահրամանի հետ:

Ըստ պայմանագրի՝ խանագահցիները «թաբեհ» (ենթակա) էին ոչ թե ճորտատիրական, այլև խնամակալական իրավունքով: Խանը պարտավորվում էր նրանց համար ազատ աշխատելու հնարավորություն ստեղծել, պատասխանատու էր սպանությունների համար: Ոչ մի ուրիշ խան, բեգ, քուրդ կամ թուրք խուժան իրավունք չուներ որևէ խանագահցու տուն մտնել, անգամ մի բուռ հացահատիկ պահանջել կամ գողանալ:

Պայմանագրով խանագահցիներին իրավունք էր վերապահվում պահել ու ազատ գործածել ունեցած զենքերը:

Խանագահցիները պարտավորվում էին պետական հարկերից դուրս հարկ տալ խանին, ոչ թե կալվածատիրական իրավունքի հիմունքով, այլև խնամակալական:

Քանի որ հողը մնում էր որպես համայնքի սեփականություն, խանն այն վաճառելու իրավունք չուներ:

Քանի որ հողը խանի սեփականությունը չէր, նա իրավունք չուներ հարկ պահանջել անտառից, արոտավայրերից, ջրից, անասուններից, պտղատու ծառերից, բոստաններից, մեղվից և ընտանի թռչուններից:

Խանագահցիները պարտավորվում էին խնամակալական իրավունքով խանին հարկ տալ միայն հացահատիկի փաստացի բերքից՝ կալսման ժամանակ կալում եղածի ութերորդ մասի չափով:

---

[69] *Ե. Ֆրանգյան,* Ատրպատական, էջ 155:

Ականատեսները պատմում էին, որ նման պայմաններով որոշ գյուղացիներ հրաժարվում են պայմանագիրն ստորագրել, խռովություն էին տարածում բնակչության մեջ, որ բարձր պահեն նախնիների պատիվն ու շարունակեն պայքարը հանուն անկախության:

Ղահրաման խանը խորամանկ մարդ է լինում, նա ըմբոստների դեմ չի լարվում, ուսումնասիրում է նրանց վիճակն ու առօրյա կարիքները: Նրանցից մեկը զենքի սիրահար էր, հրացան նվիրեց, երկրորդը բազմանդամ էր, կթան չուներ, երկու այծ տվեց, երրորդը խրված էր պարտքերի մեջ, դրամ տվեց, մյուսին սերմացու տվեց ու բոլոր խանագահիցիների մատնեը դրոշմել տվեց պայմանագրի տակ:

Խանագահի օրինակով գավառի բոլոր հայ համայնքները խնամակալական պայմանագրերով հարկատու դարձան զանազան խաների:

Սևահող գյուղի հայերը միակն էին, որ չենթարկվեցին այդ ճնշումներին, պայքարեցին խաների դեմ ու կարողացան պահպանել իրենց անկախությունը: Նրանք չմասնակցեցին նաև 1946թ. հայրենադարձությանը, միայն 1956թ. գարնանը տեղափոխվեցին Թեհրան:

Ղարադաղի հայերը նման պայմանագրեր կնքելով կարողացան որոշ ժամանակ ապրել խաղաղ ու ապահով, սակայն խաները մինչև վերջ հավատարիմ չմնացին պայմանին: Ընդամենը մեկ տասնամյակ անց, հիմք ունենալով հայերի հետ կնքած խնամակալական պայմանագրերը, սկսեցին գաղտնի վաճառել հայաբնակ գյուղերը:

Նոր տերերը ձեռքի տակ ունենալով առուծախի փաստաթղթերը, պահանջ ներկայացրին հայերին, հարկ վճարել կալվածատիրական հիմունքներով:

1915թ. Ղահրաման խանի որդին Խանագահ գյուղը վաճառեց թավրիզաբնակ Միրզա Խալիլին, որը գրագետ ու ծանրակշիռ մարդ էր, ուներ «մուշտեհդ» տիտղոս: Լավ տեղյակ լինելով գործի էությանը նա գանձում էր նախկին հարկը: 1938թ. նա գյուղը 10000 թուման արծաթ դրամով վաճառեց թավրիզաբնակ Հաջի Մեյթի խանին:

Հաջի Մեյթի խանը գյուղացիներից պահանջեց հարկերը վճարել կալվածատիրական հիմունքներով՝ անտառից, ջրից, արոտավայրերից, խոտհարքներից, բանջարանոցներից, բոլոր հացահատիկներից, ընդեղեններից, պտղատու ծառերից, ընտանի կենդանիներից, թռչուններից, մեղվից, մի խոսքով, գյուղացու բոլոր եկամուտներից:

Նման զարհուրելի հարկերի պահանջը խանագահիցիներին խիստ զայրույթ պատճառեց, և նրանք կալվածատիրոջը գյուղից վռնդեցին:

Հաջի Մեյթի խանը Թավրիզից տասը ժանդարմ բերեց ըմբոստ գյուղացիներին պատժելու և իր կալվածատիրական շահերը պաշտպանելու համար, իսկ գյուղացիները բողոքեցին կառավարությանը:

Կառավարությունը բողոքն ուղարկեց Ղարադաղի վարչական կենտրոն Աիար քաղաքի դատարանի քննարկմանը: 1940թ. օգոստոսին դատարանը լսեց խանագահիցիների գանգատը: Դատապաշտպանն էր ազգությամբ հայ, սակայն մահմեդականություն ընդունած, մասնագիտությամբ բժիշկ Ռուստամ խան Բհադուրին:

Դատարանի որոշումն ի օգուտ հայերի էր, նրանք պետք է վճարեին նախկին հարկերը: Դատարանը նաև մասնակի որոշում ընդունեց, որ եթե խանը նորից փորձի խանագահիցիներից կալվածատիրական իրավունքով հարկեր պահանջել, դատարանին իրավունք կվերապահվի խանագահ գյուղը պետականացնել:

Հաջի Մեյթի խանն այլևս գյուղ չեկավ, այնտեղ նշանակեց «մուբաշիրներ» (կապալառու):

Պայման. գոյություն ունեին պայմանագրություն և պայմանի շատ տարբերակներ:

Եթե մեկին անհրաժեշտ էր անասուն, գրաստ կամ որևէ կահկարասի գնել, բայց մոտը դրամ չուներ, նման դեպքում գրպանի դանակը կամ տերողորմյան թողնում էր ապրանքատիրոջ մոտ, պայմանավորվում, երեք օրվա ընթացքում ապրանքի գինը տալ և տանել: Ժամկետը լրանալուց հետո, եթե պայմանը խախտվեր՝ ապրանքատիրոջն իրավունք էր վերապահվում այն վաճառել այլ գնորդի:

Կար պայմանի մեկ այլ ձև. գնորդը գումարի մի մասը հանձնում էր կենդանու տիրոջը, կենդանու ականջի ծայրը կտրում և պայմանավորվում երեք օրվա ընթացքում դրամը տանել: Եթե գնորդը ժամկետին գումարը չէր տանում, տերը կարող էր այն վաճառել և կանխավճարը չվերադարձնել:

Բեհ (նախապայման, կանխավճար). մեկը գնում էր անտառ ածխարարներից մի բեռ ածուխ գնելու, բայց պատրաստի ածուխ չէր լինում, այդ դեպքում նա ջորու մեկ բեռ ածուխի դիմաց թողնում էր երկու ղռան բեհ, որից հետո իրավունք չուներ մինչև պայմանավորված օրը այն ուրիշի վաճառելու: Եթե պայմանավորված օրը բեհ տվողը չգնար, ածխարարը իրավունք ուներ այն վաճառել մեկ ուրիշի և կանխավճարը չվերադարձնել:

Բախշել (նվիրել). Ղարադաղում սովորություն չկար նվիրատվությունը

հաստատել գրավոր փաստաթղթով, դրանք կատարվում էին ըստ կամեցողության:

Նվիրում էին զանազան զարդեր, կահկարասի, ամանեղեն, պտղատու ծառեր, մինչև անգամ գյուղեր:

Մարդանաղա գյուղի բնակիչ Մամադ խանը իր աղջկան՝ հարսանյաց հանդեսի առթիվ որպես օժիտ նվիրեց հայաբնակ Սարդու գյուղը:

Ամանաթ. բառացիորեն նշանակում է ի պահ, վստահություն:

Մարդիկ, կարիքից ելնելով, հարազատից կամ հարևանից մի քանի օրով վերցնում էին որևէ իր, գործիք կամ գրաստ՝ խուրձ, խոտ, փայտ և այլն տեղափոխելու համար:

Ժամանակավոր օգտագործման համար վերցրած բոլոր տեսակ ապրանքները համարվում էին ամանաթ:

Վերցնողը հրաժարվում էր ապրանքը մեկ ուրիշին տալ. «Հրևան ջան, կարիչմ տալ, ամանաթ եր կալած ապրանք ա, մի բեն կդըռնի՝ կմնամ «խազիլ» (ամոթով): Իս տանմ տամ տըռնը, դու գինի իրան նանե օգի»:

Թարազի (կշեռքով). թարազի գործարքը գլխավորապես կատարվում էր հայերի և նրանց թուրք ծանոթների միջև:

Օրինակ. հայը ունենում էր 2-3 ծնած կով, իսկ չքավոր թուրք ծանոթը կթան չէր ունենում:

Նրանք բանավոր պայմանավորվում էին, ըստ որի հայը մեկ կով էր տալիս թուրքին, գարնանից մինչև աշուն: Թուրքն այն պահում էր, օգտվում: Աշնանը նա պարտավոր էր կովը, հորթի հետ և երկու բաթման հալած յուղ վերադարձնել տիրոջը:

Պայմանը առարկման ենթակա չէր. հնարավոր է, որ այդքան յուղ չկարողանար ստանալ, բայց պարտավոր էր գնել, լրացնել և վերադարձնել տիրոջը:

Փահլա (բանվոր). փահլան աշխատում էր օրավարձով (մուզդ):

Բանվոր վարձում էին տարբեր բնագավառներում աշխատելու համար. հունձ անելու, տուն կառուցելու, դաշտային զանազան աշխատանքների, այգի փորելու և այլնի դեպքերում: Վարձկանը պարտավոր էր առավոտից մինչև երեկո աշխատել:

Վարձողը պարտավոր էր օրվա ընթացքում բանվորին երեք անգամ կերակրել, վճարել մեկ ղռան օրավարձ կամ մեկ ղռանին համարժեք հացահատիկ կամ այլ մթերք:

Օրամուզդ խոռհնավ (խրձով). հայաբնակ գյուղերում, երբ հունձը սկսվում էր, Արաքսպարում, քրդերի մոտ, այն ավարտված էր լինում, իսկ

լեռնային գոտում՝ թուրքերի մոտ, ավելի ուշ էր սկսվում:

Մեծ թվով քրդեր ու թուրքեր գալիս էին հայերի համար հունձ կատարում:

Հնձի համար կար վարձատրման երկու տարբերակ՝ օրավարձով, որի դեպքում հնձվորը օրական ստանում էր մեկ գյուշ (մոտ 5կգ) ցորեն և խրձով, երբ հնձած տասը խրձից մեկը մնում էր իրեն:

Բանվորը, հունձն ավարտելուց հետո արտատիրոջ գրաստով խրձերը տեղափոխում էր արտատիրոջ կալը, արտատիրոջ եզներով կալսում, իր բաժին ցորենը տանում, իսկ դարմանը թողնում:

Ղորուղչի (հանդապահ). գարնանը գյուղի նախրապաններին ու հովիվներին նշանակելուց հետո ընտրում էին մեկ հանդապահ, որը պետք է լիներ ազդեցիկ, անվախ, արագավազ, խրոխտ ձայն ունենար և լիներ օրինապահ:

Ըստ գյուղական օրենքի՝ հանդապահը պետք է հսկեր ցանքսերը, խոտհարքները և արոտավայրերը հարևան գյուղերի նախիրներից ու հոտերից, գյուղամերձ ճանապարհներով անցնող քոչվորների հոտերից, անցնող քարավաններից և հետևեր գյուղի անասնապահներին, որ նրանք էլ վնասներ չպատճառեին:

Հանդապահը հաճախ էր կռվի բռնվում հարևան գյուղերի անասնապահների, գավառից Թավրիզ ածուխ տանողների հետ, որոնք գրաստները բաց էին թողնում արտերում ու խոտհարքներում:

Հանդապահը պետք է աչալուրջ հսկեր նաև քոչվորներին, որոնք սար բարձրանալիս մորեխի նման՝ վայրենաբար ոչնչացնում էին ճանապարհների մոտակայքի ցանքսերն ու արոտավայրերը: Մի խոսքով՝ հանդապահը ամեն օր վիճաբանության ու կռվի մեջ էր գտնվում:

Հանդապահի լիազորությունը ուժի մեջ էր ապրիլից մինչև օգոստոս՝ հնձի վերջը: Նրա վարձը, ամբողջ սեզոնի ընթացքում, ամեն մի ընտանիքից մի գուշ ցորեն էր:

Հաճախ էր պատահում, որ քոչվորները կամ Արաքսպարի քրդերը լեռնային արոտավայրեր գնալիս, անբարենպաստ եղանակների պատճառով, ստիպված էին լինում ժամանակավորապես կանգ առնել միջին գոտու որևէ տարածքում:

Նման դեպքերում նրանց ղեկավարները գնում էին համապատասխան գյուղի տանուտերի մոտ, թույլտվություն խնդրում արոտավայրը օգտագործելու համար, փոխհատուցում վճարելու պայմանով, որը կատարվում էր պանրի, բրդի կամ դրամի միջոցով:

Ստացած մթերքները վաճառում էին, վերածում դրամի և ի պահ թողնում տանուտերի մոտ: Այդ գումարները համայնքները ծախսում էին անհրաժեշտության դեպքում՝ խաներին ու բեգերին տեսակցության գնալու, զանազան հարցերում պետական ներկայացուցիչներին կաշառք տալու և նման այլ կարիքների համար:

Թութխու (թուրք.՝ բռնել, տեր դառնալ). եթե մի գյուղացի նկատում էր, որ մի դաշտում աչքաթող եղած տարածք կա, որը կարելի էր մշակել, այնտեղ մի քանի ակոս վար էր անում, տարածքը դարձնում «թութխու», և մեկ ուրիշը իրավունք չուներ դրան տեր դառնալ:

Գոյություն ուներ թութխուի մեկ տարբերակ ևս. ծառի մի քանի ճյուղ էին կտրում, կեղևը հանում և մի քանի տեղ տնկում: Դա նշանակում էր «թութխու ղորուղ», ուրիշ ոչ ոք իրավունք չուներ տարածքի խոտը քաղել կամ անասուններ արածեցնել:

Նիշան գյահ (վստահության նշան). որևէ մարդ գնում էր հարևան գյուղ և դիմում մի գյուղացու.

– Ինձ ուղարկել է ձեր բարեկամը կամ ծանոթը, տասը թիման դրամ է պետք, մի անասուն, մթերք տանելու համար գրաստ, մի քանի ամիս հետո վերադարձնելու կամ արժեքը տալու պայմանով:

Հարցնում էին.

– Ի՞նչ նիշան գյահ ես բերել:

Անծանոթը ցույց էր տալիս ուղարկողի գրպանի դանակը, «տերողորմեն», մեկ այլ իր կամ զարդ:

Գյուղացին ճանաչելով իր ծանոթի «նիշան գյահը», վստահում ու անծանոթին էր հանձնում ուզած ապրանքը:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ղարադաղի, ինչպես նաև նրան հարող անծայրածիր հարթավայրի վարչական կենտրոնը Աիար քաղաքն էր: Այնտեղ էին գտնվում գավառի ղեկավարությունը, դատավորն ու պետական հիմնարկները:

Աիարում բնակվող քաղքենի դատավորները երբեք ռիսկի չէին դիմի ճամփորդել լեռնային գավառի բարձրանիստ լեռներով, անդնդախոր ձորերով, մթին անտառներով, հետաքրքրվել, թե ինչպես է ապրում լեռնալանջերին ծվարած խեղճ ու թշվառ մի բուռ ժողովուրդ, որից բողոքի ոչ մի ձայն չէր հասնում իրենց:

Տեղի գամփռ խաներն ու բեգերը երբեք թույլ չէին տալիս, որ իրենց ներքին գործերին խառնվեն պետական պաշտոնյաները:

Նրանք ինքնիշխան էին, պատահել էր, երբեմն նույնիսկ հրաժարվել

էին պետությանը հարկեր ու տուրքեր վճարելուց, իրենց պատկանող գյուղերի տերն էին, իշխանն ու դատավորը: Նրանց մոտ պետական ոչ մի օրենք չէր գործում: Օրենքը իրենց անմարդկային խիղճն էր ու գայլային ագահությունը:

Գյուղացիները իրավազուրկ «ռայաթ» (ծայնազուրկ ծորտ) էին:

Ամեն խան, բեգ ու կալվածատեր ուներ իր խղճի օրենքը, որքան ցանկանար կարող էր գյուղացուն անվարձ աշխատեցնել, ծեծել, տուգանել, մինչև անգամ սպանել, առանց պետական պատասխանատվություն կրելու: Նման գազանների համար մարդն ու անասունը մեկ էր:

Ժամանակին նման իրավունքի տեր են եղել նաև հայ մելիքները: Իրենց դարն ապրած ու գնացած մելիքներից հետո, համեմատած գավառի թուրքերի ու քրդերի ծանր կացության հետ, հայերը ազատ կյանք էին վարում և ամեն մի կարևոր հարց լուծում համայնքի խորհրդի միջոցով, ստեղծելով միասնություն, գաղտնիքները պահելով իրենց մեջ, խաների ու բեգերի ականջներին ոչ մի շշուկ ու տրտունջ չհասցնելով:

Գյուղեթուն (գողություն). գողությունը ամենավտանգավոր հանցագործությունն էր համարվում:

Ղարադաղի հայերը գողության վերաբերյալ մի քանի առած ունեին. «Գյող, սըրտը դող», «Չու գյուղացուղը ձի ալ կգյուղանա», «Մարթեն աչքը դուս գյո, անմը դուս վեչ գյո»:

Ամեն ղարադաղցի հայի համար ավելի պատվաբեր էր մահը, քան թե հասարակության մեջ գող ճանաչվելը:

Սերմ, հացահատիկ, պտուղ, անասուն և այլն գողանալը համարվում էր «հարամություն» (պղծություն), աստծո կողմից արգելված զբաղմունք: Ունեին այն հավատը, որ նման բաներ գողացողի ունեցած հալալն էլ կհարամվի աստծո կողմից և կզրկվի իր ունեցվածքից:

Եթե հաստատվեր, որ մեկը գողություն է կատարել նրան ենթարկում էին հետևյալ դատին. ողջ համայնքը, մեծից մինչև փոքր, հավաքվում էր հրապարակում հրավիրված գյուղական ընդհանուր ժողովին, բերման էին ենթարկում գողին, երեսը ածուխով մրում, ծաղրուծանակի, պարսավանքի ենթարկում, գանձում կատարած գողության կրկնակի արժեքը, հանձնում ապրանքատիրոջը և այդ օրվանից նրա և գալիք սերունդի վրա դրոշմվում էր «գող» մականունը:

Մինչև հասարակական դատի ենթարկվելը, ինչպես ժողովուրդն էր ասում. «գողը մեկ գիշերվա ընթացքում ծանրը թողած, թեթևը վերցնում՝ ընտանիքով ընդմիշտ գյուղից հեռանում էր անհայտ հասցեով»:

Հանցանք և պատիժ. ինչպես կային բազմաթիվ հանցանքներ, նմանապես էլ զանազան պատիժներ:

Արդեն գիտենք, որ պետական դատարան ու օրենք չէր գործում գավառում:

Հայաբնակ գյուղերում նման պաշտոնը վարում էին տանուտերերն ու գյուղական խորհուրդները:

Ասենք թե մի երիտասարդ, խախտելով հասարակական կարգը, անպատվել էր մի տարեց մարդու կամ ծեծել մի երեխայի, իրեն անվայել պահել որևէ միջավայրում, հասարակության մեջ: Նախ գյուղական խորհուրդը բերման էր ենթարկում նրա հորը, մորը կամ մեծ եղբորը և հանձնարարում, որ նրան դաստիարակեն, խրատեն և միջոցներ ձեռնարկեն նման արարքներ չկրկնելու համար:

Եթե ծնողները անզոր էին գտնվում, և նման սանձազերծությունը կրկնվում էր, բերման էին ենթարկում երիտասարդին, դստիարակչական իմաստով ենթարկում պարսավանքի: Եթե դաստիարակությունը չէր ներգործում, տուգանում էին ի օգուտ համայնքի ֆոնդի, անգամ ծեծի էին ենթարկում: Եթե այդ ամենը չէր ներգործում, երիտասարդի հորը առաջարկում էին որդուն հեռացնել գյուղից կամ ընտանիքով թողնել այն, որպեսզի նման վատ արարքը չտարածվեր:

Զոռբա (զորեղ, ուժեղ). պատահում էր, որ մի զորեղ մարդ, ելնելով իր ուժի դիրքերից կամենում էր տիրել խեղճ ու անօգնական հարևանի արտը, բանջարանոցը, այգին կամ օժանդակ շինությունը, պատճառ բռնելով, որ դա հնում պատկանել է իր պապին կամ մի մոտիկ ազգականի:

Գանգատի դեպքում հրավիրվում էր գյուղական խորհրդի նիստ և երկուսի ներկայությամբ քննարկվում գանգատը: Եթե զորեղը իրավացի էր լինում, մյուսին բացատրում էին իրավասության օրենքը, իսկ եթե ուժեղը ապօրինություն էր անում, ենթարկում էին պարսավանքի և պահանջում, որ վերջ տա դրան:

Խորհրդի որոշումը բոլոր դեպքերում էլ անվիճելի էր և վերջնական:

Եթե նա չենթարկվեր որոշմանը, շարունակեր զոռբայությունը, տանուտերը նորից համայնքի ժողով էր հրավիրում և առաջարկում դադարեցնել անօրինակա պահանջները կամ երեք օրվա ընթացքում ընտանիքով հեռանալ գյուղից:

Ղհբեթուն (անառակություն). անառակությունը ևս սև բիծ էր մարդու և նրա ընտանիքի ու ողջ տոհմի համար:

Չենք կարող ասել, թե գավառում նման արարքներ չեն պատահել: Դրանք շատ գաղտնի են պահվել, բացահայտման դեպքերում ևս գաղտ-

նի պայմաններում խիստ միջոցների էին դիմում:

Խաբար բիզան (մատնիչ). համայնքում և հասարակության մեջ տեղ չուներ նաև մատնիչն ու բերանբաց մարդը:

Եթե հաստատվեր, որ մեկն ու մեկը համայնքի գաղտնիքը հայտնել է որևէ խանի, բեգի ու կալվածատիրոջ, նման մարդուն կտրուկ, առանց որևէ առարկման, վտարում էին գյուղից:

Գյուղից վտարվողը երբեք հեշտությամբ տեղ չէր կարող գտնել գավառում, որ գյուղն էլ գնար, հարցաքննում էին, թե ինչն է պատճառը, որ հեռացել է իր հայրենի օջախից, համայնքից, հարգելի թե անհարգելի պատճառներով:

Երբ գտնում էին, որ պատճառը գողությունը, զոռբայությունը, անառակությունը կամ մատնությունն է, տեղ չէին տալիս: Նման մարդիկ քոչում էին Ղարաբաղի շրջանները:

Սպանություն. գավառի հայկական գյուղերում հարևանին կամ համագյուղացուն սպանելու դեպքեր չեն եղել:

Ղարադաղում այն հավատքը կար, որ «Մի հող եթե մարդու արյունով ներկվի, աստված խիստ կբարկանա և որպես պատիժ յոթ տարի անձրև չի տեղա, բնակչությունը կմատնվի սովի ու համաճարակի»:

1914-18թթ., երկրի քաղաքական անկայունության տարիներին հայերը մի քանի թուրք են սպանել, ինչպես և թուրքերը՝ հայեր:

Անձնասպանություն. Ղարադաղի հայերը այն հավատքն ունեին մարդու կյանքի վերաբերյալ, որ «Մարդն ինքն իրեն չի ստեղծվել, իրավունք էլ չունի սպանելու: Մարդուն ստեղծել է աստված և պետք է մահանա միայն աստծո տված մահով»:

Անձնասպանությունը ոչ աստված է ներում, ոչ եկեղեցին և ոչ էլ հասարակությունը:

Դա կատարում էին ծնողների կամ ավագ եղբայրների հետ անհամաձայնության, վեճերի, բաժանման, «ըշկդիրածի» հետ չամուսնացնելու պատճառով:

Եկեղեցին խստիվ արգելում էր անձնասպանին թաղել համայնքի գերեզմանոցում: Անձնասպաններին թաղում էին մեկուսի տեղում, եթե կատարվել էր դաշտում՝ հենց կատարած վայրում:

Անձնասպանի թաղումը կատարում էին ճանապարհին մոտիկ վայրում և որպես անեծք, անցորդը պարտավոր էր քարկոծել՝ մի քար նետելով գերեզմանի վրա:

Հարբեցողություն. ողջ գավառում չկար ոչ մի գինետուն. գինի և օղի

չէր վաճառվում և, բնականաբար, բացառված էին հարբեցողությունն ու գինեմոլությունը:

Գինի պատրաստում էին ոչ բոլոր հայերը և օգտագործում խիստ չափավոր:

Մեղք. եթե մեկը իր գործերում անհաջողության էր հանդիպում, նպատակին չէր հասնում, ենթադրում էր, որ մեղք է գործել, աստված պատժում է իրեն: Նման ենթադրությունից ելնելով, մոմ էին վառում եկեղեցում, աղերսում, մատաղ խոստանում, որ աստված գթա իրենց, խղճա ու չարությունից ազատի:

Դատավարություն. մենք նախորդ բաժնում հայտնել ենք, որ Ղարադաղի ողջ տարածքում գոյություն ուներ ընդամենը պետական մեկ դատարան, որը գտնվում էր Ահար քաղաքում: Ղարադաղի հայաբնակ տարածքից հետիոտն Ահար գնալը տևում էր երկու օր:

Ընդհանրապես հայերը, ինչպես նաև թուրքերը, քրդերը և մյուս ազգությունները բոլոր դատական գործերը աշխատում էին լուծել տեղում՝ տանուտերերի, մոլլաների և գյուղերի աղսախկալների միջոցով:

Անցյալում թրքաբնակ գյուղերում եղել են մարդասպանության դեպքեր, երբ չկարողանալով հարցը լուծել համայնքում, պետական դատարանը անտեսելով, մարդասպանության գործը տեղափոխել են Խանագահ գյուղ՝ լուծելու հայ համայնքի կայացրած վճռով, նշանակություն տալով հայերի արդարացի վճռին:

Սպանվածի արյան գինը առանց առարկության գնահատում էին 100 թուման արծաթ դրամ, որը համարվում էր պատկառելի գումար:

Մարդասպանը պարտավոր էր առանց որևէ պատճառաբանության վճարել սահմանված գումարը:

Եթե կանխիկ դրամ չէր ունենում, պարտավոր էր արյան գինը երեք օրվա ընթացքում փակել համարժեք ապրանքներով: Դա կարող էր լինել անասուն, գորգ, կահկարասի ու տնային գույք:

Գանձումը կատարվում էր գյուղի գզրի միջոցով, համայնքի խորհրդի անդամների հսկողությամբ:

Հաշտությունը և ներումը կատարվում էր հետևյալ կարգով. գյուղական խորհուրդը մարդասպանին տանում էր սպանվածի տուն: Մարդասպանը դռնից ներս էր մտնում, չոքեչոք մոտենում, հերթով համբուրում ընտանիքի բոլոր անդամների հագուստի ծայրերն ու ձեռքերը, որից հետո գլխահակ ու ծնկաչոք սպասում էր ընտանիքի գլխավորի ներմանը:

Ընտանիքի ղեկավարը, հարգելով իր տուն գնացած տանուտերի և

խորհրդի անդամների տարիքն ու պատկառանքը, մարդասպանի ծեռքը բռնում էր, ոտքի կանգնեցնում ու ասում.

– Ղուրբան եմ տալիս ներկա մարդկանց ու ներում:

Հետագայում քեն ու ոխ չլինելու համար, գյուղական խորհուրդը աշխատում էր բարեկամություն հաստատել երկու տոհմերի միջև՝ խնամիություն, քավորություն և այլն:

Մարդասպանի ներկայությունը պարտադիր չէր դատավարության ժամանակ, քանի որ նա ձայնազուրկ էր:

Բոլոր գյուղերում դատարանի կազմը գյուղական խորհուրդն էր, տանուտերի նախագահությամբ:

Քանի որ գոյություն չուներ պետականորեն նշանակված դատարան, դատական օրենսգիրք չկար: Դատը կատարվում էր ըստ ադաթի, հասկացողության ու խղճի, խորհրդի որոշումը անառարկելի ու անվիճարկելի էր:

Կայացրած վճիռը պարտադիր ձևով իրագործում էին գզրի և երկու ազդեցիկ ու հաղթանդամ երիտասարդների միջոցով:

Եթե մեղադրյալը հրաժարվում էր ներկայանալ խորհրդի նիստին, նրան բերման էին ենթարկում գզրի և երկու երիտասարդների միջոցով:

Մեծ տարբերություն էր դրվում մեղքը հանձն առնողի, աղերսողի և կատարած փաստացի հանցանքից հրաժարվողի նկատմամբ:

Գյուղի բանտը. գյուղի բանտը տանուտերի անասնագոմն էր: Այն մարդուն, որը կատարած հանցանքը հանձն չէր առնում, չէր ենթարկվում գյուղական խորհրդին և ընբոստանում էր ու հայհոյում, ծեծում էին, հետո մի քանի ժամ կամ մեկ գիշեր տևողությամբ, բանտարկում տանուտերի գոմում:

Գավառային պետական դատարանը տեղյակ էր գյուղերում տեղի ունեցող դատերի մասին: Սպանությունից բացի, բոլոր հարցերը համարելով անվտանգ գործեր, չէր առարկում և չէր խառնվում:

Ըստ պետական օրենքի՝ սպանության հարցը պետք է լսվեր պետական դատարանում, սակայն նման գործերը խուսափում էին պետական դատարանում լսելուց հետևյալ երեք պատճառներից ելնելով. սպանվողի կողմը համաձայն չէր, երբ պետական դատարանը հարյուր թուման չէր գանձում մարդասպանից ի օգուտ սպանվողի ընտանիքի, չհաշված հարցաքննություններն ու քաշքշուկները:

Մարդասպանը համաձայն չէր, քանի որ դատարանի վճռով զրկվում էր ունեցվածքից, ենթարկվում չարչարանքների, ծեծի ու բանտարկության:

Գյուղական խորհուրդը համաձայն չէր, քանի որ գործը պետական դատարանին հանձնելով, համայնքը կարժանանար գավառի ողջ բնակչու-

թյան ամոթանքին, որ չեն կարողացել իրենց գյուղի «բացը ծածկել իրենց վերմակով», գցել են պետական շների ու գայլերի բերանը և քանդել երկու օջախ:

Երդում. երդվելու նկատմամբ մեծ հավատ ունեին Ղարադաղի բոլոր ազգությունները:

Երդվում էին գողության, զանազան մեղքեր ու հանցանքներ կատարելու մեջ մեղադրվելու դեպքում: Պահանջում էին երդվել ստախոսության, սուտ վկայության, կորուստների և այլ դեպքերում:

Երդումը կրում էր պաշտոնական և հասարակական բնույթ:

Պատահում էր, որ մի մարդ իր տանը կատարված գողության և կորուստի համար կասկածում էր մի ազգականի կամ հարևանի, իսկ նա խստիվ հրաժարվում էր մեղադրանքից:

Գործը հասնում էր գյուղական խորհրդին:

Մեղադրվողը հրաժարվում էր և պահանջում, որ մեղադրողը երդվի:

Գյուղական խորհուրդը և քահանան չէին համաձայնվում երդվելուն, խուսափելով աստծո կողմից տրվող խիստ պատիժներից, աշխատելով երկու կողմերին համաձայնեցնել:

Երբ գյուղական խորհրդի որոշմանը երկու կողմերն էլ համաձայն չէին լինում, պահանջում էին երդվել:

Ծայրահեղ դեպքերում, երբ գործը հասնում էր երդման, այն կատարվում էր հետևյալ կարգով. մեղադրողն ու կասկածյալը գնում էին եկեղեցի, ամեն մեկը մի զույգ մոմ էր վառում: Մեղադրվողը հանգցնում էր մոմերը և ասում. «Տեր աստված, թա էդ բենեն իս խաբարմ, էս շամերեն նման ընցրս իմ տան ծոխը, թա անտեղի տեղնն ինձ ուրթումնը տալիս, դու ընցրս սոտ ըսողուն տոնը ծոխը»:

Մոմերը մարելուց հետո երդվողը ձեռքը դնում էր ավետարանի վրա և ասում. «Ավետարանը վկա, որ իս էդ բենեն խաբար չըմ»: Դրանով հարցը համարվում էր փակված:

Եթե մեղադրողը երդվեր. «Ավետարանը վկա, իմ գյողը դուվս», մեղադրվողը պարտավոր էր կատարել նրա պահանջը:

Երդում ըստ հավատի. եթե գողությունը մեծ չափերի չէր հասնում և չէին կամենում գյուղխորհրդի նիստի առարկա դարձնել, համաձայնվում ու հաշտվում էին երդվելով հետևյալ ձևերով. մեղադրողը մի քանի բուռ հող էր կույտ անում, կասկածյալին առաջարկում ցրիվ տալ այն ու երդվել:

Մեղադրվողը ցրիվ էր տալիս հողն ու ասում. «Թա էդ բենեն իս խաբարմ, թող աստված իմ տոնս էս վըղեն նման ցըրըվ տա: Թա դու սոտըս ըսիս, քու տոնը աստված ցըրըվ տա»:

Մեղադրողը կասկածյալին առաջարկում էր երդվել որդու արևով:

Մեղադրվողը խփում էր որդու գլխին ու ասում. «Թա էդ բենեն իս խաբարմ, իմ տղես խերը վըչ տըսնամ, թա դու նհախ տեղնս ինձ ըսիս, դու քու տղեն խերը վըչ տըսնաս»:

Կային երդումների բազմազան բանաձևեր.

Աստծեն մի անմը վկա, թա իմ խոսկմս սոտ բեն կա:

Էն աստծեն քոռ եշըմ, թա էդ բենեն իս խաբարմ:

Քրիստոսեն մի անմը վկա, թա իս էդ խաբարը լսածմ:

Օխտը խաչ, օխտը ավետարան, օխտը օր ա, որ մըր բաղը ջիրած չընք:

Տղես խերը վըչ տըսնամ, թա քու տանե նանե իս մի բեն տարածմ:

Ղարիբ ախպորս բողջան գյո, թա քո մասեն իս մի բեն խուսեցածմ:

Թոռնմը էրվմ, թա քու բենեն խաբարմ:

Կրակեն քոռ եշմ, թա իս լսածմ:

Իրիննակեն նհետ մար մտնմ, թա իմ խոսկմս թաքուն բեն կա:

«Մայիփ» (կույր) մնա են մարդը, որ հրվընեն փիսը կոզի:

Հու որ քիանե, ուրեշու խաբար ա տված, ընդուր ազիզ բալան թող թոռնմը էրվի:

Էտ խոսկեն թա իս խաբարմ, թող իս կրակմը էրվըմ:

Թա դու սոտս ըսիս, թող աստուծ տա, քուռանաս, մնաս տափրը տըփտփիլիս:

Կնչիսմ են աստուծը, հո որ հուր հետե «ղեյբար» (բամբասանք) կարի, թող էն երգինքը տոնը քանդի, դիվանը արի:

Էն երգինքը, գետինը վկա, իս էտ բենեն խաբար չըմ:

Հու որ էտ բենեն խաբար ա, սոտ ա խոսիս, թող աստուծ ընդուր տոնը քանդի:

Հու որ ծոռ կխոսի, թող լա իրան գյանքմը, միշտ ծոռ մնա:

Ղարադաղի հայերը մի առած ունեին, «Մարթեն ապրանքը մի տեղ ա կուրչիս, ապրանքը ծրելու հետե՝ հազար ու մի տեղ»:

Կորած ապրանքը քաղցր է լինում:

Այն գտնելու համար դիմում էին բախտագուշակների, գրբացների, զանազան հմայիլների, իսկ եթե գողացված կամ կորած ապրանքը մեծ արժեք ուներ, սարսափի ու ահաբեկման էին ենթարկում գայլի ճանկը կրակի մեջ գցելով, հավատալով, որ ուրացող գողը կկծկվի, կծիկ դառնա:

Կանայք և դատարանը. որքան էլ գովենք Ղարադաղի հայ կանանց, որ եղել են չխոսկան, պատիվ պահող, հարգանքով, համերաշխ ու խոհեմ, պետք է խոստովանել, որ եղել են նաև լեզվանի, կռվարար, անհաշտ ու բամբասկոտ կանայք: Նրանք երբեք դատարանի առջև չէին կանգնում իրենց թույլ տված հանցանքի կամ չարության համար:

Նման դեպքերում միշտ էլ նրա ամուսինն էր գլխիկոր կանգնում գյուղխորհրդի դատի առջև, որին մեղադրում էին այն բանում, որ կնոջ նկատմամբ խստապահանջ չի եղել, որի պատճառով նա ոտնահարում է ամուսնու, ընտանիքի, տոհմի և համայնքի պատիվը, վատ օրինակ հանդիսանում հասարակության համար:

Վարկաբեկած ամուսինը, գնալով տուն, կնոջը խրատելու, կարգի հրավիրելու փոխարեն, ծեծում էր:

Ղարադաղում բոլոր ազգությունների տղամարդիկ կանանց ծեծում էին անխնա, անարգել ու անխիղճ ձևով:

Կինը բողոքելու իրավունք չուներ, իրավազուրկ էր:

ԿՐՈՆ ԵՎ ԱՂԱՆԴՆԵՐ

Ղարադաղում գոյություն ուներ պաշտոնական երկու կրոն և մեկ աղանդ. քրիստոնեություն, մահմեդականություն և բհայի:

Ղարադաղի տարբեր հավատի ազգությունները աստվածապաշտ էին և խորապես հավատում էին աստծո գոյությանը:

Նրանց պատկերացմամբ, աստված մի ալեհեր ծերունի է, նստած բարձր երկնքում, ճերմակ ամպերի վրա, շրջապատված սուրբ մարդկանցով և հրեշտակներով ու գիշեր-ցերեկ աչալուրջ հետևում է բոլոր մարդկանց, նրանց արարքներին:

Քրիստոնյա էին միայն հայերը:

Մահմեդական էին թուրքերը, քրդերը, թաթարները, շամլուները և ղարաչիները:

Ղարադաղում պարսիկներ չկային:

Բհայի կրոնը նոր էր մուտք գործել Ղարադաղ, նրանց կրոնական կենտրոնն էր Քիլեյբար ավանը Արաքսի աջ ափին: Տարածում էր գտել թուրքերի, քրդերի և թաթարների մեջ:

Նկատի ունենալով, որ Պարսկաստանի ամենախուլ անկյուններից մեկը՝ Ղարադաղ, մուտք էր գործել բհայական կրոնը, հարկ ենք համարում ծանոթացնել նրա հետ:

Բհայի կրոնավորները պնդում են, որ աստծո ուղարկած մարգարեներից մեկը՝ Բայանդուրը, դեռ աշխարհ չի եկել, և իրենք պետք է նախապատրաստվեն նրան ընդունելու: Հավատացյալները համոզված էին, որ Բայանդուր մարգարեն իր մարդասիրությամբ ամենաժողովրդականն է: Կրոնավորները պնդում էին, որ իրենք ծանոթ են մարգարեի ուսմունքին և օրենքներին ու կանաչ ճանապարհ են բացում նրա համար, բոլոր ազգությունների մեջ տարածելով բհայական կրոնը՝ ավետում նրա գալուստը:

Բհայական կրոնի պատվիրաններից են. մի ստիր, մի խաբիր, մի գողանար, մի ուրացիր, մի սպանիր և այլն:

Բհային չպետք է խեղճ, անբան ու չքավոր լիներ: Բազմանդամ ընտանիք ունեցողներին նրա հավատակիցները ցույց են տալիս դրամական և նյութական օգնություն: Համայնքը դրամական բյուջե ուներ և ամեն

ունևոր բիայի պարտավոր էր ամեն տարի գումար հատկացնել: Եթե համայնքում ծուխ էր մարում ունեցվածքը բաժանում էին համայնքի անդամների միջև: Նման միջոցառումը նպաստում էր, որ պարսիկ, թուրք և այլ ազգերի չքավորները ընդունեն այդ կրոնը:

Պարսիկ կրոնավորները, նկատելով իրենց բնակչության նման հոսքը դեպի բհայական կրոնը, վայրենի վերաբերմունք էին ցուցաբերում նրանց նկատմամբ. 1955-56թթ. այրել ու ավերել են Թեհրանում գտնվող բհայական սրբավայրերը: Բհայական կրոնը թափանցել էր Ղարադաղի վարչական կենտրոն Ահար քաղաքը, Քիլեյբար ավանը, Քեյվան գավառակի Բիբեթլի և Բալղար թրքաբնակ գյուղերը:

Առանձին աղանդներ ունեին նաև շամլուներն ու ղարաչիները:

ՏՈՆԵՐ

ՆՈՐ ՏԱՐԻ

1919թ. Ղարադաղից գաղթած հայերը 1921թ. գարնանը վերադարձան նորից շենացնելու հայրենի ավերված օջախները: Վայրենի թուրքերը քարուքանդ էին արել գրեթե երեք տարի անբնակ մնացած հայկական գյուղերը, տարել տների դռները, ծածկը, գերանները և սյուները, կտրել նույնիսկ պտղատու ծառերը:

Գաղթից վերադարձած հայերը գրեթե մոռացել էին Նավասարդն ու նրա հետ կապված սովորույթները: Մոռացվեց նաև հայկական հին տոմարը, և հունվարի 1-ը ճանաչվեց Նոր տարի:

Դեկտեմբերի 31-ի երեկոյան ամեն մի հայ օջախում, ունեցածին համապատասխան սփռոց էր բացվում հին տարուն ճանապարհելու ու նորին դիմավորելու համար: Այդ երեկո հրացան էին կրակում, իբր արագացնում հին տարվա մեկնումը:

Հունվարի մեկի վաղ առավոտյան շտապում էին հարևանների ու հարազատների Նոր տարին շնորհավորելու՝ տանելով նուռ, խնձոր, սերկևիլ և այլ մրգեր:

Հայերի Նոր տարին շնորհավորում էին նաև մոտակա գյուղերի ծանոթ թուրքերը, շամլուները, քրդերն ու թաթարները:

1921թ. հետո Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդարանի կողմից հայկական գյուղերն ուղարկված ուսուցիչները նորություն բերեցին՝ կազմակերպելով տոնածառի հանդես: Ուսուցչի գլխավորությամբ աշակերտները անտառից եղևնի էին բերում, գյուղի ամենամեծ ու ընդարձակ տներից մեկում կազմակերպում նոր տարվա տոնախմբություն:

Տան վերևի մասում կանգնեցրած եղևնուն տոնական տեսք էին տալիս, զարդարում չոր մրգերի շարաններով, ծյուղերից կախում գեղեցիկ նկարներ, թղթե գույնզգույն շղթաներ և այլն: Սկսվում էր տոնական համերգը. աշակերտները երգում էին ու արտասանում:

Հունվարի մեկի երեկոյան այնտեղ էին գալիս գյուղի երաժիշտները, ուրախ պարեղանակներ նվագում: Հավաքվում էր գյուղի ողջ հասարակությունը, երիտասարդները պարում էին և ուրախանում:

Նոր տարին ավարտվում էր թատերական փոքրիկ բեմադրություններով՝ «Չարի վերջը», «Տերն ու ծառան», «Քեֆ անողի քեֆը չի պակսի», տեղական՝ «Քաչալ Խաչի ուռուս ա դըռած», «Աղան գենցալ ա նշնատըս» և այլ ուրախ ու ծիծաղաշարժ գործերով:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ, ՋՐՕՐՀՆԵՔ

Թաթախման գիշեր. Հունվարի հինգի երեկոյան, հնգօրյա պասից հետո, ժողովուրդը վերադառնալով ժամերգությունից կատարում էր թաթախումը:

Պատանիները երգելով մաղ էին գալիս տնետուն, Քրիստոսի ծննդյան լուրն ավետում, ինչպես Ջրօրհնեքի տոնին ավետում էին Քրիստոսի մկրտությունը:

Թաթախման երեկոյան հարուստը, ունևորը, աղքատն ու միայնակը հավասարվում էին:

Պարտադիր բոլորի սփռոցներին պետք է լիներ բրնձով ու յուղով պատրաստած փլավ ու ապխտած ձուկ, որը նախապես բերում էին Թավրիզից:

Այդ օրը թխում էին նաև կրկնեի, քանի որ, ըստ ավանդության՝ Քրիստոսի ծննդյանն այցելող մոգերին հովիվները դիմավորել էին այդ հացատեսակով: Կրկենու խմորի մեջ, որպես դովլաթ՝ արծաթ դրամ էին դնում:

Խանագահ գյուղում Թաթախման երեկոյան, աշակերտները հավաքվում էին դպրոցում և բաժանվում երկու խմբի: 10-14 տարեկան տղաների խումբը կոչվում էր «Ալելույա», իսկ 15-18 տարեկաններինը՝ «Խորհուրդ մեծի» կամ «Ավետիս»: Երկու խմբերն էլ շրջում էին գյուղում ու ավետում Քրիստոսի ծնունդը:

«Ալելույա» խումբը բաժանվում էր երկու մասի: Մի մասը փոքրիկ կողովով նավթի թիթեղյա ճրագը տան երդիկից ներքև պարանով կախում ու միաձայն երգում էր.

Ալելույա, ալելույա,
Ջըրօրհնեքը, ճրագ լույսով,
Ջատիկը՝ արև լույսով,
Թե քնած եք, վեր զարթնեցե՛ք,

Թե զարթուն եք, լավ լսեցե՛ք,
Մարյամը եկավ լալով-լալով,
Լալով-լալով, մղկտալով:

Խմբի մյուս անդամները, պարկեր շալակած տուն էին մտնում: Նրանցից մեկը, որին անվանում էին «չորեքսի», արտասանում էր.

Ձեր տունն է չորս սունանի,
Չորս սուներից ո՞րն է սալը.
Սալը՝ սալին, չար կամեցողի
Սրտին ապրի:
Տոնը շեն, տոնը շեն,
Ձեր տղայոց անունը ի՞նչ է:

Տանտերը տալիս էր երեխաների անունները՝ Հայկ, Արամ, Աշոտ և այլն:

Երդիկի մոտ կանգնած խումբը նորից երգում էր.

Գնանք, նստենք մեր սեղանին,
Գինի խմենք Նախչվանի,
Չար թշնամուն գետը տանի,
Չարի աչքը ագռավը հանի:

Այս խոսքի հետ չորեքսին ասում էր.

Մի պոչատ հավ,
Մի իստիլ եղ,
Տվեք ալելուն տանի:

Դրանից ընտանիքի անդամները զվարճանում ու ծիծաղում էին, տանտիրուհին, ըստ ցանկության՝ երեխաներին էր տալիս յուղ, այլուր, գաթա, նուռ, չոր մրգեր և այլն:

Խումբը, գոհ ու շնորհակալ գնում էր հաջորդ տուն:

Ղարադաղում շներին կապելու սովորություն չկար, դրանցից անվնաս մնալու համար տղաները իրենց հետ տանում էին վառվող «ծուծուններ» (անձող):

Ավագ երեխաների խումբը, զանգակ հնչեցնելով շրջում էր գյուղում և երգելով ավետում.

Խորհուրդ մեծ և ըսքանչելի,
Որ Հայսմավուր հայտնեցավ,
Հովիվ երգեց ընդ հրեշտակ,
Աս ավետիս աշխարհում:
Ծնա, նորա արքայի Բեթլեհեմ քաղաքում,

Որդիք, մարդկանց օրհնեցեք,
Զի վասն մարմնեցավ,
Ոչ մեկն ելավ ի հորից,
Սուրբ գահին բազմեցավ:

Խումբը ընդհատում էր ավետաբերության երգն ու ասում. «Ավետիս՝ ծնունդ Քրիստոսի»:

Տան անդամները պատասխանում էին.

«Օհնյալ է ծնունդը Քրիստոսի»:

Խումբը շարունակում էր ավետել.

Այսօր տոն է մեծ ծննդյան, ավետիս,
Տյառն մերոց մեծ հայտնության, ավետիս,
Այսօր արև արդարության, ավետիս,
Երևեցավ ի մեջ մարդկանց, ավետիս,
Մելիոն, Գասպար և Բաղդասար, ավետիս,
Նորա նշան մի աստղ տեսան, ավետիս,
Երբ Բեթլեհեմ քաղաքն հասան, ավետիս,
Մի խոր ու լայն քարայր մտան, ավետիս,
Այնտեղ գտան սուրբ մայրիկին, ավետիս,
Ամենասուրբ մանուկը գրկին, ավետիս:

Տան տերը շնորհակալություն էր հայտնում Քրիստոսի ծնունդը ավետող մանուկներին ու դրամ, գաթա, յուղ, այլուր, միրգ ու այլ նվերներ տալիս:

Երեխաները հավաքած նվերները միացնում, վաճառում էին, այդ գումարով գառ կամ ուլ առնում ու հաջորդ երեկո խնջույք կազմակերպում:

Ջրօրհնեք (Խաչը ջուրն ա ինգյալ). հունվարի վեցի առավոտյան՝ զանգերի ղողանջով եկեղեցում հավաքվում էր գյուղի հասարակությունը: Եկեղեցի էին բերում համայնքին պատկանող ամենամեծ պղնձե կաթսան՝ «էլեն ղըզղանը» և ջուր լցնում: Քահանան, տիրացուն, գրաճանաչ մարդիկ և բարձր դասարանի աշակերտները հոգևոր երգերով ու կաթսայի շուրջը պտույտ կատարելով, սկսում էին ծիսակատարությունը:

Աշակերտական տարիքից հիշողությանս մեջ մնացել է միայն այս քառյակը.

Ա՛յ Հորդանան, գետ Հորդանան,
Ավետաբեր ծայնիդ երգեմ,
Մեծ Կարապետ, ընդ Հովհաննես,
Սուրբ Մկրտիչ, բերող հանդես:

Սուրբ մկրտության պատարագն ու երգերն ավարտելուց հետո քահանան մեռոն էր կաթեցնում կաթսայի մեջ ու մետաքսե թաշկինակով բռնած խաչը իջեցնում մեռոնաջրված կաթսան:

Հավատացյալ հայ շինականը մեծ հավատք ունենալով Սուրբ խաչի զորության նկատմամբ, դառնում էր Ջրօրհնեքի քավոր: Նա դիմում էր գյուղացիներին, հայտնում խաչը ջրից հանելու իր նպատակն ու խնդրում, որ ուրիշները առաջարկություն չանեն, չխանգարեն իր նպատակի կատարմանը:

Սուրբ խաչին քավոր դարձող գյուղացին մի որոշ գումար էր նվիրում քահանային:

Քահանան Սուրբ խաչը ջրից հանում, մետաքսե թաշկինակում փաթաթում ու հանձնում էր խաչքավորին, որն ընդունելով այն հայտարարում էր. «Սուրբ խաչի անունով մատաղ ունեմ կտրած, բոլորին հրավիրում եմ տուն՝ մատաղ ուտելու»:

Խաչը ջուրը գցելու արարողությանը մասնակցում էին նաև կանայք, նորահարսերն ու աղջիկները: Նրանք մեռոնված ջրից տանում էին տները, լցնում այլուրի վրա, պատրաստում փոքրիկ բլիթներ ու կախում տան մեջտեղի սյունից:

Եթե տարվա ընթացքում շունը, կատուն կամ մկները աման էին պղծում, այդ բլիթներից գցում էին ջրի մեջ, ամանը լվանում՝ «հալալում»:

Լինում էին դեպքեր, որ քավոր կանգնելու նպատակ ունեցողներ չէին լինում: Նման դեպքում տիրացուն, դիմելով հասարակությանը, հարցնում էր, թե ով է ուզում խաչը ջրից հանել: Գյուղացիներից մեկը ինչ-որ գումար էր առաջարկում, մյուսը՝ ավելի: Եվ այսպես, ով որ ավելի բարձր գումար էր տալիս, նա էր դառնում Սուրբ խաչի քավոր: Լինում էին մարդիկ, որ նպատակ էին ունենում քավոր կանգնելու, սակայն միջոցները չէր ներում, նրանք մատաղ էին կտրում, լավաշի մեջ փաթաթում, բաժանում եկեղեցուց դուրս եկողներին:

Եկեղեցուց դուրս գալով, ճանապարհին հանդիպած մարդկանց բարևելու փոխարեն, ասում էին. «Շնորհավոր ծնունդ, մկրտություն Քրիստոսի» և պատասխան ստանում՝ «Օրհնյալ է աստված, ծնունդ, մկրտություն Քրիստոսի»:

Սուրբ խաչը քավորի տանը պահում էին յոթ օր: Հաջորդ կիրակի առավոտյան վերադարձնում էին եկեղեցի ու մոմեր վառում:

ԴԸՌՆ ԴՈՌԵՆՋ (ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ)

Փետրվարի առաջին կեսին տեղի ունեցող կրակավառոցը առանձին շուքով էին կատարում Ղարադաղում:

Օրվա երկրորդ կեսին գյուղի երիտասարդները, պատանիներն ու աղջիկները, մի քանի կտոր փայտ առած հավաքվում էին եկեղեցու մոտ և խարույկ անում: Բոլորը հետևում էին, թե քամին որ կողմ է տանում ծուխը: Դրանով որոշում էին, որ այդ կողմի դաշտերում հացահատիկի առատություն կլինի:

Քահանան խաչով ու ավետարանով, իսկ տիրացուն բուրվառով խարույկի շուրջը պտտվում ու օրհնում էին սուրբ կրակը:

Կրակը մարելուց հետո «խնձղաչորը» (կիսավառ փայտեր) բաժանում էին հավաքվածներին:

Խարույկի մոտից տարած փայտերը առաջին անգամ «թանավ» ճաշ եփելիս դնում էին օջախում, որ կաթնամթերքի առատություն լինի:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Բոլորից անաղարտ, հնադարյան սովորույթներով ու խոր հավատով մինչև մեր օրերն էին հասել Սուրբ Սարգսի հետ կապված պաշտամունքային արարողությունները:

Երեկոյան աղջիկների ու երիտասարդների համար փոխինձով աղի բլիթ էին պատրաստում, իսկ մեծահասակների համար՝ մեղրի կամ խաղողի քաղցր հյութով՝ «շաղաղուկ»: Երեկոյան աղի բլիթներն ուտում էին ու առանց ջուր խմելու քնում, «որ գիշերը երազում աչք դրած աղջիկը կամ տղան ջուր տան»:

Խաշիլ. Սուրբ Սարգսի պասն ավարտվելու հաջորդ առավոտյան բոլոր հայ օջախներում խաշիլ էին եփում:

Խաշիլը եփում էին հետևյալ ձևով. երեկոյան չորաթանը հարում, վերածում էին թանի: Ցորենի հատիկները աղանձում էին երկանքով աղում, մաղում, բաժանում մանր ու խոշորի: Խոշորը լցնում էին պղնձի մեջ, եփում, հետո մանրը ավելացնում: Խաշիլը լցնում էին լայն ամանների մեջ և կենտրոնում բրգի ձև տալիս, վերին մասում գդալով փոսիկ անում, մեջը յուղ լցնում, շուրջն էլ՝ թան:

Առավոտյան խաշիլն ուտելուց անմիջապես հետո տղաներն ու աղջիկները խաշիլից ընկույզի չափ գնդիկներ էին պատրաստում, դնում կտու-

րին ու դարանակալում, որ տեսնեն, թե կաչաղակն այն որ կողմ կտանի, գուշակելով, որ այդ թաղում կամուսնանան:

Ղարադաղի հայերը հավատում էին, որ Սուրբ Սարգիսը գիշերը ձիով գալիս, մտնում է հավատացյալ արդար մարդկանց տները, նրանց բախտավորություն, հաջողություն տալիս և մուրազը կատարում:

Դա իմանալու համար շեմի մոտ, սփռոցի վրա ալյուր, փոխինձ կամ մոխիր էին ցանում, որ ձիու ոտնահետքը դաջվի, տեղեկանան նրա սուրբ գալուստի մասին:

Սուրբ Սարգսի տոնի օրը այդ անունով մի մարդ համագյուղացիներին հրավիրում էր իր տուն՝ մատաղ ուտելու:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանին ամեն տարի մեծ խանդավառությամբ էին սպասում Ղարադաղի հայերը: Իրոք, որ այն «բարիկենդան» (բարություն, խնդություն, ուրախություն) էր մարդկանց համար:

Մինչև ուշ գիշեր գյուղով մեկ հնչում էր ավանդական զուռնա դհոլի ձայնը: Հայաբնակ բոլոր գյուղերում համաժողովրդական տոն էր լինում, ուրախանում, պարում, երգում, զանազան խաղեր էին կազմակերպում թե տարեց մարդիկ, թե ջահելները, թե պատանիները: Երիտասարդները ցերեկները խաղեր ու պարեր էին կազմակերպում գյուղի հրապարակում, գոմերի կտուրներին, հաճախ գյուղից դուրս՝ կալերում, «թամաշա» անող ծերունիներին, կանանց ու աղջիկներին ցուցադրում իրենց ուժը, շնորհքը, կարողությունը: Երեկոները ընդհանուր միջոցներով ոչխար էին մորթում, խնջույքներ կազմակերպում, երգում, պարում, ուրախանում մինչև ուշ գիշեր:

Բարեկենդանի նշանավոր հանդեսներից էր «Խանի օրը», որը տեղի էր ունենում Վարդանանց տոնի հաջորդ կիրակի օրը: «Խանի օրը» տոնախմբությանը երիտասարդները նախապատրաստվում էին նախօրոք: Նշանակված օրը վաղ առավոտյան գյուղով մեկ տարածվում էր զուռնայի ձայնը՝ «սըհարի» (վաղորդյան) խորհրդավոր ու զիլ կանչով:

Գյուղի հրապարակին հատուկ տոնական տեսք էին տալիս, պատերից կախում գեղեցիկ կարպետներ: Ջարդարված տարածքի կենտրոնում, պատի տակ «թախտ» (գահ) էին պատրաստում, իբրև «խանի» (գյուղատիրոջ) նստավայր: Թախտի վրա գեղեցիկ կարպետների էին փռում, հետո ծածկում գորգերով: Դա համարվում էր խանի «էմարաթը» (դղյակ):

Գյուղի ամենահամբերատար, լուրջ, ծանրակշիռ, կատակասեր, միջին տարիքի մի մարդու նշանակում էին «խան»: Նա հագնում էր «չաքրմա» (երկարաճիտ կոշիկ), սև գույնի արխալուղ, ուսերին ձգում չուխան, գլխին դնում գառան սև մորթուց կարած գլխարկ, երկար մի թուր կախում կաշվե լայն գոտիկից, ծախ կողմում՝ «ղալյանը», բեղերը սրում, ունքերը կիտում, մռայլ հայացքով հրամաններ տալիս նոքյարներին:

Գյուղի հաղթանդամ երիտասարդներից վեց հոգու նշանակում էին խանին սպասարկող անձնակազմ: Երիտասարդներից երկուսը, որպես խանի թիկնապահներ թրերը գոտիներից կախած, հրացանները ձեռներին, կանգնում էին նրա աջ ու ծախ կողմերում: Ծառաներից երկուսը հրամանատարողներն էին, որոնք, ըստ խանի հրամանի՝ բերում էին «ըմբոստ, խանին չլսող, չենթարկվող, ինքնագլուխ գործ բռնողներին»: Մյուս երկուսը մեղավորներին պատիժների ու տուգանքների էին ենթարկում. վերջիններիս զենքը մտրակն էր:

Հրապարակի կենտրոնում երկու մեծ գերան էին դնում, գերանների վրա դրված էր լինում երկու երկար շղթա ու հաստ պարաններ՝ պատիժներ տալու համար:

Ներկայացումը դիտելու էր հավաքվում ողջ գյուղը՝ ծերունիներ, կանայք, դեմքները շղարշով ծածկած նորահարսեր, աղջիկներ, պատանիներ ու երեխաներ: Հարևան գյուղերից նաև թուրքեր ու քրդեր էին գալիս դիտելու այն:

Խանն սկսում էր կարգադրություններ ու հրամաններ արձակել.

– Շտապ բերել Մանցուց Հարութին:

Հարութին բերում էին:

– Խանն ապրած կենա, լսում եմ,- ասում էր Հարութը, գլխարկը հանելով ու գլխիկոր կանգնելով նրա առաջ:

– Տղայիդ ամուսնացրել ես՝ ինձ տեղյակ չես պահել, ի՞նչն է պատճառը:

– Խանն ապրած կենա, խառը ժամանակ էր, սխալվել եմ,- պատասխանում էր Հարութը:

– Սխալի համար՝ կապել գերանի վրա ու հիսուն «շըլլաղ» (մտրակ) խփել:

Ծառաները իսկույն կատարում էին հրամանը:

– Վայ, մեղք եմ, մի ծեծեք, ի՞նչ է իմ ջարման, որոշեք՝ տամ:

– Մի թուման փող,- ասում էր խանը:

Հարութը մի թումանը տալիս էր, ազատվում:

– Շտապ բերեք Օվունց Շահենի տղա Դովուն:

Դովուն բերում էին:

– Նշանվել է, ինձնից իրավունք չի առել: Կապեք գերանին, հարյուր շըլլաղ խփեք:

– Ինձ մի ծեծեք, ես հայր ունեմ,- բողոքեց Դովին:

– Տղայիս ինչո՞ւ եք շղթայել,- վրդովված դիմեց խանին Դովու հայրը:

– Ինձնից «ուռուսխար» (թույլտվություն) չառած՝ տղայիդ նշանել ես,- զայրացած ասաց խանը:

– Լավ եմ արել, որ չեմ հայտնել: Ի՞մ տղան է, թե՞ քո, ինչ է՝ կնկանս ծոցը քնելիս էլ պիտի գամ քեզնից իրավունք առնե՞մ:

– Կապել գերանին, համարձակության համար կտրել լեզուն:

Դովու հորն էլ կապեցին գերանին:

– Դե լավ, գնացեք Դովունց տնից մի աքաղաղ առեք, նշանածի տնից էլ՝ տասը ձվից ձվածեղ, տասը հացի հետ, նոր հայր ու որդուն ազատեք կալանքից,- պատժի դիմաց տուգնաք սահմանելով, որոշեց խանը:

– Գնացեք, բերեք Նաբունց Թովմասին:

Ծառաները գնացին, Թովմասին բերին:

– Ի՞նչ է իմ մեղքը խան, հասարակության մոտ ինչի՞ ես ինձ պարտադիր բերման ենթարկել:

– Գյուղի դիմացի սարալանջի էն մեծ արտը քո՞նն է, - հարցրեց խանը:

– Հա, իմն է,- պատասխանեց Թովմասը:

– Գարունը բացվեց, էլ էն սարի ճանապարհը կմոռանաս, ես պիտի տիրեմ,- մռայլված կարգադրեց խանն ու ավելացրեց,- գյուղն իմն է, հողն իմն է, ուրեմն արտն էլ է իմը, չխոսես:

– Այ զըրթ, զըրթ, զըրթ,- գոչեց Թովմասը, հարձակվեց խանի վրա ու ծեռքի մի հարվածով թռցրեց խանի մորթե փափախը:

Հանդիսականները սկսեցին քրքջալ, 4-5 ծառաներ հազիվ կարողացան հսկա կաղնու նմանվող Թովմասին կալանավորել, տանել գերանի վրա շղթայել:

– Գյուղի մարդ է, հարկավոր է ներել, ջարմա անել մեկ բլիթ մեղր, տասը հատ լավաշ հաց ու ազատ արձակել,- կարգադրեց խանը, փափախը գլխին դնելով:

Խանը մեկ առ մեկ գիտեր, թե որ գյուղացուց ինչ կարելի է պոկել: Մեկ-մեկ բերման էր ենթարկում և նման զանազան պատճառներով տուգանում: Ոչ բոլոր գյուղացիներն էին ենթարկվում խանին, հանդիսականներին ուրախություն, ծիծաղ պատճառելու համար հաճախ ապստամբում էին, փախցնում էին խանի փափախը, շուռ էին տալիս թախտը, գետին

գլորում խանին: Ծառաները բռնում էին ապստամբ երիտասարդներին, գոմում բանտարկում, տուգանում, ենթարկում պատիժների:

Խանը տակը կոտրված մի կուլա էր պահում, որպես հեռադիտակ: Ծառաները, որևէ մեկին բերելիս, որ ուշանում էին, դնում էր աչքին, դիտում, ծիծաղ պատճառում հանդիսատեսին:

Երեկոյին մոտ ծափերով ու ուրախ բացականչություններով «Խանի օրը» ավարտվում էր:

Տուգանքների գումարով ոչխար էին գնում և երեկոյան համայնքային ուրախ խնջույք կազմակերպում:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆ

Ամեն տարի փետրվարի երրորդ տասնօրյակում մեծ շուքով նշում էին Վարդանանց տոնը:

Տոնից մի քանի շաբաթ առաջ երիտասարդները հավաքվում էին դպրոցներում ու դասերից հետո փորձեր կատարում Ավարայրի ճակատամարտը ցուցադրելու համար: Նախօրոք պատրաստում էին համապատասխան հագուստներ, փայտե սրեր, նետ ու աղեղ և այլն:

Տոնի օրը, առավոտյան զուռնաչիների մարտական նվագի զիլ ձայնը գյուղի հրապարակ էր բերում ողջ հասարակությանը: Մոտակա կտուրներից արարողությանը հետևում էին կանայք, նորահարսերն ու աղջիկները:

Զուռնա-դհոլի մարտական նվագի տակ գոտեմարտի էին բռնվում երիտասարդները, ջահելությունը հիշելով, ուժերն էին փորձում նաև ծերունիները՝ աշխուժություն ու ծիծաղ պատճառելով հավաքված ամբոխին:

Հրապարակ էին մտնում դպրոցի աշակերտները, հայրենասիրական երգեր ու արտասանություններ կատարում և ցուցադրում Ավարայրի ճակատամարտի բեմադրությունը:

Գյուղի ընդարձակ հրապարակի աջ կողմում գտնվում էր հայոց արքունիքն ու զորաբանակը:

Հայոց բանակի զինվորները, պարսիկներից տարբերվելու համար, գլխներին կրում էին գեղեցիկ սաղավարտներ: Երկու բանակներն էլ բաժանված էին լինում երեք զորախմբերի, զինված տարբեր զենքերով, առաջինը՝ նետ ու աղեղով, երկրորդը՝ սրերով ու վահաններով, երրորդը՝ նիզակներով ու վահաններով:

Նետերը վնաս չպատճառելու համար կեռ փայտիկներից էին լինում. արծակում էին դեպի երկինք կամ գետին՝ ոտքերի առջև:

Հայոց արքունիքում նստում էին Վարդան զորավարը, Վասակ իշխանը, Ղևոնդ Երեցը և այլ իշխաններ, պարսկական կողմում՝ Հազկերտը, մոլլան ու զորավարները:

Ներկայացման սկզբում, արյունահեղ պատերազմից խուսափելու նպատակով, սուրհանդակների միջոցով հաշտության բանակցություններ էին վարում:

Նախ պարսիկները սուրհանդակի միջոցով նամակ էին ուղարկում Վարդան զորավարին, պահանջում կրոնափոխ լինել ու հաշտություն կնքել:

Պատասխան նամակում գրում էին, որ հայերը պատրաստ են մինչև վերջին զինվորը զոհվել, բայց պահպանել իրենց կրոնը:

Հայոց արքունիքում տեղի էր ունենում զորքերի համախմբում, հայրենասիրական ճառով հանդես էր գալիս Վարդան զորավարը, ապա կրակոտ քաջալերանքով, խաչը ձեռքին՝ բանակին մարտի էր կոչում Ղևոնդ Երեցը: Վասակ իշխանը միշտ մնում էր լուռ, մտածկոտ ու տխրադեմ:

Պարսից մոլլան, կարդալով հայերի հանդուգն պատասխանը, զայրանում էր ու բանակին դրդում մարտի:

Առաջինը կանոնավոր շարքերով մարտի էին նետվում նետ ու աղեղով զինված զինվորները, ապա սրերով զինվածներն ու նիզակավորները:

Նիզակներով զինված հայոց զորախմբի հրամանատարը Վասակ իշխանն էր:

Մարտիկներին քաջալերում էր զուռնա դհոլի նվագը:

Երկու կողմերի հրամանատարներն էլ բարձր աղմուկ աղաղակով, քաջալերում, առաջ էին տանում իրենց զինվորներին: Մարտի ամենաթեժ պահին Վասակ իշխանը դավաճանություն էր կատարում, լքում իր զորախումբը, անցնում պարսիկների կողմը և դիտավորյալ ու նենգաբար, նիզակի հարվածով գետնում Վարդան զորավարին ու Ղևոնդ Երեցին:

Վասակի դավաճանությունը, Վարդան զորավարի ու Ղևոնդ Երեցի զոհվելը չէր ընկճում հայոց բանակին: Նրանք վերցնելով սպանվածներին առանց խուճապի, կռվելով նահանջում էին, ցուցադրում իրենց արիությունն ու տոկունությունը:

Գյուղի երիտասարդները և պատանիները ցուցադրում էին հիանալի հմտություն, ջանասիրություն, այնպիսի հուզիչ ու տխուր տեսարան էին ստեղծում, որ հանդիսատես շատ կանայք ու տղամարդիկ արտասվում էին:

Տարիներ շարունակ Վարդանանց տոնի կապակցությամբ Ավարայրի ճակատամարտի բեմադրումը Խանագահ գյուղում կազմակերպում և

գլխավոր դերերում հանդես էին գալիս Արմենակ Քյարամի Արզումանյանը (բեմադրող), Վարդան Հարությունի Հարությունյանը (Վարդան զորավար), Խաչատուր Զաքարի Գրիգորյանը (Ղևոնդ Երեց), Միսակ Սամսոնի Աղաջանյանը (Վասակ), Վարդան Զաքարիայի Դանիելյանը (Հազկերտ), Կարապետ Մարտիրոսի Բադալյանը (մոլլա), Վարդան Գրիգորի Վարդանյանը, Նորայր Մարտիրոսի Դադյանը և շատ ուրիշներ:

Բեմադրությունը ավարտելուց հետո ժողովուրդը պատարագի էր գնում: Վարդան անունով համագյուղացիներից մեկը մատաղ էր անում և մարդկանց հրավիրում իր տուն:

ՄԵԾ ՊԱՔ (ՄԵԾ ՊԱՍ)

Նշանավոր պասերից էր Մեծ պասը,[70] որը տևում էր յոթ շաբաթ, մինչև մեծ Զատիկը:

Մեծ պասը բռնելու երեկոյան խրախճանքի մեծ տոն էր ամեն ընտանիքում՝ սննդամթերքի, տարբեր ճաշերի լիություն, քանի որ յոթ շաբաթ արգելվում էր մսեղեն ու յուղեղեն սնունդը:

Ճաշկերույթից հետո երիտասարդները հրացան էին կրակում, իբր թե ահ էին տալիս Մեծ պասին արագ ացնել, չծանձրացնել երկար տևողությամբ:

Մեծ պասի առաջին երկուշաբթի օրվան առանձին շուք և նշանակություն էին տալիս: Վաղ առավոտյան զուռնա դհոլի կանչով գյուղի հրապարակում հավաքվում էր ողջ հասարակությունը:

Առավոտյան գյուղացիները գրպաններում դրած մի քանի նուռ, խնծոր կամ սերկևիլ, շտապում էին հարազատների, բարեկամների ու հարևանների տները: Նրանք տան մեծին մի միրգ էին տալիս, ձեռքը բռնում ու ասում. «Պաքտ շնհավուր ինի»:

«Քու պաքն ալ շնհավուր ինի, պարով հասննք սուրփ Հարութուն», ստանում էր պատասխանը: Այսպես, մեկը մյուսի պասը շնորհավորելով, հավաքվում էին գյուղի հրապարակում և զուռնա դհոլի նվագով, երգ ու պարով ուղևորվում քահանայի տուն, իսկ այնտեղից՝ տանուտերի տուն:

---

[70] Հին ժամանակներում նշվել են նաև **հնձի, նախրաթողի, հորթաթողի** պասերը, **«մկան կիրակին»** և այլն, որոնց անուններն էին միայն հիշվում: Տարածված էին եկեղեցական օրենքներով սահմանված պասերը: Պաս պահելը, ծոմը, ամեն կիրակնամուտի եկեղեցի գնալը պարտադիր էր ամեն հայ քրիստոնյայի համար:

Տանուտերի տնից հետո էլ հարուստ, աղքատ, ունևոր, չունևոր հարցնող չկար. գյուղի մի ծայրից, հերթականությամբ շրջում էին և վերջացնում վերջին տնով: Բոլորի տների առջև նվագում ու պարում էին, շնորհավորում Մեծ պասը:

Ամեն մի ընտանիք, իր ունեցածի համեմատ «սինի» էր պատրաստում, լավաշ հացով, պասուց ճաշերով, լոբով, մեղրով, գինով և մեծ հարգանքով դիմավորում պասը շնորհավորողներին:

Շատ ծերունիներ գրպաններում յոթ հատիկ չոր լոբի էին պահում և ամեն կիրակի մեկը դեն նետում, որպեսզի իմանային, թե պասին քանի շաբաթ է մնում:

Ակլատիզ. պառավ կանայք կտորներից խնձորի մեծության գնդակ էին պատրաստում, վրան հավի յոթ փետուր ամրացնում և ամեն կիրակի, եկեղեցուց գալուց հետո, մեկը հանում՝ դեն նետում, այսպիսով իմանում մեծ պասի շաբաթների քանակը:

Մաջինք (միջինք). Մեծ պասի կիսվելը նշանավորելով հատուկ հացատեսակ էին թխում, որն անվանում էին մաջինք՝ որպես երկարատև ու ծանր պասը կիսելու աչքալուսանք:

Այն պատրաստում էին հետևյալ ձևով. ցորենի ալյուրից խմոր էին հունցում: Եփած կարմիր լոբու հատիկների վրա քաղցրահամ դդում էին կտրտում և համեմում: Այն օգտագործում էին որպես միջուկ, որը դնում էին բարակ տարածած խմորի մեջ, եզրերը ծածկում, տալիս նշի ձև ու սաջի վրա թխում:

Միջինքից ուղարկում էին խնամիների, հարազատների ու հարևաններ ի տները:

Մեծ պասի վերջին շաբաթվա ամեն մի օրը, լինելով Քրիստոսի կյանքի վերջին շաբաթը, ուներ առանձին անվանում և նշանակություն, այդ իսկ պատճառով շաբաթվա օրերը համարվել են «ավագ»: Օրինակ՝ ավագ երկուշաբթի, ավագ երեքշաբթի, ավագ հինգշաբթի: Չորեքշաբթի օրվանն անվանել են «չիք» չորեքշաբթի:

Ըստ ավանդության՝ «հրեաները նախատեսել էին Քրիստոսին ձերբակալել չորեքշաբթի օրը, բայց չէր հաջողվել, չարիքը չքվել, փոխվել էր բարության»: Այս կապակցությամբ էլ ավագ շավաթվա չորեքշաբթի օրը դարձավ «չքության, չարիքի խափանության, բարության օր»:

Չիք չորեքշաբթի. Ղարադաղի հայերը այդ տարվա մատղաշ գառների և ուլերի վրա շիկացրած շամփուրներով նշաններ էին անում:

Ամեն ընտանիք ուներ իր տարբերանշանը. քթի, աջ կամ ձախ ականջների վրա խաչ, կլոր և այլ նշան էին անում:

Մատղաշին նշան դնելուց հետո, կենդանու ականջին ասում էին. «Ազարդ չքվի, բեզարդ չքվի»: Նշանակում էր, որպես չարիքից փրկության օր, մատղաշներն էլ հիվանդությունից, չարիքից հեռու լինեն:

Ավագ հինգշաբթի (ոտնալվա). ըստ ավանդության՝ ավագ հինգշաբթի է կոչվում, քանի այդ օրվա երեկոյան Քրիստոսը վերջին անգամ ընթրիքի է նստել իր աշակերտների հետ:

Մեծ Պասի վերջին շաբաթվա բոլոր օրերին եկեղեցիներում տեղի էր ունենում պատարագ և ժամերգություն:

Ավագ հինգշաբթի օրվա ժամերգության ժամանակ կարագ էին տանում եկեղեցի՝ օրհնության:

Օրհնված կարագը ափի մեջ պահելու իրավունք չունեին, դնում էին ձախ ծեռքի երեսին, տանում տուն և որպես մասունք՝ փոքր կտորների բաժանում, տալիս ընտանիքի բոլոր անդամներին:

Օրի ուրբաթ (Հուդայի մատնության օր). Քրիստոսին ձերբակալել են հինգշաբթի գիշերը, իսկ ժողովուրդը տեղեկացել է ուրբաթ առավոտյան: Ըստ քահանաների բացատրության՝ օրի ուրբաթ նշանակում է Հուդայի դավաճանության, մատնության օր:

Դարբինները ուրբաթ օրը չէին աշխատում, քանի որ «Քրիստոսի խաչելության գամերը պատրաստել են այդ օրը: Քրիստոնյա հավատացյալ դարբինը, եթե այդ օրն աշխատեր, նշանակում է կավելացներ խաչելության գամերի քանակը»:

Ղարադաղի հայերի մեջ գոյատևող ավանդության համաձայն՝ Քրիստոսին խաչելու համար պատրաստել են հինգ գամ, մեկը՝ կրծքին, երկուսը՝ ձեռքերին, երկուսն էլ ոտքերին խփելու համար: Խաչելու պահին, առավոտ վաղ մի հովիվ տեսնում է գետնին թափված գամերը ու մեկը դնում է գրպանում: Կրծքի ու ձեռքերի գամերը խփում են, տեսնում են, որ ոտքերի համար նախատեսվածներից մեկը չկա, անհետացել է, փնտրում են, չեն գտնում: Ճարահատված երկու ոտքերը դնում են իրար վրա, մեկ գամ խփում:

Չարչարանքի գիշեր. ըստ ժողովրդի մեջ պահվող ավադության՝ ուրբաթ լույս շաբաթ օրվա գիշերը հրեաները չարչարել ու տանջել են Քրիստոսին: Այդ առումով էլ գյուղի տարեց տղամարդիկ ու կանայք հավաքվում էին եկեղեցում պատարագի: Գիշերվա կեսին քահանան հայտարարում էր Քրիստոսի խաչելության լուրը: Այդ պահին մարում էին եկեղեցում

վառվող բոլոր մոմերը. տիրում էր ընդհանուր խավար: Հավատացյալ ժողովուրդը լաց էր լինում, ողբալով Քրիստոսին խաչելու համար:

Ոսկերիչները խավարման գիշերը իրենց հետ եկեղեցի էին տանում պողպատի կտորներ և ծեռքի մուրճ: Մոմերը մարելու պահին, խավարի մեջ մուրճով հարվածում էին պողպատի կտորին: Դա արվում էր ի նշան այն հավատալիքի, որ սատանաներն ու չարքերը տեսնում էին պողպատի կնքված լինելը: Հետագայում դարբինները այդ մետաղից նախշազարդ օղեր, մատանիներ ու ծիու պայտեր էին պատրաստում:

Նման մատանիներ ծեռք էին բերում հոգեկան այն հիվանդների համար, որոնց խավարում չարքերը խփել էին և գիշերները չարչարում էին:

Շաբաթ, թաթախման երեկո. շաբաթ օրը, կեսօրին ժողովուրդը հավաքվում էր եկեղեցիներում: Տեղի էր ունենում ժամերգություն ու պատարագ, որի վերջում քահանան եկեղեցու յոթ շաբաթ փակ պահված վարագույրը բացում էր և ի լուր բոլորի հայտարարում Քրիստոսի հարությունը:

Եկեղեցում աշխուժություն էր տիրում. տիրացուն բուրվառը ծեռքին շարք առ շարք խնկարկելով աղոթող հավատացյալներին, կրկնում էր. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Ամեն մեկն իր կողքին կանգնածի հետ ողջագուրվում էր, համբուրվում ու ասում է. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

Մյուսը պատասխանում էր.«Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Ծըռ զարթար. կարելի է բացատրել «ծառերի զարթոնք» կամ «ծառերի զարդարում» իմաստով:

Ծառզարդարի տոնը անփոփոխ կատարվում էր Մեծ պասի վեցերորդ կիրակի օրը, Զատիկից մեկ շաբաթ առաջ:

Տոնից մեկ օր առաջ մի խումբ երիտասարդներ նորաբողբոջ ուռենու բավականին խոշոր մի ճյուղ էին կտրում, գյուղի եկեղեցու մեջտեղը կանգնեցնում:

Հաջորդ օրը, կեսօրին մոտ գյուղի երիտասարդները, պատանիները, նորահարսերն ու աղջիկները մի քանի զույգ մոմ էին վերցնում, գնում եկեղեցի, մոմերը վառում ու ամրացնում ուռենուն:

Քահանան, տիրացուն, սարկավագն ու մի քանի շնորհաշատ մարդիկ՝ խաչով, ավետարանով, բուրվառով ու երգերով պտտվում, օրհնում էին ուռենին: Վերջում ուռենու նուրբ ճյուղերը կտրտում, բաժանում էին նորահարսերին ու աղջիկներին: Նրանք այդ ճյուղերը տանում, դրանց ծայրին մետաքսի գույնզգույն բոժոժ էին փաթաթում, խնոցիների համար փայտիկներ պատրաստում: Խնոցին հարելիս այդ փայտիկները մտցնում էին խնոցու փոքր անցքով՝ «պոնքով» ու ստուգում կարագի հասունացումը:

ԾԱՂԿԱՏՈՆ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Անվանումն արդեն հուշում է, որ տոնը ունի երկու նշանակություն:

Ըստ ավանդության՝ «Արար աշխարհի բոլոր տեսակի ու գույների ծաղիկներ ստեղծող «Ծաղկամայրը», այդ օրը ծնել, համալրել է վերջին ծաղիկը և այդ առումով էլ սահմանվել է տոնը»:

Ծաղկատոն-Համբարձումը կապված է Քրիստոսի համբարձման հետ:

Ղարադաղցիները Համբարձման տոնին անվանում էին «Հմբերցման տոն»: Այդ տոնի նշանավոր ուխտատեղիներն էին Սիլյան սարն ու Խանագահ գյուղի Երե փիրը:

Խանագահի ուխտատեղին էին գնում Նորաշենից, Ղուլուդիից, Սարդուից և այլ տեղերից: Համբարձման տոնը միաժամանակ հանդիսանում էր աղջիկ հավանելու և նշանադրության առիթ:

Տղամարդիկ գնում էին առանձին, ուրիշ ճանապարհներով, մատաղացուներ ու սննդամթերք էին տանում նույն ուխտատեղին:

Երիտասարդները, աղջիկները, նորահարսերն ու պատանիները գյուղից դուրս էին գալիս վաղ առավոտյան, լուռ ու անխոս: Մինչև տեղ հասնելը, ըստ ավանդական կարգի՝ ոչ ոք չպետք է խոսեր: Դա արվում էր ի հիշատակ մի նահատակված աղջկա, որի գերեզմանին գնում էին այցելության: Ըստ ավանդության՝ նահատակված աղջիկը անխոս էր ուխտի գնացել: Այդ օրը առաջին անգամ պետք է ուրց քաղեին, որը չէր կարելի հավաքել մինչև Համբարձման տոնը:

Մատաղ կտրելուց և մոմ վառելուց հետո տեղի էր ունենում համընդհանուր ճաշկերույթ: Հնչում էր ավանդական զուռնան, երգում ու պարում էին, ուրախանում:

Այդ օրվա հավաքած ուրցը չորացնում, պահում էին որպես դեղամիջոց, «փուրուցավու հետե» և քրտնաբերության համար: Ուրցի հետ հավաքում էին նաև բազմազան ծաղիկներ, դրանցից փնջեր կապում ու ծաղկեպսակներ հյուսում:

Ծաղիկների գույների ու տեսակների մեջ խտրություն չկար: Ամեն մեկը հավաքում էր իր հավանած ծաղիկները: Ուխտատեղի հասնելով ու մոմերը վառելով, ամեն մեկն իր սրտի գաղտնիքը, մուրազը սուրբ Կույսի գերեզմանին հայտնելուց հետո կարող էր խոսել:

Ջանգյուլում. հացկերույթից հետո տղաներն ու աղջիկները առանձին խմբեր էին կազմում:

Աղջիկները մի դեռատի աղջկա նուրբ շղարշով ծածկում էին, գլխին ծաղկեպսակ դնում, իսկ առջևում՝ մի փոքրիկ կճուճ: Ամեն մեկը կճուճի մեջ մի փոքրիկ զարդ կամ ուլունք էր գցում:

Խաղի մասնակիցները գլխներին ծաղկեպսակներ դրած, ձեռքձեռքի շուրջպար բռնած ջանգյուլում էին երգում: Ամեն մի քառյակ երգելուց հետո դեռատի աղջիկը ձեռքով խառնում էր բախտ որոշող զարդերը ու մեկը հանում.

Ղադաք օնմ փիսացու, ջան գյուլում, ջան-ջան,
Դանա օննք մսացու, ջան ծաղեգ, ջան-ջան:
Դու մըր տանը փսացու, ջան գյուլում, ջան-ջան,
Իս ձեր տանը հռհնացու, ջան ծաղեգ, ջան-ջան:

Քարեն տակեն մննեշակ,
Իս աղջիգյամ հրեշտակ,
Իս մի տղա իմ սիրած,
Չերքեն կա հազար փեշակ:

Իմ մտանէն վօսկէ ա,
Հմբերցումը մօտէ ա,
Իս քունընընմ, դու իմը,
Ապէրըս ձէր տան խօսկէ ա:

Նըստածըս ձէր բաղըմը,
Խաս շամամէ թաղըմը,
Քիշէր-ցիրեկ, այ աղչի,
Դու վըս միշտ իմ խաղըմը:

Այդա, հղէտ ցաքածընն,
Դու խաբէր չըս՝ փակածընն,
Քի շատ սիրելու հէտէ,
Իմ հոր, իմ մոր խափածընմ:

Անընմ օնըս Թամարա,
Մաշկետ վօսկէ քյամար ա,
Աշկավ, օնքավ խօսըս վեչ,
Քու մար մըր սէրէն խաբար ա:

Ջեր գյուլիսին հասած ա,
Օնքըրըտ ղալամավ քաշած ա,
Ախչի, խիյալ մա արի,
Խաբէրը իմ հօր հասած ա:
Ախչի, ասէք նէրակ ինձ,
Կէրածըմ կաթնավ բիրինձ,
Իմ բաջու ըրկէ տարալըն,
Ասօր հերթը հասած ա ինձ:
Չէրքէտ փօնջըն ա քըրքաշան,
Բոլ ա մնաս փարիշան,
Ես իմ խօսկէն տարընըմ,
Եք մտանէս տամ նշան:
Փափախտ յան դիր, գյօլիսըմ,
Մըղրավ յուղծու բիրիսըմ,
Ջեր տան հալա բէխաբար,
Մըր տան հըրսնէք ըրիսըն:
Փիս հարը դըռնի թունքաթուն,
Մէխկը իրանն ա բյութթուն,
Օխտը օր կավըչ նշանած,
Յարէս ղօրկալ ա ղարիբթուն:
Ջուրըմ պուղիս վրարի,
Յարըս բաղը բիջարի
Նէրակ կինի էն օրը,
Ծըլվէգը ձերքէս կվառի:
Խաղ օնըմ խաղէս գյլխէն,
Տուն տրէց բաղէն գյլխէն,
Աղչիգ չըմ վօր հըմաչըմ,
Տղայըմ՝ զիլ կկանչըմ:

Վիճակի ժամանակ աղջիկների բախտը որոշում էին ըստ բաժին հասած քառյակի:

Համբարձման տոնի կապակցությամբ հարգի էր եփել «սպիտակ շփոթ» ճաշատեսակը:

Հաճարի ձավարը լցնում էին ջրի մեջ: Հաջորդ առավոտ փափկած ձավարը ձեռքով տրորում էին, մաղով քամում, ստանում սպիտակ զանգված: Եփում էին ուխտատեղիներում: Զանգվածին նաև կաթ էին ավելացնում, ամանների մեջ լցնում, վրան կարագ կամ յուղ դնում ու մատուցում:

Ղարադաղի հայերի մոտ սովորություն կար կաթն ու մածունը խառնել ու «բրթոշ» պատրաստել: Այն մինչև Համբարձման տոնը արգելված էր, հակառակ դեպքում՝ հավատում էին, որ տարին խառը կլիներ ու կարկտաբեր:

ՀԶԵՏԵԳ (ԶԱՏԻԿ)

Զատկի կիրակի առավոտը հայտարարվում էր ախառ: Այն նշանակում էր ազատ, անարգել, նկատի ունենալով, որ Քրիստոսը ազատված է չարչարանքներից և մսեղեն ճաշերի սահմանափակում, արգելք չկա, բոլորն ազատ են:

Ովքեր Զատկի կապակցությամբ մատաղ ունեին խոստացած, մատաղացուն առավոտ շուտ տանում էին եկեղեցու շուրջը երեք անգամ պտույտ տալիս, կենդանու ականջը կտրում, արյուն հանում ու քսում եկեղեցու պատին:

Մատաղացու կենդանին տանը մորթում էին, եփում, մսից լավաշի մեջ փաթաթում, սկուտեղների մեջ շարում, տանում եկեղեցու մոտ և պատարագից հետո բաժանում:

Մատաղ ընդունողը մաղթում էր. «Մատաղը ընդունելի ինի»: Ի պատասխան՝ մատաղի տերն ասում էր. «Աստված ղորմի ծնողանցդ»:

Ըստ ավանդույթի՝ ամեն տարի, Հարություն անունով մի մարդ գյուղի ղեկավարներին, քահանային, ողջ հասարակությանը նախօրոք, տեղյակ էր պահում, որ ինքը Զատկի օրվա կապակցությամբ մատաղ ունի խոստացած:

Պատարագից հետո քահանան, գյուղի ղեկավարներն ու ցանկացող մարդիկ գնում էին նրա տուն՝ մատաղ ուտելու:

Ըստ ավանդության՝ հարություն առնելուց հետո Քրիստոսը գալիս է երկիր և տեսնում, որ մայրը՝ Սուրբ Աստվածածինը մահացել է: Մահացած մորն իր հետ համբարձում, տանում է երկինք. դրա պատճառով է, որ երկրի վրա Սուրբ Աստվածածինը գերեզման չունի:

Զատիկը ուրախության ու խնդության մեծ տոն էր երիտասարդության ու պատանիների համար:

Այդ օրը նշանավորվում էր կարմիր ձվեր կռվեցնելով ու դրանք գետնին գլորելու խաղով:

Այդ օրը ծուն կարմիր էին ներկում, որպես արյան խոհուրդ: Այն ընտանիքները, որոնք հարազատի կորուստ ունեին, որպես սգո նշան ներկում էին մուգ կապույտ գույնով:

Կանաչ կիրակի. այդպես էին կոչում Զատկի հաջորդ կիրակին:

Այդ օրը եկեղեցի պատարագի էին գնում միայն տարեց տղամարդիկ և կանայք: Երիտասարդները, նորահարսերը, պատանիներն ու աղջիկները գնում էին ուխտատեղիներ, տանում էին կանաչ գույնով ներկած ձվեր, մոմ էին վառում:

Այդ օրը ձվերը կանաչ գույնի էին ներկում ի նշան Քրիստոսի ազատության:

Հավկուր. Մեծ Զատկից մինչև Համբարձման տոնը կանանց խստիվ արգելված էր և մեղք էր համարվում երեկոյան, եկեղեցու զանգերը հնչելուց հետո գուլպա գործել, կար ու կարկատան անել, ընդհանրապես՝ թել ու ասեղ օգտագործել: Հավատում էին, որ կարգը խախտողը կհիվանդանա հավկուրությամբ:

ՎԱՐԴԱՎԱՌ

Վինացի մի խումբ աղջիկներ Վարդավառի տոնի ժամանակ

«Վըրթըվր», այսպես էին անվանում Վարդավառի տոնին Ղարադաղի հայերը: Համբարձման տոնից հետո ավելի զորեղ, ավելի մասսայական ուխտագնացության տոն էր հանդիսանում Վարդավառը:

Վարդավառը տեղի էր ունենում հուլիսին, աշխատանքի, հնձի, բերքահավաքի ամենաեռուն օրերին: Հավատացյալ հայերը, 3-4 օր աշխատանքը թողած՝ հավատքով, մուրազին հասնելու համար, մի քանի օր ճանապարհ կտրելով, ամբողջ ընտանիքով գնում, հասնում էին Սուրբ Գևորգ, որը համարվում էր գավառի ամենազորավոր սուրբը:

Խանագահիցի մի խումբ երիտասարդներ Սբ. Գևորգ մենաստանում Վարդավառի ժամանակ

Սուրբ Գևորգը գտնվում էր Ղարադաղի գրեթե կենտրոնում, Հասանով գավառակի Հուժ գյուղի գեղատեսիլ ու հիասքանչ մի վայրում:

Դա քարից, կիր ու ավազի շաղախով կառուցված, կամարակապ եկեղեցի էր, շրջապատված կաղնի և բոնչի բազմաթիվ ծառերով:

Հատուկ նպատակ ունեցող ուխտավորները մի գիշեր մնում էին սրբավայրում:

Կիրակի առավոտյան եկեղեցիներում քահանաները ժամերգություն ու պատարագ էին անում ու գնում ուխտատեղի:

Ուխտավորները նվերներ էին տանում Սուրբ Գևորգին՝ թանկարժեք կտորեղեն, խունկ, մոմ, դրամ և այլն ու դրանք հանձնում քահանաներին:

Ղուլուղցի Հարությունի Հակոբյանի ընտանիքը Վարդավառի ուխտագնացության ժամանակ

Սուրբ Գևորգ եկեղեցու տարածքը այնքան ընդարձակ էր, որ ամեն մի ընտանիք ուներ իր պաշտամունքի ծառն ու նրա տակ պատրաստած մատաղի օջախը: Եթե մի ընտանիք, որևէ պատճառով չէր կարողանում մի տարի ուխտի գնալ, ուրիշն իրավունք չուներ այդ ծառի տակ հանգրվանել:

Պատարագից հետո վարսավիրները սկսում էին կտրել այն յոթ տարեկան տղաների ու աղջիկների մազերը, որոնք իրենց ծնողների հավատքի համաձայն՝ ծնվել էին Սուրբ Գևորգին խոստացած մուրազով:

Մորթում էին հարյուրավոր մատաղները, վառում բազմաթիվ օջախներ: Ձորերից ելնող օջախների ծուխը նմանվում էր ժայթքած հրաբխի:

Հայաբնակ գյուղերից եկած երաժիշտների զուռնա դհոլների ծայնը երկինք էր հասնում, առանձին շրջան բոլորած պարում էին ջահել տղաներն ու աղջիկները:

Մի այլ տեղ, սազերի նվագով ու հորինումներով, հայ և թուրք աշուղներն էին մրցման մեջ մտնում:

Երիտասարդները կոխի բռնվելով՝ ցուցադրում էին իրենց ուժը, հմտությունն ու գեղեցկությունը:

Առավոտից մինչև ուշ երեկո ծորում քնդում էին հրացանները. զինասեր ու զինավարժ մարդիկ իրենց հմտությունը ցուցադրում էին նշանառության մեջ:

Ավերակ գյուղի վերին տարածքի հարթ ճանապարհին իրենց շնորհքն ու հմտությունն էին ցուցաբերում ծիավոր ուխտավորները:

Վարդավառի տոնը առիթ էր հանդիսանում տղա, աղջիկ հավանելու և նշանելու համար: Վարդավառի տոնին Սուրբ Գևորգ եկեղեցում կատարվող նման մեծ տոնը, խնդությունն ու ուրախությունը, տղաների, աղջիկների խոսք առնելն ու նշանադրումը ավարտվում էր կիրակի երեկոյան:

Եկեղեցուց ներքև, հարթ տարածքում, տեղի էր ունենում համագավառային ճաշկերույթ, որին մասնակցում էին բոլոր գյուղերի տանուտերերը, քահանաները, անվանի մարդիկ ու շարքային գյուղացիներ:

Քննարկվում էին հայապահպանության, օրենքների ճիշտ կիրառման, վիճերի լուծման, տեղի ունեցող անց ու դարձին վերաբերվող շատ հարցեր. զանազան անհրաժեշտ նպատակների համար կանխիկ դրամի հանգանակություն էր կատարվում:

Հեռու գավառակներից ու հեռավոր գյուղերից եկած ուխտավորները գիշերում էին մոտակա հայաբնակ գյուղերում, հաջորդ առավոտ վերադառնում տուն:

Սուրբ Գևորգ եկեղեցու շրջակայքում շատ օձեր կային, որոնք զարմանալիորեն մարդկանց վնաս չէին տալիս: Նրանց սպանելը արգելված էր, քանի որ համարվում էին Սուրբ Գևորգի պահապաններ:

Քյամար թաքյա (նոխազ). Ղարադաղի հայերը երկու գույն ունեցող այծին ու նոխազին անվանում էին «քյամար»: Ողջ Ղարադաղում միայն Խանագահ գյուղի հովիվների մոտ էր պահպանվել հետևյալ ավանդույթը:

Վարդավառի տոնի նախօրեին գնում էին անտառ, մատղաշ կեչի ծառի կամ եղևնու նուրբ ու ճկուն կեղևներ հանում ու համետ (փալան) պատրաստում քյամար նոխազի համար:

Համետը պատում ու զարդարում էին անթառամ ծաղիկներով, դնում նոխազի վրա ու կանգնեցնում գլխավոր ճանապարհի վրա, որտեղով դեպի Սուրբ Գևորգ էին գնում ուխտավորները:

Հովիվները մի քանի «մեզար» (հովիվների հացի սփռոց) ծաղկեփնջեր էին կապում, բաժանում ուխտավորների երեխաներին:

Նման հարգանքի համար ուխտավորները՝ սրտի կամեցողությամբ հովիվներին դրամ, գաթա և նման այլ բաներ էին նվիրում:

Ուխտավորների գնալուց հետո հովիվները զարդարած նոխազը տանում էին գյուղ, մաև տալիս տուն առ տուն, ծաղկեփնջեր նվիրում ու նվերներ ստանում:

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ (ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ)

Ըստ ավանդության՝ երբ Նոյը աղավնուն ուղարկում է տեղեկություն բերելու, աղավնին հանդիպում է Քրիստոսին: Քրիստոսը մի ճութ խաղող է տալիս աղավնուն, օրհնում այն, հետո մի բաժակ գինի է վերցնում, խփում խաղողի ողկույզին ու ասում. «Տար, տուր Նոյին, որ գինին իմ արյունն է, խաղողը իմ մարմինը, թող հավատա ու վախի ոչ մի նշույլ չունենա, թող հավատա ու տապանից դուրս գա, իջնի երկիր»:

Դրա համար էլ քրիստոնյա մարդը չպետք է խաղող ուտի մինչև Խաղողօրհնեքի տոնը, որպես Քրիստոսի օրհնած պտուղ: Այդ օրը խաղողը եկեղեցի էին տանում, օրհնում ու պատարագից հետո, բաժանում:

ԽՉՎԵՐԱՑ (ԽԱՉՎԵՐԱՑ)

Խչվերաց բառացիորեն նշանակում է խաչը երևաց:

Այդ օրը ամեն մի խաչապաշտ հայ պարտավոր էր գնալ գերեզմանոց, հարգել իր անցյալ բոլոր հանգուցյալների հիշատակը:

Խաչվերաց տոնից հետո մինչև հաջորդ տարվա տոնը, տարվա ընթացքում, հանգուցյալների հարազատները նրանց գերեզմաններին տապանաքար էին դնում:

Խաչվերացի օրը ամեն ընտանիք, իր ունեցվածքի չափով սննդամթերք ու մրգեր էր տանում, հատկապես խաղող: Դրանք ժողովում էին գերեզմանոցին մոտ գտնվող մի կալում:

Վաղ առավոտից քահանան՝ գյուղացիների ուղեկցությամբ հին ու նոր բոլոր հանգուցյալների գերեզմանները օրհնում էր: Մարդիկ համբուրում

էին քահանայի ծեռքի խաչը և ավետարանի վրա, որպես խաչհամբույր դրամ դնում:

Գերեզմանօրհնեքը ավարտելուց հետո հանգուցյալների հիշատակին համայնական հացկերույթ էր կազմակերպվում: Ժողովուրդը հավաքվում էր մի ընդարձակ կալում ու ծալապատիկ նստում սփռոցների շուրջը: Առանձին սփռոցներ էին բացում տղամարդկանց, կանանց և պատանիների համար:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ

Սուրբ Գևորգի տոնը Սուրբ Սարգսի և Վարդանաց տոների համաժողովրդականությունը չուներ, չնայած եկեղեցում տեղի էր ունենում պատարագ: Ժամերգությունից հետո Գևորգ անունով գյուղացիներից մեկը իր տանը ճաշկերույթ էր կազմակերպում ի պատիվ Սուրբ Գևորգի:

ՆԱՎԱՍԱՐԴ

Պարսկերեն նշանակում է «նոր տարի»:

Ըստ տարեց մարդկանց պատմածների՝ մինչև 1919թ. համատարած գաղթը Ղարադաղի հայերի նոր տարին եղել է Նավասարդը, որը նշվել է նոյեմբերին:

Մինչ այդ գյուղացիներն ավարտում էին հունձը, բերքի կալսումը, հավաքում, ամբարում բերքն ու բարիքը, անասնակերն ու վառելափայտը, կատարում աշնանացանը և տարվա բոլոր աշխատանքներն ավարտված համարելով, դիմավորում էին նոր տարին՝ Նավասարդը:

Նավասարդի մասին ավանդական սովորությունները գրեթե մոռացվել էին: Մեծահասակները միայն հիշում էին, որ այդ տոնին բնորոշ է եղել կրկենի թխվածքը: Բոլոր ընտանիքները, ունևոր թե աղքատ՝ պարտավոր էին Նավասարդը դիմավորել ցորենի այլուրից թխած կրկենի հացատեսակով:

Այլուրը շաղախում, պինդ խմոր էին անում ու բավականին խոշոր էլիպսի ձև տալիս: Թխվածքի մեջ արծաթ դրամ էին դնում:

Կրկենին թխում էին օջախի առջևի հարթակում, որտեղ կրակ էին անում, մորմոտը հավասար փռում և կարկանդակը դնելով հարթակի վրա, մորմոտով ծածկում:

Կարկանդակը դանակով հավասարաչափ կտրտում էին ընտանիքի անդամների քանակին համապատասխան, բաժին հանելով նաև գրկի երեխաներին: Բաժին էին հանում նաև որևէ հատկանիշով աչքի ընկնող ընտանի կենդանիներին, մեկական կտոր ուղարկում հարազատներին ու մոտիկ հարևաններին:

Ընտանքի այն անդամը, ում բաժին էր ընկնում դրամը, համարվում էր տվյալ ընտանիքի ունեցվածքի «դովլաթը»,[71] հաջողությունը կապվում էր այդ անձի հետ: Եթե գտնվում էր կենդանու բաժնի մեջ, ընտանիքի դովլաթը նրան էին համարում և առանձին խնամք ու հոգատարություն ցուցաբերում այդ կենդանու նկատմամբ:

Եթե դրամը հայտնվում էր հարևանին կամ հարազատին ուղարկված բաժնում, գուշակում էին, որ իրենց դովլաթը տնից հեռացել է դուրս, գտնվում է ուրիշ տեղ: Սրբավայրում մոմ էին վառում, մատաղ կտրում, միջնորդություն խնդրում, որ դովլաթը վերադառնա ընտանիք:

Կրկենին կտրտելիս երբեմն դրամն ընկնում էր դանակի շեղբին, որն անհաջողություն էր համարվում, ունեցվածքին սպառնացող վտանգ: Նման դեպքում, սրբավայրում մոմ էին վառում, մատաղ խոստանում, որ անհաջողությունը հեռանա ընտանիքից:

ՄԱՏԱՂ

Ղարադաղի հայերի մոտ մատաղ անելը (մատաղ կտրել) ավանդական սովորություններից էր: Կար երկու կարգի մատաղ՝ անհատական և հասարակական:

Թե անհատական, թե հասարակական մատաղների կենդանին պարտադիր պետք է արու լիներ: Էգ կենդանին և ձու ածան հավը համարվում էին ծնող մայրեր, և նրանց մատաղ անելը մեղք էր, հանցանք, մայրասպանություն:

Մատաղ էին անում 1-2 տարեկան հորթ, գառ (ղոչ), ուլ (նոխազ), նայած թե գյուղացու «մուրազը» ինչպիսին է, ըստ նրա կամեցողության ու հնարավորության:

Հաճախ էր պատահում, որ գյուղացին նոր ծնված արու մատղաշը գրկում ու այն մատաղ էր խոստանում. «Տա աստուծ, որ հաջողութուն

[71] Դովլաթ (արաբ.)-ճոխություն, փարթամություն, բախտ, աջողված (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 1, էջ 547), (***Խմբ.***):

ինի, քի մատաղը վիզավ ունիս, որ տանմ Սուրբ Հովհաննես մատաղ արմ»:

Հնուց ի վեր մատաղացու և այլ կենդանիներ մորթելը կանանց խստիվ արգելված էր, մեղք էր համարվում:

Մատաղի կենդանուն օրհնած աղ տալն ընդունված չէր, սահմանված կարգ գոյություն չուներ, պայմանավորված էր մատաղ խոստացողի իրավիճակով:

Կարող էին հեռու տեղ գտնվող մի նշանավոր սրբի անունով մատաղ խոստանալ, բայց սրբի ուխտի օրը տարբեր պատճառներով մատաղն այնտեղ չանել, այլ գյուղի եկեղեցու շուրջը երեք անգամ պտույտ տալ, ուխտած սրբի անունը տալ, մատաղացուի ականջը կտրել, արյունից քսել եկեղեցու պատին և տանը մորթել:

Մատաղը սրբավայրի շուրջը պտտելու կարգը հետևյալն էր. կանգնում էին մուտքի առջևում, հայացքները դարձնում արևելք և դեպի աջ երեք պտույտ կատարում: Եթե մատաղը որևէ մեկի անունով էր, նա էր պտույտ տալիս կենդանուն, իսկ եթե տվյալ անձը բացակա, հիվանդ կամ շատ փոքր էր լինում կատարում էին հարազատները:

Մատաղը, սրբավայրում թե տանը այնպիսի տեղ էին կտրտում, որ արյունը չտրորվի, շուն ու կատու չպղծեն:

Մատաղի կենդանու մորթին ու մի էրին[72] պարտավոր էին հանձնել գյուղի քահանային, հավատալով, որ հակառակ դեպքում մատաղն ընդունելի չի համարվի:

Մատաղը եփած վիճակում լավաշի մեջ փաթաթած յոթ տան բաժին էին հանում, առավելապես նկատի ունենալով չքավորներին ու միայնակ մեծահասակներին:

Մատաղ խոստանալը բազմազան նպատակներ ուներ, որոնցից առավել հաճախ էին հանդիպում չբերությունը, ծանր ու երկարատև հիվանդությունը, օտարությունից վերադառնալը, բերքը տարերային աղետներից փրկելը և այլն:

Հասարակական մատաղներ էին անում երաշտի ժամանակ, աղետներից և համատարած հիվանդություններից ապահով մնալու նպատակով:

Երբեմն սուրբ ծառերը արմատախիլ էին լինում կամ մեծ ճյուղ էր կոտրվում, ճանապարհը փակում: Դա ընկալվում էր որպես ինչ-որ աղե-

---

[72]էրի, չորքոտանիների առջևի ոտքի ազդրի վերին մասը (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.2,էջ 50), (***խմբ.***):

տի, փորձանքի նախազգուշացում, և առանց մատաղ կտրելու չէր կարելի ընկած ծառը կամ ճյուղը հեռացնել ու ճանապարհը բացել:

Հասարակական մատաղ էին կտրում նաև խմբով օտարության գնալուց առաջ և վերադառնալուց հետո, բանակ մեկնելիս և այլ դեպքերում: Օտարության և ծառայության մեկնողները մատաղի կենդանին գնում էին:

Հասարակական մատաղը կատարվում էր հետևյալ կարգով. մի կիրակի առավոտ գյուղի հրապարակում կամ մի տան կտուրի վրա կարպետ էին փռում: Գյուղի քահանան, տանուտերը և անվանի մարդիկ հավաքվում էին, իսկ գգիրը շրջելով գյուղում՝ բարձրաձայն հայտարարում էր մատաղի մասին: Գյուղացիները, ըստ կամեցողության դրամ կամ ցորեն էին բերում, դնում կարպետի վրա:

Մատաղի համար հավաքված միջոցները՝ դրամի հաշվարկով, տանուտերը հայտնում էր և առաջարկում փոխանակել խոյի կամ նոխազի հետ:

Գյուղացիներից որևէ մեկը տալիս էր իր համաձայնությունը, որից հետո որոշում էին մատաղ անելու տեղն ու օրը:

Հասարակական մատաղի մսից անպայման բաժին էին հանում համայնքի այն անդամներին, որոնք ծերության, հիվանդության և այլ պատճառներով չէին կարողացել սրբավայր գնալ:

Մատաղը և սովորական մորթը, հայերը կատարում էին հետևյալ կարգով. անասունին պառկեցնում էին գետնին՝ գլուխը դեպի արևելք, դանակով կոկորդի վրա խաչ քաշում, կամաց շշնջում. «Հիսուս Քրիստոս» և կտրում կոկորդը:

Պատահում էր նաև, որ որևէ նպատակով մատաղ էին խոստանում մի սրբի անունով, բայց միջոցը թույլ չէր տալիս կենդանի մորթել. նման դեպքում լավաշ կամ բաղարջ էին թխում ու բաժանում՝ որպես մատաղ:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղարադաղը, լինելով հայերով բանակցված հին տարածք, ուներ հնադարյան շատ եկեղեցիներ ու մատուռներ:

Հայտնի ուխտատեղիներ էին Հասանով գավառակում գտնվող Ճգնավոր լեռը, Մեշափարա գավառակում, Ողանի վերևում գտնվող Պիզ լեռան գագաթը, «Ղուշեն բունը», նույն գավառակի Նեփեշտ գյուղից 20-25կմ հեռավորության վրա, Սիպտակ սար լեռնագագաթի վրա գտնվող «Սուրբ Սեյրանին», Քեյվան գավառակի «Ուչ Ղարդաշ» լեռնագագաթը:

Դարերի ընթացքում բազմիցս կողոպտված, ասպատակությունների ենթարկված, կոտորված ու բռնագաղթի ճամփան բռնած Ղարադաղի հայերը աստիճանաբար տարածքը զիջեցին քոչվոր ցեղերին:

Օտար նվաճողները յուրացնում էին նույնիսկ հայկական ավանդական սրբավայրերը, հայերին արգելում այցելել այնտեղ: Բարեբախտաբար սրբավայրերում եղած մասունքները նրանք չէին ոչնչացնում:

Նման ուխտատեղիներից էին Դիզմար գավառակի Թուխի բնակավայրի եկեղեցին, որը վերանվանել էին «Սեյիդ Ջաբրահիլ», նույն գավառակի Սուրբ Աննա կամ Սուրբ Անապատ մատուռը, որը վերանվանել էին «Օջախ քյանդ» (սրբաշեն), Սուրբ Դավիթի մատուռը, որը վերանվանել էին «Փիր Դավուդ»:

Թուրքերի հեռավոր ուխտագնացության ժամանակ չավուշչիները (մունետիկ) բարձրաձայն ազդարարում էին նրանց մեկնումը: Ուխտավորի տանը հավաքվում էին գյուղի մոլլան, սեիդը, տանուտերը, անվանի մարդիկ և նախկինում ուխտ գնացածները:

Վերադարձին ուխտավորները մոտակա մի գյուղից մունետիկ էին ուղարկում՝ վերադարձի մասին աչքալուսանք տալու:

Մղդուսի. անցյալում Խանագահից, Վինայից, Սըղընից, Ղասումաշենից և այլ գյուղերից մարդիկ են եղել, որ գնացել են Երուսաղեմ ու դարձել մուղդուսի (մահտեսի), որպես ապացույց ստացել սուրբ դաջվածք ու վերադարձել գյուղ:

Նրանք որպես աստծո ծառաներ, ավանակ նստած գյուղից գյուղ շրջագայում էին, զբաղվում բախտագուշակությամբ, առանձին մարդկանց պատվերով ու խնդրանքով երազ տեսնում նրանց անվամբ և կատարում համապատասխան գուշակություն գալիքի վերաբերյալ:

Մահտեսին, մարդու բախտը գուշակելիս երգեցիկ ձայնով հետևյալ խոսքերով էր սկսում.

«Եք հա՜ եք, եք հա՜ եք,
Ծաղիկներս քեզ ղուրբան,
Ծաղիկներս քեզ ղուրբան».

Մահտեսիները ամեն ամռան մաև էին գալիս գյուղերում ու կալապտուղ[73] հավաքում:

Ուխտի գնացած հայերը բարևելիս ասում էին. «Ղորմի աստուծ» ու պատասխան ստանում. «Ղորմի ծնողանց»:

---

[73]Կալապտուղ, կալամաս, կալից քահանային տրվող բաժին (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ.2, էջ 364), (*Խմբ.*):

Ղարադաղի հայերի համար նշանավոր տոներից էր մայիս ամսին տեղի ունեցող Համբարձման տոնը: Նույն օրը հայկական սրբավայրերը ուխտ էին գնում նաև շատ թուրքեր ու քրդեր:

Համբարձման տոնին, Սիլյան սար ուխտի էին գնում բոլոր հայաբնակ գյուղերից, ուխտավորներ էին գալիս Թեհրանից, Թավրիզից, որոնք շաբաթներ առաջ գալիս, մնում էին հայաբնակ գյուղերում և մասնակցում ուխտագնացությանը:

Սիլյան սարին ամենամոտ հայաբնակ գյուղը Իրգութինն էր: Գավառի բոլոր հայ ուխտավորները 2-3 օր ճամփա կտրելով, գրաստներով ու ոտքով գալիս՝ հավաքվում էին Իրգութինում, որտեղից մինչև Սիլյան սարի գագաթը մոտ 5կմ ոլորապտույտ վերելք էր:

Ուխտավորները գյուղից ճանապարհ էին ընկնում արևածագից առաջ: Լեռնագագաթից քիչ ներքև, հարթ տարածքում սառնորակ ու վճիտ աղբյուր կար: Բոլոր ուխտավորները իջևանում էին աղբյուրի մոտ, թողնելով այնտեղ գրաստներով տարած իրերն ու սննդամթերքը, մատաղացու կենդանիներին: Նրանք մոմերը վերցրած, բարձրանում էին սուրբ լեռան գագաթը: Շատերը քայլում էին ոտաբոբիկ՝ աղոթքներ մրմնջալով: Սրբավայրի շուրջը երեք անգամ պտույտ էին կատարում, մոմ վառում, ծունկ չոքում ու համբուրում սուրբ քարերը: Ուխտագնացության ծիսակատարությունները ավարտելուց հետո ուխտավորները իջնում էին աղբյուրի մոտ:

Երիտասարդները շտապում էին մատաղները մորթել: Սարն ի վար իջնող ալ ալվան հագած նորահարսերն ու աղջիկները ցրվում էին լեռնալանջերով, մինչև ծնկները հասնող փարթամ բուսականության երփներանգ ծաղիկներից փնջեր էին կապում, պսակներ հյուսում, ավելուկ, սխտորուկ, թրթնջուկ և այլ բույսեր հավաքում:

Աղբյուրի մոտ տեղի էր ունենում ուխտագնացության ու ցնծության մեծ տոնախմբություն:

Լեռնալանջով մեկ թնդում էր մի քանի խումբ ավանդական զուռնաների ու դհոլների նվագը, երգն ու պարը:

Շնորհաշատ երիտասարդները կոխ էին բռնում, աղջիկների մոտ ցուցադրում իրենց ուժը, հմտությունն ու գեղեցկությունը, ձիարշավ էին կազմակերպում, ուխտավորների մոտ ցուցադրում իրենց խիզախությունն ու ձիերի արագընթացությունը:

Տոնախմբությունը տևում էի մինչև ուշ երեկո: Վերադառնում էին Իրգութին, գիշերում ու հաջորդ առավոտ գնում իրենց օջախները:

Այն գյուղացիները, որոնց միջոցը չէր ներում Սիլյան սարը ուխտի գնալ Համբարձման տոնը կատարում էին Խանագահի գյուղի «Երե փիր» սրբավայրում:

Մեշափարա գավառակի հայ ուխտավորները գնում էին Սպիտակ սար (Աղդաղ) լեռան վրա գտնվող Սուրբ Սեյրանի սրբավայրը:

Մինջևան գավառակի ուխտավորները գնում էին Միևա գյուղից 1կմ վերև, անտառի բացատում գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Խանագահցի մի խումբ ուխտավորներ
Հուժի Սուրբ Գևորգ մենաստանում, 1945թ.

Քեյվան գավառակի ուխտավորները գնում էին Սըղըն և Ղասումաշեն գյուղերի մոտակայքում գտնվող սրբավայրը:

Այդ վայրերին բոլոր ազգությունները անվանում էին «փիր» (սուրբ):

Ղարադաղի հայերը բոլոր սրբերին ու սրբավայրերին, ուխտատեղիներին համարում էին համազոր: Առանձին սրբերին հատուկ զորություն չէին վերագրում, բացառությամբ Ղուլուդի և Վինա գյուղերում գտնվող Սուրբ Նշան խաչերի, որոնց համարում էին ամենազոր:

Ամեն մի եկեղեցի ու սրբավայր ուներ իր ուխտագնացության օրերը:

Ղարադաղի հայերի մոտ մեղք էր համարվում տներում սրբապատկերներ, սուրբ գրքեր, ավետարաններ ու խաչեր պահելը: Գտնում էին, որ

նման սրբությունները պատկանում են եկեղեցուն և պետք է պահվեն այնտեղ:

Սուրբ գրականություն, ավետարան, սրբանկար, խաչ, գրքեր ծեռք բերողը, անմիջապես տանում, դնում էր եկեղեցում:

ԽԱՂԵՐ

Ճինջի (ճոճ). Բարեկենդանի օրերին ամենատարածված խաղերից մեկն էր, որին մասնակցում էին պատանիները, երիտասարդները, նորահարսերն ու աղջիկները: Դա այն խաղերից էր, որին հավասար իրավունքներով մասնակցում էին տղաներն ու աղջիկները:

Խանագահ գյուղի մոտակա ձորակներից մեկում մի բազմադարյան ընկուզենի կար, որի բնի հաստությունը մի քանի մետր էր, բարձրությունը՝ քսանից ավելի: Ընկուզենու ամեն մի ճյուղը ուներ սովորական ծառի հաստություն: Այդ ընկուզենին համարվում էր սուրբ ծառ, բնի վրա կանայք միշտ մոմեր էին վառում, որի հետևանքով հրդեհ էր բռնկվել և առաջացրել խոշոր փչակ:

Ծառի հարավային ճյուղը ճոճվելու համար ուներ ընդարձակ ազատ տարածք. ճինջու պարանը կախում էին դրանից:

Այծի մազից հյուսած հաստ պարանը ուներ մոտ 20մ երկարություն:

Խաղի ժամանակ մի քանի աղջիկ ու տղա, նուրբ, երկար ճիպոտները ձեռներին կանգնում էին ճինջու երկու կողմերում: Նրանք պարանի վրա ճոճվող խաղընկերոջից, տղա լիներ թե աղջիկ, պահանջում էին, որ բարձրաձայն հայտարարեր, թե ով է «իր ընկդիրած» (աչք դրած) տղան կամ աղջիկը: Եթե ճոճվողը հրաժարվում էր ասել, նրա ոտքերին ճիպոտներով հարվածում էին, չէին թողնում պարանից իջներ, մինչև անունը չտար:

Շատերը անտեղի ծեծից փրկվելու ու ազատ վարժություններ կատարելու համար հայտարարում էին իրենց «ընկդրածի» անունը, ծիծաղ ու զվարճանք պատճառում ներկաներին:

Պատահում էր նաև, որ համառում էին, ճոճման ընթացքը դանդաղեցնում, պարանի վրայից հմուտ թռիչք կատարում և դիմում փախուստի:

Տան ներսի գերաններից, բակում ու սրահում ճինջի գցելու սովորություն չկար: Ճինջի խաղը, ավանդաբար կազմակերպվում էր գյուղից դուրս:

Թռնոցի. խաղում էին աղջիկները գյուղին մոտ կալերում: Երկու հոգի պարանի ծայրերը բռնում, մի քանի մետր իրարից հեռու կանգնում էին ու ռիթմիկ կարգով ճոճում: 8-10 նորահարսեր ու աղջիկներ պարանի պտույ-

տի հետ՝ ցատկում էին դրա տակով: Հոգնողները դուրս էին գալիս, փոխարինվելով նոր խաղացողներով:

Վըչխրվազի (ոչխարավազք). աշխույժ ու հետաքրքիր խաղ էր: Խաղում էին երիտասարդները՝ ճանապարհ գնալիս, դրա հարթ վայրերում: Նրանցից մեկը ձեռքերը դնելով ծնկներին կռանում էր, իսկ մյուսները թռչում էին վրայով: Ամեն մի թռչող վազքով հեռանում էր 5-6մ ու ինքը կռանում: Այսպես հերթականությամբ թռչելով, ուրախ ու աշխույժ շարունակում էին ճանապարհը:

Աղզա զովի (թռիչք). խաղի պահանջն էր բարձր արգելքը թռիչքով հաղթահարելը: 8-10 տղաներ վիճակ էին գցում, թե ով պետք է առաջինը կռանա: Ափի մեջ մի փոքրիկ քար պահելով, ձեռքերը պարզում էին դիմացինին, որը խփելով նրա ձեռքերից մեկին, ասում էր. «Էս ձեռը ինձ, էն ձեռը քի»: Այսպիսով որոշում էին, թե ով է սկսում խաղը:

Խաղն ուներ արգելքի հաղթահարման հինգ աստիճան: Որևէ աստիճանը չհաղթահարելու դեպքում, պարտվողը փոխարինում էր որպես արգելք կռացած խաղընկերոջը:

Առաջին աստիճանում խաղն ընդունողը կռանում էր, ձեռքերը դնելով սրունքներից ցած, մյուս ընկերները հերթով թռչում՝ անցնում էին վրայով:

Երկրորդ անգամ ձեռքերը դնում էր ծնկներին, երրորդ անգամ՝ գոտկատեղին, չորրորդ անգամ՝ կրծքին ու գլուխը խոնարհում, իսկ վերջին՝ հինգերորդ աստիճանում ձեռքերը դնում էր ծոծրակին ու մատները ագուցում: Թռչողն իրավունք ուներ հենվել թռիչքն ընդունողի մեջքին ու ուսերին, բայց բարձրությունը հաղթահարելիս թռիչքը պետք է ազատ լիներ, մարմնով չպետք է դիպչեր խաղընկերոջը:

Իրք անդմնը. նշանակում է երեք քայլ: Խաղը շատ նման էր նախորդին: Գետնի վրա գիծ էին անում. մեկը կռանում էր գծի մոտ, նրա վրայով թռչում էին, երեք քայլ անում, նոր գիծ քաշում: Հաջորդ խաղացողները պարտավոր էին ցատկ կատարել միայն այդ գծից: Խաղն ուներ բարձրության հաղթահարման հինգ աստիճան:[74]

Հիլհալի. խաղացողները բաժանվում էին երկու խմբի: Վիճակահանությամբ որոշում էին խաղն սկսող խումբը, նստում հակառակորդների

[74] Բարեկենդանի օրերին 40-60 տարեկան տղամարդիկ մասնակցում էին «Աղզա զովի», «Իրք անդմնը», «Ջուխտը փանդե», «Ղըչխլի» և «Քսքնհեքի» խաղերին: Նշված խաղերի հետ մեկտեղ, մյուս խաղերը խաղում էին 18-ից բարձր տարիք ունեցողները: Այն խաղերը, որոնք խաղում էին երկու խումբ կազմած, եթե խմբեր կազմելիս չէին համաձայնվում, կատարվում էր հետևյալ վիճակահանությունը. ծուերը զույգեր էին կազմում, գաղտնի անուններ տալիս, ներկայանում մայրերին և հարց տալիս. «Տանձնս ուզիս, թա խնձորը», «խաղողնս ուզիս, թա նռոնը, կաղնենս ուզիս, թա բեխեն» և այլն: Եվ այսպես մայրերը պահանջելով իրենց առաջարկած ծածկանունները, բաժանում, կազմում էին իրենց խմբերը:

ուսերին, մոտ 3մ իրարից հեռու և շրջանածև կանգնում: Նստածները զգուշորեն ծեռքի գնդակը նետելով փոխանցում էին իրար: Մեկ շրջան բոլորելը համարվում էր մի «պոզ» (մեկ միավոր): Գնդակը չորսալու դեպքում խումբը համարվում էր պարտված, և դիրքերը փոխում էին:

Թոփի ածիլ (գնդակ նետել). գնդակը լինում էր ռետինից կամ բրդե գույնզգույն թելերից:

Տղաները վիճակահանությամբ բաժանվում էին երկու խմբի: Ընտրում էին մի տափակ 30-40 սմ տրամագծով հարթ մակերեսով քար: Քարը որպես նշանակետ հենում էին մի պատի: Քարից 2մ հեռու երկար գիծ էին գծում, որ գնդակ նետողը դրանից առաջ չանցներ: Խմբի անդամներից մեկը գնդակը վերև էր նետում ու ծեռքով ուժեղ հարվածում: Մյուս խմբի անդամները, բռնելով գնդակը նետում էին դեպի քարը: Եթե տասն անգամ չկարողանային հարվածել նշանակետին, գնդակը նետող խումբն ստանում էր «մի պոզ» (մեկ միավոր) և շարունակում խաղը: Խաղն ուներ հետևյալ կանոնները. գնդակը դեպի քարը կարելի էր նետել այն տեղից, որտեղ ընկել էր: Եթե գնդակը որսում էին օդում, իսկույն քսում էին գետնին ու հայտարարում «էրված» (վառված): Այդ դեպքում գնդակը նետողը համարվում էր խաղից դուրս:

Եթե գնդակը պատից ետ մղվեր, նետողը բացականչում էր «թիլի հոկ»: Պարտավոր էին նշանին հարվածել պատի մոտից, իսկ եթե մյուս խմբից բացականչեին՝ «թիլի հոկ», գնդակը նետում էին ընկած տեղից:

Կենդե. «կենդե» ղարադաղցիներն ասում էին ամբողջի երկու մասին. մեկը մյուսին ասում էր. «Թխի էս փադեն, թող կենդե դըռնի» (խփիր այս փայտին, թող երկու կես լինի) կամ՝ «Մի թխիլավ, էս փադը կենդըմ արալ» (մի հարվածով այս փայտը երկու կտոր արեցի):

Խաղում էին երկու կտոր փայտով, որի համար էլ ստացել էր կենդի կամ կենդե անունը:

Վերցնում էին բութ մատի հաստությամբ ու մեկ թիզ երկարությամբ մի փայտ, ծայրերին թեքություն տալիս, որ հարվածելիս վեր բարձրանար: Հարվածող փայտն ուներ մոտ մեկ մետր երկարություն: Փոքր փայտիկին խփելուց հետո հարվածողն այն դնում էր գետնին՝ որպես նշանակետ:

Խաղն ուներ հետևյալ տարբերակը. եթե փայտիկը շատ մոտ էր ընկնում, հարվածը կարող էին կրկնել, որը կոչվում էր «կրճկավ»: Հարվածողը ոտքին տալով կամրջի ձև՝ փայտը անց էր կացնում ոտքերի արանքով, թեթև խփում փայտիկին, ապա ուժեղ հարվածում: Եթե «կրճկավ» հարվածը չէր հաջողվում, տվյալ անձը դուրս էր գալիս խաղից:

Զուխտը փանդե. նշանակում է զույգ հնարամտություն: Խաղացողները, ըստ իրենց ընտրության՝ զույգեր էին կազմում: Վիճակահանությունից հետո քարը ում ձեռքում մնում էր, բռնում էր խաղընկերոջ ձեռքն ու կենտրոնում կանգնում: Հակառակորդները ձեռք ձեռքի տված զույգին շրջապատում էին ու հարվածում: Զույգը աշխատում էր մեկն ու մեկին բռնել: Բռնելու դեպքում զույգերի տեղերը փոխվում էին:

Քսքնհեքի. խաղում էին հետևյալ կերպ. բաժանվում էին երկու խմբի: Ամենաճարպիկին ընտրում էին խմբի «մերուն» (մայր, ղեկավար): Վիճակահանությունից հետո խմբի «մայրը» իր «ճտերին» հավաքում էր մի տեղ, որոնք՝ ուս ուսի, շրջան էին կազմում: Մյուս խմբի անդամները պտտվում էին նրանց շուրջը և փորձում հեծնել նրանց: Խմբի ղեկավարը բազեի նման աչալրջորեն հսկում էր, պատույտներ կատարում ու արգելում հեծնել իր խաղընկերներին: Միաժամանակ ներսի խումբի խաղացողները աշխատում էին ոտքով հարվածել հակառակորդներին, քանի որ, այդ դեպքում նրանք դուրս էին մնում խաղից: Երբ հսկող մորը հաջողվում էր մեկին հարվածել ու բացականչել՝ «քո» հարձակվող խումբը ճանաչվում էր պարտված, և տեղերը փոխում էին:

Դյիշխլի (գոտի խլել). տղաները բաժանվում էին երկու խմբի: Գետնի վրա կլոր ընդարձակ շրջան էին գծում: Խմբերից մեկը, վիճակահանությամբ մտնում էր շրջանի մեջ: Ներսի խաղացողները հանում էին իրենց կաշվե գոտիները, դնում գծի վրա ու հսկում, որ հակառակորդները դրանք չտանեին: Մյուս խումբը ճիգ ու ջանք էր գործադրում գոտիները դուրս քաշել շրջանից, պաշտպանվողներին հարվածելով գոտիներով: Գոտկատեղից վերև հարվածելը խստիվ արգելված էր:

Եթե հաջողվեր գոտին շրջանից հանել, դրա տերը խաղից դուրս էր մնում: Խաղից դուրս էր մնում նաև հարձակվող խմբի այն անդամը, որին պաշտպանվողները ոտքով հարվածում՝ «քո» էին տալիս:

Երկար էշի. տղաները բաժանվում էին երկու խմբի ու վիճակ հանում. Մի խմբի «մայրը» հենվում էր պատին ու կանգնում, իսկ «ճտերը» իրար ազդրերից ամուր գրկած շարվում էին: Այս առումով էլ խաղը կոչվում էր «երկար էշի»: Մյուս խմբի անդամները հերթով ցատկում ու նստում էին նրանց վրա: Վերջում մայրն էր նստում, երեք անգամ ծափ տալիս ու ցած իջնում: Կռացած «ճտերը» աստիճանաբար խտանում, փոքրացնում էին տարածքը և հակառակորդի համար դժվարություն ստեղծելով՝ բարձրանում: Աստիճանաբար խումբը դժվարացնում էր ցատկողների գործը. երկ-

րորդ անգամ կանգնում էին իրար գոտկատեղից գրկած, ապա՝ ուսերի տակից ու ուսերից:

Եթե մյուս խումբը բոլոր արգելքները կարողանում էր հաղթահարել նստած տեղից վայր չընկնել, մայրը ցատկում, նստում էր բոլորից վերև և երեք անգամ ծափ տալիս՝ խաղը սկսվում էր նորից: Անհաջողության դեպքում խմբերը փոխում էին տեղերը:

Աղա դադի. պատանիները բաժանվում էին երկու խմբի: Ամեն մի խումբ ընտրում էր մեկ «ըշկըհոպի» (աչք փակող): Նա պետք է լիներ արագավազ, զգոն ու տարածքին լավ ծանոթ: Վիճակահանությունից հետո քարը որ խմբին ընկնում էր, նրանց մայրը իր «ճտերին» հավաքում, կուչ էր ածում կտուրի անկյունում: Մյուս խմբի աչք կապողը իր ընկերոջ աչքերը ձեռքով ծածում էր, իսկ խումբը թաքնվում էր:

Թաքնվածների աչք կապողը հետևում էր փնտրող խմբին ու բարձրաձայն գոչում. «Պընդ կացեք, դիբի ձեզն ի գյուլիս», որից թաքնված խումբը իմանում էր, թե որոնողները որտեղ են, ինչ հեռավորության վրա, կարելի է հարձակվել թե ոչ:

Աչք կապողը ընկերոջ աչքերը բացում էր, որը պարտավոր էր գտնել թաքնված խմբի անդամներից մեկին և նրա գլխարկը հանձներ իր խմբի ղեկավարին: Նման դեպքում խումբը պարտված էր ճանաչվում, իսկ եթե աչք կապողը հակառակ ուղղությամբ էր գնում ու հեռանում, թաքնված խումբը հարձակվում էր ու մյուս խմբի «ճտերին» անխնա ծեծում: Այդ ժամանակ մայրն սկսում էր աղմկել ու աղաղակել, ձայն տալով «Աղա դադի, աղա դադի»: Ծեծը դադարում էր, երբ նրանց աչք կապողը ոտքով հարվածեր հակառակորդ խմբի անդամներից մեկին ու գոչեր՝ «քո»:

Կղճանտի (մեկ ոտքով). տղաները բաժանվում էին երկու խմբի: Վիճակահանությունից հետո, քարը որ խմբին ընկնում էր, այդ խմբի յուրաքանչյուր անդամ մեկ ոտքի վրա հետապնդում էր մյուս խմբի խաղացողին: Եթե հաջողվում էր նրանց ոտքով հարվածել, խաղից դուրս էին գալիս, իսկ եթե չէր հաջողվում, հոգնում էին, նրան փոխարինում էին խաղընկերները: Երկու կողմերի պարտվածները նորից խաղադաշտ մտնելու իրավունք չունեին: Եթե հալածող խումբը կարողանում էր մյուս խմբի բոլոր անդամներին հարվածել, խաղը իրենք էին շահում, իսկ եթե չհաջողվեր, հաղթանակը մյուս խմբինն էր:

Մզրաղ (հոլ). գյուղերում շատերը կարողանում էին կաղնու, տանձենու, սըզնու և այլ ամուր ու ծանր փայտերից հոլ պատրաստել:

«Ղեյթանը»՝ հոլը պտտեցնող պարանը, հյուսում էին բամբակի ընտիր թելից: Հոլի ծայրին ամրացնում էին հատուկ մեխ, որը տեղի դարբիններն էին պատրաստում: Հոլերով Բարեկենդանի օրերին պատանիները մրցման մեջ էին մտնում, թե ում հոլը երկար կպտտվի:

Քիկովի (գլխարկախաղ). պատանիներից մեկն իր գլխարկը դնում էր գետնին և հսկում: Մյուսները հարձակվում, խլում էին այն և սկսում այս ու այն կողմ շպրտել: Գլխարկատերը հետապնդում էր նրանց, ոտքով հարվածում ու «քո» ասում: Խաղի մեջ էր դրվում նրա գլխարկը, ում խփել էր:

Քյուրիլտոսի. գետնի վրա մի փոքրիկ կլոր շրջան էին գծում: Տղաներից մեկը կանգնում էր շրջանի մեջ, մյուսները չորս կողմից հարձակվում էին ու ձեռքերով հարվածում նրան, իսկ նա փորձում էր շրջանի ներսից հարվածել ու ոտքով «քո» տալ, ազատվել ծեծից: Երբեմն հաջողվում էր նրան հանել շրջանից և ծեծել դրսում: Շրջանից դուրս «քո» տալը հաշիվ չէր:

Քյալագ-քյալագ. «քյալագ» նշանակում է փորձանք, և խաղը տեղով փորձանք էր: Տղաները վիճակահանություն էին կատարում: Քարն ում որ մնում էր, կանգնում էր կենտրոնում, մյուսները՝ կլոր, խիտ շրջան կազմած նստում էին շուրջը, ոտքերն ուղղում դեպի ներս: Նշան արած որևէ իր տղաները ոտքերի արանքով գաղտնի փոխանցում էին իրար, միաժամանակ ոտքերով խփելով կենտրոնում կանգնածին: Վերջինս փնտրում էր իրը և գտնելով նրանցից մեկի մոտ, տեղը փոխում էր նրա հետ:

Դերեն էշը (քահանայի էշը). այս խաղը շատ հետաքրքիր էր. երեխաներին սովորեցնում էր շատ մրգերի անուններ: Խաղացողներից մեկը համարվում էր գյուղի քահանան, մյուսները վիճակ էին հանում, քարը ում մնում էր նա համարվում էր քահանայի էշը: Քահանան ու իր էշը, խաղացողներից գաղտնի, մի մրգի անուն էին պահում: Քահանան մեջքը հենում էր պատին, կանգնում, իսկ էշը գլուխը դեմ էր տալիս քահանայի գոտկատեղին ու սպասում: Խաղընկերները քահանային խնդրում էին, որ էշը տա, տանեն միրգ բարձեն:

– Հինչը՞ս բիրլական,- հարցնում էր քահանան:

– Խնձոր

– Չէ, խնձոր բիռնիլու ինձ էշ չօնմ,- պատասխանում էր քահանան:

Երկրորդն էր գալիս, հեծնում էշին ու ասում.

– Ադեր, էշդ տուր տանմ Բաղդադ՝ խուրմա բերմ:

– Չէ, խուրմա բիռնիլու էշ չօնմ,- պատասխանում էր քահանան:

Հաջորդը գալիս էր, կամենում տանել նուռ բերելու և այլն: Գաղտնիքը բացվում էր, եթե մեկը տար «քահանայի» ու «էշի» պահած մրգի անունը, որից հետո էշը նա էր լինում, ու խաղը շարունակվում էր:

Փեշարդի. խաղում էին պատանիները կտուրներին կամ կալերում: Խաղից առաջ գրպաններն ու ծոցերը լցնում էին ընկույզով. ամեն մեկն ունենում էր մի խոշոր ու ծանր ընկույզ, որին ասում էին «սախկալ»:

Գետնի վրա գիծ էին քաշում և ամեն մեկը մի ընկույզ էր դնում դրա երկարությամբ: Հավաքվում, մի քանի մետր հեռավորության վրա կանգնում ու հերթագրվում էին: «Փեշ» ասողը առաջինն էր լինում, «արդի» ասողը երկրորդը, հետո մյուսները:

Գծից մի քանի մետր հեռու գետնին հավասար շարքով չոքում էին և բութ մատով ու ցուցամատով «սախկալ» ընկույզը գլորում դեպի շարած ընկույզները, եթե այն կպչում էր, ընկույզը վերցնում էր և խաղը շարունակում:

Խաղի ընթացքում, եթե հաջողվում էր հարվածել ընկերոջ «սախկալին» նրա տերը խաղից դուրս էր մնում:

Վըրսախաղ (որսախաղ). այս խաղին աղջիկները չէին մասնակցում: 12-18 տարեկան տղաները հավաքվում էին գյուղի ծայրամասում: Նախ սահմանագծում էին որսի տարածքը, թե որ ծորակից մինչև որ բլուրը, որ թփուտից մինչև որ այգիները պետք է գտնվեն որսի կենդանիները:

Մեծ տղաներից երեքը դառնում էին որսորդներ, երեք ճարպիկ տղաներ նրանց որսորդական շները, երեքն էլ՝ որսորդների շալակակիրները: Վերջիններս դարմանի տոպրակներով տավարի չոր թրիք էին բերում որպես գնդակներ և որսորդներին սպասարկում: Մնացած բոլոր տղաները, ըստ իրենց ցանկության՝ խոզ, արջ, եղնիկ, քարայծ, գայլ և այլ կենդանիներ էին «դառնում» ու ցրվելով, թաքնվում սահմանված տարածքի ծորակներում ու թփուտներում: Որսորդները, շների օգնությամբ, գտնում էին «կենդանիներին» ու որսում թրիքից պատրաստած գնդակներով: Մինչև ուշ երեկո ծորակներում աղմուկ աղաղակ էր տիրում:

Ըշկըհոպի (աչքակապուկ). ստորև ներկայացվող տարբերակը խաղում էին 10-14 տարեկան տղաներն ու աղջիկները միասին, հավասար իրավունքներով:

Վիճակահանությունից հետո քարն ում մոտ որ մնում էր, աղջիկներից մեկի գլխաշորով նրա աչքերը փակում էին և ձեռքով կամաց խփում: Նա խարխափելով դես ու դեն էր ընկնում ու փորձում բռնել որևէ մեկին: Առա-

ջանում էր աշխույժ ծիծաղ ու քրքիջ: Եթե մեկին բռնում էր, նրա աչքերն էին փակում:

Գյողկլանե (պահմտոցի). մի քար էին ընտրում ու դնում պատի տակ: Պատահիներից մեկը դեմքով դեպի պատը կանգնում, աչքերը փակում էր: Մյուսները զանազան տեղերում թաքնվում էին: Հերթապահը աչքերը բացում և սկսում էր փնտրել թաքնվածներին:

Թաքնվողները հարմար պահ էին փնտրում, որ աննկատ մոտենան, ոտքերը դնեն քարին ու բացականչեն՝ «իս ներկա»: Եթե փնտրողը մեկին գտներ, առաջինը ինքը ոտքը դներ քարին ու նրա անունը տար, նա համարվում էր պարտված ու ինքն էր աչքերը փակում:

Կանտալա. հանելուկ խաղ էր թռչունների մասին: Երեխաներին հնարավորություն էր տալիս միտքը զարգացնելու և շատ թռչուններ ճանաչելու: Կանտալա բառը չի ստուգաբանվում: Հավանաբար թռչունների կանչ է: Խաղը ղեկավարող մայրը նստում էր քիչ բարձր տեղում, ձեռքին պահում կաշվե մեծ գոտի: Բոլոր աղջիկներն ու տղաները ծալապատիկ նստում էին գետնին՝ նրա շուրջը: Մայրը բացատրում և ձեռքերի միջոցով, մոտավոր ճշտությամբ նկարագրում էր թռչունի մեծությունը, միջավայրը, կեր ուտելու, ջուր խմելու ձևերը և այլ հատկանիշներ:

Ամեն մի նկարագրությունից հետո խաղի մասնակիցները միաբերան գոչում էին. «Կանտալա հա, կանտալա»:

Բերենք մի օրինակ.

– Մի ղուշ օնմ՝ չիք ճնաչի,
– Կանտալա հա, կանտալա:
– Կըվիեն վըրը զիլ կկանչի,
– Կանտալա հա, կանտալա:
– Ղուզղուն տըսնի, տոն կփախչի,
– Կանտալա հա, կանտալա:
– Դե հի՞նչն ա, ճըրեցեք,- պահանջում էր մայրը:

Ամեն մեկն իր իմացած թռչունի անունն էր տալիս: Ով գտնում էր, մայրը գոտին տալիս էր նրան ու կարգադրում.

– Թըվ տոր՝ քըռն, քըվ տոր՝ քըռն:

Հանելուկը գտնողը գոտիով թեթև խփում էր խաղընկերներին, նրանք էլ ձեռները տարածում՝ իբր թռչում էին: Կարգադրում էր ջուր տալ, կուտ տալ ու նորից թռցնել: Գոտին նորից վերցնելով մայրը սկսում էր երգով ու ձեռքերով նկարագրել մի նոր թռչուն, նոր հանելուկ:

Զուռնավ գյոնք, թա դումբավ. այս խաղով զարգացնում էին պատանիների երաժշտասիրությունը և երաժշտական գործիքների ճանաչումը: 10-15 պատանի ու աղջիկ, ձեռք ձեռքի տված՝ շարվում էին: Շարքի սկզբում մի «խնամին» էր կանգնում, վերջում՝ մյուսը: Դիմելով խնամուն, ասում էր.

– Խնամե ջան, խնամե զուռնավ գյոնք, թա՞ դումբավ (կամ՝ թառավ գյոնք, թա՞ քյամանչավ, սազավ գյոնք, թա՞ ղավալավ և այլն):

– Իս զուռնավը ուզիս,- ասում էր խնամին:

Իբր զուռնա նվագելով գալիս, վերջինիս թևի տակից անցնում, շղթայում էին: Այդպես, ամեն անգամ տարբեր երաժշտական գործիքների ձայնով, նվագելով գալիս, հաջորդաբար մեկի թևի տակից անցնում, բոլորին շղթայում էին ու երկու կողմ ձգում, մինչև շղթան կտրվում, բաժանվում էր երկու մասի. որ կողմի անդամները շատ էին լինում, նրանք էլ խաղը շահում էին:

Սահման կտրիլ. տղաներն ու աղջիկները վիճակահանությամբ բաժանվում էին երկու խմբի: Որպես սահման մի երկար գիծ էին քաշում, և մի խումբը կանգնում էր գծի վրա: Աջ ու ձախ կողմերում 2մ երկարությամբ և 1մ լայնությամբ հատվածներ էին գծում: Մյուս խումբը բաժանվում էր երկու մասի և գծված տարածքից հսկում սահմանը: Մոտ 20մ հեռավորության վրա մի նշանակետ էին դնում, ով կարողանում էր հսկող խմբերի արանքով անցնել ու հասնել նշանակետին, թիմին բերում էր մեկ միավոր: Եթե սահմանազանցին մինչև նշանակետ հասնելը սահմանապահները հասնում ու ձեռքով խփում էին, նա մնում էր գերի: Խաղի ընթացքում միավորները հաշվում էին ու փոխվում՝ սահմանապահ խումբը դառնում էր սահմանազանց և հակառակը:

Գյուլրը սարեն երեյն (գայլերը սարի վրա են). երեխաներից մեկը մայր էր դառնում, երկուսը գայլ էին ձևանում, մյուսները՝ գառներ ու գնում արոտի: Մայրը ձայն էր տալիս

– Գյոռնր, գյոռնր, տոն եկեք:

– Խէ, հինչո՞ւ հետե,- հարցնում էին գառները:

– Գյուլրը սարեն երեյն,-ասում էր մայրը:

– Մըզ հի՞նչ կարի,- հարցնում էին գառները:

– Չեզ կփռնն, խղդոտն,- ասում էր մայրը:

Վախեցած գառները մայունով փախչում էին դեպի տուն, իսկ դարանակալած գայլերը որսում էին նրանց:

Բիլբիլալի կամ քար գցոցի. խաղն ուներ երեք տարբերակ.

Առաջին. 5-6 հոգի շրջան կազմած նստում կամ ծալապատիկ էին անում, կենտրոնում թողնում փոքր ու հարթ տարածք: Վերցնում էին ընկույզի չափ տասը կլոր քար և հերթով սկսում խաղը:

Խաղացողներից մեկը բոլոր քարերը դնում էր ափի մեջ ու հանդարտ նետում վերև ու ձեռքի երեսը պահում դրանց տակ: Քանի հատ քար մնար ձեռքի վրա, համարվում էր շահած: Գետնին թափված քարերը նա պետք է այնպես հավաքեր, որ մյուս քարերին չդիպչեր:

Խաղը շարունակվում էր հետևյալ կարգով. ձեռքին եղած քարերից մեկը նետում էր վեր, մի քար վերցնում և նետած քարը բռնում: Այսպես բոլոր քարերը հավաքելուց հետո, ինը քար տեղավորում էր մի ափի մեջ, նույն ձեռքի բութ մատով ու ցուցամատով տասներորդ քարը նետում վերև, ափի քարերը դնում գետնին ու նետած քարը որսում: Երկրորդ անգամ քարը նետելուց հետո պետք է ճարպկորեն ինը քարերը վերցներ և օդ նետած քարը որսար: Եթե այս գործողությունը կարողանում էր ճիշտ կատարել, շահում էր մեկ միավոր և նորից շարունակում խաղը, իսկ եթե խախտումներ էր թույլ տալիս, խաղը զիջում էր ընկերոջը:

Խաղի երկրորդ տարբերակը կոչվում էր բիլբիլալի:

Վերցնում էին ընկույզի չափ հինգ կլոր քարեր, դրանք թափում գետնին. խաղացողը քարերից մեկը վերցնում էր, նետում վերև, վերցնում չորս քարերից մեկը և որսում նետած քարը: Հաջորդ անգամ քարը վեր նետելով, ափի քարը դնում էր հատակին, վերցնում էր մեկ ուրիշը և որսում նետած քարը: Այսպիսով չորս քարերը իրար մոտ հավաքելով վերջին անգամ քարը վերև էր նետում, չորս քարերը առնում ափի մեջ ու որսում նետած քարը: Եթե այս գործողությունները կատարում էր ճիշտ ու անթերի, շահում էր մեկ միավոր և խաղը շարունակում: Անհաջող հանդես գալուց հետո խաղը զիջում էր ընկերոջը:

Խաղի երկրորդ տարբերակը կոչվում էր. բիլբիլալի՝ շոն-շոն:

Խաղացողը հինգ քար էր նետում գետնին, ծախ ձեռքի ցուցամատը դնում միջնամատի վրա ու ձեռքը դնում գետնին այնպես, որ բութ մատի հետ կամար ստացվեր, ապա խաղընկերոջն առաջարկում էր ընտրել քարերից մեկը, որպես «շուն»: Խաղացողը քարերից մեկը վեր էր նետում, այդ ընթացքում մյուս քարերը սահեցնում դեպի «կամարը»: Սովորաբար այն քարն էին «շուն» ընտրում, որը խանգարում էր մյուսների ընթացքը: Եթե խաղացողը կարողանում էր խաղը վարել այնպես, որ «շուն» նշանակված քարին չդիպչեր, շահում էր մեկ միավոր:

Օթախ-օթախ. պատանիները հարթ տարածքում մոտ 3մ երկարությամբ ու 2մ լայնությամբ գիծ էին անում, որը երկարությամբ բաժանում էին երկու մասի: Դրանց հատող երեք գծերով այն բաժանում էին վեց հավասար քառակուսիների՝ «օթախների»: Խաղացողներից մեկը վերցնում էր ծեռքի ափի չափ մի տափակ քար, վրան թքում ու խաղընկերոջը հարցնում.

– Չորնս ուզիս, թա՞ թացը,- ու քարը նետում էր վերև:

Նման վիճակահանությամբ խաղն սկսվում էր:

Նախ քարը նետում էին առաջին օթախը, ապա մի ոտքը բարձր պահած, մյուս ոտքով քարը հրում՝ փոխադրում էին հաջորդ օթախը և այսպես հաջորդաբար, վեցերորդ օթախից հանում դուրս: Հաջորդ անգամ քարը նետում էին երկրորդ օթախը:

Խաղի նրբությունն այն էր, որ ընդհանուր գծից 0,5մ վերև զուգահեռ գիծ էին անում, որտեղից քարը նետում էին: Քարը եթե ընկներ գծի վրա, տարածքից դուրս գար կամ խաղացողը գծերը տրորեր, համարվում էր «վառված» ու դուրս էր մնում խաղից: Ովքեր կարողանում էին վեց օթախներն էլ հերթականությամբ անցնել, շահում էին մեկ միավոր:

Կտրած կտրածի. տղաներն ու աղջիկները վիճակահանությամբ բաժանվում էին երկու խմբի: Մի խումբը, ձեռք ձեռքի ամուր բռնած շարվում էր ուղիղ գծով: Մյուս խումբը արագ և ուժեղ վազքով գալիս, ձեռքերով հարվածում էր շղթային: Եթե հաջողվում էր ձեռքերն անջատել ու շղթան կտրել, ըստ ցանկության, մեկին տանում՝ դարձնում էին իրենց խմբի անդամ:

Ճտը ճոտի (ճուտ-ճուտ). խաղացողներից ամեն մեկը մի փոքր երեխա էր ընտրում՝ որպես ճուտ: Լայն շրջան էին կազմում, ամեն մեկը կանգնում էր իր ճտի մոտ, որը նստում էր գետնին: Խաղընկերներից մեկը մնում էր առանց ճտի ու ճտատերերից մեկին հրավիրում մրցման:

Մրցությունն ուներ հետևյալ ձևը. նրանք ճտի մոտից շրջանաձև վազում էին հակառակ ուղղությամբ, պտույտ կատարելով խաղընկերների շուրջը: Ով շուտ էր հասնում ճտի մոտ՝ խաղը շահում էր: Խաղից դուրս մնացողը մրցության էր հրավիրում մեկ ուրիշի:

Թղթախաղ. թղթախաղը վաղուց էր մուտք գործել Ղարադաղ, բայց մեծ տարածում չէր գտել, քանի որ այն համարվում էր պղծություն, մոլություն ու ամոթալի խաղ:

Եթե գյուղի ղեկավարներն իմանում էին, որ մի խումբ երիտասարդներ զբաղվում են թղթախաղով, նրանց պարսավանքի էին ենթարկում ու ամոթանք տալիս:

Չնայած նման խստությանը, հենց գյուղերի ղեկավարներն էին զբաղվում թղթախաղով՝ խաների, բեգերի, իշխանության ներկայացուցիչների հետ դրամով 21 խաղալով:

Երբեմն երիտասարդները ժամանցի համար, հատկապես ձմեռանոցներում 21 էին խաղում, բայց ոչ թե դրամով, այլ ընկույզով:

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Դրախտ, քավարան, դժոխք. ըստ ղարադաղցի հայերի՝ դժոխքը գտնվում է մի խոր ու մթին անդունդում: Դրախտ ու քավարան գնալու համար պետք էր անցնել մազե կամրջի վրայով: Մեղավոր ու հանցավոր հոգիները սայթաքում, կամրջից վայր են ընկնում ու հայտնվում դժոխքում, իսկ բարի հոգիներն անցնում են մազե կամրջի վրայով:

Հրեշտակները նրանց ստուգում են քավարանի մուտքի մոտ: Թեթև մեղք ու հանցանք ունեցող հոգիները քավարանում աղոթքներով մեղքերի թողություն են խնդրում և իրավունք ստանում մտնել դրախտ:

Դժոխքում մեղավոր ու հանցագործ հոգիներին պահում են սոված ու ծարավ, ծեծում օձե մտրակներով, գցում եռացող ձյութի պղինձների ու կարասների մեջ:

Քրիստոսն ու Ալին մշտապես կանգնած են լինում դրախտի դռանը, որը բաղկացած է երկու բաժնից՝ քրիստոնյաների և մահմեդականների:

Քրիստոնյա մարդկանց ճակատին քսած սուրբ մեռոնը աներևույթ դրոշմ է մարդու ճակատին, այն միայն Քրիստոսն է տեսնում ու դրախտի դուռը բացում նրանց առջև: Ալին որոշում է «սունաթված» (թլպատված) լինելով. ականջից բռնում, գցում է իր բաժին դրախտը:

Չար և բարի օրեր. Ղարադաղի հայերը գտնում էին, որ շաբաթվա օրերն ունեն բարի և չար, նպաստավոր և անբարենպաստ հատկանիշներ: Բարի օրերը նպաստավոր էին աշխատանք ձեռնարկելու, ճանապարհ կամ որսի գնալու, հնձի, կալսման, ցանքի ու այլ աշխատանքների համար:

Աշխատանքի նպաստավոր ու բարի օրեր էին համարվում երկուշաբթին, երեքշաբթին, հինգշաբթին և շաբաթը:

Անբարենպաստ ու չար էին համարվում չորեքշաբթին, ուրբաթը և կիրակին:

Կարևոր գործ ձեռնարկելիս և հեռու տեղ գնալիս աշխատում էին տնից դուրս գալ վաղ առավոտյան, լուռ ու մունջ, որ չհանդիպեին չար աչք, չար շունչ (նափաս) ու չար ոտք ունեցող մարդկանց:

Ամեն օր վաղ առավոտյան խփում էին եկեղեցիների զանգերը, ազդարարելով աշխատանքի սկիզբը:

Ամեն օր արևամուտից առաջ եկեղեցու զանգերը նորից էին ղողանջում, որը լսելուն պես, որքան էլ որ հրատապ աշխատանք լիներ, թողնում ու վերադառնում էին տուն:

Զանգերի ղողանջից հետո կատարած աշխատանքը համարվում էր մեղք ու ագահություն:

Առավոտյան զանգերի ղողանջը լսող գյուղացին պարտավոր էր անմիջապես հայացքը դարձնել դեպի արևելք՝ աղոթարան և խաչակնքել: Խաչակնքելուց հետո աղոթք էին մրմնջում ակնկալելով աշխատանքի հաջողություն:

Ղարադաղի բոլոր ազգությունները հավատում էին, որ մարդիկ բաժանված են երկու խմբի: Առաջին խումբը կազմում էին բարի աչքի տեր, բարեշունչ և բարի ոտք (վընը թիթվ) մարդիկ:

Հավատում էին, որ որևէ գործ նախաձեռնելիս, եթե վերը նշված երեք հատկություններով օժտված մարդ հանդիպեր գործը անվնաս ու անվտանգ կընթանար ու բարի ավարտ կունենար:

Հավատում էին, որ չար համբավ ունեցող մարդիկ նախաձեռնած գործին կարող են վտանգ, անհաջողություն կամ վնաս պատճառել:

Իրենց փորձից ելնելով, գյուղացիները համոզված ասում էին. «Դովուց Նաբի պարի աշկ օնի», «Մանցուց պառավը պարի նափաս ա», «Խաչուց Կաբու վընը թիթվ ա» կամ՝ «Բադուց Բալասանե աշկը շառ ա, հինչ բենու եշի՝ տեղն ու տեղը կչուրանա», «Դուրունց Սահակ ծնդըր նափաս ա, հինչ բենու գինի՝ մի չար բեն, մի վնաս կպդահի» և այլն:

Չար համբավ ունեցող մարդկանցից հեռու մնալու համար միշտ զգոն ու ուշադիր էին լինում: Նման մարդու հանդիպելիս առաջինը իրենք էին բարևում՝ հավատալով, որ բարի շունչը դիպչելով չարին խափանում է այն:

Հանդիպելուց հետո անմիջապես մի քար կամ մոտը եղած որևէ իր շրջում էին հավատալով, որ չարը խափանում ու թաղում են:

Շատ դեպքերում, քանի դեռ չար համբավ ունեցող մարդիկ չէին հանդիպել նոր նախաձեռնած գործին, որևէ պատրվակով գործի վրա էին հրավիրում այն մարդկանց, որոնք ճանաչված էին որպես բարետես, բարեշունչ ու բարի ոտքի տեր:

Ղարադաղի բոլոր ազգությունները հավատում էին, որ արտը, այգին, բոստանը, ինչպես նաև առանձին բերքատու ծառերը կարող են տուժել, չորանալ, բերքաթափվել, կայծակնահարվել, հեղեղի, այլ փորձանքների ու աղետների ենթարկվել չար աչքի, չար շնչի ու չար ոտքի պատճառով:

Նման չարիքներից արտը, այգին, բանջարանոցը և ծառը անվնաս պահելու համար, դրանց աչքի ընկնող տեղերում 2-3 մետրանոց փայտե ծող էին տնկում ու վրան ամրացնում որևէ կենդանու գանգ, հավատալով, որ չար աչք, չար շունչ և չար ոտք ունեցող մարդը չարությամբ, նախանձով արտին, այգուն, ծառին նայելով, ինքը կչորանա գանգի նման, և բերքն ու բարիքը կփրկվեն չարից:

Ամուսնական հարաբերությունը արգելվում էր բոլոր չորեքշաբթի, ուրբաթ, պաս և տոն օրերին, որպես չար, փակ, սատանաների համար հաջողության օրեր: Հավատում էին, որ այդ օրերին սաղմնավորված երեխան, սատանայի նման կունենա չար, նախանձ, նենգ բնավորություն:

Ճակատագիր և բախտ. Ղարադաղի բոլոր ազգությունները հավատում էին ճակատագրի և բախտի գոյությանը, որ մարդու ճակատագիրը գրում է աստված. «Աստուծեն գիրած ճակատագիրը, ոչ կինա ճընջիլ, ոչ կինա փոխիլ, հինչ որ գիրված ա մարթեն ճկատեն, էն ալ կկատարվի»:

Գտնում էին որ մարդու ճակատին աստված գրում է ծնվելու և մահանալու ժամանակը: Ինչ վերաբերում է մարդու ապրելակերպին և հաջողությանը, բախտի գործն է, որը կարելի է փոխել սրբերի միջոցով:

Մարդկանց բախտ տվողը սրբերն են: Սրբերին աղոթք անելով, ուխտ գնալով, ծոմ պահելով, մատաղ խոստանալով, աղերսելով և լացելով կարելի է փոխել տալ բախտը, արթնացնել քնից և այլն:

Կենդանիների գանգերի միացման զիգզագ հանգույցները նկատի ունենալով, հավատքով ասում էին. «Սա անասուներն ճակատագիրն ա»:

Գտնում էին, որ եթե բախտն էլ աստծո կողմից տրված լիներ մարդուն, ճակատագրի նման հավասար կլիներ և ոչ թե մեկին թագավորություն, մեկին ունևորություն, մեկին չքավորություն, մուրացկանություն կտրվեր:

Հավատում էին, որ ամեն ընտանիք ունի «մի ղսմաթ, բախտ ու հաջողություն», որը կարող է լինել անտեսանելի, դրոշմված տան շեմին, մեջտեղի սյունին կամ ընտանիքի որևէ անդամի կամ կենդանու վրա:

Շատերը գուշակում էին. «Շունը սատկեց, տան բարաքյաթը կորավ, կովը ծախեցինք, բարաքյաթն էլ հետը գնաց, աղջկան ամուսնացրինք, տան խեր ու բարաքյաթը հետը տարավ»:

Պատահում էր, որ անասունների անկումներից, կորուստներից ու հիվանդություններից խուսափելու համար փոխում էին գոմի դուռը:

Բախտի վերաբերյալ Ղարադաղի հայերն ունեին հետևյալ առածները. «Բախտդ, որ քոն ա ինալ, դու ալ քոն ինի», «Բախտդ, որ քոնե եր կկենա, նոր դու ալ եր կաց»:

Քնած բախտը արթնացնելու համար մարդիկ դիմում էին սրբերին, գրբացներին, գուշակներին և հմայիլներ անում:

Ինչպես չհավատային բախտի գոյությանը, երբ մեկի տգեղ ու անբան աղջկան նշանում, բախտավորում, տանում էին, իսկ հարևանի գեղեցիկ, գործարար, համեստ ու շնորհաշատ աղջիկը մնում էր տանը, քանի որ նրա բախտը քնած էր:

Ինչպես չհավատալ բախտին, որ գայլը 40 ոչխարատերերի ոչխարները թողած, հոտից հափշտակում էր մեկ ոչխար ունեցողի անասունը:

Երազ. Ղարադաղի բոլոր ազգությունները հավատում էին երազներին, դրանք համարում աստծո ու սրբերի կողմից նախազգուշացում՝ հնարավոր բարու կամ չարիքի վերաբերյալ, հավատում հոգիների գոյությանը:

Շատերը, ելնելով իրենց բազմաթիվ գուշակություններից և փորձերից, լիուլի հավատում էին երազների նախազգուշացումներին, հավատում, որ եթե երազը ուրիշին պատմես, այն կչքվի, և կատարվելիքը տեղի չի ունենա: Եթե երազը երազում պատմես ուրիշին, նույնպես կչքվի ու կստվի:

Գտնում էին, որ շաբաթվա բարի օրերի գիշերներին տեսած երազները միշտ բարի են, կկատարվեն, իսկ չորեքշաբթի և ուրբաթ գիշերներինը՝ չար:

Կիրակի գիշերների երազները սուտ են լինում:

Ղարադաղցիների մոտ կային տպագիր և ձեռագիր երազահաններ: Առաջնությունը տրվում էր Սողոմոն իմաստունին վերագրվող երազների գուշակության գրքին:

Վատ երազ տեսնողը անհանգստությունն ու կասկածները փարատելու համար առավոտյան շտապում էր գրքացի մոտ՝ երազը մեկնաբանելու: Գրքացը լսում էր նրան, բացում երազահանը, ճշտում, թե լուսնի քանիսին է տեսել երազը, շաբաթվա որ գիշերը ու մեկնում այն:

Երազը չիք դարձնելու համար գրքացը պահանջում էր աքաղաղ բերել, որ նրա արյունով գիր անի:

Նա երեք գիր էր անում ու հանձնարարում դրանցից մեկը առավոտյան վաղ, անխոս նետել հոսող ջրի մեջ, որ ջուրը հեռացնի այն, երկրորդը թաղել եկեղեցու մոտ կամ ուխտատեղիում և մի զույգ մոմ վառել, իսկ երրորդը թաղել դռան շեմի տակ:

Երազի կատարման համար տալիս էին տարբեր ժամկետներ՝ նույն օրը, երեք օր, յոթ օր, մեկ ամիս, մեկ տարի և այլն:

Աչքի խաղալը. աչքերի խաղալն ու թրթռալը նմանապես նկատի էին ունենում և գուշակություն կատարում:

Աջ աչքը խաղալը հաջողության նշան էր, ձախինը՝ փորձանքի, անսպասելի վտանգի:

Աջ ձեռքի քոր գալը դրամի ձեռքբերում էր ակնկալում, ձախինը՝ վատնում ու կորուստ:

Ականջների ծայն տալուց գուշակում էին, որ որևէ մեկը հիշում է իրեն, խոսում են իր մասին:

Ջույգ փռշտոցը համարվում էր գործի հաջողության գրավական, իսկ կենտը չար էր համարվում:

Եղանակի գուշակություն. Ղարադաղի հայերը ավանդական փորձից ելնելով, հետաքրքիր բազմազան գուշակումներ էին կատարում տարվա և ամիսների անձրևաբերության կամ երաշտի մասին:

Եղանակի վերաբերյալ գուշակողները տղամարդիկ էին, որոնք իրենց գիտելիքները փոխանցում էին սերնդեսերունդ:

Նորալուսնի եղջյուրը, եթե ուղղահայց էր երևում ամիսը առանց տեղումների կլիներ:

Երաշտ էր ենթադրվում, երբ լուսնի շուրջը ընդարձակ օղակ էր երևում:

Նորալուսնի հորիզոնական դիրքը նշանակում էր, որ ամիսը անձրևոտ կլինի:

Եթե լիալուսնի շուրջը փոքր օղակ էր երևում, մոտակա օրերին տեղումներ էին ենթադրվում:

Գարնան, ամռան և աշնան օրերին առավոտվա սառը քամուց գուշակում էին, որ օրվա վերջում տեղումներ կլինեն:

Ձմռանը, եթե եղանակը ցրտում և քամի էր բարձրանում, տեղումներ չէին սպասվում, իսկ եթե եղանակը փոխվում էր, ջերմաստիճանը բարձրանում ու ամպում, ձյուն էր սպասվում:

Ձյան փաթիլների ու անձրևի կաթիլների խոշորանալը նշանակում էր տեղումների մոտալուտ դադար:

Տեղատարափ տեղումների դադարից անմիջապես հետո, եթե ջերմաստիճանը կտրուկ բարձրանում էր, ենթադրում էին, որ տեղումները կշարունակվեն:

Եթե երկնակամարի ամպերը արևածագին արևի շողերից ստանում էին վառ կարմիր գույն, գուշակում էին, որ մոտ օրերին սպասվում են տեղումներ:

Եթե երկնակամարի ամպերը արևամուտի ժամանակ վերափոխվում էին վառ կարմիր գույնի, գուշակում էին, որ տեղումները կդադարեն և կհաջորդեն արևոտ օրեր:

Երբ ամպերը խտանում էին և արագ տեղաշարժվում, գուշակում էին մոտալուտ տեղումներ:

Ծիածանը եթե առավոտյան երևում էր արևմտյան երկնակամարի վրա, տխրություն էր պատճառում, քանի որ գուշակում էին, որ տարին «նահանջ» է լինելով, երաշտ ու թանկություն կլինի, իսկ եթե արևելյան կողմում՝ բերքն առատ ու էժան կլինի:

Եթե պարզ, անամպ ու շոգ օրերին ագռավներն աշխուժանում էին, թռչկոտում այս ու այն կողմ, համախմբվում ու կռնչում, գուշակում էին, որ սպասվում են մոտալուտ տեղումներ:

Ջադու (կախարդ). կախարդին Ղարադաղում անվանում էին «ջադու բազ»: Կախարդությամբ զբաղվող մարդիկ Ղարադաղում չկային: Ջադու էին ասում այն կանանց, որոնք ունեին չար, անհաշտ, անհամերաշխ բնավորություն:

Փալչի (թովիչ, բախտագուշակ). հայերի մեջ թովիչներ չկային. Ղարադաղում դրանք ղարաչի կանայք էին, որոնք սնահավատ հայ կանանց մոտ հանդես էին գալիս որպես բախտագուշակներ, իրենց խոսքաշենությամբ ահ ու սարսափ պատճառում և հավատացնում, որ իրենք կարող են սպառնացող վտանգը կանխել, հիվանդին բուժել, սարսափից վախեցածի վախը քաղել և այլն:

Նրանք գուշակությունը կատարում էին իրենց հետ բերած թասի մեջ լցված ջրին նայելով: Թասերը լինում էին արծաթից կամ պղնձից, դրսի կողմից գրվածքներով ու բազմազան նկարազարդումներով:

Եթե ենթադրում էին, որ մեկը հիվանդացել է վախից, նրան անկողնում պառկեցնում էին, գուշակության թասով ջուր շաղ տալիս վրան, ծածկում, ծածկոցի վրա նոսր բամբակ փռում ու բամբակը այրում:

Բախտագուշակության վարձատրման չափը չէին որոշում կամ նախապես պայմանավորվում. տալիս էին ինչ կամենային, մի աման ցորեն, գարի, պղնձե մանր դրամ և նման բաներ. դժգոհություն չէր լինում:

Գրբացությունն. Ղարադաղի սնահավատ բոլոր ազգությունները մեծ հավատով էին ներշնչված գրբացության զորությամբ: Նրանք լիովին հավատում էին, որ հայ քահանաների մոտ գտնվող, Սողոմոն իմաստունին վերագրվող «Բժշկություն և կախարդություն» գրքերը ամենակարող զորություն ունեն, հավատում էին, որ գրբացը կարող է չքեր հարսին հղիացնել, մարդուն զրկել զավակներ ունենալու հնարավորությունից, խելքահան անել, խելագարին բուժել, սեր կամ ատելություն առաջացնել, կորստի մատնել կամ հարստություն պարգևել և այլն:

Հայ քահանաների մոտ զանազան նպատակների ու կարիքների համար գալիս էին թուրք, քուրդ և այլ ազգությունների շատ ու շատ բնակիչներ:

Գրբացությունը ժառանգաբար անցնում էր նրանց որդիներին: Թուրք ոչ բոլոր մոլլաներն էին գրբացություն անում:

Եթե կատարած գիրը նպատակին չէր ծառայում, հավատում էին, որ գրի օգտագործումը ժամանակին ու ճիշտ չի կատարվել, անհրաժեշտ է կրկնել:

Բոլոր նպատակներով կատարվող գրերը պարտադիր գրում էին կենդանիների կամ թռչունի արյունով: Նայած թե ինչ նպատակի էր ծառայելու, որոշվում էր գրի գույնը և կենդանու արյունը:

Գիր էին անում կարմիր հորթի, սև գառան, մոխրագույն ուլի, չալ և սև հավի, կարմիր աքլորի, մոխրագույն աղավնու և այլ կենդանիների արյունով:

Գիր անելու համար պահանջված կենդանին, պարտադիր մորթում էին գրբացի տանը: Մորթում էր գրբացը կամ նրա ընտանիքի անդամներից մեկը. միսը մնում էր գրբացին, տանել չէր թույլատրվում:

Պատահել են դեպքեր, որ չբեր հարսը գիր անելուց հետո տղա զավակ է ունեցել: Նրա սկեսրայրը, ամուսինը կամ հարազատներից մեկը վարձահատույց էր լինում գրբացին՝ ոսկիրելով նույնիսկ ծնած կով:

Եթե գիրը հիվանդի համար էր լինում, գրում էին երեք հատ ու եռանկյունաձև ծալում: Դրանցից մեկը կարում էին հիվանդի կամ չբեր հարսի հագուստի վրա, պահում բարձի տակ այնքան ժամանակ, մինչև հիվանդը առողջանար կամ չբեր հարսը երեխա ունենար: Նպատակին հասնելուց հետո գիրը գցում էին կրակը և այրում:

Երկրորդը գցում էին ջրով լի ամանի մեջ: Յոթ օր շարունակ, օրը երեք անգամ, գրի տերը խմում էր ջրից:

Երրորդ գիրը թաղում էին ուխտատեղիում, եկեղեցու պատի տակ, գյուղի աղբյուրի ակունքի մոտ կամ գցում հոսող ջրի մեջ, ըստ գրբացի տված ցուցմունքի:

Բոլոր գործողությունները կատարվում էին վաղ առավոտյան՝ անխոս ու անտես:

Եթե գիրը կատարված էր չար նպատակով, այն անխոս ու գաղտնի տանում, տվյալ ընտանիքի տան պատերի անտեսանելի ճեղքերում պահում էին:

Գիրը բացելն ու նայելը խստիվ արգելվում էր:

Եթե հարսը երեխա էր ունենում սրբավայր տանելով կամ գիր անելով, երեխայի մազերը յոթ տարի չէին կտրում: Յոթ տարին լրանալուց հետո, երեխային տանում էին տվայլ սրբավայրը, մատաղ էին անում ու մազերը կտրում:

Գուշակություն. Հատ ու կենտ տարեց պառավ կանայք կային, որ զբաղվում էին գուշակությամբ, թիզ էին չափում, բախտ գուշակում: Չար աչքից ու չար շնչից հիվանդացած մարդկանց բուժելու համար, աղոթք էին անում, ամանի մեջ լցրած ջրին նայելով գուշակություններ անում, մոմ թափում, հիվանդի վրա բամբակ էին փռում, այրում, հիվանդի բարձի տակ խաչ ու ավետարան դնում:

Նման հմայիլներ ու գուշակումներ կատարող կանայք երբեք հիվանդի ընտանիքից վարձատրություն չէին պահանջում ասելով, որ իրենց շնորհքը «վերգյու ա» (տրված է վերևից), երազում սրբերն են շնորհել և իրենք իրավունք չունեն հիվանդից վարձ պահանջել, քանի որ դա սրբերի տված հանձնարարություն է, և իրենք հանդիսանում են սրբերի ծառաներ:

Կատարած սպասարկման համար որպես վարձ, բավարարվում էին միայն հարգանքով, մի կտոր հացով, մի բաժակ թեյով:

Նրանց պատմելով. «գիշերները երազներում, սրբերին հանդիպում են թուրք կանանց կերպարանքով ու տարազով»: Այդ առումով էլ երազներում թուրք կին տեսնելն ու հետը զրուցելը համարում էին սրբություն ու հաջողություն:

Աղոթք. Ղարադաղի հայաբնակ գյուղերում այրի պառավ կանայք կային, որոնք լինելով շնորհաշատ և ուշիմ, կյանքի փորձից ելնելով, հանդես էին գալիս որպես հեքիմներ, տատմերներ, աղոթքով ու զանազան միջոցներով հիվանդներ բուժողներ, գուշակներ և այլն: Նրանք ծեռք էին բերում ավետարան, Նարեկ կամ կտակարան:

Նման աղոթքարար կանանց կողմից՝ որպես տատմեր, երբեք մահ կամ անհաջող ծննդի ընդունում չէր նկատվել:

Նրանք ծննդկանի գլխատակին թուր էին դնում, որ չարքերը չմոտենային ու գեղեցիկ երեխային իրենց տգեղ ու հիվանդոտ երեխաների հետ չփոխեին:

Հիվանդների գլխատակին ավետարան, Նարեկ, կամ կտակարան էին դնում, մի զույգ մոմ վառում ու ծունկ չոքած, անլսելի ձայնով աղոթքներ մրմնջում: Սուրբ գիրքը թողնում էին հիվանդի գլխատակին այնքան ժամանակ, մինչև նա առողջանար:

Եթե հիվանդը սուրբ գրքի և աղոթքի ուժով չէր առողջանում, հիվանդության պատճառը գտնելու համար դիմում էին այլ միջոցների:

Մոմ թափել. հիվանդությունների մեծ մասի պատճառը վերագրում էին վախին ու չարքերի խփելուն: Հավատում էին, որ դա լինում է մթության մեջ. գետի վրայով, գերազմանոցի ու ավերակների մոտով անցնելիս, ննջեցյալից վախենալուց և նման այլ բաներից: Դրանց պատճառը գտնում ու բացահայտում էին մոմ թափելով:

Մեղրամոմը ամանի մեջ հալում էին, թավան ջուր լցնում, կտավի մի կտորի կենտրոնը ծակում խոշոր ասեղով, հալած մոմը լցնում կտավի վրա, որը կաթիլներով ծորում էր ջրի մեջ: Մոմի առաջացրած պատկերներով, աղոթող կինը գուշակում էր, թե հիվանդը որտեղ և ինչից է հիվանդացել:

Եթե պատճառը վախն էր, և գուշակը ջրի վրա տեսնում էր սատանայի պատկեր, հիվանդի տան շեմին երեք մեխ էին խփում, և հիվանդը պետք է Ջատկի թաթախման գիշերը եկեղեցի տարած պողպատից պատրաստած մատանի դներ:

Եթե հիվանդը խոստովանում էր, որ վախեցել է սրբավայրի, ավերակի մոտով կամ գետի վրայով անցնելիս, նրան վաղ առավոտյան տանում էին ուխտատեղի, հետները տանելով մոմ ու մի կուլա ջուր: Մոմերը վառում էին, ջրով լվանում հիվանդի երեսն ու ձեռքերը, իսկ կուլան ջարդում: Հիվանդի հագուստից մի ծվեն կտրում, կապում էին մի թփի, մի քիչ հող վերցնում, լցնում նրա թիկունքից ու մատաղ խոստանում:

Ննջեցյալից վախեցածին վաղ առավոտյան նաև գերեզմանոց էին տանում, մի աղքատի կամ նոր մահացածի գերեզմանի վրա նրա երեսն ու ձեռքերը լվանում, թիկունքից հող լցնում, կուլան ջարդում տեղում ու տուն գնում:

Եթե հիվանդը խոստովանում էր, որ տանն է վախեցել միայնակ ժամանակ, մթության մեջ՝ մոմ էին վառում, փակցնում տան օջախին, դռան շեմին երկաթե մեխեր էին խփում, որպեսզի չարքերը մուտք չգործեին:

Ըստ Մինջևանի հայերի սովորության՝ հոգեկան անբուժելի ու երկարատև հիվանդություններով տառապողներին տանում էին Վինա գյուղից վերև, անտառում գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցին, մոմեր վառում, աղոթքներ անում, մատաղ կտրում, գերեզմանի հողից շաղ տալիս տապանաքարի վրա, որը հիվանդը լիզում էր:

Խանագահում, գիշերով գետն անցնելիս կամ աղբյուրի ակունքից ջուր խմելիս վախեցածին վաղ առավոտյան տանում էին «Վախեն փիր»

սրբավայրը, կուլայով տարած ջրով լվանում նրա ոտքերը, ծեռքերն ու երեսը, կուլան ջարդում, հիվանդի հագուստից մի ծվեն կտրում, կապում մասրենու ճյուղից, իբր թե հիվանդությունը հանձնում են սրբավայրին ու մատաղ խոստանում:

Հոգեկան հիվանդի բուժման համար հին գերեզմաններից ոսկոր էին հանում, մանր աղում, հացի կամ կերակրի մեջ գցում և կերցնում հիվանդին: Քիչ անց նրան հայտնում էին, որ «իրեն հանգուցյալի ոսկորով են կերակրել», որպեսզի նրան զզվանք պատճառեին ու նման միջոցով հիվանդությունը փարատեին:

Խոզի մազը կրակի վրա այրում էին, ծուխը պահում այն հիվանդների վրա, որոնք հիվանդացել էին չար աչքից ու չար շնչից:

Պատահում էր, որ երեխաները մահանում էին 1-2 տարեկանում: Նման դժբախտությունից խուսափելու նպատակով, խորհուրդ էին տալիս դիմել հետևյալ միջոցներին ու հմայիլներին. յոթ տնից հագուստների կտորներ էին հավաքում, փոքրիկ փունջ կապում ու կարում երեխայի ծախ ուսին: Նույն նպատակով, վարազի ճանկ, խոզի մազի փունջ կամ սպիտակ պուտերով սև ուլունք (աչքաուլունք), «խճճոր» էին կախում երեխայի ուսից:

ՄՈԳԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ

Եթե անասուն էր կորչում և այն չէին գտնում, դիմում էին գայլի բերանը փակողին:

Գայլի բերան փակող կինը գրպանի դանակ էր վերցնում առանձնանում տան մի անկյունում, բոլորից գաղտնի անլսելի ձայնով աղոթում ու դանակի բերանը դանդաղ փակում:

Փակ դանակը տալիս էր կորած անասունի տիրոջն ու հանձնարարում, որ գտնելուց հետո անմիջապես բացի այն:

Պատմում էին, որ գայլի բերանը փակելուց հետո տեսել են, որ գայլերը բերանները փակ, շների նման կորած անասունների կողքին նստած են:

Ջիու սանձ. ծի, ջորի, ավանակ, եզ, կով վաճառելիս «նուխտան» (վզի պարան) չէին հանում, այլ անասունի հետ տալիս էին գնորդին, որպեսզի նա հավատար, որ անասունը վաճառում են ի սրտե և բարիք են կամենում գնորդին:

Փոխտվություն. հաց, կաթնամթերք և այլ բաներ փոխ տալու ժամանակ մի փոքր կտրելը, ամանում պահելը նշան էր այն բանի, որ տվածի

բարաքյաթը մնար տանը: Ամբողջական տեսքով տալը նշանակում էր տան հաջողությունը վտանգել, տալ ուրիշին:

Դատարկ կուժ. որևէ գործ սկսելուց առաջ, եթե հանդիպում էին ջրի գնացող կնոջ՝ դատարկ կուժը ծախորդության նշան համարելով, ենթադրում էին անհաջողություն:

Եթե մեկը լիքը ամանով հարևանի կամ հարազատի տուն էր ուղարկում միրգ, կաթնամթերք, բանջարեղեն և այլն, այն դատարկ ետ չէին վերադարձնում, քանի որ դա կարող էր համարվել դատարկության, չքավորության նշան:

Օրորոցը դատարկ օրորելը արգելվում էր. հավատում էին, որ երեխան կհիվանդանա, փորացավ կունենա:

Կապույտ հագ. գարնանը երեխաները հաճախ էին հիվանդանում «կապույտ հագ» հիվանդությամբ: Այն այդպես էր կոչվում երեխաների հագից կապտելու ու շնչահեղձության հասնելու պատճառով:

Որպես բուժման միջոց (հմայիլ, թալասիմ) երեխաներին կամ նրանց հագուստը տանում էին սրբավայր, երեք անգամ պտտում էին շուրջը, սրբի գերեզմանաքարի տակ անցք կար, այնտեղով երեք անգամ անց էին կացնում:

Եթե նման մոտ սրբավայր չկար, գյուղի աղբանոցի հաստ շերտը փորում, անցք էին բացում և երեխաներին անցկացնում դրանով:

Արաքսի ջուրը. նկատի ունենալով, որ Արաքսի ջրերը առաջանում են հազարավոր աղբյուրներից ու հանքային ջրերից, ղարադաղցիները մեծ հավատ ունեին նրա բուժիչ հատկությունների վերաբերյալ:

Արաքսի վրայով անցած մարդկանց հագուստին անգամ բուժիչ հատկություններ էին վերագրում, գտնելով, որ ջրերի «հավան» (օդը) մնացած կլինի դրանց վրա: Նման մարդկանց հագուստով շփում էին հիվանդ երեխաների մարմինը:

Հաճախ Արաքսից կժերով ջուր էին բերում և «կապույտ հագ» ունեցող երեխաներին լողացնում:

Աջ ոտքը. Ղարադաղի հայերը հավատում էին, որ ծնվելիս մարդու հետ աշխարհ են գալիս նաև երկու հրեշտակներ՝ բարի և չար: Բարի հրեշտակը մարդու ողջ կյանքի ընթացքում, նստած նրա աջ ուսին, տանում է դեպի բարին ու հաջողությանը, իսկ չարը՝ նստած ձախ ուսին, տանում է չարության և ձախորդության:

Ելներով վերոհիշյալից, նոր գործ նախաձեռնելիս, ճամփա գնալիս, տուն մտնելիս ընդունված էր առաջինը աջ ոտքը դնել, առավելություն տալով աջ ուսին նստած հրեշտակին:

Պատահական չէ, որ նորահարսը փեսայի տուն մտնելիս շեմին առաջինը աջ ոտքն էր դնում:

Գույներ. Ղարադաղի հայերի մոտ ամեն գույն ուներ իր իմաստն ու նշանակությունը:

Սպիտակ. նշանակում էր ազատություն, երջանկություն, բարի նպատակների նշան: Աղջիկներն ու նորահարսերը սպիտակ հագուստ էին հագնում, սպիտակ գոգնոց կապում, մինչև միջին տարիքի բոլոր կանանց գլխաշորերը սպիտակ էին լինում:

Կարմիր. նշանավորում էր գեղեցկություն, հասունություն և բախտավորություն: Հասուն աղջիկները կարմիր հագուստ էին հագնում ուխտագնացության ժամանակ, Ջատկի տոնին և հարսանյաց հանդեսներին:

Կանաչ. հարգանքի, ծաղրակշռության ու հասունության նշան էր: Կանաչ գույնի հագուստ էին հագնում միջին տարիքի տղամարդիկ և կանայք:

Դեղին. համարվում էր ատելության, ծաղրանքի ու ծիծաղի գույն: Դեղին գույնի հագուստ չէին հագնում:

Կապույտ. համարվում էր մեծարման, հարգանքի և համեստության գույն: Կապույտ գույնի հագուստ էին հագնում այն տարեց տղամարդիկ ու պառավ կանայք, որոնք հասել էին խոր ու երջանիկ ծերության, սրտի ցավ, մորմոք ու երիտասարդի կորուստ չէին կրել:

Սև. ինչպես ամենուր, Ղարադաղի բոլոր ազգությունների մոտ ևս սև գույնը համարվում էր սգո ու տխրության նշան: Այն երիտասարդ կանայք, որոնք կորցրել էին ամուսիններին ու զավակներին, սև գլխաշոր էին կրում: Սև հագուստ էին կրում նաև դժբախտ աղքատ ալևորերն ու պառավ կանայք:

Հեքյալ (հմայիլ). պատրաստում էին նշանված աղջիկները: Ձևում էին սպիտակ կտորից՝ սրտածև երեք հատվածով: Ամեն մի հատվածը երեսպատում էին կարմիր, կապույտ, կանաչ փայլուն կտորներով ու շուրջը գույնզգույն թելերով ասեղնագործում, կենտրոնում մեկ աչքաուլունք ամրացնում:

Երեք սրտածև ծայրերին մետաքսի բոժոժից գույնզգույն փնջիկներ էին ամարացնում և երկու ծայրերին՝ վզկապի թելեր:

Հարսանիքի ժամանակ, որպես չար աչքը վանող հմայիլներ դրանք կապում էին հարսանքավորների ծիերի ու ջորիների վզին:

Գետնի պաշտամունք. Ղարադաղի հայերի խոսվածքում հողին ասում էին «վըղ», գետնին՝ «տափ»:

Նրանք քաջ գիտեին, որ մարդը, կենդանիներն ու բույսերը ծնվում ու ապրում են հողի տված բարիքներով և նորից հող դառնում:

Այս առումով հողը համարում էին «մայր» և «սրբություն»:

Երդվելու ժամանակ մի բուռ հող էին վերցնում, շաղ տալիս գետնին ու ասում. «Էս վըղեն ոչ արժան դըռնըմ, թա իս էդ բեներն ագյարմ»:

Ոտքը խփելով գետնին, ասում էին. «Էս տափեն քոռ եշըմ, թա իմ խոսկմս սոտ բեն կա», կամ. «Էս տափեն տըփտփալիս մնամ, թա իմ ասած խոսկմը սոտ բեն կա»:

Տաք ջուր. ղարադաղցիները այն գաղափարին էին, որ երկրի վրա մարդու ի հայտ գալու հետ ծնվել է նաև սատանան:

Աստծո կողմից անիծվելով սատանաները մարդու աչքից աներևութացել, ապրում են գետնի տակ և գիշերները դուրս գալով, վնասներ պատճառում:

Եռացող ջուրը գետնին չէին թափում, ենթադրելով, որ այն ներծծվելով հողում, կվառի սատանաների երեխաների գլուխները, նրանք կչարանան ու վանս կպատճառեն տվյալ ընտանիքին:

Սրբավայրի հողը. սովորություն կար ուխտ գնալիս ուխտատեղի հողից մի բուռ լցնել մի փոքրիկ տոպրակի մեջ ու տան սյունից կախել: Հետագայում շան, կատվի ու մկան կողմից պղծած ամանները այդ հողով լուծված ջրով երեք անգամ լվանում ու համարում էին մաքրված:

Հոգեկան անբուժելի հիվանդները ուխտատեղի հողը վերցնում էին ափի մեջ և լիզում:

Թուրքերը սովորություն ունեին ուխտատեղի ծառերին խփել գրաստների պայտերի կտորներ, գամեր և մի բուռ հող տանել, հիվանդի վրա լցնել նրա թիկունքից:

ԺԱՅՌԵՐԻ ԵՎ ՔԱՐԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Լեռնագագաթներ. Ղարադաղի հայերը սուրբ էին համարում գավառի տարածքում գտնվող բոլոր բարձր լեռնագագաթները, որոնք դարձել էին ուխտավայրեր:

Նրանք հավատում էին, որ սրբերի հոգիները անմահ են ու հավերժա-

կան, կարող են աստծո մոտից օրերով բացակայել, երկրի վրա շրջագայել, լինել իրենց անվան ուխտատեղիներում, ունկնդրել սրբավայրը ուխտի եկած մարդկանց և համաձայն նրանց արժանիքների՝ օգնություն և փրկություն պարգևել:

Հավատում էին, որ «եթե մարդը հավատ ունի դեպի աստված և նրա սրբերին և ոչ մի հանցանք, մեղք, անխղճություն ու գողություն չի կատարել կյանքում, արդար է այնպես, ինչպես աստծո սրբեր են և կարող է տեսնել սրբերին»:

Եղունց Նիկոլը, Թամամը, Ղարիբանց Ասատուրը և ուրիշները պատմում էին, որ Գիրմնավուն գյուղի քահանա տեր Սահակը երբեմն մի քանի օրով անհետանում էր գյուղից:

Երբ վերադառնում էր, հարցնում էին.

– Տեր Սահակ, ու՞ր էիր գնացել:

Տեր Սահակը պատասխանում էր.

– Գնացել էի Սուրբ Հովհաննես՝ ժողովի:

– Ավերակ եկեղեցում ի՞նչ ժողով, - զարմացած հարցնում էին համագյուղացիները:

– Այնտեղ հավաքվում են բոլոր սրբերը,- համոզված պատասխանում էր տեր Սահակը:

– Ապա գնալիս ինչո՞ւ հաց, ուտելիք չես տանում, 2-3 օր սոված ո՞նց ես ապրում:

– Այնտեղ մեզ հաց, ուտելիք և ջուր են տալիս,- պատասխանում էր տեր Սահակը:

ԲՈՒԺԻՉ ՔԱՐԵՐ ԵՎ ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

Սաթ (պրս.՝ քահրոբահ). կազմված «քահ» (խոտ, ծղոտ) և «րոբահ» (վերցնող, ծգող) բառերից:

Չքեր կանանց խորհուրդ էր տրվում, որպես հմայիլ կրել սև սաթի ուլունքներից վզնոց:

Կապուտ հոլունք (կապույտ ուլունք). աչքացավ ունեցողներին խորհուրդ էր տրվում կրել կապույտ գույնի ուլունքների վզնոց:

Ըշկըհոլունք. սև, փայլուն և սպիտակ պուտերով աչքաուլունքները կլոր էին: Դրանք կարում էին երեխաների հագուստի վրա, ուսին և կրծկալի կենտրոնում: Կախում էին օրորոցի լծակից՝ որպես երեխաներին չար աչքից ու չար շնչից հեռու պահող զորավոր հմայիլներ:

Խմճոր. երկար հետաքրքրվելուց հետո էլ չկարողացա կողմնորոշվել,

թե ինչից է պատրաստված «խճճորը»: Այն որպես հմայիլ տեղ էր գտնում ուլունքների շարաններում. դրանք կապվում էին երեխաների ուսերին, կախվում օրորոցների լծակներից:

Խճճորը բութ մատի կեսի չափ էր: Այն սպիտակ գույնի, փայլուն, մեջտեղը փոսիկով, ներսի կողմից մանր ատամներով տրեխի ծև ուներ, նման էր խեցգետնի ծնոտի:

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Թումբ, խութ. ղարադաղցիները լեռնային առանձին բարծունքներին ու բլուրներին անվանում էին թումբ կամ խութ: Նման բլուրները համարում էին սուրբ:

Դրանցից շատերի վրա մենավոր կաղնի կամ բռնչենի ծառեր էին աճում:

Ծխիլհատ. կանաչ նեղ տերևներով ու սպիտակ ծաղիկներով գեղեցիկ բազմամյա բույս է, առավելապես աճում է գերեզմանոցների մոտակայքում և սարերում:

Ղարադաղի բոլոր ազգությունները ծխիլհատը օգտագործում էին որպես հմայիլ ու բուժիչ բույս:

Չար աչքից կամ չար շնչից հիվանդանացած մարդուն բուժելու համար դիմում էին հետևյալ միջոցին. յոթ հարևանների դռներից, գաղտնի հագուստների ծվենները էին հավաքում, մի հին ամանի մեջ կրակ անում, կրակի վրա դնում ծխիլհատի չոր ու մանրած ցողուններն ու հագուստի ծվենները ու հիվանդին կանգնեցնում մխացող կրակի վրա:

Ամեն ընտանիք ծխիլհատի ցողուններից փունջ էր կապում և կախում տանն ու գոմի դռան վերևում՝ որպես հմայիլ և տան ունեցվածքի նկատմամբ չար աչքը վանող միջոց: Խունկ չլինելու դեպքում, հանգուցյալի գերեզմանին ծխիլհատ էին այրում:

Բուռուշնի (բռնչենի). երկարակյաց պտղատու ծառատեսակ է:

Բռնչենիները աճում են գետակների ափերին, ձորակների եզրերին, անջրդի դաշտերում, քարքարուտներում, ժայռերի վրա և այլուր:

Ղարադաղում ապրող բոլոր ազգություններն այդ ծառը սուրբ էին համարում: Թուրքերն անվանում էին «դաղդաղան աղաչի»: Բռնչենի կտրելը համարվում էր մարդասպանությանը հավասար հանցագործություն:

Ղարադաղում շատ հազվադեպ եկեղեցի և ուխտավայր կլինի, որի տարածքում մի քանի, երբեմն էլ մի քանի տասնյակ ծառեր չլինեն:

Մեր կարծիքով, կլիմայական տարբեր պայմաններում աճելու պատ-

ծառով, բռնչենին սնահավատ մարդկանց կողմից ճանաչվել է որպես սուրբ ծառ:

Բռնչենին ունի սպիտակ և բաց դեղնավուն ծաղիկներ: Ծաղկաթափումից հետո երևում են մուգ կանաչ ու անփայլ մանր պտուղները, որոնք հասունանալով ստանում են վառ դեղին գույն:

Սիսեռի հատիկների մեծության քաղցրահամ պտուղները հասունանում են աշնանը. ունեն մեկական ամուր կորիզ: Կանայք հատիկները լցնում էին սանդի մեջ, ծեծում, մանրացնում և ուտում:

Բռնչենուց քույլատրվում էր ճյուղեր կտրել միայն տարին մեկ անգամ, Մեծ պասի վերջին ուրբաթ օրը (Ջատկի նախօրեն) հմայիլներ պատրաստելու համար:

Այդ օրը վաղ առավոտյան բռնչենու ճյուղերից տանում էին ցորենի արտերում, այգիներում և մեղվանոցների մուտքի մոտ տնկում որպես չար աչքը վանող հմայիլ:

Բռնչենու մատնաչափ փայտիկների վրա գեղեցիկ քանդակներ ու նախշեր էին անում, կարում երեխաների հագուստներին, կախում օրորոցի լծակից, կախում ծիերի, ջորիների, եզների, կովերի վզից որպես չար աչքը վանող հմայիլներ:

Խունձուր ծաղեգ (երեքնուկ). այս վառ կարմիր խնձորանման ծաղիկներով խոտաբույսը շատ էր տարածված Ղարադաղում:

Պատանիներն ու աղջիկներն հավատում էին, «որ եթե մեկն ու մեկը կարողանա գտնել «խունձուր ծաղեգու» այնպիսի մի թերթիկ, որի վրա գտնվի երեքից ավելի տերև և պահի իր մոտ, շրջապատի մարդկանց համար կդառնա անտեսանելի»:

Հավատում էին, որ դրա շնորհիվ առանց դժվարությունների ու արգելքների կարող են ամուսնանալ սրտանց սիրածի հետ:

Սուրբ ծառեր. Թավրիզ քաղաքը փայտածխով ապահովելու համար դեռևս 19-րդ դարի վերջերին Ղարադաղում գրեթե վերացան կաղնու, բոխու, հացենու, եղևնու և այլ ծառատեսակների անտառները:

Շնորհիվ տարածքի խոնավ կլիմայի 5-6 տարվա ընթացքում դրանք նորից վերականգնվում էին:

Հանգիստ առնելու, զովության, գեղեցկության թե հիշատակի համար լեռների ու բլուրների վրա հատ ու կենտ կաղնի ծառեր էին մնացել:

Դարեր ապրած կաղնիները համարվում էին սուրբ ծառեր և նրանց տակ քարերով փոքրիկ ծածկեր էին պատրաստել, դրել մի քանի ծիթաղրագներ ու շատ մարդիկ, իրենց ցավերը դարմանելու, հոգսերից փրկվե-

լու համար այնտեղ մոմ էին վառում, աղոթում, փրկություն ու օգնություն խնդրում:

Մախե (եղևնի). ղարադաղցիները համարում էին սուրբ ծառ:

Չինարի. ընկուզենու նման հսկա ծառեր էին, որոնք համարվում էին սուրբ:

Ղարադաղում, ճանապարհներին մոտ քիչ աղբյուներ կգտնվեին, որոնց կողքին հաստաբուն չինարիներ չլինեին:

Ընկուզենի. Ղարադաղը հարուստ է նաև ընկուզենիներով:

Մեր կատարած ուսումնասիրությունների ժամանակ, ընկուզենիները սուրբ ծառ համարելու երկու դեպք արձանագրեցինք:

Մեկը գտնվում էր Խանագահ գյուղից 1կմ արևմուտք, ճանապարհի եզրին: Ընկուզենու զուգահեռ տարածված հսկա ծյուղերի վրա, որոնցից ամեն մեկն ուներ սովորական ծառի հաստություն, առաջացած փոսիկներում աճել էին բռնչենի փոքրիկ ծառեր:

Հաջորդը գտնվում էր Դիզմար գավառակի թրքաբնակ Մուլք գյուղի աղբյուրի մոտ: Սուրբ ծառի վրա ուխտավոր թուրքերը գրաստների ու եզների մի քանի փութ պայտ էին գամել:

Լինում էին զանազան տեսակի պտղատու ծառեր, որոնք հիանալի ծաղկում էին, բայց բերք չէին տալիս:

Սնահավատ գյուղացիները Մեծ պասի վերջին շաբաթվա չորեքշաբթի օրվա վաղ առավոտյան, լուռ ու մունջ մոտենում էին ծառին, կացնով երեք անգամ թեթև հարվածում ու երեք անգամ ասում. «Տըս, պտողս տլակա՝ տոր, թա չէ կկտրմ»:

Ղարադաղում բնակվող բոլոր ազգությունները մեղք էին համարում սրբավայրերի տարածքում գտնվող ծառերի հատումը:

Պատմում էին բազմաթիվ դեպքերի մասին, երբ մարդիկ ուխտատեղիներից շինափայտ ու ցախ են տարել, բայց անակնկալ կորուստներ կրելով՝ դրանք վերադարձրել են նույն տեղը:

ՋՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ղարադաղի բոլոր ազգությունները հավատում էին, որ ամեն աղբյուր ու գետ ունեն իրենց սուրբ ոգին:

Ամեն աղբյուրի սուրբ իր ջուրը հսկում է վաղ առավոտից մինչև արևամուտ:

Աղբյուրի տեր սրբին կարելի է տեսնել ամեն առավոտ, լուսաբացից

առաջ աղբյուրի մոտ երեսը լվանալիս ու ջուր խմելիս:

Աղբյուրների սրբերին կարող են տեսնել միայն այն անձինք, որոնք սրբերի նման արդար են ու անմեղ:

Ըստ Ղարադաղի հայերի հավատալիքների՝ աղբյուրների սրբերը կարող էին երևալ ծերունիների, նորահարսերի, գեղեցիկ օձերի և այլ կերպարանքներով:

Հավատում էին, որ արևամուտից հետո, երբ սրբերը քնած են լինում, աղբյուրների ջրերը հսկում են «քաշկերը» (չար ոգիներ), որոնք մարդկանց նկատմամբ միշտ տրամադրված լինելով չարությամբ, հարվածում, խելագարության են հասցնում բոլոր նրանց, ովքեր համարձակվում են գիշերվա մթության մեջ խանգարել իրենց հանգիստը:

Գիշերները աղբյուրից կռացած ջուր խմելու ժամանակ, մեկը պետք է կանգներ նրա գլխավերևում և ձեռքերի շարժուներով հեռու քշեր չարքերին:

Ըստ սովորության՝ մահմեդականները գետի վրայով անցնելիս, աղբյուրից ջուր վերցնելիս և խմելիս, պարտավոր էին ասել. «Բիսմիլլահ, ալ Ռահման ալ Ռահիմ» աղոթքը, որպեսզի շեյթանը իրենցից հեռու մնար:

Խանագահի քմաջրի ակունքը

Ախպրին փիր. գտնվում էր Խանագահ գյուղի տարածքում:

Խանագահցի կանայք հավատում էին, որ իրենց գյուղի աղբյուրի սուրբ ոգին դեմքը կարմիր շղարշով ծածկած նորահարս է: Պատմում էին, որ վաղ առավոտյան, լույսը չբացված. կանայք մի քանի անգամ տեսել են նրան աղբյուրի ակունքի մոտ լվացվելիս: Աղբյուրի մոտ, բարձր ժայռի ձախ կողմում մի փոքրիկ անձավ կար: Պառավների կարծիքով նորահարսի ոգին բնակվում էր այնտեղ:

Հսկա ժայռին հենված ուռենին որպես ելարան էր ծա-

ռայում անձավ բարձրանալու համար: Կանայք ամեն կիրակնամուտի մոմ էին վառում անձավում, հանուն աղբյուրի ոգու: Անձավում դրված էին կավե փոքրիկ ծրագակալներ:

Մարդիկ այն հավատքն ունեին, որ աղբյուրների ու գետերի տեր սրբերն ու քաշկերը բնակվում են գետնի տակ, աղբյուրների ակունքներում, քարանձավներում, ծառերի փչակներում և այլուր:

Քմաջուր. Ղարադաղի հայերին դեռ շատ հնուց ծանոթ են եղել հանքային ջրերի բուժիչ հատկություններն ու նրանցով զանազան հիվանդություններ բուժելու եղանակները: Ղարադաղում քիչ գյուղեր կային, որոնց տարածքում հանքային ջրեր չլինեին: Շատ գյուղերում մի քանի այդպիսի աղբյուրներ կային:

Նրանք համոզված էին, որ այդ ջրերը բխում են աստծո հրամանով՝ մարդկանց բուժելու համար: Այդ պատճառով էլ հանքային ջրերը ժողովուրդը սրբություն էր համարել և դրանց մոտ հիմնել ուխտատեղիներ:

Ղարադաղի հայերը հավատում էին, որ ամեն հանքային ջրի աղբյուր ունի իր բարի ոգին:

Խանագահ գյուղի հանքային ջուրը գտնվում էր գյուղից մոտ 5կմ հարավ-արևելք, անտառապատ մի գեղեցիկ պուրակում, որտեղ կար մի քանի հաստաբուն ուռենի: Պուրակի վերևի մասում, ճանապարհի եզրի անշաղ քարից սառնորակ ու վճիտ մի աղբյուր էր բխում, որի ջուրը ցրվելով, թավշե կանաչ էր ստեղծում: Աղբյուրի ձախ կողմում, պուրակի եզրին գեղեցիկ ու փարթամ հոնի ծառի տակից դուրս էր գալիս հանքային ջուրը:

Խանագահի հանքային ջրից օգտվում էին նաև շրջակա շատ գյուղերի հայ, թուրք և քուրդ բնակիչներ: Տարվա բոլոր եղանակներին աղբյուրի մոտ կարելի էր տեսնել ուխտավորների: Հավատալիք կար, որ աղբյուրի սուրբ ոգին մի գեղեցիկ օձ է, օժտված ծիածանի բոլոր գույներով, գլխին ունի ոսկե մազեր ու երկու ոսկե եղջյուր:

Հիվանդների բուժման համար հանքային ջրերից օգտվում էին մի շատ հետաքրքիր եղանակով:

Որոշելու համար, թե տվյալ հիվանդին որ հանքային աղբյուրի ջուրը կօգնի, դիմում էին հետևյալ միջոցին. երեկոյան հավաքում էին տղամարդկանց գրպանի յոթ դանակ, ամեն մեկին մոտակա տարածքներում գտնվող հանքային ջրի մի աղբյուրի անուն էին տալիս ու լցնում ջրով լի մի ամանի մեջ: Հաջորդ առավոտ դանակները ջրից հանում էին և ստուգում, թե որն է ավելի շատ ժանգոտվել ու դրանով գուշակում, որ հիվանդին կբուժի տվյալ հանքային ջուրը:

Հիվանդի հարազատները կավե կուլա էին վերցնում, գնում բուժիչ աղբյուրի մոտ, հետները տանում էին հիվանդի հագուստի մի ծվեն, կապում աղբյուրի մոտ աճած մի թփի ճյուղից: Մի զույգ մոմ էին վառում, կպցնում աղբյուրի կողքի քարին. երբեմն ջրի մեջ գցում էին մետաղե դրամ:

Կուլան լցնում էին հանքային ջրով, մի քանի օր խմեցնում հիվանդին ու քսում ցավող տեղերին:

Հիվանդի առողջանալու դեպքում խոստանում էին մատաղ անել:

Անձրևաբերություն խաչի ուժով. միշտ չէ, որ ժամանակին անձրև տեղար, որպեսզի աշնանացանը սկսեին. լինում էին նաև երկարատև երաշտներ:

Մարդիկ հավատում էին, ուր Ղուլուդի և Վինա գյուղերի Սուրբ Նշան խաչերը ջրի մեջ իջեցնելով, անմիջապես հորդ անձրև կտեղար:

Քահանաները սնահավատ գյուղացիներին բացատրում էին, որ երաշտը առաջանում է աստծու զայրույթից:

Սուրբ Նշանը ջուրն իջեցնելուց առաջ եկեղեցում պատարագ ու ժամերգություն էր կատարվում, մարդիկ մոմեր էին վառում, աղոթում, մեղանչում աստծուց ու մատաղ անում: Խաչը ջրի մեջ թողնում էին այնքան ժամանակ, մինչև անձրև տեղար:

Անձրևաբերություն ծրագների միջոցով. երաշտի դեմ պայքարելու երկրորդ տարբերակը հետևյալն էր. տարեց կանայք երաշտի ժամանակ գնում էին աղբյուրի մոտ, նրա տեր սրբին պատկանող սրբավայրում դրված ծիթաճրագներից մեկը դնում աղբյուրի ակունքում, մի զույգ մոմ վառում և աստծուն խնդրում, որ բարկությունը անցնի, անձրևներ տեղան, խոստանալով մի աքլոր մատաղ անել:

Կավե ճրագը մնում էր աղբյուրի ակունքում մինչև անձրևների գալը:

Անձրևաբերություն ջուրը վարելով. անձրևաբերության ծեսերից ամենահետաքրքիրը ջուրը արորով վարելն էր:

Կանայք մի խոյ էին գնում ու հավաքվում գյուղի աղբյուրի մոտ: Իրենց հետ տանում էին մատաղացու խոյը, մեղրամոմեր, մի արոր, խոփ, երկու լուծ, ցորենի և գարու սերմացու և ջուր շաղ տալու համար զանազան ամաններ:

Մի պատանի մատաղացու խոյը մորթում էր: Երկու կին տղամարդու հագուստ էին հագնում, մեկը որպես «ռանչպար», մյուսը՝ «թոխրավ տվող» (հողը փխրեցնող): Չորս կին, կանացի հագուստներով, լծվում էին արորին, ցորեն ու գարի շաղ տալիս ջրի մեջ ու սկսում «վարել»:

Կանայք արորով վարում են չորացած գետի հունը

Տիրում էր ընդհանուր ծիծաղ, անցուդարձ անողների վրա ջուր էին շաղ տալիս, ուրախանում, կչկչում, ոտից գլուխ ջրվում:

Աղբյուրի մոտ մի կարպետ էին փռում: Կանայք, սրտի կամեցողությամբ, դրամ կամ ցորեն էին դնում կարպետի վրա: Հավաքած միջոցներով տալիս էին մատաղացու կենդանու գինը:

Երկարատև անձրևների դադարեցում. հաճախ տեղում էին երկարատև տեղատարափ անձրևներ. մառախլապատ եղանակը տևում էր 15-20 օր: Գյուղերի փողոցներով պղտոր ջրերի վտակներ էին հոսում, կտուրները կաթում էին, հնարավոր չէր լինում անասուններին արոտի տանել:

Նման տխուր ու մռայլ օրերին մի խումբ դեռահաս պատանիներ ու աղջիկներ, կիսամերկ ու բոբիկ դռնեդուռ ընկած, մի քանիսը փոքրիկ պարկեր շալակած, խմբով «Ճորա, ճորա» էին երգում, որ աստված խղճա մարդկանց, ամպերին ետ կանչի ու անձրևը դադարեցնի.

Ճորա, ճորա, ճար չօնմ,
Տոնս կթիս ա, տըղ չօնմ,
Խավեծ կարմ, եղ չօնմ,
Եղմ ուզիս հվաքմ,
Դիրմ ծառեն շվաքմ:
Ձեյրանե օսը քսմ,
Մարալե կործը քսմ:
Ճորան շլակմ, տանմ,
Ճովեն խոր տեղը գիծմ:
Թողբը որ տըսնի, վախի,
Սար, ծոր թողնի, փախի:
Արվը տըսնի ուլխանա,
Օրը բենվի, տքանա:
Ճորա, ճորա, ճար չօնմ,
Ճորա, ճորա, ճար չօնմ:

Գթասիրտ կանայք երգող երեխաներին, ըստ իրենց ցանկության՝ յուղ, ալյուր, ծու և նման բաներ էին տալիս:

Երեխաները գյուղի բոլոր տները ման գալուց հետո հավաքվում էին մեկի տանը, հավաքած մթերքը ուտում և ուրախանում:

Կրակի պաշտամունք. հնարավոր է, որ Ղարադաղի հայերը հնում եղել են կրակապաշտ: Նրանք ունեին այն համոզմունքը, որ երկիրը ծնվել է արևից, և կրակը արևն է տվել մարդկանց՝ տաքանալու, գիշերային խավարը փարատելու և այլնի համար:

Դրա վկայությունն է այն, որ ղարադաղցիք սրբություն էին համարում կրակը, թոնիրն ու օջախը:

Կրակի վրա թքելը, ջուր ցանելը, կոպտորեն մարելը համարվում էր սրբապղծություն:

Արեգակի և կրակի հետ կապված բազմաթիվ մաղթանքներ, անեծքներ ու երդումներ կան:

Բերենք մի քանի օրինակ.

«Իրիննակեն նման շուղշողուց տաս»:
«Իրիննակը միշտ տոնդ գյլխեն ինի»:
«Իրիննակեն նման օմբիրդ ինի»:
«Օջախդ միշտ վառ մնա»:
«Օջախտ շեն մնա»:
«Օջախեդ կրակը անպակաս ինի»:
«Օջախեդ ծոխը թող միշտ եր ինի»:
«Կրակդ միշտ վառ մնա»:
«Կրակեն նման միշտ լուս տաս»:
«Իրիննակեն քոռ եշմ, թա սոտմ ըսիս»:
«Իրիննակեն նիեր մար մտնմ, թա իս խաբարմ»:
«Կրակմը էրվմ, թա իս գիդալիսմ»:
«Կրակեն քոռ եշմ, թա իս լսածմ»:
«Թոռնմը էրվմ, թա իս գիտալիսմ»:
«Թոռնեն քոռ եշմ, թա իս ասածմ»:
«Իրիննակը տանդ երե խվարի»:
«Իրիննակեն քոռ յիշիս մնաս»:
«Իրիննակը տոնդ քանդի»:
«Իրիննակեն լուսեն կարոտ մնաս»:
«Կրակմը էրվս, խանձիլ դըռնաս»:
«Օջախդ քանդված մնա»:
«Օջախեդ ծոխը կտրված մնա»:

«Օջախեդ կրակը ընցրած մնա»:

«Կրակ ինգի, ջանդ էրվի, փուրդ երնի»:

«Ազիզ բալադ թուռնմը էրվի»:

Ղարադաղի հայերը երբ, գնում էին նշանադրության, առաջին խոսքը հետևյալն էր լինում. «Եկածըմ ձեր օջախեն նանե մի կրակ տանմ, մըր օջախը վառնք, հի՞նչս ըսիլիս»:

Սրբություն էր համարվում նաև թոնիրը: Դա է վկայում այն սովորությունը, որ «իրփիվերի» (որբևայրի) մարդկանց պսակը կատարում էին թոնրի վրա:

Կրակ ստանալը. հնուց ղարադաղցիներին ծանոթ է եղել «հաբութեն», «կիծաքարեն» և «չախմախեն» միջոցով կրակ ստանալը:

Ղարադաղի շատ տարածքներում կայծքար կար, իսկ չախմախ պատրաստում էին տեղացի դարբինները: Հաբեթը հավաքում էին հին ծառերի բներից ու կոճղերից: Այն փայտի մոխրաջրում եփում, չորացնում ու սալաքարի վրա ծեծում էին: Ստացվում էր մետաքսի բոժոժի նման փափուկ նյութ, որից հեշտությամբ կրակ էին ստանում:

Կրակը վառ պահելը. պարտադիր էր օջախի կրակը միշտ վառ պահել, որի համար ամեն ընտանիք ցախանոցում միշտ չոր փայտի կտորներ էր պահում:

Երեկոյան քնելուց առաջ մի կտոր փայտ անթեղում էին օջախում և պահում կրակը:

Կրակը միշտ վառ պահելու պարտականությունը կատարում էր ընտանիքի տարեց կինը:

Ինչ-որ պատճառով կրակը մարելու դեպքում այն բերում էին հարևաններից:

Ուրիշի օջախից կրակ վերցնելը արգելվում էր արևամուտից հետո:

Հույժ անհրաժեշտության դեպքում կրակ բերելու գնացած կինը պարտավոր էր գոգնոցը թողնել հարևանի տանը ու կրակը տաներ:

Հաջորդ առավոտ գոգնոցը վերցնում էին:

Երկուշաբթի օրը ուրիշին կրակ չէին տալիս:

Կրակը փայտով չէին ծեծում: Կրակը կասեր. «Հիբիյս մըռալ՝ ճաշդ իփաչմ»:

Կրակի արձակած ձայնից գուշակում էին, որ իրենց բամբասում են:

ՈԳԻՆԵՐ

Ղարադաղի բոլոր ազգությունները ոգիների մասին որոշակի գաղափար ու հասկացողություն չունեին:

Հայերը ոգի, չարք, սատանա կոչված երևույթներն անվանում էին «քաշկ» կամ սատանա, որոնք նույն իմաստն ունեին:

Ղարադաղի մյուս բոլոր ազգությունները սատանային անվանում էին «շեյթան»:

Հավատում էին, որ մարդու ծնված օրվանից գոյություն ունի նաև նրա աչքին անտեսանելի սատանան: Որ ու գիշեր, որտեղ էլ լինի մարդը, քաշկերը հետևում են նրան, հարմար առիթ գտնում, հարվածում, վախեցնում ու խելակորույս դարձնում:

Ղարադաղցիները հավատում էին սատանաների գոյությանը, համարում, որ կատարած չարությունների համար աստված անիծել է նրանց, որպեսզի երկրի վրա չերևան: Աստծո հրամանով նրանք չքվել, մտել են գետնի տակ. բնակվում են ավերակներում, անտառներում, մթին ձորերում, քարանձավներում և նման այլ վայրերում, որ աստված իրենց չտեսնի: Սատանաները գիշերները դուրս են գալիս, հետևում մարդկանց ու վախ, հիվանդություններ պատճառում:

Գիշերները նման վայրերում գտնվելիս, ինչպես նաև ջրի վրայով անցնելիս մարդիկ, որպեսզի սատանաների զոհ չդառնային, պարտավոր էին երեսները խաչակնքել և Հիսուս Քրիստոսի անունը տալ, քանի որ Քրիստոսին սատանաները հարգում են և նրա անունը լսելով մարդկանց չեն մոտենում:

Սնահավատ մարդիկ մեր օրերում էլ պնդում էին սատանաների գոյության մասին: Հաստատում էին, որ օրը ցերեկով տանը սատանա են տեսել, որը երևացել է ծանոթ կամ հարևան կնոջ կերպարանքով, խոսել է, զրուցել ու հանկարծ չքվել:

Շատերը պնդում էին, որ սատանաները երևում են թուրք կանանց տարազով:

Պատմում էին նաև, որ գիշերը միայնակ անտառով անցնելիս հանդիպել են սատանաների հարսանիքի: Մարդուն հրավիրել, տարել են իրենց բնակատեղը, հյուրասիրել ու ճանապարհել:

Ոմանք էլ պատմում էին, որ սատանա են բռնել, նրան ծաղրուծանակի ենթարկել, ուրախացել ու բաց թողել:

Իմ մանկության ընկեր Վարդան Հարությունյանը (Բացանունց Վարդան) երդվում էր որ ինքն ու իր կնոջ եղբայր Սուրենը, օրը ցերեկով անտա-

ռում հանդիպել են սատանաների հարսանիքի:

Ղարադաղի շատ հայաբնակ գյուղերում պատմում էին, որ շատ տարիներ առաջ սատանա են բռնել:

Պատմում էին, որ Մելիք-Աղաջանյանները ամեն գիշեր գոմում ծիու ոտնաձայներ են լսել, գնացել՝ տեսել են, որ ծին քրտինքի մեջ կորած է:

Մի երեկո ծիու թամբին ծյութ են քսում: Գիշերը սատանան հեծնում է ծիուն ու կպչում: Առավոտյան սատանայի շորերի վրա յոթ ասեղ են խրում ու բռնում:

Երբ սատանայի հագուստին պողպատե ասեղներ են խրում նա բոլորին տեսանելի է դառնում և քանի դեռ ասեղները վրան են փախչել չի կարող:

Մելիք-Աղանջանյանները սատանային պահել են տանը որպես «ղարավաշ» (աղախին): Տնային բոլոր աշխատանքները նա կատարել է բարեխոճորեն ու շատ մաքուր. միայն ամեն ինչ թարս է հասկացել, երբ կանչել են՝ հեռացել է և հակառակը: Պատմում էին նաև, որ սատանան նրանց ցորենը լցնում էր պարկերը, տանում շաղ տալիս ավազների մեջ, չորացնում, իսկ երեկոյան մի տեղ նստում ու ծայն տալիս. «Հատիկնես եկեք, հատիկնես եկեք» ու դրանք լցվում էին պարկերի մեջ:

Որոշ ժամանակ անց ասեղները հանել են սատանայի հագուստից ու ազատ արձակել:

Հետաքրքիրն այն է, որ նույն եղելությունը պատմում էին տարբեր գյուղերում. Նորաշենում սատանա են բռնել Բադի Պապունք, Սարդուում՝ Ավագ Քյոխվենք, Իրգութինում՝ Թունունք և այլն:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Շուն. համարում էին խելացի և գիտուն կենդանի: Շանը սոված պահելը մեղք էր համարվում, բայց շունը, եթե ամանից ուտում էր, այն համարվում էր պղծված:

Տարիքն առած և հիվանդ շանը սպանելը մեղք էին համարում: Տանում, թողնում էին հեռու անտառներում: Շան հաչոցը տիրոջ ծանր հիվանդանալու դեպքում տարբերվում էր. հավատում էին, որ նա տեսնում է հոգեառ հրեշտակին:

Վիրավորված շունը ինքն իրեն բուժում էր վերքերը լիզելով:

Շներ կային, որ օձերի թշնամի էին ու ոչնչացնում էին նրանց: Հաճախ էր պատահում, որ մենամարտում օձը շանը խայթում էր: Խայթված շունը

տուն չէր գնում, քանի դեռ թունավորումից չէր բուժվել: Շատերը նկատել էին, որ օձից խայթված շունը ինչ-որ խոտ է ուտում ու բուժվում:

Կատու. կատվին վերաբերվում էին շատ խնամքով, նկատի ունենալով, որ նա նպաստում է տան մաքրությանը:

Կատու սպանելը մեղք էր համարվում: Ծերացած կատուներին բաց էին թողնում հեռու անտառներում:

Կատվի ծագ ընտրելիս գերադասում էին էգերին, որոնք երբեք գողություն չէին անում:

Չի. համարվում էր խելացի և գիտուն կենդանի: Շատերն էին նկատել, որ ձին փնչոցով, ականջների շարժումով ու ոտքը գետնին խփելով ազդարարել է մոտեցող վտանգի մասին:

Սովորություն կար երտասարդ հանգուցյալի հուղարկավորության ժամանակ ձի տանել գերեզմանոց:

1914թ., Նորաշեն գյուղում Ղզարանց Արշակի թաղման ժամանակ նրա հրացանը, փամփշտակալը և թուրը դրել են ձիու վրա և տարել գերեզմանոց: Բոլորը տեսել էին, որ ձին մարդու նման արցունքներ է թափում:

Եզ. համարում էին հարազատ եղբայր, հաշվի առնելով, որ նա ուսի ուժով վարում է հողը, բերքը կալսում և իր քրտինքով հաց ստեղծում տիրոջ ընտանիքի համար:

Ծերացած եզին տան դռանը մորթելը մեղք էին համարում. կերակրում էին, գիրացնում ու վաճառում մսագործներին:

Կով. համարում էին ընտանիքի երկրորդ մայր, քանի որ նրա կաթով էին սնվում: Մեղք էին համարում նաև կով մորթելը. կերակրում, գիրացնում ու վաճառում էին մսագործներին:

Խոզ. որպես անմաքուր, շատակեր և անշահավետ կենդանի հնուց ի վեր Ղարադաղի հայերը չեն պահել: Քանի որ անտառներում վխտում էին վայրի խոզեր, նրանք անարգել, ցանկացած ժամանակ որսում էին:

Այծ. ընտանի կենդանիներից ամենաանհաշտ և անհանգիստն էին: Այդ առումով էլ այծերին անվանվում էին «քաշկի ցեղից արսա եկած» և սատանայինն պատկերացնում էին այծի կերպարանքով:

Բարեկենդանի օրերին մի խումբ երիտասարդներ մեկին խայտաբղետ, երկար հագուստ էին հագցնում, դեմքին այծի եղջյուրներով դիմակ դնում, դարձնում անճանաչելի և երեկոյան տուն առ տուն ման ածում, բալաբան նվագում, դհոլ խփում, պար ածում ու ժողովրդին ուրախացնում, իբր սատանա են բռնել:

Ոչխար. համարվում էր ամենաբարի, օգտակար ու ամենաշահավետ կենդանին:

Ըստ ավանդության՝ գյուղացու ունեցվածքի ու հաջողության «դովլաթը» գտնվում էր խոյի գլխում: Այդ իսկ պատճառով, խոյը մորթելիս գլուխը ուրիշի չէին տալիս, իրենց հարստությունն ու հաջողությունը ուրիշին չանցնելու համար:

Վըրծակ (աքաղաղ). ժողովուրդն այն համոզմունքն ուներ, որ աքաղաղը պետք է կանչի գիշերվա կեսից մինչև արևամուտ: Արևամուտից հետո աքլորի կանչը համարում էին բոթաբերություն, տիրոջը սպառնացող երկնային աղետ, մահ ու կորուստ:

Անժամանակ կանչող աքլորի վիզը դնում էին գոմի շեմի փայտին և կացնի հարվածով գլուխը կտրում: Միսը, որպես մատաղ, բաժանում էին յոթ հարևանների, մի քանի զույգ մոմ վառում ուխտատեղիում, խնդրում աստծուն չարիքը հեռու տանել:

Գյուլեն չյանգ (գայլի ճանկ). ղարադաղցիները հավատում էին, որ եթե մարդ գողություն անի և գայլի ճանկը կրակի մեջ այրեն, նա կուչ կգա, կդառնա կծիկ, մատնելով իր հանցանքը ու տանջվելով կմահանա:

Հավատում էին նաև, որ գայլի ճանկը այրելու վայրում յոթ տարի անձրև չի տեղա, դաշտերն ու անտառները կչորանան, ամենուրեք երաշտ, սով ու մահ կտարածվի:

Նշված ահ ու սարսափից տեղյակ ժողովուրդը երբեք առիթ չէր տալիս, որ գայլի ճանկը կրակում այրեն:

Արջ. եթե քրիստոնյան արջի միս ուտեր կամ այն որպես դեղամիջոց օգտագործեր, արջի մորթուց տրեխ կարեր ու հագներ, նրան մեկ տարի արգելվում էր եկեղեցի մտնել:

Ղարադաղի հայերն այն պատկերացումն ունեին, թե. «Արջը աստուծեն քիրափնա անիծված ա: Քյոհնա դովրումը արջը ինսան ա իլած, ինքն ալ՝ ջղացպան: Ջղացմը մհետ պարղաճ ա թխիս, քուշտեն ծու չի ինիս, որ նի քսի պրղաճըն իրսը՝ նախշուտցրի: Իրան շուրերեն իլած հուչիլնեն հվքիս ա, կուտուրտիլիս, նի քսիս պրղաճըն իրսը: Աստուծ եռնաց տսնալիս ա, մնալիս զարմացած: Աստուծ կզնվիս ա, քքիս ջղցպանեն իրեսեն, արջ չինիս, նի գիծիս ծմկնեն: Ըդուր հետե ա, որ մհետ արջը մարթ ա տսնալիս, քքիս ա՝ հռնելիս: Արջեն մըսն, որ ուտիս չն, ընդուր հետե, որ արջը ինսանու նանե ա բհամ եկած»:

Աղվես. համարում էին ամենագիտուն ու խորամանկ կենդանին:

Պատմում էին, որ սառցակալած գետերի և լճերի վրա, աղվեսի անցած տեղով ձիավորն էլ կարող է անցնել, ու սառույցը չի կոտրվի:

Վարազ. վարզի «թորը» (ժանիք) համարում էին չար աչքը վանող հմա-

յիլ: Այն ծակում էին ու կախում երեխաների ուսից: Չար աչքի ու չար շնչի դեմ հմայիլ էին համարում նաև վարազի կոշտ մազերը: Վարազ սպանելիս այդ մազերից հավաքում, պահում էին: Չար աչքից հիվանդացած մարդուն կանգնեցնում էին կրակի մոտ ու վարազի մազ այրում:

Լպրաստակ (նապաստակ). համարվում էր վախկոտ ու քնկոտ կենդանի: Քիչ քնող լացկան երեխաների գլխատակին՝ որպես քնաբեր հմայիլ նապաստակի պոչ էին դնում:

Կոզնը (ոզնի). անտառների այս համեստ բնակիչը, օձերի ու մկների ոխերիմ թշնամին, համարվում էր դեղամիջոց և հմայիլ: Հոդացավեր և անհասկանալի ու անբուժելի հիվանդություն ունեցող անձանց խորհուրդ էր տրվում ոզնու միս ուտել:

Ոզնու փշոտ մաշկը աղով մշակում էին, գամում գոմի դռան վերևում որպես հմայիլ, հավատալով, որ տվյալ ընտանիքի ունեցվածքին չար աչքով ու մտքով նայողի աչքերը կծակվեն:

Մըծ կոզնը (այլակերպ). խոշոր ոզնիներ էին, որոնց փշերը օգտագործում էին որպես գրչակոթ: Շատ հազվադեպ երևում էին ցածրադիր գոտու եղեգնուտներում:

Կորը (կրիա). տարածված էր միայն Արաքսի ափերին, եղեգնուտներում ու շամբուտներում: Կրիային չէին սպանում. տեղի ոչ մի ազգություն միսը չէր ուտում:

Ղարադաղի հայերը հավատում էին, որ նախքան մոր կաթն ուտելը, եթե նորածին երեխային կրիայի ծվով կերակրեն, երբեք աղիքային հիվանդություն չէր ունենա:

Ղոնեգ (աղավնի). նկատի ունենալով, որ բուն են դնում եկեղեցիներում ու ուխտատեղիներում, համարվում էր սուրբ թռչուն: Հավատում էին, որ աղավնի պահողին սրբերը վնաս կպատճառեն:

Քաշ (ագռավ). համարվում էր չար ու բոթաբեր: Տանիքի վրա կռկռալը նշանակում էր ընտանիքին սպառնացող մոտալուտ վտանգ: Նման դեպքերում որսորդները կրակում էին ագռավների վրա:

Ամռանը կռկռալը նշանակում էր մոտալուտ անձրև, իսկ ձմռանը՝ ձյան առատություն:

Քչեղակ (կաչաղակ). համարվում էր ուրախ լուր բերող թռչուն: Տան մոտ կչկչալը բարի էր համարվում՝ պանդխտի վերադարձ, ընտանիքին սպասվող հաջողություն և այլն:

Քաթաբ (բու). համարում էին չարագուշակ թռչուն, կռինչը՝ «բեղուր» (բոթաբեր):

Գյոռհնուկ (գորտ). ամռանը գորտերի աշխույժ կռկռոցից գուշակում էին մոտալուտ անձրև:

Վղակեր (օձ). համարվում էր գիտուն, իմաստուն և «քինցու» (ոխակալ) սողուն:

Ըստ ավանդության՝ օձը երեք ավանդ է թողել. «Նահլաթ» (անեծք) լինի ինձ, որ ես ծնվեցի, նահլաթը լինի ինձ տեսնող՝ չսպանողին և նահլաթ լինի ինձ սպանող՝ չթաղողին»:

Ղարադաղցիները տան օձերը համարում էին պաշտամունքի առարկա, սրբություն, ունեցվածքի պահապան ու դրանց չէին ոչնչացնում: Այդպես էին վերաբերվում նաև սրբավայրերի ու ուխտատեղիների օձերին՝ համարելով սրբերի պահապաններ: Հավատում էին, որ այդ օձերին սպանողը կենթարկվի մեծ դժբախտության՝ կորցնելով հարազատներին, ունեցվածքը և այլն:

Եթե ցանկանում էին օձը տնից հեռացնել, սոփին մի պնակ ջուր էր վերցնում, թքում ջրի մեջ, շաղ տալիս տան ներսի պատերի վրա, տան մուտքի առջևում կիսալուսնաձև մի գիծ քաշում ու լուռ ու մունջ կանգնում մի քիչ հեռվում: Քիչ անց օձը գալիս, կանգնում էր այդ գծի մոտ. սոփին վերցնում էր օձին, ձգում պարկի մեջ ու տանում:

Մարդկանց կամ անասուններին օձի խայթման դեպքում սոփին թքում էր ջրի մեջ, այդ ջրով վերքը մի քանի օր լվանալով՝ հիվանդին բուժում:

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Առասպելական կենդանիների մասին շատ էին խոսում ժամանցների ժամանակ հեքիաթներ պատմելիս: Ղարադաղցիները տարբեր պատկերացումներ ունեին հրեշների, կենդանիների ու թռչունների մասին:

Երեք, հինգ, յոթ գլխանի դևերին, ինչպես վիշապ օձին, պատկերացնում էին որպես չափազանց մեծ ու սարսափելի արարածներ:

«Ձմրուխտ ղուշը» պատկերացնում էին որպես հսկա, բարի, փրկարար թռչուն, «Հազարան բլբուլը»՝ գեղեցիկ, ուրախ երգող, որի ծայնից կյանք են առնում քարացած մարդիկ, չորացած ծառերն ու ծաղիկները, ցամաքած աղբյուրները:

«Քյալլագյոզ»՝ թուրքերեն նշանակում է գլխին աչք ունեցող: Պատմում էին, որ եղել են հեքիաթային անհաղթ ու կռվարար մարդիկ, որոնք ճակատի կենտրոնում ունեցել են միայն մեկ աչք:

ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Օվչի փիրում. ժամանցների ժամանակ հետաքրքիր լեգենդներ էին պատմում «Օվչի փիրումի» մասին: Օվչի թուրքերեն նշանակում է որսորդ, փիր՝ սուրբ, բառացիորեն՝ սուրբ որսորդ:

Հեքիաթասացները պնդում էին, որ Օվչի փիրումը ոչ թե առասպելական, այլև իրական մարդ է եղել:

Աստված Օվչի փիրումին շնորհք էր տվել տիրապետելու բոլոր կենդանիների լեզուներին, խոսելու նրանց հետ և, աստծո հանձնարարությամբ ղեկավարելու կենդանական աշխարհը:

Օվչի փիրումի մահից հետո աստված նրա հոգին թողել է երկրի վրա՝ հսկելու, ղեկավարելու և բուժելու կենդանիներին:

Պատմում էին, որ մի անգամ Օվչի փիրումը կնոջն ու երեխաներին նստեցնում է ծիու վրա, ինքն էլ ծիու պոչը բռնում, գնում հարևան գյուղ: Ճանապարհին ծիու ետևից գնացող քուռակը կանգնում է ու խրխնջում: Մայր ձին անգ է առնում ու ինքն էլ երկար խրխնջում:

Ձիու խրխնջոցի վրա Օվչի փիրումը երկար ծիծաղում է.

– Ինչո՞ւ ծիծաղեցիր,- հարցնում է կինը:

– Քուռակը կանգ առավ, ասաց. «Մայր իմ, հոգնել եմ, չեմ կարողանում գալ», իսկ մայրը պատասխանեց. «Բալես, որ դու դատարկ չես կարողանում գալ, հապա ես ի՞նչ անեմ, որ քեզ նման մեկը փորումս ա, երեք հոգի նստած են մեջքիս, մեկն էլ պոչս բռնած՝ էլի բեռ ա դարձել ինձ համար»:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Աշխարհի կողմերի մասին ղարադաղցի հայերի պատկերացումը հետևյալն էր. աղոթարան (արևելք), արևմտոց (արևմուտք):

Նրանց պատկերացմամբ երկինքը կազմված էր բամբակի նման փափուկ ու խիտ ամպերից, որի վրա ապրում է ամենակարող աստվածը իր սրբերի ու հրեշտակների հետ:

Նրանց պատկերացմամբ՝ արևը աղջիկ է, լուսինը՝ տղա:

Արև-աղջիկը վախենալով գիշերային խավարից, երկնքում շրջում է ցերեկը, իսկ լուսին տղան խավարից չի վախենում:

Արևի և լուսնի խավարումը բացատրում էին նրանով, որ երկնքում բնակվող սատանաները բռնում ու ծածկում են նրանց դեմքերը, որպեսզի երկիրը խավարեցնեն ու ահ ու սարսափ տարածեն:

Ի պատասխան դրա, երկրից մարդիկ աղմուկ աղաղակ էին հանում, եկեղեցիների զանգերը խփում, պղինձներ ծեծում, հրացաններ կրակում, որ սատանաները ահաբեկվեն, թողնեն արևն ու լուսինը և հեռանան:

Արևի և լուսնի խավարումներով գուշակում էին մեծ տերության անկում և պատերազմ:

Աստղեր և համաստեղություններ. Ղարադաղի հայերն ունեին այն պատկերացումը, որ ամեն մի աստղ պատկանում է մի մարդու. նրա ծնվելուց ծնվում է նաև նոր աստղ: Պայծառ աստղերը պատկանում են ունևոր ու բախտավոր, իսկ խավար ու թույլ աստղերը՝ աղքատ մարդկանց:

Ամեն մի աստղ վայր ընկնելիս, որևէ մարդ է մահանում:

Ղարադաղցիները մոլորակների մասին պատկերացում չունեին:

«Քյարվան ղռան» թուրքերեն նշանակում է քարավան կոտորող:

Կեսգիշերին երևացող այդ աստղի հետ է կապված հետևյալ ավանդազրույցը. «Մի անգամ քարավանը գիշերում է դրսում: Քնից արթնանում, տեսնում են պայծառ աստղերը, ենթադրում, որ լուսաստղն է, ճանապարհը շարունակում են, բայց ամպրոպ, փոթորիկ ու հեղեղ է առաջանում, քարավանի ամբողջ կազմը կոտորվում է»:

«Բեզուկ կամ չուրունց» էին անվանում յոթ աստղից կազմված համաստեղությունը, որը երկնքում երևում է կեսգիշերից առաջ: Այն նմանեցնում էին աստծո մարդկանց հետ, որոնք եզները լծած ցանք են անում:

«Դարման գյողցողեն հղեն» (հարդագողի ճանապարհ). «Մի տարի երկնքում ապրող սատանաների անասունների կերը, դարմանը վերջանում է: Սատանաները գնում են աստծո մարագից դարման գողանում: Աստծո սրբերը տեղեկանում են և սկսում հետապնդել գող սատանաներին: Նրանք, շաղ տալով գողացած դարմանը, փախչում են, որի հետքը մնացել է մինչ օրս»:

Երգինք (երկինք). պատմում էին հետևյալ ավանդազրույցը. «Շատ ու շատ տարիներ առաջ երկինքը շատ ցածր ու մոտիկ է եղել երկրին: Եղել են աստվածախոս մարդիկ, որոնք բարձրացել են բարձր լեռնագագաթներն ու խոսել աստծո հետ: Հետզհետե մարդիկ չլսեցին աստծուն, չհետևեցին նրա խրատներին ու խորհուրդներին, սկսեցին կատարել ոչ դուրեկան արարքներ, աստված էլ բարկացավ՝ երկինքը հեռացրեց երկրից»:

Գյուռչաք (ամպրոպ). ամպրոպի մասին ղարադաղցիներն ունեին հետևյալ պատկերացումը. «Աստված երկնքից տեսնում է, որ դաշտերն ու անտառները ծարավել են, ջրի կարիք ունեն: Իր մոտ գտնվող պառավ կանանց կարգադրում է քարեր լցնել պարկերի մեջ, քարշ տալ դես ու դեն, աղմուկ, աղաղակ հանել, երկրի վրա ապրող մարդկանց ահազանգ տալ

մոտալուտ տեղատարափ անձրևի մասին, որ պատրաստվեն, զգուշանան ու վնաս չկրեն»:

Կեծակ (կայծակ). կայծակի մասին ունեին հետևյալ պատկերացումը. «Աստուծը չխմախեն ա տալիս», ենթադրելով, որ աստծո մոտ գտնվող ծերունիները իրենց չիբուխները վառելու համար «չխմախու կայծքար են գործածում»:

Կարկուտ. համարում էին աստծո բարկությունը՝ հանցանքներ կատարող մարդկանց վրա:

Հավատում էին, որ կարկուտը կարելի է մեղմացնել հետևյալ միջոցներով. առաջնեկ զավակը կարկուտը կծում, կեսն ուտում էր, մյուս կեսը՝ նետում:

Կարկուտը շտապ դադարեցնելու համար դուրս էին նետում խաչերկաթը, մաշաև, խոփը կամ տնային այլ երկաթե իրեր:

Տափեն դուռուգյոլ (երկրաշարժ). երկրաշարժի մասին ունեին հետևյալ պատկերացումը. «Աշխարհը մի ընդարձակ, տափակ տարածություն է, որը եղջյուրների վրա պահում են չորս սպիտակ եզներ. աշխարհի ծանրությունից հոգնելիս նրանցից մեկն ու մեկի ականջը, պոչը կամ ոտքը շարժվում է, որից էլ առաջանում է երկրաշարժ»:

Կնչկարմուր (ծիածան). ծիածանի նկատմամբ այն սնահավատությունն ունեին, որ եթե տղան ճախարակն ուսին անցնի տակով, աղջիկ կդառնա, իսկ եթե աղջիկն անցնի լուծն ուսին՝ տղա կդառնա:

ՄԵՏԱՂՆԵՐ

Մետաղների նկատմամբ եղած հավատալիքները հետևյալն էին.

Ոսկի. եթե երեխայի վրա դեղնություն էր իջնում, ոսկե մատանին դնում էին գոլ ջրի մեջ, երեխային լողացնում:

Պողպատ. այն ժողովրդի համար հզոր զենք էր «չարքերի, քաշկերի, սատանաների» դեմ պայքարելու համար: Նրանք մեծ հավատ ունեին, «որ պողպատե իրը սատանային դիպչելուց, նա դադարում է անտեսանելի լինելուց»:

Նոր ծննդաբերած կնոջ բարձի տակ սուր էին դնում, որ չարքերը երեխային չփոխեն:

Ունեցվածքը չար աչքից պահպանելու համար դռան վերևում պայտ էին խփում:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

1943թ. ընկերներիս՝ Թութուսանց Ալեքսանի, Դադունց Նորիկի և Բալունց Խաչատուրի հետ պարզեցինք, որ Խանագահի ամենատարեց բնակիչը Բալունց պառավն է, Շահում նանան: Գնացինք նրանից տեղեկություններ իմանալու գյուղի հին սովորությունների մասին: Շահում նանան կլիներ մոտ 90 տարեկան, սակայն բավականին աշխույժ էր ու առույգ:

Նա հարցրեց.

– Օղուլ, խեր ինի, հինչո՞ւ հետե եք եկած:

– Ուզիլիսնք գիդանք, քանե՞ տրեկան կինս:

– Օղուլ, մըր վախտը գիրող կա՞ր, որ իս գիդամ: Իս քու պապու, Ուսուփե նհետ հնգերնք լալ: Ջոխտավ, գյոռննք լալ գնիս պիհս, տավարնք լալ գնիս պիհս, խաղ ըրիս հանդում. քու պապու թարղը վե՞րն ա, իս ալ էն թարղեն կինմ:

Հովսեփ պապս մահացել է 1918թ., նրա ծննդյան թվականը չգիտեինք:

– Շատ պարի, Շահում նանա, քու մտեն մանցած կա,՞ թա խոխա վախտդ հուր հրսանեք ա մտետ:

– Իմ մըծ ախպեր Մանցու,- աշխույժ պատասխանեց Շահում նանան:

– Շատ պարի, կարող ա մտետ ինի, թա զուռնա ըծուղնեն հո՞ւվն լալ:

– Օղուլ, մտես ա, էդ դովրումը զուռնա չի լալ: Հրսանեքը «պզանավն» լալ ըրիլիս: Զուռնան էս եդե տըրեներն ա ադաթ ինգյալ: Իմ հարսանեքն ալ են պզանավ արալ: Աբունց Դովի պզան լալ ըծիս, Մանցուց Հարութ ալ կողքեն մի պզանավ տըզտըզցրիս լալ, յանի դամ ա պիհս: Թունոնց Սավադ ալ մի տխտակու նանե շինած թփորա դիրած լալ կուռնըտակեն, երկու փադավ թխկթխկցրիս լալ, յանի դոմբի ա թկիս: Շատ սորոն, օրախ հրսանեք ա դըռալ: Օմեն ալ կերալն, խմալ, ուրխացալ, պար եկալ:

Մոտավոր հաշվարկներով, նրա նկարագրած «պզանով» հարսանիքները տեղի են ունեցել 1860-70-ական թվականներին:

Պզան. պատրաստում էր ղարադաղցի ամեն մի երաժշտասեր պատանի: Վերցնում էին ճկույթի հաստությամբ չոր եղեգ, 15-20սմ երկարությամբ կտրում, ծայրից 3սմ երկարության վրա, սուր դանակով քերում, կոկում էին, դանակով կտրում, այդ կողմից լեզվակ հանում և յոթ անցք

անում: Մի անցք էլ բացում էին պզանի տակի կողմում, ծեռքի բութ մատի համար:

Պզանի մի տեսակ կար, որի լեզվակը հակառակ դիրքով էր հանվում, այն կոչվում էր «թուրքի պզան»:

Շվե (շվի). եղեգից պատրաստած հովվական սրինգ էր. հարսանիքներում չէին նվագում:

Շվին պատրաստում էին նվագողները, ազնիվ եղեգից (ղարղու): Չոր եղեգը 20-22սմ երկարությամբ կտրում էին, մի ծայրը թեք կտրում, վերևի մասում յոթ կլոր անցք բացում, տակի կողմից՝ մեկ: Թեք կտրվածքի հակառակ կողմից փոքրիկ ու թեք անցք էին բացում: Ուռենու չոր փայտից կոկիկ լեզվակ էին պատրաստում ու հագցնելով թեք կտրվածքի մեջ, նուրբ թիթեղից, շվու հաստությամբ մի օղ էին հագցնում լեզվակի կողմի վրա, որպես ծայնի կարգավորիչ:

Վարպետները, որքան էլ ջանք գործադրեին, կատարյալ շվի պատրաստել չէին կարողանում: Որակյալ, հնչեղ շվիներ ծեռք էին բերում Գյանջա, Բաքու, Թավրիզ քաղաքներից:

Ասատուր Սաֆարյանը, Արշակ, Հակոբ, Հարությունն Ղոլուխանյանները և երգչուհի Ամալյան

Բլուլ. նվագում էին թուրք հովիվները, որոնք այդ գործիքն անվանում էին «յան թութագ» (թեք շվի), իսկ հայերը՝ բլուլ:

Տեղացի վարպետները բլուլ պատրաստել չգիտեին, այն ծեռք էին բերում քաղաքներից: Բլուլը շվիի նման լեզվակ ու ծայնը կարգավորող թի-

թեղյա օղակ չուներ: Այն ողորկ էր ու երկար: Նվագողը շրթունքները հարմարեցնում էր անցքին ու նվագում:

Զուռնա. ըստ մեծահասակների՝ զուռնան մուտք է գործել մոտավորապես 19-րդ դարի 80-ական թվականներին: Հարսանիքներում ընդունված էր զուռնա նվագել երկու հոգով, մեկը եղանակն էր նվագում, մյուսը ձայնակցում էր:

Զուռնան միշտ դրսում էին նվագում:

Տեղացի վարպետները զուռնա պատրաստել չգիտեին, ձեռք էին բերում քաղաքներից:

Դոմբի (թմբուկ). Ղարադաղի խոսվածքում այն տարբեր անվանումներ ուներ.

դոմբի՝ դոմբի թակուղը հո՞ւվ ա.
դհոլ՝ դհոլչին հո՞ւվ ա.
դեփ՝ դեփ թակուղը հո՞ւվ ա.
դումբագ՝ դումբագչին հո՞ւվ ա.
նաղարա՝ նաղարաչին հո՞ւվ ա.
դավուլ՝ դավուլ թակուղը հո՞ւվ ա.
բարաբան՝ բարաբանչին հո՞ւվ ա:

Թվարկած անվանումները վերաբերում էին միևնույն գործիքին: Այն կլորացրած «ֆաներա» էր՝ երկու կողմերը ծածկած ուլի կաշվով, եզրերին պղնձե կամ երկաթե մի քանի կանթեր՝ ձգած նուրբ ու ամուր պարանով: Դոմբու կողքից կապած էր օղակածև կարճ ու նուրբ պարան:

«Դոմբի թակուղը» այն անց էր կացնում ձախ թևին, երկու փայտիկ վերցնում, մեկը նուրբ ու բարակ, օղակ արած հաստ թելից, հագցնում ձախ ձեռքի ճկույթին, մյուսը՝ չոմբախածև,[75] բութ մատի նման, վերցնում ձեռքը և հարվածելով նվագում: Դրսում թե տանը, դոմբուն ձեռքով խփելը ընդունված չէր:

Տեղացի վարպետները դոմբի պատրաստել չգիտեին: Ձեռք էին բերում քաղաքներից:

Դամ. հայկական հնադարյան երաժշտական գործիք է, Ղարադաղ մուտք է գործել 19-րդ դարում, զուռնայի հետ: Տեղի խոսվածքում գործիքն ուներ մի քանի անուն. դամ, նայ, դուդուգ, բալաբան:

Թուրքերն այն համարում էին գիշերային երաժշտական գործիք (գեջա բալաբան), նկատի ունենալով, որ միշտ երեկոյան էին նվագում:

---

[75] Չոմբախ-հովվական հաստ գլխով գավազան, մահակ (***Ստ. Մալխասյանց***, ՀԲԲ, հ. 4, էջ 26),(***խմբ.***):

Դամ նվագողին ձայնակցում էր «դամքաշը»: Դամը նվագում էին տներում, ծածկի տակ, դրսում նվագելը ընդունված չէր:

Գավառում դամ պատրաստող վարպետներ չկային, ծեռք էին բերում քաղաքներից: Որոշ նվագողներ կարողանում էին եղեգից պիպիչ (ծվան) պատրաստել:

Սազ. մեր կարծիքով, ամենաիին երաժշտական գործիքն է եղել Ղարադաղում: Ղարադաղում ծնվել և ստեղծագործել են շատ ու շատ հայ, թուրք, քուրդ աշուղներ: Հայտնի են եղել նորաշենցի կույր աշուղ Հակոբը, խանագահցի Արմենակը, ղուլուդեցի Խաչատուրը, Քեյվան գավառակում «դուշմիշ» Քյասպարը, քուրդ Ղահրամանը, Խեյրոլահը և ուրիշներ:

Նրանք բալաբանչիների հետ «դովրան» մտած, մեջլիսներում կատարում էին «Աշուղ Ղարիբ», «Լեյլի և Մեջնուն», «Ասլի Քյարամ», «Աշուղ Առաքել», «Շահ Իսմայիլ», «Քեշիշ օղլի» և այլ հանրահայտ ստեղծագործություններ՝ հիացմունք պատճառելով հանդիսականներին:

Ղարադաղում սազ պատրաստող վարպետներ չկային, այն ձեռք էին բերում քաղաքներից:

Քյամանչա. 1928թ. Բաքվից Խանագահ վերադարձավ Թովմաս Ոսկանյանի որդին՝ Արշակը, իր հետ բերելով տեղացիներին անծանոթ զարմանահրաշ քյամանչա:

Նորությունը տեսնելու և կախարդիչ ձայնը լսելու համար, տեղի սովորույթի համաձայն գրեթե ամեն երեկո նրանց տուն էին գնում ծերունիներ, պառավ կանայք, երիտասարդներ ու աղջիկներ:

Որդու բերած այդ նորությունից շատ դժգոհ էր հայրը, որը գանգատվելով ու դժգոհելով ասում էր.

– Ախըր՝ նիհի, նիհի, նիհի, թա մհետ հի՞նչ: Շինացուն տղան, քշանաց շուդավ գիհի վեչ՝ նի մտի գյումը, եզանը օսսը քորի, ջորուն մաշկը թիմարի, արտը գիհի, կալը վազ տա, բաղը ջրի, ալ հի՞նչ տղա, հո՞ւր ա պետք:

Հոր ամենօրյա դժգոհությունների պատճառով, Արշակը հեռացավ գյուղից ու հաստատվեց Թեհրանում:

Թառ. այդ գործիքի մասին ղարադաղցիները լսել էին, բայց առաջին անգամ այն հայտնվեց 1928թ.: Խանագահցի Թորոսենց Մարտիրոսը իր որդի Ալեքսանին ամուսնացրեց Թավրիզի բնակիչ, համագյուղացի Խաչունց Առաքելի աղջկա՝ Նվարդի հետ ու հարսին գյուղ բերեց:

Մի չտեսնված ու չլսված լուր տարածվեց գյուղում. «Թորոսաց Մադի, Թավրիզու նհետ մի հարսն ա բերած տղեն հետե, հարսը համ թառ ա ըծիս, համ ալ՝ երգ ըսիս»:

Տեղի սովորույթի համաձայն՝ առանց հրավերի ու թույլտվության ամեն երեկո երիտասարդները, կանայք ու պատանիները շտապում էին տեսնել հրաշք հարսի քառ նվագելն ու երգելը: Գեղեցկուհի Նվարդն ամենայն սիրով, ամեն երեկո, ուրախ ու ժպտադեմ, ազատ ու համարձակ նվագում էր քառն ու երգում:

Հարսի համբավը տարածվեց ողջ գավառում: Հրաշք հարսի երգն ու նվագը լսելու համար գալիս էին նաև հարևան գյուղերի թուրքերն ու քրդերը: Աշնանային մի օր գյուղ եկավ գյուղատեր Մեյթի խանը և պահանջեց, որ հրաշք հարսին տանեն իր օթախը՝ նվագելու ու երգելու համար:

Ինչպես ասում են «խտոռնակին լինում է նաև խտոռնակը». ինչպե՞ս թե հայ նորահարսը գնա խանի օթախում նվագի ու երգի, զայրացան գյուղի խորհրդի մարդիկ ու շտապ արտակարգ նիստ հրավիրեցին: Թորոսանց Մարտիրոսին հանձնարարեցին մեկ ժամվա ընթացքում տղային ու հարսին ուղարկել Թավրիզ: Եթե հարսը գնար խանի մոտ, նա, լույսը չբացված, պետք է ընտանիքով հեռանար գյուղից:

Մեկ ժամ անց՝ մութը գետինն առած, հրաշք հարսը տղամարդու շորեր հագած, նստած ջորու վրա, իսկ ամուսինը ջորու պոչը բռնած՝ ուղևորվեցին դեպի Թավրիզ:

1928թ. գարնանը ևս մի չլսված ու չտեսնված հրաշքի մասին էին խոսում: Գործի էության մասին ոչ մեկը ճիշտ գաղափար կազմել չէր կարողանում, առասպելներ ու հեքիաթներ էին հորինում, համարում սատանայի գործ. «Թումասի տղան՝ Արշակը, Բաքվե, քյամանչուն նետ ալ մի փադե կուճի նախշուտ ղութի ա բերած, երեն մի բերանը լեն ժեշտի տուրբա կա, սըվ-սըվ բողշաբնե օնի: Բողշաբնեն հըրթեն դիրիս ա ղութվեն երե, ջղացու քարու նման բիլբիլալիսն, հյեվար, ուռուսվար, թուրքեվար խաղն ըսիս, քառ, քյամանչա ըծիս, դոմբի թկիս, հրսանեք ըրիս»:

Լսողները մի պահ զարմացած լռում էին, ապա ասում.

– «Իտի բեն չի ինի: Ջըղացեն երե մի գետ ջուրն կպիս, նոր քարը ըսկսիս ա բիլբիլալը: Պա առանց ջրի բողշաբը հինչո՞ւրա բիլբիլալիս: Երկրորդն ալ, ասնք՝ հա, մի ամալավ, մի փանդավ՝ բողշաբը բիլբիլալիս ա, պա կուճի փադե ղոթին հունչո՞ւր ա խոսիս. թա ղորթ ինի, ուրեմը քաշկու բեն ա»:

1936-37թթ. Բաքվից վերադարձած շատ ղարադաղցիներ բերեցին «գրամաֆոն» ու«պատիֆոն», որոնք տարածվեցին գավառի շատ գյուղերում:

ԹԱՏՐՈՆԸ ՂԱՐԱԴԱՂՈՒՄ

1918-19թթ. գաղթից հետո, 1921թ. գարնանը Ղարադաղ վերադարձավ հայ գյուղացիության գրեթե կեսը:

Թավրիզի հայոց առաջնորդարանը ուսուցիչներ ուղարկեց դպրոցներում դասավանդելու համար: Ուսուցիչների բերած նորամուծություններից էր նաև թատրոնը: Նրանք կազմակերպում էին մանկական ներկայացումներ, բեմադրում «Չարի վերջը», «Չախչախ թագավորը», «Տերն ու ծառան», «Արշին մալ-ալան», «Ուշ լինի, նուշ լինի», «Հայ քեռին», ծիծաղ ու զվարճություն պատճառող այլ ստեղծագործություններ ու տեղական հումոր՝ «Քաչալ Խաչի ուռուս ա դըռած», «Աղան գենցալ ա նշնածատըս» և այլն:

Խանագահում այդ գործում մեծ ավանդ ունեին ուսուցիչներ պարոն Գուրգենը, Գաբրիելը, Հովհաննեսը, օրիորդ Դշխուհին, Ամազոնը, Մարոն և ուրիշներ:

Նորաշենում՝ պարոն Սայադ Ղուկասյանը, Օննիկ Եգանյանը, Ղուլուդիում՝ պարոն Վարդանը, տիկին Հեղինեն և շատ ուրիշներ:

Պատմության մեջ առաջին անգամ, 1932թ. Պարսից պետությունը հայերին բանակ զորակոչեց:

Առաջին անգամ Խանագահ գյուղից ծառայության մեկնեց 13 երիտասարդ, որոնցից երեքը բանակում մահացան: 1934թ. օգոստոսի 20-ին գյուղ վերադարձան տասը հոգի: Նրանք շատ նորություններ տարածեցին գյուղի երիտասարդության մեջ:

Նրանք գյուղում կառուցեցին սպորտային հրապարակ, որտեղ տեղադրեցին զուգափայտ, պտտաձող, ծանրաձող, թռիչքի հարմարանքներ և այլ անհրաժեշտ կահավորանք՝ մարզումների մեջ ընդգրկելով գյուղի երիտասարդությանը:

Դրանցից էր նաև թատրոնը:

Գյուղի ամենամեծ լքված տունը նորոգեցին, դարձրին գեղեցիկ ու հարմար բեմահարթակով թատերասրահ: Աշնանը և ձմռանը՝ ամիսը մեկ բեմադրություն էին կազմակերպում:

Ունևոր ընտանիքների համար տոմսն արժեր մեկ ղռան, միջակների համար՝ 10 շահի (կես ղռան), դրսից եկածների համար՝ մեկ ղռան:

1932թ. առաջին անգամ պարսկական բանակ զորակոչված խանգագահցի զինակոչիկները. ծախից աջ՝
առաջին շարքում Առաքել և Ավետ Հովհաննիսյաններ, Մարգար Հարությունյան, Վարդան Ղազարյան, Դարչո Հովսեփյան, Աշոտ և Մելիք Աղաջանյաններ
երկրորդ շարքում՝ Գուրգեն Մխիթարյան, Մինաս Մինասյան, Խաչատուր Հովսեփյան, Գրիգոր Խաչատրյան,
Վարդազար Արզումանյան, Արսեն Աբրահամյան

Բեմադրությունները դիտելու էին գալիս Նորաշեն, Ղուլուդի, Սարդու, Իրգութին, Ղշլաղ, Լումա և թրքաբնակ Մարդանաղա, Ուշտուբին, Քլալա գյուղերից:

Նախքան բեմադրությունը սկսելը ցուցադրում էին նաև ծիծաղաշարժ հումորներ:

Օրինակ. պատի տակ նստում էր ծեռնափայտին հենված մի ծերունի, տերողորմյայի խոշոր ուլունքները չխչխկացնելով, «խեր, շառ» էր գցում: Մոտով անցնում էր թոռնիկը, մի ամաո ծեռքին: Պապը հարցնում էր.

– Օղուլ, էտ հի՞նչ ա:

– Պապա, բաո ա:

– Թաո ա, տոր պապաո խմի՝ զվրթաոա:

Թոռնիկը գնում, ետ էր գալիս բոմբի հացի վրա յուղ դրած: Պապը հարցնում էր.

– Օղուլ, էտ հի՞նչ ա:

– Պապա, եղ ա:

– Օղուլ, եղ ա՝ պապուն տեղը նեղ ա, համա եղը պապուն ըպրիլու հետե՝ դեղ ա:

Թոռնիկը նորից էր վերադառնում՝ հացի վրա կարագ դրած: Պապը հարցնում էր.

– Օղուլ, էտ հի՞նչ ա:

– Կարեգը:

– Կարեգը տոր պապաո օտի, նաոուն եր օնի, նի մտնի մարեգը:

Կրկին վերադառնում էր թոռնիկը, հացի վրա մեղր դրած: Պապը հարցնում էր.

– Օղուլ, էտ հի՞նչ ա:

– Պապա, մըղըր ա:

– Մըղըրը տոր պապաո օտի, նաոուն եր օնի, նի մտնի տեղրը:

Նման հումորներով ծիծաղ ու հրճվանք էին պատճառում հանդիսականներին:

Հումորները կատարում էին հայերեն, իսկ բեմադրությունները՝ թուրքերեն, նկատի ունենալով, որ բոլոր հայերը թուրքերեն գիտեն:

Թատերական ներկայացումների կազմակերպիչը Արմենակ Քյարամի Արզումանյանն էր, որը երիտասարդ տարիներին ապրել էր Թավրիզում և ծանոթ էր այդ արվեստին:

Գլխավոր դերերում հանդես էին գալիս Գուրգեն Մխիթարյանը, Վաղարշակ Դադյանը, Սամվել Մկրտչյանը, Մինաս Մինասյանը և ուրիշներ:

Կանայք թատրոնում չէին խաղում. նրանց դերերը կատարում էին տղաները:

ԱՂԱՋԱՆՅԱՆ-ՀՈՎՍԵՓՅԱՆ ՏՈՀՄԸ

Հարությունի պապը՝ Առաքելը Ղարաբաղից երիտասարդ ժամանակ եկել է Ղարադաղի Վինա գյուղ, այնուհետև հաստատվել Խանագահում, որտեղ էլ ամուսնացել է տեղացի մի աղջկա հետ:

Թամամ, Հարություն և Գաբրիել Աղաջանյաններ

Առաքելն ունեցել է երեք տղա՝ Աղաջան, Ավագ և Օհան:

Ավագն ունեցել է երեք տղա, մեկ աղջիկ՝ Առաքել, Կարապետ, Մկրտիչ և Շողեր:

Կարապետը տեղափոխվել է Մեշեդ քաղաք, ունեցել է մեկ տղա՝ Վարդան ու մեկ աղջիկ՝ Ռոզա:

Մկրտիչն ունեցել է մեկ տղա՝ Հովհաննես, որը մահացել է 1913թ. Խանագահում:

Հովհաննեսն ունեցել է երեք տղա, մեկ աղջիկ՝ Պողոս, Խաչատուր, Արմենակ և Աստղիկ:

1920թ. Հովհաննեսի կինը՝ Մարիամը, չորս երեխաների հետ տեղափոխվեց Թավրիզ: 1938թ. նա երեք տղաների հետ հաստատվեց Թեհրանում: 1921թ. Աստղիկն ամուսնանում է մի արևմտահայի հետ:

Ըստ պատմողների՝ մեր ազգատոհմի մարդիկ եղել են բարձրահասակ, թիկնեղ ու գեղեցկադեմ: Այդպիսին է եղել նաև Հովհաննեսը, բոլորի կողմից սիրված մի անձնավորություն:

Առաքել պապի Օհան տղայի ծյուղավորումը

Օհանն ունեցել է երկու տղա և հինգ աղջիկ՝ Հաթամ, Համբարձում, Թառլան, Հերիքնազ, Եղսան, Շահանդուխտ և Հուրի:

Հաթամը տեղափոխվել է Գանձակ, իսկ Համբարձումը 1910թ. Արաքս գետում ջրահեղձ է եղել:

Առաքել պապի Աղաջան տղայի ծյուղավորումը

Աղաջանն ամուսնացել է համագյուղացի Ազիզի հետ: Նրանք ունեցել են երկու տղա, երկու աղջիկ՝ Հովսեփ, Բադալ, Սոնա և Ջանի: Հավանաբար Ազիզն ամուսնուց երկար է ապրել, քանի որ, ըստ տեղի սովորության՝ տոհմի ժառանգները հիշվում էին երկարակյացի անունով:

Բադալն ունեցել է երեք տղա և երկու աղջիկ՝ Մարտիրոս, Սահակ, Սարգիս, Մարիամ և Ոսկի:

Մարտիրոսի ծյուղավորումը

Մարտիրոսն ունեցել է երեք տղա և երկու աղջիկ՝ Գրիգոր, Կարապետ, Ասատուր, Իլիզա և Հասմիկ:

Գրիգորը ունեցել է երկու տղա և մեկ աղջիկ՝ Վազգեն, Գագիկ և Նվարդ:

Կարապետը ունեցել է հինգ ժառանգ:

Ասատուրն ունեցել է երկու ժառանգ՝ Անդրանիկ և Լաուրա:

Իլիզան ամուսնացավ Խանագահում, Արսենի հետ. ներգաղթելով Հայաստան, բնակություն հաստատեցին Երևանի Մալաթիա թաղամասում:

Հասմիկն ամուսնացավ Իրգութիի գյուղում, Հայաստան չներգաղթեցին:

Հովսեփ պապի ժառանգները

Հովսեփն ամուսնացել է Թաշլու գյուղացի Թամամի հետ. ունեցել են հինգ տղա և երեք աղջիկ՝ Հայրապետ, Խաչատուր, Հարություն, Ալեքսան, Գաբրիել, Ջավահիր, Մարիամ և Հռոմսիմ:

Հայրապետին ու Խաչատուրին նրանց քեռին, հայտնի շինարար ուստա Սարգիսը փոքր հասակից տանում է Շուշի ու հյուսնություն սովորեցնում:

Հայրապետը մեկ տղա ուներ՝ Արշակ:

Խաչատուրն ամուսնացել է համագյուղացի Թառլանի հետ. ունեցել են մեկ տղա ու մեկ աղջիկ՝ Արմենակ և Լուսյա:

Ալեքսանը 1915-35թթ. ապրել է Բաքվում, 1936թ. որպես պարսկահպատակ վերադառնում է Թավրիզ: Ունեցել է երկու տղա ու մեկ աղջիկ՝ Յուրիկ, Կառլեն և Ռայա:

Յուրիկն ապրում է Չարենցավանում, ունի երկու տղա: Կառլենն ապրում է Երևանում, ունի երկու աղջիկ: Ռայան ապրում է Վանաձորում, ունի երկու տղա:

Գաբրիելը ընտանիքով 1946թ. ներգաղթեց Հայաստան, հիմնավորվեց Էջմիածնում: Ունեցել է մեկ տղա ու երեք աղջիկ՝ Ալեք, Աիդա, Արծվիկ, Արփիկ:

Ջավահիրը եղել է Հովսեփի առաջնեկը, ամուսնացել է խանագահցի Ոսկանենց Հովհաննեսի հետ, ունեցել են մեկ որդի, Ալեքսան անունով: 1946թ. ներգաղթեց Հայաստան, տեղավորվեց Եղվարդում, իսկ հետագայում բնակություն հաստատեց Քաջարանում:

Մարիամն ամուսնացել է խանագահցի Շահումենց Հարությունի հետ, ունեցել են երեք տղա և երկու աղջիկ՝ Առաքել, Լևոն, Կարո, Աստղիկ և Քնար:

Հորս ծննդյան մասին գրավոր փաստաթուղթ չկար: Նրա պատմելով, Խանագահի դպրոցի կառուցման ժամանակ «խուրձ կրող» երեխա է եղել: Քանի որ երեխաներին այդ գործը հանձնարարում էին 8-10 տարեկանից, իսկ դպրոցը շահագործման է հանձնվել 1898թ., ըստ հաշվարկների՝ ծնվել է 1888թ.:

Խանագահում կար նաև մեկ ուրիշ Հարություն Աղաջանյան և, որպեսզի 1934թ. բնակչության հաշվառման ժամանակ շփոթություն չլիներ, հայրս ազգանունը փոխում է և հոր անունով գրվում Հովսեփյան:

Գրքի հեղինակ Հովհաննես Հովսեփյանի մտորումները մայր Արաքսի հետ, 1945թ., օգոստոս

Հարություն՝ հայրս

Հայրս ամուսնացել է 1916թ. Սարդու գյուղացի Ղարիբենց Պետրոսի աղջկա՝ Մինայի հետ: Ունեցել են հինգ տղա և չորս աղջիկ՝ Աղավել, Աղաբեկ, Հովհաննես, Ժորա, Սերյոժա, Աստղիկ (մահացել է մանուկ հասակում), Ժենիկ (մահացել է մանուկ հասակում), Ժենիկ, Աստղիկ: Երեխաներից հինգը մանուկ հասակում մահացել են կարմրուկ և ծաղիկ հիվանդություններից:

Հովհաննես Հովսեփյանը ամուսնացել է Հասմիկի հետ, ունի երկու որդի՝ Հաղթանակ և Հայրենիք (Մայիս) և երկու դուստր՝ Հայաստան և Հրազդան:

Հովհաննես և Հասմիկ Հովսեփյաններ

Հաղթանակ Հովսեփյանը ամուսնացել է Մարգարիտայի հետ, ունեն մեկ տղա՝ Հայկ և մեկ աղջիկ՝ Սուսաննա: Սուսաննան ունի երկու երեխա՝ Արթուր և Ռիմա: Հայկը ամուսնացել է Քրիստինեի հետ, ունեն մեկ դուստր՝ Հասմիկ:

Հովսեփյան ընտանիք
Նստած են ձախից՝ Աննա, Ալլա, Արթուր, Մարգարիտ և Քրիստինե
կանգնած են ձախից՝ Հրաչյա, Հայրենիք (Մայիս), Հաղթանակ և Հայկ

Հայրենիք (Մայիս) Հովսեփյանը ամուսնացել է Ալլայի հետ, ունեն մեկ տղա՝ Հրաչյա և մեկ դուստր՝ Աննա: Աննան ունի մեկ տղա՝ Արթուր:

Հրազդան Հովսեփյանը ամուսնացել է Երեմի հետ, ունեն երկու զավակ՝ Արմեն և Արտակ:

Հրազդան Հովսեփյանը Արտակի և Արմենի հետ

Վալերիև և Հայաստանը իրենց զավակներ
Վահեի, Լուսիների և Մետաքսյայի հետ

Եղբայրս՝ Ժորա Հովսեփյանը ծնվել է 1927թ. Բաքվում: Ամուսնացել է Սպահանի մոտակայքից ներգաղթած Վարդիշաղի հետ, ունեցել է երեք զավակ՝ Վոլոդյա, Հարություն և Անուշ: Բնակվում են Երևանում:

Վոլոդյան ամուսնացել է Գայանեի հետ, ունեն երկու զավակ՝ Վահե և Արման: Վահեն ունի մեկ զավակ՝ Արա: Արմանն ունի մեկ դուստր՝ Միլենա:

Սուսաննա Հովսեփյանը Ռիմայի և Արթուրի հետ

Հարությունն ամուսնացել է Աննայի հետ, ունեն մեկ որդի՝ Կարեն և երկու դուստր՝ Աստղիկ և Արևիկ:

Քույրս՝ Ժենիկը եղվարդում ամուսնացավ խանագահցի Գալուստ Աբգարի Դանիելյանի հետ, ունեցան երեք ժառանգ՝ Էդվարդ, Աղվան, Ալվարդ: Բնակվում են Երևանում:

Մորս տոհմը

Մայրս Սարդու գյուղացի Ղարիբենց Պետրոսի աղջիկն էր: Նրանց ազգանունը Առաքելյան է, բայց Ղարիբենց են կոչել այն պատճառով, որ հարուստ օջախ են ունեցել, տունը եղել է գյուղի ծայրամասում և շատ հյուրեր են հյուրընկալել: Որպես օտարականներին հյուրընկալող՝ անվանել են Ղարիբենց:

Գավառի թուրքերն ու քրդերը նրան ճանաչել են «Դալի Պետրոս» մականունով, քանի որ շատ համարձակ ու խիզախ մարդ է եղել, իսկ հայերը՝ «Ղասիդ Պետրոս»: Այդ անունը ստացել էր այն պատճառով, որ նա էլ պանդխտության էր գնում Թիֆլիս, բայց չէր աշխատում, այլ ամիսը մեկ

անգամ, այնտեղ աշխատող ղարադաղցիներից նամակ և դրամ էր տանում, տալիս նրանց հարազատներին ու վերադառնում:

Պետրոսն ամուսնացել էր համագյուղացի հայտնի որսորդ Բաղդասարի աղջկա՝ Եղսայի հետ: Նրանք ունեցել են մեկ տղա և երեք աղջիկ՝ Վարդան, Շուշան, Մինա, Մանիֆա:

Ես՝ Հովհաննես Հարությունի Հովսեփյանս, որ կազմեցի իմ ազգատոհմի այս համառոտ տոհմագրությունը, իմ անցած նախնիներիս անունից պատգամ եմ թողնում իմ եկող սերունդներին, որ ծանոթանան այս տոհմագրության հետ ու նմանապես բարձր, հստակ, անբասիր ու պատվարժան պահեն տոհմի սրբազան պատիվը:

Hovhannes H. Hovsepian's "ETHNOGRAPHY OF THE GHARADAGH ARMENIANS"

Hovhannes H. Hovsepian was born in September 1, 1924 in the village of Khanagah of the Gharadagh historical province in the northwestern Iran. In 1946 he left Gharadagh with his native community and settled in the Soviet Armenia.

Except the book of E. Frangian ("Atrpatakan", Tiflis 1905), no other study was known to the author of the "Ethnography of the Armenians of Gharadagh", who explains his dedication to collection of materials for his work in the following words: "It was painful for me to realize that nobody have written about my homeland, though it was no way less significant than the other Armenian provinces. I spent many days in Matenadaran, in the National Library, have been in Baku, Tbilisi and in many Armenian towns, where the scattered Armenian emigrants from Gharadagh had found a shelter, to collect new facts and to correct details. Now I hope that any reader will be satisfied with the results of this work. ... In 1970s almost no Armenian has remained in Gharadagh, so I decided to write their history and to introduce their centuries long culture, everyday life and occupations, their sacred places and beliefs, all details of which are now provided to the future students of Gharadagh".

The author represents Gharadagh as one of 33 counties of the Vaspourakan province, in the south of historical Armenia, extending from Arax river in the north to the lake Urmia in the south-west. One of the major passes through this dry mountainous area was named "Armenian pass" as early as in the 3-rd century B.C. by a Greek author Eratosthenes (c. 280-202 B.C.) and mentioned again by 14-th century Muslim historiographer Hamballah Ghazvini.

After the fall of the Arsacid dynasty in Iran and the division of Armenian Kingdom between the Sasanians and the Roman Empire in 387 AD, the mountains of the Armenian Parspatunik province became known in historical annals with a Persian name Siah-Kuh (Black Mountains). In later period the Turkish population of the area renamed it to Gharadagh, thus simply translating the former place name. As Siah-Kuh, so the Gharadagh embraced an area much larger than the Armenian historical Parspatunik, adding to it the districts of Armenian Pass proper (now: Ahar district), Katijk (now: Ouzoundoul) and Koshatagh (now: Ashkambar).

The borders of Gharadagh of modern times are defined by the author in physical geographical terms as a roughly quadrangle area, extending about 200 kms along the southern banks of the Arax river, from the Meghri valley in the west to the junction of Arax and Kura rivers in the east. The middle line of Gharadagh is about 180 kms "as raven flies" from east to west between the Seghen village of Keyvan county and the Aghaghan village of the Dizmar county. The extension through the middle line of the area southwards from Arax to Armenian mountains is about 60 kms. On the north-east Gharadagh borders the historical province of Paytakaran or the Mughan steppe (Aslanduz), separated from it by the hills, known to local inhabitants with the name "Shahtakhti" ("Royal Seat"). On the east the Gharadagh approaches Marand – the westernmost district of historical Vaspourakan.

Gharadagh may be divided to three vertical geographical and climatic zones: steppe, subalpian and alpine, the first embracing the immediate vicinities along the Arax river (Araxpar). The subalpine zone is predominantly covered with woodlands of oak and hornbeam trees. If compared with arid Araxpar plain, the nature of this part of Gharadagh is more gorgeous. The natural humidity of this belt allows cultivation of cereals without artificial irrigation. The higher alpine zone, although covered with black soils, is treeless, marked with frequent rocky landscapes and has extensive snowfalls in cold winter seasons.

Gharadagh is very rich with natural springs, forming the courses of mountain rivers, such as Seghen and Kalilbar in Keyvan district, Araghna and Gandzar in Hasanov, Kovni and Oushtoubin in Dizmar. Walnut, vine, plum, pear, apple, almond, cornelian and ordinary cherries, pomegranate, mulberry and other trees, some of which wild, grow in wet groves and irrigated valleys. The faunal world of Gharadagh also had been rich and diverse before extensive deforestation and unlimited hunting, which had obliterated some types of animals. Their names and descriptions had survived only in memories and sorrowful stories of the aged people of Gharadagh. Earlier the boars, wild goats and sheep, hares were main chased animals in the highlands and forests.

Gharadagh was inhabited by Armenians, Turks, Kurds, Tartars, Shamlu people and by one more people of Muslim faith, completely different in behavior, if compared with Turks.

Gharachi people were settled in two villages near the Arax river. The villages of Kurds were scattered along the same river from the Iranian Julfa to the junction of Arax and Kura rivers. Tartars occupied the arid zone of Arax river and the vast areas north and west from the Kura river, up to the Caspian shores. The Shamlu or Gyoravan people lived in the area rising over the Araxpar plain, but not reaching the middle belt, inside the Meshapara and Minjevan districts. The Armenians were settled in the

middle belt of Gharadagh. The Turks occupied the higher lands, extending from east to west direction.

The author had arrived to a conclusion, based on many years of his own study, that the Armenians had inhabited the entire Gharadagh for long centuries. He suggests as a proof of his statement the number of the survived Armenian cemeteries and other monuments, traced by him in at least 101 settlements. In dawn of the XVII century, as a result of the devastating policy of Shah Abbas, the former Armenian population of Gharadagh was brutally displaced. Those, who escaped the mass displacements, probably have returned later to the subalpine belt adjacent to the Arax river. Although the Turks, Kurds and Gyoravans had already populated many former Armenian villages, the Armenians settled the area again and inhabited the villages in the middle belt, though never constituted majority in Gharadagh in the upcoming times. The Turks and Kurds not only finally prevailed in number, but became a permanent threat for Armenian peasants.

The Armenian village of Khanagah is situated in Dizmar district, in the west of Gharadagh. The territory of this vast district is equal to the total area of Hasanov, Meshapara and Minjevan districts. The Khanagah village is placed on one of southern slopes of the Borzi Khut mountain east of Dizmar, over a naturally defensible and picturesque landscape. Seven Armenian and three Turkish then ruined villages had existed in adjacent area in the past, the lands of which were later possessed by peasants of Khanagah. According to a local story, the village was founded by seven families: Vardanank (Danielyans), Dadonk (Dadyans), Mtsakank (Mnatsakanyans), Abunk (Abrahamyans), Amunk (Melik-Aghajanyans and Melik-Azaryans). Its population in the XIX century was about 180-200 households, while the census of 1904 had registered 96 households with 576 members. The school of the village was built in 1898 with the charity of Mr. Mnatsakan from Tabriz. 100 families or 622 people were registered in Khanagah in 1940. This number further decreased to 50 families at 1946, when the entire village emigrated to the Soviet Armenia at one day (August 5).

One of the oldest villages of Gharadagh – Sardu was situated on the eastern foothills of the Piz mountain and had only 60 families in its most prosperous times. Gharibank, Mantsunk, Jhangirank, Badunk, Misrunk, Azirunk could be mentioned among the oldest families of the village, which was owned by Armenian meliks. The last of them was Melik Khachi (Khachatur).

The next village is Eergoutin on the abrupt southern footsteps of the Silyan mountain. The village was founded in 1860 by families from different places. The Tunonk family originates from Namni, Ohanjanenk were from Mari, Gyoukunk were from Mumudaru, Mejnumank, Karamank and Zargarank were from Mizkitin.

The Aghaghan village, probably founded in the mid XVIII century, was situated on abrupt western slopes of the same Silyan mountain. The village was the possession of Melik-Zakaryans. The founder families were Vardanank, Ashughank, Akopank, Lalayank, Gevayank and others.

The small village of Ghuludi is 6-7 kms north-west from Khanagah, in a mountainous terrain, amid an oak grove.

The village Houzh of the Hasanov district is situated on a rocky plain highland, surrounded by dense woods and deep ravines. A part of its former residents (26 families) had founded the village Norashen in the same district. Hayrapet, Baba, Abgar Dlukhanyans, Tovmas, Harutyun Grigoryans, Gabriel, Sahak, Harutyun Bakhtamyans, Zohrap, Akopjan Davtyans, the others from Khosrovenk, Baghdasarenk, Sahakenk families were heads of these households.

The village Luma, founded in 1880, is placed on the banks of the Houzh river. The village was abandoned in August 1946, when its population immigrated into the Soviet Armenia and settled partially in the rural Kapan district, but mostly in the Shahumyan district of Yerevan.

The famous village Ogha is 7-8 kms west from the Norashen, in a plain terrain on a mountain slope. Melik Ohanjan, Melik Hovsep and Baghdasar Beg were among those fearless and always armed villagers, the fame and deeds of which had secured Ogha from the plunder of Muslim Khans and Begs of the district. The village had survived this way before the emigration in 1919.

The Meshapara district, with its rich meadows and black soils, is the most mountainous part of Gharadagh. The village of Voghan was considered its center and had been extremely important in protection and survival of the other Armenian villages. It is situated on the southern side of the Piz mountain, surrounded by an oak forest. The renown Tumanyan brothers were natives of this village. They foresaw the survival of Armenian peasantry in Gharadagh in their own private possession of the Armenian villages and thus purchased 19 villages of Gharadagh from their former Muslim landowners. These villages paid only insignificant levies to them.

Girminavoun is the most beautiful village of the district, 6 kms south of Voghan, situated between the forests and cold springs. It was Armenian populated before the emigration of 1919, then abandoned to Turks.

The village of Vina was the center of Minjavan district, the most populated settlement in the area. As the aged people of the village tell, its former name was "Bina" and centuries earlier the village had been a country place of several wealthy Armenian families of Gharabagh.

The Gindimnan village is not far from Vina in south west direction, on woodlands, covering the mountain slope. Another village – Amradoul is 10 kms south of Vina. Its population immigrated into Soviet Armenia in 1946. The village Sevahogh is 12 kms south-east from Vina, situated on a

forested slope. This village was the only one to carry on a successful resistance against the Muslim Khans in 1886-1905, never asked for protection, never paid levies and remained honorable owners of their lands and property. An active role in organization of the self-defence had played the representatives of Melik-Mushkambaryan family, especially Agha Avetis, followed by Tanuter Arsen.

The last village to be mentioned in this district is Karagloukh – 5 kms west of Vina. It is known for extreme scarcity of water, as its main spring in the western outskirts was so tidy, that the water jugs were arranged in queue at it daily and nightly.

The Keyvan district is in the east of Gharadagh, where it borders with Aslandouz district of the Moughan steppe. The district has mild and humid climate, fertile agricultural lands. The peasant population of the district was mainly occupied in wheat agriculture and animal husbandry.

The village of Seghen in the south was the center of the Keyvan district. The Mirzunk, Sargisank, Melkonank, Karapetank and Sargisbegank were the most ancient and high-ranking families of the village, which had played an important role in defence of the entire district.

Ghasumashen was the second village of the district in size and was situated in about 4 kms east of the former. Its vicinities are densely covered with walnut, mulberry, pear trees and groves of cornelian cherry. The village is mentioned in ancient manuscripts as Isakhani Shen, by the name of its landowner – Melik Isakhan. In honour of one of his heirs it was later renamed to Ghasumashen.

The earliest account on Armenian villages of Gharadagh is found in one of late copies of the Stepanos Orbelian's "History of Sisakan Province", to which the late medieval scribes had added the list of villages of the Syounik diocese in 1513 (Matenadaran, no. 14884). The 44 of the villages mentioned in this manuscript are identified as belonging to the Gharadagh province. After the destructive forced displacement of the early XVII century by Shah Abbas, the Armenians of Gharadagh had left their homeland in waves of mass emigrations of 1828, 1840, 1919-1920 and 1946.

Armenians of Gharadagh were farmers, traditionally cultivating cereals: wheat, barley, linen, millet, pea, lentil, sesame. The gardening, perfect natural conditions for which existed in many villages, was another important occupation and source of income. Though the viticulture was developed only in few villages: Khanagah, Berdin and Sardou, the majority of Armenian families of the region was advanced in viniculture as well. Many households had their own wine-presses for this purpose.

The Armenian villages, though scattered through the vast area, were all situated in the subalpine belt, as a response to their traditionally complex economy, including the cattle breeding. Cows, sheep and goats were the main livestock of Armenian peasants. The horses, donkeys and oxen were

the main means of transportation in the area where some villages even lacked roads for wheeled carts or motor vehicles.

The same temperate climate of Gharadagh and wide diversity of its vegetation, richness with flowers and types of trees, were supportive for extensive apiculture, practiced as by Armenian, so by many Turk families. Sericulture was an auxiliary occupation in many villages, but especially in Khanagah, Sardou, Vina, Seghen and Ghasumashen, which were producing silk thread for external markets. The most advanced crafts of the Armenians of Gharadagh were the weaving, metalworking, carpentry, masonry, gold and silver workmanship, tailoring, etc. Many craftsmen were busy not only in their own villages, but had clients among the neighbouring Muslim communities.

The houses in different villages were similar, especially in their traditional quadrangle ground plan and even dimensions: 12x10m and 3m high. These multi-room dwellings had walls of rusticated stone of different shape, joined with clay mortar mixed with cut straw. The width of this walls was 60 to 80 cm. The roof usually rested on rows of three columns, two of them erected along the walls and one lined through the center of the house.

The clothing of the Gharadagh Armenians was simple and modest, always following the same fashion and patterns as were their ancestors for centuries long. Women traditionally weared long sleeved shirts, tailored of green or red local textile, and the so called "kyullija" – a type of female overdress. Men usually were dressed in the suit of white shirt and black trousers, black, blue or green jacket ("arkhaloukh").

The author had also collected many nice stories of everyday life of the Gharadaghi Armenians. His own memories, stories of his father Harutyun – a local musician, who had been frequent quest in many villages around Khanagah and Vina, and his uncle Alexan, had long been with him and shaped idyllic pictures of the family and community life of the Armenians of Gharadagh through the pages of this study. Local sites of pilgrimage, festivities and celebrations, wedding, funeral and mourning rituals are represented with fair attention to details of ethnographic reality, saved and preserved in this book.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում պահվում է 160 ձեռագիր աշխատություն: Դրանց մի մասը ներկայացվում է հանրության ուշադրությանը:

Աթոյան Զ., Ազգագրական ակնարկ (Շամշադինի շրջան):

Ամեմյան Դ. Ա., Չմշկածագ գավառ:

Ամատյան Գ. Ս., Ջմյուռնայի ազգագրական նյութերը:

Բարսեղյան Ա. Բ., Մոկաց ազգագրական նյութեր:

Բարսեղյան Ս., Ղարսի նահանգի Խորասանա (կամ Բասենա) վիճակի Արմուտլի գյուղի սովորությունները:

Բեգյան Մ.Դ., Լեռնային Ջագիր գյուղի պատմությունը 1785-1975 թթ.:

Գալստյան Մ.Դ., Թալինի շրջանի Եղնիկ գյուղի պատմությունը:

Գարունյան Ռ., Շատախ գավառի ազգագրական նյութերը:

Գևորգյան Գ.Գ., Նյութեր Մոսկվայի հայ գաղթօջախի պատմությունից:

Գևորգյան Գ.Վ., Աշտարակի ազգագրական նյութերը:

Գևորգյան Թ.Գ., Խոտորջրի գյուղերի նկարագրությունը:

Գևորգյան Ե.Գ., Իմ հուշերը (Խոտորջուր):

Դարբինյան Ա., Մոկսի ազգագրական և բանահյուսական նյութերը:

Դիլանչյան Դ.Թ., Փերիահայոց ազգագրությունից:

Զարգարյան Ծ.Գ., Իրանի Փերիա գավառի ազգագրությունը:

Զեյթունյան Ա.Խ., Հայաբնակ վայրերը Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում:

Զուլալյան Գ.Ա., Դարդանել քաղաքի շրջակայքի ազգագրական և բանահյուսական նյութեր:

Զուլալյան Շ.Ք., «Դեղ ու ճար» (ազգագրական ուսումնասիրություն):

Զուլալյան Շ.Ք., Արևմտահայոց ճաշատեսակներ:

Թոռլաքյան Բ.Գ. Համշենահայերի ազգագրությունը:

Իսրայելյան Մ.Հ., Ազգագրական նյութեր Լեռնային Ղարաբաղի Փիրջամալ, Նախիջևանիկ գյուղերի և Շուշի քաղաքի մասին:

Խաչիկյան Թ.Մ., Մեր գյուղը՝ Խանծառ:

Կարապետյան Տ.Կ., Արմավիր գյուղը (պատմազգագրական նյութեր)

Կարապետյան Տ.Կ, Երևանը 20-րդ դարի առաջին քսանամյակին:

Հալաջյան Գ., Դերսիմի ազգագրական նյութերը:

Հակոբյան Գ. (Բասենցի), Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը:

Հայրապետյան Հ. Լ., Շաղաթ գյուղի պատմությունը և ապրելակերպը:

Հարությունյան Ա.Հ., Տարոնի ազգագրություն:

Հովակիմյան Ա. Ա., Կարբի գյուղի ազգագրական նյութերը:

Հովսեփյան Հ.Ղ. (Բասենցի), Տարաբնույթ նյութեր:

Ղազարյան Ն.Ս., Գանձակի գավառի հայկական բնակավայրերի ազգագրությունը:

Ղազարյան Ն.Ս., Գանձակի գավառի հայկական բնակավայրերը և պատմա-ճարտարապետական հուշարձանները:

Ղազարյան Ն.Ս., Գանձակի գավառ. ազգագրական նյութեր:

Ղազարյան Վ.Գ., Լոռվա Դսեղ գյուղի ազգագրական նյութերը:

Ղարախանյան Ա.Հ., Իրանի Չահարմահալ գավառի հայերի ազգագրական նյութերը (1609-1946 թթ.):

Մանուկյան Բ.Ա., Ներքին Բասենի Արմտլու գյուղ:

Մարգարյան Հ.Ս., Խիզանի գավառի ազգագրական նյութերը:

Մելյան Ա.Պ., Շամշադինի շրջանի կենցաղային իրերի և տնտեսական մշակույթի մասին:

Մովսես Քհն. Շրիգյան, Հուշագրություն (Մուսա Լեռ):

Նահապետյան Պ.Վ., Փանիկ գյուղի պատմությունից և ազգագրությունից:

Չանգլյան Ի.Ա., Շամշադինի և նրա գյուղերի պատմությունը:

Սարդյան Վ.Ա., Երևանի և շրջակայքի ազգագրական նյութեր:

Սահակյան Ն.Ս., Սեբաստիայի նահանգի Խուռնավուլ գյուղը և իր ավանդույթները:

Սանասարյան Ս.Գ., Կարնո գավառի ազգագրական նյութերը:

Սարգսյան Ս.Մ., Սեբաստիայի նահանգի ազգագրական նյութերը:

Սուպկուկյան Պ.Հ., Մուսալեռցիների ազգագրությունից (նյութեր):

Սուքիասյան Խ.Մ., Լեռնահովիտ գյուղի ազգագրական ակնարկ:

Վարդումյան Բ.Ս., Վահագնի գյուղի ազգագրությունը:

Փափազյան Մ., Նյութեր Բաղեշի ազգագրությունից:

Փիլիկյան Ն.Տ., Սեբաստիայի Ալիս գետի հովտի ազգագրությունը:

Քոչարյան Ն., Չորքմարզպան շրջանի պատմազգագրական նյութեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից 7
Առաջաբան 9
Պատմական ակնարկ 11
Փայտակարան 12
Տարածքը 14
Ղարադաղի սահմանները 15
Լեռները 17
Կլիմա և բնությունը 20
Ջրերը 22
Բուսական աշխարհը 23
Կենդանական աշխարհը 29
Թռչունները 33
Ղարադաղի ընդերքը 35
Ղարադաղի բնակչությունը 39
Հայեր 40
Թուրքեր 43
Քրդեր 45
Թաթարներ 46
Ղարաչիներ 49
Շամլուներ 55
Առեղծվածային ազգություն 57

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԸ

Դիզմար գավառակ 60
Խանագահ 61
Խանագահի ջրաղացները 65
Խանագահի եկեղեցին 66
Ազիզյան-Մնացականյան դպրոցը 70
Խանագահի շրջակա գյուղատեղերը 73
Սարդու 85
Ղշլաղ 86
Իրգութին 90
Աղաղան 93
Ղուլուդի 97
Հասանով գավառակ 102
Հուժ 102
Լումա 106

Օղա 106
Մեշափառա գավառակ 113
Ողան 113
Գիմինավուն 122
Միջնեան գավառակ 124
Վինա 124
Գինդիմնան 128
Ամրադուլ 128
Սևահող 129
Քարագլուխ 129
Քեյվան գավառակ 131
Սըղըն 132
Ղասումաշեն 132
Քեյվան գավառակի արևմտյան հատվածը 136
Արաքսպար գավառակ 137
Վիճակագրական տվյալներ Ղարադաղի հայերի վերաբերյալ 141
Ղարադաղի հայերի գաղթերը 148
1828թ. գաղթը 148
1840թ. գաղթը 150
1919-20թթ. գաղթը 152
1946թ. գաղթը 156
Ղարադաղի հայերի տնտեսությունը 158
Դաշտավարություն 158
Հունձ 164
Փոխօգնություն 167
Խոտհունձ 181
Այգեգործություն 186
Գինեգործություն 193
Բանջարեղեններ 197
Անասնապահություն 203
Արոտավայրեր 218
Թռչնապահություն 220
Մեղվապահություն 225
Շերամապահություն 230
Որսորդություն 234
Տնայնագործություն և արհեստներ 244
Ներկանյութեր 253
Առևտուր և փոխանակություն 253
Հաղորդակցության միջոցներ 260
Չափ ու կշիռ 263
Բնակավայր 266
Տները 267

Կահավորում և ամանեղեն 273
Կավանոթներ 275
Փայտե իրեր 277
Տների երեկոյան լուսավորումը 278

ՀԱԳՈՒՍՏ ԵՎ ԶԱՐԴԵՂԵՆ

Կանացի տարազ 281
Տղամարդկանց տարազ 285

ՍՆՆԴԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաց 288
Կերակրատեսակներ 290
Կաթ և կաթնամթերք 294
Բանջարեղեն 295
Համայնք և տոհմ 297
Ընտանիք 304
Ամուսնություն և հարսանիք 308
Հարսանիքը աղջկա հոր տանը 320
Ջհեզ (օժիտ) 328
Տղաբերք և կնունք 339
Ծննդաբերություն 339
Ղարադաղի հայերի անունները 346
Ծաղրական անուններ 355
Հիվանդություն և բժշկություն 357
Հանդերձյալ կյանք 360
Մահ և հոգի 360
Թաղում 361
Հոգեհանգստի հաց, հարկ կամ քելեխ 364
Հողատիրության իրավունք 366
Հարկեր 371
Պատիժներ 380
Քրեական իրավունք 388
Կրոն և աղանդներ 397

ՏՈՆԵՐ

Նոր տարի 399
Քրիստոսի ծնունդ, Զրօրհնեք 400
Դըռն դոռենջ (Տյառընդառաջ) 404
Սուրբ Սարգիս 404
Բարեկենդան 405
Վարդանանց տոն 408
Մեծ պաք (Մեծ պաս) 410
Ծաղկատոն, Համբարձում 414

Հզետեգ (Ջատիկ) 417
Վարդավառ 418
Խաղողօրհնեք (Սուրբ Աստվածածի վերափոխում) 421
Խչվերաց (Խաչվերաց) 421
Սուրբ Գևորգ 422
Նավասարդ 422
Մատաղ 423
Ուխտագնացություն 425
Խաղեր 430
Հավատալիքներ 442
Մոգական հնարներ 451
Ժայռերի և քարերի պաշտամունք 454
Բուժիչ քարեր և ուլունքներ 455
Բույսերի պաշտամունք 456
Ջրի պաշտամունք 458
Ոգիներ 465
Կենդանիների հետ կապված հավատալիքներ 466
Առասպելական կենդանիներ 470
Որսորդական հավատալիքներ 471
Բնության երևույթներ 471
Մետաղներ 473
Երաժշտական գործիքներ 474
Թատրոնը Ղարադաղում 479
Աղաջանյան-Հովսեփյան տոհմը 482
Hovhannes H. Hovsepian's "Ethnography of the Gharadagh Armenians" 490
Հավելված 496

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԸ

I

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

HOVHANNES HOVSEPIAN

ARMENIANS OF GHARADAGH

I

ETHNOGRAPHY

Հրատարակչության խմբագիր՝ Ա. Հովակիմյան

Համակարգչային հավաքը՝ Տ. Լևոնյան
Ս. Հակոբյան
Ա. Սարգսյան

Շևավորումը՝ Սեդրակ Հակոբյանի

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 100x70 1/16
Ծավալը՝ 31.5 մամուլ: Տպաքանակը՝ 370:

[4000 դր.]

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0114928

II
A 94501